ISSN 0321-0340

ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ

N 1 (115)
2010

ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ

Գիտատեղեկատվական հանդես

Вестник архивов Армении

Научно-информационный журнал

Bulletin of Armenian Archives

Scientifically-information journal

1 (115)
2010

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН YEREVAN

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1960 ԹՎԱԿԱՆԻՑ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԻՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԿՐՏԻՉ Ա ՎԱՆԵՑԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ս.ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՕԾՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԵՍՐՈՊ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ամեն հայ մարդ երկու հայր ունի՝
իր եւ Ամենայն Հայոց Հայրիկը»:
Տ. Տ. Վազգեն կաթողիկոս

Մկրտիչ Խրիմյանը (4. 04. 1820թ., Վան - 29. 10. 1907թ., Վաղարշապատ) կաթողիկոսական, լուսավորչական գահին բարձրացավ 72 տարեկան հասակում՝ 1892 թվականի մայիսին, երբ արդեն հայտնի էր հայ հասարակությանը՝ իրականացրած եկեղեցական, հասարակական, մանկավարժական, քաղաքական, սոցիալական և այլ գործունեություններով: Նա Առաջնորդ էր բառի իսկական իմաստներով, և ժողովուրդը նրան մեծարեց Հայոց Հայրիկ պատվանունով:

1847թ. հիմնվում է Կոստանդնապոլսում: 1848թ. երկարատև ճամփորդություն է իրականացնելուց հետո (Անդրկովկաս, Պարսկաստան, Երուսաղեմ), մանկավարժական գործունեություն է ծավալում քաղաքի Խասգյուղ թաղամասի հայկական դպրոցում[1]:

1854թ. Մկրտիչ Խրիմյանը ձեռնադրվել է վարդապետ և վերադառնալով Վան, ծառայել է Վարագավանքում՝ որպես վանահայր[2]: 1855 թվին Կոստանդնապոլսում հիմնադրել է «Արծուի Վասպուրական» պարբերականը:

1857 թվականի կարևորագույն իրադարձություններից էր ժառանգավորաց գիշերօթիկ վարժարանի հիմնադրումը և այստեղ շարունակել է «Արծուի Վասպուրական»-ի հրատարակումը:

Այս շրջանում այցելել է Արեւելյան Հայաստան:

1868 թվականին էջմիածնում եպիսկոպոս է ձեռնադրվել: Արդեն 1869-ին ընտրվել է Կոստանդնապոլսի պատրիարք:

Խրիմյան Հայրիկը հեղինակավոր հասարակական քաղաքական գործիչ էր և երբեք անտարբեր չի եղել ազգի ճակատագրի նկատմամբ: Լինելով պարզ, ամպաճույճ և սակայն խորունկ ու իմաստալից նկարագրով անձնավորություն, ամենաիսկական Առաջնորդ էր և բոլորին հույս ու հավատ էր ներշնչում: Նա դարձավ հայ ազատագրական պայքարի շեփորահարը: Հայրիկը ձգտում էր Հայոց Հարցին դիվանագիտական լուծում տալ:

1878 թուականին Բեռլինի կոնգրեսի հայկական պատվիրակության նախագահն էր:[3] Բեռլինի կոնգրեսը սակայն մեծ հիասթափությունների պատճառեց: «Թղթե շերեփը»[4] թևավոր խոսք դարձավ:

Իր գրվածքներից մեկում՝ այդ օրերի ազդեցության տակ նա գրում է. «Մեծապես եւ առաւել կ' սխալին ժողովուրդներ ունայնամիտ յոյսերով, երբ իրենց բաժնին և ոյժին չափով յառաձադիմութեան ճանապարհի չեն բանար, այլ հեղգամիտ լինելով ամենայն ինչ կառավարութենէն կ' սպասեն: Գիտցի'ր այսուհետև, թէ դու ինքդ ես միայն քեզ օգնական»[5]:

Բեռլինից վերադառնալով Հայրիկը Կոստանդնապոլսի Մայր եկեղեցում արտասանեց իր հայտնի ճառը, որտեղ մասնավորաբար նա ասում է. «Ժողովո'ւրդ,

---

[1] «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 745-747:
[2] Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 7, էջ 641-642:
[3] Ա. Սադոյան, Ամենայն Հայոց կաթողիկոս Տ.Տ. Մկրտիչ Ա Վանեցի // «Նշանավոր ճեմարանականներ», Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, 2005, հ.1, էջ 51-60:
[4] Ամբողջական երկեր. Նյու Յորք, 1929թ.
[5] Նույն տեղում:

ամենէն առաջ քո ազատութեան յոյսը քո վերայ դիր, քո խելքին և բազկին ոյժ տո՛ւր, մարդ ինքնիւրմէն պէտք է աշխատի որ փրկուի»[1]:

1880-ական թվականներին իր անմիջական աջակցությունն է ցուցաբերել մի շարք կարևորագույն գաղտնի կազմակերպությունների ստեղծման գործին:

1879 թվին ընտրվել է Վանի հոգևոր առաջնորդ: Այստեղ նա սովյալներին օգնություն է կազմակերպում. հիմնում է գիշերօթիկ դպրոց, որը միջոցների պակասության պատճառով փակվում է[2]:

1892 թվի մայիսին՝ Մակար Ա կաթողիկոսի մահվանից վեց ամիս հետո ընտրվում է Ամենայն Հայոց կաթողիկոս և 1893 թվի սեպտեմբերի 26-ին օծվում Ս. էջմիածնում:

Հայոց Հայրապետի կյանքում սկսվում է մի նոր շրջան, երբ եկեղեցու խնդիրները մեծ խոչընդոտների են հանդիպում ցարական իշխանությունների կողմից: Ս. էջմիածինը մեղադրվում է «հակակառավարական դիրքորոշման» մեջ եւ իրենից մեծ «վտանգավորություն» է ներկայացնում՝ համաձայն հայատյաց Գոլիցինի Արքունիք ներկայացրած զեկուցագրի[3]: Նա պահանջում է ծունկի բերել եկեղեցին և բռնագրավել ամբողջ գույքն ու ունեցվածքը:

1903թ. հունիսի 12-ի Նիկոլայ 2-րդ ցարի հրամանագրով Անդրկովկասում փակվում են ազգային բոլոր դպրոցները և ուժի գործադրմամբ ձեռնարկվում է եկեղեցու գույքի բռնագրավում: Հերոսական պայքար է ծավալվում: Հայ հոգևորականությունը Խրիմյան Հայրիկի գլխավորությամբ աննահանջ պայքար է ծավալում: Կաթողիկոսի կոնդակի[4] համաձայն ոչ մի հոգևորական չի մասնակցում գույքի հանձնման արարողությանը: Որոնք էլ անզգուշություն էին ցուցաբերել, անտեղյակ լինելով եկեղեցու որոշմանը՝ աքսորվել են Սևան[5]:

Ցարական կառավարությունը հանդիպեց դիմադրության: Ցույցեր կազմակերպվեցին եւ մարդիկ շարժվում էին Ս. էջմիածին՝ հոգևորականներին սատարելու: Զինվորականների հետ ընդհարումներ են տեղի ունենում: 1905 թ. մայիսին Կովկասի փոխարքայի պաշտոնում Թիֆլիս է գալիս կոմս Վորոնցով-Դաշկովը և արդեն 1905թ.օգոստոսի 1-ի ցարական Բարձրագույն հրովարտակով վերաբացվում են հայկական ազգային դպրոցները[6], մշակութային և բարեգործական ընկերությունները: Վերադարձվեց բռնագրավված գույքը: Պայքարն անհավասար էր, սակայն հայերի հաղթանակով պսակվեց:

Մկրտիչ Ա կաթողիկոսը հեղինակ է մի շարք աշխատությունների.

«Հրաւիրակ Արարատեան»(1850թ.), «Հրաւիրակ երկրին աւետեաց» (1851թ.), «Մարգարիտ արքայութեան երկրից» (1866թ.), «Վան-գոյժ» (1877թ.), «Հայ գոյժ» (1877թ.), «Ժամանակ խորհուրդք յուր» (1878թ.), «Սիրարք եւ Սամուել» (1878), «Պապիկ եւ թոռնիկ»(1894թ.) և այլն:

Ժամանակի հեղինակավոր հոգևոր հայրերից մեկը՝ Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, որը դեռևս աբեղա լինելով էջմիածնում, իր պարտքն է համարել մանրամասն նկարագրել կատարած ճամբորդությունից հետո (Երուսաղէմից մինչեւ Ս. էջմիածին) հանդիսավոր դիմավորման սեպտեմբերյան այդ տոնական օրերի նկարագրությունը, որն էլ ձեզ ենք ներկայացնում՝ առանց կրճատումների:

Սուսաննա Նահապետյան

---

[1] Ամբողջական երկեր. Նյու Յորք, 1929թ.

[2] Ա.Մադոյան, Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյան // Նշանավոր ճեմարանականներ, էջ 56:

[3] Ս.Բեհբուդեան, Խրիմեան հայրիկը եւ Ցարական բռնապետութիւնը (1903-1907թթ.), «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», Գիրք է,Երեւան, 2000:

[4] ՀԱԱ, ֆ. 56, ց.16, գ. 349, թ. 21::

[5] ՀԱԱ, ֆ. 56, ց.16, գ. 333, թ. 113:

[6] ՀԱԱ, ֆ.133, ց. 1, գ. 109, թ. 121:

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ Ս. ՕԾՄԱՆ ՀԱՆԴԷՍԸ[1]

«Անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր,
եւ հաներ զմեզ ի հանգիստ».
Սաղ. Դաւթ. [Կե. 12]

Յունիսի 21-ից մինչեւ Սեպտեմբերի 13-ը ճանապարհորդ էինք, անցել էինք Հայաստանի ծաղկալից, հովասուն լեռները, սքանչացել Վրաստանի, Իմերէթիայի ճոխ, փարթամ բուսականութեամբ, լողացել Սեւ, Մարմարայ, Եգեյական, Միջերկրական ծովերի կապուտակ կոհակների վրայ, ֆարաւոնների մեծահռչակ երկրի տաք, կիզիչ արեգակի տակ այրուել, ջերմեռանդութեամբ համբուրել Յիսուսի՝ մեր Փրկչի նուիրագործած սուրբ վայրերը եւ հրաւիրելով մեր Հայրապետին՝ գալ բազմել ս. Գրիգոր Լուսաւորչի նուիրական գահը, ուրախ եւ զուարթ հոգով աւելի երկար ճանապարհով անցնելով Միջերկրական, Կոնիական, Ադրիական ծովերը, Հունգարիան, Աւստրիան, դարձանք մեր Ս. Էջմիածինը: Հեշտութեամբ թւում ենք երկրների անուններ՝ Հայաստան, Վրաստան, Տաճկաստան, Յունաստան, Եգիպտոս, Պաղեստին եւ այլն, եւ այլն. մտքով մի րոպէում թռչում, սլանում ենք ամեն տեղ, բայց ինչքա՜ն կեանք, ինչքա՜ն փոփոխութիւն, ինչքա՜ն ազգեր, լեզուներ, ինչքա՜ն քաղաքակրթական տարբեր աստիճաններ չեն հասկացւում այդ լայնածաւալ տարածութեանց մէջ, քանի՜ քանի՜ տասնեակ տարիներ են հարկաւոր թէկուզ մի շատ թեթեւ գաղափար կազմելու տեսածների մասին, ո՛չ թէ մի ճանապարհորդութիւն, ո՛չ թէ մի մարդու կեանք, այլ մի քանի մարդկանց կեանք հազիւ բաւեն դրա համար: Կատարեալ իրաւունք ունէինք Սաղմոսերգուի հետ կրկնել՝ «անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր»: Երկարատեւ ճանապարհորդութիւնը, անդադար կրկնուող՝ մէկ քան զմիւսը փայլուն ընդունելութիւնները, ժողովրդական մեծ ցոյցերը՝ իւրեանց հետաքրքրութեամբ լարելով մեր ամբողջ ուշադրութիւնը, սկսել են արդէն յոգնեցնել բոլորիս էլ, այնպէս որ երբ Տփղիսից դուրս եկանք եւ գիտէինք, թէ երեք չորս օրից արդէն Ս. Էջմիածնում կլինէինք, չէր կարելի չզգալ մի տեսակ հոգեկան հանգստութիւն՝ թէ վերջապէս պիտի հանգստանանք: Ուրախ էինք, որ այդքան երկար ճանապարհորդութիւնը անցել էր խաղաղ, անդորր, որ ո՛չ մի միջադէպ, ո՛չ մի անախորժ հանգամանք չէր պղտորել մեր ուրախ տրամադրութիւնը. վեց եօթը օր ծովով անցնել, օրերով նաւի վրայ լինել եւ երբեք փոթորկի չհանդիպել, այդ էլ մի առանձի՛ն երջանկութիւն է:

Թէ ի՛նչ փառահեղ հանդիսով ընդունեց Վեհափառին ամեն տեղ հայ ժողովուրդը, դրա մանրամասն նկարագրութիւնը թողնում ենք մօտ ապագային. մեր՝ Ս. Էջմիածնի միաբանութեան միացած բազմաթիւ ուխտաւորների եւ վաղարշապատցւոց ընդունելութեան նկարագրութիւնն է, որ այստեղ տալու ենք:

Երեւանից վճռուած էր ժամի 8-ին դուրս գալ, կառքերը ուշացան, 9-ին հազիւ ճանապարհ ընկանք: Յառաջ էր ընթանում Վեհափառի կառքը՝ շրջապատուած բազմաթիւ ձիաւորներով, հետեւում շարեշար կառքերով. ձիաւորների թիւը գնալով շատանում էր, մօտակայ այգիներից, գիւղերից միանում էին անդադար, իսկ Վաղարշապատցիք Արապարու Ս. Գրիգոր եկեղեցու մօտի բլրակին վրայ կանգնած, անհամբեր սպասում էին Վեհափառի մօտենալուն. hէնց որ երեւաց Վեհափառի կառքը՝ ձի խաղացնելով, նիզակներ պտտեցնելով, կեցցէներով օդը

[1] «Արարատի» ընթերցողները սպասում են, անկասկած, որ Վեհափառի ճանապարհորդութեան նկարագրութիւնը Երուսաղէմից մինչեւ Ս. Էջմիածին տրուի նոցա, իրաւունք ունին: Արդէն զբաղուած ենք դրանով, սակայն այդ երկար ուղեւորութիւնը այնքան հետաքրքիր դէպքեր ունի, որ աւելի նպատակայարմար դատեցինք առանձին գրքով ի լոյս հանել՝ ժամանակագրական կարգով պատմելով մի առ մի թէ՛ հրաւիրակութեան ուղեւորութեան պատմութիւնը եւ թէ՛ Նորին Վեհափառութեան գալուստը: Նրա մէջ կմտնեն նաեւ ուղերձները՝ կամ ամբողջութեամբ կամ կրճատեալ: Այս համարի մէջ կտրուի միայն այն մասը, ինչ որ եզրափակել է տալիս յօդուածիս վերնագիրը: * Խոստացուած գիրքը տե՛ս Ցանկ, Հ[ար] 3 (Ս. Տ. Մ.):

թնդացնելով, առաջ անցան: Այդքան բազմաթիւ ձիերից եւ կառքերից առաջացած փոշին անհետացրեց ամեն բան, նկատւում էր միայն մի մեծ փոշու ամպ, որ երկրից դէպի երկինք էր բարձրանում: Աւագին աղմուկի միջից հազիւ էր լսւում Հռիփսիմէի եւ Շողակաթ վանքերի զանգակների ձայնը: Ձիաւորները երբեմն առաջ էին անցնում, երբեմն կանգ առնում, կեցցէներ կանչում, մինչեւ մենք հասանք գիւղի ծայրը: Վեհափառի կառքը կանգ առաւ, այդտեղ Վաղարշապատի ժողովուրդը շինել էր տուել մի փառահեղ յաղթական կամար՝ Անւոյ մօտ եղող Ղօշավանքի նմանութեամբ, երեք գմբէթով զարդարուած գոյնզգոյն դրօշակներով, կանաչ ոստերով: Կամարի շրջանակի վրայ խոշոր տառերով կարդացւում էր «Կեցցէ՛ Հայոց Հայրիկ» բառերը, իսկ նոյն կամարի բարձրութեան վրայ կանգնած էին երկու հերարձակ, սպիտակ հագուստ հագած փոքրիկ աղջիկներ՝ ձեռքներին ծաղկեայ փունջեր: Գիւղացւոց պատգամաւորութիւնը, գաւառապետը՝ իւր պաշտօնեաներով, դիմաւորեցին կամարի տակ Վեհափառին՝ բարի եկ մաղթելու իւր նախահարց եւ նախորդների նուիրական վայրը, Ս. Էջմիածնայ Մայր Աթոռը:

Կամարի շուրջ այնքան բազմութիւն կար հաւաքուած, որ եթէ մէկը առաջին անգամ մտնելիս լինէր Վաղարշապատ, նրան ոչ թէ մօտ 800 տնից բաղկացած մի հասարակ գիւղ կկարծէր, այլ հարիւր հազար բնակիչ ունեցող մեծ քաղաք: Դիմաւորելու էին եկել ո՛չ միայն գիւղի բոլոր մեծ եւ փոքրերը, այլ նաեւ Երեւանից, Աղեքսանդրապոլից, շրջակայ գիւղերից մեծ բազմութիւն: Մեծ դժուարութեամբ կարելի եղաւ Վեհափառի կառքի համար ճանապարհ բաց անել, որը առաջ էր ընթանում դանդաղ՝ ամբոխի խուռն բազմութեան ուղեկցութեամբ, որ անընդհատ կեցցէներ էր գոչում: Փողոցի վրայ դալար խոտ էր ցանած, տների պատուհանները, պատշգամբները զարդարուած էին դրօշակներով, գորգերով, ծաղիկներից, խաղողի ողկոյզներից հիւսած փնջերով, ճեմարանի ամբողջ մեծ շինութիւնը շրջապատած էր կանաչ ոստերով, զարդարուել էր նաեւ մեր Մայր տաճարը, նա երկու տարի սուգ պահելուց յետոյ պատրաստուել էր ընդունելու իւր արժանընտիր փեսային:

Տեղապահ սրբազանի կարգադրութեամբ որոշուած է եղել վեհափառին իջեցնել ճեմարանի պարսպի առաջ եւ ճեմարանի պարտիզով, վանքին կից պարտիզի մօտով առաջնորդել նորան դէպի Ս. Տաճարը: Վեհափառի հեռագրի հիման վրայ փոխուած էր այդ կարգադրութիւնը: Վեհափառը յայտնեց Երեւանում. «Տփխիսի, Երեւանի փորձերը մեզ վարպետ արին, հեռագրելու է Էջմիածին, որ հանդիսակատարութիւնը շատ մօտէն սկսեն, մէկ էլ աշխատեն խիստ կարգ պահպանել»: Ըստ այդ հրամանի՝ կառքը կանգ առաւ Վանքի պարսպի դարպասի առաջ, որտեղ կանգնած էին բոլոր միաբանները՝ շուրջառներով, ճեմարանի երգեցիկ խումբը եւ անչափ բազմութիւն, իսկ ճեմարանի սաները կանգնած էին ամբողջ ճանապարհի վրայ՝ կարգ պահելու համար: Ո՛չ խնդիրքով, ո՛չ կոչումով, ո՛չ նոյն իսկ մտրակներով հնար կար ամբոխին յետ պահել, որ լցուած բուռն ցանկութեամբ՝ մի րոպէ առաջ տեսնել իւր պաշտելի Հայրապետի երեսը, առանց անսալու մի որեւէ հրամանի, ներքին ոյժով առաջ էր մղւում:

Ամբոխը ծովացել էր, նրա ալիքները մարդկային ներքին յուզմամբ ալեկոծեալ դիմում էին դէպի նաւը, եւ այստեղ իջնելով՝ յետ յետ մղւում: Հիանալի էր տեսարանը, րոպէն՝ ոգեւորիչ: Իսկ բոլորի պատճառը՝ Ն՜ա, առաջ էր գնում հանդարդ քայլերով, յուզուած, մտախոհ պտտեցնում էր իւր արծուի հայեացքը դէպի շուրջը, եւ դարձեալ մտքերի մէջ սուզւում: Անթիւ բերաններից «կեցցէ՛» բարեմաղթութիւններ էր լսւում, դրա մէջ անլսելի էր տաճարի զանգակների ղօղանջիւնը, անլսելի էին նաեւ երգք շարականաց: Ձայն բազմաց, ձայն Աստուծոյ: Ժողովուրդը այդ րոպէին մի աղօթք, մի խնդրուածք ունէր, որ իւր սիրելին, իւր ընտրեալ Հայրապետը, կեցցէ՛, կեցցէ՛ երկար, երկար տարիներ, որովհետեւ նա անհուն, անսահման կերպով հաւատացած է, որ այդ կեանքը կարող է իւր ցանկութեանց կատարումն տալ, նրան բարոյապէս եւ հոգեպէս մխիթարել, նրա բիւրաւոր ցաւերին դարման անել. ժողովուրդը բուռն, զգացուած, սրտաբուխ աղօթում էր, իսկ ում համար ի վեր էին բարձրանում այդ աղօթքը, Նա նոյն խորին, անկեղծ, ջերմ կերպով հաւատացած, համոզուած է, որ այդ աղօթքները լսելի կլինեն Ամենա-

բարձրեալի առաջ:
Շոգին, փոշին, խորին յուզմունքը այնքան յոգնեցրել էին Վեհափառին, որ չկամեցաւ շուրջառը վրան առնել Տաճար մտնելիս: Իջման տեղի առաջ աղօթեց նա սրտաբուխ, ծունր իջած, գլուխը խոնարհեցրած երկար համբուրեց սուրբ տեղը: Այդպիսի րոպէներում մարդուս լեզուն անզօր է արտայայտելու ներքին զգացմունքները, Վեհափառը կարողացաւ արտասանել. «Շուտ ճանապարհ բացէ՛ք, երբանք հանգստանանք»: Երբ Վեհարան բարձրացաւ, երբ բազմեց մեր Ս. Հայրապետների նուիրական աթոռը, տեսնելով նրան ողջ առողջ, առանց վտանգի եւ փորձանքի տեղ հասած, խորին զգացմամբ կրկնեցինք. «Անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր, եւ հաներ զմեզ ի հանգիստ»:
Հայրիկը հասաւ տեղ, հանգստացաւ. ամբոխը խռնուած սպասում էր, նա օրեր էր սպասել, ինչպէ՞ս հեռանար առանց իւր Կաթուղիկոսի ս. աջն առնելու: Ժողովուրդը երբեմն անկարելի բան է պահանջում, այնքան երկար ճանապարհորդութիւնից յետոյ դիմանալ, որ հազարաւորներ գան աջ առնելու, անհնար է. սակայն ժողովուրդը գիտէ նաեւ համբերել. Վեհարանի բակում համախմբուած համբերութեամբ սպասում էր Նորա երեւալուն: Նրան տեսնելու բախտին արժանացան շատ քչերը, իսկ մնացած մասը բաւականացաւ առժամանակ հանդիսատես լինելու այն փայլուն հրախաղութեանը, որ տեղի ունեցաւ երեկոյեան՝ Վանքի բակում: Գոյնզգոյն լապտերներով, հարիւրաւոր ճրագներով զարդարած էին Վեհարանի, սեղանատան պատերը, միաբանից խցերի առաջները, հրապարակը, Վանքի զանգակատունը. վերջինիս վրան կպցրած էին մի քանի խորհրդաւոր նկարներ, արձանագրութիւններ: Զանգակատան արեւմտեան մուտքի գլխին գրած էր. «Էջ Միածին ի Հօրէ, եւ լոյս փառաց ընդ նմա» յայտնի շարականի սկզբնատողերը, սրանից բարձր նկարուած էր Հայրապետական թագն ու գաւազանը՝ երկու հրեշտակների ձեռներում, իսկ տակին նկարած էր մի արծիւ, որը սլանում էր դէպի հայրապետական նշանները՝ թագն ու գաւազանը: Նկարին կցած էր հետեւեալ ոտանաւորը.

«Աստուա՛ծ սրտագէտ,
պահեա՛ զամս ձիգ
Զմեր Հայրապետ՝
Մկրտիչ Հայրիկ»:

Զանգակատան հարաւային կամարի տակ գրած էր.

«Ազգային այս տուն
Կացցէ՛ հաստատուն»:

Հիւսիսայինի տակ՝

«Աստ էջ Միածին,
Հիմն էարկ տաճարին»:

Նկարներ կային Վեհարանի պատերի վրայ: Այդ բոլորը հարիւրաւոր գոյնզգոյն լոյսի տակ մի տեսակ դիւթական կերպարանք էր ստացել: Դրան միախառնուում էր ճեմարանի աշակերտների երգը, աշուղների խաղը, գիւղացիների լէլէները, զինուորական երաժշտութիւնը, անընդհատ արձակուող հրափամփուշտների տրաքտրաքոցը: Ժողովուրդը ցնծութեան մէջ էր, նա տօնում էր իւր ընտրած Հայրապետի շնորհաբեր գալուստը:
Գիշերը վրայ էր հասել, վանքի բակը զարդարուել էր, միաբանները քաշուել էին իրենց խուցերը, ուխտաւորները՝ հեռացել իրենց օթեւանները, բայց ժողովրդական դափ ու զուռնան, նրա ուրախութիւնը շարունակում էր գիշերն ի բուն:
Միւս օրը՝ երեքշաբթի, միաբանութիւնը սպասում էր մաղթանք կատարել եւ ապա ներկայանալ Վեհափառին: Ըստ սովորութեան՝ այդ մաղթանքը հետեւեալ ձեւով է կատարուելիս եղել. Հայրապետը նստել է աթոռի վրայ՝ Վեհարանի պատուհանի առաջ, մօտը կանգնած մի կամ երկու եպիսկոպոս: Ժամկոչը, մի ժամ պատարագը սկսելուց առաջ, խփում էր երրորդը. միաբանները խցերից դուրս գալով, փիլոններ գցած, հաւաքուում էին եւ հանդէսով գնում վեհարանի բակը, ուր կատարուում էր մաղթանք, եւ ապա Վեհարան գնալով՝ իւր Հայրապետի աջն էր առնում: Վեհափառը այս անգամ ինքն էլ եկաւ եկեղեցի, եւ իւր ներկայութեանբ կատարո-

ւեց մաղթանքը: Վեհափառը սիրում է կենաց բաժակներ առաջարկելիս, քարոզներ խօսելիս կրկնել այս խօսքերը. «պարտք մ'ալ ունիմ, այդ պարտքս պիտի կատարեմ»: Մի օր առաջ Նա մտել էր Ս. Էջմիածնայ տաճարը, ասացինք՝ յոգնածութիւնը, յուզմունքը արգելք եղան, որ միաբանութիւնը չլսեց Նրա խօսքերը, այսօր պիտի միաբանութիւնը ակնածութեամբ մօտենար Նորա Ս. Աջն առնելու, Նորա բերանից պիտի լսէր պատգամ, հրաման, Վեհափառը բարեհաճեց կարճ խօսքերով յայտնել իւր հայեացքը միաբանութեան մասին, եկեղեցու մասին, ուստի խօսեց հետեւեալը:

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԺԱՄԻ 7-ԻՆ ՎԵՀԱՓԱՌԻ ՃԱՌԸ ՏԱՃԱՐՈՒՄ

«Օրհնեալ է Աստուած, հազար անգամ օրհնեալ. շնորհակալ եմ բոլորիցդ ալ, Սրբազան հա՛րք, եղբա՛րք եւ զաւակն՛նք, ձեր չափազանց ընդունելութիւնէն: Երէկ, երբ Վեհարան մտայ, շատ կմտածէի, ըսի ինքս ինձ, Հայրի՛կ, էսօր քո մուտքդ է, օր մ'ալ քո ելքդ պիտի ըլլայ, զի այսպէս է աշխարհիս հաշիւ՝ մուտքին ելք ալ կայ, ես ալ ինկայ այդ ցանկին մէջ: Կաթողիկոսներ կուգան, կերթան, այսօր ալ Խրիմեան Հայրիկ եկեր է, օր մ'ալ պիտի թողէ երթայ, զի մարդ աշխարհիս վերայ ապրելէն կյոգնի. աղօթենք առ Աստուած, որ մեզ ամենքիս ալ արժանի ընէ երկնից նաւահանգստին:

Երուսաղէմ այսպէս կնայէի՝ քառասուն, յիսուն վարդապետներ կերեւային աչքիս, իսկ այստեղ մէյ մը համրեցի՝ քիչ երեւացին աչքիս, գուցէ պաշտօնով զանազան տեղեր գնացած են. բայց Ղափանցին կըսէ, որ քիչը համով կլլայ: Է՞հ, ինչ եւ իցէ, սա ալ այսպէս. բայց աղօթենք, որ ինչպէս Քրիստոս եկաւ եւ յատակագիծ որոշեց եւ իւր գծած յատակագծով սանդարամետին գլխուն վրայ կառուցաւ այս սուրբ տաճար, այսուհետեւ եւս հաստատուն պահէ: Հաստատուն ըսածս աս քարերուն համար չէ, կտեսնաք ահաւասիկ եկեղեցի՝ չորս սիւներու վրայ հաստատած, վրան ալ կաթուղիկէ կայ, այդ տեսակ վանքեր շատ ունինք Հայաստան, բայց հաստատութիւն ըսածս այդ չէ, եթէ ներքին բարոյականութիւն չունենանք, հաւատարմութիւն, միաբանութիւն չունենանք, այն ժամանակ հաստատութիւն չի լինիր, եւ այս կաթուղիկէն էլ վեր ի վար կշրջի:

Ինձ համար կաղօթէք, շնորհակալ եմ, ես ալ ձեզի համար կաղօթեմ, որ Աստուած մեզ ոյժ, կարողութիւն տայ, որ կարողանանք գործել, հաստատուն լինել. Աստուած օրհնէ եւ մեր ժողովուրդ. բայց դո՛ւք, սրբազան հա՛րք եւ եղբա՛րք, սուրբ Աւետարան կդնէ այսպէս (ցոյց է տալիս) ձեր կրծքին վրայ եւ ժողովրդին կհրամայէք թէ, եկէ՛ք, համբուրէ՛ք. բայց Աւետարան ի՞նչ կըսէ. «Սիրեցէ՛ք զմիմեանս», ես ալ ձեզ կըսեմ նոյնը. Սիրեցէ՛ք զմիմեանս, ապրեցէ՛ք խաղաղութեամբ: Շատ բան ունեմ ձեզ ասելու, խօսելու, դեռ շատ կտեսնենք, զի ընդ ձեզ եմ, դեռ շատ կխօսինք»:

Այս համառօտ խօսքերից յետոյ, երբ Վեհափառը գնաց Վեհարան, բոլոր միաբանութիւնը փիլոնները գցած գնաց Նորան ներկայացաւ եւ Ս. Աջն առաւ:

Կէս օրուայ կարճ ժամանակը բաւել էր Հայրապետին արդէն այնքան հանգստանալու, որ Նա ներկայ եղաւ յիշեալ արարողութեանը եւ ապա սկսեց այլ եւ այլ տեղերից հաւաքուած պատգամաւորներին ընդունել: Նա ի մի հաւաքելով հեռու տեղերից, գիւղերից եկած ուխտաւորներին, օրհնեց նոցա, պահպանիչ ասաց եւ յորդորեց, որ գնան իւրեանց տեղերը, շարունակեն դադարած աշխատանքը: Ժողովուրդը Վեհափառին տեսնելով, իւր փափագը կատարած համարելով, հեռացաւ այդ օրը գոհ, ուրախ սրտով:

Չորեքշաբթի օրը՝ ամսի 17-ին Վեհափառը իւր այցելութեամբ բաղդաւորացրեց ճեմարանի սաներին, որոնք, ինչպէս արդէն յիշեցի, մեծ ժրաջանութեամբ եւ եռանդով պատրաստութիւն էին տեսել՝ Նորան հէնց եկած օրը ճեմարանի պարտիզով ուղի պատրաստել: Ճեմարանի ուսուցչաց խումբը վերատեսուչ Արիստակէս եպիսկոպոսի հետ ընդառաջելով Նորին Վեհափառութեանը, ուղեկցեց Նորան դէպի հանդիսարանը, ուր բոլոր աշակերտները հաւաքուած՝ պ. Կարա-Մուրզայի ղեկավարութեամբ երգեցին մի քանի երգեր, ապա տեսչի օգնականը եւ մի աշա-

կերտ ճառեր խօսացին: Վերջում երրորդ լսարանի Դանիէլեան Մարտիրոս երգեց պանդուխտի երգը. «Կռո՛ւնկ, ուստի՞ կուգաս», բայց այնպէս գեղեցիկ, այնպէս քաղցր ներդաշնակութեամբ, որ բոլոր հանդիսականները զգացուեցին, զգացուեց եւ ինքը Յայրապետը, որ ընդհատելով երգչին՝ յուզուած ձայնով մօտաւորապէս հետեւեալն ասաց.

Վեհափառ Յայրիկը լսելով պանդուխտի սրտառուչ երգը, յիշեց իւր կեանքի տխուր դէպքերը, յիշեց իւր հիւանդութիւնը Երուսաղէմում, իւր աշակերտ երկու վարդապետների մահը նոյն տեղում, բայց Արարատը, Ս. էջմիածինը տեսնելով՝ Նա մխիթարւում է: Այդտեղ գտնում է երջանկայիշատակ Գէորգ Դ.-ի մեծանուն հիմնարկութիւնը, որի նպատակն է ազգի մէջ գիտութիւն, ուսում տարածել, որի մէջ պիտի պատրաստուին կրթուած քահանաներ, վարդապետներ: Իրաւ է, մինչեւ ճեմարանի հիմնարկութիւնն էլ ունեցել ենք ընտիր հոգեւորականներ, բայց դոքա բացառութիւն են: Օրինակ, այժմ էլ են գնում օտար երկիրներ՝ ուսում առնելու, բայց Մեսրոպներ, Եղիշեներ, Խորենացիներ չեն դուրս գալիս: Նոքա գիտէին ոգեւորութիւն ներշնչել իւրեանց աշակերտների մէջ, այժմ էլ պիտի ձգտել դրան հասնելու: Նա օրհնեց ճեմարանը, քաջալերեց աշակերտներին եւ ուսուցչաց եւ յայտնեց, թէ Ինքը անձամբ պիտի շատ անգամ գայ, ներկայ լինի դասերին: Այդ հիմնարկութիւնից պիտի դուրս գան ազգի հայրապետներ, ինչպէս նաեւ ամեն տեսակ հոգեւոր պաշտօնեայք:

Դեռ Ս. էջմիածին չհասած, Վեհափառը բարեհաճել էր իւր Օծման մեծաշուք հանդէսը կատարելու ժամանակը որոշել Սեպտեմբ. 26-ն՝ Վարագայ Խաչի տօնին: Այդպէս էլ յայտնւում էր ամեն հարցանողաց. սակայն վերջնական, պաշտօնական վճիռը Նա կայացրեց ամսի 13-ին՝ նախապէս տեղապահ սրբազանին եւ սինոդի անդամներին խորհրդի կանչելով եւ նոցանից տեղեկանալով, թէ առանց մի որեւէ դժուարութեան յարմար է պահպանել նշանակած օրը: Այդ վճռի հիման վրայ Արիստակէս եպիսկոպոս Դաւթեանը հետեւեալ բովանդակութեամբ հեռագրեր ուղարկեց ամեն տեղ, ուր կան հայեր՝ թէ՛ պաշտօնական տեղեր, թէ՛ մասնաւոր յայտնի անձանց, թէ՛ լրագրութեան՝ խնդրելով յայտարարել ամենուրեք. «Ի գիտութիւն համայն հայ բարեպաշտ եւ ջերմեռանդ ժողովրդի՝ յայտարարեցէ՛ք, որ Նորին Վեհափառութիւն Կաթողիկոս Ամենայն Յայոց Տ. Տ. ՄԿՐՏԻՉ ԱՌԱՋԻՆԻ բարեհաճ տնօրինութեամբ ներկայ թուի Սեպտեմբերի 26-ին, Վարագայ Խաչի տօնին, նշանակուած է էջմիածնում Նորին Սրբութեան Ս. Օծումը»:

Ժամանակը խիստ կարճ էր, հեռագիր ստացողը հազիւ 11-ից մինչեւ 10 օր ժամանակ ունենար, բայց չնայած այդ հանգամանքին, սպասածից աւելի թուով ուխտաւորներ եկան, նոյն իսկ Պարսկաստանի պէս երկրից բազմաթիւ ուխտաւորներ եկան եւ ճիշտ ժամանակին հասան: Ուխտաւորների մեծամասնութիւնը եկել էր Ախալցխայից, Ախալքալակից, Կարսից, Ալեքսանդրապոլից, Երեւանից, այնուհետեւ բոլոր յայտնի քաղաքները ունէին իւրեանց բազմաթիւ ներկայացուցիչները: Դոցանից նոքա էին բաղդաւոր, որոնք խելացիութեամբ երեք չորս օր օծումից առաջ էին եկել, որով թէ՛ ճանապարհին համեմատաբար քիչ նեղութիւն էին քաշել եւ թէ՛ այստեղ լաւ տեղաւորուեցին. վերջի ուրբաթ օրը եկողների համար վանքում այլ եւս տեղ չկար:

Մինչեւ օծման օրը Նորին Վեհափառութիւնը միջոց ունեցաւ անձամբ տեսնելու Ս. էջմիածնի ներսը, շրջակայքը: Նա կառք նստած պտտեց անտառը, տեսաւ թէ ինչպէս ջրի պակասութեան պատճառաւ անտառը փչանալու վրայ է, այցելեց Ս. Շողակաթի, Ս. Յռիփսիմէի վանքերին, շնորհակալութիւն յայտնեց Արիստակէս եւ Երեմիա եպիսկոպոսներին, որ նոքա այդ վանքերը իւրեանց խնամակալութեան տակ առած են, յորդորեց աշխատել վերանորոգել նոցա աւերակները եւ ազատել քայքայելուց. տտով իջաւ նաեւ Ս. Գայանէի վանքը, բարեհաճեց տեսնել Բաստամեան վարդապետի շինած սենեակները. եղաւ քանիցս լճի ափին, ուր կարողանում էր Նա ամբոխի հետաքրքիր հայացքներից ազատ զբօսնել, շնորհիւ նոր կառուցած շրջապարսպին: Ամեն անգամ, երբ յայտնւում էր, թէ Նորին Վեհափառութիւնը պիտի դուրս ելնէ, Վեհարանի առաջ, Ղազարապատի մօտ հաւաքւում էր բազմութիւն, լի փափագով՝ կրկին եւ կրկին անգամ տեսնել իւր Յայրապե-

տի երեսը: Վերջին օրերը ժողովուրդը արդէն այնքան շատացել էր, որ Վեհափառին այլ եւս ժամանակ եւ դիւրութիւն չէր մնացել շարունակել սովորական զբօսանքները, մանաւանդ որ շատ տեղերից պատգամաւորութիւններ էին եկել եւ ներկայանում էին առանձին առանձին:

Վերջի շաբաթ օրը՝ ամսի 25-ին, այստեղ հասան նաեւ տէրութեան ներկայացուցիչները, Կովկասի քաղաքային մասի կառավարչապետի՝ Շերեմետեւի կողմից գաղտնի խորհրդական պ. Պրիբիլը, իսկ Երեւանից՝ նահանգապետ Ֆրեզէնը՝ իւր օգնականով: Գալուց անմիջապէս յետոյ նոքա ներկայացան Նորին Վեհափառութեանը, եւ որովհետեւ որոշուած էր այդ օրը ժամի 10-ին երդում կատարել, կարգապահութեան համար Երեւանից երկու գունդ զօրք էր բերուել, որոնք ժամի 9-ից սկսած հրացանները ձեռներին Վեհարանից սկսած մինչեւ Տաճարի մուտքը կանգնեցին, որպէս զի գնացքը ազատ պահեն: Պատմում են, որ ամեն անգամ այդ տեսակ մեծ հանէսներին զինուորներին չի յաջողել ցանկացած կարգը պահպանել, այս անգամ նոքա առանց դժուարութեան կատարեցին իւրեանց պարտքը, որովհետեւ նոքա կանգնած էին այն փայտեայ վանդակների յետեւում, որ շինուած էր այս տարի Երեմիա սրբազանի ձեռքով՝ բակի պարտիզի շուրջը: Ամբոխը կուտակուելով այդ պատնէշի առաջ՝ մնում էր կանգնած եւ ազատ թողնում լայն ընդարձակ մուտքը:

Վեհափառի դուրս գալուց առաջ հաւաքուեցին բոլոր միաբանները եւ, Վեհարանի անցքի երկու կողմին շարուելով, սպասում էին Նորան: Ժամի 10-ին Վեհափառը դուրս եկաւ Վեհարանից, հոգեւորականները առաջ անցան, վերջից Վեհափառը, որին հետեւում էին տէրութեան ներկայացուցիչները, այլ եւ այլ քաղաքներից ու հաստատութիւններից եկած պատգամաւորները, պատուաւոր հիւրերը, միայն դոքա ներս մտան եկեղեցի: Տաճարի մէջ, Իջման տեղի առաջ հանդիսաւոր կերպով Վեհափառը կարդաց այն երդման բնագիրը, ըստ որում Նա ուխտում է հաւատարիմ հպատակ լինել իւր Կայսերը: Երդման թուղթը ստորագրեց Ինքը, Սինոդի անդամները, եւ Սինոդի պրոկուրորը: Արարողութիւնից յետոյ Նորին Վեհափառութիւնը հետեւեալը խօսեց:

«Այս երդմնաթուղթէն առաջ մեք ուրիշ երդում մ'այլ ըրած ենք, երբ վարդապետ պիտի ձեռնադրուէինք: Այն ժամանակ մենք երդում ըրած ենք հաւատարիմ լինել ս. Աւետարանին: Գիտէք, նախ քան այս երդումն Յիսուս Իւր Աւետարանով, Պօղոս իւր թղթով պատուէր տուած են բոլոր հաւատացելոց՝ ցոյց տալով, թէ Իշխանութիւն Աստուծմէ է. պարտ է հնազանդել իշխանութեան:

Կարդում ենք Աւետարանին մէջ. երբ միանգամ հռովմայեցի հարկահաններ Պետրոսին ասին՝ ձեր վարդապետ հարկ չի՞ տար. Յիսուս Պետրոսին ասաց՝ թէեւ որդիք թագաւորաց ազատ են, եւ Ինքն իսկ երկնից Հօր Թագաւորին ազատ որդին էր, բայց գայթակղութիւն չտալու համար հրամայեց որսորդ Պետրոսին, որ երթայ ձուկ որսայ եւ ձկան փորէն մի արծաթ սատեր հանելով վճարէ իւր եւ Պետրոսին հարկ: Չգիտենք թէ այդ արծաթի սատեր նորապէ՞ս հրաշագործեց ձկան փորին մէջ, թէ դիպուածով ծովու մէջ ընկած էր՝ ձուկ կուլ տուած էր, եւ Պետրոս վրայ հասաւ: Այսպիսով օրինակ տուաւ մեզ Յիսուս, թէ պարտ է տէրութեան օրինադրած հարկ պարտաւորապէս վճարել: Յիսուսի ոսոխներ երբ փորձելով կհարցնէին, թէ արժա՞ն է հարկս տալ Կայսեր, Նա իսկոյն ասաց. Ցոյց տուէ՛ք Ինձ մի դահեկան. եւ հարցուց. Ո՞յր է այս պատկեր. երբ պատասխանեցին, թէ՝ Կայսեր. Գնացէ՛ք, ուրեմն, տո՛ւք զԿայսերն Կայսեր եւ զԱստուծոյն Աստուծոյ: Թողունք դրամական հարկ. մեք պարտական ենք նոյն իսկ մեր արիւն եւ կեանք նուիրել կայսերական երկրին եւ հայրենեաց համար:

Իսկ ինչ որ Աստուծոյն եւ եկեղեցւոյն կվերաբերի՝ զայն եւս սուրբ ուխտիւ անեղծապէս պահել՝ իբրեւ հաւատարիմ տնտես Եկեղեցւոյ: Թէպէտեւ այս թուղթ մի առ մի կյիշէ ինձ իմ հպատակութեանս պարտականութիւններ, սակայն իմ հոգեւոր բարձրագոյն պաշտօն այլ եւս կյաւելու յիմ վերայ աւելի եւս բարձրագոյն առաքելական պարտիք. այն է՝ հաւատացեալ եկեղեցւոյ զաւակներուն քարոզել Աւետարանին համմատարած սէր. բուռն սիրով ջանալ, որ կրօնն եւ աստուածպաշտութիւն կենդանի մնայ ժողովրդի սրտին մէջ. վասն զի այդ է միայն, որ հաւտա-

ցեալ ժողովուրդներ հնազանդ կպահէ երկնից Յօր առաջ եւ հաւատարիմ հպատակ կշինէ զիրենք աշխարհիս տէրութեան օրինաց առաջ:
Որչափ Խրիմեան Հայրիկ Ամենայն Հայոց Կաթողիկոս է, իբրեւ հաւատարիմ աշակերտ Քրիստոսի պիտի աշխատի Քրիստոնէական կրօնի սուրբ զգացումն տածել իւր ժողովրդին մէջ, պիտի աշխատի, որ հայոց զաւակներ ճշմարիտ եւ աննենգ Քրիստոնեայ լինին: Վասն զի ամեն ազգաց Քրիստոնեայ հաւատացեալներն, եթէ Աւետարանի հոգին ընբռնելով ճշմարիտ Քրիստոնեայ չլինին, եթէ հազար անգամ երդուին, նոցա երդումն մի կեղծաւորութիւն կլինի: Ուստի ոչ միայն ես, այլ եւ համայն ուխտ սուրբ էջմիածնի՝ թէ՛ սրբազան եպիսկոպոսք եւ թէ՛ վարդապետք պիտի աշխատեմք նոյն Աւետարանին ոգին քարոզել թէ՛ եկեղեցիներում եւ թէ՛ դպրոցներում»:
Այդ խօսքերից յետոյ Վեհափառը երեսը դարձրեց դէպի Իջման տեղը եւ խիստ յուզուած աղօթեց.
«Դո՛ւ, Տէ՛ր, Ամենակալ Աստուած, որ գիտես քննել մարդոյ ծածուկ սիրտ եւ երիկամունք, իմ սիրտս բաց է Քո առաջ. ես չեմ կարող կասկածել եւ ստել. կաղաչեմ, Քո տաճարին մէջ, Խաչին եւ Աւետարանին առաջ տո՛ւր ինձ Քո շնորհ եւ զօրութիւն, որ կարենամ իմ ծանր պարտականութիւններս ճշտութեամբ կատարել իբրեւ Հայոց Ազգի Հայրապետ: Տո՛ւր ինձ նաեւ Քո հզօր արդարութեան եւ ճշմարտութեան Հոգին, որ պատրաստ լինիմ կատարել Քո այդ մեծ պատուէրն՝ տալ Աստուծոյն՝ Աստուծոյ եւ Կայսերին՝ Կայսեր. ամէն»:
Նա դարձաւ դէպի ժողովուրդը եւ ասաց «Ամենքդ ասացէ. ամէն». իսկ Պրոկուրորին ասաց. «Պրոկուրո՛ր, ըսածներս ճիշտ, բառ առ բառ կթարգմանես». եւ նոյն հանդէտով՝ ինչպէս եկել էր, դարձաւ Վեհարան: Այդ օրը Վեհարանի դահլիճում ճաշ կար բարձրաստիճան եւ պատուաւոր հիւրերի համար:
Հասել էր օրը, երբ պիտի լրանար մի շարք հանդիսաւոր ձեւակատարութեանց շղթայի վերջին օղակը. ազգը ընտրել էր, Կայսրը հաստատել էր, բայց դեռ պակաս էր եկեղեցու, կրօնի նուիրագործութիւնը: Մեր եկեղեցական հանդիսակատարութեանց մէջ օծման եւ ձեռնադրութեան հանդէսները խիստ փառահեղ են, ամեն տեսնողի վրայ նոքա թողնում են խոր, մնայուն տպաւորութիւ, երանի այն հային, որ արժանանում է տեսնելու նոցանից մէկը. այդ յուսով հազարաւոր ուխտաւորներ են գալիս իւրաքանչիւր անգամ՝ կաթուղիկոսաց ձեռնադրութեան, միւռոն օրհնութեան ժամանակ, բայց անչափ բազմութիւնից գուցէ հարիւրից մէկին է յաջողւում շքեղ արարողութեանը ականատես լինել: Այս անգամ այդպէս չէր: Վեհափառը, ի նկատի առնելով, որ տաճարի փոքրութեան պատճառաւ, հասրակութեան մեծագոյն մասը պիտի զրկուէ հանդիսից, կարգադրեց, որ օծումը դուրսը կատարուի: Զանգակատան արեւմտեան մուտքի առաջ շինուեց տախտակներից մի ամբիոն, որի վրայ պիտի կատարուէր օծումը, իսկ ժողովրդի մի մասը բակում մնաց կանգնած, միւս մասը տեղաւորուեց Վեհարանի, մատենադարանի, եպիսկոպոսների բնակարանների կտրների վրայ, եւ այդ եղանակաւ հազիւ թէ գտնուէր մէկը, որ զրկուէր հանդէսը տեսնելուց:
Հայրիկը իր պարզասիրութեամբ չընդունեց, որ միաբանները ըստ հնաւանդ սովորութեան հանդիսաւոր կերպով ուղեկցեն Նորան դէպի տաճար, ուստի Նա, բացի երեկոյեան ժամերգութիւնից, առաւօտեան ժամերին եւ թէ պատարագին տաճար եկաւ՝ առաջից շաթիրները, իսկ յետեւից միայն իւր գաւազանակիր վարդապետին ուղեկցութեամբ:
Պատարագիչը ինքն էր: Արարողութան հանդիսաւորութիւնը այն րոպէից սկսեց, երբ Հայրապետը զգեստաւորուած թանկագին զգեստներով, դուրս եկաւ խորանից, նոյնպիսի զգեստաւորութեամբ հետեւում էին Նորան տասներկու եպիսկոպոս, շապիկ հագած վարդապետներ եւ սարկաւագներ: Պատարագիչը ուսկեայ բուրվառով խնկարկելով բարձրացաւ ս. Աստուածածնայ սեղանը, որի երկու կողմերում շարուեցին բոլոր եպիսկոպոսները՝ ըստ աւագութեան կարգի՝ վեց վեց. այսպէս՝ Աւագ կողմում Սմբատեան արքեպիսկոպոս, Աղուանեան, Ներսէս, Սուրէնեան, Դաւթեան, Տէր-Գասպարեան եպիսկոպոսները, սոցա հանդէպ Տեղապահ Երեմիա եպիսկոպոս, Սուքիաս, Յովհաննէս, Արիստակէս, Կարապետ եւ

Գառնակերեան եպիսկոպոսները: Երգում էին պ. Շահլամեանը եւ Կարա-Մուրզայի պատրաստած ճեմարանական խումբը: Տաճարում ժողովուրդ քիչ կար, դիտմամբ ժողովուրդ քիչ էր ներս թողուած, որպէս զի հանդիսով ներս ու դուրս գալիս դժուարութիւն չլինէր: Ըստ սովորութեան Ս. պատարագը կատարուեց մինչեւ «Զի ողորմած եւ մարդասէր ես», եւ ապա Վեհափառ Հայրապետը երեսը դէպի սեղան դարձրած ծունկ չոքեց եւ երդուեց.

«Մկրտիչ ծառայ Քրիստոսի եւ եպիսկոպոս Գլակայ վանուց, միաբան Սրբոյ Ուխտիս Էջմիածնի, կամօքն Աստուծոյ եւ ընտրութեամբ համօրէն ազգիս Հայոց կոչեցեալ յԱրարատեան Աթոռ Կաթողիկոսութեան Ամենայն Հայոց, ապաւինեալ յօգնականութիւն շնորհաց բարձրելոյն, խոստանամ առաջի սրբոյ սեղանոյս եւ աստուածընկալ ս. նշանացս, յանձն առնուլ զպաշտօնս զայս Եպիսկոպոսապետութեան Հայաստանեայցս եկեղեցւոյ եւ զբոլորապտուղ նուիրմամբ ընծայել զանձն իմ յանվթար կատարումն աստուածադիր օրինաց եւ կաթողիկոսական պարտուց եւ առաջնորդել ազգիս Հայոց ըստ ուղղափառ վարդապետութեան քրիստոնական կրօնից, ըստ գրոցս եկեղեցւոյ դաւանութեան եւ ըստ հայրապետական կարգաց եւ կանոնաց աստուածապաշտութեան, անստերիւր եւ անխոտոր ընթանալով յամենայնի ընդ լուսաշաւիղ հետս գնացից արժանաժառանգ յաջորդաց սրբոց առաքելոցն Թադէոսի եւ Բարդուղիմէոսի եւ սրբոյ Հօրն մերոյ Գրգորի երկրորդ Լուսաւորչի, զգուշաւոր պահպանութեամբ իրաւանց Մայր Աթոռոյս Հայաստանեայցս»:

Երդումից յետոյ դարձաւ դէպի արեւմուտք եւ մնաց ծնկաչոք, յուզուած, գլուխը խոնարհած. եւ եպիսկոպոսները շարունակեցին արարողութիւնը: «Ողորմութիւն քո, Տէ՛ր, յաւիտեան» սաղմոսից յետոյ, Երեմիա եպիս. ասաց «Աղաչեսցուք զմարդասէրն Աստուած վասն ծառայի իւրոյ» քարոզը եւ ապա ձեռին բռնած Ս. Միւռոնը, տուաւ Մեսրովպ արքեպ., որ մօտենալով Հայրապետին, տասներկու «Տէր ողորմեայից» յետոյ ասաց. «Աստուածային եւ երկնաւոր շնորհն, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՆՈՒՑՆ ԳԼԱԿԱՅ յեպիսկոպոսութենէ ի կաթուղիկոսութիւն Հայաստանեայ ս. Եկեղեցւոյ՝ ի Հովուապետութիւն եւ յԱռաջնորդութիւն ընդհանուր ազգիս Հայոց՝ ըստ վկայութեան անձին իւրոյ եւ ամենայն ժողովրդեանս»: Բոլոր եպիսկոպոսները մօտենալով շրջան կազմեցին եւ, ձեռները դնելով ընտրեալի գլխին, ասացին. «Մեք դնեմք ձեռս ի վերայ, եւ ամենեքեան աղօթս արարէ՛ք, զի արժանաւոր լիցի սա զիշխանութիւն Առաքելական Աթոռոյս՝ անարատ պահել առաջի Աստուծոյ»: Ամեն մէկը գնաց իւր տեղը, Մեսրոպ արքեպս. կարդաց «Գոհանամք զքէն Աստուած մշտնջենաւոր...» աղօթքը: Աղօթքից յետոյ եպիսկոպոսները կարգով կարդացին ընթերցուածներ եւ Աւետարանը: Ընթերցուած յԵլից. Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի (Սուքիաս), Ընթերցուած յԵրկրորդ թագաւորութեան. Եւ եկին ամենայն ծերքն Իսրայէլի... (Յովհաննէս), Ընթ. յԵզեկիէլէ մարգարէէ. Եւ եղիցի ի մտանել քահանայից ընդ դուռն... (Աղուանեանց). Ընթերց. յԵսայեայ մարգարէէ. Բայց դուք, քահանայք Տեառն... (Սարգիս). Պետրոսի առաքելոյն ի Կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Ի բաց թօթափել այսուհետեւ զամենայն չարութիւն... (Դաւթեանց). Մատթէոսի Աւետ. Եւ ելեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեայ Կեսարիայն... (Կարապետ եպիս.): Այստեղից Վեհափառ պատարագիչը դարձեալ շարունակեց Ս. Պատարագը մինչեւ ողջոյնը: Գառնակերեանը ասաց հաւատամքը եւ վերաբերումն արաւ: Մինչ եպիսկոպոսները երգում էին «Աստուած մեծ» քարոզը, Հայրապետը եպիսկոպոսական թափօրով տաճարից դուրս եկաւ, եւ օծման մնացեալ մասը կատարուեց զանգակատան առաջ՝ ի տես բոլոր ժողովրդեան: Դարձեալ նոյն կարգով՝ ինչպէս սեղանի վրայ, շարունեցին եպիսկոպոսները, Կաթուղիկոսը ծունկ չոքեց, եւ Մեսրոպ արքեպիսկ. կարդաց «Տէ՛ր Աստուած, արարիչ ամենայն արարածոց» երկար աղօթքը եւ Երեմիա եպիսկոպոսի ձեռից առնելով սրբալոյս միւռոնը, օծեց Նուիրեալի գլուխը, բոլոր եպիսկոպոսները կրկին շրջան կազմեցին եւ բութ մատը Նորա գագաթին դնելով, ասացին. «Օրհնեսցի, օծցի եւ սրբեսցի գագաթն Տէր Մկրտիչ Կաթուղիկոսին...», ջինջ բամբակ դնելով օծեալի գլխին, սպիտակ թափանցիկ քողով ծածկեցին երե-

սը. արարողութիւնը վերջացած էր: Վեհափառը կանգնեց: Դժուար է աւելի փայլուն տեսարան երեւակայել, երբ Հայրապետը չոքած, հոգով զգալով կոչման վեհութիւնը, արտասուք էր թափում աչքերից, երբ հազարաւոր հանդիսականներ շունչները կտրած, լուռ մունջ աչքերը դէպի մի կէտ դարձրած նայում էին, եւ երբ արարողութիւնից յետոյ ամբոխը մեծաձայն հետեւելով ներքին ձայնին, կոչեց միաբերան. «Կեցցէ՛ Հայրիկը, կեցցէ՛ Հայոց Հայրապետը»: Շատերի աչքերին կարելի էր արտասուք նկատել, բայց այդ ուրախութեան, ցնծութեան արտասուք էին. «Այսօր ուրախացեալ ցնծան երկնից» եւ «Որք արժանաւորեցաք», եւ «Տէր Հովուեսցէ», Սաղմոսից յետոյ դուրսը կարդացին Պետրոսի Կաթուղիկեայ առաջի թուղթը (Արիստակէս եպիսկոպոս) եւ Յովհաննու Աւետարանը. «Եւ իբրեւ ճաշեցին...» (Կարապետ եպիսկոպոս), թափօրը մտաւ տաճար, ուր շարունակւում էր պատարագը. բոլոր եպիսկոպոսները համբուրեցին Հայրապետի գլուխը եւ ողջոյն տուին ժողովրդեան: Պատարագից յետոյ բոլոր եկեղեցական դասը ըստ ընդունուած սովորութեան զգեստաւորուած առաջնորդեցին Նորին Վեհափառութեան դէպի Վեհարան եւ ծաղկեայ դահլիճում բազմեցուցին Կաթուղիկոսական Աթոռի վրայ, ուր Նա պահպանիչ ասաց, եւ բոլորը համբուրելով Ս. Աջը՝ հեռացան:

Այդ օրը վանքի սեղանատան հանդիսաւոր ճաշ կար, ներկայ պիտի լինէր Նորին Վեհափառութիւնը: Հիւրերի թիւը այնքան շատ էր, որ շատերը դուրս մնացին, իսկ վարդապետներից ոմանք՝ ոտքի կանգնած: Սեղանատան գլխին, վեհափառական գմբէթի տակ բազմեց Հայրապետը, աջ կողմում աշխարհական հիւրերը, ձախում հոգեւորականները՝ ըստ աւագութեան: Լռութեամբ ճաշում էին, երբ Նորին Վեհափառութիւնը պատուիրեց բաժակները լցնել եւ յոտնկայս առաջարկեց Ռուսաց Մեծազօր Կայսր Աղեքսանդր Երրորդի կենացը՝ մօտաւորապէս այս խօսքերով.

«Սկսած այն օրէն, երբ ես ոտք դրի Ռուսիոյ հողին մէջ, այն է՝ Օդեսայէն սկսած, չեմ դադրեր օրհնել մեր Կայսեր կեանք: Այսօր մեզ համար մեծ տօն է, Վարագայ Խաչին տօնն է, որ սուրբ կպահէ մեր եկեղեցին, այսօր մեր եկեղեցու եւ ազգի համար մեծ է նրանով եւս, որ երկու տարիէն աւելի սպասելէն զկնի, իրենց համար կաթուղիկոս օծուեց, ազգը կնտրէ Կաթուղիկոս, բայց Նորին Կայսերական մեծութիւնն է, որ կվաւերացնէ ազգին ընտրութիւնը: Այժմ այլ եւս այնպէս չէ, ինչպէս Քրիստոսի ժամանակ, որ պարզապէս կըսէր իւր աշակերտներուն. «Գնացէ՛ք քարոզեցէ՛ք զամենայն հեթանոսս..», այժմ ամեն բան օրէնքով, ձեւով է, Կայսրն է, որ մեզ հաստատեց, եւ մենք ալ այսօր օծուեցինք Ամենայն Հայոց Կաթուղիկոս:

Ուստի կառաջարկեմ խմենք այս բաժակ Կայսեր կենաց համար, Աստուած օրհնէ Նրա կեանք, օրհնէ Նրա ամուսին, գահաժառանգ եւ ամեն պարագայք: Կայսեր կեանք ժողովրդի կեանքն է, Կայսեր ողորմած, արդարասէր հովանաւորութեան տակ խաղաղ կապրէ իմ ժողովուրդ եւ կյառաջադիմէ: Օրհնեալ ըլլայ Կայսր»:

Բոլոր սեղանակիցները յոտնկայս կեցցէներ եւ ուրաներ կանչեցին եւ լսեցին «Տէր պահեա՛ զԿայսրն մեր» հիմնը, որ գեղեցիկ ներդաշնակութեամբ երգեց ճեմարանական խումբը:

Երկրորդ բաժակը առաջարկեց Նորին Վեհափառութեան կենացը գաղտ. խորհ. Պրիբիլը, այս խօսքերով.

«Ձերդ սրբութիւն. Կովկասի քաղաքական բաժնի կառավարչապետը Շերեմետեւը, լիազօրութիւն տուաւ ինձ շնորհաւորել Ձեր Օծումը եւ ցանկալ Ձեզ երկար ժամանակ կառավարել Ձեր խնամոց յանձնած հօտը, ուստի խմում եմ Ձեր կենացը»: Թարգմանեց Երեւանի քաղաքագլուխը: Կենացը հետեւեցին ոգեւորուած կեցցէներ, իսկ ճեմարանի ուսուցիչ պ. Պալեանը այդ կենացի վրայ կարդաց իւր խրթին գրաբառ լեզուով գրած ուղերձը, որը տպած էր ոսկեայ տառերով, սպիտակ աթլասի վրայ՝ Նորին Վեհափառութեանը ներկայացնելու համար: Երգեցիկ խումբը երգեց մի երգ, որ գրած էր դարձեալ պ. Պալեանը՝ Վեհափառի գալստեան առթիւ, իսկ ձայնագրել էր պ. Կարա-Մուրզան:

Սրանից յետոյ Նորին Վեհափառութիւնը առաջարկեց մարմնաւոր Իշխանութեան բարձրաստիճան ներկայացուցիչների կենացները, որոնք ընդունուեցան հանդիսականներից ոգեւորութեամբ եւ կեցցէներով:
Վեհափառը պատուիրում է պ. Շահլամեանին մի բան երգել. «Պատրաստ եմ Վեհափառ Տէր, բայց աւելի ուրախութեամբ մի կենաց բաժակի վրայ կերգէի»: Վեհափառը կանչում է Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին եւ ասում. «Արիստակէ՛ս սրբազան, այս մեր բարեկամը կըսէ. Առանց կենացի չեմ երգեր, գնա՛ կենաց մ'առաջարկէ, խառնէ՛ իրար հետ էջմիածին, միաբանութիւն, Արարատ, Աբաքս»:
Սրբազանը իր տեղը գնալով՝ խօսում է.
«Այս ուրախութեան հանդէսը կրկնուել է մեր ազգային կեանքի մէջ, եթէ չեմ սխալւում՝ 151 անգամ: Մայր Աթոռը 16 դար շարունակ գոյութիւն ունենալով, այնպէս բարձր պահպանել է իւր դիրք, որ յաջողել է սիրով միացնել, կապել իրեն հետ բոլոր հայերին: Հայ ժողովուրդը իւր նեղ վիճակների մէջ անգամ, երբ առիթ է ունեցել հաւաքուելու Ս. էջմիածնում, այստեղ գտել է միշտ մխիթարութիւն, սփոփանք, կազդուրուել է հոգեպէս եւ բարոյապէս: Այսօր եւս նա մխիթարւում է, ցանկանք, որ մեր Մայր Աթոռը միշտ եւ հանապազ մեր ազգի համար պահպանի այդ նշանակութիւնը, կեցցէ՛ Մայր Աթոռը, կեցցէ եւ Միաբանութիւնը՝ ի փառս ազգին մերոյ»:
Կեցցէներ: Շահլամէանը երգում է «Տէր, կեցո՛ դու զՀայս...»:
Վեհափառը առաջարկում է չորրորդ բաժակ.
«Ես քիչ մը մոռացկոտ եմ, շատ անգամ մեծ բաներ կմոռանամ: Նստած կմտածէի եւ միտքս եկաւ, թէ ինչպէս կաթուղիկոս եղայ, 12 հատ բութեր էին, որ մեր սրբազանները գագաթուս վրայ դրին, լաւ ճմլեցին: Բայց գլուխս ալ ազատուեց, ասկէ ետք մէկ էլ այն ժամանակ բութ կդնեն վրաս, երբ ոչինչ չպիտի զգամ, այն ատեն ճակատիս վրան ալ բութ պիտի դնեն, ձեռներուս վրան ալ: Ուրեմն եթէ Կայսեր հաստատութիւն չլինէր, եթէ սրբազաններու բութը չլլար, ես կաթուղիկոս չէի դառնալ: Ասկէց ետքը հերթն ինձ եկաւ, ես ձեր գագաթներուն վրայ պիտի բութ դնեմ. բայց միք վախենալ, Աստուած Հայրիկին այնպիսի հեզ հոգի տուեր է, որ նա պիտի խաղաղութիւն պահպանէ: Ձեր կեանք պիտի միախառնուի Հայրիկի կեանքի հետ, ազգը մեզմէ շատ բան կսպասէ, այնպէս ընելու է, որ ազգ մեզի օրհնէ, չանիծէ: Հա՞յ ազգ անիծել ալ գիտէ, եւ անոր անէծք աւելի կազդէ. նա մեզ իւղ, ցորեն չի տար, քաղցած կմնանք: Աստուած ձեզ երկար կեանք տայ, որ մնացած աշխատենք ազգիս համար»:
Աշակերտները երգեցին: Մեսրոպ արքեպիսկոպոսը մի քանի խօսքով ընդհանուրի կողմից շնորհակալութիւն է անում: Վեհափառը քիչ փոփոխած նրա խօսքերը, ի լուր ամենեցուն կրկնում է. «Ժողովուրդ, գիտէ՞ք սրբազանը ինչ ուզեց ըսել. անի ըսաւ, թէ, ժողովո՛ւրդ, վկայ եղէ՛ք, որ մենք խօսք ենք տալիս միացած ուժով գործել յօգուտ ազգի»:
Վերջին խօսողը Կարապետ եպիսկոպոս Այվազեանն էր, եւ ասաց մօտաւորապէս հետեւեալը.
«Թէեւ Դուք յայտնեցիք, թէ մեր բութերը Ձեզ Կաթուղիկոս արին, բայց դուք արժանացել էք այդ մեծ պատուին Աստուածանից: 40 տարուց ի վեր է Դուք Ձեր գործերով յայտնի էք Հայ ժողովրդին «Հայրիկ» պանծալի անունով, ուստի նա Ձեզ գնահատեց, ճանաչեց Ձեր մէջ վերականգնած մեր Նախկին Լուսաւորչին, ուստի ընտրուած էինք Ձեր մեծ յատկութեանց համար: Կեցցէ՛ք, կեցցէ՛ք»:
Խումբը երգում է Դ. Աղայեանի՝ Հայրիկի համար գրած երգը:
Երկու եւ կէս ժամին վերջացաւ ճաշը, եւ Վեհափառը օրհնելով սեղանը՝ գնաց հանգստանալու:
Մեծ հանդիսի առթիւ երեկոյեան դարձեալ տեղի ունեցաւ հրախաղութիւն, երգում էին ճեմարանի սաները, նուագում էր զինուորական խումբը:

Մեսրոպ աբեղայ Տէր-Մովսիսեանց

«Արարատ» 1893թ., նոյեմբեր, էջ 793-815:

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ 1890-ԱԿԱՆ ԹԹ. ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

19-րդ դարի վերջին քառորդին նոր թափ ստացան օսմանյան կայսրության քրիստոնյա ազգաբնակչության տնտեսական, կրոնական, մշակութային և ազգային հալածանքները:

Թուրք կառավարող վերնախավի գաղափարախոսությունը դարձավ պանիսլամիզմը (համաիսլամականություն): Օսմանյան Թուրքիայի տարածքային ամբողջականության և պետականության պահպանման ելքը սուլթանը տեսնում էր երկիրը միակրոն և էթնիկ առումով միատարր դարձնելու մեջ, որն արդեն իսկ սպառնալիք էր հպատակ ազգերի գոյությանը: Աբդուլ Համիդը որդեգրեց նաև օսմանյան հայրենիքի միասնականության վերաբերյալ նոր օսմանների գաղափարախոսությունը: Այն քարոզում էր օսմանյան հպատակների իրավահավասարություն` անկախ կրոնական և ազգային պատկանելությունից: Բայց հպատակ ժողովուրդները քաջ գիտակցում էին, որ օսմանիզմը տանում է դեպի ազգային բարքերի, կենցաղի, մշակույթի վերացում, դեպի ուծացում և ձուլում թուրքերի հետ: Պատահական չէր, որ առաջինը մահմեդական ժողովուրդներն ընդվզեցին օսմանականության դեմ և շարունակեցին պայքարել օսմանյան տիրապետությունը թոթափելու համար:

Սակայն այդ գաղափարախոսությունններն օգտագործվեցին թուրքական իշխանությունների կողմից` հայկական կոտորածները պետական մակարդակի բարձրացնելու համար: Հայերի աննախադեպ ջարդերով Աբդուլ Համիդը նպատակ էր հետապնդում «լուծել» Հայկական հարցը` դրանով իսկ բացառելով մեծ տերությունների միջամտությունը կայսրության ներքին գործերին, մեկընդմիշտ գերեզմանել բարենորոգումների խնդիրը, քանզի, ինչպես ինքն էր պատկերացնում, դրանց իրականացումն առաջին քայլը կլիներ Հայաստանի անկախության վերականգնման ուղղությամբ: Այդ ամենից խուսափելու լավագույն միջոցը, թուրքերի մոլեռանդ տրամաբանությամբ, հայերի բնաջնջումն էր:

Մշակվեց ջարդերի զազրելի ծրագիրը, համապատասխան հրահանգներ հղվեցին տեղական իշխանություններին: Ոտքի հանվեցին թուրք մոլեռանդ խառնամբոխը, քրդական ցեղերը, ոստիկանական ուժերը, բանակային կանոնավոր զորամասերը:

Սկսվեց հայոց ցեղասպանության առաջին փուլը, որը Մեծ Եղեռնից առաջ գլխավոր փորձն էր մեխանիզմների ճշգրտման, մշակման և կիրառման առումով: Ջարդերը, կողոպուտներն ու ավերածությունները տարածվում են ողջ Արևմտյան Հայաստանում, հայկական բնակավայրերում և հայաբնակ շրջաններում: Ավելի քան 300.000 հայ զոհվեց, նույնքան էլ տարագրվեց կամ արտագաղթեց: Ջարդերը տարածվեցին նաև Կիլիկիայում: Կոտորածներ տեղի ունեցան Այնթապում, Մարաշում, Քիշիֆլիում, Գզըլ-Աղաճում, Անտըրընում, Կոկիսոնում, Քիրեճում, Շարում, Միսիսում և այլուր: Հարկ է նշել, որ կիլիկիահայությունը համեմատաբար զերծ մնաց զանգվածային կոտորածներից: Դա ուներ իր օբյեկտիվ պատճառները, որոնցից գլխավորը Զեյթունի ապստամբությունն էր, որը թուրքական իշխանություններին հարկադրեց Կիլիկիայում համընդհանուր ապստամբության սպառնալիքն ի նկատի ունենալով` չտարածել ջարդերի ալիքը Ադանայի և Հալեպի վիլայեթներում:

Հերոսական ինքնապաշտպանության էին դիմել նաև Դյորթ-Յոլը, Ֆընտըճագը, մի շարք այլ բնակավայրեր: Ինքնապաշտպանական մարտերն ապացուցում են, որ թուրքական արյունոտ յաթաղանից փրկվելու միակ միջոցը զինված, կենաց ու մահու պայքարն էր:

1890-ական թթ. Կիլիկիայում զգալի ազդեցություն էր ձեռք բերել Ս.Դ. հնչակյան կուսակցությունը, որը զգալի դերակատարություն էր ունեցել ոչ միայն Զեյթունում, այլև այլուր Կիլիկիայում` ազատագրական գաղափարների տարածման, զենք-զինամթերքի ձեռք բերման, զինված խմբերի և ինքնապաշտպանության կազմակերպման առումով:

Ջարդերից հետո դրությունը Կիլիկիայում շարունակում էր մնալ լարված: Նոր թափ էին ստանում հայերի նկատմամբ կիրառվող բռնությունները: Աբդուլ Համիդը ծրագրում էր իրականացնել երկրամասի հայության կոտորածները, որոնք կհանգեցնեին Կիլիկիայում հայերի տնտեսական բարվոք վիճակի փլուզմանը և ազատագրական պայքարի պարտությանը: Կիլիկիահայության ընդվզումները բացառելու համար նա Ադանայում և Հալեպում հաստատեց «զինվորական արտակարգ հրամանատարություններ», որոնց խնդիրն էր Կիլիկիա գաղթեցնել 150.000 մահմեդականների` ի հակակշիռ հայերի թվական, տնտեսական և մշակութային գերազանցության:

Հրապարակվող փաստաթղթերում, որոնք վերաբերում են վերոնշյալ իրադարձություններին, կատարել ենք որոշ կրճատումներ` թողնելով մեզ հետաքրքրող հարցերին վերաբերող առավել էական մասերը: Բնագրերի շարահյուսությունը և կետադրությունը պահպանվել են նույնությամբ, ուղղագրության փոփոխմամբ` ընթերցումն ավելի մատչելի դարձնելու միտումով:

Ռուբեն Գասպարյան
պատմական գիտությունների
թեկնածու

N 1
ՔԱՂՎԱԾՔՆԵՐ Կ.ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ Մ.ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ` ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

8 փետրվարի 1895թ.
Կ.Պոլիս

Վսեմափայլ նախարար

... ժողովրդյան դառն վիճակ սքողել` կարծելով հաճելի բան մ՚ըրած լինել տերության, ամենամեծ սխալ մ՚է, որ կրնա տեղի տալ վնասաբեր հետևանքներու...

Հայ ժողովուրդը թե՛ իբր հողագործ, թե՛ իբր արհեստավոր, թե՛ իբր վաճառական, երկրին զարգացման մեկ կարևոր տարրն եղած է, հատուցանելով իր վրա դրված բոլոր տուրքերն, ապրելով օսմանյան հպատակ ուրիշ ժողովրդոց և մասնավորապես իր թուրք հայրենակցաց հետ խաղաղասեր ոգվով և տենչալով միայն վայելել քաղաքակրթության բարիքներն, իսկ իր ներքին կենաց մեջ` հարյալ քրիստոնեական կրոնին` իր եկեղեցիներն, վանքերն ու դպրոցներն կամավոր ողորմությամբ ժողովրդյան հոգալով` փույթ տարեր է կրթել իր զավակներն և հաջողեր է տալ ընկերության ամեն տեսակ արհեստագետներ և տերության կարող պաշտոնյաներ: Եվ սակայն, վսեմափայլ տեր, այս ազգն կը տեսնե զինքն այնպիսի վիճակի մը մեջ, ուր ո՛չ անհատապես կրնա անդորր ապրիլ իբր մարդ և ոչ հավաքապես` իբր ազգ: Մեկ կողմե վարչական, դատական, ոստիկանական արդի դրությունն` իր բացարձակ կեդրոնացման ոգվովն և սեղմյալ արտոնությամբն, և մյուս կողմե` ոմանց ապիկար և ոմանց մոլեռանդ պաշտոնեից հոռի գործադրությամբը բավական չէ եղած ժողովրդյան ապահովվելու այն իրավունքներն, որք տերության պաշտպանության ներքև կը գտնվին: Իբր հետևանք այս վիճակին և այն անվստահության, որ տեղի տված է կարգ մը խստությանց, կը շարունակվի կենաց, պատվո և ընչից անապահովությունն հայաբնակ նահանգաց մեջ:

Ամենուրեք քուրդ և չերքեզ հրոսախմբեր կ՚ասպատակեն` անարգել և համարձակ, սպանություններ կը գործեն, կը հափշտակեն երկրագործ ժողովրդյան գույքն ու կենդանիներն, կը վառեն անոնց պարենն ու խոտի դեզերն, և ձմռան

եղանակին մեջ գյուղացիք չը գտնելով ուտեստ ո՛չ իրենց և ո՛չ ալ կենդանյայց համար՝ կը հարկադրին թողուլ անոնց իրենց կենդանիներն:

... Այսինչ կամ այնինչ ցեղապետի պաշտպանությունը վայելելու և անոր ցեղին պատկանող քրդաց հարստահարություններեն զերծ մնալու ակնկալությամբ՝ կը հարկադրվին հայերն իրենց հողերուն լավագույն մասերը թողուլ պեյերու և կամ դատական անիրավ վճիռ մը կը խլէ զանոնք իրենց ձեռքեն:

Գյուղացիք պարտավոր են նաև բացի այն տուրքերեն, զորս կը հատուցանեն արքունի գանձուն, տուրք մ՚ալ վճարել քուրդ պեյերու, որ կը կոչվի խաֆիրի տուրք:[1] Նոյնիսկ վանքեր կան, որ իրենց քուրդ աղաներն ու որոշյալ տուրքերն ունին և կը պարտավորին հատուցանել զայն ժամանակին... Մյուս կողմե հարկահաններ և մյուլթեզիմներ[2] կուգան լրացնել պակասն այդ չարյաց... Գյուղացիք այս վիճակեն հուսահատ ընտանյոք կը գաղթեն ուրիշ տեղեր՝ հարձակումներ կրելով նաև ճամբուն և հոն կորսնցնելով իրենց գոյից մնացորդն, այլք կը թողուն իրենց ընտանիքն և առանձին օտար երկիրներ կը դիմեն ապրուստ ճարելու համար, սակայն ասոնք ալ իրենց վերադարձին չեն ընդունվիր այլևս իրենց հայրենի երկրին մեջ, և կարգիլվին իրենց ընտանյաց քով դառնալու՝ հանցավոր համարվելով օտարության դիմելնուն համար: Իսկ պատվո ապահովության մասին գալով՝ աղջիկներ, նոր հարսեր և կիներ առևանգել, բռնաբարել, անչափահաս աղջկանց պատիվը լուծել... մեկ գերդաստանի պատկանող կիներն ու այրերն մերկացնելով մահու սպառնալոք հարկադրել շնանալու, այնպիսի իրողություններ են, որոց վրա չենք կարող երկար խոսիլ...

Ոստիկանք խումբ խումբ ձիերով կը շրջին գյուղերն խուզարկություններ կատարելու և տեղական իշխանությունք անոնց աջակից կարգած են քուրդերն ու չերքեզները: Իրենց հաջողության համար անպատճառ պետք է քաղաքական դավի մը, ապստամբական շարժման կամ խորհրդի մը հետքն ստեղծել և ճշմարտության երևույթ տալու համար խոստովանության մը վրա զայն հիմնել: Այսպիսի խոստովանություն մը խլելու համար կը գանակոծեն գյուղացիներն, կը խուզարկեն տուներն, և այս առթիվ կը գործվին բռնաբարությունք... Աշխարհական բանտարկելոց թիվն հազարներով կը հաշվվի և սակայն ծանոթ պատճառներով պատրիարքարանին թղթակցությունք առաջնորդարանաց հետ դադրած վիճակի մը հասած լինելուն՝ կարելի չէ եղած անոր ճշգրիտ քանակությունը գտնել...

...Իսկ կրոնի ազատության տեսակետով՝ հայոց ազգն ենթակա է այնպիսի ճնշումներու, որ կը զրկին զինքը նոյնիսկ հոգևոր մխիթարություններ և իր քրիստոնեական կրոնը ազատորեն պաշտելու իրավունքեն... Առանց փոփոխման և հապավման չ՚ արտոնվիր նաև հայոց պատմության տպագրությունն ու հրատարակությունն, ինչպես նաև դասագրքոց մեջ հայոց նախնի թագավորաց, իշխանաց և զորապետաց անուններն կը կպարվին և այլ անուններ կը դրվին հանրային կրթության պաշտոնյաներուն կողմե, ինչպես նաև կարգիլվի հրատարակությանց մեջ գործածել քաղաքներու հայերեն անուններն:

ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 3, թ. 1-7: Պատճեն: Ձեռագիր:

N 2

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ՇԱՀԱՆ ԲԵԿԻ[3] (ՔԵՐՈՎԲԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ) ԱՎԵՏԻՍ ԵՎ ՄԱՐՈ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԻՑ՝ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՅՈՐԹ-ՅՈԼԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

15/27փետրվարի1896թ.
Չորք Մարզպան

Թանկագին պ. Ավո
և պաշտելի քույրիկ

Չէի ուզում ձեր ներկա անգին ժամանակները գողնալով ձեզ անձնական խնդիրներով զբաղեցնել. բայց հարկը ստիպեց զիս գրել բողոքագիրս էական

փաստերով և կենդանի ապացույցներով, սկսյալ անցյալից մինչև ցարդ մեր սակավիկ գործունեություննե… ուստի կ՛խնդրեմ հաճեցեք մի քիչ ուշադրություն անել:

Մենք 10 տարի առաջ 12 ընկերներով միացած մեր մեջ ընկերություն մը կազմակերպեցինք, նպատակն՝ իրավանց պաշտպանել, անիրավության և բռնության դեմ դնել, որովհետև կ՛գտնվեին աղայք, որք իբր բռնապետ մյուս հարյուրավոր ժողովրդի վրա տիրելով արյունները քամում էին ավելի քան թուրքը. մենք հաղթեցինք ջլատելով նրանց բռնապետական ուժերին, ստացանք մի քանի տարի «Արմենիա» թերթը:

1888 օգոստոս 2/14-ին հաճընցի ժիրայր և Համբարձում Բոյաճյանների[4] միջոցով մեր մատերի արյամբ ուխտեցինք աշխատել ցմահ Ազգի և Հայրենիքի ազատության համար, շարունակ աշխատում էինք պարագաների համեմատ:

Վերջերս պ. Աղասին գալով ավելի պարզեց գործելու եղանակներն մեր առաջ և մտանք «Մարո» մասնաճյուղի անվամբ հնչակյան դրոշի ներքև և մեր թղթակիցը լինելով Սարհատն[5] ի դիմաց մասնաճյուղիս կ՛թղթակցվեր մի ժամանակ, և այն ատեններ ըստ մեր կարողության աջակցեցանք պ. Աղասիին թե՛ նյութապես և թե՛ առաջնորդելով նրան այս ու այն կողմ ճանապարհորդությանց:

Երբ Գարանըր Գափուի դեպքը պատահեցավ, մասնաճյուղս շատ մը վտանգների ենթարկվեցավ. վարչական անդամներից Հայկակ Կելճիկսարգսյան և Խոսրով Կարասարգիսյան ընկերները ի բանտ մատնվեցան, Սարհատն հեռացել էր Աղասիի մոտ ի Սելևկիա, մնացել էինք Վահրամ Քեշիշյան և Մերուժան-Հարություն Քեհյան և ես ինքս Քերովբե Տերտերյան, երեք ընկեր անվհատ աշխատում էինք:

Ընկերաց որոշմամբ մասնաճյուղի կողմից ուղարկվեցա մինչև Սելևկիա պատգամավորության:[6] Աղասիից պետք եղած հրահանգները ստանալով վերադարձա, որ «Մարո» մասնաճյուղի և թե՛ Հասան Բեկի (Հայ լեռ) գործերը կարգադրենք. սկսելով քարոզել ձեզ ծանոթ 3 հայ գյուղերից[7] 300-ից ավելի ուխտյալ ընկերներ պատրաստեցինք,[8] Հասան Բեկի և Նաճարլիի գործերն էլ կարելույն չափ կարգադրեցինք:

Վերջերս նույն ընկերներս էլ ի բանտ մատնվելով ես միայնակ մնացի փախստական: Գործի սիրուն ամեն ինչ, անձնական շահերս թողուցած գործս ու զբաղմունքս եղած էր միմիայն հեղափոխությունը, որ ո՛չ թե ընդհանուր շրջակա հայերը, կ՛հաստատեն նաև կառավարությունը և թուրք խուժանը:

Կառավարությունը և համայն թուրք խուժանը ինձ թշնամի և ի խնդիր էր, և ներքին հակառակորդ ջոջ աղաներ, որոնք զիս հանձնելով իրանց հանգստություն կարծել էին գտնել, բայց իմ գաղափարիս գիտակից հայրս և բոլոր գերդաստանս պաշտպան էին ինձ, և հարյուրավոր երիտասարդներ պահապան, որոնց շնորհիվն է որ ողջ մնացի:

Թեև ձեր հետ թղթակցության համարձակությունը չունեցա, բայց և այնպես կենտրոնի հետ միշտ կ՛թղթակցեի. մանավանդ Ատանա, Սիս, Հաճըն, Գերմանիկ,[9] Ուլնիա և այլ մասնաճյուղերի անընդհատ գրել էի և հաղորդել ստացած լուր և հրահանգներս, և կ՛գային այդ վայրերից սուրհանդակներ ինձ մոտ:

Այն ատենները, երբ ես միայնակ մնացի որոշեցի Օճախլիի երկրորդ մասնաճյուղի թղթակից Կորյունի[10] հետ միասին գործել, որպեսզի կրկին ծախսերի մասին օգտվինք, չգիտնալով նրա շատ նախանձ և եսամոլի բնավորությունը, ժամանակ մը միասին գործելով, հասկցա որ նա պահել է մեր նամակները և գրել է մեր մասին սուտ և սխալ առարկություններ: Մեր վարկը կոտրելով նա փնտրում է իր փառքը մեր անկման մեջ, մեր անչափ աշխատությանց կույր լինելով… Մենք գանգատեցինք այն ժամանակները նրա մասին և գրեցինք թե այսպիսի վատ բնավորության տեր, չար ու նախանձ ունեցող, եսամոլի և ո՛չ թե ազգի և հայրենիքի ազատության համար, այլ լոկ իր փառքը փնտրող և, արդարության հակառակ, ընկերներին մահացնելու աշխատող մի անձ կրնա լինել և ամեն բանի վնասակար: Այս գրության վրա հանդիմանվեցա պ. Աղասիից[11] և Սարհատից, նաև

կենտրոնի կողմից. հարկավ նա ավելի ոխ պահել էր մեզ համար, բայց մենք դարձյալ զինքն ընկեր ճանչնալով հարաբերություն կ՚ անեինք, առանց ո՛ևէ իր չարիքները իրեն հիշելու, սակայն ասած է՝ «վատն լավ չի կրնար ըլլալ»:

Դարձյալ քանիցս գրեցինք նաև կենտրոն առաքյալի համար:[12] Կենտրոնը մեզ ղրկեց գաղափարված առաքյալներից, թե որ առաջ ղրկած լինեին կարելի էր «Մարո» մասնաճյուղը շատ մեծ դեր պիտի կատարեր իր անվանը արժան, ինչպես Զեյթունի «Ավո» զորագունդը[13] և պարծանքներից մին պիտի լիներ ինչպես Զեյթունը, բայց կարևորություն չտրվեցավ այստեղ, ղրկեցին, բայց շատ ուշ:

Վերջին օրերս ուղարկեցին մեզ առաքյալ պ. Վարդան Խանիկյանն,[14] որին, ահա, ի պատիվ կուսակցության պետք եղած հարգանքները արինք, ում հնազանդությամբ նյութապես և բարոյապես աջակցությամբ գիշեր և ցերեկ անքուն և անհանգիստ, բավականաչափ զենք և ռազմամթերք ավելացրինք գյուղիս[15] մեջ: Նրան հանձնարարված էր այդ ընկերական դատի լուծումը:[16] Բայց ժամանակը սուղ լինելուն այդպիսի մի պարագային տակ չ՚ուզեցինք մեր անձնական դատերով անցնել ժամանակը, ավելի նայեցանք կարգադրության և պատրաստության, Կորյունը և իր մորեղբայրը մալաթիացի Մանուկը թե՛ առաջ և թե՛ այն ատեններ շատ մը վնասեցին գործոց, սակայն ապագային կը թողունք այդ: Վերջապես ու զոհողությամբ պատրաստեցինք «Մարո» մասնաճյուղերի բարոյական և ինքնապաշտպանական ուժերը, որ և ստիպեցինք նախահարձակ անել, բերել մեր վրա զորք և թուրք, քուրդ և չերքեզ հազարավոր բաշիբոզուկ կատաղած խուժանն երկու կուսակալության[17] նահանգներից, Յաճնո զորքը և շրջակա բաշիբոզուկ թուրքը մեր վրա եկան. մինչ իսկ Անտիոքա և գյուղորեից խուժանն հարձակեցան մեր վրա:[18]

Մոտեցավ այդ սրբազան ժամանակը, հասավ 95 նոյեմբեր 1/13 օրը[19] հորում սկսավ սոսկալի պատերազմը: Կռվեցանք, քաջ կռվեցանք, 8 օր շարունակ մերթ անընդհատ և մերթ թեթևակի հրացանաձգությամբ: Մեր պատրաստած խմբակներով երիտասարդներն քաջապես դիմադրեցին թշնամվույն կարկուտի նման գնդակներին, հետ մղեցինք թշնամին ամոթահար, փախան անամոթաբար, հուսախաբ, թողլով իրանց անհամար դիակներն: Մենք ունեցանք երկու միայն (մահ)՝ Սիմոնյան Գեորգ և կեսարացի... Նազար անուն պանդուխտ մը. հաղթանակը մերն էր: Բայց աղա և կղերական դասակարգի թուլությունն ու երկչոտությունները... կեղծ հաշտություն գոյացրին հուսահատելով Եվրոպայի օգնութենեն, որ ակն ի ծով սպասում էին: Երբ տեսնելով, որ ամերիկյան զրահավոր[20] մը մեր պատերազմին և տուների հրկիզման ականատես լինելով անտարբերությամբ, իր միմիայն ամերիկահպատակ անձն առավ և դարձավ գնաց, և տեսնելով որ թրքական նավատորմիղները շատ ու շատ զորք հանած և երևեկած է ծովում և տեսնելով, որ զորքը թե խուժանը միշտ կ՚ավելնա 20.000-ի մոտ, հուսահատ վիճակի ենթարկվեցան, իսկ որչափ որ մեր վարչությունը և երիտասարդաց քաջարի մասը առանց Եվրոպայի օգնությանը վստահելու պատրաստ էինք կռվել մինչև վերջ, բայց... ամբողջ գյուղացի կին և տղայք, քահանայք ու աղայք դիմեցին մյութեսարիֆ և գոմանտար[21] փաշաներին անձնատուր լինել[22] և պնդում էին ինձ էլ իրանց հետ տանել միասին, գիտնալով թե իրենց փրկությունը և ապահովությունը տաճիկ խուժանի կատաղի հարձակումներից իմ անձնատուր ըլլալուս մեջն է: Մի՞թե ես միայն ինքզինքս ազատելով թողուլ այդչափ ժողովուրդը ի վտանգ արժան էր, փոխանակ պատճառ լինելու ժողովրդի վնասին, լավ համարեցի ինձ վնասել միայն, թեև հույս չունեի ողջամբ վերեդառնալուս, նույնպես հույս չուներ բոլոր ժողովուրդը ինձ համար: Բայց երբ զոհ գնալով ներկայացա փաշաներին առաջ ըստ թրքական սովորության մի թեմմենայով,[23] որ նույնը ըրին նաև ամբողջ ժողովուրդը մեծ ու փոքր, որի կենդանի վկաներ են 3 գյուղերի հայերն:

Արդեն ի վաղուց մյութեսարիֆ փաշան զիս պահանջել էր, եկել էր զիս ձերբակալելու և քսան օր նստելով ետ էր դարձել հուսախաբ, նույնպես ամբողջ Բայեասի[24] կառավարությունը ամիսներով իր գործը թողել և ինձ հետամտել էր ձերբակալել: Բայց իզուր աշխատել էին, ես հարյուրավոր երիտասարդների պաշտպանության տակ տունե տեղ մը չէի հեռացել: Դարձյալ ի նշան հաշտության, զիս

պահանջել էր փաշան. ի՞նչ օգուտ էր, երբ ես անձնատուր լինեի և զենքի վրա մեռնելով մեռնեին նաև ինձ հետ շատ մը ժողովուրդ: Ես անձնատուր եղա մի վայ-րկյան, և վերադարձա: Շատերի ուրախությամբ, նույն վայրկյանից սկսած դար-ձյալ աշխատում եմ ընկերներով, գրում եմ տեղային լուրերը և տեղեկությունները առ հյուպատոսարանս, ժողովրդի վիճակը առ պատրիարքարանս, տարիներից ի վեր ընկերներովս միասին գրած ենք որչափ տեղեկագրեր հանրագրեր, ազգո-գուտ գրություններ... պ. Վարդանն[25] իսկ շատերին տեղյակ է, նրան վստահ ենք մենք:[26]

Հաշտութենե վերջ Կորյունը Ալեքսանդրեթ էր գնացել վախենալով որ աստ երկրորդ մի հարձակում տեղի կունենա.[27] այն ժամանակներն էլ ինչպես որ է, Ալեքսանդրեթի գործակատար պ. Ֆարհատն[28] վտանգվելով հեռացավ անկից. մենք մեր միտքն բան մը չունենալով պ. Վարդանը հանձնարարեց զինք առժա-մանակյա փոխանորդ, որպեսզի թերթից և տեղեկություններից չզրկվենք:

Իսկ նա չի փոխելով արջի բնավորությունը... «Հնչակի» 9երորդ տարի N1 և հունվար 15 թերթում հրապարակված հոդվածը գրում է ձեզ առ ի նախանձ, մինչ-դեռ մեր կազմակերպության, պատրաստության, ուժի, պատերազմի և հաշտութ-յան, վատերի ու անձնվերների նկատմամբ... հատուկ նամակներ, թղթակցութ-յուններ կ՚ ուղարկվին, երբեք նրանց մասին տեղեկություն չկա. կասկածում ենք, թե նա կվերապահե և իր կողմից կ՚ գրե հաճեցածին համեմատ...

Նա... ինչպե՞ս չի հիշում «Մարո» մասնաճյուղի վարչական անդամների այս-չափ բազմաժամանակյա աշխատությունները, նրանց պատրաստությունները, կարգադրությունները, նրանց՝ ժողովուրդ արթնցնելու պատրաստելը... պատ-նեշներ ու պահապաններ կարգելը, աղքատ դասակարգին ձրիաբար զենք ու ռազմամթերք բաշխելը, ամենուրեք խրոխտ ու քաջալեր կարդալը... հերոս Շահենի հետ[29]...

ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 229, թ. 1-4: Բնագիր: Ձեռագիր:

N 3
ՔԱՂՎԱԾՔ ԿՈՐՅՈՒՆԻ ՖԱՐՀԱՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԻՑ՝ ՍՈՒԵՏԻԱՅՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

16/28 ապրիլի 1896թ.
Ալեքսանդրեթ

Թանկագին եղբայր պ. Ֆարհատ[30]

... Սուետիայի մեր պանդուխտ ընկերք[31], այսօր թուրք կառավարության անձ-նատուր են, իբր բանակցելով և պայմանների տակ իրենց ամբողջ զենքերն, սի-րելի զենքերն հանձնեցին թշնամվոյն նմանապես ինքզինքնին, հետևապես տե-ղացիներուն էլ հարստահարության կամ ճնշման ենթարկեցինք,[32] որոնցից այսօր կառավարությունը հարյուրավոր մարթինիներ[33] և այլն կը պահանջե և ամեն գյու-ղերից ընդամենը 60-ից ավելի հայեր ձերբակալված բռներ են. իհարկե հետզհե-տե կը բազմապատկվի և ոմանք էլ կառավարության ձեռք չիյնալու համար փախ-չելով հոս են գալիս, ու պնդում են մեզ իրանց արտասահման անցնիլը, ու այդ մասին էլ բավական դժվարությունք կան ներկայիս, մանավանդ որ ատոնց ղրկե-լու համար մեզ հրահանգ մը տրված չէ, հակառակ պարագայում կառավարու-թյան տակ[34] չիյնալու համար՝ մենք զգուշանում ենք...

ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 231, թ-1: Բնագիր: Ձեռագիր:

N 4
ՔԱՂՎԱԾՔ ՖԱՐՀԱՏԻ ԱՎԵՏԻՍ ԵՎ ՄԱՐՈ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԻՑ՝ ՍՈՒԵՏԻԱՅԻ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

18/30 ապրիլի 1896թ.
Լառնաքա

Թանկագին Ավո և քույրիկ

Այսօր ստացանք ներփակյալ նամակները Ալեքսանդրեթից,[35] որով կը տեղեկանանք Սուետիա գտնվող ընկերներու մասին և այլ տեղի գործերը. նաև այսօր գաղիական շոգենավով եկավ պ. Պատրոն[36] hոս մի քանի օր մնալու: Հետո պիտի մեկնի Իզմիրնիո՝ ապրանք որոնելու համար: Կ՝ պատմե պ. Շավարշի[37] և յուր ընկերներուն անձնատուր լինելնին թուրք կառավարության՝ իրենց զենքերով, վեցհարվածյան[38] և մի քանի մարտինի հրացաններով, մանավանդ կառավարությունը այդ զենքերով չգոհանալով կը պահանջե գյուղացոց 400 ևս մարտինի հրացաններ և այլն: Մեզ շատ ցավ պատճառեց այդ ընկերներուն այսպիսի փափուկ ժամանակի միջոցին թուրք կառավարության խաբեբայությամբ անձնատուր լինելնին. մանավանդ այստեղ գտնված հակառակորդներու լավ առիթ մը եղավ իրենց, որ ահավասիկ ինչակյան գործիչների գործած գործունեությունը, որ մինչև իսկ մի ատրճանակ չը նետելով[39] անձնատուր եղան իրենց զենքերով և այլն…

ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 232, թ.1-2: Բնագիր: Ձեռագիր:

N 5
ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԱՇՈՏ ՇԱՀՐԱՄՅԱՆԻ[40] ԱՊԱՀ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ[41] ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԻՑ՝ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

17 հունիսի 1897թ.
Մերսին

Իհարկե Բարիզ, Աղեքսանդրիա կամ Կիպրոս գրված նամակներեն հասկցած եք մեր հաջողությունները… Մենք միայն չբավականանալով մեր նախանգային շրջանակով ավելի հառաջ գացած ենք մինչև Մալաթիա, և անոր շուրջն ալ կը բոլորեն տակավին ուրիշ մասնաճյուղեր, կանոնավոր հարաբերությունները արդեն սկսած են Ուլնիո[42] հետ և ամբողջ Հարգանի[43] գյուղերը որք քեզի ծանոթ են իբրև համաստեղություն, բոլորված են վրեժխնդրության հեղափոխական… դրոշին շուրջը…

Հարգան: Այս քաղաքի համար ղրկված դրամի մեծագույն մասը ղրկվեցան իրենց, ու մնացածներ ալ… գնելով հատը 2-3 ոսկի օսմ. սիստեմ կարողներ.[44] արդեն իրենք միաժամանակ շիտամի[45] հանդ մթերած են առաջիկա եղանակին մեջ շիտամներ հասցնելու համար, մանավանդ որ իրենց թթենիները այս տարի ավելի բազմացած և բարգավաճ վիճակի մեջ է, միշտ իրենք ալ կը թղթակցին:[46]

Ուլնիա: Մեր հարաբերությունները սկսած են կանոնավորվիլ: Իրենց հասցեին ղրկած 2000 ֆր[անկ]-ը մեր ձեռքը հասած չըլլալով այս տեղեն փոխարինությամբ մը իրեն հանձնելով 30 օսմ. ոսկի ղրկեցինք այն քաղաքի ծանոթ աղաներու զավակեն պ. Լիպարիտը, որ Տարսոնի ամերիկյան գոլեճ եկած էր՝ կարդալու[47] համար: Ինքը քաջ, լուրջ և զարգացյալ երիդասարդ մըն է… Դուք ալ գրեցեք նամակ մը և հանձնարարեցեք այդ երիտասարդը Ն… իշխանին[48] և հիշեցրեք նաև բաշխե դրամը շուտեն գրած եղանակով:

Թղթակցությունք: Կը հուսամ թե այսուհետև Ձեր թղթակցությունները շարունակական կըլլան, դուք միշտ … կարգադրությանց համար գրեցեք և Ձեզի

կը պատասխանվի իմ կողմանե կամ այս քաղաքի վարչության կողմանե, որ այդ մի է մեր միջև…

Ալեքսանդրեք: Ի պահանջիլ հարկին այս տեղեն, կրնաք կարող և լուրջ ընկեր մը ղրկել հոն՝ գործելու համար, բայց ինչպես պիտի ապրի, 40-50 ոսկիի գրասենյակ մը բանալու է այնտեղ՝ գործի համար, որպեսզի կառավարության ուշադրությունը չ՚գրավի և այն դիմակին տակ կարողանա այլապես գործել, և այդ դրամագլխով յուր ծախքերն ալ կրնա հանիլ, պետք է այս բանի վրա մտածիլ, այդ քաղաքով մենք շատ կը մտատանջվինք… պիտի կարողանանք այն տեղի գործեն քաշված ընկերները վերստին պաշտոնի քաշել…[49]

ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ.79, թ.1-2: Բնագիր: Ձեռագիր:

N 6
ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԱԳԱՃՅԱՆԻ[50] ԱՂԱՍՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԻՑ՝ ԶԵՅԹՈՒՆՑԻՆԵՐԻ ԾԱՆՐ ՎԻՃԱԿԻ, ԶԵՅԹՈՒՆԻՆ ԽՈՍՏԱՑՎԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՉՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 օգոստոսի 1898թ.
Ալեքսանդրիա

Սիրելի ընկեր և քաջաբազուկ պարոն.

Անցան գրեթե 11 ամիսներ…, որ դիմեցի Ալեքսանդրիա լիահոյս ու հավատավոր՝ ոչ թե անձիս անդորրության ու ապահովությանը համար, այլ… հոտիս, ճշմարտապես հերոսացյալ Զեյթունի և յուր քայքայեալ սրբավայրերու, ի մասնավորի Ս. Կարապետ վանքի վերականգնումին, վերաշինումին համար աշխատելու…

Ժողովուրդ մը, որ ազատ ապրելու, երջանիկ ապրելու անհուն իրավունք ուներ, այսօր ծայրաստիճան թշվառության մատնված կհեծե անոք, անօգնական, և կը պարտավորի նոյնիսկ ստրկաբար գլուխ խոնարհեցնելու թշնամվոյն բռնությանց, թշնամվոյն՝ որ տակավ առ տակավ և հաստատ քայլերով կը հառաջանա և կը հաստատվի Զեյթունի մեջ, ու՞ր են Զեյթունի բարեկամները, ու՞ր են անոր պաշտպան հերոսները, կը քնանա՞ն արդյոք… լրագիրներու մեջ պանծացնել, հրապարակներու մեջ կեցցե՛ աղաղակել, հասարակաց առջև Զեյթունը հայկական Կրետե անվանել բավական չէ, մարդս օդով չի սնվիր, հաց պետք է, հաց, եթե կուզենք… կռվան մը ունենալ՝ պետք է ապրեցնենք Զեյթունը, այս բաները գիտեք դուք և սակայն ի՛նչ տարօրինակություն, եվրոպիո օդն ու ջուրը, հողն ու քարը Ձեր սիրտն ալ արդյոք փոխեց, մի գուցե հին առասպելյալ «Լոտոսը» կերած ըլլաք դուք ալ և որով մոռցած ազգ, հայրենիք, հայություն և ամեն ինչ, որ սրբազան ու նվիրական բաներ են մեզ համար: Անիծյալ և անագորույն Եվրոպա, որ այնքան չարաչար վարվեցավ մեզ հետ, իրեն ապավինող մեր զավակաց սիրտերն ալ կը գողնա և սակայն ճշմարիտ հայրենասերն ամեն տեղ միևնույն պետք է մնա և յուր սիրտ ու վերաբերմունք անփոփոխ. մենք այնպես համոզված ենք, թե Ձեր հայրենասիրական հուրն անշիջանելի է և շատ բան կը սպասենք Ձեզմե. Զեյթուն յուր աչքերը հառած է դեպի յուր սիրելի ռազմիկը, որուն օգնությունը եթե չը վայելե նա այսպիսի տագնապալի ժամու մը մեջ՝ մի անգամ ընդմիշտ երես դարձնե ինքն ալ անկ է՝ որ այնքան մեծ մեծ խոստումներ ըրած էր հօգուտ և ի շինություն Զեյթունի, այդ խոստումներեն խրախուսված եկա ընկա ես ալ այս կողմեր, անձնապես հանգիստ եմ արդարև, առանց այն 100 ֆրանքի գումարին ալ՝ զոր ղրկելու շնորհն ըրած էիք, կ՚ապրեի ու կ՚ապրեմ: Բայց իմ անձս չէ, որ կը մտածեմ ես, գիշեր-ցերեկ մտածմանս առարկան է ժողովուրդս ու վանքս, եթե դարձյալ այս անտարբերությունը շարունակվի Ձեր և այլոց կողմանե՝ պիտի պարտավորվիմ ուղևորություն մը կատարել դեպի Փարիզ ու եվրոպական այլ

կարևոր կենտրոնները, գործս ես իմ ձեռքովս կատարելու: Կյանքերնիս գնաց, դրամներս գնաց, աղքատությունն ու թշվառությունը կրոնքնիս ալ այժմ ձեռքներուս խլելու վրա է, ոմանք բողոքականության կը դիմեն, ոմանք կաթոլիկության, օրինյալ ազգությունն ու հայրենիքը պիտի ուրանան, չէ՛ չեմ կրնար հանդուրժել այս բանին, եթե Աղասի մը և ուրիշ ազգասերներ կրնան անտարբեր հանդիսատես ըլլալ Ռուբինյան առյուծներու այս արժանավոր և քաջարի մնացորդաց կորուստին՝ Բարդողիմեոս վարդապետ չի կրնար տանիլ, չի կրնար լռիլ ու պաղարյուն հանդիսատես մ՚ըլլալ, պիտի ընեմ ինչ որ կարողությունս կը տանի և խիղճս կը թելադրե ինձ, և սակայն կուզեմ գիտնալ Ձեր տրամադրությունները, ուստի հաճեցեք շուտով պատասխանել, ժամանակ կորսնցնելու ատեն չէ, արդեն շատ կորսնցուցինք, վերջին զղջումը օգուտ չի բերիր, այսօրինակ անտարբերությունը չէ՞ր, որ մեզ այս թշվառություններուն մատնեց: Ինչ որ 10 տարի առաջ գործել պետք էր 20 տարի վերջը կը սկսինք և եթե անհաջողության կը մատնվենք, ան ատեն կը զգանք սխալներս, բայց արդեն բանը բանեն անցած կըլլա, ցավալին այն է որ սխալնիս ալ ուղղելու դարձյալ փոյթ չենք տանիր, մեկ խոսքով այսօր զեյթունցին անոթի է, հաց կուզե և ամենամեծ մասամբ իր հույսը Ձեր վրա դրած է, փութանակի օգնություն, կարևոր օգնություններ հասցնելու համար լրջորեն պիտի աշխատի՛ք թե ոչ, գրեցեք ինձ, կ' աղաչեմ, քունս ու հանգիստս բոլորովին կորուսած եմ. կամ բան մը ընելու եմ կամ մեռնելու եմ և կամ մեռցնելու եմ. լավ կը ճանչեք Բարդողիմեոս վարդապետը՝ որ յուր սրտաբուխ օրհնություններովն ու մաղթանքներովը պիտի ողողե Ձեր գլուխ, եթե հաճիք ընդ փոյթ յուր բաղձանաց հագուրդ տալու:

ՀԱԱ, ֆ. 420, ց. 10, գ.7, թ.12-13: Բնագիր: Ձեռագիր:

Ծանոթագրություններ

1. Խաֆիրի տուրք - հարկահանության ձև Օսմանյան Թուրքիայում: Գոյություն ուներ խաֆիրության երկու ձև: Առաջին դեպքում հողակտոր ունեցող գյուղացիները հարկատու էին թուրք և քուրդ հողատերերին, մյուս դեպքում՝ հողազուրկ գյուղացիները հողատիրոջ կողմից մշակման համար իրենց տրված հողի դիմաց փաստացի դառնում էին նրա ստրուկները:

2. Մյուլթեզիմ - հարկահավաք:

3. Շահան Բեկ (Քերովբե Տերտերյան) - հնչակյան գործիչ Դյորթ-Յոլ, Օջախլի և Էոզեյրլի գյուղերում: Եղել է Դյորթ-Յոլի ինքնապաշտպանության ղեկավարներից:

4. Խոսքը հայ ազատագրական պայքարի հայտնի գործիչներ Հարություն-Մարտիրոս (Ժիրայր) և Համբարձում (Մեծն Մուրադ) Պոյաճյան եղբայրների մասին է:

5. Սարիատի միջոցով էր իրականացվում կապը Դյորթ-Յոլի, Ալեքսանդրետի և Հաճընի միջև:

6. Քերովբե Տերտերյանը նշված տարածքներում նշանակվել էր հնչակյան կուսակցության գործիչ և ընդհանուր պատասխանատու:

7. Նկատի ունի Դյորթ-Յոլ, Օջախլի և Էոզեյրլի գյուղերը:

8. Խոսքը վերաբերում է ավելի քան 300 հոգու Ս.Դ. հնչակյան կուսակցությանն անդամագրելուն, որը, մեր կարծիքով, չափազանցված է:

9. Գերմանիկ - Հալեպի նահանգում գտնվող Մարաշ քաղաքն է, որտեղ 19-րդ դարի վերջին ապրում էր ավելի քան 20 000 հայ:

10. Կորյունը (Տիգրան Տոնապետյան) Աղասու կողմից նշանակվել էր Կիլիկիո բոլոր մասնաճյուղերի միջև կապի պատասխանատու, ապահովելով նաև կապը արտաքին աշխարհի հետ: Իր գործունեության համար 1897թ. վերջերին Կորյունը ձերբակալվում է:

11. Խոսքը հնչակյան կուսակցության հայտնի գործիչ Կարապետ Թուրսարգսյանի մասին է, որը Ս.Դ. հնչակյան կենտրոնի կողմից նշանակվելով որպես Կիլիկիայում կուսակցության ընդհանուր ներկայացուցիչ, 1892թ. աշնանը ապստամբություն կազմակերպելու հանձնարարականով անցնում է Կիլիկիա և դառնում Զեյթունի 1895թ. ապստամբության ղեկավարներից մեկը:

12. Նկատի ունի Կիլիկիայում ընդհանուր պատասխանատու նշանակելու հարցը:

13. Կիլիկիան Ս.Դ. հնչակյան կուսակության կողմից պայմանականորեն բաժանված էր «Մարո» և «Ավո» մասնաճյուղերի, որոնք իրենց հերթին տրոհվում էին ավելի փոքր (ըստ բնակավայրերի) մասնաճյուղերի:

14. Վարդան (Յարություն) Խանիկյանը նշանակվել էր որպես Մարաշի և Պայասի մասնաճյուղերի պատասխանատու:

15. Խոսքը վերաբերում է Դյորթ-Յոլ գյուղին:

16. Նկատի ունի իր և Կորյունի միջև անձնական հողի վրա ծագած հակասությունները:

17. Յալեպի և Ադանայի նահանգները:

18. Դյորթ-Յոլի ինքնապաշտպանության արդյունքում վերոնշյալ երեք գյուղերի հայերը փրկվում են կոտորածից՝ կռվելով դուրս գալով գյուղից և ապաստանելով լեռներում:

19. Այլ տվյալներով Դյորթ-Յոլի ինքնապաշտպանությունը սկսվել է 1895թ. հոկտեմբերի 31-ին:

20. Զրահավոր - ռազմանավ:

21. Գոմանտար - զինվորական հրամանատար:

22. Չևակերպումն անհաջող է: Պետք է հասկանալ՝ դիմեցին մյութեսարիֆ և գոմանտար փաշաներին անձնատրության պայմաններն իմանալու համար:

23 թեմմենա - թուրքերեն բառ է, նշանակում է իղձ, ցանկություն:

24. Բայեաս - ծովափնյա Պայաս քաղաքն է, որի մոտակայքում էր գտնվում Դյորթ-Յոլը:

25. Խոսքը վերաբերում է Յարություն Խանիկյանին:

26. Քերովբե Տերտերյանի նամակից տպավորություն է ստեղծվում, որ նա եղել է Դյորթ-Յոլի ինքնապաշտպանության ղեկավարը, մինչդեռ նրա փաստացի կազմակերպիչը և ղեկավարը հայտնի ֆիդայի Մխո Շահենն էր:

27. Կորյունը մեկնել էր կուսակցության կենտրոնի և մասնաճյուղերի միջև կապն ապահովելու նպատակով:

28. Ս.Դ. հնչակյան կուսակցության անդամներից, որը զբաղվում էր մասնաճյուղերի միջև թղթակցության և կապի ապահովման հարցերով:

29. Յերոս Շահեն - Ս.Դ. հնչակյան կուսակցության անդամ, հայտնի ֆիդայի Մխո Շահենն (Մխիթար Սեֆերյան) է, որն իր մարտական մկրտությունը ստացել էր Արաբոյի խմբում: Անցնելով Կիլիկիա՝ նա հանդիսացել էր Դյորթ-Յոլի ինքնապաշտպանության ոգին և փաստացի ղեկավարը: Ինքնապաշտպանական մարտերից հետո ձերբակալվում է: Միջազգային հասարակական և մեծ տերությունների ճնշման ներքո ամիսներ անց սուլթանը ստիպված էր ներում շնորհել բանտարկյալներին: Բանտից ազատվում է նաև Մխո Շահենը, որն անցնում է Եվրոպա, այնուհետև Ռուսաստան, Կովկաս, որտեղ 1903թ. զոհ է գնում եղբայրասպան գնդակին:

30. Ֆարհատը Ս.Դ. հնչակյան կուսակցության անդամ Թորոս Սահակյանն է, որն առաջիններից մեկը միացավ Աղասի Թուրսարգսյանին:

31. Նկատի ունի Սուետիայում ձերբակալված Շավարշին (Պողոս Շիշմանյան) և մյուս ֆիդայիններին, որոնք հանձնվել էին թուրքական իշխանություններին (տե՛ս թիվ 37 ծանոթագրությունը):

32. Չևակերպումն անհաջող է: Նկատի ունի, որ Շավարշի և իր ընկերների հանձնվելուց հետո թուրքերը, վստահ անպատժելիության մեջ, սկսեցին ճնշումներ գործադրել հայերի նկատմամբ:

33. Մարթինիներ - ռուսական մակնիշի հրացաններ:

34. Նկատի ունի կասկածանքի ենթարկվելը թուրքական իշխանությունների կողմից:

35. Կորյունի ստացված նամակներն են, որոնց բովանդակությունը Ֆարհատը հաղորդում էր Ավետիս Նազարբեկյանին:

36. Պ.Պատրոնի ինքնությունը մեզ չի հաջողվել պարզել:

37. Շավարշը դեռևս 1890թ. հայդուկային խումբ էր կազմել և իր հայրենի Արաբկիրում մաքառել թուրք ավարառուների դեմ: Նա և Սարգիս Պելայանը (Պալյան) 1895թ. մայիսին ԱՄՆ-ից անցնում են Կիլիկիա, ձևավորում հայդուկային ջոկատներ՝ գործելով Սուետիայի և Քեսապի շրջանում: Շավարշի և նրա խմբի ջանքերի արդյունքում Մուսա լեռան հայկական գյուղերը հիմնականում զերծ են մնում կոտորածից ու թալանից: Այնուամենայնիվ, Սուետիայում զգալի ուժեր կուտակած թշնամին պահանջում էր Շավարշի և նրա զինակիցների հանձնվելը, հակառակ պարագայում՝ սպառնալով անցնել հարձակման: Գործին միջամտում են նաև օտարերկրյա հյուպատոսները՝ իշխանության ներկայացուցիչների հետ բազմաթիվ խոստումներ տալով, որ հայդուկների՝ զենքերը վայր դնելուց հետո հայ ազգաբնակչությանն այլևս ոչինչ սպառնա: Հայրենակիցներին հարձակումից և կոտորածից փրկելու համար 1896թ. մարտի 20-ին Շավարշն իր խմբով հանձնվում է՝ ավելի քան 10ամիս բանտարկվելով Հալեպի բանտում:

38. Վեցհարվածյան - ատրճանակ:

39. Չնետելով - այսինքն՝ չկրակելով:

40. Աշոտ Շահրամյանը Կիլիկիայում Ս.Դ. հնչակյան կուսակցության գործիչներից էր: 1897թ. նա Մերսինի շրջանի պատասխանատուն էր, որին հանձնարարված էր նաև ընդհանուր աշխատանքների համակարգումը:

41. Ապահ Պետրոսյանը (Պետրոս Գըմգըմյան) հայ ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչներից է: Կիլիկիա անցնելով 1895 թվականին, նա գործուն մասնակցություն է ունենում Զեյթունի ապստամբությանը: 1896թ. Ապահը նշանակվում է Կիլիկիայում Հնչակյան կուսակցության ընդհանուր ներկայացուցիչ՝ ղեկավարելով Կիլիկիո նորընտիր վարչությունը, մասամբ վերականգնելով կուսակցական կազմակերպությունների ցանցը:

42. Ուլնիա - Զեյթուն:

43. Հարգան - Հաճըն:

44. Տողի վերևում Ապահի ձեռագրով ավելացված է՝ զենքեր:

45. Շիտամի - փամփուշտ:

46. Կարծում ենք, Աշոտ Շահրամյանն այստեղ նկատի ունի Հաճընի հնչակյան մասնաճյուղը, որն ավելի կազմակերպված էր այլ մասնաճյուղերի համեմատությամբ:

47. Կարդալու - դասախոսելու:

48. Խոսքը Զեյթունի ապստամբության փաստացի ղեկավար Նազարեթ չաուշ Նորաշխարհյանի մասին է:

49. Ալեքսանդրետում խիստ կարևորվում էր բազմափորձ և բանիմաց գործիչների առկայությունը, քանզի կուսակցության կենտրոնի և Կիլիկիայի միջև կապն իրականացվում էր հիմնականում այդ նավահանգստի միջոցով:

50. Ազատագրական շարժման նշանավոր գործիչ, Ֆռնուզի վանահայր Բարդուղիմեոս Թագաճյանն է, որի թրի տակով են անցել Զեյթունի կայազորի գերված թուրք զինվորները:

ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ՋՈԿԱՏՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1914-1918թթ. տեղի ունեցած Առաջին համաշխարհային պատերազմը, իր էությամբ, ռազմաքաղաքական մրցակցություն էր պետությունների երկու խմբավորումների միջև` Ավստրո-գերմանական (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, 1915-ից` Բուլղարիա) և Անտանտ (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա և Ֆրանսիա, 1917-ից` ԱՄՆ, ընդամենը` 34 պետություն): Ռազմական գործողությունները ընթանում էին երեք աշխարհամասերում:

Պատերազմի նախօրյակին և հատկապես դրա ընթացքում, ռուսական իշխանությունները արևելահայ հասարակական-քաղաքական գործիչներին Օսմանյան կայսրությունից գրավված տարածքում` պատմական Հայաստանի արևմտյան մասում ինքնավարություն ստեղծելու մշուշապատ խոստումներ էին տալիս: Նպատակը մեկն էր` ստանալ արևելահայերի աջակցությունը, որը և իրեն երկար սպասեցնել չտվեց: Պատերազմը սկսվելուն պես արևելահայ հասարակական-քաղաքական գործիչները, մի կողմ թողնելով միմյանց միջև առկա քաղաքական տարաձայնությունները, եռանդուն կերպով ձեռնամուխ եղան Հայկական կամավորական շարժման կազմակերպմանը: Սակայն ռուսական իշխանությունների վերաբերմունքը հայկական կամավորական կազմավորումների նկատմամբ միանշանակ չէր. այն ուներ թե' աջակիցներ, և թե' հակառակորդներ[1]: Աջակիցների թվում էր Կովկասի փոխարքա, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Ի. Ի. Վորնցով-Դաշկովը: Վերջինս, ի պաշտոնե, ոչ միայն քաջածանոթ էր Կովկասում բնակվող ժողովուրդների ազգային խնդիրներին, այլև տեղյակ էր Օսմանյան կայսրությունում բնակվող ազգային փոքրամասնությունների` հայերի, քրդերի, ասորիների և այլոց վիճակին: Ի.Ի. Վորոնցով-Դաշկովը գիտակցում էր, որ Կովկասում միայն հայերն էին ամբողջովին շահագրգռված ռուսական բանակի հաջողություններով, քանզի դրանց արդյունքում թուրքական տիրապետության ներքո գտնվող արևմտահայությունը կարող էր ստանալ ինքնավարություն, ինչպես խոստանում էին ռուսական իշխանությունները: Այսպիսով, աջակցելով հայկական կամավորական շարժմանը, Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը, ի վերջո, ոչ միայն ամրապնդում էր ռուսական կայսրության շահերը Անդրկովկասում, այլև մեծապես նպաստում էր կայսրության դիրքերի ամրապնդմանը Թուրքիայից գրավված շրջաններում:

Սակայն, ինչպես նշեցինք, ոչ բոլորն էին դրական վերաբերվում հայկական կամավորական շարժմանը: Դրա հակառակորդներ էին հանդիսանում ռուս ազգայնամոլ ուժերը, որոնք տիրապետում էին իշխանական լուրջ լծակների, այդ թվում և` ներքին գործերի նախարարությանը: Կամավորական շարժումը և հայ զինվորներին վարկաբեկելու նպատակով վերջիններս չէին խորշում կեղծ լուրեր տարածելուց: Մասնավորապես, նրանք հայտարարում էին, որ 1914թ. դեկտեմբերի, թուրքական 3-րդ բանակի հարձակման ժամանակ, հայ զինվորները փախել էին մարտադաշտից[2]: Իրականում, այդ հարձակման ժամանակ նահանջեց գեներալ Է.Գ. Բերխմանի հրամանատարության ներքո գտնվող Սարիղամիշյան ջոկատը: Մեկ այլ կեղծիքի համաձայն, հայերը, թուրքական բանակային ստորաբաժանումներին հանձնելու նպատակով, Սարիղամիշի անտառներում, որտեղ ընթացել են մարտական գործողություններ, ռազմամթերք են հավաքում: Այս կեղծիքը հերքվում էր այն ժամանակ, երբ հայկական կամավորական ջոկատները ռուսական գնդերի հետ կողք-կողքի կռվում էին հակառակորդի դեմ: Հենց այս

---

[1] Սահակյան Ռուբեն - Ալեքսանդրա Բախտուրինա. «Ռուսական կայսրության ծայրամասերը. պետական կառավարումը և ազգային քաղաքականությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1917թթ) (գրախոսություն), // ԲՀԱ, N 2, 2004, էջ 187-203:

[2] Ավետիսյան Մարո, էջեր հայկական կամավորական շարժման պատմությունից // ԲՀԱ, N 1, 2005, էջ 86:

կեղծիքը, Պետական դումայում տեղի ունեցած իր ելույթում, ներկացրեց Միքայել Պապաջանյանը (Պապաջանով)[1]:

Ռուսական ազգայնամոլական ուժերը կեղծիքների միջոցով ոչ միայն վարկաբեկում էին կամավորական շարժումը, այլև փորձում էին սրել հայերի և կովկասյան մյուս ժողովուրդների՝ առանց այդ էլ լարված փոխհարաբերությունները: 1915թ. մայիսի 15-ին Ռուսաստանի ՆԳ նախարարությունը բանակի գերագույն գլխավոր շտաբին ներկայացրած իր զեկուցագրում, խեղաթյուրելով փաստերը, վարկաբեկում էր կամավորական շարժումը և անգամ՝ Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին: Ավելին, ՆԳՆ-ը պնդում էր, որ «դրուժինաների կազմակերպումը և հատուկ հովանավորությունը սրել էին հայերի և Կովկասի մյուս ժողովուրդների հարաբերությունները»: Ուստի նախարարությունը ելնելով «պետական շահերից» և ցանկանալով պահպանել կովկասյան ժողովուրդների «բարեկամական» փոխհարաբերությունները, առաջարկում էր քննարկել հայկական խմբերի գոյության անհրաժեշտության հարցը: ՆԳՆ-ին անհանգստացնում էր այն փաստը, որ ինչպես պատերազմի սկզբին, այնպես էլ Սարիղամիշի օպերացիայի նախօրեին, հայերը սպառազինվում էին նորագույն զենքերով, ավելին, հայերը սպառազինվում էին անգամ այն ժամանակ, երբ Անդրկովկասը գրավելու թուրքական վտանգն արդեն անցյալում էր մնացել: Սակայն ՆԳՆ-ի այդ առաջարկը մերժվեց: Մերժումը հիմնավորում է Կովկասյան բանակի շտաբը: Նրա կարծիքով, նման որոշման ընդունումը հավասարազոր էր «հակառակորդի դեմ կռվում գտնվող և արժեքավոր մարտական հատկություններ ցուցաբերած հայկական դրուժինաների լուծարմանը»[2]:

Ռուսական ազգայնամոլական ուժերը հայկական կամավորական շարժումը վարկաբեկելու իրենց քաղաքականությունում հմտորեն օգտագործում էին արևելահայ հասարակական-քաղաքական գործիչների կողմից Արևմտյան Հայաստանի ինքնավարության վերաբերյալ հայկական մամուլում հրատարակված հոդվածները, ինչպես նաև ինքնավարության վերաբերյալ վերջիններիս կողմից թույլ տված անզգույշ արտահայտությունները: Օգտվելով վերոնշյալ հանգամանքից, ռուսական իշխանութունների կողմից իրականացվող գրաքննությունն արգելեց մամուլում արծարծել ինքնավարության հարցերը:

Հայկական զինվորական կազմավորումների նկատմամբ ռուսական իշխանությունների վերաբերմունքն արմատապես փոխվեց 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ ռուս զինծառայողները զանգվածաբար լքում կամ դասալքում էին Կովկասյան ռազմաճակատում տեղակայված բանակային ստորաբաժանումներից, իսկ այդ նույն ժամանակ հայազգի զինծառայողները, պահպանելով կարգապահությունը, շարունակում էին հերոսաբար դիմակայել թշնամուն:

Ստորև ներկայացվող փաստաթուղթը պահպանվում է Հայաստանի ազգային արխիվում, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ.Գ. Ներսիսյանի անձնական ֆոնդում: Փաստաթուղթը տպագրվում է առաջին անգամ, ուղղագրական ու կետադրական որոշ շտկումներով և ոճի պահպանմամբ: Մեր միջամտությունները կատարվել են ուղղաձիգ փակագծերով: Փաստաթղթի վերնագրումը կատարվել է մեր կողմից:

Ռուբեն Սահակյան
պատմական գիտությունների
թեկնածու

---

[1] «Համբաւաբեր», Թիֆլիս, N 12, 13 մարտի 1916, էջ 360:

[2] Корсун Н., Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны 1915 г., М., 1940, Приложение 4, с. 189.

N 1
ДОКЛАДНАЯ ЗАПИСКА НЕИЗВЕСТНОГО АВТОРА О КУРДСКОМ И АРМЯНСКОМ ВОПРОСАХ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Совершенно секретно — 13 декабря 1915 года
г. Чернигов

История курдского вопроса настоящей войны

Вопрос по объявлении Турцией войны, которая повидимому застала нашу Кавказскую армию невполне подготовленной,[1] местное высшее военное начальство решило использовать воинственное курдское население Баязетского и Диадинского санджаков[2] в целях побуждения их перейти на нашу сторону и тем дать нам возможность начать военные действия в упомянутых санджаках (уездах) с сравнительно небольшими регулярными силами нашей армии.

Лицом, на кое было возложено ведение переговоров с курдами, а в зависимости от успеха последних, и перехода их на нашу сторону, организации целой курдской бригады для использования ее как самостоятельной боевой единицы, был некий Ашреф бек Шамшадинов[3], генерал-майор русской службы, владеющий крупными поместьями в Сурмалинском и Эчмиадзинском уездов Эриванской губернии.

Ашреф бек Шамшадинов был известен в военных кругах как человек искренее преданный России и весьма влиятельный и популярный среди курдского населения Баязетского и Диадинского районов.

Выбор казалось был очень удачным, но широким планам генерала Шамшадинова не суждено было осуществиться. Ему не удалось организовать отдельную курдскую бригаду под своим непосредственным начальством, каковая должна была действовать в качестве самостоятельной части вместе с нашими войсками. К сожалению ни своим нравственным воздействием, ни влиянием Шамшадинову не удалось склонить курдов и он, растратив ассигнованные ему 50000 руб. на пропаганду, не выполнил возложенную на него задачу.

Правда, одно время ему ставили в заслугу успех, который он добился в переходе на нашу сторону командиров хамидийских алаев[4] N 7 и 8 родственников своих Расул бека и Халид бека Шамшадиновых с несколькими курдскими офицерами. Расул бек и Халид бек, приказом Главнокомандующего Кавказской армии были приняты на русскую службу с сохранением за ними прежних офицерских чинов и назначением им ежемесячного содержания в размере 150 руб. Щедро награжденные и обласканные военными властьями Шамшадиновы казалось бы должны были искренее содействовать переходу к нам и других курдских вождей, на самом же деле двухсмысленное их поведение в дальнейшем и неоднакратно поступавшие в штаб корпуса агентурные сведения о неискренности Расул и Халид беков, в особенности последнего, который якобы занимается тайным сбором денег в пользу Турции, наконец страх быть арестованными за все это, заставили их обоих в конце прошлого июля бежать снова в пределы Турции.

Что касается Ашреф бека Шамшадинова, назначенного после неудачной попытки сформирования целой курдской бригады, в распоряжение командира 4 Кавказского корпуса генерала Огановского[5], исполнял иногда и не без успеха возлагаемые на него различного рода поручения. Особенно существенную пользу он принес, по отзыву начальника карательного отряда полковника Ушакова будучи командирован с последним в Донбадскую казу, что севернее Макинского ханства для успокоения тамошнего курдского населения племени "милян", очень разбойничего и постоянно

тревожившего своими набегами наши тыловые учреждения.

Не без интереса следует остановиться на деятельности другой личности, некого Бадыр хана Заде[6], командированного тем же Кавказским военным начальством в средних числах прошлого января в Алашкертскую долину для воздействия на курдов в вопросе об разооружении и переходе на нашу сторону. Бадыр хан несколько по иному объяснял причины враждебности к нам курдского населения как в занятых уже нами районах, так и находящихся в пределах Турции. По его уверению турецкое правительство всеми силами старалось частью путем подкупа наиболее влиятельных курдских шейхов, частью же путем командирования своих эмиссаров внушить и распространить среди темных курдских масс идею джихада (священной войны) и тем обстоятельством, что большинство курдов сунниты, удержать их на своей стороне. Бадыр хан выработал целый план борьбы с идеей джихада, заключавшийся в самом широком распространении среди курдского населения воззваний и непосредственных переговоров с курдскими вождями. Получив одобрение Тифлиса, он отправился в г. Каракилису Алашкертскую, оттуда и стал действовать. К прискорбию Бадыр хана уверявшего в своей популярности и влиянии на курдов окончилось безрезультатно. Воззвание его к курдам не действовали, а письма адресуемые им непосредственным к наиболее видным курдским шейхам, как то командирам хамидийским алаев Абдул Меджиду, Хуссеин паше, Ахмед беку Сипкани, оставались даже без ответа. Приведу небольшой, не лишенный интерса, эпизод из деятельности Бадыр хана, указывающий на то, что авторитет последнего, равно как и его имя были совершенно чужды курдам. Никто его в этом районе не только не знал, не понимал, но даже относился с некоторой враждебностью. 27 прошлого января мне приказано было сопровождать Бадыр хана в одно курдское селение, что в трех верстах от Хамура, где было назначено свидание командира хамидейского алая N 6 Кахраман бека, выразившего желание обсудить условия сдачи оружия и перехода со своим полком на нашу сторону. Нас встретили курды хотя и дружелюбно, но не без некоторой подозрительности к Бадыр хану, который сразу высказал полную несговорчивость с Кахраман беком и присутствовавшими с ними несколькими хамидейскими офицерами. Создалось впечатление, что Бадыр хан хотя и курд по рождению, но проживший долгое время в Европе и получивший образование в Швейцарии, совершенно забыл характер и психологии курдов: это был для них совсем чужой человек. Подозрительность курдов к Бадыр хану выразилась в конце концов тем, что когда мы не придя к соглашению выезжали из деревни, неожиданно были обстрелены ружейным огнем людьми Кахраман бека, повидимому не без ведома и согласия последнего.

Прожив без всякой для нас пользы в деле привлечения курдов более 2 месяцев в Алашкертской долине, он по ходатайству начальника Эриванского отряда[7] был отозван. Так безрезультатно закончилась авантюра Бадыр хана, стоившая нам несколько десятков тысяч рублей. Несколько слов о деятельности Али хана Макинского, родственника бывшего Макинского сардара Муртузи Кули хана, после чего более подробно остановлюсь на личности и роли, кою играет и по настоящее время в курдском вопросе Абдуррезак[8].

Получив разрешение сформировать так называемую мусульманскую Эриванскую дружину, Али хан давал обещание действовать с ней в качестве самостоятельной боевой единицы, но и пользоваться ею с политическими целями для борьбы с турецкой пропагандой панисламизма, агентурой и шпионажем в пользу Турции. Вскоре на деле эта дружина доказала полную свою непригодность бесполезность и лишенная своей самостоятельности была сначала подчинена генералу Трухину[9], начальнику 2-й

отдельной Забайкальской казачьей бригады в составе коей и вошла, а спустя некоторое время, по ходатайству того же генерала, расформирована за неоднократные случаи мародерства и дезертирства.

Теснее с курдским вопросом в настоящей войне связана личность Абдуррезака. Будучи искрене предан и обязан нашему правительству и неоднократно на деле доказывая свою привязанность Абуррезак сразу получил доверие кавказских военных властей. Явившись на Кавказ, быть может, не без тайной мысли стать во главе объединенного под протекторатом России Курдистана[10] и отлично понимая, что осуществление своих политических планов он может добиться только при поддержке и помощи России, Абдуррезак весь отдался курдскому вопросу. Получив от военных властей командировку в Азербайджан[11] в распоряжение бывшего начальника нашего отряда, он находясь при штабе упомянутого отряда до Дильманского боя,[12] т.е. до 18 апреля, своими непосредственными сношениями с курдскими вождями оказывает нам, по отзыву генерала Чернозубова[13] немалую пользу в смысле водворения порядка и спокойствия среди курдов занятых нами районов и обеспечения нашего тыла от постоянных разбойничьих курдских набегов. Одно обстоятельство несколько скомпрометировало так успешно начавшуюся деятельность Абдуррезака. В дневнике одного убитого в бою под Дильманом турецкого офицера были найдены явно уличающие Абдуррезака указания в тайных сношениях последнего с турками и доказательство его двуличной игры. Так в одном месте дневника того же офицера датированного 12 и 15 апреля говорится, между прочим: "Абдуррезак кажется убежденный оттоман, ему можно вполне доверяться", в другом месте: "Слава Аллаху, от Абдуррезака снова получены успокоительные известия о малочисленности русских войск".

Арестованный за измену Абдуррезак был отправлен в Тифлис, где ему не легко было оправдаться, убедив высшее военное начальство, что вся история с дневником ничто иное, как армянская провакация[14], интриги армян недовольных тем привилегированным положением и влиянием Абдуррезака, коим он пользовался в бытность свою при штабе Азербайджанского отряда. Отсутствие прямых улик и доказательств подлинности найденного дневника турецкого офицера, помогло Абдуррезаку окончательно реабилитировать себя в глазах представителей высшего командования на Кавказе.

Вскоре он получает новую миссию: поднять среди родственных ему курдов провинции Бохтан, что южнее Ванского озера восстание, двинуться с восставшими на Битлис, попытаться овладеть этим городом, распространить восстание далее на юг, завязав одновременно тайные сношения с кызыл-башами области Дерсима, исконными врагами турок и привлечь их на свою сторону.

Широким планам Абдуррезака на этот раз не суждено было осуществиться. Прибыв в конце мая в Ван, Абдуррезак занялся формированием курдского отряда, с коим он должен был приступить к осуществлению своей политической программы. Набрав банду разбойников, человек в 200-300, терроризировавшую за время своего пребывания в г. Ване местное население, о чем в свое время доносил бывший начальник нашего отряда генерал Николаев[15], просивший разрешения убрать людей Абдуррезка из города, последний наконец, получил строжайшее приказание немедленно выступить по заранее выработанному маршруту на юг- в провинцию Бохтан. Мечты Абдуррезака на счет курдов не сбылись. Курдское население провинции и земель, коими некогда владели предки Абдуррезака, не изъявили ему покорности и повиновения, как он ожидал. А между тем набранная им вскоре в Ване шайка с каждым днем уменьшалась, участились разбои[16], случаи массового дезертирства и в заключение Абдуррезак,

потеряв почти всех своих людей частью разбежавшихся, частью отставших и предавшихся грабежам, принужден был вернуться назад в Ван, откуда был отослан в Тифлис. Так неудачно кончилась политическая затея человека искрене преданного делу, верного нам, поставившего на карту даже своэ жизнь, но к сожалению не пользующегося никаким влиянием и авторитетом среди некогда влстных ему курдов.

Итак, надежды кавказских высших военных властей мирными способами воздействовать на воинственное курдское население в интересах полного водворения порядка и спокойствия в оккупированных нами районах Турции, а равно привлечение на нашу сторону действующих против нас в рядах турецкой армии курдов, не оправдались, не смотря на крупные материальные и нравственные затраты. Причина-неудачный выбор лиц способных осуществить разработанный заранее план за влияния, популярности и авторитета у названных лиц среди курдского населения. Все они, за исключением Абдуррезака, люди довольно сомнительным прошлым, искатели приключений, наживы и только.

Участившиеся за последнее время факты разбойничьих нападений курдских шаек и отдельних курдов, живущих в тылу у нас под видом мирного населения, на наши тыловые учреждения: как то этапные линии, караваны верблюдов, военные транспорты, повторные случаи порчи телефонных и телеграфных линий и служб связи, побудили наконец кавказских военноначальников, исчерпавших предварительно все мирные средства воздействия, принять репрессивные меры по отношению к курдскому населению. Так, приказ Главнокомандующего Кавказской армии[17] от 5 марта N 1157 гласил: "В виду явно враждебно настроенного против нас непроизводительного и разбойничего курдского элемента, постоянно беспокоившего наш тыл, находим целесообразным принятии целой системы мер в целях упорядочения порядка и спокойствия у нас в тылу".

Мероприятия эти выразились во первых: в массовом выселении всех курдов, живущих в оккупированных нами неприятельских районах в пределы Турции, во вторых: конфискации принадлежащих им жилищ, скота, имущества и земель с предоставлением таковых во временное пользование армянам - беженцам Мушского, Мелязкертского, Копского и Ванского районов при условии строгой регистрации всего уступаемого последним курдского имущества и возвращения его в казну по ликвидации вопроса о беженцах.

С назначением Главнокомандующим Кавказской армии Великого князя Николая Николаевича[18], курдский вопрос повидимому получает новый фазис развития. Вновь замечается тенденция выработки ряда мер мирного воздействия на курдов путем непосредственным дружественных с ним переговоров склонить их к разоружению, возвращению к своим очагам и сельскому занятию. Работы в этом отношении уже начаты и не без успеха. Так, по последним агентурным сведениям курдские племена Соуджбулака будто изъявили на покорность и готовность выдать оружие.

Армянский вопрос в связи с настоящей войной

Участие и роль армянского народа в нынешней мировой войне выраизлась главным образом в формировании армянских добровольческих дружин на Кавказском театре военный действий. После долгих предварительных переговоров представителей армян[19] с военным начальством Кавказа о справедливом желании их принять участие с нами в борьбе с Турцией заклятым врагом христианства и историческом тиране угнетенного армянского населения Турецкой Армении, армянам удалось, наконец, добиться разрешения сформировать сначала в виде опыта одну дружину для дейст-

вия в качестве самостоятельной боевой единицы. Первой армянской дружиной или как ее называют хумбой[20], была дружина Андроника [Андраник][21] действовавшая все время вплоть до так называемой Ван-Дильманской операции в Азербайджане вместе с нашим отрядом. Там она зарекомендовала себя с хорошей боевой стороны, особенно после лихого дела защиты весьма важного в стратегическом отношении Котурского ущелья-за каковой подвиг предводитель ее Андроник был представлен генералом Чернозубовым к награждению орденом Св. Георгия 4 степени.

По примеру хумбы Андроника стали формироваться мало по малу и другие армянские дружины[22]. Местом формирований служило предместье города Эривани-Кинакиры [Канакер][23]: было возложено чрезвычайно даровитого и редкого работника, офицера Генерального штаба капитана Озоля[24]. К началу нашей Ванской операции[25], имевшей большое политическое значение, армянские дружины были вполне готовы. На смотру в селении Игдыре в 20 числах апреля[26] представилось четыре дружины[27]: первая под начальством Вартана[28], вторая-Хечо[29], третья - Керы,[30] четвертая - Дро[31] и конница в 300 человек под командой Амазаспа[32]. Так образовалось маленькое армянское войско в всего до 5000[33] человек, которое должно было принять участие в освобождении Ванского вилайета и самого города Вана осажденного тогда войсками Джевдет паши[34]. В этой экспедиции армяне действовали не как самостоятельные боевые части, а лишь как придаток к нашим регулярным войскам, а именно отряду генерала Николаева в составе первой отдельной Закаспийской казачьей бригады и некоторых пехотных частей.

26 апреля был перейден чрезвычайно трудный снежный Тапаризский перевал, после чего началось наше движение по долине Абага к Вану. Первое боевое крещение армяне-добровольцы получили при занятии селения Гявришами лежащего на южном склоне Тапаризского перевала. После ряда боев у селений Соук-су, Баязид-ага, верхний и Нижний Сор у Беркри-Калинского ущелья, где дружины, отзывом наши военных авторитетов, весьма удачно исполняли возлагаемые на них отдельные самостоятельные задачи.

6 мая дружинники с нашими войсками вступили в занятый с боем город Ван.[35]

Передавая с полным беспристрастием все виденное и пережитое мною, я не считаю себе вправе умолчать о следующем прискорбном для армян инциденте едва не поставившем на карту существование других дружин. В момент нашего пешего движения к Вану возле селения Берки-Кала армянами дружинниками был отбит неприятельский обоз. При приближении к нему нашего офицерского разъезда совершенно неожиданно и без всякой причины армяне добровольцы открыли по нашим казакам огонь, отлично зная, что это части войск отряда генерала Николаева. Несмотря на делаемые офицером сигналы, ружейная стрельба продолжалась. Не обошлось, конечно, без жертв с обоих сторон. Этот инцидент, в особенности факт обстрела армянскими дружинниками наших регулярных частей произвел тягостное впечатление в Тифлисе. Дело приняло настолько серьезный оборот, что вопрос о расформировании всех армянских дружин был принципиально решен. Лишь вмешательство одного видного влиятельного генерала и наличие кое-каких смягчающих обстоятельств спасли положение. Было назначено строжайшее расследование данного дела, и в конечном результате учреждение военно-полевого суда и нескольких смертных казней.[36]

С падением Вана армянские дружины получают уже вполне самостоятельную задачу преследование отряда Джевдет паши, отступившего по южному побережью Ванского озера к Битлису. Целая серия упорных боев

у Востана,[37] на линии Пелю-Пеникянс и наконец у Сорпа еще раз доказали, что армянские дружины представляют очень хороший боевой материал, а перенесенные ими тяготы военно-походной жизни закалили в них твердость духа и воли (отзывы участников похода начальника штаба 2 Забайкальской бригады генерального штаба подполковника Попова и командира пограничного батальона полковника Ушакова).

Во время же последних июльских Коп-Мелязгердских упорных боев дружины принимали деятельное участие, получив весьма трудную и ответственную задачу движения на Мушскую долину[38] на соединение со своими братьями сасунскими повстанцами под начальством известных Рубена[39] и Папазяна[40]. Соединение это не состоялось, так как нашим войскам, а вместе с нами и дружинам приказано было из стратегических соображений временно оставить вышеуказанный район[41]. Наконец в последнее время дружина Дро принимала участие в карательной экспедиции на курдов населяющих горные хребты Ала-дага и Сипан-дага.

Таков вкратце боевая деятельность представителей армянского народа в исторической борьбе с турками, исконными врагами и притеснтелями Турецкой Армении.

[подпись отсутствует]

НАА, ф. 818, о. 1 д. 479, л. 8-19. Копия. Машинопись.

Ծանոթագրություններ

1. Ոչ միայն Կովկասյան, այլև ռուսական ողջ բանակը պատրաստ չէր պատերազմին: Իրականացվում էր սպառազինության նոր տեսակներով բանակի զինումը, որը նախատեսվում էր ավարտել միայն 1915-1916թթ.: Բացի այդ, ռուսական հրամանատարությունը ենթադրում էր, որ Թուրքիան պատերազմի մեջ կմտնի միայն 1915թ. գարնանը: Այդ ամենն ի նկատի ունենալով, Գերմանիան սանձազերծեց պատերազմը: Ինչ վերաբերում է Կովկասյան բանակի անպատրաստ լինելուն, ապա դա բացատրվում է հետևյալ հանգամանքով՝ 1) Կովկասյան ռազմական օկրուգի զորքերի 2/3-ը ուղարկվեց Արևմտյան ռազմաճակատ. 2) ռուս-թուրքական ռազմաճակատը համարվում էր երկրորդական, ուստի այստեղ էին ուղարկվում պահեստային և վատ ուսուցված զինծառայողներ. 3) անբավարար էր սպառազինության և հանդերձանքի մատակարարումը:

2. Ռուսական հրամանտարությունը, ինչպես նաև պատերազմող մյուս երկրները քայլեր էին ձեռնարկում ռազմատենչ քրդերին իրենց կողմը գրավելու համար: Սկզբնական շրջանում, 1914թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, քրդական ցեղերի մեծ մասը «չեզոքություն» էր պահպանում և սպասում էր իրադարձությունների հետագա զարգացմանը: Բանն այն է, որ թուրքական հրամանատարությունը տեղյակ էր Կովկասյան ռազմական օկրուգից երկու բանակային կորպուսների և այլ զորամասերի տեղափոխմանը Արևմտյան ռազմաճակատ, ուստի իր հարձակումով՝ հրահրեց ռուսներին անցնել հարձակման: Կարելի է ենթադրել, որ քրդերը ստացել էին համապատասխան հրաման՝ չձեռնարկել որևէ ակտիվ հարձակողական գործողություն և թույլ տալ, որ ռուսական Կովկասյան բանակի զորքերը խորանան օսմանյան տարածքում և կտրվեն իրենց մատակարարման ուղիներից: Քրդերից կազմված «կամավորական» ստորաբաժանումներն առաջին իսկ օրից ցույց տվեցին, որ նրանք լավագույն դեպքում հետաքրքրում է կողոպուտն ու թալանը: Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադի պետ, գեներալ Ֆ. Ի. Նազարբեկովը (Թովմաս Նազարբեկյան) ստիպված էր հեռացնել իր զորամասում գործող քրդական ջոկատը, քանի որ այն զբաղված էր բացառապես իր ցեղակիցների թալանով և բացասաբար էր ազդում զինվորական կարգապահության վրա: Պատերազմի ողջ ընթացքում քրդերը հանդիսացան օսմանյան զորքերի հավատարիմ դաշնակիցները և զգալի վնասներ հասցրեցին հատկապես ռուսական բանակի թիկունքային ստորաբաժանումներին: Նրանք ընդհանրապես աշխա-

տում էին բախումներ չունենալ կանոնավոր զորամասերի հետ, այլ հարձակվում էին համբարակային ծառայության, հեռախոսավարների, զորամասերից ետ մնացած զինվորների, ինչպես նաև հայրենի օջախները վերադարձած հայ և ասորի գաղթականների վրա:

3. Աշրեֆ կամ Աշրաֆ բեկ Շամշադինով, կամ Շամշադինով Ալի Աշրաֆաղա - ազգությամբ քուրդ, ռուսական բանակի գեներալ: Շամշադինովների ցեղը բնակվում էր ռուս-թուրքական սահմանի շրջանում: Նրանց հանձնարարված էր հսկել սահմանը: Պատերազմի սկզբում նրանց մի մասն անցնում է թուրքերի կողմը: Տե՛ս ՅԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 15:

4. Յամիդեական ալայներ (ալայ՝ թուրքերեն՝ գունդ)-1891թ. սուլթան Աբդուլ Յամիդ 2-րդ կողմից հիմնված և իր անունով կոչված, գլխավորապես քրդերից կազմված մոտ 30 անկանոն հեծելագնդեր: Նշված ուժերն օգտագործվել են գլխավորապես արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումները ճնշելու համար: Յամիդեական գնդերը ակտիվ մասնակցություն են ունեցել 1890-ական թվականների հայերի զանգվածային կոտորածներին և 1915-1916 թթ. հայերի ցեղասպանությանը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին օսմանյան բանակի կազմում կռվել են ռուսների դեմ, իրականացրել դիվերսիոն-հետախուզական գործողություններ: Գնդերը լուծարվել են 1920-ական թվականներին:

5. Օգանովսկի Պ. Ի. գեներալ լեյտենանտ - (1854-?), 1914-1915թթ. Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, 1915թ. դեկտեմբերին տեղափոխվել է Արևմտյան ռազմաճակատ և նշանակվել 3-րդ բանակային կորպուսի հրամանատար:

6. Քյամիլ բեկ Բադիրխան Զադե, քուրդ ցեղապետ, Բոհտանից: 1916թ. Թիֆլիսում, Կովկասի փոխարքա Ն. Ն. Ռոմանովին առաջարկել է օգտագործել քրդական ուժերն՝ ընդդեմ թուրքերի, փոխարենը պահանջելով անկախ «Քրդստանի» հիմնումը: Ռուսները փորձում են իրենց կողմը գրավել մեկ այլ ցեղապետի՝ Մուստաֆա բեյին: Նրան կալվածք էր տրվել Մակուի շրջանում: 1914թ. դեկտեմբերին Մուստաֆան անցնում է թուրքերի կողմը և կռվում ռուսների դեմ: Տե՛ս ՅԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 15:

7. Երևանյան ջոկատի հրամանատարը գեներալ Դ.Կ. Աբացիեն (1857-1936) էր: Նա 1916-1917թթ. Կովկասյան 6-րդ բանակային կորպուսի հրամանատարն էր: 1918-1919թթ. Սպիտակ բանակի շտաբում հյուսիսկովկասյան լեռնեցիների ներկայացուցիչն էր: Յայտնի էր իր հակահայ հայացքներով:

8. Աբդուլրրեզակ կամ Աբդուլ Ռեզակ - քուրդ ցեղապետ, որին ռուսական բարձրագույն հրամանատարությունը ցանկանում էր օգտագործել թուրքերի դեմ պայքարում և քրդական ցեղերին իր կողմը գրավելու համար: Նա, սակայն, չարդարացրեց հույսերը, քանի որ երկար տարիներ բնակվել էր Եվրոպայում և կորցրել էր կապն իր ցեղակիցների հետ: Բացի այդ, ենթադրություններ կային, որ նա կապ է ունեցել թուրքական և գերմանական հետախուզության հետ: Իր հիշողություններում գեներալ Ֆ.Ի. Նազարբեկովը նշում է, որ Դիլմանի ճակատամարտի ժամանակ ինքը ստիպված է եղել հրամանատարական կետից հեռացնել Աբդուլրրեզակին, քանի որ նա կասկածելի հետաքրքրություն էր ցուցաբերում տրվող հրամանների նկատմամբ: Տե՛ս ՅԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 35շրջ.-36: Աբդուլրրեզակը վայելում էր Ադրբեջանական ջոկատի (Կովկասյան 4-րդ հեծելազորային դիվիզիայի) հրամանատար, գեներալ Ֆ.Գ. Չեռնոզուբովի հովանավորությունը: Գեներալը երազում էր դառնալ «Քրդստանի» նահանգապետ, իսկ Աբդուլրրզակը պետք է լիներ այդ կազմավորման ղեկավարը: Գեներալ Ֆ. Ի. Նազարբեկովի ունեցած տեղեկության համաձայն, ռուսական կառավարությունը նրան ամսական վճարում էր 300 ռուբլի: Տե՛ս ՅԱԱ, ֆ. 45, ց. 1, գ, 1, թ. 17 շրջ.:

9. Գեներալ Տրուխինը հանդիսացել է Զաբայկալյան 2-րդ կազակային բրիգադի հրամանատար:

10. Տե՛ս N 8 ծանոթագրությունը:

11. Փաստաթղթում օգտագործվող «Ադրբեջան» տերմինը՝ Յյուսիսային Ատրպատականի աղավաղված ձևն է:

12. 1915թ. ապրիլի 15-ից մինչև 18-ը, Հյուսիսային Պարսկաստանի Դիլման քաղաքի շրջանում գեներալ Ֆ.Ի. Նազարբեկովի Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադի (8 գումարտակ, 12 հարյուրյակ և 12 թնդանոթ) և Խալիլ բեյի 5-րդ հետևակային հավաքական դիվիզիայի (10-ից 12 գումարտակ, 12 թնդանոթ և մոտ 6 հազար քրդական անկանոն ջոկատներ) միջև տեղի ունեցավ ճակատամարտ: Հիմնական մարտական գործողությունը մղվում է ապրիլի 18-ին: Խալիլ բեյի նպատակն էր Դիլմանի մոտ ջախջախել ռուսներին և շարժվել Ջուլֆա, ապա համալրելով իր դիվիզիան ի հաշիվ տեղի մահմեդական բնակչության, ներխուժել Զանգեզուր-Ղարաբաղ, Ելիզավետպոլի ու Բաքվի նահանգները: Իսկ ռազմաքաղաքական բարենպաստ պայմանների դեպքում Խալիլն արշավելու էր Դաղստան և Կովկասի մահմեդական ապստամբ բնակչության աջակցությամբ անջատեր երկրամասը ռուսական կայսրությունից: Ճակատամարտում հակառակորդը ծանր պարտություն է կրում: Աչքի է ընկնում Հայ կամավորական 1-ին ջոկատը Անդրանիկի հրամանատարությամբ: Նրանց զբաղեցրած դիրքերը Դիլմանի բանալին էին: Գեներալ Ֆ.Ի. Նազարբեկովի վկայությամբ. «Դրուժինիկները ստիպված էին մի քանի անգամ ձեռնամարտի բռնվել հակառակորդի հետ: Սումբատի (Սմբատ Բորոյան- Ռ.Ս.) էներգիայի և անվեհերության շնորհիվ, հակառակորդի բոլոր սրընթաց հարձակումները ապարդյուն անցան և դրանից հետո հակառակորդը դադարեցրեց հարձակումը և նահանջեց» (Տես ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 27շրջ.-28): Թուրքերը կորցնում են մոտ երկու հազար սպանված, իսկ ռուսները՝ մոտ 600 սպանված և 800 վիրավոր: (Տես ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 42- 42 շրջ.): Կամավորներից զոհվեց 21 և վիրավորվեց 55 հոգի: Սպանվածների թվում էր վաշտի հրամանատարի օգնական Մաթեոս Լոպասյանը: Վիրավորվել էին Սմբատը, երրորդ վաշտի հրամանատար Արտաշես Սուճյանը և Տեր Վարդան քահանան (Տես Զօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, էջ 18:): Գեներալ Ֆ.Ի. Նազարբեկովն պարգևատրվում է Գեորգիևյան 4-րդ աստիճանի խաչով:

13. Չեռնոզուբով Ֆեոդոր Գրիգորիի (1863-1919) - գեներալ-լեյտենանտ, ռազմական հետախույզ: Պատերազմի սկզբում Կովկասյան 4-րդ հեծելազորային դիվիզիայի պետ, 1916-ից մինչև 1917թ.՝ Կովկասյան 2-րդ հեծելազորային, 7-րդ, ապա 5-րդ Կովկասյան բանակային կորպուսների հրամանատար:

14. Ի տարբերության փաստաթղթի հեղինակի, գեներալ Ֆ.Ի. Նազարբեկովը համոզված էր, որ Աբդուրրեզակը լրտես է: Ռուսական հակահետախուզությունը տեղեկություններ ուներ, որ Ադրբեջանական ջոկատում գործում էր թուրքերի օգտին աշխատող բարձրաստիճան սպա: Գեներալ Ֆ.Ի. Նազարբեկովի վկայությամբ, սպանված թուրք սպաների մոտից հայտնաբերված փաստաթղթերն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում էին Ադրբեջանական ջոկատի ունեցած ուժերը և տեղակայման վայրերը: Դա էր պատճառը, որ Խալիլ բեյը համառորեն, չնայած զգալի կորուստներին, անընդհատ փորձում էր Դիլմանի մոտ հաղթանակ տանել, քանի որ համոզված էր, որ ռուսների ուժերն այդ շրջանում սակավ են: Հակառակորդն այնքան վստահ էր իր ունեցած հետախուզական տեղեկությունների վրա, որ չգրոհեց ապրիլի 17-ին, որոշեց այն տեղափոխել հաջորդ օրը՝ ապրիլի 18-ին: Դա հնարավորություն է տալիս գեներալ Ֆ.Ի. Նազարբեկովին նախապատրաստվել ճակատամարտին: (Տես ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 32-32 շրջ.): Գեներալ Ֆ.Գ. Չեռնոզուբովի ունեցած տեղեկության համաձյան, թուրքական լրտես էր հանդիսանում գեներալ Ֆ.Ի. Նազարբեկովի շտաբի պետ, գնդապետ, հետագայում գեներալ Վ. Ն.Պոլտավցևը: Ֆ.Ի. Նազարբեկովը, սակայն, կտրականապես մերժում է, այն համարելով անհեթեթ: Տես ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 45): Աբդուրրզակի ձերբակալումը տեղի է ունենում 1915թ. ապրիլի 23-ին կամ 24-ին: Նրանից մի քանի օր առաջ կալանվել էր քուրդ ցեղապետ Սիմկոն: Նրանց երկուսին ուղարկել են Թիֆլիս: (Տես ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 137, թ. 1): Սիմկոյին ռուսական հրամանատարությունը փորձում էր օգտագործել հակառակորդի դեմ պայքարում: Սիմկոն, սակայն, «չարդարացրեց» ռուսների հույսերը: Նա միացավ թուրքերին և կռվեց ռուսների դեմ: Ցեղապետը մի քանի անգամ «մեղայականով»

եկավ ռուսների մոտ և որքան զարմանալի է, մահապատժի փոխարեն արժանացավ Ադրբեջանական ջոկատի հրամանատար, գեներալ Ֆ.Գ. Չեռնոզուբովի ներողամիտ վերաբերմունքին: Տես ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 22 շրջ., 25: Ի վերջո նա կալանվում է, սակայն կարողանում է փախչել Մակու, որտեղ կազմակերպում է ավազակախումբ և հարձակումներ գործում ոչ միայն հայ, ասորի, այլև մահմեդական բնակչության վրա: 1918թ. մարտի 3-ին դավադրաբար սպանում է նեստորական ասորիների առաջնորդ Մար-Շիմուն Բենիամինին, նրա եղբորը` Դավիթին և 60 թիկնապահներին: Կողոպտել և սպանել է 1918թ. մարտի 28-ին թուրքական զորքերի հարձակման հետևանքով Վան-Վասպուրականը լքած և Պարսկաստան նահանջող վասպուրականցիներից 150 հոգու: Հիմնականում զբաղվել է թալանով, կողոպուտներով և սպանություններով: Ներկայումս մի շարք քրդական կայքէջերում և «Քրդստանի» պատմությանը նվիրված աշխատություններում ներկայացվում է որպես քրդական «ազատագրական շարժման ականավոր գործիչ», իսկ իրականում ավազակ էր և ոչ մի կապ չուներ քրդական ազատագրական շարժման հետ: Բացի այդ, 1918թ. մարտին` Վանից հայերի նահանջի ժամանակ, Սիմկոն իր ավազակախմբով հարձակվում է Պարսկաստան նահանջող հայերի վրա: Նա սպանվել է 1930թ. հունիսի 18-ին իրանական բանակի դեմ մղված կռվում: Տե՛ս История Курдистана. Авторы: М.С. Лазарев, Ш.Х. Мгои, Е.И. Васильева, М.А. Гасратян, О.И. Жигалина, М., 1999, с. 276 («Քրդստանի պատմությունը»): Նշված գիրքը, որը հրատարակել է Ռուսաստանի ԳԱ-ի արևելագիտության ինստիտուտը, առկա են պատմական փաստերի խեղաթյուրումներ և սխալներ: Փորձ է կատարվում ցույց տալ, որ թուրքական բանակի կազմում ծառայող քրդերը չեն մարտնչել ռուսական Կովկասյան բանակի դեմ: Աշխատության հատվածներից մեկում հեղինակները, փորձելով քրդերին ներկայացնել որպես թուրքական կառավարության դեմ թշնամաբար տրամադրված ժողովրդի, գրում են, որ «Պատերազմի առաջին իսկ օրերից նկատվեց քրդական խաղաղ բնակչության մեջ հակակառավարական (հակաթուրքական- Ռ.Ս.) տրամադրությունների աճ, որին նպաստեցին պարտությունները, որոնք սկսեց կրել բանակը (թուրքական- Ռ.Ս.) Կովկասյան ռազմաճակատում, որ հանգեցրեց ռուսական բանակի ներխուժմանը Արևելյան Անատոլիա (Արևմտյան Հայաստան- Ռ.Ս.) և նրա տարածքների գրավումը 1915թ.՝ ընդհուպ մինչև Վան: Ռազմաքաղաքական բռնապետության հաստատումը Թուրքիայում և հատկապես մարտական գործողությունների գոտում, չկարողացան կասեցնել քուրդ ժողովրդի հակակառավարական գործողությունները»: Շարունակելով խեղաթյուրել պատմական իրողությունը, հեղինակները կատարում են մեկ այլ «հայտնագործություն». «Երբ ռուսական Կովկասյան բանակը 1915-1916թթ. ձմռանը իրականացրեց վճռական հաղթանակ և առաջացավ 250 կմ, գրավելով Արևմտյան Հայաստանի և Քուրդիստանի զգալի մասը` Էրզրումի, Տրաբզոնի (Տրապիզոն- Ռ.Ս.) և այլ կարևոր կենտրոնները, քրդերը ոչ մի դիմադրություն ցույց չտվեցին (ընդգծումը մերն է- Ռ.Ս.)»: Ավելին, 1918թ. մայիսին Սարդարապատի ճակատամարտին մասնակցած Ջհանգիր աղան անվանվում է քուրդ-եզդի, այս կերպ փորձ է կատարվել ներկայացնելու այն «փաստը», որ քրդերը հայերի հետ միասին կռվել են թուրքերի դեմ: Աշխատությունում հիշատակված Սիմկոն բնութագրվել է որպես Քուրդիստանի անկախության համար պայքար մղած «նշանավոր մարտիկ»: Տե՛ս История Курдистана, с. 221, 224, 231.

15. Նիկոլաև Ալեքսեյ Միխայիլի (1858-1926), գեներալ, Բայազետի ջոկատի (Անդրկասպյան կազակային բրիգադի) հրամանատար, Վան քաղաքի կայազորի պետ (1915թ. մայիս-հուլիս):

16. Աբդուրրեզակի և նրա 200 հոգուց բաղկացած ջոկատի կողմից կողոպտվում և թալանվում են Եզդի Խանե շրջանի Չիբուխլու գյուղի եզդի բնակչությունը: Աբդուրրեզակը գողանում է երկու հազար ոչխար և հինգ հարյուր գլուխ խոշոր եղջրավոր անասուն: Կալանվում է Ջհանգիր աղան և նրա երեք համագյուղացիները: (Տե՛ս Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում. (1915 թվականի մայիսի 8-

հուլիսի 17). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու. Առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ռուբեն Սահակյանի, Ե., 2008, էջ 27): 1916թ. սեպտեմբերին ռուսական զինվորական իշխանությունները կրկին փորձ են կատարում քրդերին ներգրավել թուրքերի դեմ պայքարում: Այսպես, Խոշապի քրդերից կազմում են մոտ 500 հոգուց բաղկացած ջոկատ, որը տեղակայվում է Վանում (Տե՛ս «Վան-Տոսպ», Թիֆլիս, 11 սեպտեմբերի 1916, N 42, էջ 14): Օգտվելով ռուսական զինվորականների թողտվությունից, քրդերը սկսում են թալանել հայ բնակչությանը: Ինչպես հաղորդում են Վանից. «Ոչ մի մարդ չի կարող իր տունը պաշտպանել, անիշխանական դրութեան մէջ կապրինք և կսպասենք դրութեան բարելաւուելուն» Տե՛ս «Վան-Տոսպ», Թիֆլիս, 18 սեպտեմբերի 1916, N 43, էջ 14:

17. Այդ ժամանակ Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարը և Կովկասի փոխարքան էր կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը (1837-1916):

18. Ռոմանով Նիկոլայ Նիկոլայի (1856-1929), մեծ իշխան, գեներալ, 1914թ. հուլիսի 7-ից մինչև 1915թ. օգոստոսի 23-ը ռուսական զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար: 1915թ. օգոստոսի 23-ին կայսր Նիկոլայ 2-րդ կողմից Գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնը ստանձնելուց հետո նշանակվել է Կովկասի փոխարքա և Կովկասյան բանակի Գլխավոր հրամանատար: Բանակի իրական հրամանատարը հանդիսացել է գեներալ Ն.Ն. Յուդենիչը: Մեծ իշխանը զբաղվել է գլխավորապես թիկունքային խնդիրներով: Նրա օրոք գործնական քայլեր են արվել Արևմտյան Հայաստանը, մասնավորապես Ալաշկերտի հովիտը ռուս վերաբնակիչներով բնակեցնելու համար:

19. Ի նկատի ունի Թիֆլիսի Հայկական կենտրոնական ազգային բյուրոյի անդամներին:

20. Հայկական աշխարհազորային ստորաբաժանումները հայտնի էին՝ «խումբ», «գունդ», «բանակ» և «դրուժինա» անվանումներով:

21. Անդրանիկ (Օզանյան, 1868-1927) - հայ ազգային-ազատագրական նշանավոր գործիչ: Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում Հայկական 1-ին կամավորական խմբի հրամանատար: 1918թ. հունվարին նշանակվել է Հայկական բանակային կորպուսի դիվիզիայի հրամանատար: Նույն ամսում շնորհվել է ռուսական բանակի գեներալ-մայորի կոչում:

22. Փաստաթղթի հեղինակը սխալվում է գրելով, որ հայ կամավորական մյուս խմբերը կազմավորվել են Անդրանիկի խմբի օրինակով: Կամավորական ստորաբաժանումները կազմավորվել են միաժամանակ, սակայն առաջինը ռազմաճակատ է մեկնել Ա.Օզանյանի գլխավորած I խումբը:

23. Քանաքեռում տեղակայված էր 7-րդ խումբը, որի հրամանատարն էր իշխան Հովսեփ Արղությանը (Տաշո):

24. Օզոլ Վլադիմիր Անատոլիի, Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հետախուզական բաժանմունքի պետ:

25. Վանի ազատագրման անմիջական օպերացիան սկսում է 1915թ. ապրիլի 24-ին գեներալ Ա.Մ. Նիկոլաևի Բայազետի ջոկատի առաջխաղացմամբ: Նրա կազմում գործում էր Արարատյան գունդը: Կամավորներին անհանգստացնում էր Վանից ստացվող տեղեկությունները: Նրանք տեղյակ էին, որ 1915 թ. ապրիլից Վանի և նահանգի հայ բնակչությունը դիմադրություն էր ցույց տալիս թուրքական բանակի զորամասերին և քրդական անկանոն ուժերին: Կամավորները ոչ միայն տեղյակ էին հայերի նկատմամբ ջարդարարների կողմից իրականացրած ոճրագործությունների մասին, այլև Բերկրիի կիրճում և հայկական գյուղերում հայտնաբերել էին սպանված հայերի հարյուրավոր դիակներ: Բերկրի Կալեում Բայազետի ջոկատի հրամանատար, գեներալ Ա.Մ. Նիկոլաևը տեղեկացնում է, որ ջոկատն այլևս չի առաջանալու: Ինչպես վերհիշում է Վարդանը. «Անսպասելի և մեծ եղավ զարմանքս, երբ գեներալ Ա.Մ. Նիկոլաևը ինձ հայտարարեց, թե մեզ կարգադրված է Բերկրի Կալայում մնալ և առաջ չշարժվել՝ "Наша задача только до Беркрикале" (Տես ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 93): Ճեղքելով Վանը պաշարած թուրք-քրդական ուժերի օղակումը, կամավորներին են հասնում Կայծակ Առաքելը, Տեղտրիկենց Թեոսը և Բերբերբաշյանը: Կայծակ Առաքելը ամենայն մանրա-

մասնությամբ ներկայացնում է պաշարված քաղաքի դրությունը (Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 1: Шатирян Р., Краткий очерк деятельности армянских добровольческих дружин 1914-1916гг., "Армянский вестник", N 13, 26 марта 1917, с. 6.):

26. Արարատյան գնդի ստուգատեսը կատարվում է Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Պ.Ի. Օգանովսկու ցանկությամբ:

27. Ռուսական հրամանատարության թույլտվությամբ և Վարդանի 1915թ, ապրիլի 1-ի N 1 հրամանով կազմավորվել էր Արարատյան գունդը: Նրա կազմի մեջ մտել են 2-ից 5-րդ խմբերը: Վերջինիս մարտիկները համալրել են 2-ից 4-րդ խմբերը: Արարատյան գնդի հրամանատարն էր Վարդանը: 1915թ. ապրիլի 1-ի դրությամբ II խմբի մարտիկների թվաքանակը 895 հոգի էր: (Տես ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 16, թ. 1:), III և IV հայկական դրուժինաների մարտակազմը 3120 հոգի էր, որոնցից 55-ը՝ հրամանատարներ և 2628-ը՝ շարքայիններ (Տես ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 50, թ. 6:): Դրուժինաները բաժանված էին երեք վաշտերի, որոնցից յուրաքանչյուրում մարտիկների թվաքանակը 280 էր: Յուրաքանչյուր խմբում կար մեկական հեծյալ հարյուրյակ(Տես ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 32, թ. 34:):

28. Վարդան (Խանասորի Վարդան, Մեհրաբյան Սարգիս, ?-1943)-հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայդուկ, ՀՅԴ անդամ: 1896թ. մասնակցել է Շատախի ինքնապաշտպանական մարտերին: 1897թ. գլխավորել է Խանասորի գործողությունը, որն ուղղված էր քրդական մազրիկ ցեղի դեմ: Մասնակցել է 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումներին և ղեկավարել է հայերի ինքնապաշտպանական մարտերը: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում Թուրքիայից վերադարձել է Կովկաս և նշանակվել 5րդ խմբի հրամանատար: 1915թ. ապրիլի 1-ից՝ Արարատյան գնդի հրամանատարն էր: Վանի 1915թ. հուլիսյան նահանջից հետո կրկին ձեռնամուխ է եղել կամավորական խմբի կազմավորմանը, սակայն, տեղեկանալով կամավորական ստորաբաժանումների լուծարման մասին, հեռացել է քաղաքական ակտիվ գործունեությունից: Ունի անտիպ հուշեր:

29. Փաստաթղթի հեղինակը սխալվում է՝ գրելով, որ Խեչոն (Խաչատուր Ամիրյան-Գևորգյան, Դաշնակցական Խեչո, 1868-1915) II խմբի հրամանատարն էր: Իրականում հրամանատարը Դրոն էր: Խեչոն եղել է Արարատյան գնդի հրամանատար Վարդանի օգնականը (տեղակալը): Զոհվել է հուլիսի 6-ին՝ Թաղվանի համար մղած մարտում:

30. Քեռի (Արշակ Գաֆավյան, 1858-1916) - հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Մասնակցել է 1904թ. Սասունի ինքնապաշտպանությանը և 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումներին: 1908թ. պարսկական հեղափոխության ժամանակ Ե. Խան Դավթյանի օգնականն էր: 1914-1916թթ. գլխավորել է Հայկական IV կամավորական խումբը: Աչքի է ընկել Սարիղամիշի ճակատամարտի ժամանակ, որի ընթացքում իրեն դրսևորել է որպես հմուտ հրամանատար: Զոհվել է 1916թ. Ռևանդուզ քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ:

31. Դրո (Դրաստամատ Կանայան, 1884-1956) - հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ, ՀՅԴ անդամ: Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում գլխավորել է Հայկական IV կամավորական խումբը: 1917թ. դեկտեմբերին նշանակվել է Հայկական ազգային կորպուսի կոմիսար: 1919թ. մայիսին ղեկավարել է Բաշ-Ապարանի հերոսամարտը: 1920թ. նոյեմբերին նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար: Դեկտեմբերի 2-ից 4-ը Հայաստանի խորհրդայնացումից հետո ղեկավարել է իշխանությունը՝ մինչև Հեղկոմի Երևան ժամանելը: 1923թ. հեռացել է արտասահման:

32. Իրականում III խմբի հրամանատարն էր Համազասպը: Նա (Հ.Սրվանձտյան, 1873-1921)- հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներից էր, ՀՅԴ անդամ: 1918թ. մարտին ակտիվ մասնակցություն է ունեցել մուսավաթականների դեմ մղված մարտերին: Բաքվի անկումից հետո անցել է Պարսկաստան, ապա

վերադարձել Հայաստան և նշանակվել Նոր Բայազետի զինվորական ուժերի հրամանատար: Հայաստանի խորհրդայնացումից հետո ձերբակալվել է և սպանվել՝ բոլշևիկների կողմից:

33. Անդրանիկի խմբի միանալուց հետո կամավորների ընդհանուր թվաքանակը 3200-ից 3300 էր:

34. Ջևդեթ բեյ, այլ ոչ թե փաշա: Եղել է Վանի նահանգապետը: 1914թ. դեկտեմբեր - 1915թ. հունվար ամիսներին Հյուսիսային Պարսկաստանում հայ և ասորի բնակչության զանգվածային կոտորածների կազմակերպիչ և հեղինակ: 1915թ. գարնանը կազմակերպել է Վանի նահանգի հայ բնակչության զանգվածային կոտորածը և իրականացրել է Վան քաղաքի հայկական երկու թաղամասերի՝ Այգեստանի և Քաղաքամեջի պաշարումը: Հայտնի էր «Բաշկալեի պայտար» մականունով, որովհետև սովորություն ուներ զոհերին պայտել: Վանի հայ բնակչությունը տեղեկանալով Ջևդեթի կողմից նախապատրաստվող ջարդերի մասին, 1915թ. ապրիլի 7-ին դիմում է ինքնապաշտպանության:

35. Իրականում, 1915թ. մայիսի 5-ի երեկոյան Վան առաջինը մտնում է Խեչոյի հեծելավաշտը: Մայիսի 6-ին, առավոտյան ժամը 6-ին, քաղաք են մտնում II, իսկ ժամը 12-ին՝ IV խմբերը, ապա Բայազետի ջոկատի հիմնական ուժերը գեներալ Ա.Մ. Նիկոլաևի հրամանատարությամբ:

36. Կարելի է ենթադրել, որ փաստաթղթի հեղինակը շփոթել է հայ գյուղացիների կողմից պատահաբար հրացանային կրակ բացելու դեպքի հետ: Գյուղացիները նախազգուշական կրակ են բացում սարից իջնող քրդերի վրա, որոնց թվում եղել են հինգ կամ վեց կազակներ: Քրդերի ամբոխի մեջ գյուղացիները չեն նկատել կազակներին: Չնայած այն հանգամանքին, որ տուժողներ չեն եղել, այնուամենայնիվ վաշտի հրամանատար Գեզենդորֆի հրամանով երեք հայեր մահապատժի են ենթարկվում (Տես Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում, էջ 29):

1915թ. հունիսի 1-ին Ալ.Խատիսյանը հայ կամավորների և ռուսական զորքերի միջև տեղի ունեցած փոխհրաձգության մասին նամակ է ստանում Կովկասյան բանակի շտաբից: Այս դեպքից հետո բանակի գլխավոր հրամանատար Ի.Ի. Վորոնցով-Դաշկովը հրամայել է դադարեցնել հայկական նոր խմբերի կազմավորումը՝ մինչև հետաքննության ավարտը: Վերը նշված դեպքը հետաքննելու նպատակով Վան են գործուղվում Ազգային բյուրոյի անդամներ Հովսեփ Խունունցը և Հովհաննես Թումանյանը: Գեներալ Ա.Մ. Նիկոլաևի հետ ունեցած զրույցի ժամանակ, վերջինս ժխտում է կամավորների և ռուսական զորքի միջև ընդհարումը և բարձր գնահատական տալիս կամավորների մարտական հատկություններին: Գեներալը միայն հաստատում է հայ գյուղացիների կողմից քրդերի գնդակոծումը: 1915թ. հունիսի 15-ին, Ալ.Խատիսյանին ուղղված նամակում, գեներալ Ա.Մ. Նիկոլաևը վերահաստատում է Ազգային բյուրոյի ներկայացուցիչներին իր արած հայտարարությունը: Նա մասնավորապես գրում է. «Ինձ իրավունք եմ վերապահում կատեգորիկ կերպով հայտարարել, որ նրանց (կամավորների - Ռ.Ս.) զանգվածային բացասական երևույթներ չեմ տեսել: Եղել են կարգապահական խախտման եզակի դեպքեր, որը, սակայն կարելի է բնութագրական համարել հայկական դրուժինաների գործունեությանն ընդհանրապես, ես իրավունք չունեմ»: Տես ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ֆ. 1, ց. 1, գ. 229, թ. 1 և շրջ.:

37. Մայիսի 11-ին հայ կամավորները ծանր մարտերից հետո ազատագրում են Ոստանը և գրավում հակառակորդի չորս թնդանոթ: Կամավորների կորուստը կազմել է վեց սպանված և տասնութ վիրավոր: Խումբը կորցրել էր տասնութ ձի: Ոստանի և այլ մարտերի համար 39 կամավոր պարգևատրվում է Գեորգիևյան խաչերով և մեդալներով (Տես ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 9, թ. 60 և շրջ.):

38. 1915թ. հունիսի սկզբին Վանում կազմավորվում է գեներալ Տրուխինի ջոկատը, որը բաղկացած էր Երևանյան սահմանապահ գումարտակից, Զաբայկալյան II կազակային բրիգադի 12 հարյուրյակներից, Արարատյան և I դրուժինաներից և այլ ստորաբաժանումներից: Բանակային հետախուզության հայթայթած

տեղեկություններից պարզվում է, որ հակառակորդի ուժերը սակավ են և բարոյալքված: Դա դրդում է գեներալ Տրուխինին իր ջոկատից առանձնացնել Հայկական I և II դրուժինաները, Չիտայի կազակային գունդը՝ զորային ավագ Վասիլևի հրամանատարությամբ: Ստորաբաժանմանը հանձնարարվում է առաջանալ Մշո դաշտ՝ Վարդենիս գյուղը: Հնարավորություն էր ստեղծվում փրկելու Մուշի և գավառի, ինչպես նաև Սասունի հայությանը զանգվածային ջարդերից: Սակայն, 1915թ. հուլիսի 11-ին անսպասելի ստացվում է նահանջի հրամանը:

39. Ռուբեն (Տեր-Մինասյան, 1882-1951)-հայ ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Մասնակցել է հայդուկային շարժմանը: Իրականում նրան չի հաջողվել կազմակերպել Սասունի հայության ինքնապաշտպանությունը: Եղել է ՀՀ խորհրդարանի անդամ, 1920թ. մայիսից՝ ՀՀ Ներքին գործերի նախարար: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո հեռացել է արտասահման:

40. Փափազյան Վահան, Կոմս (1876-1973)-հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Օսմանյան խորհրդարանի պատգամավոր: 1919-1920թթ. հայկական պատվիրակության կազմում մասնակցել է Փարիզի խաղաղության վեհաժողովին:

41. Չնայած փաստաթղթի հեղինակը նշում է, որ 1915թ. Վանի հուլիսյան նահանջը տեղի է ունեցել «ռազմավարական» նկատառումներից ելնելով, իրականում այն որևէ ռազմական հիմնավորում չուներ: Նահանջի հրամանը տվել էր Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Պ.Ի. Օգանովսկին, չունենալով Գլխավոր հրամանատար Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի թույլտվությունը: Անկազմակերպ և հանկարծակի նահանջի հետևանքով դատարկվում է ողջ Վասպուրականը: Հայ փախստականներն ունենում են զգալի մարդկային և նյութական կորուստներ: (Տե՛ս Հարությունյան Ա.Հ., Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915թ. հուլիսյան գաղթը, «ԼՀԳ», 2002, N 2, էջ 47-54, Корсун Н.Г., Алашкертская и Хамаданская операци на Кавказском фронте мировой войны в 1915 году, М., 1940, с. 121-122.).

ԱԲՐԱՀԱՄ ԿԻՍԻԲԵԿՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ 1919-1920ԹԹ. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վաստակաշատ մանկավարժ, Ղարաբաղի հայ բնակչության 1919-1920թթ. համագումարների պատգամավոր, երկրամասի Ազգային խորհրդի անդամ Աբրահամ Կիսիբեկյանը հայ հասարակությանը քիչ ծանոթ անուններից, արցախյան նշյալ ժամանակահատվածի բուռն իրադարձությունների և ազատ, անկախ Արցախի համար մղված հերոսական պայքարի ակտիվ մասնակիցներից է:

Արցախյան այդ անմոռաց իրադարձություններից տասնամյակներ հետո, նա հիշողության ծալքերից վերհանել և դրվագաբար թղթին է հանձնել ականատեսի աչքերով իր տեսածն ու վերապրածը, խնդիր ունենալով նպաստ բերելու Ղարաբաղի հայ ժողովրդի ազատագրական պայքարի լուսաբանությանը:

Հուշերի ստորև ներկայացվող դրվագներում հեղինակն անդրադարձել է հետհամագումարյան շրջանում երկրամասում ստեղծված իրավիճակի նկարագրին, Ասկյարանի հերոսամարտի արդյունքներին և Տումա-Խծաբերդի ու Մսուրմանլարի շրջանում ծավալված պատերազմական գործողություններին:

Տեքստի անհարգի ծանրաբեռնումից խուսափելու համար մեր կողմից հուշերում կատարվել են կրճատումներ, որոնք, ըստ էության, չեն աղճատում դրանց բովանդակությունը: Հուշերը ներկայացված են բնագրին հարազատ, կատարվել են ուղղագրական ու կետադրական որոշ շտկումներ, անխաթար թողնելով շարադրանքի ոճը: Տեքստային միջամտությունները և ծանոթագրությունները տվել ենք տողատակում և տեքստի վերջում:

Ալբերտ Կիրիմյան

N 1
ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ
(1920Թ. ՄԱՐՏԻ 5-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՐՏԻ 23-Ը)

Գ լ ու խ Ա

Վերջացավ 8-րդ համագումարը*, և դարձյալ չարդարացավ Ադրբեջանի կառավարության հույսը:

Լեռնային Ղարաբաղը մնաց անսասան իր որոշման մեջ՝ դարձյալ շարունակել ու պաշտպանել իր պայմանները:

Այսպիսով, տարիների ընթացքում նրա ձեռք առած բոլոր միջոցները և այդ նպատակով հրավիրված համագումարները, բոլորն էլ իզուր անցան՝ Ադրբեջանի համար: Նա առավել ևս գազազեց, տեսնելով, որ Լեռնային Ղարաբաղը, փաստորեն, գտնվում է Հայաստանից եկած գործիչների ղեկավարության ներքո:

Վերջապես նա եկավ այն եզրակացության, որ այդ խնդիրը կարող է լուծվել միմիայն զենքի միջոցով, որի համար և ձեռք առավ մի շարք նախապատրաստական միջոցառումներ: Սուլթանովը Լեռնային Ղարաբաղի օղակումն ու ռազմական ուժերով շրջապատելը վաղուց էր վերջացրել:

Այդ օղակումն սկիզբ առնելով Գանձակի լեռնային մասի հայկական շրջաններից, շարունակվում էր Գյուլիստանի ծայրամասերով մինչև Թարթառ գետը: Թարթառ գետի տափաստանով շարունակելով պաշարումը, հասնում էր Թարթառ ավանին, որտեղ կենտրոնացնելով ռազմական խոշոր ուժեր, շրջապատում է Ջրաբերդի ստորին Լեռնաստանը: Այնուհետև Թարթառ ավանից շարունակելով

---

* Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը 7-րդ և 8-րդ համագումարների աշխատանքի մասին Ա.Կիսիբեկյանի հուշերը տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 2009թ. N 2 (114) - ում, էջ 78-96:

օղակումը Ջրաբերդի հարավով՝ մինչև Աղդամ ու այդտեղից էլ մի քանի կիլոմետր բարձրանալով, հասնում է Ավդալ-Գյուլափլյան, որտեղից սկիզբ է առնում Վարանդայի շրջանը:

Վարանդայի ծայրամասերով շարունակելով պաշարումը, հասնում է մինչև Կարյագին: Կարյագին-Ջեբրայիլ գծով Դիզակի Հադրութ, Դոլանլար, Բենյարտու, Հինթաչլար և Խոծաբերդ գյուղերի հարավային շրջաններում տեղավորում է ադրբեջանական զորագնդեր ...*

Խոծաբերդից երկու-երեք կիլոմետր հեռավորության վրա, դեպի արևմուտք գտնվող մի քանի ավերակ ու անմարդաբնակ հայկական գյուղերը՝ Սպիտակաշեն, Արփագյադակ, Թեսխաբաբ և Պետրոսաշեն, վաղուց գտնվում էին ադրբեջանական զորքերի տրամադրության տակ, որտեղից և սկսվում էր Մսուրմանլարի գյուղախմբի շրջանը, որը և մյուս ադրբեջանական գյուղերի հետ տարածվում են մինչև Հաքյառու (Հագարա) գետը՝ Զանգեզուրի սահմանը: Այս շրջանաձև հսկայական տարածությունը բռնված էր ադրբեջանական կանոնավոր զորքերով՝ աշխատելով այդ կետերում կտրել Ղարաբաղի և Զանգեզուրի կապը: Այս հսկայական տարածության վրա Ադրբեջանի կառավարությունը խիստ ուշադրություն էր դարձրել գլխավորապես երկու կետի վրա՝ Աղդամ-Շուշի խճուղու և Մսուրմանլար-Հաքյառու գծի վրա:

Լեռնային Ղարաբաղի համար չափազանց կարևոր ու կենսական նշանակություն ունեցող կամուրջը՝ Զանգեզուրի և Ղարաբաղի միջև՝ Ղարաղըշլաղը, մոտ երկու տարի էր, որ այլևս գոյություն չուներ: Լեռնային Ղարաբաղի հույսը մնացել էր Խոծաբերդ-Հաքյառու գիծը՝ երեսուն կիլոմետր տարածություն, խիստ վտանգավոր, լեռնոտ, կանոնավոր ճանապարհից զուրկ, դժվարանցանելի և բնակված ամբողջովին ադրբեջանցիներով:

Ադրբեջանի կառավարությունը խիստ ուշադրություն էր դարձնում Աղդամ-Շուշի խճուղու վրա, որովհետև միակ ու գլխավոր ճանապարհն էր, որ Շուշին կապում էր Ադրբեջանի հետ: Նա միևնույն ժամանակ լուրջ ուշադրություն էր դարձնում նաև Մսուրմանլար-Հաքյառու գծի վրա, որովհետև նա համոզված էր, որ Ղարաբաղի հետ պատերազմելու դեպքում, անկասկած, նրան օգնության կհասնի Հայաստանի կառավարությունը, որի միակ ճանապարհը՝ դա Զանգեզուր-Կոռնիձոր-Խոծաբերդ գիծն էր:

Ղարաբաղի նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովը, վերջացնելով Լեռնային Ղարաբաղի շրջապատումը, ձեռնարկեց Շուշվա ամրացմանը:

Նա կարողացել էր ճանաչել քաղաքում աչքի ընկնող հասարակական գործիչներին, մանավանդ դաշնակցականներին, որոնց արդեն հաշվառքի էր ենթարկել շատ վաղուց և որոնց նա համարում էր իր միակ թշնամին: Նա մի շարք մարդկանց բնակարաններում խուզարկություն կատարեց և շատերին բանտ նետեց ու քաղաքում գտնվող ադրբեջանական զորամասը ավելի ստվարացրեց: Քաղաքի գլխավոր մուտքի՝ ներքին դարպասում նշանակեց հսկիչներ՝ ստուգելու քաղաք մտնողներին ու քաղաքից դուրս եկողներին: Քաղաքից դուրս եկողները պետք է հատուկ թույլտվություն (պրոպուսկ) ունենային իրենց ձեռքին, այլապես նրանց չէր թույլատրվի քաղաքից ելնելու: Դրսից եկող մարդիկ իրենց բեռներով ենթարկվում էին խուզարկության, որի պատճառով դադարեց գյուղացիության մուտքը քաղաք՝ ներքին դարպասով:

Գիշերները քաղաքի պահակությունն ավելի ուժեղացրեց: Նա միևնույն ժամանակ սկսեց քաղաքը դրսի կողմից ամրացնել՝ խրամատներով:

Խանքենդ ավանը, որը գտնվում է Շուշուց դեպի արևելք՝ ցարական իշխանության ժամանակ ծառայում էր որպես զորակայան, որտեղ և միշտ պահպանվել են զորագնդեր, որի համար և կառուցվել են մեծ քանակությամբ զորանոցներ, այդ զորանոցներում կենտրոնացրեց ռազմական մեծ ուժեր:

Խանքենդ ավանը, որի հարավ արևելյան մասով է անցնում Աղդամ-Շուշի խճուղին, բարձր դիրք ունի իր շրջապատի համեմատությամբ:

---

* Այս և մյուս բազմակետերը բնագրինն են - կազմ.:

Ահա հենց այդ բարձրության վրայով փորվեցին երկար խրամատներ, այսպիսով Խանքենդ ավանը վերածվեց մի ամրացած ռազմական ճամբարի:

Խանքենդ ավանից մոտ տասը կիլոմետր հեռավորության վրա՝ դեպի արևելք, գտնվում է Լեռնային Ղարաբաղի պատմական բերդը՝ Ասկյարանը: Նա սկիզբ է առնում Վարանդայի սահմանից և ձգվելով հարավից հյուսիս գետի վրայով՝ մի կիլոմետրից ավելի, միանում է Խաչենին:

Բերդն ունի երկու զուգահեռ պարիսպներ, որոնք իրարից հեռու են մի քանի մետր և իրարից որոշ հեռավորության վրա գտնվում են բերդեր (բուրգեր) - ահա այս պարիսպների միջով, արևելքից դեպի արևմուտք, անցնում է Աղդամ-Շուշի խճուղին՝ Շուշի քաղաքի ու Ադրբեջանի միակ ու գլխավոր կապը:

Ղարաբաղի քաղաքական, հասարակական ու տնտեսական կյանքում և նրա ամբողջականությունը պաշտպանելու գործում մեծ ու նշանակալից դեր են խաղացել այդ բերդն ու խճուղին:

Լեռնային Ղարաբաղի մասերը՝ Գյուլիստանը, Ջրաբերդը և Խաչենը կապվել են Վարանդայի ու Դիզակի հետ՝ այդ խճուղու վրայով:

Գեներալ նահանգապետ Սուլթանովը գրավելով այդ բերդն ու խճուղին, փաստորեն Լեռնային Ղարաբաղը բաժանել էր երկու մասի, այդպիսով միանգամայն կտրելով հսկայական մասերն իրարից:

Միշտ հայ-թրքական ընդհարումների ժամանակ, այդ երկու ազգություններից յուրաքանչյուրը ձգտում էր գրավել այդ կարևոր կետը:

Հայերը տիրելով այդ բերդին, կտրել են Ադրբեջանի կապը Շուշվա հետ, այդպիսով զրկելով Շուշվա բնակչությանը Ադրբեջանի հովանավորությունից ու նրա օգնությունից թե՛ նյութական-տնտեսական և թե՛ ռազմական տեսակետից, իսկ թուրքերը բերդը իրենց ձեռքը ձգելով, նրանք օգնության են հասել Շուշվա թուրք հասարակությանը և միևնույն ժամանակ կարողացել են ջլատել հայկական ուժերը՝ Լեռնային Ղարաբաղը երկու մասի բաժանելով:

Խոսրով բեկ Սուլթանովը գրավելով Ասկյարանը, ամրացրեց ու տեղավորեց ադրբեջանական զորագունդ, այսպիսով ապահովեց Ասրբեջանի և Շուշվա կապը՝ Աղդամ-Շուշի խճուղու միջոցով:

Սուլթանովը մեծ ուշադրություն դարձրեց Լեռնային Ղարաբաղի արևմտյան սահմանի՝ Մսուրմանլարի գյուղախմբի վրա: Ղշլաղը Մսուրմանլարի գյուղախմբի կենտրոնն էր, որտեղ կանգնած էր կանոնավոր բանակ - իր զինվորական շտաբով՝ տաճիկ զինվորականների հրամանատարությամբ: Նա ուներ զինապահեստ-հանդերձանք և զորքի համար պարեն: Նա ուներ լեռնային երկու թնդանոթ, 5-6 գնդացիր և զինամթերք:

Շրջակա բոլոր գյուղերն ու ռազմական նշանակություն ունեցող բոլոր կետերը միացած էին հեռախոսային ցանցով կենտրոնի՝ Ղշլաղի հետ: Հեռախոսային թելերն անց էին կացրած զանազան ուղղությամբ՝ հարավից դեպի հյուսիս, արևմուտքից դեպի արևելք՝ գետնի վրայով, մացառների ու թփերի միջով, սարերի լերկ դոշերով: Ղշլաղի հրամանատարությունը գաղտագողի կերպով բռնել էր Փոքր Քիրսի բարձրունքը, որը տիրապետում է Վարանդայի և Դիզակի որոշ շրջանների: Նա պատրաստել էր փոքրիկ ճանապարհ, այդտեղ տեղափոխելու թնդանոթներ ու այլ պարագաներ՝ ռազմական գործողություններ սկսելուց առաջ: Այդ բոլոր պատրաստությունները գալիս էին համոզելու, որ Ադրբեջանի կառավարությունը մտադիր է ստրկացնել Ղարաբաղը՝ նրա աշխատավորության կամքին հակառակ:

Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը հետևելով իր հակառակորդի բոլոր քայլերին, անում էր համապատասխան եզրակացություններ. նա լավ տեսնում էր, որ շուտով փոթորիկ պետք է լինի և պետք է պատրաստ լինել պաշտպանվելու համար, սակայն թե ինչ՞ միջոցներով, այդ մասին միմիայն իրենք՝ ղեկավարները գիտեին:

8-րդ համագումարը վերջացավ: Քաղաքում հասարակական կյանքը կանգ առավ: Վաղուց դադարել էին լույս տեսնել թերթերը, դադարեցին պարապմունքները դպրոցներում:

Ազգային խորհուրդն այլևս գոյություն չուներ, նահանգապետին կից խորհրդի հայ անդամների գոյությունը նույնպես դադարել էր: Քաղաքի աչքի ընկնող գործիչներից շատերը խուսափելով Սուլթանովի հետապնդումներից՝ հեռացել էին, իսկ մնացածներն անօգնական ու անպաշտպան, սարսափահար սպասում էին ամեն մի պատահարի, իսկ թե քաղաքի ինքնապաշտպանության մասին ինչ՞ էին մտածում, ոչ ոք ոչինչ չգիտեր: Ասում էին, որ բոլոր տղամարդիկ գտնվում են գավառում ստեղծված կենտրոնական շտաբի կարգադրության տակ:

Շատ բաներ էին խոսում, միայն մի բան էր պարզ, որ երկու կողմից էլ պատրաստություններ էին տեսնվում և բոլորն էլ զգում էին, որ շուտով կռիվ կլինի ...

*

*   *

1920թ. մարտի 5-ին վերջացավ 8-րդ համագումարը: Ես քաղաքում ապրելու հնարավորություն չունեի, ուստի, ընտանիքս թողնելով այդտեղ, գնացի գյուղ՝ հնարավորություն ստեղծելու, որպեսզի տեղափոխվեմ այդտեղ:

Մարտի 10-ին ես գտնվում էի գյուղում: Մի օր հետո ինձ կանչեցին կենտրոնական շտաբից: Ես գնացի: Արսեն Յովհաննիսյանն ինձ ասաց. - մի՞թե այսօր կարելի է տանը հանգիստ նստել և առաջարկեց տասն օրով գնալ Դիզակ և ժողովրդին ծանոթացնել համագումարի որոշումների հետ: Ու կարգադրեց մի ձի տալ ինձ: Ես ճանապարհվեցի և եղա կենտրոնական գյուղերում ու իրազեկ դարձրի համագումարի որոշումների մասին: Ի միջի այլոց, իմ շրջագայության ժամանակ մի դեպք պատահեց, որ ավելորդ չեմ համարում արձանագրելու:

Յին Թաղլար գյուղում, հասարակական ժողովի ժամանակ, բողոքեցին մի քանի գյուղացիներ, որ գալիս են մարդիկ և պահանջում կերակրել իրենց ձիաներին գարիով, այնինչ իրենք գարի չունեն ուտելու, ուր մնաց ձիաներին կերակրելին: Խոսքը վերաբերվում էր այն զինվորականներից մեկին, որ կազմակերպում էր այդ շրջանի ինքնապաշտպանությունը: Ես պատասխանեցի՝ դուք կարող եք գարու գինն ստանալ, որովհետև այդ մարդիկ վարձատրվում են: Մի քանի օրից հետո գյուղացիներից ոմանք իմ պատասխանը հայտնում են այդ զինվորականին, որին ոչ տեսել էի և ոչ էլ գաղափար ունեի նրա մասին: Նա որոշել էր ինձ հանդիպելուց «Իմ կողերը փշրել ...». այն մասին մի քիչ հետո ... 1920թ. մարտի 22-ն էր, ես գտնվում էի Տող գյուղում, ինձ հայտնեցին, որ այսօր այստեղով երեք ձի բարձած զանազան իրերով և բեռների մեջ նստած գնացին Վանք գյուղը՝ Արսո Յովհաննիսյանի կինն ու երեխաները և որ բոլորը փախչում էին քաղաքից ու ասում էին, որ շուտով կռիվ կլինի:

Ես Տողից ճանապարհվեցի Շուշի գնալու, որտեղ թողել էի ընտանիքս: Ներքին Թաղավարդ գյուղումն էր ապրում Ասծատուր Ավետիսյանը, որը ղեկավարներից մեկն էր: Թաղավարդում մտա նրա բնակարանը մի հաստատ տեղեկություն իմանալու: Նրա բակում կանգնած էր մի թամբած ձի, և Ավետիսյանը ցանկանում էր հեծնել: Նա ինձ ասաց՝ գնում եմ Չանաղչի գյուղը, բայց թե ինչու՞ է գնում, ոչինչ չասաց: Ես նրա հետ ճանապարհվեցի Չանաղչի, որտեղից և պիտի գնայի Շուշի:

- Ասատուր, այս ինչ լուրեր են, որ տարածվել են՝, կռի՞վ պետք է լինի՞, - հարցրի ես:

- Սպասում ենք, որ թուրքերը պետք է հարձակվեն թեկուզ այս գիշեր, - պատասխանեց նա: Նա ուրիշ ոչ մի բան այլևս չասաց:

Մենք միասին հասանք Չանաղչի: Այստեղ էր գտնվում Աղապարոն Դանիելբեկյանը`[1] 68 ստրաժնիկով` մեր շրջանի ոստիկանապետը (պրիստավը), ես դիմեցի Դանիելբեկյանին` Աղապարոն ու՞ր եք գնում:

- Սուլթանովը մեզ կանչել է, գնում ենք ռոճիկ ստանալու,- պատասխանեց նա,- չէ որ վաղը «Բայրամ է» ...

- Իսկ դու ու՞ր ես գնում,- հարցրեց նա:

- Ընտանիքս այնտեղ է,- պատասխանեցի ես: Ստրաժնիկներից մեկը, որ մեր գյուղացի էր, ասաց.

- Ահա երկու օր է, որ ձեր կինը երեխայի հետ գտնվում է գյուղում:

Ես փոխեցի մտադրությունս և փոխանակ Շուշի գնալու, վերադարձա Սարաշեն և մտա շտաբը: Երբ ես սանդուղքով բարձրանում էի, և դեռ պատշգամբին չհասած` լսեցի Արսեն Հովհաննիսյանի ձայնը ու նրա հետևյալ նախադասությունը. «Եթե հարձակվեն քաղաքի հայկական մասի վրա, ռմբակոծել Թուրքաց մասը», ես կանգնեցի պատշգամբում, սենյակի պատուհանը բաց էր: Սենյակում սեղանի մոտ նստած էր Բագրատ Բաղրամյանը` «Վոյսկի» նաչալնիկը` գրիչը ձեռքին, իսկ սեղանի մյուս կողմը կանգնած թելադրում էր, ինչ որ հրաման` Արսեն Հովհաննիսյանը:

Նա տեսնելով ինձ պատշգամբում, իսկույն սենյակից դուրս եկավ և ասաց` այստեղ ի՞նչ ես անում:

- Ինձ ուղարկել էիք տասը օրով, լրացել է ժամանակը և վերադարձել եմ:

- Դու չե՞ս հանդիպել Հովակ Ստեփանյանին,- հարցրեց նա:

- Ոչ, - պատասխանեցի ես.

- Իսկույն վերադարձիր Դիզակ և գնա Տումի գյուղը, որտեղ գտնվում է Հ.Ստեփանյանը: Նա քեզ կասի, թե դու ի՞նչ պիտի անես այնտեղ,- ասաց նա:

- Ես դեռ պիտի գնամ մեր գյուղը, ընտանիքս եկել է և չգիտեմ ինչ վիճակում է գտնվում, բացի դրանից, ձին շատ հոգնած է, նա չի կարող 25-30 կիլոմետր ճանապարհ անցնել,- պատասխանեցի ես:

Նա իսկույն կարգադրեց ինձ մի ձի տալ և առաջարկեց` գնացեք մեր գյուղը և այնտեղից էլ ճանապարհվեք Տումի, այնպես որ վաղը դեռ լույսը չբացված դու այնտեղ լինես:

Ի՞նչ կարող էի անել. մթնոլորտն էլեկտրականացած էր. բոլորը ենթարկվում էին նրա կարգադրությանը: Մոտ երկու ժամից հետո ես գտնվում էի իմ տանը: Կինս պատմեց հետևյալը: Քաղաքից դուրս գալուց երկու օր առաջ, եկան քեզ կանչեցին, որ Սուլթանովը «Ազգային խորհրդի» անդամներին հրավիրում է իր մոտ: Ես պատասխանեցի` նա այստեղ կլինի վաղը և ես կհայտնեմ նրան:

Մեր հարևաններից շատերը հեռացան քաղաքից: Հետևյալ օրը ես գնացի կառավարական կոմենդատուրան, թույլտվություն (պրոպուսկ) ստանալու, քաղաքից հեռանալու համար: Այդտեղ էր բժիշկ Յարամիշյանը, որն ինձ տեսնելով ասաց` իսկույն հեռացիր այստեղից, Սուլթանովը պահանջել է «Ազգային խորհրդի» անդամներին ներկայանալու, իսկ դու եկել ես և պրոպուսկ ես խնդրում, իսկույն գնա վերին դարպասով դուրս եկ քաղաքից ...

Ես լսեցի բժշկին և երեխային վերցնելով` դուրս եկա քաղաքից վերին դարպասով ու եկա գյուղը, դեռ գիշերվա ժամը երկուսը չկար, երբ ես դուրս եկա գյուղից և երբ անցա Թաղլարով և հասա Տումի գյուղի ձորին, լույսը սկսեց կամացկամաց բացվել, ահա այդ խոր ձորում հենց այդ ժամանակ ես լսեցի դղրդոցներ ... որոտում էին սարերն ու ձորերը, լսվում էին թնդյուններ, և դրանց արձագանքները տարածվում էին այդ անդնդախոր ձորերում ու բարձրաբերձ սարերում: Երբ ես զառիվերով բավական բարձրացա, լսեցի Փոքր Քերսի կողմից հրացանների համազարկեր, գնդացիրների ճարճատյուններ և մեկ-մեկ` թնդանոթների դղրդոցներ:

Ես հասա գյուղը և իջա Թևան վարժապետի տանը:

Թևանը տանն էր. նա ինձ ասաց.

- Ստեփանյանն ինձ պատվիրել է, որ եթե դու գաս, ես ցույց տամ իր տեղը:

Նա ինձ առաջնորդեց դեպի գյուղի բինաները՝ Փոքր Քերսի արևելյան ստորոտը: Մոտ մի ժամից հետո մենք գտնվում էինք բինաներում:

Գլուխ Գ
Հարձակում

1920թ. մարտի 23-ին, գիշերը ժամը 4-ին սկսվեց կռիվը:

Ղարաբաղի ղեկավարությունը, տեսնելով Ադրբեջանի կառավարության տենդային պատրաստություններն ու ձեռք առած միջոցառումները, եկավ այն եզրակացության, որ Ադրբեջանի կառավարությունը եթե ոչ այսօր, վաղն անպայման հարձակման կանցնի և որպեսզի թշնամու մտադրությունը ձախողած լինի և նախաձեռնությունն իր ձեռքը վերցրած, նախահարձակ եղավ:

Ադրբեջանի խան-բեկական, մուսավաթական կառավարությունը 3-4 տարվա ընթացքում բազմաթիվ միջոցների դիմեց իրեն ենթարկելու մի բուռն ըմբոստ, կուլտուրականապես ավելի բարձր ժողովրդի՝ արհամարհելով նրա տարրական իրավունքները, ոտնահարելով նրա ազգային արժանապատվությունը՝ միջոցների մեջ ոչ մի խտրություն չդնելով, սակայն նրա ճիգն ու ջանքը ի դերև անցան: Վերջապես նա հանդես եկավ դիմազերծ, սակայն արյունոտ ժանիքներն ու ճանկերը ջախջախվեցին այդ փոքրիկ ժողովրդի համառ ու տոկուն կամքի առաջ:

Գլուխ Ե
Ասկյարանի հերոսամարտը

1920թ. մարտի 23-ին, վաղ առավոտյան, սկսվեց կռիվը:

Դալի-Ղազարի հրամանատարությամբ ու անմիջական մասնակցությամբ գրավվեց բերդը: Ադրբեջանական պահակազորը փախուստի մատնվեց, որին սկսեցին հալածել մինչև Ղարադաջ:

Աղդամից և թուրքական մյուս շրջաններից օգնության հասնելով փախուստի մատնված պահակազորին, սկսեցին համառ մարտեր երու կողմերի միջև:

Ասկյարանում հայ կռվողների թիվը հասնում էր 450-500 հոգու՝ զինված միմիայն հրացաններով, այն էլ փամփուշտի խիստ սակավ պաշարով:

Ադրբեջանը ոտքի էր հանել դաշտային Ղարաբաղի թուրքական զինված ուժերը և երեք գունդ՝ 3500-4000 հոգուց բաղկացած կանոնավոր զորք՝ զինված բոլոր տեսակի զենքերով: Այս զորքը ղեկավարում էր գեներալ Շիխլինսկին (Շիխլինսկի Ալիաղա Իսմաիլաղա օղլի, 1865-1943), որի բանակում գերակշռում էին տաճիկ սպաները:

Ահա այն անհավասար ուժերի միջև կռիվը շարունակվեց 8-10 օր: Թշնամու կողմից շարունակվող անընդհատ գրոհները հետ էին մղվում՝ նրա համար մեծ կորուստներով:

Հայկական կռվողների պարենավորման գործը տարվում էր մեծ եռանդով: Անգնահատելի ծառայություն մատուցեց Մարտիրոս Արզումանյանը, որը ժամանակին կարողանում էր կռվողներին ուտելիք հասցնել՝ գիշերները ժողովելով գյուղերից:

Այդ դժվարին ու ծանր մարտերի ժամանակ հայկական հրամանատարությունը ճակատ է բերում 1918թ. Սմնա գյուղում ջարդված տաճկական զորագնդից խլած թնդանոթը, որի որոշ մասերը պակաս էին և ուներ վաթսուն ռումբ: Թնդանոթի խողովակն ամրացնելով փայտյա պատվանդանի վրա, սկսեց ռմբակոծել հակառակորդին՝ Ասկյարանի իշխող բարձունքներից:

Այդ հերոսական աշխատանքը կատարեց հրետանային գործին հմուտ երիտասարդ Գասպարյանը, որը շնորհիվ իր հմուտ ու դիպուկ հրաձգության, լռեցրեց ու խուճապի մատնեց թշնամու թնդանոթային երկու բատարեան՝ բաղկացած ութ թնդանոթից, որից հետո դադարեցին գրոհները Ասկյարանի դիրքերի վրա: Գասպարյանի պատրաստած թնդանոթը մի անսպասելի հրաշք էր թշնամու համար: Նա համոզված էր, որ հայերը բացի հրացաններից ուրիշ տեսակի որևէ զենք

չունեն և իրենց իրետանին չէին պատրաստել և կանգնած էր բաց՝ խճուղու վրա: Սիա այս հանգամանքը խիստ օգնեց հայ կռվողներին: Այդ դադարը տևեց մի քանի օր: Այդ ժամանակամիջոցում Ադրբեջանի հրամանատարությունը Ասկյարանի դեմ դուրս բերավ համարյա իր ամբողջ բանակը՝ մոտ 15 հազար հոգի, կանոնավոր մարզված զորք, բացի դրանից, նաև մի քանի հազար, ոտից գլուխ զինված, բանդիտներ:

Ասկյարանի այդ ճակամարտը խոշոր նշանակություն ու ազդեցություն պիտի ունենար ամբողջ կռվի ընթացքի վրա.

1. Թշնամին աշխատում էր գրավել Ասկյարանը՝ Ղարաբաղի Թերմոպիլեն[2], որը գրավելուց հետո միայն կարող էր մուտք գործել Ղարաբաղ: 2. Եթե թշնամին չկարողանար գրավել Ասկյարանը, նա հնարավորություն չպիտի ունենար մինչև վերջը դիմադրելու, ուստի Շուշին, Խանքենդը և այլ տեղեր ստիպված պետք է անձնատուր լինեին: 3. Նա Ղարաբաղի կենտրոնում կորցնելով իր հենարանն ու պատսպարանը, ստիպված կլիներ Շուշում մնացած հայ բնակիչներին ձեռք չտալ. 4. Եթե Ասկյարանը չընկներ, կպաշտպանվեր Լեռնային Ղարաբաղի բոլոր շրջանների միասնականությունը, որ [ով] և չէր ջլատվի նրա ռազմական հզորությունը և 5. թշնամուն դուրս վանելով Ղարաբաղի սրտից՝ Շուշուց, չափազանց կհեշտանար նրա պայքարը և հաջողությամբ կլուծվեր նրա ազատությունը՝ միանալով մայր հայրենիքին, որի համար և նա մարտնչում էր: Իսկ եթե թշնամուն հաջողվեր գրավելու Ասկյարանը, միանգամայն հակառակ դրություն կստեղծվեր: Սիա այդ բոլորը երկու կողմն էլ լավ գիտակցելով, շարունակում էին կատաղի մարտեր: Սակայն կռվել անընդհատ թշնամու աճող գերազանց ուժերի դեմ, կռվել լավ սպառազինված զորքերի դեմ, այն էլ միմիայն հրացաններով և չունենալով բավարար քանակությամբ փամփուշտ, պարզ էր երկար շարունակել հնարավոր չէր լինի: Ամենամեծ դժբախտությունը նրանումն էր, որ չկար կռիվները ղեկավարող մի ընդհանուր հրամանատարություն և Ղարաբաղի բոլոր շրջաններում շարունակվում էին կղզիացած, առանձին-առանձին կռիվներ, որոնք ոչ մի կապ ու տեղեկություն չունեին իրարից ու իրար հետ: Ղարաբաղի հրամանատարությունը, հայացքն ուղղած դեպի Զանգեզուր, սպասում էր օգնության, սակայն խիստ ուշանում էր այդ օգնությունը:

Ասկյարանի բերդի պայքարի 18-րդ օրը Ադրբեջանի բանակը գրոհեց Հայկական դիրքերի վրա: Այդ օրը նա օգտվեց նաև խիտ մառախուղից, որ պատել էր կռվի ամբողջ դաշտը: Թշնամին սկսեց ռմբակոծել բոլոր տեսակի բազմաթիվ թնդանոթներից, և նրան այս անգամ հաջողվեց ճեղքել Ասկյարանի պաշտպանության գիծը: Դալի-Ղազարը տեսնելով անելանելի դրությունը և որ շարունակելը խոշոր զոհեր պետք է կլանի, հրամայում է Ասկյարանը պաշտպանող զինվորությանը նահանջել և բռնել խճուղու երկու կողմերի բարձունքները, թողնելով բերդն ու խճուղին: Նա միևնույն ժամանակ հրաժարվում է թողնել իր դիրքը և այդտեղ մնում է մինչև վերջին փամփուշտը, ու նահատակվում: Ասկյարանի կռվին մասնակցեց Զանգեզուրից ուղարկված Հայաստանի Հանրապետության զորքի առաջապահներից, չորս գնդացիր, այն էլ միայն մի քանի ժամ, սակայն շատ ուշացած:

Ընկավ Ասկյարանը, Լեռնային Ղարաբաղը բաժանվեց երկու մասի, ջլատվեց նրա մարտական ուժը: Թշնամին գրավեց քաղաքը և սկսեց ռմբակոծել խճուղու երկու կողմերի բարձունքները, որտեղ ամրացել էին հայ կռվողները:

Գլուխ Զ
Մի քանի տեղեկություն Շուշում մնացած հայերի մասին

Ասկյարանն ընկավ: Թուրքերը մտան քաղաք, մինչև այդ հայերին ձեռք չէին տվել: Քաղաքում մնացած հայերի մեծ մասը գտնվում էր բանտում, որտեղ և կոտորեցին:

1920թ. հուլիսի 14-ն էր, մի խումբ մարդկանց, որոնց հետ և ինձ բերին բանտ: Այդ ժամանակ բանտում ոչ մի բանտարկյալ չկար: Բանտապետը մեզ առաջար-

կեց բարձրանալ երկրորդ հարկը, մաքրել մի սենյակ և այնտեղ տեղավորվել: Մենք բարձրանալով երկրորդ հարկը, մտանք մի սենյակ և սկսեցինք մաքրել: Երբ բարձրացրինք փայտյա թախտերը, հատակը մաքրելու համար, մենք սարսափեցինք: Թախտի հակառակ երեսը պատած էր բավական հաստությամբ չորացած արյունով: Մենք թողինք այդ սենյակը և անցանք ուրիշ սենյակ և դարձյալ նույն պատկերը:

Բերում եմ այստեղ մի ուրիշ ականատեսի մանրամասն պատմածը:

1933թ. ամառն էր, ես գտնվում էի Կիսլովոդսկում: Այնտեղ մրգավաճառի մի խանութում պատահեցի մի գործակատարի՝ սպիտակ խալաթը հագին, մի սպիտակ թաշկինակով ձախ կուռը միացած վզի հետ: Դա 55-60 տարեկան, Շուշվա իրականության մեջ հաշվապահ, մենշևիկյան կուսակցության անդամ՝ Կոստանդին Զավադիչ Յարությունյանն էր, որին կոչում էին «Բանկի Կոստյա» և որին ես լավ էի ճանաչում ու կարծում էի, որ նա սպանվել է:

Մի քիչ զրուցելուց հետո, նա ինձ խնդրեց այս գիշեր իրեն մոտ մնալ: Ես սիրով ընդունեցի նրա առաջարկը: Երեկոյան նա շատ երկար կանգ առավ Շուշվա կոտորածի վրա, որին ականատես էր եղել և մի հրաշքով կենդանի մնացել, ջարդված թևով (այժմ էլ չորացած թևը կապած պարանոցից):

Նա իր պատմությունն այսպես սկսեց.

Վաղ առավոտյան երբ լսվեցին կրակոցներ, բոլորը տներից դուրս եկան և լցվեցին փողոցները՝ չիմանալով թե ի՞նչ է կատարվում, և սկսեցին փախչել, ես էլ նրանց հետ: Գնում էինք դեպի զբոսավայրը: Ճանապարհին շատերը մտան Ռուբեն Նիկոլաևիչ Շահնազարյանի բնակարանը. ես էլ հետևեցի նրանց:

Այստեղ մոտ 1-2 ժամ մնալուց հետո, բակը մտան մի խումբ ասկյարներ, ծեծելով ու հայհոյելով բոլորին քշեցին տարան կառավարական շենքի հրապարակը. մեզ հետ էր նաև Ռ.Ն. Շահնազարյանը, որին իսկույն տարան Սուլթանովի մոտ: Այդտեղ ժողովեցին քաղաքի զանազան մասերից հազարավոր կանանց, երեխաների ու տղամարդկանց: Ղեկավարներն էին բժ. Մեհմանդարովը, Խոսրովբեկ Ֆոլատովը և ուրիշներ:

Ծերունիներին, կանանց և երեխաներին քշեցին բանտ, նրանց հետ՝ նաև ինձ, իսկ մնացածներին տարան դեպի քաղաքի զանազան կողմերը: Բանտ քշվածները այնքան շատ էին, որ լցված էին մինչև անգամ բակն ու միջանցքները: Այդտեղ համարյա չէին կերակրում, նրանց ծեծում էին և անվերջ տեղի էին ունենում բարբարոսություններ և հափշտակում գեղեցիկ կանանց ու աղջիկներին: Չնայած այդ ամենին՝ դեռ նրանց չէին կոտորում, վախենալով, միգուցե հայերը քաղաքը վերցնեն:

Երբ Ասկյարանն ընկավ և դրսից քաղաք մտան, մենք մահվան սարսափի տակ սպասում էինք մեր ողբերգական վախճանին ... հասավ այդ սոսկալի ժամը:

Բազմաթիվ մարդիկ լցվեցին բանտը և սկսեցին սրերով հարվածել, չխնայելով ոչ ոքի, իսկ այդ ոճրագործներին ոչ ոք չսանձեց ...

- Իսկ դու ինչպե՞ս ազատվեցիր, - հարց տվի ես:

- Տեսնու՞մ ես, ես էլ կիսամարդ դառած (ցույց տվեց չորացած ձեռքը ու վզի վրա գտնվող խոր սպին) մի կերպ ազատվեցի, որ ավելի շատ տանջվեմ: Ինձ գտա հիվանդանոցում՝ ինձ հետ մի քանի դժբախտներ ևս ...

-Ի՞նչ տեղեկություն ունես Վահան Եպիսկոպոսի, Ծատուրյանի, բժիշկ Յարամիշյանի և Գաբրիել վարժապետի մասին,- հարցրի ես.

Նա պատասխանեց, - բոլորին էլ սպանեցին: Բժիշկ Յարամիշյանը մեծ հույս ուներ, որ բժիշկ Մեհմանդարովը կարող է իրենց օգնել, բայց նա բոլորից սարսափելի գտնվեց ...

Գուխ Ը

Պատերազմական գործողությունները Տումա-Խոծաբերդի և Մսուրմանլարի շրջանում

1920թ. մարտի 23-ին առավոտյան ես գտնվում էի Փոքր Քիրսի ստորոտում գտնվող Տումա բինաներում: Այդտեղ էր գտնվում Յովակ Ստեփանյանը[3]: Նա

սիրալիր ընդունելով ինձ, առաջարկեց ծանոթանալ իր մոտ գտնվող 55-60 տարեկան, սև, արևավառ դեմքով, միջին հասակով մի մարդու հետ, ասելով՝ Մանուկ, սա մեր լավ ընկերներից է:

Ես իսկույն հասկացա, որ սա այն զինվորականն է, որն սպառնացել էր ինձ հանդիպելուց «կողերս» ջարդել ...

Սա սառն սեղմեց ձեռքս և այլևս ոչ մի խոսք չխոսեց ու մնաց մինչև վերջն էլ որպես անծանոթ, միայն իմ օգուտն այն եղավ, որ կողերս չջարդվեցին ...

Ստեփանյանն ասաց. «Դու կլինես ռազմակայանի պատասխանատուն ու ղեկավարը: Նա այս ռազմաճակատի ընդհանուր հրամանատարն էր: Այստեղ կային ռուսական բանակի նախկին Ֆեֆֆեբելներ Տումի գյուղացի Թևան անունով մի երիտասարդ և Տող գյուղացի՝ դարձյալ Թևան անունով մի երիտասարդ, որոնք Ստեփանյանի թիկնապահներն էին:

Սասունցի Մանուկը[4] ևս ուներ երկու թիկնապահ, միայն սրանք ազգությամբ քրդեր էին, որոնք եկել էին Մանուկի հետ և նրա անբաժան ընկերներն էին:

Այստեղ ժողովվել էին շրջակա գյուղերից մոտ 300 հոգի:

Ահա մարտի 23-ին, ժամը 4-ին սկսվեց կռիվը Փոքր Քիրսի ստորոտում:

Շարունակ լսվում էին հրացանային համազարկեր: Յամազարկերին հետևեցին թնդանոթների ու գնդացիրների կրակոցները, Մսուրմանլարի կողմից: Կռիվը տեղի էր ունենում Փոքր Քիրսի բարձունքի շուրջը: Երկու կողմն էլ աշխատում էր գրավել բարձունքը, որը բինաներից գտնվում էր մոտ երկուսուկես-երկու կիլոմետր հեռավորության վրա: Փոքր Քիրսի բարձունքին տիրելու համար կռիվը շարունակվեց ամբողջ օրը ձյունի, բուքի, բորանի տակ, սակայն կողմերից և ոչ մեկը չէր ուզում զիջել մյուսին:

Մութը վրա հասավ. դադարեց հրացանաձգությունը: Զորքի մի մասը մնաց դիրքերում, իսկ մնացածը վերադարձավ բինաները:

Ուշ երեկո էր, վերադարձել էին Յովակն ու Մանուկը: Ստեփանյանը մի քանի կարգադրություններ անելուց հետո, պառկեց իր զինվորական շինելով՝ հանգստանալու: Դեռ լույսը չէր բացվել, որ նորից սկսեցին գործել թնդանոթներն ու գնդացիրները: Ստեփանյանն ու Մանուկը իսկույն ոտքի կանգնեցին: Զինվորները բոլորը կանգնեցին շարք-շարք, վաշտերի բաժանված՝ իրենց վաշտապետներով և սպասում էին կարգադրության:

Այդ ժամանակ հևի-հև վրա հասավ սուրհանդակը՝ «Թշնամին հանկարծակի գրոհեց մեր դիրքերի վրա և գրավեց Փոքր Քիրսի բարձունքը: Այժմ մեր զորքը շարունակում է կռվել բարձունքի շուրջը»,- հաղորդեց նա:

Սուրհանդակի բերած լուրը ոչ մի ազդեցություն չթողեց Ստեփանյանի վրա, կարծես թե դա սովորական երևույթ էր: Նա ծանր քայլերով զինվորական շարքերի առջևով անցնելով, կանգ առավ 18-19 տարեկան մի պատանու առջև և ձեռքը դնելով նրա ուսին, ասաց.

- Բաբա՛, մինչև մի ժամ թշնամուն դուրս շպրտել փոքր Քիրսի բարձունքից:

Բաբան, որ կարծես արձանացած էր, իսկույն պատասխանեց՝ պատրաստ եմ, պարո՛ն Ստեփանյան:

Մինչև 3-4 րոպեն, Բաբան կարծես թևեր առած թռավ իր վաշտի հետ, ուշադրություն չդարձնելով Քիրսից փչող ձյունախառն բորանին: Այնուհետև Ստեփանյանը դառնալով մնացած զինվորությանը, որ նույնպես սպասում էր կարգադրության, բարձր ու խրոխտ ձայնով ասաց.- Ղարաբաղի զավակնե՛ր, ձեզանից է կախված Ղարաբաղի քաջ ըմբոստ ժողովրդի պատվի պաշտպանությունը. դե՛հ, դեպ՛ի մարտ ...

Մանուկը, կարծես քսան և հինգ տարեկան երիտասարդ, ցատկեց ձիուն ու մտրակելով առաջ սլացավ, որի հետևից՝ հեծյալ գունդը, իսկ հետևակ զորքը, բաժանված վաշտերի, իրենց վաշտապետների առաջնորդությամբ, սարի ստորոտով բարձրացավ դեպի վեր, դեպի Փոքր Քիրսը:

Դեռ չէր անցել մեկուկես-երկու ժամ, որ սուրհանդակը նորից եկավ. «Բաբայի վաշտը գրավեց Քիրսի բարձունքը, թշնամին նահանջում է, իսկ մեր զորքը հետապնդում է նրան» - հայտարարեց նա:

Թշնամին թողնելով Փոքր Քիրսի բարձունքը, սկսեց հետ նահանջել՝ դիմադրելով: Գոռում էին թնդանոթները, ճարճատում գնդացիրները, սակայն չէին կարողանում կանգնեցնել միմիայն հրացաններով կռվող հայ զինվորներին:

Կռվողները հասան Ղշլաղը՝ շրջանի կենտրոնը: Մսուրմանլարի ռազմաճակատը բավական հեռացել էր Տումա բինաներից, որտեղ գտնվում էր ռազմակայանը: Այստեղ էին պատրաստում նրանց ճաշը և այստեղից ուղարկում կռվողներին:

Ի նկատի ունենալով ռազմաճակատից հեռու գտնվելը, ռազմակայանը փոխադրվեց Խոծաբերդ, որը մոտ էր գտնվում ռազմաճակատից: Նա զետեղվեց ցածլիկ ու ծխոտված առաստաղով մի մեծ սենյակում:

Մի քանի օր էր, ինչ սկսվել էին պատերազմական գործողություններն ամբողջ Ղարաբաղում, սակայն թե ի՞նչ էր կատարվում մյուս շրջաններում, մենք ոչ մի տեղեկություն չունեինք, ինչպես և մյուս շրջանները՝ մեզնից:

Ահա, երբ զինվորության մի մասը վերադարձել էր կայանը՝ հանգստանալու, երեկոյան դեմ մտնում է 18 տարեկան մի պատանի սուրհանդակ և ծոցից հանելով մի ծրար, հանձնում է Ստեփանյանին:

Պատանին եկել էր կենտրոնական շտաբից՝ Սարաշենից՝ ոտքով, որը Խոծաբերդից հեռու է մոտ 50-60 կիլոմետր: Ստեփանյանը կարդաց գրությունը.

- Աղդամ-Շուշի խճուղու վրա շարունակվում են կռիվները: Մերոնք գրավել են Խոջալուն ու Ասկյարանը: Դալի-Ղազարի հրամանատարությամբ հալածում են թշնամուն: Մեծ ուժերով թշնամին հարձակման է անցել և անընդհատ աճում են նրանց ուժերը, որոնք համառ դիմադրության են հանդիպում:

Ադրբեջանական «Մալի-Բեկլու» գյուղը շրջապատված է, շրջապատված է նաև Խանքենդ ավանը: Շուշին այրվում է, բայց շրջապատված է դրսից, և թշնամին ջանքեր է թափում շրջապատումից դուրս գալու: Աշխատեցե՛ք կապվել Զանգեզուրի հետ:

Ստեփանյանն ընթերցելուց հետո մի երկար ու մանրամասն գրություն հանձնեց սուրհանդակին, ասելով՝ «Հանգստացիր և անմիջապես ճանապարհվիր...» :

Շատ ցավալի է, մարդիկ, որոնք այս դժվարին ու պատասխանատու գործն են վերցրել, կապի մասին ավելորդ էին համարել մտածելու ...

Այնինչ հակառակորդը հեռախոսի ցանցով պատել էր ոչ միայն ռազմաճակատը, այլև իր թիկունքը: Ահա, որպեսզի կենտրոնական շտաբից որևէ բան հաղորդեն Դիզակ, կամ Ջրաբերդ կամ որևէ բան իմանան, հարկավոր էին օրեր, իսկ դա որքա՞ն օգուտ կբերեր գործին ...

Ադրբեջանի կառավարությունը հատուկ ուշադրություն էր դարձրել Ղշլաղի վրա: Նա այստեղ կենտրոնացրել էր Բաքվից ուղարկած ընտիր զորամասեր՝ տաճիկ սպաների ղեկավարությամբ: Ղշլաղը որպես Խոծաբերդից դեպի Զանգեզուր տանող ճանապարհին արգելակող հանգուցային կետ, և երկու կողմից էլ լավ գիտակցելով այդ հանգամանքը, օրերով շարունակվում էին համառ մարտեր: Մեր հրամանատարությունը որոշել էր ինչ գնով էլ լինի գրավել Ղշլաղը, այդ պատճառով էլ հարձակման էին անցել հետևակազորը՝ Ստեփանյանի անմիջական ղեկավարությամբ և հեծելազորը՝ Մանուկի:

Երկու օր Ղշլաղի շուրջը շարունակվեց կռիվը: Այստեղ հայերը կռվում էին աներևակելի քաջությամբ, իսկ ադրբեջանցիները դիմադրում էին համառորեն: Երկրորդ օրը, երեկոյան դեմ, Ստեփանյանը թշնամու ծուղակն ընկավ և նա անպայման պետք է սպանվեր, եթե Խոծաբերդից նոր հասած ջոկատն օգնության չհասներ: Այս մի երկու տասնյակ զինվորները, Ուլունց Ներսեսի առաջնորդությամբ շշմեցրեցին հակառակորդին, հարձակվելով ճակատի հարավային կողմից, իսկ տումիցիները ճնշելով հյուսիսից, թշնամին քայլ առ քայլ նահանջելով, բռնեց գյուղի սահմանները: Նա դիմադրեց նաև ամբողջ գիշերը, սակայն զուր ջանքեր էին ... Հանկարծ որոտաց ուռռան... Հակառակորդը փախուստի դիմեց: Գրավվեց գյուղը: Թշնամուն հնարավորություն չտվին փրկելու իր զինամթերքը. գրավեցին և զինանոցը ... Այդտեղ կար մեծ քանակությամբ զինվորական հանդերձանք, մի շարք փաստաթղթեր և մի մանրամասն քարտեզ այդ շրջանների: Զինանոցից

վերջրին նաև քսան հազար փամփուշտ. գյուղի ծայրին ընկած էր թնդանոթի երկու արկ, թնդանոթի իսկական մասը չկարողացան գտնել:
Հայկական զորքը, Ղշլաղը թողնելով իր թիկունքում, առաջ շարժվեց:
Անցնելով մոտ մեկուկես-երկու կիլոմետր, կանգ առավ մի ձորի գլխի, որի լանջով փռված էր Մսուրմանլարի Ռիչան գյուղը: Պետք էր գրավել նաև այս գյուղը:
Արդեն մութն էր վրա հասնում, զորքի մի մասը մնաց այդտեղ, դիրքեր բռնած, իսկ մնացածը վերադարձավ Խոծաբերդ՝ այնտեղ հանգստանալու:
Այս գիշեր թշնամին ոչ մի տեղից կենդանության նշան չցուցադրեց:
Հետևյալ օրը վաղ առավոտյան, դեռ լույսը չբացված, Խոծաբերդում հանգստացող զինվորությունը ճանապարհվեց դեպի պատերազմի վայրը:
Ստեփանյանն առաջարկեց ինձ և Տումի գյուղացի Աբրահամ Աթաբեկյանին միասին գնալ Ղշլաղ, որտեղ կարևոր գործ կար:
Մենք շուտով հասանք Ղշլաղ. Ստեփանյանը մեզ թողեց այստեղ, իսկ ինքը գնաց Ռիչան, որտեղ շարունակվում էր կռիվը:
Ղշլաղում մենք մի կանոնավոր բնակարան չտեսանք: Ես նոր զգացի իսկական սարերի գոգի մեջ ընկղմված փոքրիկ Խոծաբերդի փառահեղությունը այս խլուրդների բների նմանվող գյուղի համեմատությամբ... Ինչպիսի տարբերություն այս երկու իրար կից, միևնույն բնության ծոցում գտնվող երկու հարևան ժողովուրդների նիստ ու կացի, կենցաղավարության և ստեղծագործական-շինարարական ուժի կարողության ու կենսունակության... Սակայն կատարյալ ողբերգություն է, երբ այս Վանդալը ցանկանում էր իրեն ենթարկել նման կուլտուրական ժողովրդին:
Մենք մտանք մեչիդը: Եթե ընկերս չասեր, որ սա է մեչիդը, ես ոչ մի դեպքում չէի պատկերացնի, որ սա իսկապես մեչիդ է: Սա մի հին խարխլված կատարյալ ցեխակույտ էր, որի հողածածկ հատակը ոչնչով չէր տարբերվում փողոցից: Նրա կենտրոնում, հողի վրա թափված էին թնդանոթի ռումբի դատարկ բազմաթիվ գիլզեր, իսկ մի անկյունում, պատի տակ, ռումբի գնդակները հենած գետնին, իսկ գիլզերը դեպի վեր հենած պատին, շարված էին ռումբեր՝ թվով ինսուն յոթ (97) հատ: Սրանք նույնպես ապացույց են, թե որ աստիճանի հակառակորդը շշմել էր շեշտակի հարվածից:
Ղշլաղից լսելի էին թնդանոթի և հրացանների կրակոցները:
Մեզ հանձնարարված աշխատանքը կատարելուց հետո ընկերս ինձ առաջարկեց գնալ դեպի կռվի վայրը: Մենք ձիաներով անցնում էինք սարի լանջով, թփերի միջով, մացառների վրայով. կանոնավոր արահետն անգամ այստեղ գոյություն չուներ:
Ընկերս տարիքով մեծ էր ու ավելի փորձված. նա մասնակցել էր 1914թ. պատերազմին՝ տաճկական ֆրոնտում և ծանոթ էր պատերազմական դրությանը: Նա գնում էր առջևից, իսկ ես հետևում էի նրան:
Մի քանի րոպե անցնելուց հետո, նա ձին կանգնացրեց և երեսը շուռ տալով դեպի ինձ ու մատով ցույց տալով ձիու ոտների տակ, ինչ-որ լար, ասաց. «Տեսնու՞մ ես, նայի՛ր այս լարին. սա հեռախոսալար է ... և սկսեցինք դարձյալ առաջ շարժվել ...
Նման թելեր հաճախ էին մեզ պատահում, որոնք անցնում էին զանազան ուղղությամբ: Հազիվ էինք մի քանի րոպե անցել, երբ ընկերս նորից կանգ առավ և ձեռքը մեկնելով դեպի մոտակա թուփը, ասաց՝ տեսնու՞մ ես, ա՛յ էս թփի տակ ընկած դեղին արկղը, դա հեռախոսի ապարատ է ... Նորից սկսեցինք առաջ շարժվել: Մի քանի քայլ անցնելուց հետո, նա նորից ձեռքը մեկնելով, ցույց տվավ մի տուփ, որի մեջ ընկած էր երկու ապարատ ևս:
-Տեսնում ե՞ս սրանք որքան կազմակերպված են, իսկ մերոնք ավելորդ են համարել այդ ուղղությամբ մտածելու: Եթե մեր զինվորի այդ բնածին խիզախությունը չլիներ, ես հավատացնում եմ քեզ, որ մենք հենց առաջին օրը պարտված կլինեինք, - ասաց նա ու շարունակեց, - ինչո՞վ է կռվում մեր զինվորը՝ միմիայն հրացանով, այն էլ բավարար քանակությամբ փամփուշտ չունենալով թնդանոթ-

ների, գնդացիրների դեմ, իրենից թվական գերազանց ուժերի դեմ և, որ զարմանալի է, հաղթում է, և նրա առաջ կանգնած ամեն ինչով գերազանցող թշնամին սարսափահար ու խելակորույս փախչում է ... տեսա՞ր, գյուղի ծայրին ընկած թնդանոթի ակները ... Այդ հաղթությունը պետք է վերագրել Ղարաբաղի հայի[ն] հատուկ խիզախությանը, տոկունությանն ու հայրենասիրությանը:

Ի՞նչ են ցույց տալիս այս թափթփված հեռախոսալարերն ու ապարատները ... Սրանք ցույց են տալիս, թե մեր թշնամին ինչպիսի սոսկալի խուճապի է մատնված, որ նույնիսկ ժամանակ չի գտել հավաքելու այդ ամենը, բայց գիտե՞ս, - դարձավ նա ինձ. - կեցցե՛, մեր Ստեփանյանը, նա լավ է հասկանում և դրա համար էլ նա թշնամուն կրնկակոխ հետապնդում է՝ ժամանակ չտալով նրան ուշքի գալու և իր ուժերը կարգի բերելու ...

Որքան մոտենում էինք ճակատին, այնքան էլ ուժեղ կերպով էին լսվում կրակոցները և մինչև անգամ մարդկանց գոռում-գոչյունը անտառածածկ սարի գագաթին և կանգ առանք: Այդտեղից երևում էր ձորի լանջերով փռված Ռիչանը: Գյուղից վերև ցցված մի բարձր ժայռի խոռոչում տեղ էին բռնել տումիցիներից մի քանի հոգի և այնտեղից գնդակոծում գյուղը, իսկ գյուղի ցածր մասերից պատասխանում էին ադրբեջանցիները և միևնույն ժամանակ լսելի էին նրանց հայհոյանքները՝ ա՛յ շան որդիք տումեցիներ, ի՞նչ եք ուզում մեզանից ... Իսկ ժայռի կատարին բուն դրածները պատասխանում էին նույնպես հայհոյանք-ներով:

Մի քանի ժամ տևող կռվից հետո, գրավվեց Ռիչանը: Հետևյալ օրը մեր զոր-քերը գրոհեցին Փարաջլան գյուղի վրա, որը գտնվում է Մսուրմանլարից հարավ-արևմուտք և Խոծաբերդից 16 կիլոմետր հեռավորության վրա:

Մսուրմանլարի շրջանն ամբողջովին գրավելուց հետո, ապահովվեց դեպի Զանգեզուր գնացող գլխավոր ճանապարհը, որը անցնում էր Փարաջայի վրայով: Այդ բոլոր գյուղերից հետո հայկական զորքը գրավեց հայկական Հարատ գյուղի արևելյան բարձունքը, որը կոչվում է «Անձուղ վերին խուր», կամ «ածխահորերի սարը» որի արևմտյան լանջին է գտնվում միակ հայկական հարուստ գյուղը, որը շրջապատված է ադրբեջանական բազմաթիվ գյուղերով: Այսպիսով մեր զորքը հասավ «Սուրասու» կոչված ձորակին և գրավեց նաև «Սուրասու» կոչված գյուղը և կանգ առավ «Հոռ Գյադուկ» կոչված վայրում: Ստեփանյանը հայտարարեց.

- Խոծաբերդից մինչև այստեղ 18 կիլոմետր է, իսկ այստեղից մինչև Կոռնիձոր՝ Զանգեզուր, 12 կիլոմետր.:

Այստեղից մենք առաջ չենք շարժվի, հավանական է, Զանգեզուրից կհասնեն մեզ:

Գլուխ Թ

Խոծաբերդից ու Մսուրմանլարից մինչև հայկական Հարատը զբաղված էր և այդ ամբողջ տարածությունը ապահովված:

Պետք էր այժմ էլ ապահովել հարավային կողմից:

Խոծաբերդից դեպի հարավ-արևելք գտնվող լեռնաստանում է գտնվում «Սուրբին խուք» կոչված բարձր սարը, որից հարավ՝ «Թոփ աղաջ»-ը:

Թոփ աղաջը բարձր սար է, ծածկված խիտ անտառներով: Նրա դեմ ու դեմ է գտնվում Ալիհանլու (Ալի Գանլու, որ նշանակում է՝ արյունոտ ձեռք) ձորակը, որ-տեղ զետեղված են Բաշարաթ, Միլլիհանլու, Տեշտանանք, Վերին Հատք, Ներքին Հատք և Ամու Ղըշ ադրբեջանական գյուղերը: Ժողովրդի մեջ տիրող կարծիքն է, որ վերոհիշյալ գյուղերը միաժամանակ հայկական գյուղեր են եղել:

Դրանք չկարողանալով դիմանալ շրջակա ավազակաբարո հորդաներին, թողել են իրենց տները և բնակություն հաստատել մի շարք հայկական գյուղե-րում, կամ դատարկ մնացած այդ գյուղերում բնակություն են հաստատում այդ թուրքերը:

Մինչև օրս էլ կանգուն են մնում հայկական ավերակ եկեղեցիների բեկորները և նրանց շուրջը փռված հայկական գերեզմանատները:

«Անու-Դղի» գյուղի եկեղեցին, որը գտնվում է մի շարք բարձր ժայռի կատարին, կոչվում է «Անու-Դղի Սուրբ ժայռը» (քըրծը), իսկ թուրքերն այդտեղ կոչում են «Ֆիր-դաղ»:

Մինչև 1925-30 թվականները պաշտպանվում էին այդ սրբի հետ կապված ծիսակատարությունները: Շրջակա հայ գյուղերի՝ Խոծաբերդի, Յարարի, Սպիտակշենի, Դոլանլարի, Խանձաձորի բնակիչները խումբ-խումբ գնում էին ամեն տարի իրենց քահանաների հետ, այն էլ զատկին, ուխտ մատուցում և մնում այնտեղ մի օր ու մի գիշեր:

Ահա, զինվորական հրամանատարության որոշման համաձայն, այժմ էլ պետք էր գրավել այս «Ալիանլու» կոչված ձորակը: Մարտի վերջն էր. այդ լեռնաստանում անընդհատ տեղում էին ձյունախառն անձրևներ, տեղի էին ունենում փոթորիկներ, բուք ու բորան, ցրտեր ու սառնամանիքներ. ահա այս դաժան պայմաններում շարունակվում էին հարձակումներ երկու կողմից էլ գիշեր ու ցերեկ: Զինվորական հրաման էր՝ գրավել «Ալիանլուի» ձորը:

Խոծաբերդում ժողովվել էին շրջակա գյուղերից վեց հարյուր զինվոր, որոնցից 150 հեծյալներ, իսկ 450 հետևակ:

Գիշերվա կեսին, երդ դեռ մութն էր թագավորում այդ անդնդախոր ձորերում, Խոծաբերդի գյուղամիջում կանգնած էին շարքերով՝ վաշտերն իրենց վաշտապետներով: Լույսը դեռ չծագած, զորքը դուրս եկավ գյուղից: Նրա առաջից գնում էին ուղեցույցներ, որոնք լավ ծանոթ էին այդ ձորերին, ճանապարհներին ու արահետներին: Յովակն ու Մանուկը նստած ձիերին՝ գնում էին զորքի հետ: Տեղում էր ձյունախառն անձրևը (ըլըչալփավ): Սև ու մութ ամպերով բռնվել էին այդ մթին ու խիտ անտառները:

Այդ վատ եղանակին զորքը մեծ դժվարությամբ հասավ «Թոփ աղաջի» խիտ անտառներին, որտեղից և պետք էր անցնել «Ալիանլու» ձորը: Ձյունախառն անձրևը գնալով փոխվեց փոթորիկի և մթնեց ամբողջ անտառը: Զորքի առջից գնացող ջոկատը, որ մինչև այդ հազիվ էր նշմարվում աննշան արահետը, բոլորովին կորցրեց արահետը, չիմանալով, դեպի ուր է շարժվում: Այդ ջոկատն անգիտակցաբար բաժանվում է երկու մասի՝ գնալով երկու տարբեր արահետներով: Այդպես անորոշության մեջ քայլելով և որոշ տարածություն անցնելուց հետո, հանկարծ դեմ առ դեմ ելնելով և կարծելով, որ թշնամու են հանդիպել, սկսում են կրակել իրար վրա: Մինչև ուշքի կգան և կհասկանան իրականությունը, բավական զոհեր կտան՝ 12 հոգի սպանված և 25 հոգի վիրավոր: Վիրավորվածներին ու սպանվածներին տեղափոխեցին Խոծաբերդ: Յադրութից հասավ բժշկական օգնություն: Կռվողների մի մասը խուճապահար փախչում է դեպի Յին Թաղլար, իսկ մի մասը՝ Ստեփանյանի և Մանուկի հետ վերադառնում Խոծաբերդ:

Ուժեղ հրացանաձգության ձայնից, ադրբեջանական շրջակա գյուղերը, չհասկանալով, թե ինչ է կատարվում իրենց շուրջը, սարսափահար փախչում էին՝ բեռնած ձիաներով ու եզներով, կարծելով, թե թշնամին շուտով կհասնի իրենց: Այդ օրվա կռվում սպառվեց փամփուշտի ամբողջ պաշարը:

Խոծաբերդ վերադարձած կռվողները, հոգնած, խիստ թրջված, ժամանակ չգտան հանգստանալու և իրենց հագուստները փոխելու ու իրենց կարգի բերելու: Ստեղծվել էր սոսկալի դրություն: Բոլորն էլ սպասում էին, որ կարող է պատահել, շուտով հարձակման ենթարկվեն ..., այն ժամանակ ինչպե՞ս և ինչո՞վ պետք է դիմադրեին ... Զինվորությունը ուժասպառ էր և զրկված փամփուշտից:

Ստեփանյանն իրեն չկորցրեց, նա շատ հանգիստ էր ու սառն, նա կարգադրեց եղած զինվորությանը՝ բռնել գյուղի շրջակա բարձունքները և պատրաստ լինել թեկուզ սրերով պաշտպանվելու: Նա կարգադրեց, որ գյուղում մնացած բոլոր տղամարդիկ նույնպես դուրս գան զինվորների հետ միասին պաշտպանելու գյուղի սահմանները: Բացի դրանից, նա շրջակա գյուղերն ուղարկեց սուրհանդակներ, որ տեղերում մնացած զինվորությունն իսկույն ներկայանա Խոծաբերդ: Ձյունախառն անձրևը շարունակվում էր. բուքն ու բորանը միացած՝ ոռնում էին, և մթնել էր ամբողջ Խոծաբերդն իր անդնդախոր ձորերով:

Ահա այս բոլոր միջոցառումներից հետո պետք է տեղի ունենար խորհրդակցություն՝ ելք փնտրելու, դուրս գալու այս դրությունից, երբ շնչասպառ ու սոսկալի թրջված, ամբողջապես ցեխի մեջ, հոգնած ու բեզարած ներս մտավ կենտրոնական շտաբի պատանի սուրհանդակը: Նա գալիս էր Սարաշենից: Նա ծոցից հանելով մի երկար ծրար՝ հանձնեց Ստեփանյանին, որը բանալով ծրարը, նախ կարդաց մտքում և ապա բարձր ձայնով: Նա խիստ հուզված էր և այլայլված:

Շուշվա հայկական մասը մոխրակույտերի է վերածված. ամբողջ քաղաքի հայկական մասը դեռ ծխում է. բնակչության մի մասը ազատված է, մի մասը կոտորված, իսկ մի զգալի մասի վիճակն էլ դեռ անորոշության մեջ է ... Ասկյարանը Դալի-Ղազարի անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ շարունակում է օրհասական կռիվը՝ Ադրբեջանի գերազանց ուժերի դեմ, նա դեռ կարողանում է պաշտպանել Ասկյարանը, սակայն երկար շարունակել այս դրությունը անհնար է: Ինչ գնով էլ ուզում է լինի, կապվեցեք Զանգեզուրի հետ և իրազեկ դարձրեք մեր դրությանը. հապաղումը կխորտակի բոլորիս... Աշխատեցեք փամփուշտ հասցնել մեզ:

Կենտրոնական շտաբի այդ հաղորդումը բազմապատկեց մեր տանջանքները և մեր դառն ապրումները: Մենք խորասուզված էինք խորը վշտի ու թախծի մեջ... Վաղն ի՞նչ է սպասում մեզ և ամբողջ Ղարաբաղին... Սոսկալի վիճակ...

Ստեփանյանը գրեց մի մանրամասն նամակ, որտեղ նկարագրեց մեր դրությունը և փակելով ծրարը՝ հանձնեց սուրհանդակին, պատվիրելով՝ իսկույն վերադառնալ շտաբը՝ Սարաշեն:

Դուրսը խավար էր. ձյունախառն անձրևը շարունակվում էր. մարդիկ գտնվում էին բուք ու բորանի տակ և հսկում իրենց սահմանները:

Գլուխ ԺԲ
Հայկական հանրապետության բանակի առաջապահ զորամասի մուտքը՝ Զանգեզուրից Ղարաբաղ

Այդ մղձավանջային օրն ու գիշերն անցան:

Հաջորդ օրը, վաղ առավոտյան, Փոքրիկ Խոծաբերդը ռազմական ճամբարի տեսք էր ստացել: Շրջակա գյուղերից եկել էին բազմաթիվ զինվորներ, բոլորն էլ սպառազինված: Թշնամու հարձակման վտանգն անցած կարելի էր համարել, հակառակ պարագայում միանգամայն ապահովված էր նրա հակահարված տալը և նույնիսկ հաղթությունը: Այժմ բոլորը մտահոգված էին նրանով, թե արդյոք, սուրհանդակները կարողացա՞ն առանց վտանգվելու տեղ հասնել և թե Զանգեզուրը օգնության կհասնի՞, թե չէ ...

Ժամանակն անցնում էր շատ դանդաղ, մարդիկ խորասուզված էին դառն մտածմունքների մեջ:

Դեռ ժամը տասնմեկը չկար, երբ Մանուկի երկու քրդերը, վազելով ու հևալով կայանը մտան և իբրև ավետաբերներ հաղորդեցին. «թնդանոթների ձայներ են լսվում»:

Իսկույն ընդհանուր թմրությունն ու հուսալքությունը տեղի տվին բուռն ոգևորության: Կարծես մի քանի րոպե առաջ խեղդող մթնոլորտը չլիներ, և ցնծությունը համատարած դարձավ: Կանայք ու աղջիկներ, խմբված փողոցներում, բարձր խոսում էին ու զիլ ծիծաղում ... «Ուրեմն մեզ դեռ չեն մոռացել ու մեզ օգնության են գալիս ... Ուրեմն մեր սուրհանդակները հաջողությամբ տեղ են հասել»,- ասում էին միմյանց:

Երեկոյան ժամը վեցն էր, երբ ուղարկված սուրհանդակները մտան ռազմակայանը: Բախշի Պողոսյանը, սուրը մերկացրած ձեռքին, կանգնել էր սենյակում: Նա ծոցից հանելով մի ծրար, հանձնեց Ստեփանյանին: Բոլորն էլ սրտատրոփ սպասում էին նոր ուրախ լուրի ...

Հայկական զորքը գրավել է Հարարը. վաղ առավոտյան, երկու հարյուր ձի, ջորի պետք է լինեն Հարարում՝ Զանգեզուրից ռազմամթերք տեղափոխելու համար, - հայտարարեց Ստեփանյանը:

Բախշի Պողոսյանը մանրամասն պատմեց, թե ինչպես են տեղ հասել և նորից վերադարձել:

«Մենք չափազանց զգույշ, գողեգող, ճանապարհներից ու բնակության վայրերից խույս տալով, լուսաբացին հասանք Հաքյառու գետը: Մենք այդտեղ փոքր ինչ շունչ քաշելուց հետո, հանվեցինք և մերկ ոտներով գետը մտանք` իրար բռնած: Երբ հասանք գետի մեջտեղը, հայկական սահմանապահները, մեզ նկատելով ձայն տվին` ովքե՞ր եք. մենք իսկույն բղավեցինք` բարեկամներ ենք... Բարեկամներ ..., ու մոտեցանք նրանց: Սահմանապահները մեզ տարան իրենց հրամանատարի մոտ և մեզ ստուգելուց հետո տարան ընդհանուր հրամանատարի մոտ: Մենք նամակը հանձնեցինք նրան:

Հրամանատարը հարց ու փորձից հետո կարգադրեց, որ մեզ կերակրեն և տեղ տան հանգստանալու: Դեռ հազիվ էինք հանգստացել, որ սկսեցին գործել թնդանոթները` Հագարա-Հարար գծի ուղղությամբ: Ինչպես երևաց, ադրբեջանական կանոնավոր բանակը կանգնած էր մեր դեմ: Նա ամրացած էր Սաֆյան և Ղարթճելար ադրբեջանական գյուղերի արանքում գտնվող մի խոր ու նեղ ձորակում, որտեղից ռմբակոծում էր Կառին ձոր հայկական գյուղը:

Մոտ մի ժամ տևող թնդանոթամարտից հետո, հայտնաբերելով պատսպարված թշնամուն և ոչնչացնելով նրա հրետանին, դադարեց դիմադրությունը, որից հետո հայկական բանակը երկու-երեք ժամվա ընթացքում հասավ Հարարի արևմտյան սահմանին: Մեր սահմանապահները Հարարի արևելյան սահմանակից սարից, իսկ Զանգեզուրից հասած բանակը` Հարարի արևմուտքից գրոհելով գրավեցին Հարարը:

Ստեփանյանը, սուրհանդակների միջոցով, իսկույն իմաց տվավ շրջակա հայկական գյուղերին, որ անմիջապես Խոծաբերդ ուղարկեն ձիաներ ու ջորիներ:

Հետևյալ առավոտյան, դեռ լույսը չբացված, մենք Խոծաբերդից ճանապարհ ընկանք` մեզ հետ տանելով պահանջված երկու հարյուր ձին ու ջորին: Երբ լույսը դեռ չէր բացվել ու մենք անցնում էինք Սպիտակ շենի ավերակների միջով, այս ժամին սրանք որտեղի՞ց էին գալիս, հարց էինք տալիս մենք իրար:

Ավերակներից դուրս գալով և առաջ շարժվելով դեպի արևմուտք, մենք տեսանք, ճանապարհի ամբողջ երկարությամբ, փոքրիկ խմբերով գալիս էր կանանց մի հսկայական քարավան: Մենք միայն նոր հասկացանք, որ այս ժամին սրանք գալիս են գրավված ու ավերված ադրբեջանական գյուղերից ... Ինչպես երևում էր, սրանք էլ գնացել էին թալանի:

Սրանցից յուրաքանչյուրը մի բան ուներ շալակին և ձեռքին բռնած որևէ իր:

ՀԱԱ, ֆ. 314, ց.1, գ.34, թ. 211-256: Ինքնագիր:

Ծանոթագրություններ

1. Դանիելբեկյան Աղապարոն - Վարանդայի շրջանի ոստիկանապետ:

2. Նկատի ունի մ.թ.ա. 480թ. 300 սպարտացիների հերոսական պաշտպանությունը Թերմոպիլեում` ընդդեմ պարսիկների:

3. Հովակ Ստեփանյանը 1918-ի վերջերին նշանակվելով նորակազմ Շուշվա գնդի առաջին գումարտակի պետ, սկզբից մինչև վերջ մասնակցել է գնդի դժվարին երթին: Թիֆլիսի ազգային խորհուրդը միաժամանակ նրան նշանակել էր Ղարաբաղ-Զանգեզուրի ընդհանուր լիազոր:

4. Սասունցի Մանուկը Զանգեզուրից ոտքով, թաթարական գյուղերի միջով անցնում է Լեռնային Ղարաբաղ. ապստամբության ժամանակ նա Դիզակի հրամանատարի տեղակալն էր, իսկ վերջում` Քիրսի շրջանի հրամանատարը:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ՓԱՐԻԶԻՑ ՈՒ ՍԱՆ ՌԵՄՈՅԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

1920թ. գարնանը ՀՀ իշխանությունների առջև խոյացել էին լուծում պահանջող մի քանի կարևոր խնդիրներ, որոնցից էին. 1) ՀՀ-Խորհրդային Ռուսաստան, 2) ՀՀ-Դաշնակից երկրներ և 3) Հայաստան-Վրաստան փոխհարաբերությունները: Սույն հրապարակման նպատակն է լուսաբանել նշյալ փոխհարաբերությունների որոշ հարցերը:

Վերոնշյալ ժամանակաշրջանում էապես փոխվել էր քաղաքական իրավիճակը նախկին ռուսական կայսրության տարածքում: 1917թ. հոկտեմբերին դառնալով կառավարող ուժ, բոլշևիկյան իշխանությունը ոչ միայն չպարտվեց քաղաքացիական պատերազմում, այլ ավելին՝ 1920թ. գարնանը ամրացավ Հյուսիսային Կովկասում: Այդ փաստը չէր կարող չանհանգստացնել ՀՀ իշխանություններին: Այդ ժամանակ էլ Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ ՀՀ իշխող վերնախավի մոտ ձևավորվեց երկու մոտեցում. առաջին՝ չափավոր գծի կողմնակիցներ Ա.Խատիսյանը, Ա.Ահարոնյանը և այլոք խելամիտ չէին համարում պայքարել Խորհրդային Ռուսաստանի առաջխաղացման դեմ և ձգտում էին բանակցությունների միջոցով հասնել վերջինիս ՀՀ-ի անկախության ճանաչմանը, իսկ ընդգծված արևմտամետ դիրքորոշում ունեցող արմատական գծի կողմնակիցներ Ռ.Տեր-Մինասյանը, Հ.Օհանջանյանը և ուրիշները, որոնց աջակցում էր Անգլիան, Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ դրսևորեցին խիստ թշնամական դիրքորոշում: Այս գծի կողմնակիցները, տարբեր պատճառաբանություններով, արտասահման գործուղեցին չափավոր գծի ներկայացուցիչներին և, որպես արդյունք, ամրապնդեցին իրենց դիրքերը ինչպես պետական կառավարման մարմիններում, այնպես էլ՝ բանակում: Իրենց հակառուսական տրամադրություններով վերջիններս այնքան «ոգևորվեցին», որ անգամ իրենց հովանավորող Անգլիայի ներկայացուցիչները դժգոհեցին այդ քաղաքականությունից. ճշտենք՝ Անգլիայի անհանգստությունը բացատրվում էր արմատական գծի կողմնակիցների հակաադրբեջանական քաղաքականությամբ: Ավելին, Անգլիան ձգտում էր հասնել Ռ.Տեր-Մինասյանի հրաժարականին: Այնուամենայնիվ, ՀՅԴ ղեկավար արևմտամետ արմատական գործիչները, ի հակառակ 1920թ. ապրիլի 5-ին Ալեքսանդրապոլում անցկացրած խորհրդակցության կոչերին*, իրենց հավատարմությունը հայտնեցին Անտանտին: Նպատակը մեկն էր՝ չզրկվել իրենց խոստացված Անտանտի տրամադրելիք զենքից, Անտանտի կողմից ՀՀ նոր՝ ցանկալի սահմանների ձևավորման հեռանկարից և ամերիկյան պարենային օգնությունից:

Սույն հրապարակմամբ ցանկանում ենք նաև մասնակի ներկայացնել Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ ՀՀ-Դաշնակից երկրների միջև ընթացող քննարկումները:

1920թ. գարնանը կտրուկ սրվեց Հայաստան-Ադրբեջան փոխհարաբերությունները: Ադրբեջանական իշխանությունները, նույն թվականի մարտի 20-ից, սկսեցին զինաթափել Ղարաբաղի հայ բնակչությանը և պահանջեցին լիակատար ենթակայություն: Բնականաբար, Ադրբեջանի այդ քաղաքականությունը հանգեցրեց ռազմական գործողությունների վերսկսմանը, որի արդյունքում մարտի 23-ին ոչնչացվեց հայկական Շուշին. ադրբեջանական բանակը, գրավելով քաղաքը, հրկիզեց այն և կոտորեց տեղի հայ բնակչությանը: Ադրբեջանի կառավարությունը ռազմական գործողությունների վերսկսման ողջ մեղքը բարդեց ՀՀ ղեկավարության, հատկապես՝ արմատական գծի կողմնակիցների վրա: Ավելին,

---

* 1920թ. ապրիլի 5-ին Ալեքսանդրապոլում տեղի ունեցավ Հայաստանի 5 կուսակցությունների (դաշնակցականներ, ռամկավարներ, էսէռներ, Հայ ժողովրդական կուսակցություն և սպեցիֆիկներ) տարածքային կառույցների ներկայացուցիչների խորհրդակցություն, որի ժամանակ նրանք առաջարկեցին ՀՀ իշխանություններին Խորհրդային Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատել - Գ.Մ.:

Դաշնակից երկրների որոշ ներկայացուցիչներ, մասնավորապես` Մեծ Բրիտանիայի ԱԳՆ աշխատակից, Բաքվում նախկին փոխ-հյուպատոս Է.Մաք-Դոնելլը պահանջում էր իշխանությունից հեռացնել Դ.Կանայանին և Հ.Սրվանձտյանին: Միաժամանակ, Անգլիայի ներկայացուցիչները անուշադրության էին մատնում ՀՀ իշխանությունների դիմումները` ձերբակալել կամ Ադրբեջանից վտարել օսմանյան բանակի նախկին սպաներ` գեներալներ Նուրի փաշային և Խալիլ բեյին:

Անկախության հռչակման առաջին իսկ օրվանից ՀՀ-ն տարածքային վիճելի խնդիրներ է ունեցել հարևանների հետ, որոնք իրենց լուծում չէին գտել նաև 1920թ.: Այդ հարցերը գտնվում էին Դաշնակից երկրների ուշադրության ներքո և վերջիններս իրենց տեսակետը ունեին դրանց վերաբերյալ: Մասնավորապես, Անգլիան Զանգեզուրը, Նախիջևանը և Կարսի մարզը ճանաչում էր որպես ՀՀ անբաժանելի մաս, իսկ Ղարաբաղի հարցում պնդում էր որպեսզի այն ենթարկվի Ադրբեջանին: 1920թ. մարտի 5-ին, հանդես գալով Անգլիայի անունից, Ջ.Ուորդրոպը առաջարկեց տարածքային վիճելի հարցերը լուծել Դաշնակիցների իրավարարությամբ: Ապրիլի 8-ին Ջ.Քերզոնը առաջարկեց իրենց իրավարարությունը տարածել նաև Անդրկովկասում առկա տարածքային բոլոր վիճելի հարցերի վրա: Սակայն, կարճ ժամանակ անց, Անգլիան հետ կանգնեց այդ տեսակետից և առաջարկեց իրավարարության հարցին անդրադառնալ Սևրի պայմանագրի կնքումից հետո: Նշենք նաև, որ Վրաստանը և Ադրբեջանը չեն հավանել տարածքային վիճելի հարցերը իրավարարությամբ լուծելու ՀՀ մտադրությունը: Այդ ժամանակահատվածում վիճելի տարածքների պատկանելիության հարցը քննարկման առարկա էր հանդիսանում Թիֆլիսում, Փարիզում և Սան Ռեմոյում ընթացող բանակցություններում: Մասնավորապես, Սան Ռեմոյում ընթացող բանակցությունների ժամանակ Դաշնակից երկրների պետական անձինք կարևորեցին Հայաստանի` դեպի Սև ծով ազատ դուրս գալու հնարավորությունը: Վրացական կողմը խոստացավ ապահովել երկաթուղային անարգել տարանցում ապրանքաշրջանառություն իրականացնելու համար: Միաժամանակ, Վրաստանի պատվիրակությունը, ինչպես տարածքային առկա վիճելի հարցերի, այնպես էլ` պարտադրող իրավարարության հեռանկարի քննարկումը հետաձգեց, մինչև որ վերջնականապես կվորոշվեր Բաթումի մարզի պատկանելիությունը:

Վավերագրերը ներկայացնում ենք արդի ուղղագրությամբ և կետադրական որոշ շտկումներով:

Գայանե Մախմուրյան
պատմական գիտությունների
դոկտոր

N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա.ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՏԻՍՅԱՆԻՆ` ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՄՐԱՊՆԴՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 ապրիլի 1920թ.
Փարիզ

«Ամսիս 8-ին Տարանտոից[1] մեկնեց դեպի Ձեզ մեր սուրհանդակ պ. բժիշկ [Տ.] Չալյանը[2], ուղարկում եմ հաջորդ սուրհանդակը, որ Տարանտոից նավ կնստի ապրիլի 17-ին, այսինքն նախընթաց սուրհանդակից երկու շաբաթ հետո: Մեր հարցի այս եռուն շրջանում ես նյութական արտակարգ զոհաբերություններ հանձն առա Լոնդոնից բազմաթիվ հեռագրերով և կրկնակի սուրհանդակներով Ձեզ իրազեկ պահել: Շատ պիտի ցավիմ, եթե Լոնդոնից ղրկածս հեռագիրները Ձեզ չհասնին: Նրանց թիվը 8-ից անց է և մեծ մասամբ հունական ու իտալական

միսսիաներին* եմ հանձնել - վերջինը անգլիացիներին, լորդ [Ջ.] Քերզոնի գրույցի մասին:

Պաշտոնական նամակումս գրեցի, որ անծանոթ եմ տեղիդ անցուդարձին: Դա մեր վիճակի ամենացավալի կողմն է: Գործում ենք կույր-կուրույն և հաճախ աններդաշնակ Ձեզ հետ: Եթէ Ձեր հեռագրերը չեն հասնում ինձ, ինչ որ շատ հնարավոր է - ի՞նչ արգելք կա գեթ այս բաղդորոշ օրերում սուրհանդակներ փութացնեք թեկուզ Կ.Պոլիս, որտեղից շատ հաճախ վստահելի եկողներ կան, հակառակ դեպքում ի՞նչ արգելք կա, որ Ձեր սուրհանդակը մինչև Փարիզ հասնի և մեր պատասխանը Ձեզ բերի: Այստեղ գալու ծախքը Դուք հոգացեք, վերադարձին ես կվճարեմ, խնդրում եմ այս իրագործել. դա շատ ու շատ անհրաժեշտ է այս օրերում: Բոլոր նշաններից երևում է, քո նամակումն էլ ակնարկ կար, որ բոլշևիկները առաջանում են դեպի Անդրկովկաս: Անցյալ օրը** [ԱԳՆ-ում] հաղորդեցին, թե բոլշևիկները շատ հեռու չեն Բաթումից, որի գրավումը անխուսափելի է: Թերթերը նույնպես ամեն օր հաստատում են բոլշևիկների առաջխաղացումը: Ոչ ցավելու, ոչ ուրախանալու պատճառ ունինք: Ծանրակշիռ քաղաքական փաստ է այս, որ պիտի հաշվի առնինք և հարմարվինք ստեղծվելիք նոր պայմաններին: Բոլոր պետությունները - և առաջին հերթին Անգլիան տնտեսության անհրաժեշտության պատրվակի տակ, սկսել են սովետների[3*] հետ գրեթե քաղաքական հարաբերություններ: Բանն այնտեղ հասավ, որ անցյալ օրը[4*] Լոնդոնում պարսկական[5*] արտաքին գործերի նախարար պրինց[6*] Փիրուզը հնարավոր գտավ ինտերվյու[7*] տալ և հայտարարել, թե Պարսկաստանը դիտավորություն ունի շուտով բարի հարաբերություններ մշակել սովետների հետ: Անշուշտ պարսից նախարարի այս նշանակալից հայտարարությունը Լոնդոնում առանց բրիտանական [կառավարության] գիտության չէ:

Մեծ պետությունների[8*] օրինակին հետևելով, Ռուսաստանից անջատված մանր պետությունները նույնպես աշխատում են բոլշևիկների հետ բանակցության մեջ մտնել: Բալթյան պետություններից հետո Լեհաստանն է զրույց սկսել. չեմ զարմանա, եթե վրացիքն ու թաթարներն[9*] էլ մարդիկ ղրկած լինին Մոսկվա: Անգլիան քաջալերում է բոլոր այս համաձայնությունները: Իտալիան ևս առավել: Ֆրանսիան վարանում է, բայց այստեղ էլ ձայներ են լսվում անգամ պահպանողական բանակում, թե սխալ էր Կոլչակ-Դենիկինյան քաղաքականությունը[3], ժամանակ է նոր ճամբաներ որոնել Լեհաստանին մոտենալու համար[4]: Դեպի բոլշևիկներն սկսած հարաբերության այս փոփոխությունը պետք է բացատրել նրանով, որ խաղաղությունն անհնարին է թվում առանց Ռուսաստանի: Քաղաքականապես՝ որովհետև Ռուսաստանն իր խոսքն ունի Արևելյան խնդրում[5] Պոլսի և նեղուցների հարցում, նոր կազմված մանր պետությունների[6] ապագան տնօրինելիս: Տնտեսապես՝ որովհետև Ռուսաստանը ահագին շտեմարան է, որ այսօր փակ է և այս պարագան անձնապես անդրադառնում է Եվրոպայի ընդհանուր կացության վրա: Եվ, որովհետև չափավոր տարրերը[7] Ռուսաստանում ցարդ չկարողացան որևէ կառավարություն կազմել, մնում է ընդունիլ բոլշևիկյան կառավարությունը որպես փաստորեն գոյություն ունեցող: Այս է դրությունը. մեզ թվում է, որ ներկա պայմաններում դուք ևս ինչպես ամենքը ստիպված պիտի լինիք բոլշևիկ-

---

* Դիվանագիտական ներկայացուցչություններին -Գ.Մ. (տողատակի ծանոթագրությունները կատարվել են մեր կողմից):

** Այն է. 1920թ. ապրիլի 11-ին:

3* Խորհրդային Ռուսաստանի հետ:

4* Ա.Ահարոնյանը Լոնդոնից Փարիզ է մեկնել ապրիլի 11-ին, այնպես որ նշված հարցազրույցը պետք է տեղի ունենար ապրիլի 10-ին կամ 11-ին:

5* Պարսկաստանի:

6* Արքայազն:

7* Հարցազրույց:

8* Վեհաժողովում այդ կարգավիճակը ունեին Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան ու ԱՄՆ-ը:

9* Այդ տարիներին ադրբեջանցիները կոչվում էին Կովկասի թաթարներ:

ների հետ զրույց սկսել, որպեսզի Կովկասը մտնելիս գեթ մեր* վերաբերմամբ բարյացակամ լինին: Ֆորմուլան** պարզ է - մենք ոչ բոլշևիկ ենք - և ոչ հակաբոլշևիկ: Մեր թափած ահագին արյունը և մեր անխախտ բարյացակամությունը դեպի Ռուսիա պետք է, որ արժեցնել սովետների[3*] առաջ: Նկատի պիտի առնեն նաև, որ իրենք արդեն ճանաչել են Թուրքահայաստանը, մեծ կարևորություն չէ ճանաչել անդրկովկասյան փոքրիկ հայ հողամասի[8] միացումը առաջինին: Այսպես թե այնպես, սովետների հետ զրույցը պետք է սկսել գաղտնի կերպով:

Ձերմ բարևներով, Ձեր Ա.Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 107-108: Բնագիր: Մեքենագիր:

N 2

ՀՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա.ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՏԻՍՅԱՆԻՆ՝ ԼՈՆԴՈՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

12 ապրիլի 1920թ.
Փարիզ[9]

«Ներկայացնելով այս ապրիլ 8-ին Լոնդոնում Լորդ [Ջ.] Քերզոնի[10] հետ ունեցածս տեսակցության համառոտ արձանագրությունը, պարտք եմ համարում այստեղ վերհանել մի քանի դիտողություններ և լուսաբանություններ: 1) Ինչպես նկատում եք, լորդ [Ջ.] Քերզոնը սպառնաց մեզ զենք չտալ, եթե չդադարեցնենք թաթարների ջարդը[11], հակառակ իմ բուռն բացատրության, թե երբեք այդպիսի ջարդեր տեղի չեն ունեցել: Լորդի այդպիսի հայտարարությունը թվում է անհետևողական և տարօրինակ, քանի որ ինքը՝ մի ամիս առաջ Լորդերի պալատում հայտարարելով հանդերձ, թե հայերը գառնուկն չեն, արյունհեղ և վայրագ հարձակումներ են անում թաթարների դեմ, մի քանի օր մեզ պաշտոնապես գրեց, թե բրիտանական կառավարությունը որոշել է հայ բանակը զինել և ռազմամթերք տալ նրան: Նույնը հայտարարեց [Դ.] Լլոյդ Ջորջը Համայնքների պալատում մի քանի շաբաթ առաջ. արդ՝ եթե այն ժամանակ մեզ վերագրված թաթարական ջարդերը, արգելք չեղան մեզ զենք տալու որոշման, ինչու՞ հանկարծ այսօր այդպիսի հանկարծական փոփոխություն, երբ ոչինչ նոր բացի [Ջ.] Ուորդրոպի[12] մի նամակից, թե հայերի և թե թաթարների մեջ մեծ ընդհարումներ կան: Կտրված լինելով ձեզնից և անծանոթ այդտեղի նոր անցուդարձին, ես ենթադրում եմ. կամ բրիտանական կառավարությունը հույսը կորցրել է, թե կովկասյան ժողովուրդները՝ և մասնավորապես հայերը բոլշևիկների դեմ կերթան, և այս պատճառով անօգուտ է համարում մեզ զենք տալ, կամ Ղարաբաղում ու Զանգեզուրում նոր անցքեր են տեղի ունեցել հօգուտ մեզ և անհամապատասխան բրիտանական հայեցակետների, ուստի մեզ զենք մերժելով աշխատում են մեզ ճնշել և հետ քաշել:

Այսպես, թե այնպես [Ջ.] Քերզոնի հայտարարությունը թվում է ինձ ոչ առանց հետին մտքի:

2) Մասնավորապես Դրոյի[13] և Համազասպի[14] անունների վրա կանգ առնելը, ըստ իս, թաթար ու վրացական ներշնչումն է, որ արված է [Ջ.] Ուորդրոպին. [Ա.] Գյուլխանդանյանը[15] խառնված է նրանց՝ որպես ներքին գործոց նախարար:

[Ջ.] Ուորդրոպը ինքը անշուշտ զոհ է թաթար ու վրացական ինտրիգի[4*]: Նրան պետք է բացատրել այդ: Ամսիս 9-ին, Ձեզ ուղղածս հեռագրի մեջ աշխատելով

---

* ՀՀ իշխանությունների:

** Բանաձև:

3* Խորհրդային իշխանության:

4* Բանսարկության:

հարազատորեն հաղորդել Ձեզ լորդ [Ջ.] Քերզոնի հայտարարության էական մասը, ես խույս տվի մեր երեք ականավոր գործիչներին* արձակելու պահանջն ևս հայտնել, վախենալով թե միգուցե դուք առնեք և իրագործեք այն, ըստ իս, այդպիսի պահանջը անգլիական արտաքին գործոց նախարարի կողմից չափազանց է և չի արդարացնում ցարդ անգլիական կառավարության մեր բազմապիսի թշվառությունների հանդեպ ցուցահանած բացարձակ անտարբերությանը: Բրիտանական կառավարության խոստումներն ունենք միայն, բայց գործ չտեսանք տակավին: Ճշմարիտ է. անցած երկու ամիսը Լոնդոնում մենք լավագույն մթնոլորտի մեջ աշխատել ենք, բայց կրկնում եմ. գործնական արդյունքը դեռ չկա և հետո Անդրանիկի Զանգեզուրից հեռանալու[16] փաստն ապացուցում է, որ երբ մենք հեռանում ենք, մեր ժողովուրդն ու հողը հանձնում ենք թաթարներին:

Եվ հետո, եթե մենք այսօր համակերպվենք և հեռացնենք ասպարեզից մեր աչքի ընկնող գործիչներին, ոչ մի երաշխիք չունինք, որ վաղը չեն պահանջի հեռացնել և ամբողջ նախարարական կազմը, և պառլամենտը: Մենք շատ թանկ գնով ենք ձեռք բերել անկախությունը՝ այսպես խաղալիք դառնալու օտարներին, թեկուզ այդ օտարը լինի մեզ բարյացակամ մեկը:

Այն ժամանակ, երբ թաթարը՝ իսկական արյունարբու ջարդարարները [Խ.] Սուլթանով[17], [Ֆ.] Խան-Խոյսկի[18], [Բ.] Ջիվանշիր[19] և այլն, եղբայրացած թուրք նույնպիսի ջարդարարների հետ, շարունակում են իրենց շահատակությունները և բրիտանական կառավարությունը տակավին հնար չգտավ այդ վտանգավոր ոհմակից ազատել և թաթար, և հայ ազգաբնակությունը, մյուս կողմից, քանի որ Խալիլ[20] և Նուրի[21] փաշաները Ադրբեջանից հեռացնելու բրիտանական կառավարության պահանջը Բաքվի կառավարությունը մերժել է, չափազանց վիրավորական կլինի, և մեր ծայրահեղ խեղճության ապացույց, հեշտությամբ և միանգամ անիրավ տեղը զոհել մեր պարկեշտ և կարևոր գործիչներին և կարծել տալ, թե մենք ընդունում ենք մեզ վերագրված ամոթալի, անպատիվ մեղադրանքը: Եվ ահա թե ինչու ես դեմ եմ Դրոյի, Համազասպի և Գյուլխանդանյանի հեռանալուն:

Սակայն, մյուս կողմից անհնարին է բացարձակ անուշադրության մատնել այսպիսի հայտարարությունը մի մեծ պետության** կողմից, որից մենք այնքան ակնկալիքներ ունինք, ուստի, ըստ իս, լավագույնն է գեթ առժամապես մեր երեք գործիչներին պաշտոնները փոխել՝ ըստ ձեր հայեցողության:

3) Ապրիլ 9-ին ձեզ հեռագրելուց հետո, «Թայմզը»[3*] հրատարակելով Գողթանի կոտորածի[22] նկարագիրը, որը ես էի տվել, ավելացնում է, թե Պոլսի հայ թերթերը հաղորդում են, որ հայ զորքերը, հակառակ Նուրի փաշայի կատաղի դիմադրության, գրավեցին Շուշին, Ասկերանը և Խանքենդը[4*]: Եթե այս փաստը ճիշտ է, անշուշտ լորդ [Ջ.] Քերզոնը մեր զրույցի ժամին գիտեր այդ, հետևապես նրա պահանջը հեռացնել մեր գլխավոր մարտիկներին, դառնում է բոլորովին համանման Անդրանիկի հեռացնելուն Զանգեզուրից:

4) Անհամբեր սպասում ենք Ղարաբաղը մերոնց կողմից գրավված լուրի հաստատող Ձեր հեռագրին: Եթե իրոք մեր զորքերը տիրում են Ղարաբաղին, ապա ներկա պայմաններում չեմ զարմանա, եթե բրիտանական ներկայացուցիչները պահանջեն մեզնից նորից թողնել հեռանալ այնտեղից: Չգիտեմ, ինչ կպատասխանեք դուք, բայց, ըստ իս, զիջումը մեր կողմից Ղարաբաղի հայությունը կմատներ թաթարական կատաղության: Հետևապես Ղարաբաղը թողնելու չէ և այդ մտքով պահանջին միակ արդար պատասխանը կլիներ հայտնել, թե մենք Ղարաբաղը միայն դաշնակից զորքերին կտանք և ոչ դաշնակից անհատ գործակալներին (ագենտ): Վստահ եղեք, որ երբեք դաշնակից զորքեր[23] Կովկաս գալու չեն:

5) Շտապեմ ավելացնել նաև, որ [Ջ.] Քերզոնի հետ տեսակցության հաջորդ օրը արտաքին գործոց նախարարություն գնացի՝ նույն նյութի մասին խոսելու, և

---

* Խոսքը վերոհիշյալ Դ.Կանայանի, Հ.Սրվանձտյանի և Ա.Գյուլխանդանյանի մասին է:

** Մեծ Բրիտանիա:

3* Լոնդոնում հրատարակվող թերթը:

4* Ստեփանակերտ:

ինձ հայտնեցին, թե հակառակ լորդի հայտարարության, Հայաստան զենք ղրկելու պատրաստությունները շարունակվում են անընդհատ և չպիտի դադարեն:

6) Ամենից մխիթարականը լորդ [Ջ.] Քերզոնի հայտարարության մեջ վերաբերվում է մեր կովկասյան սահմաններին: Լորդի ասելով, թուրքական դաշնագիրը ստորագրելուց հետո, մի քանի հանձնաժողովներ պիտի գնան Կովկաս՝ տեղում կարգադրելու համար մեր սահմանավեճերը, այս առթիվ արբիտրաժն իսկ նա գտավ անընդունելի: Եվ, որովհետև թուրքական դաշնագրի ստորագրությունը հազիվ շաբաթների խնդիր է, եթե նոր անակնկալներ տեղի չունենան, հետևապես մեր սահմանների կարգադրությունը Կովկասում շատ հեռու չէ: Լորդ [Ջ.] Քերզոնի այս հայտարարությունը մեզ համար նորություն է և մխիթարական:

Սակայն եթե մինչև այդ ստիպված լինինք նորից խոսել վրացիների հետ, ինչ որ հնարավոր է, խնդրում եմ նկատողության առնեք որ առաջին. որ [Ն.] Չխեիձե[24] և [Ձ.] Ավալով[25] փաշայի*, Օհաննես Խանի[26] և ինձ հետ ունեցած մի քանի ժողովներից հետո մերժեցին մեր առաջարկը՝ սահմանավեճերը Կովկասից այստեղ փոխադրել: Նույն և [Ա.] Թոփչիբաշևը[27]: 2) Ձեր փետրվար 6-ի նամակից տեսնում եմ, որ դուք տրամադիր եք զիջել Ախալքալաքը, բայց չհասկացա վրացիների ո՞ր զիջողության փոխարեն: Գիտե՞ք արդյոք, որ վրացիք պահանջում են Արդահան և Օլթի և առհասարակ Ճորոխի շրջանը, որը կարող է մեզ ծով դուրս գալու տեսակետից շատ դժվար կացության մեջ դնել, ահա, թե ինչու, եթե դուք տրամադիր եք զիջել Ախալքալաքը, ապա այդ պետք է անել այն պայմանով, որ վրացիք ընդունեն մեր հայեցակետը ոչ միայն Լոռու շրջանի վերաբերյալ, այլև Արդահանի, Օլթիի և առհասարակ Ճորոխի շրջանի վրա: Ինչ վերաբերվում է Լոռիին, մենք գտնում ենք, որ չի կարելի նրանց զիջել հանքային շրջանը և, առհասարակ, նրանց պետք չէ շատ ներս թողնել մեր լեռնավայրը[28]:

Այստեղ սահմանների ճշտումի ֆորմուլան** միայն պիտի կիրառվի, չմոռանաք խնդրում եմ, որ վրացական պահանջները հիմնովին անիրավ են: Եթե վրացիք Ձեր պահանջները չընդունին, լավագոյն է ձգձգել բանակցությունները, բարի հարաբերություններ պահպանել մինչև Գերագույն խորհուրդը[29] ղրկի հանձնաժողովներ[30]:

Հայտնում եմ, որ [Ջ.] Քերզոնի հետ զրույցից հետո մեր նախընթաց ենթադրություններն և առնելիք քայլերի որոշումները սահմանների վերաբերմամբ այլևս հետամտելու չենք և Սան Ռեմոյում պիտի պնդենք Կովկաս հանձնաժողովներ ղրկելու վրա, որ կարծում ենք (փաշան3* և ես), լավագույն ելքն է այս կնճռոտ հարցի համար:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության
նախագահ Ա.Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 110-114: Բնագիր: Մեքենագիր:

N 3
ՀՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա.ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՏԻՍՅԱՆԻՆ՝ ՍԱՆ ՌԵՄՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ[31] ՄԱՍԻՆ

27 ապրիլի 1920թ.
Սան Ռեմո

«Բրիտանական արտաքին գործոց նախարար լորդ [Ջ.] Քերզոնի մի շատ կարևոր նամակի պատճենը հաճույքով եմ ներկայացնում Ձեր ուշադրությանը: Կարծում եմ, որ սրանով վերջապես լուծվում է մեզ զենք և ռազմամթերք հայթայ-

---

* Պողոս Նուբար:

** Բանաձև:

3* Պողոս Նուբար:

թելու խնդիրը, որ ես հետապնդում եմ ահա մի տարուց ավել: Ըստ իս, այս փաստաթղթի արժեքը նաև քաղաքական տեսակետից խոշոր է: Լորդ [Ջ.] Քերզոնի հետ մեր վերջին խիստ անհաճո տեսակցությունից հետո (ապրիլ 8-ին Լոնդոնում), որի մասին վերջին սուրհանդակով այդքան ցավելով գրեցի Ձեզ, այս նամակը գալիս է ապացուցանելու անգլիական քաղաքականության մէջ հիմնական փոփոխությունը դեպի մեր կառավարությունն ու պետությունը: Առաջին անգամն է, որ մենք պաշտոնական գրության մեջ անվանվում ենք «կրտսեր դաշնակից», և այն էլ այսքան բարյացակամ ոճով: Այս փոփոխության պատճառների քննության մեջ չեմ մտնում, բայց կասեմ, որ դա նկատվում էր նաև ճորոխի հովտի և Բաթումի վերաբերյալ հարցերի մեջ այստեղ՝ Սան Ռեմոյում: Մեր կառավարության ինձ տված երկրորդ հավատարմագիրը ապրիլ 21-ը 1919 թվի հ. 1098, բարեբախտաբար ինձ արտոնում է ստորագրել այս կարգի պայմանագրեր, ուստի ես անմիջապես պատասխանեցի բրիտանական արտաքին գործոց նախարարին, թե պատրաստ եմ կատարել պետք եղած հանձնարարությունները իմ կառավարության՝ ինձ տված հավատարմագրի հիման վրա: Մեծահույս եմ, որ այս անգամ ձեռնունայն մնալու չենք և մյուս կողմից, ես կարծում եմ, թե իր այս նամակով լորդ [Ջ.] Քերզոնը միաժամանակ աշխատում է ցրել մեր վերջին տեսակցության ծանր տպավորությունը և բարյացակամության լուրջ ապացույց տալ մեզ: Այս բոլորն ի նկատի առնելով, խնդրում եմ 1) լորդ [Ջ.] Քերզոնի և իմ անցյալ ապրիլի 8-ի տեսակցության անախորժ կողմերի վրա չանդրադառնալու, բավականալ միայն ինձ նյութեր ղրկելով, հերքելու համար նրան մեղադրանքների այն կետերը, որոնք արդյունք են թյուրիմացության: 2) Ոչ մի պայմանով չթույլ տալ մանավանդ որ այդ անհաճո ինցիդենտը լրագրության նյութ դառնա և արգելեք որևէ հարձակումը բրիտանական կառավարության, կամ իր ներկայացուցչության հասցեին: 3) Անմիջապես գրավոր և բերանացի շնորհակալություն հայտնել Ջ. Ուորդրոպին, իր կառավարության այս բարյացակամության համար: 4) Պահել գաղտնիք լորդ [Ջ.] Քերզոնի այս նամակի բովանդակությունը, մանավանդ, եթե վրացիք և ադրբեջանցիք նույնը ստացած չեն:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության
նախագահ Ա.Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 115-116: Բնագիր: Մեքենագիր:

N 4

ՀՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա.ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՏԻՍՅԱՆԻՆ՝ ՍԱՆ ՌԵՄՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

27 ապրիլի 1920թ.
Սան Ռեմո

«Այսօր փակվեց Սան Ռեմոյի խաղաղության համաժողովը: Շտապում եմ հատուկ սուրհանդակով Ձեզ ուղարկել այստեղ մեր հարցի վերաբերյալ որոշումները, մասնավորապես՝ Էրզրումի շուրջն եղած մեր դիվանագիտական անակընկալ դյուրությունների նկարագիրը[32]: Միաժամանակ խնդրում եմ ոչ ավելորդ լավատեսություն ունենալ և ոչ անձնատուր լինել ծանր լրտեսության: Ճշմարտությունն այն է, որ միացյալ, անկախ և ազատ Հայաստանը այսօր կատարված հարց է, սոսկ մեր սահմանների մասին տակավին վարանումներ կան: Որոնք մեծահույս եմ վերջ կունենան մինչև մայիսի 10-ը, երբ թուրքական պատվիրակությունը կհասնի Փարիզ և երբ ստացված կլինի նաև [Վ.] Վիլսոնի[33] պատասխանը[34], որի մասին կկարդաք ներփակ և որին ամենքի հետ մենք ևս առավել սպասում ենք ծայրահեղ անհամբերությամբ, բայց ավելի ևս մեծ հույսով:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության
նախագահ Ա.Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 117: Բնագիր: Մեքենագիր:

N 5
ՀԱՅ-ՎՐԱՑ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՏԻՍՅԱՆԻՆ

27 ապրիլի 1920թ.
Սան Ռեմո

«Հայ-վրաց-թաթարական համաձայնության փորձեր:

Լոնդոնում անդրկովկասյան երեք պետությունների պատվիրակությունների մեջ սկսված բանակցությունները[35] ապրիլի 13-ին վերանորոգվեցին Փարիզում, և ապրիլ 21-ին Սան Ռեմոյում, միշտ բրիտանական արտաքին գործոց նախարար լորդ [Ջ.] Քերզոնի առաջին քարտուղար [Ռ.] Վանսիտարտի ներշնչումով ու անմիջական ղեկավարության տակ: Ես գրել եմ ձեզ արդեն Լոնդոնի բանակցությունների մասին և վերջին սուրհանդակով, կաշխատեմ այժմ հակիրճ գաղափար տալ հետագա բանակցությունների մասին նախ Փարիզում, ապա Սան Ռեմոյում: Յուրաքանչյուր պատվիրակությունից հիշյալ ժողովում ներկա էին լինում 3-4 անդամներ: Ինձ հետ ունեի միշտ գեն. [Գ.] Ղորղանյան[36], Պողոս փաշա[37]: [Գ.] Նորատունկյան[38] Սան Ռեմոյում, նաև [Մ.] Վարանդյան[39], որին հրավիրեցի Հռոմից: Վրացիների կողմից [Ն.] Չխեիձե, [Զ.] Ավալով, [Ի.] Գոբեչիա[40], [Կ.] Գվարջալաձե[41], թաթարների կողմից [Ա.] Թոփչիբաշև, Լեյխուլ Իսլամով[42] և էլի երկու խորհրդականներ: Դեռ Լոնդոնում բրիտանական արտաքին գործերի նախարարության, ինչպես և խաղաղության համաժողովի շրջաններից, մեզ խորհուրդ էր տրվում փորձել համաձայնության գալ մեր երկու հարևանների հետ մեր հյուսիսային ու արևելյան սահմանների մասին: Քանի որ համաժողովը առայժմ որոշելու է մեր սահմանները մի-միայն Թուրքիայի հետ, մենք ընդառաջ գնացինք այդ ցանկության: Նյութը կրկնակի էր.

ա) երեք պետությունների սահմանավեճերի կարգադրություն:

բ) Հայաստանի և Ադրբեջանին Բաթումից տնտեսական ելք տալու խնդիրը այն դիպվածում, թե Բաթումն ու իր շրջանը Վրաստանին միանան Գերագոյն խորհրդի որոշումով: Փարիզում ապրիլի 13-ին վերսկսված հենց առաջին ժողովում պարզվեց, որ երեք պետությունները զանազան ժամանակ կնքված համաձայնություն ունին սահմանավեճերը լուծել բանակցությունների խաղաղ ճամբով և, ձախողելու դեպքում, դիմել միջնորդ դատարանի, պարզվեց նաև, որ այս համաձայնության ժամանակից ի վեր կատարված փորձերը ցանկալի արդյունք չեն տվել և մյուս կողմից՝ համաձայնությանց մեջ նախատեսված չեն ոչ բանակցությունների ժամանակը, և ոչ միջնորդ դատարանի, ուստի որոշվեց հիմք ընդունել երեք կառավարությունների մեջ կայացած համաձայնությունը՝ այստեղ միջոցներ խորհել փութացնելու սահմանավեճերի լուծումը և այստեղի որոշումները հաղորդել և՛ Գերագույն խորհրդին, և՛ երեք կառավարություններին միաժամանակ, որպես արտահայտություն խաղաղության համաժողովի և երեք պատվիրակությունների ներդաշնակ հայեցակետերի: Խորհրդակցությունների սկզբում, սակայն, պարզվեց, որ մինչդեռ մենք աշխատում ենք այնպիսի պայմաններ դնել, որոնք կարող են փութացնել տրված խնդիրների իրական լուծումը, վրացիք և թաթարները ընդհակառակը՝ հետամտում էին ձգձգումի մեթոդը: Եվ վիճաբանությունները իրոք երեք օր շարունակ ճշտումների տարբերության շուրջն էին դառնում, մինչդեռ մենք հավատ չունենալով, թե բանակցություններով Կովկասում կարելի է եզրակացության գալ, աշխատում էինք շուտով դիմել միջնորդ դատարանին: Մեր երկու հարևանների պատվիրակները, դրան հակառակ, աշխատում էին որքան կարելի է երկարացնել բանակցությունների շրջանը և նույնիսկ միջնորդ դատարանի կազմությանը դնել այնպիսի պայմանների մեջ, որ նա ամիսներ ու տարիներ տևի: Երեքօրյա վեճերից հետո կարելի եղավ մի համաձայնության հանգել սահմանավեճերի մասին, որի գլխավոր կետերն են

1) Վեց շաբաթվա ընթացքում փորձել բանակցությունների միջոցով համաձայնության գալ: 2) Հակառակ դեպքում դիմել արբիտրաժի՝ երեք անդամից բաղկացած, որի մի-մի անդամը նշանակում են երկու կողմերը, իսկ նախագահը նշա-

նակում են փոխադարձ համաձայնությամբ, եթե չկարողացան այդ ընտրությունը անել, դիմում են կամ դաշնակից պետությունների Գերագույն խորհրդին, կամ Ազգերի լիգային[43], կամ որևէ չեզոք պետության անվանելու միջնորդ դատարանի նախագահին: Այս համաձայնության մանրամասները կցված են այս զեկույցին: Այս համաձայնության մանրամասները տեսնել Annexe A.* պատճենը կցված այս զեկույցին:

Սույն համաձայնագիրը կայացավ ապրիլ 16-ին՝ Փարիզում: Այնուհետև ժողովը անցավ Բաթումի խնդրին: [Ռ.] Վանսիտարտը[44] հայտարարեց, թե Բաթումի պրոբլեմի համար Գերագույն խորհուրդն իր որոշումն ունի, սակայն գերադասելի է, որ դուք համաձայնության գաք իրար մեջ: Սա մեծապես կհեշտացնի գործը և վստահություն կներշնչի դեպի ձեր պետական կարողությունը: Վրացիք հայտարարեցին, թե իրենք պահանջելու են, որ Բաթումն ու իր շրջանը կցվի Վրաստանին, թե հայերն ու թաթարները վրացոց այս պահանջը պաշտպանեն, նրանք պատրաստ են իրենց կողմից ապահովել երկու հարևաններին տնտեսական ելք դեպի Սև ծովը՝ Բաթումով, տալով դրա համար բոլոր անհրաժեշտ երաշխիքները: Այս ֆորմուլաները, իրենց անորոշությամբ, մեզ թվաց անբավարար. մենք պահանջեցինք պարզել երաշխիքների բնույթը: Նրանք առաջարկեցին մեզ ներկայացնել մեր պահանջները գրավոր: Մենք պահանջեցինք 1) Բաթումը դարձնել անջատ և ֆրանկ նավահանգիստ** (port libre et franc): 2) Մեզ Բաթումում հատկացնել առանձին նավահանգիստ կամ ավելի ճիշտ քարափ3* (quai): 3) Ճորոխի ձախ ափը միացնել Հայաստանին, որպեսզի այդտեղից մեր երկաթուղագիծը անցնի: 4) Ճորոխի գետաբերանից մինչև Բաթում վրացական հողի միջից էքստերիտորյալ (servitude) իրավունքով4* թույլ տալ անցկացնել մեր գիծը:

Վրացիք մերժեցին մեր պահանջները, մենք էլ մերժեցինք ճանաչել նրանց souveraineté-ն իրավունքը5* Բաթումի ու շրջանի վրա: [Ռ.] Վանսիտարտը ցավ հայտնեց, որ համաձայնություն չի կայացել և ավելացրեց, որ Հայաստանն իր երկաթուղային գիծը պիտի ունենա և' դեպի Բաթում և դեպի Աթինա և Ռիզե, և թե սա Գերագույն խորհուրդի անդառնալի վճիռն է, հետևապես հրավիրեց բանակցությունները վերսկսել Սան Ռեմոյում:

Այստեղ, Սան Ռեմոյում ապրիլի 21-ին սկսված բանակցությունների շրջանում ի վերուստ ներշնչումով մենք մեզ բռնադատված տեսանք հրաժարվել Ճորոխի ձախ ափին հողային պահանջից և բավականանալ մի-միայն տնտեսական ելքով, պայմանով, որ հողային սուվերենիտետը6* Վրաստանին մնա, բայց երկաթուղային գիծը իր բոլոր շինություններով դառնա Հայաստանի անձեռնամխելի սեփականություն և երկրորդ՝ մենք իրավունք ունենանք Ճորոխի գետաբերանից մի փոքրիկ ճյուղ տենալ դեպի նախկին ռուս-թուրքական սահմանը, հայկական Լազիստանին[45] միանալու համար: Այս առաջարկը հայտարարեցինք մեր մինիմումը, հակառակ դեպքում, ասացինք, վերստին կպահանջենք Ճորոխի հովիտը՝ որպես հողային սեփականություն և այս մտքով կդիմենք Գերագույն խորհրդին: Վրացիք մերժեցին և այս, և իրենց կողմից առաջարկեցին մեր ծախքով շինվելիք երկաթուղային գծի վրա վրաց-հայ-թաթարական condominium-ի7* պես մի բան, ինչ որ մենք վճռապես մերժեցինք: Նույն օրը [Ռ.] Վանսիտարտը բոլորին ժողովի հրավիրեց և հայտարարեց հետևյալը. լորդ [Ջ.] Քերզոնի, և կարող եմ ասել՝ համաժողովի կողմից, ես ձեզ հայտարարում եմ, որ հայերը իրենց զիջողությունը հասցրել են ծայրահեղ մինիմումի. ավելի հեռուն գնալ չեն կարող՝ երկաթուղային գիծը պիտի նրանց պատկանի en tout propriété - լիակատար սեփականությամբ, և

---

* Առդիր Ա: Գործում բացակայում է:

** Սաքսից ազատ նավահանգիստ:

3* Նավամատույց:

4* Արտերկրայնության իրավունք:

5* Ինքնիշխանություն:

6* Գերիշխանություն:

7* Համատիրություն:

երկրորդ. նրանք պիտի իրավունք ունենան նոր գիծ տանել ճորոխի գետաբերանից դեպի Աթինա և Ռիզե՝ իրենց սեփական նավահանգիստները: Եթե դուք՝ վրացիքդ, չընդունեք այս, այն ժամանակ Գերագույն խորհուրդը կվճռի առանց ձեզ, ու վստահ եղեք, որ դուք կստանաք Բաթումի շրջանի հազիվ մեկ երրորդը, իսկ հայերը կունենան իրենց երկաթուղային գիծը դարձյալ Բաթումի շրջանից, բայց սեփական հողով: Ես ձեզ ասում եմ, որ դուք վրացիներդ չեք ըմբռնում այս քաղաքական մոմենտի լրջությունը և շատ կտուժեք այս խնդրում: Այս հայտարարությունը անելեն վերջը, նա դուրս գնաց: Վրացիք առաջարկեցին վերջին անգամ հավաքվել հաջորդ օրը: Մինչև այդ պարզվեց, սակայն, որ վրացիք ու թաթարները միաբան զեկույց են ներկայացրել Գերագույն խորհրդին, աղավաղելով փաստերը և մեղադրելով մեզ.[46] (տեսնել Annexe B)[*], այս գաղտնի զեկույցը մենք ձեռք բերինք, իմացանք նաև, որ իրազեկ շրջաններում, [Ռ.] Վանսիտարտից տեղեկանալով ճշմարտությունը, շատ դժգոհ են վրացիների ընթացքից: Հավաքվել ենք վերջին անգամ ապրիլի 25-ին[47]: Այս անգամ վրացիք եկան մի բոլորովին նոր առաջարկությամբ, որ ձևակերպեց [Ն.] Չխեիձեն և հետո [Ի.] Գոբեչիա ընդարձակ կերպով ճառելով, որ ես պետք եմ համարում մեջ բերել որպես չափազանց խրատական: Նրանք հայտնեցին հետևյալը.

1) Պարոններ վրացիք մի դեմոկրատ ժողովուրդն էին, և ունեն իրենց պառլամենտը, կառավարությունը և հասարակական կարծիքը. իրենք չեն կարող առանց այդ կառավարության ու պառլամենտի որևէ քայլ առնել այստեղ, վրացական թեկուզ մի քիչ հողը զիջել: Բաթումի շրջանին մեր պառլամենտը, ասաց [Ի.] Գոբեչիա, տալու էր լայն ինքնավարություն և արդեն այնտեղ մեջլիս կա՝ ինչպե՞ս կարող ենք զիջել ժողովուրդի հողը առանց իրեն հարցնելու: Եվ վերջապես դուք պահանջում եք Լազիստանը, հարցրե՞լ եք լազերի կարծիքը, ի՞նչ իրավունքով դուք պիտի կցեք Հայաստանին այդ հողամասը առանց տեղական ժողովուրդի ցանկությունը հարցնելու: Նրանք խնդիրներ են, ավելացրեց [Ն.] Չխեիձեն, որ կարող են լուծել միայն տեղում, հետևապես մենք առաջարկում ենք այստեղից մի-մի մարդ ղրկել Երևան ու Թիֆլիս, որոնք կբացատրեն իրերի դրությունը և կհրավիրեն երկու կառավարությունները խոսիլ իրար մեջ անմիջական բանակցություններով: Սա մի մասնավոր խնդիրը թողելու ամբողջ մի ամիս բանակցելուց հետո, վրացիք խույս էին տալիս, ես պատասխանեցի.

- Պարոններ, ես հաճույքով լսեցի ձեր հայտարարությունն այն մասին, թե չի կարելի մի հողամաս պահանջել՝ առանց տեղական ժողովրդի կամքն առնելու. բայց ներեցեք ձեզ հարցնել, առե՞լ եք դուք Լոռիի, Բորչալուի, Ախալքալաքի հայ ազգաբնակչության կամքը. երբ պահանջում եք այդ շրջանները. ո՛չ, դուք չեք առել, բայց գծագրել էք քարտեզի վրա և դրել Գերագույն խորհրդի առաջ, պահանջելով այդ հողամասերը և եթե վաղը Գերագույն խորհուրդը ձեր ցանկությունը կատարի և ձեզ հանձնի հիշածս վայրերի հայ ժողովրդի բաղդը, դուք հաճույքով մոռացության կտաք բոլոր ձեր դեմոկրատիկ սկզբունքները և կընդունեք. այդ ինչպե՞ս է, որ երբ խնդիրը գալիս է ձեր զիջումներին, իսկույն մէջ տեղ եք նետում և դեմոկրատիան, և ժողովուրդի կամքը, և ինքնորոշումն: Ո՛չ պարոններ, լինենք հետևողական և արդար. կամ բոլոր դեպքերում մնանք դեմոկրատիկ սկզբունքների վրա, կամ թույլ տանք մեր հարևաններն էլ նույնն անեն: Դուք մեզանից հող եք պահանջում՝ բնակեցրած հայ ժողովրդով, պարզապես որպես տերիտորիա, դուք գիտեք սակայն, որ մեր պահանջը, ցանկությունը ճորոխի հովտում հողային հարստություն ձեռք բերելը չէ, մեր պետության ընդարձակելը չէ, այլ պարզապես ելք ունենալու համար դեպի ծով, առանց որի մեր պետությունն անհնարին է: Ոչ, մեր և ձեր հողային պահանջների մեջ ոչ մի նմանություն չկա. դուք համաձայն չե՞ք, դուք կուզեք որ մենք շարունակենք խեղդվել մեր լեռներում առանց ելքի, դա ձեր կամքն է, բայց մենք էլ խեղդվել չենք ուզում: Մնում է, որ Գերագույն խորհուրդը լուծի Բաթումի և շրջանի խնդիրը:

Այնուհետև առաջարկեցինք գեթ ստորագրել Փարիզ կայացած համաձայ-

---

[*] Առդիր Բ: Բացակայում է արխիվային գործում:

նության գիրը սահմանների մասին. նրանք պատասխանեցին, թե առանց Բաթումի պրոբլեմը լուծելու չեն կարող ստորագրել այդ համաձայնագիրը: Եվ բաժանվեցինք մի անսվա անպտուղ բանակցություններից հետո: Նույն օրը ևեթ մենք զեկույց տվինք Գերագույն խորհրդին (տես. Annexe C)*, որը կցված է այս նամակին և որի վրա հրավիրվում է մեր կառավարության լուրջ ուշադրությունը:

Ինչպես կտեսնեք մեր Annexe C հուշագրից, մենք պահանջել ենք և պահանջելու ենք այսուհետև, որ Ճորոխի հովտում մեզ տերրիտորիալ ելք արվի դեպի Սև ծով՝ Բաթում: Մենք այս պահանջը ներկայացրեցինք Գերագույն խորհրդին նախ որովհետև վերջնականապես համոզվեցինք, որ վրացիք իրենց հատուկ իրավական ըմբռնումներով պիտի ամեն կերպով աշխատեն խափանել մեր դեպի ծով ելքը հազար ու մի պաշտոնական և մասնավոր անիրավություններով, և երկրորդ, այն պատճառով, որ մենք համոզումն գոյացրինք, որ Գերագույն խորհուրդը այսպիսի լուծումը - այսինքն Ճորոխի հովտով մեզ հողային ելք հատկացնելը որպես մեր սեփականություն դեպի Սև ծովը - համարում է և ընդունելի, և արդար: Չեմ կարող բացարձակապես պնդել, թե այդպիսի որոշումն կայացած է, բայց կարող եմ ասել, որ Գերագույն խորհրդին շատ մոտ կանգնած պաշտոնական մի անձն եկավ մեզ հաղորդելու երեկ, թե Հայաստանին կցվելու է ոչ միայն Լազիստանը Աթինե - Ռիզեով, այլև Ճորոխի հովիտը, որպեսզի հայ պետությունն իր իսկական ելքն ունենա դեպի ծովը իր սեփական հողի միջով: Եթե ճշմարիտ է այս հայտնությունը, գիտեմ, վրացիք ուժգնորեն պիտի բողոքեն. սակայն ես կարծում եմ, հնարավոր է, այնուամենայնիվ, նրանց հետ մի կոմպրոմիսի** հանգել, օրինակ նրանց ձգելով Ախալքալաքն ու Լոռու-Բորչալու շրջանից մեր մասը, բայց միշտ առանց հանքերի: Մեր սխալն այս խնդրում միշտ այն է եղել, որ մենք նրանց հողային պահանջների հանդեպ հողային պահանջ չենք հանել և բավականացել ենք միայն պաշտպանվելով: Ըստ իս, հրաշալի առիթ է փոխել այս մեթոդը իրական արդյունքով: Այսպես թե այնպես, թուրքական դաշնագրի հետ կսահմանվի և մեր հողային իրավունքները Ճորոքի հովտում: Գեթ այսպես հայտարարեց նույն [Ռ.] Վանսիտարտը երեք պատվիրակությունների ժողովի մեջ, ինչ որ շատ ծանր եկավ մեր հարևաններին:

Ես կարողացա ձեռք բերել թուրքական ընդհանուր դաշնագրից[48] մեր սահմաններին վերաբերող մասը, որի պատճենը ղրկում եմ ներփակ (Annexe D)3*: Թեև այստեղ ընդհանուր սկզբունքներին գրված (սա կազմված է Սան Ռեմոյի համաժողովից առաջ), բայց և այնպես կարելի է գաղափար կազմել մեր մոտավոր ապագայի մասին. նկատեցեք, որ հինգերորդ կետը հակիրճ կերպով ասում է "La mer Noire," այսինքն մեր սահմանն է լինելու Սև ծովը: Հետևապես Լազիստանը:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության
նախագահ Ա.Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 117-132 և 133 հակ. - 137: Բնագիր: Մեքենագիր, ձեռագիր լրացումներով:

Ծանոթագրություններ

1. Նավահանգիստ հարավային Իտալիայում, հոնիական ծովափում:
2. Տիգրան Չալյան - Լոնդոնի կոնֆերանսում հայկական պատվիրակության անդամ, 1920թ. փետրվարի 25-ին, Պողոս Նուբարի և Կ.Պոլսի հայոց պատրիարք Զավենի հետ միասին մասնակցել է Ջ. Բրայսի հետ հանդիպմանը:
3. Ռուսական կայսրության ամբողջականությունը վերականգնելու Ա.Կոլչակի և Ա.Դենիկինի ձգտում:

---

* Առդիր Գ: Գործում բացակայում է:

** Փոխզիջում:

3* Առդիր Դ: Գործում բացակայում է:

4. Լեհաստանը խորհրդային Ռուսաստանի հետ բանակցություններ էր վարում, հիմք ընդունելով իր անկախությունը պահպանելու սկզբունքը:

5. Արևելյան խնդիր, որպես Օսմանյան կայսրության ապագան որոշելու և Պարսկաստանի հետ քաղաքական ու տնտեսական հարաբերությունները հստակեցնելու գործընթաց:

6. Ռուսական կայսրության սահմաններում ձևավորված Անդրկովկասի և բալթյան նորանկախ պետություններ:

7. Ա.Ահարոնյանը կարող էր նկատի ունենալ Սահմանադրական ժողովի, դաշնակցային պետության և ազատախոհ-բուրժուական զարգացման կողմնակիցներին:

8. Տվյալ դեպքում Ա.Ահարոնյանը կրկնում է Պողոս Նուբարի այն մոտեցումը, որ արևմտյան տերությունները ստեղծելու են ընդարձակ պետություն, որին միանալու է ավելի փոքր Հայաստանի Հանրապետությունը:

9. Փաստաթղթի մեկնաբանությունը տես. Hovannisian R., The Republic of Armenia, vol. III: From London to Sèvres, February-August, 1920. Berkeley & Los Angeles, University of California Press, 1996, p. 129-130:

10. Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար:

11. Որպես Հայաստանի սպասվելիք հաջողությունների հակակշիռ ու զսպող միջոց, հիմք ընդունելով Ջ.Ուորդրոպի զեկուցագիրը, ապրիլի 8-ին Ջ.Քերզոնը սպառնաց, որ Մեծ Բրիտանիան չի կատարի Խաղաղության վեհաժողովի որոշումն ու ՀՀ-ին զենք չի տրամադրի, եթե այն ուղղելու են Ադրբեջանի դեմ: Այդ ամենը ասվում էր 1920թ. մարտի 23-ին իրականացրած Շուշիի կոտորածից անմիջապես հետո, Ղարաբաղի և Զանգեզուրի վրա լայնատարած հարձակման պայմաններում: Խոսակցության պահին՝ ապրիլի 9-ի դրությամբ, Ադրբեջանի կանոնավոր բանակը հրկիզում էր հայկական Մարաղա, Մարգուշավան, Նորագյուղ, Խրամորթ, Քյաթուկ, Խնածախ, Շոշ, Դաշուշեն, Կրկժան, Պահլուլ, Ջամիլլի, Ղայբալիշեն գյուղերը: Վերջին չորսի վրա սա երկրորդ մեծ հարձակումն էր՝ 1919թ. հունիսի 4-7-ի ավերից հետո: Մարաղան հայտնի էր նաև 1992թ. ապրիլի 10-ի ու 22-23-ի՝ նրա վրա կատարված գրոհներով: Եվ առաջին օրվա 57 տանջամահ արած գյուղացիներից սպանվել էին Ղերսալյա Հովսեփյանն և Օլգա Պապիկյանը, որոնք 1920 թվականին 15 տարեկան էին, ու Անուշ Իսյասյանը՝ այն ժամանակ 17 տարեկան:

Ավելի մանրամասն տես Ահարոնյան Ա., «Սարդարապատից մինչև Սեվր և Լոզան», Եր., ԵՊՀ, 2001, էջ 77-83; Hovannisian R., Op. cit., p. 157-158; Махмурян Г.Г., «Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг. Бремя белого человека», Ер., Лусакн, 2002, с. 200; она же, «Дипломатия Республики Армения в январе-апреле 1920 г.», «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2007, հ. 2, էջ 94-95; она же, «Великобритания и Республика Армения 1918-1920гг. Опыт имперской Восточной политики в Закавказье и на Парижской мирной конференции», «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու, Եր., Աստղիկ, 2009, գիրք 1 (38), էջ 155-156:

12. Բրիտանիայի գլխավոր կոմիսարը Անդրկովկասում: 1920թ. մարտի 4-ին Ֆորին օֆիս է բողոքել, որ ՀՀ կառավարությունը չի կարող ղեկավարել մահմեդական բնակչությանը:

13. Այն պահին Դ.Կանայանը Զանգեզուրում ՀՀ զինվորական ստորաբաժանումների հրամանատար էր, ապրիլի 13-ից՝ Ղարաբաղի՝ ՀՀ ռազմական վարչության ղեկավարը:

14. Այն պահին Հ.Սրվանձտյանը եղել է Նոր Բայազետի շրջանի զորամասերի հրամանատար:

15. Անգլիայի արտգործնախարարությունում Ջ.Ուորդրոպի մարտի 4-ի զեկուցագիրը մշակել է Է.Մաք-Դոնելլը, ով մինչև այդ՝ որպես փոխ-հյուպատոս տաս տարի պաշտոնավարել էր Բաքվում: Վերջինը ինքնուրույն ավելացրել է Դ.Կանայանի, Ա.Գյուլխանդանյանի և Հ.Սրվանձտյանի անունները ու փաստաթուղթը փոխանցել է Ջ.Քերզոնին: Ի դեպ, բրիտանացին սկսել էր դժգոհել

Զ.Ուորդրոպի գրածը ստանալուց էլ շուտ՝ փետրվարի 28-ից ի վեր: Տես. Hovannisian R., Op. cit., p. 125-126:

16. Ա.Սհարոնյանը շատ հակիրճ նկարագրում է անցյալը, իմանալով, որ հասցեատերը լավատեղյակ է իրադարձություններից: 1918թ. դեկտեմբերին - 1919թ. մարտի 22-ին Ա.Օզանյանն ու նրա զորամասը մնում էին Զանգեզուրում, երաշխավորելով, որ ադրբեջանցի քոչվորները չեն զավթի երկրամասը: Այդ ուժի հեռանալուց հետո, Զանգեզուրը երբեք էլ չի ենթարկվել Ադրբեջանին: Միայն Ղարաբաղի վիճակը, ուր Ա.Օզանյանի զորամասը շարժվում էր օգնության, բայց 1918թ. դեկտեմբերին կանգնեցվել էր բրիտանական հրամանատարության պնդմամբ, շատ ավելի ծանր է եղել: Այստեղ, 1919թ. օգոստոսին, բրիտանացիներին հաջողվել էր հայտարարել Ադրբեջանին ենթակա ժամանակավոր գեներալ-նահանգապետություն:

17. Խոսրով-բեկ Սուլթանովը 1918թ. ամռանը եղել է թուրք գեներալ Նուրի փաշայի օգնական ու ջարդարար: 1919թ. հունվարի 15-ին հայտարարվել է Ղարաբաղ-Զանգեզուրի ժամանակավոր գեներալ-նահանգապետ, նույն թվականի օգոստոսի 22-ին՝ հաստատվել է այդ պաշտոնում Ղարաբաղում, բայց Զանգեզուրում երբեք հաջողության չի հասել:

18. Ֆաթալի Խան-Խոյսկի - Ադրբեջանի արտաքին գործերի նախարար:

19. Բեհբուտ խան Ջիվանշիր - Ադրբեջանի ներքին գործերի նախարար: 1918թ. մայիս - սեպտեմբերին սերտորեն համագործակցել է թուրքական բանակի հետ, հանդիսանալով Նուխիի, Արեշի, Շամախայի, Գյոկչայի հայերի ջարդերի կազմակերպիչ:

20. Խալիլ փաշա Քութ - օսմանյան բանակի գեներալ, էնվերի հորեղբայր, «Մեծ Թուրանի» ջատագով: 1918թ. եղել է թուրքական 6-րդ բանակի հրամանատար, նույն թվականի մայիսի 15-ին նրա զորամիավորումները զավթել են Ալեքսանդրապոլը, իսկ սեպտեմբերին՝ Բաքուն: 1920թ. մարտի 23-ին նա, Նուրի փաշան ու Ա.Շիխլինսկու զորամիավորումները այրեցին Շուշին և կոտորեցին հայ բնակչության մեծ մասին: Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 238 հակ.; Հայկական հարց, Հանրագիտարան, Եր., Հայկական հանրագիտարան, 1996, էջ 164:

21. Նուրի փաշա Ջելալ - օսմանյան բանակի գեներալ, էնվերի եղբայր, երիտթուրքերի պարագլուխ: 1918թ. իսլամական բանակի հրամանատար, սեպտեմբերին ներխուժեց Բաքու, այնուհետև՝ Շուշի, ուր վերադարձել է 1920թ. փետրվարի 8-ին, ինչպես նաև՝ մարտին: Տես. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 146, 236 հակ., 237 հակ.; «Times», Lnd., 19.03.1920:

22. Գողթանում կոտորածները սկսվել են 1919թ. դեկտեմբերի 25-ին, երբ ավերվել էին Վերին ու Ներքին Ագուլիսը: 1920թ. հունվարի 3-ին, 6-ին ու 16-ին հարձակումը ուղղվել է երկրամասի հայկական գուղերի դեմ: Մարտի 20-ից ի վեր, այն ընդունել էր լայնածավալ բնույթ, որը գլխավորում էին թուրքեր էդիֆ բեյն ու Խալիլը: Հունվարի 24-ին ՀՀ կառավարությունը բողոքել էր Զ.Ուորդրոպին, փետրվարի 20-ին վերջինս հեռագիր է հղել Թիֆլիս՝ Գերագույն կոմիսար Վ.Հասկելին, և Փարիզ՝ Ա.Սհարոնյանին: Փետրվարի 25-ին Վ.Հասկելը ստացել էր երկրորդ հեռագիրը, իսկ ապրիլի 22-ին «Ղարաբաղ ու Զանգեզուր» տեղեկանքը ուղղվել էր ԱՄՆ-ի հյուպատոս Չ.Մոզերին: Ավելի մանրամասն տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 249, թ. 18; գ. 427, թ. 68 հակ., 236 հակ., 238; ֆ. 276, ց. 1, գ. 183, թ. 29; «Նախիջևան-Շարուրը 1918-1920թթ.: Փաստաթղթեր և նյութեր», խմբ. Վ.Ղազախեցյան: «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1993, N 1-2, էջ 184-186, 196, 204:

23. Բրիտանական զորքի վերադարձը անհավանական էր, իտալական ստորաբաժանումներին ժամանել թույլ չեն տվել, ֆրանսիացիներն ու ամերիկացիները նախաձեռնություն չէին ցուցաբերում:

24. Նիկոլայ Չխեիձե - Վրաստանի պատվիրակության նախագահը Փարիզում:

25. Զուրաբ Ավալով - Փարիզի վեհաժողովում Վրաստանի պատվիրակության իրավական հարցերով խորհրդական :

26. Հովհաննես խան Մասեհյան - Հայ ազգային պատվիրակության անդամ, այնուհետև՝ ՀՀ դեսպանորդ Անգլիայում:
27. Ալի Մարդան Թոփչիբաշև - Փարիզի հաշտության կոնֆերանսում Ադրբեջանի պատվիրակության նախագահ:
28. 1920թ. ապրիլի դրությամբ, հստակեցված չէին Անդրկովկասի երկրների սահմանները: Հայ-վրացական հարաբերություններում վիճելի էին մնում Ախալքալաքի, Լոռու, Արդահան քաղաքի և նույն շրջանի հյուսիսային մասի պատկանելության հարցերը: Վրաստանը պնդում էր Ախալքալաքը ընդգրկել իր սահմաններում, որի փոխարեն ճանաչում էր Լոռին՝ որպես Հայաստանի տարածք: Երբ Լոնդոնի կոնֆերանսը առաջարկել էր ՀՀ-ին հատկացնել Ճորոխի հովիտը և Հայաստանի մաս ճանաչել ոչ միայն Արդահանն, այլև՝ Կարս-Արդահան-Արդվին ամբողջ երթուղին, այդ ժամանակ՝ փետրվարի 22-ին ու 25-ին Ն.Ջխեիձեն և Զ.Ավալովը մեծացրեցին իրենց նկրտումները Կարսի մարզում՝ հասցնելով ընդհուպ մինչև Օլթի: Գնահատելով իրավիճակը, Ս.Մամիկոնյանն և Ա.Խատիսյանը՝ որպես լուծում, առաջարկում էին միջազգային իրավարարություն կիրառել: Նույն մոտեցումը ուներ նաև Լոնդոնի կոնֆերանսը, որտեղ, փետրվարի 25-ին, Հայաստանի սահմանների որոշման միջազգային հանձնաժողովը առաջարկեց ճշգրտել անդրկովկասյան երկրների սահմանները ու անմիջապես ժամանել վիճելի շրջաններ:
Նույն թվականի մարտի 18-ին Լոնդոն է ժամանել Երևանի եպիսկոպոս Խորեն Մուրադբեկյանը, ով Ա.Ահարոնյանին է բերել Ա.Խատիսյանի նամակը: Հաջորդ օրը, ՀՀ պատվիրակությունը իր նախագահի հետ միասին որոշել է հետամուտ լինել Եվրոպայի իրավարարական միջամտությանը: Մարտի 24-ին Ռ.Վանսիտարտը նորից հաստատեց կոնֆերանսի՝ երեք հանրապետությունների սահմաններով հետաքրքրված լինելու փաստը և ամսի 28-ին Ա.Ահարոնյանը մի շարք հանդիպումներ է ունեցել Վրաստանի պատվիրակների հետ: Նրա ընկալմամբ, երկու պատվիրակություններին էլ հարկավոր էր ստանալ իրենց կառավարությունների լիազորությունները, որպեսզի նրանք, Լոնդոնում կամ Փարիզում, անհապաղ կարգավորեին սահմանների խնդիրը: Մարտի 30-ին վրացական կողմը պատասխանել է, որ Անդրկովկասի երեք պատվիրակությունները պետք է դիմեն իրենց կառավարություններին, որպեսզի սահմանագծման բոլոր հարցերը փոխանցվեն միջազգային իրավարարությանը: Ի վերջո, ապրիլի 8-ին, Ջ.Քերզոնի հետ ունեցած զրույցի ընթացքում, ՀՀ պատվիրակությունը անդրադառնալով վերոնշյալ խնդրին, պահանջել է իրականացնել պարտադիր միջամտություն այն դեպքերում, երբ երեք հանրապետությունները խելամիտ ժամկետում չհասնեն փոխհամաձայնության: Անգլիայի ԱԳՆ ղեկավարը պատասխանել է, որ Թուրքիայի հետ ապագա պայմանագրում նախատեսվում է հիմնել այդպիսի՝ Անդրկովկասի սահմանային վիճելի հարցերով զբաղվող հանձնաժողով, թեև Դաշնակիցները չեն զբաղվի իրավարարությամբ, մինչև չստորագրվի բուն պայմանագիրը:
Ելնելով Ա.Ահարոնյանի՝ Ա.Խատիսյանին հղած մարտի 23-ի և ապրիլի 12-ի նամակներից, ՀՀ վարչապետը փետրվարի 6-ին հաղորդել է, որ ՀՀ կառավարությունը համաձայն է զիջումներ անել Ախալքալաքի հարցում: Ինչպես տեսնում ենք, Ա.Ահարոնյանը դրան համաձայն չէր: Կարելի է լրացնել, որ, զուգահեռաբար, այդ նույն խնդիրները քննարկվում էին Թիֆլիսում, ապրիլի 9-14-ը ընթացած՝ անդրկովկասյան 2-րդ կոնֆերանսում:
Ավելի մանրամասն տես Махмурян Г.Г., «Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920гг.», с. 188-189, 195-196; она же, «Дипломатия Республики Армения в январе-апреле 1920 г. », с. 89-90, 93-94, նաև «Ավետիս Ահարոնյանի 1920թ. մարտի 19-ի և 23-ի նամակները Լոնդոնից», «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 2009, N. 2, էջ 117-119:
29. Փարիզի վեհաժողովի վճիռներ կայացնող գերագույն մարմին, որը կազմվում էր մեծ տերությունների վարչապետներից և ԱՄՆ-ի նախագահից, կամ՝ իրենց կարգադրությամբ, արտաքին գործերի նախարարներից:
30. 1920թ. փետրվարի 12-ից ապրիլի 10-ը տեղի ունեցած Լոնդոնի կոնֆե-

րանսում ստեղծվել են Հայաստանի սահմանների որոշման և պայմանագրի ֆինանսական բաժնի պատրաստման հանձնաժողովներ (երկուսն էլ փետրվարի 17-ին), փոքրամասնությունների պաշտպանության ու նրանց իրավունքներին առնչվող պայմանագրի հոդվածների պատրաստման, ինչպես նաև ռազմական հանցագործությունների դատապարտման կոմիտեներ (երկուսը փետրվարի 21-ին):

31. 1920թ. ապրիլի 18-26-ին Իտալիայի Սան Ռեմո քաղաքում տեղի է ունեցել դաշնակիցների Գերագույն խորհրդի նիստ, որը ավարտին էր հասցրել Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը:

32. Եթե 1920թ. մարտի 25-ին Լոնդոնի կոնֆերանսը որոշել է էրզրումը ընդգրկել ՀՀ կազմում, ապա՝ ապրիլի 22-23-ին Սան Ռեմոյի կոնֆերանսը նորից ու մանրամասը քննարկել է նույն հարցը: Որպես արդյունք, ապրիլի 25-ին վերջանական որոշման իրավունքը վերապահվել է ԱՄՆ նախագահին և, ամսի 26-ին, Գերագույն խորհուրդը պաշտոնապես հայտարարել է, որ Վ.Վիլսոնին հրավիրել են կատարել անկողմնակալ իրավարարի դերը: Տես Documents on British Foreign Policy, 1919-1939. Ed. by E. L. Woodward and R. Butler, 1st series, in 27 vols., Lnd., HMSO, 1947-1986, vol. VIII, p. 218-219:

33. Վուդրո Վիլսոն - ԱՄՆ նախագահ:

34. Ապրիլի 26-ին Սան Ռեմոյից (տես ծանոթագրություն N 32) ուղղված հրավերին պետք է հետևեր ԱՄՆ նախագահի պաշտոնական պատասխանը: Մայիսի 17-ին Վ.Վիլսոնը համաձայնեց վերջնականապես մշակել էրզրումի հարցի հետ առնչվող Դաշնակիցների որոշման տեքստը:

35. Տես ծանոթագրություն N 28: Բացի սահմաններից, մանրամասն քննարկում էին Բաթումը Անդրկովկասի առևտրի համար ազատ նավահանգիստ դարձնելու հնարավորությունը:

36. Գաբրիել Ղորղանյան - գեներալ-մայոր, ՀՀ պատվիրակության ռազմական խորհրդական:

37. Պողոս Նուբար - Հայ ազգային պատվիրակության նախագահ:

38. Գաբրիել Նորատունկյան - Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախկին նախարար, այդ պահին՝ Հայ ազգային պատվիրակության անդամ:

39. Միքայել Վարանդյան - 1920թ. փետրվարի 3-ից՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Հռոմում:

40. Իոսիֆ Գոբեչիա - Վրաստանի պատվիրակության անդամ Փարիզի վեհաժողովում ու Սան Ռեմոյի կոնֆերանսում:

41. Կոնստանդին Գվարջալաձե - Վրաստանի պատվիրակության անդամ Փարիզի վեհաժողովում ու Սան Ռեմոյում

42. Լեյխուլ Իսլամով - Ադրբեջանի պատվիրակության անդամ Փարիզի հաշտության կոնֆերանսում:

43. Ազգերի լիգա - ՄԱԿ-ին նախորդած կազմակերպություն, որի նպատակն էր խաղաղության պահպանումը և անդամ-երկրների պաշտպանությունը արտաքին վտանգից: Ստեղծվել է 1919թ., Փարիզի վեհաժողովի որոշմամբ: Ավելի մանրամասն տես Махмурян Г.Г., «Лига Наций, Армянский вопрос и Республика Армения», Ер., Артагерс, 1999, с. 112-115:

44. Ռոբերտ Գիլբերտ Վանսիտարտ - Անգլիայի ԱԳՆ բարձրաստիճան դիվանագետ, 1919թ., Փարիզի վեհաժողովում՝ բրիտանական պատվիրակության տեխնիկական աշխատակից: 1920թ. Լոնդոնի կոնֆերանսում հանդիսացել է Հայաստանի սահմանային հարցերի ճշգրտման հանձնաժողովի անդամ: Կողմ էր էրզրումը ու սևծովյան ափը Հայաստանին միացնելուն:

45. Նկատի ունի այն տարածքը, որը գտնվում է Թուրքիայի հյուսիս-արևելքում, 115 կմ երկարություն ունեցող Պարխարի լեռների հյուսիսային լանջերի շրջանակում: Հանդիսանում է Տրապիզոնի նահանգի գավառ, որի մեջ մտնում էին Օֆ, Ռիզե, Աթինա, Խոփա գավառակները: Իրականում, Դաշնակիցները բանակցում էին ավելի մեծ՝ Տիրեբոլուց արևելք ձգվող ծովափի մասին: Համաձայն Սևրի պայմանագրի՝ (Վ.Վիլսոնի վերջնական ձևակերպմամբ), նախատեսվում էր

այդ տարածքը միացնել հայկական պետությանը:

Լոնդոնի կոնֆերանսում՝ 1920թ. փետրվարի 21-ին, երբ Հայաստանի սահմանային հարցերի որոշման հանձնաժողովը խնդրել է Ա.Ահարոնյանին, Պողոս Նուբարին ու Գ.Ղորղանյանին տալ սահմանների ընդունելի նկարագիրը, Գ.Ղորղանյանը սահմանագծումը նույնպես կատարել է Տիրեբոլուց: Անգլիացիների փետրվարի 26-ին կազմած քարտեզով Տրապիզոնից արևելք գտնվող տարածքը պետք է հանդիսանար Բաթումի՝ ապագա չեզոք գոտու մաս: Հաջորդ օրը կոնֆերանսը քննարկել է նաև Տրապիզոնից արևելք գտնվող Լազիստանում Հայաստանին ենթակա ինքնավար պետություն ստեղծելու խնդիրը:

Ապրիլի 19-ին, Սան Ռեմոյում, քննարկել են Վ.Վիլսոնի՝ հայկական Տրապիզոնի մասին առաջարկն ու վերջինիս պատասխանել, որ այդ քաղաքից զատ, Դաշնակիցները ցանկանում են Լազիստանը ընդգրկել Հայաստանի կազմում: Եվ, ինչպես վկայում է մեր N 5 փաստաթուղթը, երկու օր հետո, Լազիստան ասելով, կոնֆերանսը հասկանում էր Ռիզեյից դեպի արևելք ընկած տարածքը: Ավելի մանրամասն տես Ահարոնյան Ա., Նշվ. աշխ., էջ 93-94; Documents on British Foreign Policy, vol. VIII, p. 33; Hovannisian R., Op. cit., p. 27, 34, 74-75; Махмурян Г.Г., «Пограничные проблемы Республики Армения и британская политика», «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2007, հ. 3, էջ 241-242:

46. Ըստ Ա.Ահարոնյանի, զեկուցման մեջ աղավաղվել ու չափազանցվել են հայկական կողմի պահանջները: Տես Ահարոնյան Ա., Նշվ. աշխ., էջ 95-96:

47. Այնուամենայնիվ, երեք պատվիրակությունները ապրիլի 22-ին բանակցել են Ա.Թոփչիբաշևի կացարանում: Հանդիպման ժամանակ հայկական կողմը սահմանափակեց իր պահանջները՝ բավարարվելով երկաթուղու կառուցման համար անհրաժեշտ հողային շերտով: Հայ պատվիրակների բոլոր ջանքերը՝ վեճի առարկա հողամասը ենթարկել ՀՀ լիիրավ իշխանությանը, ապարդյուն անցան:

48. Խոսքը Սևրի պայմանագրի հոդվ. 89-92-ի մասին է, որոնք մշակվել էին Սան Ռեմոյում: Կոնֆերանսի՝ ապրիլի 19-ի որոշմամբ, թուրքական կողմը հրավիրվում էր Փարիզ, որտեղ՝ մայիսի 11-ին նրան հանձնել են ստորագրվելիք փաստաթուղթը:

ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արտակարգ հանձնաժողովը (ԱՀ, ЧК) պետական անվտանգության պաշտպանության այն մարմինն էր, որը կոչված էր ծառայելու խորհրդային իշխանությանը՝ հիմնականում նրա ներքին թշնամիներից, ի տարբերություն բանակի, որը պետությանը պաշտպանելու էր արտաքին վտանգներից:

ԱՀ-ի խնդիրը նրա կազմակերպման մասին ՀՍԽՀ հեղկոմի 1920թ. դեկտեմբերի 6-ի դեկրետում ձևակերպվել է այսպես՝ «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմաններում հակահեղափոխական, շահադիտության (սպեկուլյացիայի) և ի պաշտոնե հանցագործության դեմ մաքառելու համար»: Ըստ 1921թ. դրոշմակնիքի, նրա անվանումն է՝ «ՀՍԽՀ Արտակարգ հանձնաժողով հակահեղափոխության, զեղծումների, չարաշահությունների դեմ պայքարող»: ԱՀ-ին կից ստեղծվում էր հատուկ բաժին՝ նույն խնդիրը կարմիր բանակում լուծելու համար:

ԱՀ-ը իր տեղական մարմիններն ուներ գավառներում և գավառակներում (շրջաններում): Վերջինիս հեղկոմի վարչական բաժինը պարտավոր էր «ենթարկել պատասխանատվության, - ըստ ՀՍԽՀ ժողկոմխորհի 1921թ. հուլիսի 20-ի դեկրետի, -խորհրդային իշխանությանը հակառակ գնացողներին և նրա կողմից հրատարկվող կարգադրությունները խախտողներին»: Գավառական հեղկոմի կազմում էր նաև քաղաքական բաժինը (պոլիտբյուրո), որի նախագահը, ինչպես նաև գավառական զինվորական կոմիսարը, ի պաշտոնե գավառական հեղկոմի անդամներ էին:

Դրսից ներմուծված խորհրդային իշխանությունը Հայաստանում բավական անկայուն էր, ուստի նրա ամրապնդման գործում մեծ դեր ունեին կատարելու և կատարել են Հայաստանում տեղակայված ռուսական 11-րդ բանակի ստորաբաժանումները և Արտակարգ հանձնաժողովը: Խորհրդային Ռուսաստանը և ՌԿ(բ)Կ կենտկոմը իրենց քաղաքականությունը և ազդեցությունը Հայաստանում (և ամբողջ Անդրկովկասում) իրականացնում էին 11-րդ բանակի (այնուհետև Առանձին կովկասյան բանակի) և ՌԿ(բ)Կ Կովկասյան կոմիտեի, ինչպես նաև Ռուսաստանից գործուղված չեկիստ Գևորգ Աթարբեկյանի միջոցով:

Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ պահից այնտեղ ներկա էր ՌՍՖԽՀ Արտակարգ հանձնաժողովի ներկայացուցիչը՝ Երեմեյ Վանիևը: Ընդ որում Հայաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանը իր 1920թ. դեկտեմբերի 2-ի մանդատով հենց Ե.Վանիևին է պարտավորեցրել անմիջապես ձերբակալել Համո Օհանջանյանի նախկին կառավարության բոլոր անդամներին և այլոց[1]:

Այդ նշանակում է, որ Բ.Լեգրանը արդեն սկսել էր խախտել իր կողմից նույն օրը ստորագրած հայ-ռուսական համաձայնագիրը: Այդ ամենը արտահայտություն գտավ «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության մեջ, որը հանգեցրեց դաշնակցականների հակախորհրդային ապստամբությանը և քաղաքացիական կռիվներին Հայաստանում 1921թ. փետրվար-ապրիլին, և որն էլ ավելի հյուծեց Հայաստանի թույլ մարմինը:

ՀՍԽՀ ԱՀ-ի առաջին նախագահը եղել է Նիկոլայ Այվազյանը, որը պաշտոնավարել է մինչև 1921թ. հունվարի 8-ը: Նրան հաջորդել է Շավարշ Ամիրխանյանը: Նրանց միջև ընկած ժամանակաշրջանում ժամանակավորապես նախագահել է Սարգիս Մելիք-Հովսեփյանը (Սերգեյ Մելիք-Օսիպով): 1921թ. ապրիլի 21-ին Շ.Ամիրխանյանը դիմել է իրեն նախագահի պաշտոնից ազատելու համար: Դիմումը հարգվել է, սակայն Շ.Ամիրխանյանը շարունակել է նախագահի պաշտոնում մնալ մինչև 1922թ. կեսերը, երբ Արտակարգ հանձնաժողովի նախագահ է դառնում Ս.Մելիք-Հովսեփյանը, պաշտոնը վարելով տևական ժամանակ:

---

[1] Ա.Վիրաբյան,«Հ Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին», ԲՀԱ, Երևան, 2009, N 1, էջ 107-110:

Հրապարակվող վավերագրի միջոցով ձգտել ենք ներկայացնել հետևյալ հիմնական հարցը:

Ի՞նչ բովանդակություն ունեն 1921թ. այն վավերագրերը, որոնց միջոցով ԱՀ-ը ներկայացրել է ՀՍԽՀ ներքին դրությունը: Մեր տրամադրության տակ կա այդ կարգի փաստաթղթերի՝ երկշաբաթյա տեղեկատու բյուլետենի 3 օրինակ՝ N 5-1921թ. հուլիսի 16-31, N 8-1921թ. սեպտեմբերի 1-15 և N 9-1921թ. սեպտեմբերի 16-30:

Հրապարակման ծավալի սահմանափակության պատճառով ընտրել ենք բյուլետեններից մեկը՝ վերջինը:

Հաշվարկելով, գտանք, որ N 1 բյուլետենը պետք է վերաբերեր 1921թ. երկրորդ կեսին, որը ժամանակի տեսակետից համընկնում է որպես Հայաստանի հեղկոմի նախագահ Ալ.Մյասնիկյանի Հայաստան ժամանելու հետ (մայիսի 5), երբ էական փոփոխություն է տեղի ունենում հեղկոմի քաղաքականության մեջ՝ «ռազմական կոմունիզմին» փոխարինելու է գալիս Նէպը, հեղկոմը վերակառուցվում է ժողովրդական կոմիսարների խորհրդի, բարելավվում է կոմիսարիատների գործունեությունը և այլն: Քաղբյուրոներ կազմակերպվեցին նաև Զանգեզուրի և Դարալագյազի գավառներում, որտեղ մինչև հուլիս ամիսը ընթանում էին ռազմական գործողություններ:

Բյուլետենների բազմացված օրինակներն առաքվել են հետևյալ հասցեներով.

1. ՀԿ(բ)Կ կենտկոմ,
2. ՀՍԽՀ Ժողկոմխորհ,
3. ՀՍԽՀ ներքգործժողկոմատ,
4. Վրաստանի Արտակարգ հանձնաժողով,
5. Ադրբեջանի Արտակարգ հանձնաժողով,
6. Համառուսաստանյան Արտակարգ հանձնաժողով,
7. ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրո և
8. Առանձին կովկասյան բանակի (նախկին 11-րդ բանակ) հատուկ բաժին:

Բյուլետենի մեկ այլ համար հասցեագրվել է և Ռուսաստանի Արտակարգ հանձնաժողովին՝ Մոսկվա, և Թիֆլիսում գտնվող նրա լիազոր ներկայացուցչին: Բյուլետենի երրորդ համարը, ի տարբերություն մյուս երկուսի, հասցեագրված է միայն Ռուսաստանի Արտակարգ հանձնաժողովի լիազոր ներկայացուցչին (որը գտնվում էր Թիֆլիսում):

Միայն բյուլետենների առաքման փաստը ցույց է տալիս, որ Անդրկովկասի խորհրդային հանրապետությունները, մի կողմից, գտնվում էին փոխադարձ հարաբերությունների մեջ, մյուս կողմից, Մոսկվայի ազդեցության տակ էին նույնիսկ այն ժամանակաշրջանում, երբ նրանք հռչակված էին որպես անկախ հանրապետություններ:

Ժամանակի ընթացքում, բնականաբար, փոխվում էր հանրապետության ներքին իրադրությունը, որն իր արտահայտությունն էր գտնում բյուլետեններում: 1922 թվականից դրանք սկսում են կոչվել այլ անուններով, փոխվում է նաև պարբերականությունը, բայց պահպանվում է էությունը: Արտակարգ հանձնաժողովի տեղեկատու պարբերականների նպատակն էր ճշմարտացի ներկայացնել երկրի ներսում տիրող քաղաքական, ինչպես նաև սոցիալ-տնտեսական իրադրությունը՝ ի տարբերություն ու հակադրություն կուսակցական քարոզչության, օգնել խորհրդային իշխանությանը՝ հետևելու երկրում տիրող հատկապես վտանգավոր իրադարձություններին ու գործողություններին և կազմակերպել դրանց ուղղման քայլեր ու միջոցառումներ:

Արխիվային գործերում հանդիպում են բյուլետեններում տողերի դիմաց կատարված համապատասխան նշումներ՝ «կիրառվել են միջոցառումներ» կամ հետագայում տեղեկատվություններից արված քաղվածքներ՝ ըստ պատկանելվույն:

Հարցի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Արտակարգ հանձնաժողովի, այնուհետև պետական քաղաքական վարչության (ՊՔՎ) տեղեկատվական գործունեության փորձի կուտակման հետ մեկտեղ կատարելագործվել և հարստացել է հանրապետության ներքին կյանքի վերարտադրության գործը՝ նպատակ և

ուղղվածություն ունենալով խորհրդային-կուսակցական իշխանության հաստատումը և ամրապնդումը:

Վլադիմիր Ղազախեցյան

պատմագիտության դոկտոր

N 1
ДВУХНЕДЕЛЬНЫЙ ИНФОРМАЦИОННЫЙ БЮЛЛЕТЕНЬ N 9 ЧРЕЗВЫЧАЙНОЙ КОМИССИИ ССР АРМЕНИИ С 15-ГО СЕНТЯБРЯ ПО 1-ОЕ ОКТ[ЯБРЯ] 1921 ГОДА ВКЛ[ЮЧИТЕЛЬНО]

Совершенно секретно 22 октября 1921г.*

Эривань

I.

Общее политическое состояние

Настроение рабочих, служащих, крестьян, отношение их к Совласти и Компартии

Гор. Эривань

За информационный период политическое состояние города Эривани не изменилось ни в лучшую, ни в худшую сторону. Рабочие в большинстве продолжают получать недостаточное количество продуктов, необходимых для пропитания, и, будучи экономически и материально не обеспечены, находясь все время в полуголодном состоянии, обремененные семьями, по прежнему относятся совершенно пассивно, а другие даже враждебно настроены против Советской власти. Причина этого явления, помимо продовольственного кризиса - отсутствие политической работы среди рабочей и крестьянской массы, которые будучи представлены самим себе, естественно, без влияния коммунистов, легко подпадают под влияние контрреволюционеров, агитаторов и разнообразной провокации темных элементов, которые всячески стараются вооружить несознательную рабоче-крестьянскую массу против Советской власти, ведя провокацию и агитацию на почве продовольственного кризиса. Таким образом, играя на необеспеченном положении рабочего и крестьянина и пользуясь его несознательностью и темнотой, затуманив головы самой гнусной провокацией, эти контрреволюционеры добиваются того, что часть рабочих и крестьян, хотя и незначительная, враждебно настраивается против Советской власти и сами же, заразившись примером контрреволюционеров, ведут агитацию среди массы. Меньшинство же рабочих, кои сознательны, относятся к Советской власти с полным доверием и сочувствием, но некоторые незаконные действия Советских работников, частные служебные преступления с их стороны, дискредитирование Советской власти почти на каждом шагу, все это, вместе взятое, производит отрицательное действие на сознательного рабочего и крестьянина и в некоторых случаях настраивает его против Советской власти, вызывая в нем недовольствие, большей частью, не Советской властью, а Советскими работниками, среди которых он видит и узнает бывших дашнаков, которые до Советской власти в Армении выжимали из него соки, а теперь сидят в Советских учреждениях и командуют. Советские работники, более чем на половину состоят из беспартийной массы, за немногим исключением, относятся к Советской власти совершенно пассивно, интересуясь только количеством

* Թատաթղթի վրա կատարված մակագրության ժամանակը:

получаемого пайка* и оценивая действия Советской власти также по количеству пайка и выявливая интерес к Советской власти постолько, поскольку это выгодно для их шкурных интересов. Меньшинство же сознательных Совет[ских] работников, экономически и материально не обеспечены, стараются видеть в лице Советской власти защитницу своих интересов, но поддавшись агитации темных элементов, продолжают оставаться пассивными наблюдателями. Истинно преданных Советской власти Совработников, из числа беспартийных советских работников, очень мало. Что же касается крупной буржуазии, и мелких торговцев, то последние, втянувшись в вакханалию свободной торговли и спекуляции, продолжают оставаться на рынке и отношение их к Советской власти вполне индиферентное, за исключением меньшинства, которые продолжают шипеть из-за угла, распространяя самую темную и нелепую провокацию, обливая помоями Советскую власть. Интеллигенция, в лице бывших офицеров, учительства и проч., вообще шатающейся публики, приняло выжидательную позицию и оставаясь в тайне враждебно и оппозиционно настроенной к Советской власти показывает вид, что сочувствует ей, но в тайне лелея мечту о возвращении господства буржуазии. Желая показать свое усердие и сочувствие к Советской власти, вышеупомянутая интеллигенция, как бы идя на встречу интересам пролетариата, и имея цель помочь голодающим крестьянам, рабочим и совет[ским] служащим Армении, организовало чисто общественную организацию - "Комитет Помощи Армении", куда вошло большинство беспартийного элемента, а также литераторов и писателей Армении. Состав Комитета, также его ближайшие мероприятия, будут, конечно, нами выяснены, точно также как и предполагаемая польза их лотареи, которая будет устроена ими в пользу трудящихся Армении. Можно предполагать, что последний, т.е. Комитет Помощи Армении, пойдет по пути Всероссийского Комитета Помощи, который оказал не помощь голодающим, а контрреволюционерам. Наблюдение за действием Помощи Комитета Армении будет на первом плане работы Чека. Кроме того, силами беспартийной интеллигенции Армении в недалеком будущем будет издаваться беспартийная газета "Работник Армении" под редакцией литераторов Армении.

II. Лорийский уезд

Политическое положение уезда устойчивое и благоприятное. Активной работы, группировок и агитаций со стороны антисоветских партий и партии "Дашнакцутюн" не замечено. Провокационные слухи, распространенные среди населения искоренены, благодаря принятым мерам.

Экономическое положение уезда тяжелое и неудовлетворительное. Из продналога** не придется собрать ни одного зерна, ибо такового у населения нет, и оно само нуждается в этом. Довольно обильный сбор будет масла, меда, сыра, часть которого предполагается отправить Наркомпроду, а часть оставить в деревне. Никаких других источников нет и потому приняты всяческие меры для закупки продовольствия в Борчалинском уезде.

---

* Դրամի արժեզրկվածության և ապրանքադրամական հարաբերությունների գրեթե բացակայության պայմաններում, երբ իշխում էր ապրանքամթերային փոխանակությունը, պետական ծառայողների և այլոց աշխատավարձը սահմանված էր բնամթերքով (մթերաբաժին, փայ - паек)։

** Նէպի սկզբնական շրջանում հարկը բնամթերային էր՝ քանի դեռ չէին զարգացել ապրանքադրամական-շուկայական հարաբերությունները, երբ աստիճանաբար մեծանում է հարկի դրամական ձևը։

Положение советских служащих в данное время весьма неудовлетворительное. Кроме $^3/_4$ фунтов* хлеба, служащие ничего не получают, а рабочие получают только по фунту хлеба. В некоторых участках уезда даже Советские служащие не получают хлеба, ибо нет такового. Для улучшения питания рабочим Аллавердского завода на обмен с хлебными продуктами, а для Советских служащих вопрос остается открытым. В особенности тяжело положение крестьян многих сел уезда, посевы которых биты градом и для озимого посева нет семян. В настоящее время в селении Калагеран форменно голодают и на почве голодовки бывают болезни со смертельными исходами.

В настоящее время, кроме воинских частей РСФСР 18-го Кавдивизии, других воинских частей в уезде нет. Часть их стоит в Лоруезде, а остальная стоит в Воронцовском районе. Расположены они в следующих селах: Уруте - 180 красноармейцев, в Ходарбеге** - 150 красноармейцев, в Русских Гергерах - 2 батарея.

В продовольственном отношении положение этих частей очень плохое, получают фунт хлеба, изредко мясо, картофель и больше ничего. До того голодны, что стало распространяться воровство картофеля среди них.

Несмотря на неоднократные приказания Начдива, искоренить этого воровства не удалось. Были такие случаи, когда части, стоящие в Гюля-Караке (которые уже ушли в Грузию), стали портить и рубить сосновые питомники. Партийная работа в Лорийском уезде до сего времени велась очень слабо, до того была забыта партийно-организационная работа, что, казалось, не существует партийного комитета. В центре уезда велась еще кое-какая работа, а что же касается уезда, то партийной работы там совершенно не велось. Это объясняется тем, что отсутствуют партийные товарищи, и что многие товарищи, занимающие посты, не стояли на высоте своего назначения, не понимали задач, постановленных им, и не умели привести их в жизнь. Партийная организация до сего времени не смогла произвести расслоения между кулаками и пролетариатом. Пролетариат Лорийского уезда, большиснтво, находится под влиянием кулаков, он не вышел еще из этой тьмы, в которую он был вовлечен, и до сих пор не мог себе ясно представить всю ту пользу, которая представляется ему рабоче-крестьянской властью и не понимают о сущности Советской власти. Кроме слабости в партийной организации, слаба также союзная работа среди молодежи. Во многих местах уезда нет этой организации, ибо на это до сих пор не было уделено особенного внимания.

В Лорийском уезде каких-либо банд, с каким-либо политическим обликом - не существует. Существуют только большие кражи в Дсехском участке, отчасти в Аллавердском участке. Кражи эти совершают профессиональные воры.

III. Эчмиадзинский уезд

Настроение населения к Советской власти и Компартии за последний период времени сравнительно улучшилось. Причина этого то, что уезд, находящийся до сего времени в сонно-мертвенном положении, как бы проснулся, и гигантский аппарат Советской власти начал энергичную работу как по укреплению власти, так и завоеванию симпатии народа. Местной властью выпущены ряд воззваний по уезду, по поводу провокационных слухов.

Посланные в участки продналоговые комиссии заняты двойной работой: 1) сбором продналога; 2) широкой агитационной работой. Насе-

---

* Այսինքն՝ 300 գրամ (ֆունտը հավասար է 400 գրամի):

** Հավանաբար՝ Հայդարբեգ:

ление, разуверившееся в провокаторах, ясно поняв весь ложный характер работы провокаторов, пришло к сознанию и заключению, что Советская власть несет мир и освобождение истинным трудовикам. После всего этого, казалось бы, что все население стоит за Советскую власть, но, благодаря одной жалкой кучке контрреволюционеров и паразитов, политическая работа в полностью не восстанавливается. Эти типы никак не могут расстаться со своей заветной мечтой о восстановлении антисоветской власти. Среди этих людей видную роль играет офицерство, возвращающееся из бегства, и члены партии дашнакцутюн и вампиры трудового народа Армении - "маузеристы". Их шушуканье на ухо мещански настроенному крестьянству портит и мешает Советскому строительству, так как антисоветские партии активности не проявляют, то их работу нужно признать только чисто провокационной. В последнее время слухи о взятии Америкой мандата над Арменией и проч. умолкли, и пошла другая провокация, касающаяся продналога. Провокаторы шепчут крестьянам, что Совласть несколько раз подряд будет собирать налог с народа, но последний не поддается этому, и в знак своей преданности к Соввласти крестьянство спешит скорее внести налог.

В Самагарском участке уже началась ссыпка. Продналог в уезде в общем идет успешно. Работа в Советских учреждениях, благодаря недостатку хороших работников и наихудшего питания, не проявляет продуктивности. Питание за последнее время страшно ухудшилось, служащие учреждений, не получая несколько дней подряд хлеба, явно не желают работать, и на этой почве процветает саботаж. Саботаж в сильной форме развивается в Упродкоме, Собесе и Совнархозе*. В последний период зарегистрировано масса злоупотреблений и преступлений по должности, имеющих характер взяточничества, превышения власти и буйства.

Работа антисоветских партий заметна в Аштаракском районе, так как этот район был всегда контрреволюционным районом. За последнее время за провокацию и работу антисоветского характера задержаны - князь Григорян, брат члена Парламента Сирака Григоряна и проч. В 3-ем участке Сардарабатского района, на границе с Турцией, в Игдырском районе, произошли кровавые столкновения между курдами с одной и турками с другой стороны. Обе стороны дали жертвы, как убитыми, так и ранеными. Во время столкновения в Сардарабатском участке были слышны орудийные выстрелы. По сведениям почти все турецкие посты сняты. Замечается массовое дезертирство в Турецких частях.

IV. Зангезурский уезд

За последнее время заметно, что в разных селах и участках Зангезурского уезда действуют подпольные дашнакские организации, причем, как установлено, в состав таких организаций входят, главным образом, лица, бежавшие в Персию во время авантюры и пришедшие обратно в Зангезур. Кроме своей провокационной работы, они вносят свои постановления - вступить в вооруженную борьбу против Советской власти, а также совершить над ответственными политическими работниками террор.

Наблюдается усиленная агитация среди темной массы, которая безусловно подпадает под влияние всяких темных и не проверенных слухов. Агенты дашнаков уверяют народ, будто Советская власть временное явление, и что скоро будет дашнакская власть, в связи с чем настроение массы, по отношению к Советской власти колеблющее и

* Уездный продовольственный комитет (отдел), отдел социального обеспечения и труда, Совет народного хозяйства.

двоякое. По прибытии беженцев из Персии[*], среди которых было много дашнакских агентов была подброшена прокломация - "приказание Иссуса" (коя прилагается к настоящему бюллетеню). По проверенным сведениям, прокламация эта привезена из Персии.

За последнее время стали наблюдаться частичные разбои, нападения и грабежи, в особенности в пограничных селах Азербайджана, что дает повод местному населению жить в постоянных тревогах и не дает возможности скорее перейти к мирному труду. Бандитские шайки, остатки Султанова[**], терроризируют население, которое неоднократно обращалось о помощи, но власть никаких мер не предпринимает. Во главе этой банды стоит Ага-Мамед, житель селения Джагазур. Банда численностью достигает до 60-ти человек, вооружены с ног до головы и имеют два пулемета. Они постоянно действуют в районе Минкенда, нанося удар, главным образом, армянскому населению и частично татарскому, чем обостряются национальные взаимоотношения. Наблюдается продажа и покупка оружия, которое готовит почву новых вооруженных столкновений между армянами и татарами, почему и в нужных случаях при отбирании властью оружия у населения ими не сдается таковое с охотой и скрывается.

По всему Зангезурскому уезду, в недалеком будущем будет царить голод, так как большой продовольственный кризис. Только в исключительных местах население может продержаться на собственных запасах - три-четыре месяца. Население Зангезурского уезда крайне нуждается в мануфактуре, керосине, медикаментах и других больничных принадлежностях. В виду отсутствия медикаментов развиваются различные болезни. Саботаж среди Совслужащих полнейший, причиной его является продовольственный и материальный кризис. В войсковых частях увеличиваются заболевания, в особенности в Кафанском и Мегринском участках, где совершенно осталось мало войска, причиной чего является отправление больных в город Эривань и другие уезды. Аппарат милиции очень слаб.

V. Караклисский уезд

Общее политическое положение уезда удовлетворительное. В некоторых районах уезда распространяются провокационные слухи, в особенности Налбандском, где установлено, что приезжающие на автомобиле служащие в Американском комитете[3*] распространяют среди населения, что Америка взяла мандат над Арменией и проч. и, благодаря этому, в некоторых селах замечается неблагоприятное отношение крестьян к Советской власти. Экономическое положение уезда неудовлетворительно, вследствие неважного урожая хлеба. Служащие и рабочие получают по три-четверти фунта хлеба и обед, но служащие Политбюро и красноармейцы вторую неделю уже не получают кроме хлеба ничего. Что же касается служащих "Айкоопа", то они получают сверх нормы.

Советское строительство тормозится ввиду отсутствия технических работников. Союзная[4*] работа ведется очень вяло. Партийная работа почти не ведется. Антисоветские партии действуют во всех селах уезда и работа их заключается - распространение провокаций, которые исходят большей частью от служащих Американского Комитета. В некоторых местах уезда

---

[*] Խոսքը 1921թ. փետրվարյան հեղափոխության պարտությունից հետո մասնակիցների Պարսկաստան փախուստի դիմածների վերադարձի մասին է:

[**] Սուլթան-բեկ Սուլթանովը Քրդստանի (Ադրբեջան) քրդերի հակախորհրդային շարժման ղեկավարն էր 1921թ.:

[3*] Մերձավոր Արևելքում օգնություն ցույց տվող Ամերիկյան կոմիտե:

[4*] Նկատի ունի արհեստակցական կազմակերպությունները և միությունները:

эти провокации влияют на массу, и потому сбор продналога затрудняется, как например, в сел. Амамлы и других селах, группа крестьян отказалась от продналога, мотивируя, что все остатки распроданы. Сбор в Караклисском уезде идет очень слабо, и для более широкой агитации среди крестьян выделены почти все ответственные работники. Во всех Совучреждениях замечается саботаж, в связи с продовольственным вопросом. Спекуляция на рынке развита и повышение цен зависит от привоза товара из Грузии. В уезде идет товарообмен. Айкооп выдает крестьянам мануфактуру, а взамен получает масло, сыр и проч. Товарообменом также занимаются американцы*, которые занимались конкуренцией.

Положение воинских частей неудовлетворительно - скверная пища и недостаток обмундирования. Эпидемия, как например малярия, чесотка, развиваются, и бороться против них нет возможности, так как нет медикаментов и медицинских принадлежностей, а также медицинского персонала.

Организован Комитет помощи голодающим.

Бандитизм, восстаний, заговоров и проч. не было.

VI. Делижанский уезд

Настроение населения и отношение его к Советской власти и Компартии благожелательное. Контрреволюционные элементы не переставая ведут свою подпольную работу, распространяя всякие провокационные слухи среди массы и этим желая оттолкнуть от Советской власти более или менее сознательную массу. В последнее время замечается лихорадочная работа по всему уезду антисоветских партий. Контрреволюционные элементы группируются вокруг известного дашнака и противника Советской власти - Хондкарян Астхик и Тевояна Авака, которые поддерживают тесную связь со всеми темными элементами и офицерством.

Контрреволюционные ячейки и их явления замечаются во всех уголках уезда, центром же их является город Дилижан. Арестованы за последнее время известные контрреволюционеры - Баграт Давтьян, Михаил и Гайк Аствацатурьян[ы]. Экономическое положение уезда неудовлетворительно. Работа в Советских учреждениях идет ненормально, в связи с саботажем и злоупотреблениями, как со стороны ответственных, так и неответственных работников.

Большое злоупотребление раскрыто в уездном Военном Комиссариате. Преступления исходят со стороны административного и командного состава. Часть виновных арестована, четверо скрылись до ареста, а двое бежали из-под ареста. В Делижание, а также в уезде, группируется шайка контрреволюционеров, которая имеет цель напасть на Политбюро. Политработа, как в городе, так и в уезде, ведется очень слабо. Объясняется это неимением более подготовленных политических работников. Заговоры, восстания, забастовки за период времени не замечалось. Спекуляция, как и всюду, развивается.

Бандитизм в настоящее время свирепствует около станции Садахло и около пограничных сел Азербайджана, которые за последнее время ничего не предпринимали, и положение уезда со стороны бандитизма без перемен.

VII. Даралагязский уезд

Общее политическое состояние уезда находится в неудовлетворительном положении. Отношение населения к Советской власти неудовлетворительно, в зависимости от плохой работы сельских Ревкомов, Учревкомов, которые вызывают среди крестьян недовольствие. Население уезда

---

* Հայկական Ամերկոմի աշխատակիցներ:

сильно нуждается в оказании медицинской помощи и почти каждое селение имеет больше половины населения больных. Также больна половина Советских работников. Продналог среди бедного крестьянства идет успешно, а среди более богатых и кулаков оно ведется не успешно и им не нравится сбор продналога. Урожай во всем уезде был неудовлетворительным в связи с засухой. В настоящее время развивается торговля оружием среди кочевников-карабахцев, которые взамен получают мануфактуру и скот. Партийно-организационная работа в уезде почти не производится, а сельские ячейки едва ли понимают свою цель, даже в Учкомах не делается то, что необходимо. Крестьяне Даралагязского уезда совершенно не имеют представления о Советской власти. Почти во всех Советских учреждениях Даралагязского уезда идет саботаж на почве продовольственного кризиса.

VIII. Алекпольская губ[ерния]

Политическое положение губернии устойчивое. Экономическое состояние скверное в связи с недостатком продовольствия. Работа антисоветских партий, в частности партии "Дашнакцутюн", ни в чем не проявляется, исключая распространения провокационных слухов общего характера, также на почве продовольственного кризиса идет агитация среди темной массы крестьян.

Бандитизм в слабой степени наблюдается в 3-м участке, где действует несколько мелких банд, по 8-10 человек в каждой. Особенной угрозы они из себя населению не представляют и носят чисто уголовный характер. В городе наблюдаются мелкие грабежи. Сбор продналога в участках проходит довольно успешно. Транспорт находится в скверном состоянии за недостатком ремонтного материала и рабочей силы.

Положение Советских служащих скверное, причина этого та, что они не обеспечены ни экономически, ни материально. Случаи сознательного саботажа не наблюдались. Военное состояние неудовлетворительно, снабжение красноармейцев плохое, в связи с чем развивается дезертирство. Дезертиры убегают в окрестные селения, где пользуются содействием населения. Спекуляция продолжает процветать. Наблюдается систематическое повышение цен на хлеб и продукты. Остальное положение уезда без перемен.

IX. Ново-Баязетский уезд

Сведений не поступило.

X. З а б а с т о в к и

За отчетный период, как в городе Эривани, так и в уездах забастовок не наблюдалось.

XI. Политические партии и группы

Организация партии "Дашнакцутюн", в общем своем целом, представляет из себя оппозиционно настроенную против Соввласти группу людей, которые продолжают развивать свою деятельность, особенно интенсивно в городском масштабе. За последнее время ее деятельность выразилась в усиленной организации ячеек, из которых удалось выяснить несколько, куда входят, главным образом, бывшие маузеристы, интеллигенция и бывшее офицерство. Ячейки имеют свое бюро и связь с центром, т.е. с Тавризом. Посылаются также организаторы, представляющие из себя живую связь. В уездах, в частности в Аштаракском и Эчмиадзинском районах, к местным организациям партии Дашнакцутюн примкнули эсеры. Подпольная партия "Дашнакцутюн" ничего такого контрреволюционного характера, т.е. вооруженных выступлений против Сов[етской] власти не предпринимала, кроме скрытой агитации и провокации среди несознательной массы, которая каждый день обливает помоями Соввласть. Все это влияет

на массу с отрицательной стороны. В общем масштабе членами организации контрреволюционных ячеек являются бывшие офицеры и бежавшие дашнаки, которые в данный момент присовались по разным учреждениям. Особенно заметно скопление контрреволюционеров в Народном Комиссариате продовольствия, Эриванском Потребительном Обществе и Айкопе, где на более или менее ответственных постах находятся вчерашение дашнаки, которые и ведут контактную работу против Советской власти и дискредитируют последнюю в глазах массы как рабочих, так и Советских работников. В общем партия Дашнакцутюн, получая все директивы из Тавриза, где находятся их лидеры, и действуют в Эривани с величайшей осторожностью.

Партия эсеров, хотя в Эривани и не имеет своего влияния на массу, но за последнее время старается работать в контакте с партией Дашнакцутюн, что и было установлено. Лидер партии эсеров в городе Эривани является служащий Айкоопа некий Тарханов, который организовал в Айкоопе контрреволюционную ячейку. Вышеупомянутый Тарханов имеет большое влияние среди местной буржуазии и выдается своими организационными работами в Закавказье. Устанавливается, что они имеют связь также с Караклисской ячейкой, которая находится в Айкоопе. Из Тифлиса за последнее время прибыла масса рабочих-меньшевиков, якобы для специальных работ, но на самом же деле, ведут агитацию и пропаганду среди остальных рабочих. Самостоятельной же и отдельной организации меньшевиков не наблюдалось.

Вот в общей сложности все характерные группы антисоветских организаций города Эривани. Тактика их остается прежней, т.е. - пролезть в Советские учреждения, в рабочие массы, и путем распространения провокационных слухов и агитации желают подорвать доверие среди последних Советской власти. Характерно отметить, что рабочие в очень редких случаях поддаются на эту удочку, исключая несознательного элемента.

XII. Духовенство

Деятельность духовенства, в контрреволюционном смысле, в Эривани за информационный период не наблюдалась.

XIII. Контрреволюция

Характерных котрреволюционных явлений в городе Эривани за отчетный период не наблюдалось, кроме шаблонного явления — распространения ложных слухов и провокаций. Провокация со стороны контрреволюционеров по своему характеру остается прежней, т.е. - ими распространяется о взятии мандата Америкой над Арменией, о восстаний в Гяндже и Дагестане. Конечно, подобная провокация имеет некоторое влияние на массу - несознательную, которая не находится в курсе политических событий. Масса же, более или менее следящая за политическим течением и читающая разные газеты, встречает подобную провокацию с презрением и негодованием. За последнее время участились тайные собрания контрреволюционных организаций, в местах довольно скрытых и с величайшей осторожностью. По прежнему дашнаки в советских учреждениях своими действиями дискредитируют власть и дают повод рабочему классу роптать на Советвласть. Преступления по должности совершаются с целью нанести вред народному хозяйству. В общей сложности, тактика контрреволюционеров осталась прежней. Других контрреволюционных явлений в городе Эривани не наблюдалось.

Военное состояние

Военное состояние республики по прежнему остается в плохом поло-

жении. Причиной служит по прежнему то, что указывалось в предыдущих бюллетенях, т.е. скудный паек красноармейцам, недостаток обмундирования и обуви и слабая политработа в частях. Красноармейцы, получая недостаточно питания, голодают, многие не имеют обмундирования, совершенно босы и голы и погибают в грязи. В данный момент особенно страдают от холода и голода красноармейцы, находящиеся в Караклисском и Зангезурском районах, где наступили холода. От холода в Первой бригаде в городе Караклисе умерло 6 красноармейцев. Дабы утолить голод, красноармейцы прибегают к воровству и очень часто, несмотря на жалобы жителей и репрессивных мер со стороны комсостава. Контрреволюционных организаций и явлений в частях за отчетный период не наблюдалось. Экономическое положение Армии весьма неудовлетворительное. Красноармейцы положительно голодают.*

1-ый Отд[ельный] Артдивизион.

Политсостояние: Настроение Комсостава и красноармейцев удовлетворительное. Взаимоотношение товарищеское. дезертирство есть среди командированных. Дисциплина средняя.

Политпросветработа: Степень подготовленности политработников средняя, было проведено за истекшую неделю два митинга на темы: "Строительство Советской власти и Красная Армия", три собрания и 15 собеседований. Ощущается острый недостаток в газетах. Субботники и воскресники не проводятся, но работают для бедных крестьян 25 красноармейцев и 10 лошадей.

Участие в политпросветительной работе красноармейцев неудовлетворительное.

Снабжение: Слабое, продовольствие неудовлетворительное, кроме одного фунта ячменного хлеба и $^{1}/_{4}$ фунта** мяса красноармейцы ничего не получают.

Сансостояние: В виду наступающего холода и за отсутствием зимнего обмундирования, бани и мыла, число малярийных заболеваний доходит до 20 человек ежедневно.

2-ой Отд[ельный] Артдивизион

Политсостояние: Взаимоотношение комсостава и красноармейцев хорошее. Настроение комсостава подавленное, ввиду плохого материального состояния, большинство красноармейцев несознательно. Относятся к Соввласти сочувственно.

Политпросветработа: Недостает просветработников, имеющихся налицо - мало подготовлены. За неделю было два собрания, бесед - 20 и три раза в неделю читается азбука коммунизма. Для беспартийных открываются обсуждения по характеристике социалистического строя, темы бесед: "Поволжский голод3* и международное положение", "Для чего нам нужна Красная армия", "Хозяйственно-экономическая жизнь Соввласти" и т.п.

Снабжение: Неудовлетворительное.

Бронепоезд "Азатамарт"

Политсостояние: Настроение и взаимоотношение удовлетворительное. Дисциплина хорошая.

Политпросветработа: Большой недостаток в политработниках. Было проведено собрание комячейки на тему: "Капитализм и Коммунизм",

* Նույնն է՝ весьма голодают:
** Այսինքն՝ 100 գրամ:
3* Սովի տարածված լինելը Պովոլժիեում (Ռուսաստան):

"Великая Французская революция" и было одно собеседование на тему: "Религия и коммунизм". Борьба с неграмотностью не ведется в связи с неимением преподавателей.

Снабжение тоже неудовлетворительное.

4-ый Армянский стрелковый полк.

Политическое состояние: В виду свирепствующейся эпидемии, настроение красноармейцев подавленное, взаимоотношение сознательное, дисциплина удовлетворительная.

Политпросветработа: Ощущается большой недостаток в политических работниках. Политработа ведется и среди населения. Проводятся митинги и беседы на темы: "Международное положение", "Красная Армия" и т.п.

Комячейки батальонов ведут культпросветительную работу успешно. Субботники проводятся с большим успехом. Большой недостаток газет и журналов.

Снабжение: Продснабжение удовлетворительное. Обмундирования и снаряжения нет. Большой недостаток в обуви.

Сансостояние: Свирепствует малярия, с осложнением остро-кишечного характера. Помощь, выданная из Эривани, очень слабая. Врачебная помощь недостаточна. Нет мыла, белья и бани.

5-ый стрелковый пехотный полк.

Политсостояние: Настроение и взаимоотношение комсостава и красноармейцев удовлетворительное, за исключением некоторых из комсостава.

Частичное дезертирство случается. Дисциплина неудовлетворительная.

Политпросветработа: Недостаток политработников. За отчетный период было три собрания комячейки, бесед - 5, чтения литературы - 3. Борьба с неграмотностью ведется слабо из-за халатности членов культпросветкома. Ощущается недостаток в газетах из центра. Продснабжение удовлетворительное, снаряжение и обмундирование неудовлетворительное.

Сансостояние: Нет околодка, бани посещаются редко, нет мыла и белья, красноармейцы покрыты паразитами.

Военно-инженерное управление

Политсостояние: Взаимоотношение и настроение удовлетворительное. Недостаток в политпросветработниках, недостаток в политруках, имеющихся налицо очень мало. Ежедневно читаются газеты и брошюры. Борьба с неграмотностью ведется успешно. Не хватает газет и журналов, субботники проводятся успешно.

Снабжения: Продснабжение неудовлетворительное.

Сансостояние: Неудовлетворительное. Нет медицинского персонала, нет мыла и бани.

Эт[апный] батальон.

Политсостояние: Настроение хорошее, взаимоотношение комсостава и красноармейцев хорошее, дезертирства нет.

Политпросветработа: Недостаток политработников на всех этапах. В виду недостатка таковых отсутствует политработа.

Снабжение: Неудовлетворительное.

Сансостояние: Неудовлетворительное.

Отснабарм

Политическое состояние без перемен.

Политпросветработа: Кризис в политработниках, за отчетный период было: бесед - 11, собраний комячеек - 4, общих собраний - 5, на тему по-

литико-экономического характера. Отношение к субботникам удовлетворительное.

Снабжение: Продовольствием - удовлетворительное. Недостаток обмундирования и снаряжения.

Сансостояние: Удовлетворительно.

Упродарм

Политсостояние: Настроение и взаимоотношение комсостава и красноармейцев удовлетворительное. Дезертирства случаются.

Политпросветработа: Средняя, была одна беседа, одно общее собрание сотрудников. Ощущается недостаток политработников.

Снабжение: Всех видов снабжения не хватает.

Сансостояние: Удовлетворительное.

Санчасть

Политсостояние: Настроение и взаимоотношение комсостава и красноармейцев удовлетворительное. В трехсводном госпитале - подавленное. Дисциплина удовлетворительная. Дезертирство сократилось.

Политпросветработа: Ощущается недостаток в политработниках, ежедневно ведутся беседы и читаются лекции для всестороннего развития. Борьба с неграмотностью ведется усиленная. Устраиваются музыкально-вокальные вечера. Недостаток литературы. Субботники идут успешно.

Снабжение: Не совсем удовлетворительно. Обмундирования нет 30%.

Сансостояние: Неудовлетворительное. Отсутствие хинина и других медикаментов. Недостаток белья и больничных принадлежностей.

Команда гарнизона Эривани

Политсостояние: Взаимоотношение и настроение красноармейцев и комсостава хорошее. Дезертирство развито, меры борьбы слабые.

Политпросветработа: За отчетный период было собеседований - 3, собрание - 1. Борьба с неграмотностью ведется успешно, газет получается мало.

Снабжение: Продовольствием - среднее, обмундирования - нет.

Сансостояние: Скверное.

Работа в Советских учреждениях

Из недостатков в Советской работе по прежнему следует отметить следующее:

1. Саботаж в советских учреждениях за последнее время сильно развился. Имеет место злостный саботаж с политической целью, направленный к расстройству Советского аппарата. Саботаж преобладает на почве продовольственного кризиса. Советработники, рабочие, будучи необеспечены, как в продовольственном, так и экономическом положении, они принуждены продавать на рынке свое последнее и выполнять свои обязанности с должным вниманием не в состоянии, отговариваясь тем, что они голодают и продолжают саботировать.

2. Частые служебные преступления со стороны как ответственных, так и неответственных работников в Совучреждениях, исходящие большею частью от беспартийной массы, которой заполнены Советские учреждения, взяточничество, расхищение народного достояния, подлоги, подделки документов - вот характерные черты совершаемых преступлений по должности. Преступления по должности совершаются иногда до такой тонкости, что нельзя никогда заметить. Участившиеся за последнее время интриги среди Советских работников, как например, личные счета и т.п.,

благодаря чему обостряются взаимоотношения Советских работников и наносится ущерб общей работе данного учреждения.

В общей сложности работа в Совучреждениях неудовлетворительна.

Заговоры и восстания

За информационный период не было.

Спекуляция

Спекуляция продолжает находиться в полном разгаре. Цены на рынке, в особенности на хлебные продукты, поднимаются с каждым днем, даже с каждым часом, цены за информационный период в среднем поднялись приблизительно на 30%.

Хлеб серый -	11.500 р. (Сов. валютой)
Говядина -	19.000 р. (Сов. валютой)
Баранина -	22.000 р. (Сов. валютой)
Масло постное -	33.333 р. (Сов. валютой)
Масло коровье -	75.000 р. (Сов. валютой)
Керосин -	14.000 р. (Сов. валютой)
Табак -	120.000 р. (Сов. валютой)
Золотая 5 руб. монета -	4.200.000 Арм. чеками
Золотая турецкая лира -	7.400.000 чеками
1000 руб. РСФСР -	25.000.000 чеками

Спекулирует все население, начиная с Совслужащих, кончая последним гражданином.

Бандитизм

За информационный период по всему тому, что было в предыдущих бюллетенях, нужно прибавить еще одно, что появилась новая банда в Абаранском районе в 7-ми верстах от селения Али-Кучах*. Во главе банды стоит бывший полицийместер Сето Джалалян. Численность банд и их вооружение пока не выяснено. Какой характер носит банда - политический или уголовный, пока не выяснено. Против банд отправлен эскадрон войск, который должен принять меры к уничтожению их.

Об операциях и результатах будет сообщено.

Работа ЧЕКА Армении

Движение и количество дел.

К 15-му сентября было	135 дел
Возникло за полумесяц	42 дела
Закончено	23 дела
Передано в ЦК партии по очистке партии	15 дел
Перечислено	10 дел
Изъято	3 дела
К 1-му октября остается	26 дел

Количество дел, законченных и перечисленных по роду преступления

Контрреволюция	9 дел
Преступления по должности	25 дел
Бандитизм	7 дел
Шпионаж	2 дела
Подлог	1 дело
Спекуляция	2 дела

* Ճիշտ է՝ Али-Кучак:

Кража	1 дело
Пьянство	1 дело
Итого	48 дел

Работа стола учета

К 15-му сентября на учете было	2558 человек
Вновь принято	124 человека
из коих:	
Дашнаков	81 человек
Контрреволюционеров	24 человека
Других преступных элементов	19 человек
Всего к первому октября на учете	2682 человека

До 15-го сентября было заведено на бывших офицеров

Личных дел	999
Заведено за полумесяц	82 дела
Итого к 1-му октября	1081 дело

Работа стола розыска

К 15-му сентября на розыске было:	61 человек
Вновь принято на розыск	58 человек
из коих:	
Розыск Армчека	4 человека
Розыск Ревтр. 14 Див.	52 человека
Розыск Грузчека	1 человек
Розыск Ставроп. концентр. лагеря	1 человек
Всего на розыске к 1-му октября	119 человек

Движение арестованных Армчека:

Всего к 15-му сентября было	39 человек
За полумесяц прибыло	67 человек
За полумесяц убыло	18 человек
Остается налицо	49 человек

Операции ЧЕКА Армении

По ордерам -
Без ордеров -

Сей бюллетень разослан:
1. ЦК КП Армениии
2. Совнарком
3. Наркоминделу
4. Грузчека
5. Азчека
6. В.Ч.К.
7. Кавбюро Р.К.П.
8. Ос[обый] Отд[ел] Отд[ельной] Кав[казской] Армии

Предармчека Амирханян
ЗавСОО Мелик-Осипов
Начинформации Панян
Կնիք

ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 33, թ. 84 և հակ. - 92 և հակ. - 93: Բնագիր: Մեքենագիր:

ՀՈՒՆԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

Համաշխարհային պատերազմը Թուրքիայի երիտթուրքական կառավարությունն օգտագործեց Արևմտյան Հայաստանը հայերից դատարկելու և Հայոց դատին վերջնական լուծում տալու նպատակով: Բռնագաղթվեց ու դաժանաբար սրատվեց 1,5 միլիոն հայ, որոնց մազապուրծ խլյակները ցիրուցան եղան աշխարհով մեկ: Սիրիայից հետո հայ գաղթականության երկրորդ խոշոր հանգրվանը դարձավ Հունաստանը: 1919-1920թթ. մեծ թվով հայեր Հունաստան գաղթեցին Կիլիկիայից: Գաղթականության երկրորդ խոշոր հոսքը դեպի Հունաստան տեղի ունեցավ 1919-22թթ. Թուրքիայի դեմ անգլո-հունական արշավանքի ձախողումից և մասնավորապես՝ Զմյուռնիայի կործանումից հետո (1922թ. սեպտեմբեր): Բյուրավոր հույն գաղթականների հետ Իզմիրից, Արևմտյան Թրակիայից և Մակեդոնիայից հայ գաղթականներ ևս լցվեցին Հունաստան: Ազգային մարմինների տվյալներով 1923թ. Հունաստան ապաստանած գաղթականների թիվը 53 հազար էր կազմում:

Հունական կառավարությունը լայնորեն բացեց իր երկրի դռները հայ գաղթականության առջև: Սակայն, Հունաստանի պես փոքր ու աղքատ երկրի համար դժվար էր այդքան գաղթական ընդունել, տեղավորել և աշխատանքով բավարարելը: Ահա թե ինչու գաղթականներն այստեղ հայտնվեցին ծայրահեղ ծանր պայմաններում. մեռնում էին սովից և համաճարակներից:

Հրապարակման ներկայացված փաստաթղթերը Վահան Թեքեյանի նամակներն են ուղղված Ազգային պատվիրակության նախագահ Գ.Նորատունկյանին: 1923թ. մարտին Վ.Թեքեյանը պատվիրակության հանձնարարությամբ գալիս է Հունաստան, այցելում հայահոծ գաղթականություն ունեցող մի շարք բնակավայրեր (Աթենք, Կորնթոս, Կորֆու, Բաթրաս, Սալոնիկ), ծանոթանում գաղթականների ու հայ որբերի վիճակին և պատկերը ներկայացնում պատվիրակությանը: Վերջինս էլ այն պետք է ներկայացներ Լոզանում գումարվելիք կոնֆերանսին (1922թ. նոյեմբեր-1923թ. հուլիս), որտեղ քննարկվելու էր Թուրքիայի տարածքում Ազգային օջախ ստեղծելու խնդիրը:

Փաստաթղթերին վերնագրեր չտալը պատճառաբանվում է նրանց նմանատիպ բովանդակությամբ:

Փաստաթղթերն ընտրված են ՀԱԱ-ում պահպանվող Հայ ազգային պատվիրակության ֆոնդից, տպագրվում են բնագրին հավատարիմ, կետադրական մասնակի շտկումներով:

Մարո Ավետիսյան

N 1

28 մարտի 1923թ.
Աթենք

Վսեմաշուք տիար Գաբրիէլ Նորատունկեան[1] նախագահ
հայ Ազգ[ային] Պատուիրակութեան

Տէր նախագահ,

Ստացայ Ձեր 15 մարտ թուականաւ հեռագիրն ու նամակը, որով կը յանձնարարէք ինձ այցելել Յունաստան և յունական կղզիները գտնուած որբանոցներն ու գաղթականական կայանները և յետ քննութեան Ձեզ տեղեկագրել անոնց թիւը, կացութիւնը և ներկայ պէտքերը:

Թէև մտադրութիւնս էր միայն Գորֆու այցելելէ ետք անցնել Եգիպտոս՝ բայց Ձեր փափաքին համաձայն ուղևորութեանս շրջանակը քիչ մը պիտի ընդարձակեմ այս երկրին մէջ: Այսուհանդերձ ոչ ժամանակս, ոչ Ձեր բացած վարկը կըներեն, և ոչ ալ օգտակարութիւն կայ կարծեմ, երթալ այն ամեն տեղերը, ուր հայ գաղթական կայ ներկայիս: Վաղը կը մեկնիմ հոսկէ՝ Լութրաքիա-Կորնթոս-Բաթրաս-Գորֆու ուղէգիծով. Գորֆու պիտի որոշեմ, թէ կրնա՞մ Աթէնք դառնալէ առաջ

ուրիշ մէկ քանի կետրոններ ալ այցելել, թէ ոչ՝ Աթէնքէն պէտք է վերստին մեկնիմ ուրիշ ուղղութեամբ մը:

Ցուցակ գաղթականաց.- Ձեր հեռագիրը ստացայ թէ չէ՝ խնդրեցի տեղւոյս Գաղթ[ականական] օգ[նութեան] կետր[ոնական] մարմինէն պաշտոնապէս, որ հաճի տալ ինծի իր արձանագրութիւններէն քաղուած ցուցակ մը գաղթականներու մասին, անոնց թիւով և իր ունեցած ուրիշ մանրամասնութիւններով: Կրկնակի հետապնդումներէ վերջ հազիւ 11 օր վերջ (առաջի օր) ստացայ ներփակ ցուցակը, որ ըստ յայտարարութեան պ[արոն] տնօրէնին, կէսէն վար վերի վերոյ կազմուած է և արդէն յունվարի սկիզբի թիւերը միայն կը պարունակէ:

Որբանոցներ.-Ըստ Ձեր յանձնարարութեան՝ ուզեցի mr.* Fowle–ը տեսնել: Դժբախտաբար հոս չէ: Տեսայ տնօրէն mr. Napp-ը գլխաւոր վարիչներէն miss** Hastings-ը երէկ, բաւական երկարօրէն: Տնօրէնը դառնօրէն գանգատեցաւ հայ թերթերու (մասնաւորապէս բարիզահայ թերթի մը՝ ըսաւ) խիստ և ըստ իրեն անիրաւ քննադատութիւններէն: Ըսի ինչ որ պէտք էր, յայտնեցի Ձեր յանձնարարութիւնը և աւելցուցի, թէ ի՛նչ կերպով կրնայի օգտակար ըլլալ իրենց: Պատասխանեց, թէ շատ երախտապարտ պիտի ըլլան՝ եթէ կարենանք Լութրաքիի որբերէն բաւական մեծ թիւ մը հոգը իրենց վրայէն առնել՝ խոստանալով մեզի վճարել իւրաքանչիւրին համար այժմ ծախսուած ամսական 8 տոլարին կէսը: Մասնաւորապէս դպրոցաւէրի[2] 90 աղջիկները մինչև 10 օր խնդրեց փոխադրել Սելանիկ, ինչպէս որոշ չափով յանձն առէր է եղէր արդէն Թրակիոյ առաջնորդ Երուանդ եպ[իսկոպո]ս, որ այսօր Սելանիկ մեկնեցաւ և որուն հաղորդեցի Relief-ի խնդրանքը երեկուան այցելութիւնէս վերջ: Աւելցնեմ, թէ Լութրաքիի մէջ, այդ աղջիկներէն մէկուն (18 տարեկան) վրայ կատարուած է ծանօթ դէպքը, որ է՝ աղջիկը շղթայել սիւնի մը, որբանոցին առջև, զայն ենթարկելով յոյն ստահակներու տգեղ վարմունքին և հայ տղոց միջամտութիւնն ու ըմբոստութիւնը յառաջ բերելով: Ասիկա ստուգած եմ հոնկէ եկողէ մը: Մնացեալը, ու մանաւանդ ներկայ վիճակը, վաղը անձամբ կը տեսնիմ: Որբանոցներու տեղէն և հայ որբերու թիւին մասին տնօրէնէն առած grosso modo[3] տեղեկութիւնս աւելցուցած եմ գաղթականաց ցուցակին ներքև: Ստացայ տնօրէնէն յանձնարարագրեր՝ չորս գլխաւոր որբանոցներու վարիչներուն ուղղուած, որպէսզի ինծի դիւրութիւն տան ուսումնասիրելու:

Գաղթականաց վիճակը.- Ավելորդ է ըսել, թէ տխուր է գաղթականաց վիճակը, հոս Աթէնքի և Բիրէայի մէջ տեսածներէս ու լսածներէս դատելով. ու ասոնք դեռ աւելի բախտաւորներէն էն կ'ըսուի: Բնակարան և վրան՝ փոշիի և աղտի մէջ են: Տաքը կ'սկսի արդէն և մէկ-երկու շաբաթէն վրաններուն տակ անբնակելի կ'ըլլայ բոլորովին: Համաճարակի վախով՝ իշխանութիւնները իրենք ալ պիտի չթողուն հոս՝ կ'ըսուի, և հեռու տեղեր պիտի ղրկեն մեր գաղթականները, որոնց մէջ բաւական թուով այրեր հանրային շինութեանց և այլն և աշխատելով՝ օրապահիկ մը կը հոգան քաղաքին մէջը կամ մօտը ըլլալնուն շնորհիւ և պիտի չկրնան նոյնը ընել երբ հեռանան հոսկէ: Ամերիկեան Relief-ը[4] գաղթականաց իր օգնութիւնը կ'ընէ ոչ ուղղակի իր կողմէ, այլ կառավարութեան միջոցաւ, որ տեղ-տեղ հաց և օրական մարդ գլուխ 2 տրախմի*** կուտայ անոնց: Բժշկական օգնութիւնը անբաւական է. հայ բժիշկներու (նոյնպէս գաղթական Իզմիրէն և բածարձակ չքաւոր դարձած) կը վճարեն այնքան՝ որ անոնց նուազագոյն ապրուստին կէս փոխարժէքն անգամ չէ: Գաղթ[ականական] օգ[նութեան] կետր[ոնական] մարմինը մէկ մէկ գումար աւելցուցած է երկու հայ բժիշկի ամսաթոշակին վրայ՝ զանոնք պահել կրնալու համար: Հ[այ] Բ[արեգործական] Ընդհ[անուր] Միութիւնը[5] հազիւ վրանի մը տակ ծրի բժիշկ մը զետեղած է և ինք քիչ մը կաթ և դեղ կը հայթայթէ անոր, հակառակ որ իր ներկայացուցիչը (իմ գալէս քիչ առաջ հոսկէ մեկնած) կարևոր գումար մը ունի եղէր իր տրամադրութեան տակ, զոր չէ գործածած: Գաղթական տղոց դպրոցական գործը գրէթէ բոլորովին անտեսուած է, մինչ ՀԲԸՄ-ը կրնար ասով զբաղուիլ

* mr. (անգլ.) - պարոն - Ս.Ա.:

** miss (անգլ.) - օրիորդ - Ս.Ա.:

*** դրախմա - Յունաստանի ազգային դրամ - Ս.Ա.:

օգտակարապէս:

<u>Գաղթ[ականական] օգ[նութեան] կեդր[ոնական] մարմին.-</u> Այս մարմինը, հակառակ զինք կազմող տարրերուն բովանդակ բարի-կամեցութեան և պարկեշտութեան, գործօն մարմին մը չէ, չի յաջողէր իր դերը կատարել և իրեն դէմ բուռն դժգոհութիւններու տեղի տուած է: Պատրիարքարանի նորեկ ներկայացուցիչ Սագըրեան[6] եպ[իսկոպո]ս կը խորհի զայն վերակազմել, ընտրել անոր գերադաս քաղ. ժողով մը, ինչպէս և եկեղեցւոյ հոգաբարձութիւն մը, որ լուծուած է: Խմբապետներ (Արամ-կայծակ, Կարապետ Չավուշ և այլն) մշտապէս կը յարձկին իր հաւաքատեղիին վրայ, արտասահմանէն եկած հանդերձեղէնը բռնի տանելով, դրամ պահանջելով և նախատինքներ՝ ընելով: Ասոր պատճառ՝ նախ կայ անշուշտ այդ խմբապետներուն անսպառութիւնն ու շահախնդրութիւնը, բայց կայ նաև մարմինին տկարութիւնը, որ ընդառաջ չէ գացած պէտքերու և իր քով գտնուած դրամը գործածելու լաւագոյն կերպ մը չէ գտած, բայց եթէ 20-ական տրախմիէն 400.000 տրախմի բաժնելով վատնել մօտ 20.000 հոգիի վրայ, և մնացեալ նոյնքան դրամը գուրգուրանքով պահել իր սնդուկին մէջ: Ասոր վրայ պետք է աւելցնել իր վէճերը երկու եպիսկոպոսաց և պ[արոն] Չայեանի[7] հետ, ինչպէս և իր մէջը, ու իր պաշտօնվարութեան մեծ մասամբ անյաջող կազմը: Ատենապետ պ[արոն] Ազնաւուրեան և ուրիշ 1-2 անդամներ օգտակար պիտի ըլլան նոր և աւելի զօրաւոր մարմինի մը մէջ:

<u>Կառավարական վերաբերում</u>.- Ասիկա շատ լաւ է, խտրութիւն չկայ յոյն և հայ գաղթականին միջև: Այսօր նախարարապետը ընդունելով Կարապետ եպս-ի այցելութիւնը ընկերակցութեամբ պ[արոն] Սվազլըից[8] ըսած է, թէ մինչև անկախ Հայաստանի կազմութիւնը, հայերը կրնան Յունաստանն իրենց հայրենիքը նկատել, թէ այս երկիրը միշտ բաց պիտի ըլլայ անոնց առջև և իրենք անոնց համար ամեն բան ընելու պարտաւոր են, ևն ևն: Դժբախտաբար, գաղթականներէ ոմանց արարքները սկսած են նեղել թէ՛ յոյն անհատները և թէ՛ իշխանութիւնները, որոնք կը վախցուի, որ վերջ ի վերջոյ փոխեն իրենց ներկայ լաւ վարմունքը:

<u>Զինուորական խնդիր</u>.- Թորգոմ չեզոքացուած է: Ի փոխարէն իր նախկին թիկնապահներին գնդապետ (՞)* Շահպէկեան անուն մէկը՝ ռուսահայ «Հայ սպայից միութիւն» անունով մարմին մը կազմած և դիմած է յեղափոխութեան պետ գնդ[ապետ] Բլասթիրասի, հայոց ծառայութիւնները տրամադրելով: Ստացած էր, նախապէս, քաջալերագիր մը: Հիմա ալ կ'ըսէ, թէ կանչուած և 500 հոգինոց գունդի մը կազմութեան հրահանգը առած է: Ասով, կ'ըսէ, առաջքը պիտի առնուի նաև չէթէներու կազմութեան և ինք, այս նպատակաւ, կ'ուզէ իսկոյն պտոյտ մը ընել և կը պահանջէ 20.000 տրախմի փող՝ Գաղթ[ականական] կեդր[ոնական] մարմինէն: պ[արոն] Սվազլը այս օրերս պիտի տեսնէ յեղափոխութեան պետը, անկէ ստոյգ տեղեկութիւն առնելու և եթէ ճիշտ է՝ ձեռնարկը անվնաս դարձնելու համար: Իրականութիւն է՝ որ չէթէները ինքնին կը կազմուին, տեղական զին. իշխանութեանց քաջալերութեամբ և աւելի վնասակար են: Երեկ նախարարապետը յայտնած էր՝ առաջնորդին ընկերացող պ[արոն] Սվազլըի անուղակի մէկ հարցման՝ թէ կառավարութիւնը մտադրութիւն չունի հայերը զինուորագրելու: Ուրիշ բարձրաստիճան պաշտօնեայ մը ըսած է, սակայն, թէ անգլ[իական] նաւատորմին նախ քան վերջնական հաշտութիւն, Պոլսէն հեռացման հաւանականութիւնը ջարդի վտանգին կ'ենթարկէ Պոլսոյ յոյներն և հայերը և եթէ յոյն բանակը չարգելուի՝ կրնայ իսկոյն գործողութիւն մը կատարել:

Անգլ[իական] նաւատորմին հեռացումը, այս օրերուս, արդարև աղէտ մը կրնայ ըլլալ և կը յուսամ, թէ պատուիրակութիւնը ի նախատեսութիւն արդէն իսկ ձեռնարկներ կ'ընէ Անգլիոյ մէջ՝ հանրային կարծիքին վրայ ազդելով պէտք եղածը ընելու համար:

Մօտերս կրկին կը գրեմ. հաճեցէք ընդունել, Տէր նախագահ, խորին յարգանայս և անձնուիրութեանս հաւաստիքը :

Վահան Թէքէեան

---

* Հարցական նշանը հեղինակինն է - Ս.Ա.:

Յ.Գ. Այս առաւօտ, 29 մարտ, ստացայ Ձեր քարտուղարութեան մարտ 20 թուակիր նամակը ներփակեալ 1000 ֆր-ի չեքով:

Նոյն

Ֆ. 430, ց. 1, գ. 885, թ. 15-17 և շրջ.: Ինքնագիր:

N 2

ՎԱՅԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՎ ԿՂԶԻՆԵՐԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱԳԻՐ

27 մարտի 1923թ.
Աթենք

Վայրը	Այրի			Կիներ			
	Չափահաս	Անչափահաս	գումար	Չափահաս	Անչափահաս	գումար	Համագումար
Իրակլիոն (Կրետէ)	114	60	174	177	54	231	405
Րէթիմօ	218	196	414	519	185	704	1118
Հանիա	45	26	71	77	34	111	182
Արկոռբօլի (Քէֆալօնիա)	400	230	630	523	220	743	1373
Լիօքսիրի	100	50	150	159	60	219	369
Զաքինթոս	70	35	105	110	35	145	250
Քիոս	118	141	259	227	121	348	607
Միթիլիս	548	411	959	840	310	1150	2109
Սիրա	104	100	204	155	86	241	445
Էյինա	26	32	58	56	38	94	152
Իբիոս	9	4	13	10	5	15	28
Իտրա	3	22	25	30	23	53	78
Լարիսա	236	184	420	237	131	368	788
Լավրիոն	406	207	613	399	213	612	1225
Փաթրաս	139	139	278	315	126	441	719
Վօլօ	200	100	300	274	100	374	674
Քօրֆու	700	350	1250	2100	350	2450	3500
Քալամաթիա	160	90	250	160	90	250	500
Նիսի	40	15	55	50	25	75	130
Միթոփոս	20	10	30	25	15	40	70
Միղարա	10	10	20	50	12	62	80
Բիրլօս	16	7	23	16	12	28	51
Թրիբօլի	300	145	445	400	165	565	1010
Միզաբօլի	300	145	445	400	115	565	1010
Նաքսօս	30	20	50	50	20	70	120
Լիմնօս (Քանդիօ)	25	15	40	40	20	60	100
Քիսթօս (Կորնթոս)	20	7	27	20	5	25	52
Սպաթա (Եալու)	20	9	29	22	5	27	56
	4377	2760	7137	1441	2625	10066	17203
Քօքինիա -	668	423	1161	1366	561	1927	3088

Բիրեայի արվ. Ֆիքս-Բիրեայի արվարձ	879	542	1421	1010	571	1581	3002
Բիրեա	1425	1258	2683	3029	1330	4351	7042
Աթէնք	1245	956	2201	2695	1047	3742	5943
Ֆալերօ-Աթենքի արվարձ.	568	493	1061	1487	514	2001	3062
	9162	6502	15664	17028	6648	23676	39340

1923 Յունուարի սկիզբը պատրաստած ցուցակներէն քաղած է: Անկէ ի վեր՝ աւելցած է գաղթականներու թիւը թէ՛ կղզիներու մէջ և թէ՛ մանաւանդ Աթէնք և շրջակաները: Այս ցուցակէն դուրս կը մնան նաև որբանոցներու մէջ գտնուող որբերը և որբուհիները:

Հայ Գաղթ[ականական] օգ[նութեան] կեդր[ոնական] մարմնի տնօրէն
Յ. Դարբինեան

Հայ որբերու մերձաւորագոյն թիւը հին Յունաստանի և կղզիներու մէջ, ստացուած American Neur East Relief-ի Յունաստանի կեդրոնէն, այսօրուան այցելութեանս մէջ:

Aedipsos	2000
Loutraki	1500
Syra	500
Corfou	2500
Qropos	700
	7200

Բոլոր այս տեղերու մէջ, բացի Գորֆուէն, կան նաև բազմաթիւ յոյն որբանոցներ՝ միշտ ամերիկեան Relief-էն հոգացուած: Աթէնքի Zappeon վարժարանին և արքայական հին պալատին մէջ լեցուած յոյն որբերու հետ՝ ըսին, թէ կան նաև սակաւաթիւ հայ տղեկներ: Լուտրաքիի որբանոցը մօտէրս Քեֆալօնիա պիտի տեղափոխուի:

Վահան Թէքէեան

ՀԱԱ, Ֆ. 430, ց. 1, գ. 885, թ. 4 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 3

5 ապրիլի 1923թ.
Բաթրաս

Վսեմաշուք Տիար Գաբրիել Նորատունկեան
նախագահ Հայ Ազգ[ային] Պատուիրակութեան

Տէր նախագահ,

Կը հաստատեմ Աթէնքէն 29 մարտ թուականաւ գրած նամակս:

Ինչպէս կը յայտնեի, յաջորդ օրն իսկ ճամբայ ելայ և նոյն երեկոյին հասայ Լուտրաքի: Հոն վեց օր մնացի, երեկ եկայ Փաթրաս և այս գիշեր կը մեկնիմ Գորֆու: Խորհելով թէ ընդհանուր տեղեկագրի մը առաքման համար պէտք է պտոյտիս ամբողջացման սպասել՝ որ կրնայ երկար տևել, մինչ մէկ քանի կէտեր արագ նկատարման կը կարօտին, հարկ համարեցի ճամբու ընթացքին մաս առ մաս հաղորդել Ձեզ տեսածներս:

<u>Լուտրաքիի որբանոց</u>.- Երկու հարիւրէ աւելի չափահաս-մանչ որբեր արդէն քանի մը օր առաջ ղրկուած էին Սիրիա՝ աշխատելու համար հոն Ըըլիֆի շինել տուած շէնքերուն, որոնք արհեստանոց պիտի ըլլան, իսկ իմ հասնելէս երկու օր

վերջը մեկնեցան մնացեալ բոլոր մանչերն ալ, դէպի Հալքիս, նոր կեդրոն մը: Գալով աղջկանց, որոնք 900-ի չափ էն, կը տարուին Քեֆալօնիա մինչև քանի մը օր: Դպրոցասէր տիկնանց 90 աշակերտուհիները պէտք է երթան Սելանիկ: Հեռագրեցի Երուանդ եպ[իսկոպո]ս-ին (Սելանիկ) և գրեցի օր[իորդ] Պալքազարին (Աթէնք) որպէս զի Լութրաքիի պարպումէն առաջ տէր կանգնին այս աղջկանց, զանոնք չենթարկելու համար թափառումներու աւելորդ նեղութեան: Դպրոցասէրի աշակերտուհիներուն հրաւէրով կիրակի կէսօրին բոլոր աղջկանց ներկայութեան բանախօսութիւն մը ըրի:

Ատկէ առաջ և վերջը ներկայ եղայ իրենց բացօդեայ դասերուն և այցելեցի բոլոր յարկաբաժինները, որոնք իրարու մօտ անջատ-անջատ պանդոկի շէնքերէն: Լութրաքին ծովեզերեայ, գեղեցիկ դիրքով և կլիմայով հանքային ջուրի ջերմուկ մըն է՝ ուր զարնան դարմանումի կուգան Աթէնքէն և ամեն կողմերէ:

Որբանոցի տեսչուհին mrs. Sulton Քեֆալօնիա պիտի երթայ՝ աղջկանց հետ: Կը յիշենք, թէ մեր թերթերը շատ գէշ արտայայտութիւններ ըրին իր մասին, մասնաւորապէս որբուհիի մը սիւնակապութեան պատիժին առթիւ: Այդ դէպքը ինքնին այնքան կարևոր չէ և աննշան անցած պիտի ըլլար՝ առանց միջամտութեան կարգ մը մեծ տղոց, որք կամ ոչ, որոնք Պոլսոյ մէջ ո և է հաստատութեան չպատկանելով հանդերձ՝ իբրև փախուստի միջոց ընդունուած էին ի Պոլիս, Յունաստան փոխադրուող որբերուն մէջ: Հայ պաշտօնէից վկայութեամբ՝ այդ տղաքը մեծ անկարգութեանց տեղի տուած են, և վտարուածներէն շատերը ատոնցմէ են:

Տեսչուհիին հետ երկու անգամ տեսակցեցայ: Իր մասին քաղած տեղեկութիւններս միացնելով անձնական տպաւորութեանս՝ պէտք է ըսեմ, որ թէ՛ ձեռնհաս և թէ բարի կին մըն է, մեծ կորովի տէր և աշխատանքի չափազանց ընդունակ: Կրնայ քիչ մը ջղային եղած ըլլալ, ինչպէս կ'ըսեն: Ինքն ալ շատ ազդուած է հայ թերթերու հրատարակութիւններէն: Ինչ որ մասնաւորապէս շահեկան եղաւ մեր տեսակցութեան մէջ հետևեալն է.- երբ ըսի, թէ պատուիրակութիւնդ հետաքրքրուած էր մեր աղջկանց յունարէն դաս տրուելուն և իբրև որդեգիր կամ իբրև սպասուհի յոյն ընտանիքներու մօտ զետեղման խնդրով, և աւելցուցի - ինչ որ իրականութիւնն է - թէ՝ Լութրաքիի մէջ յունարէնի ուսուցում չըլլալը և բացի մէկ դէպքէ՝ յոյն ընտանիքներուն հայ աղջիկ տրուած չըլլալը հաստատած էի գոհութեամբ, տեսչուհին պատասխանեց. - Ի՞նչ կ'ըլլայ, եթէ յոյն պարկեշտ տուներու մէջ մտնեն հայ աղջիկները: Ըլիֆէն տիկին մը յատկապէս կը քննէ խնդրողներուն պարկեշտութիւնն ու նիւթական վիճակը. հայ աղջիկները չեն կրնար, չափահաս ըլլալէ վերջ ալ, ամերիկեան որբանոցներու մէջ մնալ, թող հայ ընտանիքներ ներկայանան՝ եթէ չուզուէր որ յոյներու քով երթան: Բայց չէ՞ որ յոյներն ալ քրիստոնեայ են, ևն ևն:

- Փափկութեամբ ջանացի թուել հայկական տեսակէտէն այդպիսի ձեռնարկի մը անպատեհութիւնները, և թէև քաղաքավարօրէն տեղի տուաւ, բայց այն տպաւորութիւնը կրեցի, որ այս խնդիրը Ըլիֆի ընդհանուր ուղղութեան մաս կը կազմէ և իր պարզած իմաստով որոշում մը կայ արդէն: Պատուիրակութեանդ անկ է Ըլիֆի կեդրոնին հետ այս մասին խօսակցել, խոստանալով, ինչպէս ես ըրի, ազգային միջոցներով հետզհետէ հոգալ չափահաս որբուհիներու տեղաւորման հարցը:

Որբերու առողջական վիճակը ընդհանուր առմամբ լաւ է: Սնունդը բաւարար եղած է: Յոյները (Սև ծովու եզերքէն եկած) թէև թուով քիչ՝ բայց մերիններուն հետ խառն էին: Թրախօմ, Գոնջէ և Կալէ վարակուածներ շատ կան անոնց մէջ և եթէ անջատ ըլլային՝ մերիններուն համար լաւագոյն կ'ըլլար: Փոքրերուն մէջ, աղջիկ թէ մանչ, մեծ թիւ մը կը կազմեն բոկոտները. տնօրէնուհին յաճախ դիմած է կեդրոնին, բայց եկած կօշիկները միշտ մեծերու համար եղած են: Մանչերու տեղափոխութեան աճապարանքին մէջ՝ տարին նաև հիւանդները, ոմանք բաւական ծանր, որոնք կրնային դեռ մնալ:

<u>Փաքրասի գաղթականները</u>.- Այսօր կառք մը վարձելով այցելեցի Փաքրուսի գաղթականական կայաններէն չորսը: Թշվառութիւնը հոս աւելի է քան Աթէնք, ուրկէ հազիւ անգամ մը 3 հակ անգործածելի զգեստեղէն և ընդամենը 6000 տրախմիի գումար մը եկած է հոս՝ 6-7 ամիսէ ի վեր: Օրական 100 տրմ հաց, 2

տարեկանէ վար մանուկներուն կաթ և բացի այրերէն՝ մնացեալներուն ամսական 30 տրախմի կը բաժնէ Ըըլիֆը՝ կառաւարութեան միջոցաւ (տրուած էր միայն մարտին և շարունակութիւնը յայտնի չէ): Գլխաւոր բնակավայրերը շատ գէշ են: Անգլ[իական] կարմիր խաչը և ուրիշ անգլ[իական] ընկերութիւն մը պատահական թեթև նպաստներ կ'ընեն: Այստեղի գաղթականները Իզմիրի և նաև Իզմիթի շրջականերէն են. իրենց թիւը վերջերս աւելցած է Քեֆալօնիայէն եկողներով և կը հասնի մօտ 1000-ի:

Ընդունեցէք, Տէր նախագահ, խորին յարգանացս հաւաստիքը:

Վահան Թէքէեան

Ֆ. 430, ց. 1, գ. 885, թ. 18-20: Ինքնագիր:

N 4

5 մայիսի 1923թ.
Աթենք

Վսեմաշուք Տիար Գաբրիէլ Նորատունկեան,
Նախագահ Հայ. Ազգ[ային] Պատուիրակութեան

Տէր Նախագահ,

Պատիւ ունիմ հաստատելու հոսկէ և Բաքրասէն ուղղած երկու նամակներս. Գօրֆուէն վերդարձիս, երեք օր առաջ, հոս տայ Ձեր Մարտ 27 թուակիր գրութիւնը, որմէ յետոյ ինձի յանձնուեցաւ նաև Պատուիրակութեանդ ընդհ. քարտուղարութեան 2 ապրիլի նամակը՝ ներփակ վիճակագրական քաղուածներով:

<u>Գաղթականական</u>.- Ձեր Մարտ 27-ի նամակը ցոյց տուի, համաձայն Ձեր հրահանգին, Յունաստանի այցելու հովիւ և լիազօր քննիչ Տ. Կարապետ եպ[իսկոպո]ս Սազըրմեանի: Ն[որին] Սրբազանութիւնը Գօրֆու մեկնելէս քանի մը օր առաջ հասած էր հոս և յայտնած էր ինձի, թէ ինքն ալ շուտով պիտի այցելէ գաղթավայրերը: Ամիսուկէսէ ի վեր, սակայն, զբաղած է վարչային և խնամատարական զանազան մարմնոց կազմութեամբ և ընթացիկ գործերով և դեռ յայտնի չէ որոշապէս, թէ երբ պիտի ձեռնարկէ իր քննական պտոյտին: Ռուսաստան կամ Երևանի Հայկ[ական] նահանգը փոխադրուիլ ուզող գաղթականներու թիւը, սեռը, տարիքը, արհեստը և զբաղումը նշանակող ցուցակները, որոնք կը փափաքիք ունենալ, ինք միայն կրնայ կազմել իր այդ ընդարձակ պտոյտին պահուն, թէև կը խորհիմ, թէ սր. Մօնթկոմէրիի[9] յայտարարութիւնը տեղւոյ մասին իր անորոշութեամբը մեծապէս պիտի վարանեցնէ գաղթականները փոխադրութեան վերաբերմամբ վճռօրէն բան մը ըսելու: Մէկ քանի աղբիւրներէ ինձի տրուած տեղեկութիւնները սա կը հասկցնեն միայն, թէ ընդհանուր գաղթականներու թիւին մօտ 40 առ 100-ը առ այժմ կրնայ հոս ապրուիլ փոքր գործերով կամ իր ունեցածը ծախսելով. մինչ մնացեալ 60 առ 100-ը հազիւ 3 ամիս ևս կրնայ տոկալ և բացարձակ անսուաղութեան պիտի մատնուի, երբ մանաւանդ օտար նպաստը դադրի: Ինչպէս կանխաւ ալ գրած էի, կը ցաւիմ, որ ի վիճակի չեմ 50-ի չափ գաղթատեղիները այցելելով Ձեզի մանրամասն տեղեկագիր մը տալու: Յունական իշխանութիւնք նախապէս կարծանագրէին գաղթականներու Թուրքիոյ մէջ կրած վնասները, այժմ ալ ձեռնարկած են ցուցակներ կազմելու այն յոյն և հայ գաղթականներու անուններէն, որոնք հողամշակութեամբ զբաղած են (արմտիք, ծխախոտ, խաղող, ևլն), յուսալ տալով, թէ այդպիսիներուն համար Յունաստանի մէջ հողեր պիտի յատկացուին: Թէև անխտրաբար հայերն ալ կարծանագրեն, բայց կը հասկցուի, թէ գաղթական յունաց թիւին մեծութիւնը պիտի արգիլէ հայոց նպաստաւորումը կառավարութեան բարեացակամ տրամադրութենէն:

Առաջին նամակիս հետ ղրկուած «Հին Յունաստանի և Կղզիներու ընդհ. գաղթականաց մարդահամար»-ի ցանկը, իր տեղի, սեռի և տարիքի ստորաբաժանումներով, թէև ոչ կատարեալ բայց կը մնայ լաւագոյնը: Կը շարունակեմ խորհիլ, թէ հոս կեդրոնի կազմակերպութիւնը չափազանց թերի է. նպաստներու յատկացումը անկանոն և դանդաղ, Աթէնքի անմիջական շրջանակէն դուրս գաղթական-

ներու կացութիւնը անծանօթ կը մնայ կեդրոնին, որ 6 ամիսէ ի վեր ոչ իսկ պաշտօնեայ մը ղրկած է քննութեան. դպրոցական գործը բնաւ չէ հոգացուած. առողջապահականը բախտին թողուած է և եթէ յոյն գաղթականներու հետ բաղդատմամբ (որոնց հետ յաճախ խառն կապրին) մերինները նուազ զոհ տուած են համարձակներու ու հիմա ալ աւելի առողջ են, պատճառը պէտք է փնտռել միմիայն Հայոց մաքրասիրութեան մէջ, որ զանոնք իսկոյն կորոշէ իրենց դրացիներէն, թէև սնունդի անբաւականութիւնը և բնակավայրերու վատառողջութիւնը, սկսած է հիւծել շատերը, որոնք, յայտնի է, թէ այսուհետև աւելի դիւրին որսեր պիտի դառնան նոր հիւանդութեանց յարձակման պարագային:

Բաքրասէն վերջ տեսայ Գօրֆուի գաղթականներուն մէկ մեծ մասն ալ, կան, որ քաղաքը, մեծ շէնքերու մէջ-բերդ, մթերանոց, դպրոց և[այ]լն-խճողուած են և կան որ ցրուած են կղզիին մէջ զանազան գիւղեր: Այս վերջինները բախտաւորներ են, որովհետև օդաւէտ, բուսառատ և իրապէս գեղեցիկ դիրքերու մէջ բնակելէ զատ ապրուստի դիւրութիւններ ալ կը վայելեն: Այսուհանդերձ յատկապէս խնդրեցին ինձմէ պատուիրակութեանդ ուշադրութեանը յանձնել հետևեալ կէտերը. 1. Թուրքիոյ մէջ իրենց թողած կալուածներուն, գոյքին և ապրանքին հատուցումը: 2. Իրենց բերած քիչ մը դրամը սպառելով, մօտերս իրենց ենթարկուելիք բացարձակ թշուառութիւնը: 3. Իրենց զաւակներուն համար գէթ նախնական դպրոցներու հաստատութիւն: (Այս վերջին կէտին մասին պէտք է յայտնեմ, որ Հռոմէն երկու հայ-կաթ[ոլիկ] վարդապետներ ղրկուած են Գօրֆու, որոնք որբանոցներու կաթ[ոլիկ] տղաքը կարձանագրեն-կարձանագրուին նաև լուսաւորչականներ՝ բան մը ստանալու յոյսով- և ասկէ զատ կը խոստանան գաղթականներու մանուկներուն համար վարժարաններ հաստատել: Ի տեղեկութիւն յիշեմ, թէ Ամերիկեան Րըլիֆի Գօրֆուի երկու որբանոցներէն մէկուն ուսումնապետը հայ-կաթ[ոլիկ] և միւսինը հայ-բողոքական է, Լոնտոնի Լորտ Սէյըրս Ֆընտի մանչերու որբանոցին ուսումնապետը նոյնպէս հայ-կաթ[ոլիկ] մըն է, մինչ աղջկանց որբանոցը կը կառավարուի անշնորհք ծեր իրլանտուհիով մը (տնօրէնին և ընդհ. հաստատութեան մասին առանձին կը գրեմ կարծիքս աւելի վարը):

Գօրֆուի մէջ բաւական թուով օտար մարմիններ կօգնեն գաղթականներուն: Հացը կառավարութեան կողմէ կը տրուի, ինչպէս Յունաստանի ուրիշ կողմերը, հոս ալ Ամերիկեան մարդասիրական ընկերութեանց հաշուին: Վերջերս առաջին անգամ ըլլալով՝ օրական 2 տրախմիի հաշուով մարդ գլուխ երկու ամսուան համար 60 տրախմի բաժնուած է որոշ դասակարգութեան մը համաձայն: Անգլ[իական] ընկերութիւններ ապուր, հագուստ, օճառ ևն, կը բաժնեն բաւական կանոնաւորութեամբ և յարատևութեամբ: Հայ բարեգործական ընդհ. միութիւնը չէ երևցած հոս, մինչ Աթէնքի շրջակայքէն ետք ամենէն հոծ գաղթականութիւնը կայ Գօրֆու և 3-4 ուսուցիչով ցերեկեայ վարժարանի մը բացումը շատ ծախք չէր պահանջեր և անհրաժեշտ էր 6 ամիսէ ի վեր: Ուշ չէ, եթէ այդ գործը գնէ այսուհետև իր վրայ առնէ, քանի որ իրմէ զատ ուրիշ հայ մարմին մը չկայ այդ բանը ընելու կարող:

Գօրֆուի Հայոց հոգևոր պէտքը անտես առնուած էր մինչև Զատիկ: Ծաղկազարդին եկած էին հայ-կաթ[ոլիկ] վարդապետները, լատին եկեղեցիին մէջ հայ ծէսով պատարագելու, ինչ որ ամբողջ գաղթականութեան մէջ մեծ ոգևորութիւն մը ստեղծած էր: Աւագ ուրբաթ օրը հասաւ նաև վաղուց ի վեր Աթէնքէն ուզուած հայ քահանան, որ Զատկին պատարագեց յոյն եկեղեցւոյ մը մէջ, քաղաքը, և երկ[ու]շ[աբթի] օրն ալ Կասթուրի գիւղը, Աքիլէոն որբանոցին մօտ: Դժբախտաբար ծեր և անկարող քահանայ մըն է, որ սկսաւ ապօրէն պսակներ ալ ընել և գաղթ. ժողովը, իր ազդարարութեանց անհետևանք մնալը տեսնելով, երէկ հեռագրած էր Մազլըմեան եպ[իսկոպո]սի, որ ետ կանչէ այդ քահանան: - Զմոռնամ ըսել, որ Լորտ Սէյըրս Ֆընտի որբանոցներուն տնօրէնը կուզէ հայ եկեղեցական մը իբրև կրօնագիտութեան ուսուցիչ՝ թոշակը ինք վճարելու յանձնառութեամբ և ասկէ զատ գաղթականներու համար ուրիշ եկեղեցականի մը թոշակին ևս խոստացած է մասնակցիլ:

Որբանոցներ.-Ամերիկեան Նիր Իսթ Րըլիֆ.- Գօրֆուի մէջ միայն մանչեր են. կայ երեք հաստատութիւն. 1. Քաղաքը, ընդարձակ մթերանոցի մը մէջ, 1200 տղայ, մինչև 14 տարու, խճողուած. 2 քաղաքը, բերդի մէջ (ուր կը գտնուին նաև Լորտ Մէյըրս Ֆընտ մանչերու որբանոցը և բազմաթիւ յոյն և հայ գաղթական ընտանիքներ). արհեստանոցը բացի կօշկակարատունէն, որ ուրիշ մօտակայ շէնքի մը մէջ է և 3. Աքիլլէոնի որբանոցը, որ քաղաքէն երկու ժամ հեռու բլուրի մը կողին, Քայզէրի նախկին պալատին մէկ մասը կը գրաւէ: Արհեստանոցներուն մէջ 300 և Աքիլլէոնի մէջ 600-ի չափ տղաք կը գտնուին այժմ: Այս երկուքէն հարիւրաւոր տղաք ղրկուած են Սիրա կղզին շինութեանց մէջ աշխատելու, և մեծ մասամբ փախած են հոնկէ, բռնակրութեան տաժանքին և յոյն գործապետներու խարազանին չկրնալով տոկալ, թէև կըսուի, թէ ստահակներ ալ պակաս չէին անոնց մէջ:

Րըլիֆի այս երեք հաստատութիւններէն, արհեստանոցը լաւագոյնն է, շնորհիւ իր հայ վարիչին պ[արոն] Ճ. Թաշճեանի ձեռներեցութեան և հեղինակութեան: Դժբախտաբար բոլոր արհեստաւոր տղաքը աշխատցնելու չափ գործ չի հայթայթեր Րըլիֆը, և ասկէ զատ իր շինել տուած կօշիկները, զգեստները և կահագործական արտադրութիւնները այնքան միօրինակ ու նախնական են, որ Պոլսոյ մէջ բաւական յառաջացած արհեստաւոր պատանիները նոր ոչինչ կը սորվին և իրենց գիտցածն իսկ կը մոռնան, իրենց աշխատանքին վարձատրութիւն մըն ալ չստանալով, մինչ Պոլսոյ մէջ սկսած էին բաւական շահիլ արդէն: Ասոնցմէ 20 հոգի ինծի դիմեցին, խնդրելով ուրիշ տեղ մը փոխադրուիլ և իրենց վստահութիւնը յայտնելով, թէ գիտցած արհեստնուն շնորհիւ կրնան իրենց կեանքը շահիլ: Ասոնք մեծ մասամբ կօշկակարներ են, մէջերնին կան նաև քանի մը դերձակներ: Թէև արհեստանոցները 300 հոգի միայն կաշխատցնեն, բայց Գօրֆու եկած արհեստաւոր տղոց թիւը շատ աւելի եղած է և կը ստորաբաժանուի հետևեալ կերպով.

Կօշկակար	359
Ատաղձագործ	142
Դերձակ	96
Երկաթագործ	54
Էլեկտրագէտ	20
Մեքենագէտ	52
Լուսանկարիչ, սափրիչ, Որմնադիր, ներկարար և այլն	169
Գումար	892, որմէ հաւանօրէն 500-ը մնացած է Գօրֆու:

Քաղաքի որբանոցը, իր 1200 պզտիկ աշակերտներով, նախ հեռու է առողջապահիկ պայմանները լրացնելէ և իբրև դպրոց գէշ կազմակերպուած է: Ուսումնապետը, անփորձ երիտասարդ մը, Վենետիկի ընծայարանը թողած, Պոլսոյ մէկ որբանոցին մէջ կառավարիչ եղած է միայն: Միակ սրահի մը չորս անկիւնը չորս խումբ տղոց առանձին դաս կը տրուի միաժամանակ: Այսպէս, նաև, ուրիշ սրահներու մէջ, ուր ուսուցիչք իրար կը խանգարեն և դաս հարցնել կարելի չէ: Գրասեղան գոյութիւն չունի ոչ հոս, ոչ Աքիլլէոն: Ննջարանը յաճախ ճաշարան և միշտ դասարան է նաև: Սնունդը, նախկինին վրայ քիչ մը բարելաւուած, բայց նորէն անգոհացուցիչ է թէ հոս և թէ վերը, քիչ մըն ալ գնող պաշտօնէին (հայ, պաշտպանուած) չարաշահութեան պատճառաւ: Բաւական թուով տղաք, հոս և վերը, առանց անկողնի, տախտակին վրայ կը պառկին դեռ, մինչ Պոլսոյ իրենց անկողինններն ու մահճակալները կրնային փոխադրուիլ: Կօշիկ չունեցող և բոպիկ պտտող տղոց թիւն ալ դեռ շատ է, որովհետև կօշկակարատունը նոր կը սկսի մեծաքանակ արտադրել և հիմա ալ բաւական կաշի չի տրուիր իրեն

գործելու համար: Զգեստ և ճերմակեղէն նոյնպէս անբաւարար են թէ հոս և թէ վերը: Դասագիրքերը նոր կը սկսին հասնիլ:

Աքիլլէոնի որբանոցին գալով, այդտեղ կան, ի մէջ այլոց, Պոլսոյ երկրորդական վարժարանները յաճախող որբերը, որոնց համար նախապէս ուզուած և յայտարարուած է գոլէճական ուսմանց կազմակերպութիւն մը: Տնօրէն գնդապետ Լօ և Աթէնքէն եկած որբանոցներու վերատեսչուհի միս Հէսթինկս ինձի ըսին, սակայն, թէ ոչ գոլէճ կրնան պահել և ոչ ալ 14-էն վեր տղաք, թէ ամերիկացի նուիրատուն միմիայն պզտիկ որբերուն սնունդի և պատսպարանի համար դրամ կուտայ եղէր, թէ Հայոց համար մասնաւոր համակրութենէ մը մղուած չեն ըլլար եղէր այդ նուէրները այլ անխտիր թուրքին, յոյնին և հայուն համար, և թէ ազգը պէտք է առնէ և ինք հոգայ եղեր մեծ տղաքը: Ասիկա մեծ խնդիրն է, որուն ի պատասխան, միշտ շնորհակալութիւն յայտնելով Ըրլիֆի մատուցած մեծ ծառայութեան համար, յայտնեցի սակայն զարմանքս, յետոյ Պոլսէն զանոնք առնել բերելէ ետք կղզիի մը մէջ անտէր անպաշտպան թողլու անպատեհութիւնը և ըսի թէ ամէն պարագայի պէտք է նախապէս իմաց տան Պատրիարքարանին և Ազգ[ային] . Պատուիրակութեան, ո և է բան ընելէ առաջ: Միս Հէսթինկս պատասխանեց, թէ շատ չեն կրնար սպասել: Իր մեկնումէն ետք լսեցի, թէ բարձրագոյն երկու կարգերուն հրամայուած էր օր մը ամբողջ դաս առնելու տեղ շինութեան աշխատիլ: Նպատակը պարզ է, նեղել և յուսահատեցնել մեծ տղաքը: Այս մասին ստիպողաբար պիտի խնդրէի, որ հաճիք ոչ միայն Ըրլիֆի այդտեղ գտնուող մարդոց պէտք եղածը ազդուօրէն խօսիլ, այլև գրել Ամերիկա Պ. Մ. Գարակէօզեանի, որ կը լսեմ, թէ Ըրլիֆի կեդր. Վարչութեան անդամ ընտրուած է վերջերս, որպէս զի աւելի մարդավարի վարմունքի մը հրահանգը տան Յունաստան, մանաւանդ թէ, ինչպէս կը լսեմ, քիչ չեն Ամերիկայի մէջ Ըրլիֆի նպաստող հայերը:

Երկրորդ մեծ խնդիրը որբերու ստացած զանազան գումարները իւրացնելու նոր կարգադրութիւնն է, բոլոր որբերուն համար առ հասարակ: Նամակները կը բացուին, չէքերը վար կը դրուին առանց ստացագրի, և ինչ որ աւելի զարմանալի է տղաքներէն ստորագրութիւն կուզուի թէ ստացած են իրենց անուան եկած դրամը: Իմ դիտողութեանս միս Հէսթինկս պատասխանեց, թէ արդարև կեդրոնը այդպէս հրահանգած է, որովհետև 50-100 տոլար ստացող տղաք կան, թէ այդպիսիները պէտք է վճարեն իրենց համար և նաև իրենց չքաւոր ընկերներուն համար Ըրլիֆի ըրած ծախքը: Ըսի, թէ հեռաւոր ազգականէ կամ բարեկամէ մը մէկ անգամուան համար եկած դրամներ են ատնոք մեծ մասամբ, որոնց չմսխուելուն, քիչ առ քիչ պէտքին համաձայն տղոց տրուելուն և մեկնումի պահուն մնացածին իբրև ճանապարհածախս կամ իբրև փոքր դրամագլուխ մը յանձնումին մտածումը շնորհակալութեան արժանի է, միայն թէ տղոց որոշ բան մը ըսուած չըլլալուն, ստացագիր չտրուելուն և ստացագիր իրենցմէ պահանջուելուն համար անոնք քիչ մը վրդովուած են: Ասոր ի պատասխան էր, որ միս Հէսթինկս վերը յիշած որոշումս հաղորդեց և ես չկրցայ զարմանքս զսպել այս մասին ևս: Մոռցայ ըսելու, թէ համամիտ գտնուեցայ, որ Ամերիկա գտնուող ծնողքներէն կամ մօտաւոր ազգականներէն Ըրլիֆը պահանջէ իր ըրած ծախքը և հակառակ պարագային սպառնայ դուրս թողուլ անոնց տղաքը: «Այդ դիմումները արդէն կը կատարենք, ըսաւ, Ամերիկայի մէջ»:

Երրորդ խնդիր՝ մեկնիլ ուզող տղոց խնդիրն է: Իրենց ճանապարհածախսն և աֆիտէվիթը* պատրաստ ունեցող տղաք ամիսներէ ի վեր կը սպասեն, որ Ըրլիֆը հաճի իրենց անցագիրն հանել ու ղրկել զիրենք: Գերագոյն ծախաւերութեամբ** մը Պոլսէն ուզուած պզտիկներու համար մինչև էնկիւրիւ դիմում կատարեր է Պոլսոյ գրասենեակը և երկու ամիսէ ի վեր դեռ պատասխան չէ առեր, մինչ հոս Կարապետ եպս. կըսէ ինձի, թէ շոգենաւային գործակալութեանց հետ համաձայնութեամբ 60-70 տղայ ղրկած է արդէն և ապահով հասած ըլլալնուն լուրը առած է: Այս խնդիրին մէջ ալ անկարողութիւն և չկամութիւն տեսայ:

---

* Աֆեդիֆտ - իշխանությամբ օժտված - Ս.Ա.:

** Ջախավեր - նշանակում է անճարակ, անշնորհք, անհաջողակ - Ս.Ա.:

Գօրֆուի և թերևս ամբողջ այս կողմի ամերիկացի վարիչներուն անկարողութիւնը յայտնի է: Ոմանք քիչ-շատ մարդասէր և թերևս նաև հայասէր են, բայց շատեր թէ' անսիրտ են և թէ' անկարող: Կը կասկածիմ նոյն իսկ, թէ վերջերս թուրքերուն հաճելի ըլլալու հրահանգ մը ստացած են, զոր կը գործադրեն ընդդէմ մեզի, զրկանքով և արհամարհանքով:

Գօրֆուի մէջ բաւական խնամք կը տարուի յունարէնի ուսուցման, որուն հետզհետէ աւելի կարևորութիւն տալ կուզուի:

Րըլիֆի հայ ուսուցչութիւնն և պաշտօնէութիւնը, քիչ բացառութեամբ (խօսքս Գօրֆուի մասին է միշտ) դժբախտաբար գտնուած չէ իր դիրքին փափկութեան համապատասխան ընթացքի մը մէջ: Իր անկարողութեամբն ու անհոգութեամբը չէ կրցած դարմանել ամերիկացւոց կազմակերպչական և այլ պակասները, իր անդամներէն ոմանց թաքքի բացարձակ թերութեամբը խրտչեցուցած և նեղացուցած է զաննոք, իսկ իր պառակտումովն ու նախանձի և մրցակցութեան ոգիով մը ինքն իր մէջ մղած պայքարները ամերիկացի պաշտօնէութեան արհամարհանքը առաջ բերած են թէ իրեն և թէ որբերուն հանդէպ: Ճիշտ է, թէ առաջին օրէն սկսեալ մէկ քանիներ իրենց արժանիքէն աւելի գնահատումներու արժանացած են, մինչ մեծամասնութիւնը այնպիսի թոշակ մը և սնունդ մը ստացած է, որ անօթի, և այն ալ կղզիի մը մէջ անօթի մնացող մարդոց միայն կը տրուի: Ասկէ ոմանց գրգռութիւնը, ուրիշներու ծուլութիւնը և ոմանց ալ իրարու դէմ մեքենայութիւնները: Պաշտօնապէս 750, 850 և 1150 տրախմի են ամսաթոշակները, բայց կան նաև (հետզհետէ աւելի բազմաթիւ) երիտասարդներ 5-600-ով պաշտօնավարող: Արդէն, իբրև հետևանք մէկ կողմէ Րըլիֆի նոր քաղաքականութեան և միւս կողմէ մերիններու յանցանքին՝ վերջերս ճամբուած են 6 չափահաս ուսուցիչներ, որոնք փոխարինուած են մեծ աշակերտներով միայն: Յեղինակաւոր Յայ ուսուցչութիւն մը գոյութիւն չունի:

Աքիլլէոնի մէջ նախապէս տնօրէն եղած է բրօֆէսօր Խաչատուրեան, Խարբերդի գօլէճին մէջ երաժշտութեան ուսուցիչ, որ միաժամանակ ունեցած է Գօրֆուի միւս որբանոցին ալ ուսումնական բաժնի տնօրէնութեան տիտղոսն ու պաշտօնը, մասամբ իր անկարողութեամբ և մասամբ ալ ուրիշ պատճառաւ, հիմայ կը մնայ միմիայն իբրև ուսումնապետ Աքիլլէոնի, թէ ամերիկացւոց, թէ իր պաշտօնակիցներուն և թէ աշակերտութեան վրայ իր հեղինակութիւնը կորսուած: Ամերիկացի վերատեսչուհի մը դրուած է իր վրայ, որ թէև քիչ մը աւելի կարգ կանոն մտցուցած է որբանոցին մէջ, բայց իր վիրաւորիչ վերաբերումովը /ինչպէս տղոց իբրև սաստ. «Թուրքերը ձեզմէ աղէկ են» խօսքը/ դառնացուցած է ամենքը:

Իմ կարծիքովս, ազգը պէտք է տիրութիւն ընէ իր որբերուն. պէտք է պատշաճ ձևով հասկցնէ Րըլիֆին, թէ այս տղաքը լքուած չեն Րըլիֆին մօտ և պէտք է պահանջէ, որ որբանոցներուն հայ տնօրէնները անուանուին հայ իշխանութեանց համաձայնութեամբը և ըլլան չափով մը Րըլիֆէն անկախ: - Ուրիշ միջոց մըն է՝ Րըլիֆին ընդունիլ տալ բոլորովին իրմէ անկախ, այսինքն ազգէն վճարուած, հայ պաշտօնէի մը մշտական ներկայութիւնը Գօրֆուի մէջ, խորհրդականի հանգամանքով:

Իսկ պահել չուզուած մեծ տղոց համար՝ անհրաժեշտ է անմիջական կարգադրութիւն մը ընել: Կան անոնց մէջ Կետրոնականի, Պէզազեանի, Րոպէրթ գօլէճի և Եսաեանի ուսանողներ, որոնք պէտք է իրենց ուսումը շարունակեն, բայց չեն կրնար Աքիլլէոնի մէջ, նոյնիսկ եթէ պահուին հոն, որովհետև իրենց համար դաս չկայ գրեթէ: Արտասահմանէն միջոցներ պէտք է հայթայթուին, անոնցմէ ամենէն ընդունակները և զարգացածները Եւրոպա կամ Ամերիկա փոխադրելով, իրենց ուսումը շարունակել տալու համար: Անոնց թիւը կրնայ 20-30 չանցնիլ և անհատներու կողմէ պարսերով կրնան հոգացուիլ անոնք: Բայց ասոնցմէ դուրս՝ կայ ներկայիս հարիւրեակ մը գոնէ, որ երկրորդական ուսում պէտք է առնէ և կրնայ առնել Գօրֆուի մէջ, ուր պայմանները նպաստաւոր են, կեանքը աժան է և ուսուցիչներու մէկ կարևոր մասը պատրաստ է արդէն: Ասոր համար՝ խոնարհաբար կը թելադրեմ, որ պատուիրակութիւնը նախաձեռնէ ազգային ֆոնտ մը կազմելու, համոզուած, թէ մեր տասնեակ հազարաւոր որբերուն մէջէն մէկ-երկու

հարիւրը գոնէ, արդէն ընդունակութիւն ցոյց տուողներ, դաստիարակուելու են ազգային ոգւով և ստանալու են երկրորդական կրթութիւն մը, որովհետև ազգն ալ պէտք ունի ատոր: Այս իմաստով ես ալ իմ կողմէս կը գրեմ Եգիպտոս և այլուր:

Լորտ Մէյրրս Ֆընտի Որբանոցներ.- Նիւթապէս աւելի լաւ են, որովհետև աւելի առատ ծախսել կը թուին: Տնօրէն և տնօրէնուհի գործին մարդիկը չեն սակայն: Կը սպասուէր Տոքթ. Քէնէտիի մօտալուտ վերադարձին:

Միս Պըրճըսի արհեստանոց.- Գումգաբուի երկարամեայ հաստատութեան տեսչուհիին մաս մը հայ կանանց և աղջկանց գործ կը հայթայթէ ասեղնագործութեամբ և գորգաշինութեամբ: Երկու հարիւր կին աշխատցնող գորգի նոր արհեստանոց մը բանալու վրայ էր: Իրմէ զատուած միսըս Քրիսթի տարբեր շէնքի մը մէջ հոգայ և կը դաստիարակէ Միս Պըրճըսի բերած 20-ի չափ որբուհիները:

Միս Նիւնհըմի որբանոց.- Այս անգլուհին Սկիւտարի Favre Bojs Home-էն* (նախկին Պարտիզակի) 20-30 տղայ բերած է Գօրֆու, որոնցմէ 10-12-ը պիտի ճամբէր Անգլիա և Ամերիկա մասնաւորներու մօտ գիւղական աշխատանք կատարելու համար: Սեբաստիոյ մէջ Ըըլիֆի պահած 30 մեծ որբերը, որոնք Պոլիս եկած և Պոլսէն Գօրֆու ղրկուած են, Ըըլիֆը չէ ընդունած ու միս Նիւնհըմն է, որ առժամաբար կը հոգայ զանոնք, խնդրելով սակայն անոնց համար վերջնական կարգադրութիւն մը: Ինքն է դարձեալ, որ անգլ[իական] ընկերութեան մը կողմէ իր գտնուած գիւղին մօտ 200-ի մօտ հայ գաղթականներու օրական ապուր մը կը բաժնէ:

Խորին յարգանօք

Վահան Թէքէեան

Ֆ. 430, ց. 1, գ. 885, թ. 31-36: Ինքնագիր:

N 5

29 մայիսի 1923թ.
Աթենք

Վսեմափայլ Տիար Գաբրիէլ Նորատունկեան,
Նախագահ Ազգ[ային] Պատուիրակութեան

Տէր նախագահ,

Քանի մը օր առաջ պատիւ ունեցայ ստանալու Ձեր 16 մայիս թուակիր գրութիւնը՝ ներփակ 500 ֆր[անկ]-ի չեքով, իբրև ճանապարհածախս, նախապէս նոյն նպատակաւ ղրկուած 1000 ֆր[անկ]-ին վրայ որպէս յաւելում:

Վիճակագրական.- Ձեր նոյն գրութեան մէջ ներփակուած վիճակագրական ամփոփ ցուցակները հին Յունաստանի և կղզիներու, Թրակիոյ ու Մակեդոնիոյ մէջ գտնուող հայ գաղթականներու մասին՝ հաղորդեցի գեր[աշնորհ] Մազլըմեան եպ[իսկոպո]սին, խնդրելով, Ձեր փափաքանաց համաձայն, որ հաճի պէտք եղած ճշտումներն ընել տալ և ուղղակի կամ իմ միջոցաւ Ձեզ տեղեկացնել: Սրբազանը պատասխանեց, թէ շրջաբերական-հարցարան մը ղրկած է բոլոր կայաններու և անոնցմէ գալիք պատասխաններով, երբ վերջնական վիճակագրութիւն մը կազմէ՝ պիտի փութայ մէկ օրինակը ուղարկել Ձեզ: Իմ տեղեկութեանցս համաձայն՝ ընդհանուր գաղթականութեան թիւը քիչ փոխուած է, մեռնողներուն պակասը կը գոցուի նորեկներով, իսկ կան տեղեր, ուր գաղթական չունինք այլևս, որովհետև հոն նիւթապէս ապրել չկարենալով՝ տեղւոյն հայ գաղթականները ուրիշ կողմ մեկնած են. շարժումը այժմ կը կատարուի կղզիներէն դէպի Սիլանիկ և շրջակայքը:

Գաղթականաց վիճակը.- Յարկ կ՚զգամ աւելցնելու, թէ հայ գաղթականներու վիճակը Աթէնքի և իր անմիջական մերձաւորութեանը մէջ, օրէ օր յոռեգոյն կը դառնայ: Յայտարարուած է, որ երկու օրէն հացի նպաստն ալ կը դադրի, որով անձկութիւնը պատած է արդէն իսկ տագնապեալ ժողովուրդը: Յայ բժիշկներ կը յայտնեն, թէ մանուկներու մէջ մահացութիւնը խիստ մեծ է, մայրերուն սնունդի

---

* Լեոպոլդ Ֆավր - շվեցարացի գործիչ, հայասեր - Ս.Ս.:

անբաւականութեան պատճառաւ: Տեղ-տեղ՝ երիտասարդ կիներ և աղջիկներ կը զիջեն անբարոյ միջոցներու, միմիայն զինուորական ճաշը ստանալու համար: Գրած էի արդէն, թէ ազգ[ային] իշխանութիւնը չափազանց անկանոն և անգոհացուցիչ գործունէութիւն մը ունի՝ գաղթականաց պէտքերը գէթ մասամբ հոգալու և գէթ բարոյապէս զանոնք զօրացնելու տեսակէտէն: Նորակազմ մարմիններէն շատերը ոչ իսկ գործի սկսած են դեռ՝ անդամներէ շատերուն հրաժարման պատճառաւ: Կեդր[ոնական] մարմին են բազմաթիւ անդամներ (ընդ. որս ատէնապետ պ[արոն] Ազնաւուրեան) կը բացակայեն և դաշնակցական անդամը հոս ալ կը կատարէ իր յատուկ գործը՝ ուրիշներու տկարութենէն օգտուելով: Նախկին և ներկայ մարմինին մեծամասնութիւնները իրենց հետ ունենալով նաև սրբազանը, կը գործեն?[*] հետևեալ սկզբունքով: Ստացուած նպաստի գումարները երկար պահել, մինչև այն օրը ուր կ'ստիպուեն, ժողովուրդի պահանջման առջև, իւրաքանչիւրին (15-20.000 անձ) 10-ական կամ 20-ական տրախմի բաժնելով՝ մեծապէս պակսեցնել իրենց ունեցածը, առանց իրենց փափաքները գործադրելու և առանց գաղթականին համար ո և է օգուտի: Ո՛չ կառավարութեան և նպաստի մարմիններուն մօտ խօսող բերան մը ունին, ոչ ալ գործող պաշտօնէութիւն մը՝ գաղթականներուն համար: Իսկ պահուած դրամը (անգլ[իական] չէք և տօլար) այս օրերս իր տրախմիով արժէքը կես առ կես կորսնցուցած ըլլալուն հետևանօք՝ ազգ[ային] մարմինները, շուարած, ուզեցին դադրեցնել զատկական նուէր 10-ական տրախմիին բաժանումը այն խեղճերուն, որոնք երկու ամիսէ ի վեր իրենց կարգին կ'սպասէին, և որոնք, իրաւամբ, այժմ ըմբոստացած են իրենց եղած այս զրկանքին դէմ:

-Անհրաժեշտ է օտար և ազգ[ային] հոգածութիւն իսկոյն և էթ՝ մինչև գաղթականներու հոսկէ մեկնումը, և անհրաժեշտ է փութացնել այդ մեկնումը դէպի Յայաստան կամ այլուր, որովհետև անոնք կ'սպառին և կը փճանան այստեղ:

Յարաբերական.- Քաղաքացիացման և զինուորական յոյժ կարևոր խնդիրներուն մասին կը խորհիմ, թէ ուղղակի գրուած է Ձեզ Սելանիկէն, հաւանօրէն տեսակցած էք կամ պիտի տեսակցիք նախկին նախարարապետին, արդի արտ. գործոց նախարարին և տեղւոյդ դեսպանին հետ սա՛ խնդրոյն վերաբերմամբ, թէ Յայոց ճակատագիրը վճռուած չըլլալով և գաղթականները գոյք ու կալուած ունենալով Թուրքիոյ մէջ՝ կանխահաս է զիրենք քաղաքացի համարել և ըստ այնմ ծառայութիւններ սպասել իրենցմէ նոյն իսկ անհատաբար՝ ի գին իրենց վերջնական փճացման, մինչ դրամապէս ալ՝ հայերը չեն բաւեր իրենց թշուառ-խլեակները անօթութենէ փրկելու՝ ու՞ր մնաց ուրիշ նպատակաւ դրամ տալը: Դժբախտաբար հակառակ ուղղութիւնը քաջալերող հայրենակիցներ ալ ունինք հոս՝ որոնք մասնաւորաբար այս օրերս բաւական փափուկ կացութիւն մը ստեղծած են ընդմէջ տեղական իշխանութեանց և ազգին: Չեմ գիտէր, թէ յունօ-թուրք համաձայնութիւնը ինքնին պիտի լուծէ՞ խնդիրը՝ թէ ոչ, պիտի շարունակէ ան:

Որբախնամ գործը.- Մազլըմեան եպ[իսկոպո]ս, որ անցեալ շաբթու տեսակցած էր N. E. R. - ի տեղւոյս տնօրէնին հետ, այսօր կրկին տեսակցութիւն մը ունեցած է նոյնին հետ՝ Ձեր քանի մը օր առաջ տուած Գավալա փոխադրութեան վերաբերմամբ հեռագիրն ստանալով և ցոյց տալով: Նախ ըսեմ, որ 350 մանչ և աղջիկ, Գօրֆուէն ու Քէֆալօնիայէն այսօր Բիրեա հասած էն արդէն և երեկոյին նաւը կը մեկնի դէպի Գավալա: Տնօրէնը ըսած է, թէ իրենք ալ Ձեր հեռագիրը ստացած են, բայց ուշ: Իսկ դիտել կուտամ Ձեզ, որ անցեալ շաբթու ոչ ինք Սրբազանին և ոչ miss Hastings ինծի, այդ մասին բան մը յայտնած չէին: Ընդհակառակն miss Hastings զիս հոս սպասուցուց, որպեսզի պ[արոն] Ճէքուիթի հետ խօսիմ այդ խնդրոյ մասին և վերջէն ալ յայտնեց, թէ յիշեալը դեռ չէ եկած Պոլսէն: Այժմ, տնօրէնը ըսած է, թէ ազգը պէտք էր ծրագիր մը ներկայացնէր մեծ որբերուն մասին, թէ աղջիկները որդեգիր և սպասուհի տալու ու մանչերը գործաւոր ընելու որոշումը կեդրոնէէն բխած է կ’ն: Սրբազանը իր խօսակցութեան ամփոփոյքը պիտի ղրկէ Ձեզ: Քէֆալօնիայի յոյն թերթերուն մէջ ծանուցում մը հրատարակ-

[*] Յարցական նշանը հեղինակինն է - Ս.Ս.:

ուած է- զոր տեսանք և թարգմանել տուինք հոս-որով որդեգիր և սպասուհի ուզողները կը հրաւիրուին ներկայանալ: Իսկ Սրբազանը ստուգած է, որ այստեղէն պզտիկ հայ որբեր (4-5 տարեկան) նուիրած են ամերիկացի զբօսաշրջիկներու: Miss Hastings ինծի ուրացաւ Աթէնքի մէջ հայ որբերու գոյութիւնը, մինչ կը հաւաստուի, թէ շատեր կան: Որբերու յունացումը, նոյնպէս, կը խոստովանուի և կը գործադրուի:

Կը համարձակիմ կրկնել. թէ ազգ[ային] օգնութիւն և գործունէութիւն անհրաժեշտ է որբերը ազատելու համար: Relief-ի մարդիկը ամեն ակնածանք մէկդի դրած են հիմա՝ մեր տկարութենէն քաջալերուելով:

Մնամ խօրին յարգանօք Վահան Թէքէեան

Այս նամակս, տեղական զգուշաւորութեամբ մը, տարբեր հասցէով մը Ձեզ կ'ուղղիմ:

Նոյն

Յ.Գ. Նախագահ Kennediy-ի (լորտ Մէյըրս Ֆընտէն) և պ[ա]ր[ոն] Gaguith-ի սպասելով և յետոյ տկրանալով՝ չկրցայ պտոյտս շարունակել, որ հիմա արդէն աւելորդ և նոյն իսկ անտեղի կը դառնայ: Կ'սպասեմ արտօնագրի՝ Եգիպտոս անցնելու համար: Մազլըմեան եպս. շուտով պիտի սկսի եղեր որբանոցները այցելելու, որով իրմէ կ'իմանաք:

Ֆ. 430, ց. 1, գ. 885, թ. 41-42 և շրջ.: Ինքնագիր:

N 6

12 հունիսի 1923թ.
Աթենք

Վսեմափայլ Տիար Գաբրիէլ Նորատունկեան,
Նախագահ Ազգ[ային] Պատուիրակութեան

Ստացայ Ձեր այն հեռագիրը, որով կը յանձնարարէք հոսկէ չմեկնիլ մինչև մր. Վիքրիի հոս ժամանումը: Կը հաստատեմ պատուիրակութեանդ քարտուղարին հասցէով ղրկած վերջին նամակս:

Որբանոցներ.- Դէպքերը կը զահավիժեն: (Մազլըմեան եպ[իսկոպո]ս երեկ մանրամասնութիւնները գրեց Ձեզ՝ ի պատասխան Ձեր հեռագրին): Կացութեան ամփոփումը սա է: Տեսուչներու և տեսչուհիներու խորհրդաժողովը որոշած է մինչև յուլիս 1 սպասել և այնուհետև գործադրել խառն կրթութեան, մեծերը ճամբելու և աղջիկները որդեգիր կամ սպասուհի տալու ծրագիրը՝ որ մ[իստ]ր Նեքուիթիի ծրագիրն է և որուն համար տեսուչ մը խորհրդապահաբար ըսած է իր մէկ հայ աշխատակցին, թէ «քաղաքական ծրագիր, մըն է և թէ շատ կը ցաւի, որ հայերը «քաղաքականութեան կը զոհուին»»:

Այս որոշումը հոս գրաւորապէս չհաղորդուեցաւ ո՛չ Մազլըմեան եպ[իսկոպո]սի, ո՛չ ինծի: Չեմ գիտեր, թէ ուղղակի Ձեզ և պատրիարքարան հաղորդուա՞ծ է: Արդ ի՞նչ պիտի ընենք յուլիս 1-ին՝ որուն 18 օր կը մնայ: Իրաւ է, թէ արդէն չեն սպասեր այդ թուականին և էդիփսուսէն բերուած 21 աղջիկ հոս ցուցադրուած են երեք օր առաջ՝ հակառակ իրենց աղերսանքին, թէ կ՞ուզեն իրենց քոյրերուն և ընկերուհիներուն հետ մնալ, նոյն իսկ չարաչար աշխատելով: Պուլկարիայէն եկած հայ ամոլ մը, որ տեսած է զանոնք այդ օրը՝ երբ այսօր կրկին կը դիմէ և անոնցմէ մէկուն իբրև որդեգիր իրեն տրուելը կը խնդրէ, պատասխան կ'ստանայ, թէ ան որդեգրուած է արդէն: Իսկ խառն կրթութիւնը կը գործադրուի սա՛ կերպով՝ որ այժմ ո և է կրթութիւն չի տրուիր, հայ ուսուցիչ-ուսուցչուհիներ կը հրաժարեցուին յունարէն չգիտնալնուն համար և յոյներով կը փոխարինուին, որոնք միմիայն յունարէն գիտեն: Ի՞նչ պիտի ընենք, սակայն, յուլիս 1-էն վերջ:

Համակերպել՝ կը նշանակէ, թէ իբրև ազգ գոյութիւն չունենք այլ ևս: Ենթակայ տղայոց և աղջկանց կորուստէն զատ, պէտք է հաշտուիլ ազգին մէջ այլ ևս ամեն հաւատքի կորուստը, քանի որ մեր տղաքը մեր ձեռքով կը յանձնենք օտարին, իսպառ: Երկրորդ՝ ազգային արժանապատուութեան կորուստը օտարներուն առջև: Անհրաժեշտ է, ուրեմն, մէկ կողմէ ազդու կոչ մը ուղղել հայութեան, որպէսզի Յունաստան բերուած իր 7000 որբերը հոգայ (քիչ-քիչ տեղաւորելով յետոյ զանոնք հայերու մօտ) և միւս կողմէ բանակցիլ Ըըլիֆի հետ՝ որպէսզի անոնց պահպանութեան ծախքին կէսը հոգայ, ինչպէս կ'ընէ դպրոցասէր տիկնանց վերադարձուցած 90 աղջիկներուն համար և ինչպէս տրամադիր էր ընել մեծ մանչերուն համար, որոնց ուսումէ դադրեցնել կ'ուզէր: Երանի թէ մ[իստ]ր Վիքրիի հետ Ձեր տեսակցութիւնը այսպիսի հասկացողութեան մը շուրջ տեղի ունեցած ըլլար և ատով դարմանուէր պատրիարքարանի այն ոճրապարտ սխալը՝ որ հայ որբանոցներու հազարաւոր տղաքն անպայման հանձնեց Ըըլիֆին և այնուհետև երկար ամիսներ բացարձակապէս չհետաքրքրուեցաւ անոնցմով՝ այն գոհունակութեամբ, որ Ըըլիֆը դրամ չէր ուզեր իրմէ:

Պատճառներ ունեմ կարծելու, թէ Ըըլիֆը պիտի սթափի հայ որբերը իրմէ ետ առնելու սպառնալիքէն: Թերևս լաւ է, որ մեր որբերը մեր կողմէ խնամուելու առաջարկին մէջ՝ ընդմիջաբար միայն յիշուի ծախքին կէսը իրենք ընելու խնդիրը, և ոչ թէ իբրև պայման տրուի: Մեր նպատակն ըլլալու է՝ մեծերը մենք կրթել, Ըըլիֆի մասնակցութեամբ ծախքերուն մէջ, իսկ պզտիկները -որոնք բազմաթիւ են-իրենց հաստատութիւններուն մէջ թողուլ, յանձն առնելով մեր կողմէ ծախքին մասնակցել և ընդունել տալով իրեն՝ որ առանձին իբրև հայ պիտի կրթեն՝ մեր հսկողութեան ներքև: Եթէ մր. Վիքրի առիթ տայ ինձի, ես կը խորհիմ այս ծրագիրը պաշտպանել իր մօտ: Կը յուսամ մինչև այն ատեն ստանալ Ձեր նամակը՝ որուն մէջ պիտի տեսնեմ թէ ի՛նչպէս տեսակցած և համաձայնած էք իրեն հետ: Ամեն պարագայի մէջ, ինձի եթէ գրած չէք կամ տարբեր կերպով գրած էք, այս ծրագրին մասին Ձեր դիտողութիւնը կամ համաձատութիւնը հաճեցէք հեռագրով իմացնել ինձ մ[իստ]ր Վիքրիի գալուստէն առաջ՝ որ ամսոյս 18 ին հոս պիտի ըլլայ եղեր:

Սանասարեան վարժ[արան]ը Յունաստանի մէջ՝ մեծապէս կը զօրացնէ հոս մեր դիրքը թէ՛ Ըըլիֆի և թէ՛ յոյն կառավարութեան մօտ: Յետոյ, Յունաստան Հայկ. կեդրոն մըն է այլ ևս. մատենադարան մը՝ Պոլսէն, դիւրաւ կրնայ փոխադրուել հոս, ինչպէս Թէոդիկինը[10] որ պատրաստ է ատոր և գրեթէ լիակատար է: Եվ վերջապէս, այսօր քիչ մը սղած, բայց կեանքը միշտ աւելի աժան պիտի ըլլայ հոս, քան Եվրոպա, և աւելի ապահով՝ քան Սուրիա:

Մնամ խորին յարգանօք Վահան Թէքէեան

Ֆ. 430, ց. 1. գ. 885, թ. 46-47 և շրջ.: Ինքնագիր:

Ծանոթագրություններ

1. Նորատունկյան Գաբրիել - 1852-1936, հասարակական, քաղաքական գործիչ, դիվանագետ, ավարտել է Պոլսի Գադը գյուղի ֆրանսիական վարժարանը, Փարիզի իրավաբանական դպրոցը, Սորբոնի համալսարանի քաղ. գիտությունների դպրոցը: Զբաղեցրել է մի շարք բարձր պաշտոններ: Օսմանյան կայսրությունում, եղել է Բ դռան արտաքին թղթակցությունների դիվանի քարտուղար, իրավագետ խորհրդական: 1908թ. նշանակվել է Թուրքիայի առևտրի, ապա հանրօգուտ աշխատանքների նախարար, 1912-13-ին՝ արտգործնախարար: 1922-23-ին Լոզանի կոնֆերանսում գլխավորել է (Պողոս Նուբարից հետո) Հայ ազգային պատվիրակությունը: 1928-ից ՀԲԸՄ պատվավոր նախագահն էր:

2.Պոլսի դպրոցասեր տիկնանց վարժարան-հիմնադրվել է 1879-ին՝ Դպրոցասեր տիկնանց ընկերության կողմից Օրթագյուղում: Նպատակն էր նպաստել իգական սեռի կրթության գործին, ուսուցիչներ պատրաստել գավառային դպրոցների համար: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին

ընդհատվում է վարժարանի կյանքը: Զինադադարից հետո ընկերության ջանքերով բացվում է որբանոց-դպրոց: 1923-ին այն տեղափոխվում է Սալոնիկ:

3. Grosse modo-լատիներեն արտահայտություն, նշանակում է մոտավորապես:

4. Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտե (Ամերկոմ) (American Neur East Relief)- ստեղծվել է 1918թ. ամերիկյան մի քանի բարեգործական հաստատությունների («Սիրիայի և Պաղեստինի նպաստի հանձնախումբ», «Հայաստանի հանձնախումբ», «Պարսկական պատերազմի նպաստի հիմնադրամ») միավորմամբ: Այն տարածաշրջանում իր խնամքի տակ էր վերցրել պատերազմից տուժած տարբեր ազգերի բնակչության և մասնավորապես որբերի :

Հայաստանում Ամերկոմը գործել է 1918թ. վերջից: 1919թ. մայիսին Հայաստանի առաջին հանրապետության և Ամերկոմի միջև կնքված պայմանագրի համաձայն վերջինիս խնամքին են հանձնվել հայ որբերին:

5. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն (ՀԲԸՄ)-հիմնվել է 1906-ին, Կահիրեում՝ Պողոս Նուբարի նախաձեռնությամբ: Նպատակն էր նյութական օգնություն հասցնել կարիքավոր հայերին, աջակցել երեխաների հայեցի կրթությանն ու դաստիարակությանը 1915-ին ՀԲԸՄ մեծ օգնություն է ցույց տվել արևմտահայ գաղթականներին, հիմնել է որբանոցներ, դպրոցներ, հիվանդանոցներ, նպաստել է ներգաղթին, հայրենիքի տնտեսական ու մշակութային վերելքին: 1942-ից միության գործադիր մարմինը գտնվում է Նյու Յորքում:

6. Մազլմյան Կարապետ եպիսկոպոս - Հունաստանի հայոց թեմի առաջնորդ:

7. Չայան Տիգրան - եղել է Հայաստանի առաջին Հանրապետության ներկայացուցիչը Հունաստանում:

8. Սվազլյան Միհրան (Սվազլը) - (1863-1935) - հրապարակախոս, գրող, հասարակական քաղաքական գործիչ, իրավաբան: Սովորել է Զմյուռնիայի անգլիական քոլեջում, ապա Ֆրանսիայում: Հրատարակել է «Հայաստան» (1888-92թթ. Լոնդոն) «Դի Արմինըն հերալդ» (1917-19թթ. Բոստոն) պարբերականները, եղել է Ամերիկահայ ազգային միության հիմնադիրն ու նախագահը (1917թ., Բոստոն), աջակցել է 1918-ին ԱՄՆ-ի Կոնգրեսում Հայ դատին առնչվող ունկնդրումների անցկացմանը և Հայաստան-Ամերիկա ընկերության ստեղծմանը:

9. Մոնտգոմերի Բեռնարդ Լոու (1887-1976) - Բրիտանական ռազմական գործիչ, ֆելդմարշալ: Մասնակցել է I և II համաշխարհային պատերազմներին: 1945թ. բրիտանական օկուպացիոն զորքերի հրամանատարն էր Գերմանիայում: 1951-58-ին ՆԱՏՕ-ի զինված ուժերի հրամանատար, պարգևատրվել է բրիտանական բոլոր բարձրագույն շքանշաններով, նաև սովետական «Հաղթանակի» և «Սուվորովի I աստիճանի» շքանշաններով:

10. Թեոդիկ - Լաբճինճյան Թեոդոս Գրիգորի - (1873-1928թթ.) - հայ գրող, բանասեր, 1907-ին հիմնադրել է «Ամենուն տարեցույցը» տարեգիրքը: 1915-ին աքսորվել, բայց հաջողվել է փրկվել, հեղինակ է եղեռնին նվիրված «Ջուլումը և մեր որբերը», «Գողգոթա» և այլ աշխատությունների: Աշխատակցել է Պոլսի «Ժամանակ», «Ժողովուրդ», «Վերջին լուր» պարբերականներին:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՈՒ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (1925-1931ԹԹ.)

1915թ. մարտից թուրքական կառավարությունը սկսեց ու հետևողականորեն իրագործեց հայ ժողովրդի կոտորածներն ու բռնագաղթը: Դրա հետևանքով Միջագետքի անապատները քշվեցին հազարավոր հայեր: Արաբական անապատներում բռնի տեղահանված ազգաբնակչությանը ավելի հեշտ էր բռնություններին ենթարկել, ինչը և իրականացրին թուրքերը կազմակերպելով սոսկալի ջարդեր: Հայերի մի ստվար զանգված հայտնվել էր Բաղդադի երկաթուղու շրջակայքում գտնվող անմարդաբնակ անապատներում և բնականաբար ջարդերից բացի, հայ բռնագաղթվածների մի մասն էլ մահանում էր սովից ու հիվանդություններից:

Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին, հատկապես Իզմիրի կոտորածից հետո, Հունաստանի հայկական գաղութը ստվարացավ սպանդից փրկված և Հայաստան գաղթած բյուրավոր հայերի հետևանքով: Սակայն Հունաստանում ևս անչափ ծանր էր հայ տարագիրների վիճակը:

Հունաստանի կառավարությունը, իր իսկ՝ հույն գաղթականներին բարեբեր հողերում աշխատանքի տեղավորելու նպատակով, հայերին տեղահանում էր երկրի առավել անմշակ շրջանները: Միաժամանակ օտարահպատակները ըստ հունական օրենքի ազատվում էին պետծառայությունից և այլ աշխատավայրերից: Տնտեսական ու քաղաքական այս անտանելի վիճակի մեջ հայտնված հայ գաղթականներն ու որբերը դիմեցին խորհրդային կառավարությանը, հուսալով, որ հայրենիքում վերջապես կարող են գտնել իրենց հանգրվանը:

Անսալով Միջագետքում ու Հունաստանում հայտնված ազգաբնակչության անտանելի ծանր դրությունը, ՀՍԽՀ ժողկոմխորհին առընթեր գաղթականական հատուկ հանձնաժողովը 1925թ. ապրիլի 21-ին քննարկում է այդ երկրներից նոր ներգաղթ կազմակերպելու խնդիրը: Որոշվում է 1925թ. ընթացքում Միջագետքից ու Հունաստանից ընդունել 10.000 տարագիրներ:

Հունաստանում ու Միջագետքում վատթարագույն պայմաններում տառապող հայերի վիճակը թելադրեց, որ Հայաստանի կառավարությունը դիմի հայրենանվեր ու վճռական քայլերի և Հայաստան բերի ու փրկի իր ազգի տարագիրներին:

Հայ գաղթականության ընդունման, նրանց բնակեցման ու աշխատունակ գաղթականների աշխատանքի տեղավորման խնդիրները մշտապես եղել են խորհրդային իշխանությունների ուշադրության կենտրոնում: Այդ մասին են վկայում պարբերաբար վերին ատյաններում քննարկվող նիստերի արձանագրություններն ու ընդունված որոշումները:

Առանձնակի ուշադրություն էր դարձվում Հունաստանից ու Միջագետքից ներգաղթող հայությանը, քանի որ նրանց վիճակը առավել անմխիթար ու ծանր էր:

ՀՍԽՀ ժողկոմխորհի միջնորդությամբ 1924թ. մարտի 3-ին Անդրկենտգործկոմի նախագահությունը որոշում է կայացնում 1924-25թթ. ընթացքում արտասահմանից՝ հիմնականում Հունաստանից, Միջագետքից ու Թուրքիայից, Խորհրդային Հայաստան ընդունել 10.000 գաղթականների և նրանց տեղավորել Սարդարապատի արևելյան մասերում՝ նախապես այն դարձնելով ոռոգելի:

ՀՍԽՀ ժողկոմխորհը 1924թ. հոկտեմբերի 15-ին քննարկում է Հայաստան ներգաղթող 10.000 գաղթականների ընդունելության, տեղավորման, հողի հետ կապելու և այլ միջոցառումների մասին ներքգործժողկոմատի զեկուցումը: Որոշվում է այդ նպատակով լրացուցիչ գումար խնդրել Անդրֆեդերացիայի ժողկոմխորհից և միութենական կառավարությունից[1]:

1924թ. մարտի 29-ից մինչև 1925թ. հունվարի 19-ը ընկած ժամանակահատվածում Հայաստան են ժամանել 3051 սփյուռքահայեր: Նրանց 50 տոկոսը արհեստավորներ էին, 12 տոկոսը՝ ծխախոտագործներ, 16 տոկոսը՝ շերամապահ-

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 305, թ. 39:

ներ, 2 տոկոսը՝ մտավորականներ, իսկ մյուսները՝ այլ զբաղմունքի տեր աշխատավորներ[1]:

ՀՍԽՀ Ներքգործժողկոմատն ու հողժողկոմատը մանրամասն ուսումնասիրելով ներգաղթողների վիճակն ու նրանց կարիքները 1925թ. մարտին զեկուցագիր են ներկայացնում ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողովին: Զեկուցագրում նշված էր, որ 1924թ. Կ.Պոլսից, Միջագետքից, Հունաստանից եկած գաղթականները գտնվում են ծայրահեղ կարիքի մեջ:

Երկրում կուտակված գաղթականության և հատկապես ներգաղթողների հետ տարվող աշխատանքները լավագույնս կազմակերպելու, կենտրոնացնելու և ընդարձակելու նպատակով, 1925թ. հունվարի 28-ին որոշում կայացրեց ժողկոմխորհին առընթեր ստեղծել գաղթականական հատուկ հանձնաժողով, որի նախագահ նշանակվեց ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա.Մռավյանը, անդամներ՝ Գ.Պարզյանը, Ս.Շադունցը, Ա.Կոստանյանը, քարտուղար՝ Գ.Անտելեպյանը:

ՀՍԽՀ ժողկոմխորհին կից ստեղծված գաղթականական հատուկ հանձնաժողովը բազմիցս անդրադարձել է այդ գաղթականների խնդիրներին ու անկախ պետության առջև ծառացած բարդ իրավիճակների, կարողացել է հնարավորինս լուծել նրանց առօրեական հարցերը, որոշ արտոնություններ տալով նրանց:

Հանձնաժողովի գործունեության շնորհիվ հետագայում իրենց լուծումները ստացան գաղթականությանը վերաբերող մի շարք սկզբունքային խնդիրներ:

Վերոհիշյալ հանձնաժողովի՝ ներգաղթի աշխատանքներին առավել մեծ թափ հաղորդելու նպատակով, այն վերակառուցվում է: Ստեղծվում է ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողով, որին տրվեցին ավելի մեծ իրավունքներ ու լիազորություններ[2]:

1925թ. Հայաստան ներգաղթած գաղթականների մի տեղեկագրից տեղեկանում ենք, որ տվյալ տարում Միջագետքից Ջուլֆայի վրայով Հայաստան է եկել 371 շունչ, Կ. Պոլսից Բաթումի վրայով՝ 680 շունչ, Հունաստանից՝ 3123[3]:

Ներքգործժողկոմատի՝ աշխատավորական ներգաղթի հանձնաժողովին ներկայացրած տեղեկագրում նշված է, որ մինչև 1926թ. ապրիլի 15-ը ընդունված 17.452 շունչ, որոնցից 1922թ.՝ 9192, 1923թ.՝ 932, 1924թ.՝ 2645, 1925թ.՝ 4683: 1921 թվի ներգաղթի վերաբերյալ տվյալներ չի նշված, քանի որ ստույգ թվական տվյալներ չկան[4]:

Գաղթականների խնդիրներով զբաղվել են նաև ՀՍԽՀ ժողտնտխորհը, Ներքգործժողկոմատը, Հողժողկոմատը և այլ պետական բարձրագույն մարմիններ, յուրաքանչյուրն իր գծով նեցուկ լինելով հայ գաղթականությանը:

Ստորև ներկայացվող փաստաթղթերի հավաքածուն ներկայացնում է վերոհիշյալ ժողկոմատների գաղթականության ուղղությամբ կատարած աշխատանքների մի փոքր հատվածը:

Հրապարակվող փաստաթղթերը ներկայացված են՝ բնագրին հարազատ, կատարված են զուտ ուղղագրական ու կետադրական որոշ շտկումներ:

Մարինե Մարտիրոսյան
ՀԱԱ բաժնի վարիչ

Գոհար Ավագյան
պատմական գիտությունների
թեկնածու

---

[1] Հ.Մելիքսեթյան, Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան, Երևան, 1975, էջ 156:
[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 415, թ. 13:
[3] Նույն տեղում, գ. 337, թ. 31
[4] Նույն տեղում, թ. 7:

N 1
ՔԱՂՎԱԾՔ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻՆ ԿԻՑ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ՄԻՋԱԳԵՏՔԻՑ ՈՒ ՀՈՒՆԱՍՏԱՆԻՑ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 ապրիլի 1925թ.
Երևան

1. Լսեցին. Միջագետքից և Հունաստանից գաղթականություն ընդունելու մասին:

(Զեկուց. ընկ. Մռավյան)[1]

1. Որոշեցին. ա) Ընդունել այս տարվա ընթացքում Միջագետքից և Հունաստանից 10.000 գաղթականներ, հանելով այս թվից անցյալ տարվա ընթացքում ընդունված 1.500 հոգուն:

բ) Միջագետքից շուտով ժամանելիք 800 գաղթականների սահմանից ընդունելը և իրենց հատկացված վայրերում տեղավորելը, առաջարկել կատարելու Ներքգործժողկոմատին՝ տեղերի բաշխումը համաձայնեցնելով Հողժողկոմատի ցուցմունքներին:

գ) Հունաստանից ընդունվելիք գաղթականների վերջնական թիվը սահմանել 8.000 հոգի, ընդունելով գաղթականներ՝ բացառապես Հունաստանից:

դ) վերոհիշյալ 8.000 գաղթականների ընդունման, տեղավորման և ինքնապահ դարձնելու խնդիրների մասին առաջարկել Ներքգործժողկոմատին և Հողժողկոմատին մի շաբաթվա ընթացքում ներկայացնել մանրամասն զեկուցում:

ե) վերոհիշյալ 8.000-ից հանձնաժողովին վերապահել 500 հոգի՝ անհատական դիմումներ բավարարելու համար:

զ) ընդունվելիք գաղթականների մեջ առավելություն տալ արհեստա-վորներին և մասնագետներին, որոնց ցուցակն ուղարկել ընկ. Շահվերդյանին[2], այլև գյուղատնտեսական բարձր կուլտուրայի վարժ գյուղացիներին:

է) Խնդրել ժողկոմխորհի նախագահ ընկ. Լուկաշինից սույն որոշումների առթիվ անել համապատասխան կարգադրություն Պոլսում Շահվերդյանին:

ը) գաղթականների տեղափոխության ընթացքում բժշկական օգնության կազմակերպման հարցը խնդրել կազմակերպել «Կարմիր Խաչի» ընկերությանը:

Նախագահ՝ Մռավյան
Քարտուղար՝ Անտելեպյան[3]

Ֆ. 123, ց. 5, գ. 28, թ. 32: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 2
ՔԱՂՎԱԾՔ ՀՍԽՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՈՒ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 ապրիլի 1925թ.
Երևան

Լսեցին.

34. Ներքգործժողկոմի դիմումը՝ գաղթականության ընդունելության և տեղավորման համար միջոցներ հատկացնելու մասին: (Տես Ներգործժողկոմատի նո. 1273 գրությունը):

(Զեկուցող ընկ. Դուրգերյան[4])

Որոշեցին.

34. Գտնել, որ այդ նպատակի համար իբրև ուղեցույց գումար կարելի է հատուկ տրամադրել 30.000 (երեսուն հազար) ռուբլի:

Այդ գումարից ամեն անգամ պետք է բաց թողնել կարգադրիչ նիստի հատուկ որոշմամբ:

Տնտեսական Խորհրդակցության նախագահ՝ Ս.Լուկաշին[5]
Տնտեսական Խորհրդակցության գործերի կառավարիչ՝ Գ.Պարզյան[6]
Տնտեսական Խորհրդակցության քարտուղար՝ Ա.Խանլարյան
Ինֆորմացիոն ենթաբաժնի վարիչ՝ [Ա.]Մանուչարյան[7]

Ֆ. 123, ց. 5, գ. 28, թ. 48: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 3
ՀՍԽՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂԿՈՄԱՏԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ՝ ՆԵՐԳԱՂԹԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

9 մայիսի 1925թ.
Երևան

Ներքգործժողկոմատը հայտնում է, որ արտասահմանից վերադարձողների թույլտվություն ստանալու համար սահմանված է հետևյալ կարգը.

Հայաստանում ապրող այն քաղաքացիները, որոնք ցանկանում են արտասահմանում գտնվող իրենց որևէ ազգականի կամ բարեկամի համար վերադառնալու թույլտվություն ստանալ, գրավոր դիմում է իրենց գավառի գործկոմին՝ հետևյալ ձևով. դիմումի մեջ պետք է հայտնել, թե երբ և ինչ պայմաններում է տվյալ անձնավորությունը արտասահման գնացել. ներկայումս նա արտասահմանում ինչով է պարապում. նրա ճիշտ հասցեն, տարիքը. բացի այդ դիմում տվողը պետք է գրի, թե իր ազգականի կամ բարեկամի վերադառնալու դեպքում ինչով է ապահովվելու նրա ապրուստը (նյութական տեսակետից) մեր երկրում: Պետք է, եթե հնարավոր է, դիմումի հետ ներկայացնել վերդարձողի լուսանկարը՝ 2 օրինակից: Դիմումի մեջ պետք է նշանակված լինի նաև դիմում տվողի ճիշտ հասցեն, բայց պետք է գրել, թե ինչ հանգամանքներից դրդված է նա ցանկանում իր բարեկամին կամ ազգականին վերադարձնել մեր երկիրը, կամ թե ինչ պատճառներով են այդ մարդիկ իրենք ցանկանում վերադառնալ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Դիմումները պետք է գրված լինեն պարզ, մաքուր և եթե հնարավոր է ռուսերեն լեզվով, որովհետև հետագայում այդպիսին ուղարկվելու է Անդրկովկասյան արտաքին գործերի լիազորությանը:

2. Այդպիսի դիմումները զեկուցվելու են գավառական գործադիր կոմիտեի նախագահության նիստերին և համապատասխան որոշումներ են հանվելու արտասահմանից վերադարձող քաղաքացիների վերաբերյալ, այդ որոշումներից առաջ. նախագահությունը գլխավորապես ուշադրության է առնում հետևյալ հանգամանքները, թե վերադարձողը որքան պիտան կարող է լինել մեր երկրի շինարարության գործին և վերադարձողը նյութապես ապահովված է թե ոչ և որքան ժամանակով: Այդ հարցերը բավարար լուծում ստանալուց հետո, գործադիր կոմիտեն տալիս է իր համաձայնությունը և ամբողջ գրագրությունները գործկոմի եզրակացության հետ միասին ուղարկում է Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի արտաքին ենթաբաժնին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - Գյուղերում կարելի է ընդունել այդպիսի դիմումները և Գերագույն Խորհրդի եզրակացությամբ ուղարկել Գավգործկոմին և ապա վերջինիս որոշման հետ միասին Ներքգործժողկոմատ:

Այդ բոլոր ձևականությունները կատարելուց հետո, Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը կատարելով որոշ լրացումներ, գործը ուղարկում է Անդրկովկասյան արտաքին գործերի լիազորությանը՝ համապատասխան միջնորդությամբ, որ տվյալ քաղաքացին վերադառնալու իրավունք ունենա արտասահման-

յան ներկայացուցչի աջակցությամբ: Այս կարգադրությունը խնդրվում է հայտնել Ձեր ենթակա բոլոր պետական մարմիններին:

Ներքգործժողկոմ՝ Դուրգերյան
Արտաքին ենթաբաժնի վարիչ՝ Արծրունի
Քարտուղար՝ Բաբայան

Ֆ. 134, ց. 2, գ. 559, թ. 153: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 4
ԱՆԴՐՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ ԼԻԱԶՈՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ.ԱՆՏԵԼԵՊՅԱՆԻՆ՝ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

30 մայիսի 1925թ.
Երևան

Մի շարք հարցումների հետևանքով բաժինս վերադարձնելով ժողկոմխորհի Ձեզ ուղղված գաղթականներին պետական հարկերից ազատելու մասին, ապրիլի 20-ի N 5480 գրությունը, Լենինականում բնակվող գաղթականների դիմումի հետ միասին, հայտնում է հետևյալը.

Գաղթականներին հարկերից ազատելու մասին մեկ ընդհանուր որոշում գոյություն չունի: Հայկենտգործկոմի և ժողկոմխորհի 1924թ. դեկտեմբերի 19-ի որոշման համաձայն՝ սկսած 1925 թվից, 3 տարի ժամանակով ազատվում է պետական և տեղական ամեն կարգի տուրքերից և հարկերից, միմիայն գյուղերում հող ստացած գաղթականությունը:

Այդպիսով. քաղաքներում բնակվող և գյուղերում ոչ հողագործությամբ զբաղվող գաղթականությունը ենթակա է հարկերի՝ ընդհանուր հիմունքներով:

Վերջերս, ԽՍՀՄ Կենտգործկոմի և ժողկոմխորհի ս.տ. ապրիլի 10-ի և մայիսի 12-ի որոշումներով, տնայնագործների, արհեստավորների և մանր առևտրականների համար սահմանված են մեծ հարկային արտոնություններ, որոնք կիրառվում են և գաղթականության վերաբերյալ:

Բաժնի կառավարիչ՝ Սոկոլով
Ուղղակի Հարկային ենթաբաժնի վարիչ՝ Մատուսևիչ
Հաշվապահ՝ Սարգսյան

Ֆ. 113, ց. 43, գ. 332, թ. 42: Բնագիր: Մեքենագիր:

N 5
ВЫПИСКА ИЗ ПРОТОКОЛА ЗАСЕДАНИЯ КОМИССИИ СТО* О НЕКОТОРЫХ ЛЬГОТАХ ВОЗВРАЩАЮЩИХСЯ ПЕРЕСЕЛЕНЦЕВ В АРМЕНИЮ

10 июня 1925г.
Москва

Слушали.

1. О разрешении переселенческой Комиссии при СНК АССР получить беспошлинно иммигрантские грузы.

Докл. т. Исаханян

Вызваны: Председатель ЗСФСР и Глав. Там. Управления.

---

* Постоянная комиссия совета труда и обороны по трудовой сельско-хозяйственной и промышленной иммиграции и эмиграции - Ս.Ս.:

Постановили.

1) Считать, что беженцы армяне, возвращающиеся в законном порядке обратно в Армению, с разрешения Армянского Совнаркома, должны пользоваться льготами по провозу имущества и багажа в порядке, в каком освобождаются от пошлины и акциза иммигрантские и реэмигрантские грузы (на основании декрета ЦИК и СНК СССР от 31/III-25г. (С. 3. СССР, 1925г. N 23, ст. 152) о льготах трудовым с.-х. и промышленным иммигрантам и реэмигрантам и инструкции СТО от 16/VIII-23г.).

Удостоверения в том, что это действительно иммигранты и реэмигранты и что они подпадают под существующие льготы, выдаются Совнаркомом Армении с последующим о том извещением Комиссии с СТО по иммиграции, причем в этом извешении должен быть указано:

2) Данное постановление Коммиссии считать распространяющимся на реэмиграцию в Армению беженцев, в пределах до 10.000 чел. , считая и то количество, которое в счет этой суммы прибыло до настоящего времени. В случае, если у Армянского Совнаркома появятся новые контингенты реэмигрантов, то дополнительно вопрос вносится на обсуждение КОМСТО.

3) Просить Наркомвнешторг отдать соответствующие распоряжения в местные таможенные органы на границах Персии и Турции.

4) Настоящее постановление Комиссии СТО поручить Секретариату, в 2-3 дневный срок согласовать с Наркомвнешторгом по Главному таможенному управлению.

Председатель Смольянинов
Секретарь Володкович

Ф. 113, оп. 3, д. 337, л. 12: Заверенная копия. Машинопись.

N 6
ՔԱՂՎԱԾՔ ՀԱՍԽՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 հունիսի 1925թ.
Երևան

Լսեցին.

34. Գաղթականական հողային ֆոնդ ստեղծելու մասին: (Մտցնում է Պետպլանի նախագահությունը համաձայն ԱՍՖԽՀ Մոսկվայի լիազոր ներկայացուցչության 6 դեկտեմբերի 1924թ. N 40/46, Անդրկովկասի Գերագույն Տնտեսական Խորհրդի 17 դեկտեմբերի N 05329, Ներքգործժողկոմատի 20 դեկտեմբերի N 652, Հողժողկոմատի 7 հունվարի N 2638 և իր՝ 1925թ. հունիսի 9-ի նիստի N 34 արձանագրության 5-րդ կետի որոշման):

Զեկուցող ընկ. Ա. Քարամյան

Որոշեցին.

34. Պետպլանի զեկուցումը այդ մասին առնել ի գիտություն:

Լսեցին.

40. Հունաստանից սպասելիք 5.000 (հինգ հազար) հոգի գաղթականների ընդունելության խնդիրը:

Բանավոր զեկուցում ընկ. Լուկաշինի

Որոշեցին.

40. Առաջարկել գաղթականական հանձնաժողովին, բազմակողմանի պատրաստել այդ հարցը և ներկայացնել տնտեսական խորհրդակցության հետևյալ նիստին:

Տնտեսական Խորհրդի նախագահ՝ Ս.Լուկաշին
Գործերի կառավարիչ՝ Գ.Պարզյան
Քարտուղար՝ Խանլարյան

Ֆ. 123, ց. 5, գ. 28, թ. 39: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 7
ՔԱՂՎԱԾՔ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝
ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

8 հուլիսի 1925թ.
Երևան

Լսեցին.
1. Ներքգործժողկոմատի զեկուցումը գաղթականության շարժման մասին: (Տես ժողկոմխորհի ս.թ. հուլիսի 1-ի նիստի N 20 արձանագրության 3-րդ կետի որոշումը): Զեկուցող ընկ. Ա. Քեթիկյան:
Որոշեցին.
1. ա) Հանձնարարել ժողկոմխորհին առընթեր գաղթականական հանձնաժողովին երկու շաբաթվա ընթացքում ուսումնասիրել գաղթականների շարժման մասին եղած բոլոր նյութերը, ինչպես և Ներքգործժողկոմատի կողմից ներկայացրած գաղթականների ընդունելության և տեղավորելու հետ կապված ծախքերի նախահաշիվը, որից հետո հարցը փոխադրել Պետպլան՝ մի շարք տարիների, պերսպեկտիվ ծրագրի մեջ մտցնելու այն հաշվով, որպեսզի 1925-26 բյուջետային տարվա նախահաշվի մեջ մտնի անհրաժեշտ գումարը:
բ) Հայգյուղկոոպի ուշադրությունը հրավիրել գաղթականներից գյուղատնտեսական արտելներ կազմակերպելու, ինչպես նաև այդ արտելներին վարկային սկզբունքներով անհրաժեշտ գույք մատակարարելու վրա:
գ) Առաջարկել Հողժողկոմատին՝ ներկայացնել մանրամասն տվյալներ ու ծրագիր, գաղթականությանը հողով բավարարելու համար:
դ) Այդ նպատակով միջնորդություն հարուցել Անդրժողկոմխորհի առաջ նախնական ու անհետաձգելի կարիքները բավարարելու համար միջոցները բաց թողնելու մասին
Գումարի քանակը հանձնարարել պարզել ԺԿԽ կարգադրիչ նիստին:

Ժողկոմխորհի նախագահ՝ Ս.Համբարձումյան[8]
Ժողկոմխորհի գործերի կառավարիչ՝ Գ.Պարզյան
Ժողկոմխորհի քարտուղար՝ Պ.Աբաբեկյան

Ֆ. 123, ց. 5, գ. 28, թ. 49: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 8
ՔԱՂՎԱԾՔ ՀՍԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՓՈՔՐ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25 օգոստոսի 1925թ.
Երևան

Լսեցին.
4. Համամիութենական վերաբնակման կոմիտեում Հայաստանից ներկայացուցիչ նշանակելու մասին:
(ՀՍԽՀ Հողժողկոմատի ս.թ. օգոստոսի 14-ի N 1612-16255 գրությունը):
(Զեկ. ընկ. Գ. Պարզյան):
Որոշեցին.
4. ՍԽՀՄ-ի կառավարությանն առընթեր ԱՍՖԽՀ-ի մշտական ներկայացուցիչ ընկ. Ս.Տեր-Գաբրիելյանին[9] հաստատել Միութենական վերաբնակման կոմիտեում Հայաստանի ներկայացուցիչ:

Հայկենտգործկոմի նախագահ՝ Ա.Կարինյան[10]
Ի տեղի Հայկենտգործկոմի քարտուղարի՝ Գ.Պարզյան
Դիվանապետ՝ Նուրիջանյան

Ֆ. 123, ց. 5, գ. 28, թ. 46: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 9
ՀՍԽՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂԿՈՄԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԺՈՂԿՈՄԽՈՐՀ՝ ՀՈՒՆԱՍՏԱՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐԳԱՂԹՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոկտեմբեր 1925թ.
Երևան

ա. Հունաստանից Հայաստան ներգաղթող 3.000 հոգի գաղթականության համար, Ներքգործժողկոմի կողմից շուտափույթ կերպով ձեռք են առնված այն բոլոր հնարավոր միջոցները, որոնք անհրաժեշտ են գաղթականության ժամանման և առաջին տեղավորման միջոցին:

Գաղթականությունը որպես կայանի, ժամանակավորպես տեղավորվելու է Դավալու[*] գյուղին կից հողամասում, որի համար գնված, զանազան տեղերից ձեռք է բերված ամերիկական սիստեմի 52 հատ վրաններ, շարժական խոհանոցներ, 3 հատ ջուր եփելու բակեր-15 վեդրանոց՝ 3 հատ, ջրի մատակարարման տակառներ 30 վեդրանոց՝ 3 հատ, վառարաններ՝ 60 հատ, լապտերներ՝ 15 հատ, դույլեր՝ 50 հատ, լամպեր՝ 30 հատ, կացիններ՝ 10 հատ, սղոցներ՝ 5 հատ, փորիչներ՝ 25 հատ: Իսկ կառուցվածքի համար փայտեղեն՝ 4 վագոն, վառելիք՝ 6 վագոն:

բ. Գաղթականությանը ընդունելու և տեղավորելու համար Ներքգործժողկոմի կողմից կազմված է մի կոմիտե՝ կոմկուսակցության անդամ ընկ. Ա. Մանուկյանի նախագահությամբ, և այդ կոմիտեն ներկայումս գտնվում է Դավալու գյուղում, որը արդեն սկսել է ի կատար ածել իր վրա դրված պարտականությունները ըստ Ներքգործժողկոմի կողմից տրված հրահանգների:

Վերոհիշյալ կոմիտեն յուր ժամանակին ընդունել է գաղթականության կարիքների համար անհրաժեշտ գույքը, կարգավորել և զորանոցի կարգով դասավորել վրանները, հոգ է տարել կարգավորելու խմելու ջրի մատակարարումը, հայթայթելու հարցը, որի համար կապ է հաստատելու տեղական կոոպերատիվի հետ: Նույն կոմիտեն ըստ Ներքգործժողկոմի ինստրուկցիաների և հրահանգների նախածրագրելու է գաղթականության հետագա տեղավորումը Արազդայանի շրջանում, հաշվի առնելով շրջանում եղած քիչ ծախս պահանջող բնակության համար տները: Կոմիտեն աշխատում է կոնտակտ ստեղծել տեղական կուսակցական և վարչական օրգանների հետ, պարզաբանելու տեղացիներին, որ սպասվելիք գաղթականության համար Դավալուն ծառայելու է իբրև ժամանակավոր կայան:

Նաև հրահանգվում է կոմիտեին, ճիշտ կերպով որոշել իր յուրաքանչյուր անդամի ֆունկցիաները, բաժանել աշխատանքը իրար մեջ, արդյունավետ դարձնելու համար:

գ. Այս բոլորից հետո, բնականորեն առաջ է գալիս գաղթականությանը վերջնականապես տեղավորելու հարցը, որը մեծապես կախված է Հողժողկոմատի ապագա անելիքներից, որին Ներքգործժողկոմը մի դիմում է ուղարկել վերջնականապես որոշելու նրանց համար տրամադրվող գյուղերը, յուրաքանչյուր գյուղում տրամադրվող շնչերի և հողամասերի քանակը:

Սպասվող գաղթականության եթե ոչ բոլորը, գոնե մեծամասնությունը, անշուշտ կունենան զանազան արհեստներ և գյուղատնտեսական մասնագիտություններ: Անհրաժեշտ է այդպիսիներին վաղօրոք միություններ կազմակերպել և հատկացնել համապատասխան հողամասեր:

Որպեսզի տեղավորված միությունները հանդես գան որպես տնտեսական և արտադրողական արտելներ, անհրաժեշտ է միջնորդել գյուղատնտեսական և կոմունալ բանկերին, համաձայն Հայկենտգործկոմի և Ժողկոմխորհի համապատասխան որոշումների, ձեռնտու պայմաններով վարկավորելու նրանց գյուղատնտեսական մեքենաներով: Միևնույն ժամանակ դյուրություններ ստեղծել և ար-

[*] Այժմ՝ Արարատ:

հեստավորների համար, ցուցակագրելով նրանց արհեստի ձևը, տալով համապատասխան աշխատանք:

դ. Իրենց զանազան մասնագիտությամբ, գաղթականությունը մեծապես նպաստելու է մեր երկրի արդյունաբերության և հողի կուլտուրապես մշակմանը: Եթե ստեղծվեն նրանց համար համապատասխան հարմարություններ, որը անելիքներ ունի ջրային վարչությունը, տալով նրանց ջուր, կարգավորելով ջրաբաշխումը՝ դաշտերը ոռոգելու համար: Ուստի խնդրում ենք ժողկոմխորհին, առաջարկել ջրային վարչությանը, շուտափույթ կերպով համաձայնեցնել հարցը հողժողկոմի հետ, ջրաբաշխումը կանոնավորելու համար, կարգի բերել առուների սիստեմը, որով բնականորեն գաղթականության համար անմիջապես կստեղծվեն աշխատանքներ:

ե. Տեղական իշխանությունը յուր հերթին պետք է անպատճառ ցույց տա ջերմ ու սիրալիր վերաբերմունք և չխնայի իրենից կախված անհրաժեշտ աջակցությունները, անշեղ կերպով կատարի կենտրոնից եղած հրահանգները, աշխատի սերտ կերպով կապել գյուղացիությունը տեղացիների հետ և ուժեղացնի նրանց շփումը, որի համար ներքգործժողկոմը տեղական իշխանությանը այդ մտքով կտա հրահանգներ:

Ինչ վերաբերում է գաղթականության բժշկասանիտարական գործին, ներքգործժողկոմը արդեն համաձայնության է եկել առժողկոմի հետ, գաղթականության տեղավորման վայրում կազմակերպել բժշկասանիտարական կայաններ:

Ուստի Ներքգործժողկոմը միջնորդում է խորհրդիդ մոտ, շուտափույթ լուծում տալու զեկուցման մեջ շոշափված խնդիրներին:

Ներքգործժողկոմ՝ Դուրգերյան

Ֆ. 113, ց. 43, գ. 130, թ. 7: Պատճեն: Մեքենագիր:

N 10
ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՆԵՐԳԱՂԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՈՒՆԱՍՏԱՆԻՑ ՈՒ ԲԱՂԴԱԴԻՑ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

10 նոյեմբերի 1925թ.
Երևան

Լսեցին

1. Զեկուցում Հունաստանից և Բաղդադից եկած գաղթականների ընդունման տեղավորման և հարակից խնդիրների մասին: (Տես Ներքգործժողկոմատի N 6217 գրությունը և Ուստինովի N 1278 ու Ն. Տեր-Ղազարյանի[11] N 170 հեռագրերը):

Զեկուցող ընկ. Դուրգերյան

Որոշեցին.

1. ա) Արազդայանի շրջանում գաղթականներ ընդունելու, տեղավորելու, հողեր բաժանելու, ջրային աշխատանքները կարգավորելու և ընդհանրապես այդ շրջանը վերականգնելու համար ընտրել մի հանձնաժողով՝ ժողկոմխորհի նախագահ ընկ. Համբարձումյանի նախագահությամբ և անդամակցությամբ ընկ. ընկ. Դուրգերյանի, Երզնկյանի[12] և Շադունցի[13]:

բ) Առաջարկել Ներքգործժողկոմատին գաղթականներ ընդունել երկու հազարի (2000)-ի սահմաններում:

գ) Առաջարկել Հողժողկոմատին՝ Մոսկվայում գումարվելիք Գաղթականական գլխավոր կոմիտեի պլենումին ներկայացնելու համար հավաքել նյութեր, 1925-26թթ. գաղթականներ ընդունելու և տեղավորելու մասին:

դ) Առաջարկել Հողժողկոմին՝ 25-26թթ. բյուջետային տարում ընդունվելիք գաղթականների համար կազմել նախահաշիվ և խնդրել ընկ. ընկ. Պողոսյանին և Շահվերդյանին պաշտպանել այդ պատշաճ հիմնարկների առաջ, Մոսկվայում:

ե) Առաջարկել Հողժողկոմին ճշգրիտ ցույց տալ այն վայրերը, որտեղ հնարավոր է տեղավորել գաղթականությանը և մատնանշել ամեն մի գյուղի սահմանը, միաժամանակ կարգավորելով գաղթականների մեջ կատարվելիք հողաբաժանությունը:

զ) Առաջարկել Հայջրտնտեսությանը՝ կանոնավորել Արազդայանի գաղթականների խմելու ջրի հարցը:

է) Առաջարկել Հայկոոպին՝ կանոնավորել Արազդայանում ալյուրի և կենսամթերքների պարբերաբար մատակարարումը:

ը) Գաղթականներին ծրիապես պարենի բաշխում չթույլատրել:

թ) Առաջարկել Աշխժողկոմին կազմել նոր եկած գաղթականների ցուցակը ըստ մասնագիտության և նրանց տեղավորել համապատասխան աշխատանքների, առաջին հերթի:

ժ) Խնդրել Անդրժողկոմխորհին բաց թողնել Ներքգործժողկոմին, ի հաշիվ գաղթականական հանձնաժողովի նախահաշվի, հիսուն հազար (50.000) ռուբլի:

Լսեցին.

2. Անհատական դիմումներ՝ արտասահմանում բնակվող յուրայիններին Հայաստան գալու թույլտվության կարգի մասին: (Տես Ներքգործժողկոմատի N 5821, ժողկոմխորհի N 234-գ. գրություններ և գաղթականական հանձնաժողովի N արձանագրության կետը):

Զեկուցող ընկ. Դուրգերյան

Որոշեցին.

2. Ներքգործժողկոմատի ներկայացրած նախագիծը ընդունել և հարցը տեղափոխել ժողկոմխորհի նիստին:

Լսեցին.

3. Միջագետքի 6.000 գաղթականների Հայաստան գալու թույլտվության և նրան հարակից մի շարք խնդիրների մասին: (Տես Միջագետքի գաղթականների պատգամավոր Հովհաննես ծ. վարդապետի դիմումը):

Զեկուցող՝ ընկ. Մռավյան

Որոշեցին.

3. Հետաձգել՝ զեկուցողի բացակայության պատճառով:

Լսեցին.

4. Ամերիկայի և այլ վայրերի Հայրենակցական Միություններին տրվելիք պատասխան նախագծի մասին: (Տես Գաղթականական հատուկ հանձնաժողովի N 8 արձանագրության 2-րդ կետի գ. մասը և Հողժողկոմի ս. թ. N 4280-18898 գրությունը):

Զեկուցող՝ ընկ. Ա. Երզնկյան

Որոշեցին.

4. Հողժողկոմի ներկայացրած նախագիծը ընդունել, դուրս հանելով 5-րդ կետը:

Նախագահող՝ ժողկոմխորհի նախագահ՝ Ս.Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Կ.Գործունյան

Ֆ. 123, ց. 5, գ. 68, թ. 24: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 11

ՀՍԽՀ ՆԵՐՔԳՈՐԾԺՈՂԿՈՄԱՏԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ[14] ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆ ԺԱՄԱՆԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԻ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

27 մայիսի 1926թ.
Երևան

Գաղթականության ավելի մասսայական հոսանքը դեպի Հայաստան կատարվել է 1925թ.՝ գլխավորապես Հունաստանից և Պոլսից, թվով ընդամենը 4174 շունչ, որոնց չնչին մասը՝ թվով մոտ 70 շունչ ծխախոտագործներ, շերամապահներ, կառավարության որոշմամբ փոխադրվել են Հայաստանի զանազան գա-

վառները, գերագույն մասը - 3000 շունչ՝ գլխավորապես բանվորներ և զանազան արհեստավորներ ինքնակամ ցրվել են գավառներն ու քաղաքները և անցել աշխատանքի:

Մնացած մասը՝ 1086 շունչ աշխատավոր գյուղացիությունը տեղավորվել է Արազդայանի շրջանում, որոնց նկատմամբ ձեռնարկվել են մի շարք միջոցներ՝ նրանց հողի հետ կապելու, շենքեր կառուցելու և գյուղատնտեսական գույքով ու աշխատող անասուններով բավարարելու համար:

Արդ՝ տրվում է նրանց նկատմամբ առ 1926թ. ապրիլ ամիսը կատարված աշխատանքների պատկերը.

ՏՆՏԵՍԱԿԱՆ - Արազդայանի շրջանում տեղավորված 361 ընտանիք (1086 շունչ) գաղթականության մոտ 7 տոկոսը միջակներ են, 70 տոկոսը՝ չքավորներ, իսկ 23 տոկոսը՝ գլխավորապես այրիներ, երեխաներ և անաշխատունակ անդամալույծներ, որոնք իշխանության գաղթականական պատշաճ մարմինների կողմից ստանում են սննունդ և ապահովություն: Հիշյալ 361 ընտանիքները բաժանված են չորս գյուղերի, որից Արազդայանում - 110 ընտանիք - 341 շունչ, Արմաշում (Հայջի) 163 ընտանիք - 454 շունչ, Ավշարում 37 ընտանիք - 125 շունչ և Սմոյում 45 ընտանիք - 164 շունչ:

Գաղթականության մեծագույն մասը տանում է զանազան վարձու աշխատանքներ սերմաբուծարանում, իրենց հատկացրած հողամասերը հերկելու, մարկոսելու, տափանելու աշխատանքներ և այլն:

ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ - Հողաբաշխությունը սկսված է փետրվարի սկզբներին և ավարտված ապրիլին: Ըստ շնչերի, վերևում հիշված 4 գյուղերին հատկացված է. Արազդայանում՝ 191, Արմաշում՝ 228, Ավշարում՝ 63 և Սմոյում՝ 82 դեսյատին հողամասեր, որոնք տրամադրված 5 «Ֆորզոն» սիստեմի տրակտորներով հերկվեցին, այնտեղ գարի, բամբակ և այլ կուլտուրական բույսեր մշակելու համար:

ՏԵՂԱՎՈՐՈՒՄ - Գաղթականներին գյուղեր տեղափոխելու հետ կապված աշխատանքները սկսվեցին ապրիլ ամսին: Սկզբում տեղափոխման աշխատանքները ընթանում էին շատ դանդաղ, շնորհիվ նրան, որ ընտանիքների գլխավորների մեծ մասը աշխատում էր զանազան վայրերում և բացի այդ հատկացրած գյուղերում դեռևս չկար ամենակենսական հարմարություններ: Սակայն, երբ այնտեղ խփվեցին վրաններ և կառուցվեցին շենքեր, հնարավոր եղավ փոխադրական աշխատանքները կատարել ավելի արագ: Այժմ Արազդայան, Արմաշ և Ավշար գյուղերի բնակչությունը տեղավորված է 100 տոկոսով, Սմո գյուղը դեռևս գտնվում է փոխադրման շրջանում:

Տեղ հասած և տեղավորված գաղթականությունը անմիջապես անցել է տենդոտ հողագործական աշխատանքների:

Դավալուում կառուցված ժամանակավոր բարակները ներկայումս քանդվում են և շինանյութերը փոխադրվում գյուղերը՝ նոր կառուցվելիք շենքերի համար օգտագործելու նպատակով:

ԲԱՂՆԻՔ - Բաղնիքում լողացել են միջին թվով մոտ 1500 շունչ՝ ամսական:

ՀԻՎԱՆԴԱՆՈՑ - Հիվանդանոցի աշխատանքները սկսվել են մարտի սկզբից, որտեղ բժշկություն են ստացել միջին թվով 250 շունչ՝ ամսական:

ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ - Այստեղ հաճախել են ամսական մոտ 1200 հիվանդ՝ ապրիլ ամսում, գաղթականությանը նոր հատկացրած գյուղերը փոխադրելու հետևանքով, հաճախորդներ չեն եղել, այլ ինքը բժիշկն է շրջել գյուղերը ու բժշկական օգնություն հասցրել տեղերում:

ԴՊՐՈՑ - Դպրոցը ունեցել է 2 ուսուցիչ, որոնց ղեկավարությամբ ուսանել է 113 աշակերտ: Հետագայում նախագծված է դպրոցները բանալ առաջին հերթին Արազդայանում և Արմաշ գյուղերում:

Գյուղերից ամեն մեկում ստացվում է մեկական օրինակ «Խորհրդային Հայաստան», 2-ական «Սաճկալ», մեկական «Երևան» և մեկական «Ավանգարդ» թերթեր:

ՈՐԲԵՐ - Գաղթականության շարքերում եղած 80 շունչ որբերից 44 շունչը, որպես մեծահասակներ, կրճատվեցին, մնացած 36 շունչը ցայսօր շարունակում են ստանալ սնունդ: Վերջիններիս նախատեսնված է տեղավորել Սարդարապատի մանկական գաղութում:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ - Հողժողկոմատի և Ներքգործժողկոմատի կողմից մշակված գյուղերի և տիպիկ շենքերի հատակագծերը համապատասխան նախահաշիվներով ներկայացված են պատշաճ գերագույն մարմիններին ի հաստատություն: Այժմ տարվում են նախապատրաստական աշխատանքներ, կապված շինանյութերի պաշարման և կենտրոնացման հետ: Նախագծերով ենթադրված է գյուղերում ունենալ դպրոց, հիվանդանոց, բաղնիք և այլն:

ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ - Բոլոր գյուղացիները ըստ կարիքի բավարարված են վարկով: Վարկավորման հիմունքներով նրանց բաց է թողնված նաև սերմացու և գյուղատնտեսական ամենաանհրաժեշտ ինվենտար ու աշխատող անասուններ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ - Գաղթականության ընդունելության, պարենավորման, ժամանակավոր շենքեր կառուցելու և այլ տնտեսական կարիքների համար մինչև այսօր ծախսված է 60-70 հազար ռուբլի: Նոր կառուցվող գյուղերի և շենքերի համար ներկայացված նախահաշիվներով նախատեսնված է 225.000 լրացուցիչ ծախս:

Ներքգործժողկոմ՝	Դուրգերյան
Գործերի վարիչ՝	Գ.Ջալաշյան

Ֆ. 113, ց. 3, գ. 337, թ. 26: Բնագիր: Մեքենագիր:

N 12
ОТНОШЕНИЕ ПРЕДСЕДАТЕЛЯ ПОСТОЯННОЙ КОМИССИИ СТО ПО ИММИГРАЦИИ В СОВНАРКОМ АРМЯНСКОЙ ССР О ЛЬГОТАХ ИММИГРАНТОВ, ВОЗВРАЩАЮЩИХСЯ В АРМЕНИЮ

31 мая 1926г.
Москва

Постановлением Комиссии СТО от 10 июня 1925г. было распространено действие декрета ЦИК и СНК СССР от 31/ III-25г. об иммигрантских льготах на возвращающихся в Армению армян реэмигрантов. Этим же постановлением было установлено, что удостоверения на пропуск реэмигрантов и их груза выдаются Переселенческой Комиссией при СНК Армении, с последующим извещением Комиссии СТО о количестве пропущенных людей и имущества.

Несмотря на нашу повторную просьбу управляющему делами СНК Армении от 8 февраля, до сих пор мы никаких сообщений о пропуске реэмигрантов армян в порядке применения иммигрантской льготы от СНК Армении или соответствующего его учреждения не получили.

В настоящее время, разрешая распространение иммигрантской льготы также на армян переселенцев из Ардвина, Комиссия СТО по иммиграции просит СНК Армении сообщить, в каком положении находится дело возвращения беженцев-армян и сколько людей и имущества пропущено в безпошлинном порядке[15].

Председатель постоянной комиссии СТО по иммиграции	Смольянинов
Секретарь	Берг

Ф. 113, оп. 3, д. 337, л. 14: Подлинник. Машинопись.

N 13
ПИСЬМО ПРЕДСТАВИТЕЛЯ ЗСФСР В ПРАВИТЕЛЬСТВЕ СССР С. ТЕР-ГАБРИЕЛЯНА ЗАМЕСТИТЕЛЮ ПРЕДСЕДАТЕЛЯ СОВНАРКОМА АРМЯНСКОЙ ССР А.МРАВЯНУ О ВОЗМОЖНОСТЯХ ПРИМЕНЕНИЯ ИММИГРАНТСКОЙ ЛЬГОТЫ

9 июня 1926г.
Москва

Согласно срочного запроса Постоянной Комиссии СТО по сельскохозяйственной и промышленной иммиграции от 31/ V - с. г. за N 171/2с Предтсавительство ЗСФСР просит сообщить, в каком положении находится вопрос о пропуске реэмигрантов армян в порядке применения иммигрантской льготы. По указанному вопросу по Вашему адресу был запрос непосредственно от Пост. Комиссии СТО по сельскохозяйственной иммиграции 8-го февраля с.г.

Представитель ЗСФСР Тер-Габриелян
Секретарь Попова

Մակագրություն. Ընկ. Գործունյանին. Պատասխանել: 23.06.23

Ф. 113, оп. 3, д. 337, л. 20: Подлинник. Машинопись.

N 14
ՎԻՃԱԿԱԳԻՐ ԵՐՎԱՆԴ ՂԱՓՅԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԳԱՎԳՈՐԾԿՈՄ՝ ԱՐԱԶԴԱՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

24 հուլիսի 1926թ.
[Երևան]

Արազդայանում հաստատված գաղթականությունը ստացել է օժանդակություն պետությունից երկու շնչին մեկ ոչխար, 25 զույգ եզներ, որից 13 հատը հիվանդությունից սատկել են, մնացածը դեռ չի բաժանված, սայլեր նույնպես բաժանված չէ, գութաններ, որը դարձյալ բաժանված չէ, բացի դրանից բաժանված է բահեր, բրիչներ, քաղհանի ուրագներ: Հաստատված է վերաշինարարական հանձնաժողով, որին հատկացված է պետության կողմից 108 հազար ռուբլի՝ գաղթականության համար բնակարաններ շինելու, ըստ պայմանավորման, երեք ամսվա ընթացքում բնակարանային աշխատանքները պետք է վերջանա: Գործը արդեն սկսված է:

Արազդայան գյուղում գոյություն ունի տրոպ[իկական] կայան, տնտեսություններին ցուցակով բաժանվում է խինի, հիվանդությունը պակաս է, միայն մոծակները շատ նեղություն են պատճառում գաղթականությանը: Որ տնտեսություններում, որ յուր միջոցներով կենդանի ինվենտար և մեռյալ ինվենտար է ձեռք բերել, դա նշանակված է հաշվառման քարտի վրա, իսկ մյուսները՝ ոչ:

Վիճակագիր՝ Երվանդ Ղա[փյան]

Ֆ. 133, ց. 1, գ. 247 (I մ.), թ. 632: Ինքնագիր:

N 15
ԱՆԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄ՝ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

11 օգոստոսի 1926թ.
Թիֆլիս

Նպատակ ունենալով լիկվիդացիայի ենթարկելու գաղթականական խնդիրը ԱՍՖԽՀ սահմաններում, անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՍՖԽՀ ներսում գաղթականական հարցը: Դրա համար Անդրկենտգործկոմի նախագահության 1926թ.

հուլիսի 5-ի (արձանագրություն նո. 11) որոշմամբ կազմված է հատուկ հանձնաժողով, որին առաջարկված է երկու ամսվա ժամանակամիջոցում ուսումնասիրել գաղթականության ներքին դրությունը և ներկայացնել նախագիծ՝ ի հաստատություն Անդրկենտգործկոմի նախագահությանը, այդ գաղթականների համար համապատասխան միջոցներ ձեռք առնելու: Ուստի Անդրկենտգործկոմը խնդրում է սույն գրությունը ստանալու, որից մեկ ամսվա ընթացքում տալ ներքոհիշյալ տեղեկությունները՝

Ա. 1) Տվյալ գավառում բնակվող գաղթականության ճիշտ քանակը (ըստ ծխերի), 2) Ազգությունը, 3) Զբաղմունքը, 4) Ունե՞ն արդյոք հողաբաժիններ, 5) Ո՞ր ժամանակից են ապրում տվյալ գավառում, 6) Ցանկանու՞մ են արդյոք վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը և որտե՞ղ:

Բ. 1) Ինչ քանակությամբ գաղթականներ (ըստ ծխերի) թողել են տվյալ գավառի սահմանները (ըստ ներկա վարչական բաժանումների), 2) Ո՞ր թվին են փախել, 3) Ազգությունը, 4) Ինչ քանակությամբ գաղթականներ (ըստ ծխերի) հնարավոր է տեղավորել իրենց նախկին բնակավայրերը, վերադարձնելով նրանց մշակելի հողամասերը, այգիները և շենքերը:

Դ. 1) Ովքե՞ր են զբաղեցնում ներկայումս այն հողամասերը, այգիները և շենքերը, որ թողել են գաղթականները (ուրիշ տեղից եկածները կամ հարևան բնակիչները), 2) Ազգությունը, 3) Ծխերի քանակը:

Գաղթականներ համարվում են այն քաղաքացիները, որոնք պատերազմական դրության, պատերազմական գործողությունների, անկարգությունների ու կոտորածների պատճառով ստիպված են եղել թողնելու իրենց նախկին բնակավայրերը և գաղթել Անդրկովկասյան հանրապետություններից որևէ մեկը, իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների ժամանակ:

Տեղեկությունները պետք է տրվեն ամեն մի գավառից՝ առանձին-առանձին:

Անդրկենտգործկոմի քարտուղար՝ [Ա.] Շահվերդյան[16]
Ի տեղի գործերի կառավարիչի Փարսադանով
ՆԳԺԿ վերաբնակեցման ենթաբաժնի քարտուղար՝ Աբրահամյան

Ֆ. 133, ց. 1, գ. 247 (մ. I), թ. 579: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 16

ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԶԵԿՈՒՑԱԳՐԻՑ՝ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՈՒ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարտ 1927թ.
Երևան

Հաշվետու երկամյակումն ևս Հողժողկոմատի առաջնակարգ հոգսերից մեկը եղել է հողազուրկ գաղթականների տեղավորման և հողի ու տնտեսության հետ կապելու խնդիրը:

Արտասահմանից ներգաղթած և հանրապետության սահմաններում գտնվող գաղթականներից երկու տարվա ընթացքում հող են ստացել.

NN	Գավառ	1926թ. շունչ	1927թ. շունչ	Ծանոթություն
1	Երևանի	1600	750	1927 թվի բնակեցման աշխատանքները դեռ ավարտված չեն: Հավանական է, որ մինչև տարվա վերջը մատնանշվածից ավելի թվով հողազուրկներ բավարարվեն:
2	Էջմիածնի	1250	650	
3	Լենինականի	350	800	
4	Ն.-Բայազետի	410	900	
5	Փ.-Լոռու	540	200	
6	Դիլիջանի	-	300	
7	Զանգեզուրի	150	-	

	Գումարը	4300	3800	8000

1926 թվին կարգավորվել է արտասահմանից ներգաղթողների վարկավորման գործը լիովին, իսկ 1927 թվից նույնը կատարվել է նաև երկրի ներսում եղած հողազուրկների բնակեցման գործում:

1926 թվին բոլոր ներգաղթողների և երկրի հողազուրկների մի խմբի համար պետության կողմից վարկ է տրված 230.000 ռուբլի, իսկ 1927 թվի համար վերջերս Ժողկոմխորհի կողմից հաստատվեց և կիրարկության է դրված 387.000 ռուբլու վարկավորման ծրագիր-նախահաշիվ:

1927 թվին ներգաղթող և երկրի հողազուրկ բնակչությունը հողի հետ կապվելու համար վարկավորվում է հետևյալ չափով.

NN	Վարկի նպատակը	Հողազուրկներ		Ներգաղթողներ	
		շնչին	5 շ. ծխին		
1	Փոխադրական ծախսերի	1.20	6ռ.	3.69	18.45
2	Սնունդ և բժշկություն	-	-	12	60.00
3	Վար ու ցանքի	22	110	12	60.00
4	Գյուղատնտ. կարգ ու սարք	-	-	50	250
5	Բնակարանի կառուցման	40	200	40	200
		63.20	316ռ.	119.69	588.45

1927 թվի աշխատանքների մեջ մեծ տեղ է բռնել առաջիկա 1928թ. 12.000 շունչ հողազուրկ բնակչության համար հողային ֆոնդեր պատրաստել-զատելը: Հողազուրկների այդ թվի բնակեցման համար 900.000 ռուբլու սահմաններում նախահաշիվ է կազմված:

Համաձայն Համամիութենական գաղթկոմի որոշման, Հայաստանի հողազուրկ գաղթականության ծախսերն առաջիկա տարվանից հոգացվելու են ոչ հանրապետական, այլ Միության բյուջեից:

Ֆ. 123, ց. 5, գ. 96, թ. 20: Պատճեն: Մեքենագիր:

N 17

ՔԱՂՎԱԾՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

21 հունիսի 1928թ.
Երևան

Ներկա էին - Նախագահության անդամներ ընկ. ընկ. Ա.Կարինյան, Ա.Շահսուվարյան[17], Դ.Շահվերդյան, Ա.Հովհաննիսյան[18] և Հ.Տատյան[19], նույնպես և հանրապետության դատարանի նախագահ Ձ.Աշրաֆյան[20], հողժողկոմ Ա.Երզնկյան, Ներքգործժողկոմի տեղակալ Ա.Կոստանյան[21] և Անդրկովկասյան բանվորա-գյուղացիական տեսչության ժողկոմատի Հայաստանի լիազորի ժամանակավոր պաշտոնակատար ընկ. Գ.Փիրգուլյան[22]:

Լսեցին.

4. Գաղթականների Հայաստան գալը դադարեցնելու միջոցների մասին:

Որոշեցին.

…

4. Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջերս նկատելի է առանց իշխանության համապատասխան օրգանների թույլտվության նախկին հայաստանաբնակ գաղթականության մասսայական և անկանոն կուտակում, և որոնց տեղավորել միանգամայն անհնարին է՝ Հայաստանի հողային կրիզիսի մեջ գտնվելու հետևանքով.

1) Առաջարկել Ներքգործժողկոմատին դիմել ամենաշտապ միջոցների, հետագայում կանխելու գաղթականության Հայաստան գալը՝ առանց Ժողկոմխորհի և Հողժողկոմատի նախնական գիտության և թույլտվության:

2) Առաջարկել Հողժողկոմատին տեղավորել ազատ հողային շրջաններում դեռ հողին չկապված և արդեն փաստորեն Հայաստան եկած գաղթականությանը:

3) Խնդրել ժողկոմխորհի նախագահի ընկ. Լուկաշինին հետագայում գաղթականության Հայաստան գալը դադարեցնելու հարցը քննության [առնել] Անդրկովկասյան ժողկոմների Խորհրդում...

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի տեղակալ՝ Ա.Կարինյան
Կենտրոնական Գործադիր Կոմիտեի քարտուղար՝ Հ.Տատյան

Ֆ. 134, ց. 1, գ. 32 I մ., թթ. 173-174: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 18

ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻՆ ԿԻՑ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԻ ՔԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

23 հուլիսի 1931թ.
Երևան

1931թ. հուլիսի 23-ին Հողժողկոմատին կից Գաղթբնակի կողմից 1928-30թթ. կառուցված բնակարանների պարտամուրհակների ձևակերպման վերաբերյալ հրավիրված խորհրդակցության (հիմք ՀՍԽՀ ժողկոմխորհի ս/թ. հունիսի 7-ի կարգադրիչ նիստի N 18 արձ. 10-րդ կետ):

Մասնակցում էին, Հողժողկոմատից՝ ընկ. Գ. Դարբինյանը, Ֆինժողկոմատից՝ ընկ. Գ.Շմավոնյան և Պետբանկից՝ ընկ. ընկ. Լ. Ղազարյան և Ռ. Մարության:

1) Լսեցին - 1928-30թթ. Գաղթբնակի կողմից՝ Աղբաբայի, Բասարգեչարի, Թալինի, Ղուրդուղուլիի, Ղամարլվի, Վեդի-Բասարի և Աշտարակի շրջաններում գաղթականների վերաբնակեցման նպատակով կառուցված բնակարանների պարտամուրհակների ձևակերպման, ինչպես նաև անհուսալի վարկերը զիջելու համար համապատասխան օրգանների առաջ միջնորդություն հարուցելու մասին:

Տեղեկանք. կատարված հետապնդումներից պարզվեց, որ. ա) Աղբաբայի շրջանում կառուցված բնակարանների 158.000ռ. պարտամուրհակները չեն ձևակերպվել գյուղացիների հաճախակի տեղափոխման և շենքերը թանկ գնահատելու պատճառով:

Բ) Բասարգեչարի շրջանում կառուցված 216 բնակարանների վրա ծախսված 164.522ռ. 74կ. գումարից պարտամուրհակներով ձևակերպված է միայն 130.226ռ. 29 կ. չի ձևակերպված 34.296ռ. 45կ.:

Գ) Աշտարակի շրջանում Ինաքլու գյուղում բնակշինարարության վրա ծախսված 11.411ռ.40կ. անհուսալի է դառել, որովհետև վերաբնակվող բնակիչները կրկին տեղափոխվել են այլ շրջաններ, իսկ կիսատ մնացած կառուցումները գտնվում են շրջգործկոմի տրամադրության տակ: Մնացած շրջանների նկատմամբ կատարված հետապնդումներից որոշակի սպառիչ տվյալներ չեն ստացված:

1) Որոշեցին - Նկատի ունենալով, ա) որ Աղբաբայի շրջանում 1928 և 29թթ. կառուցված բնակարանների վարկերը պարտամուրհակներով չեն ձևակերպվել, որովհետև վարկառու տնտեսությունները հաճախակի տեղափոխվել են զանազան վայրեր.

բ) որ այս շրջանում կառուցված բնակարանները թանկ են նստել (մեկ բնակարան 2.470ռ.), որի հետևանքով գյուղացիները հրաժարվել են զբաղեցնելու բնակարանները և խուսափել պարտամուրհակ տալուց.

գ) որ այդ շրջանի բնակշինարարություն կատարող գյուղերը (Սնդ, Ղոնջալի և այլն) նախատեսվում է տեղահանել և վերաբնակեցնել այլ շրջաններում՝ Խորհրդային տնտեսությունների լայնացման հետևանքով, որով և կառուցված շենքերը մեքենայորեն անցնելու են Խորհրդային տնտեսություններին, ուստի ելնելով վերոհիշյալներից, Աղբաբայի շրջանում կառուցված 158.000ռ. բնակարանների վարկը համարել անհուսալի և խնդրել ժողկոմխորհին այդ գումարը ամբողջովին զիջելու:

Իսկ Բասարգեչարի նկատմամբ 130.226ռ. 29կ. գումարով վարկի մուրհակները համարել հուսալի, իսկ մնացած 34.296ռ. 45կ. չձևակերպված վարկի համար առաջարկել Բասարգեչարի Պետբանկի բաժանմունքին, նույն շրջանի Յողբաժնի մասնակցությամբ ամենակարճ ժամանակամիջոցում ձևակերպելու՝ ըստ գաղթբնակի ցուցումների:

Անհուսալի համարել և զիջել Աշտարակի շրջանի Ինաքլու գյուղի 11.411ռ. 40կ. գումարը: Իսկ մյուս շրջանների նկատմամբ առաջարկել Պետբանկին և Յողժողկոմատի գաղթբնակ սեկտորին միջոցներ ձեռք առնելու՝ վերջնականապես վարկերի ձևակերպումների խնդիրը լուծելու:

Յանձնաժողովի անդամներ

Ֆ. 113, ց. 1, գ. 1362, թ. 8: Բնագիր: Մեքենագիր:

Ծանոթագրություններ

1. Մռավյան Ասքանազ Յարությունի (1886-1929) - պետական և կուսակցական գործիչ, հրապարակախոս: 1921-1923-ին՝ ՅՍԽՅ արտաքին գործերի կոմիսար, 1923-ի փետրվարից-1929-ին՝ լուսավորության ժողովրդական կոմիսար:

2. Շահվերդյան Դանիել (Դանուշ) Ալեքսանդրի (1882-1941): Կուսակցական և պետական գործիչ: 1921 և 1924-1928-ին եղել է ՅՍԽՅ և ԱՍՖԽՅ առևտրական ներկայացուցիչը Թուրքիայում: 1922-1923-ին ՅՍԽՅ արդարադատության ժողկոմն էր, և ժողկոմխորհի նախագահի տեղակալը: 1928-1929-ին ՅՍԽՅ Կարմիր Խաչի ներկայացուցիչն էր Անգլիայում, Գերմանիայում և Բելգիայում:

3. Անտելեպյան Գեղամ (1898-1966): Խմբագիր: Ծնվել է Մարզվանում: Երիտասարդ հասակից եկել է Կովկաս, ստացել կրթություն: Վարել է կուսակցական, պրոֆմիութենական պատասխանատու պաշտոններ: 1925թ. հունվարից նշանակվել է ՅՍԽՅ ժողկոմխորհին կից գաղթականական հատուկ հանձնաժողովի քարտուղար:

4. Դուրգերյան Յովհաննես՝ եղել է ՅՍԽՅ ներքին գործերի ժողովրդական կոմիսար: 1921թ. հուլիսին նշանակվել է գաղթականական գործերի գլխավոր վարչության նախագահի տեղակալ: 1925թ. սեպտեմբերին նշանակվել է ՅՍԽՅ ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի անդամ: 1925թ. ապրիլից գաղթականական հատուկ հանձնաժողովում՝ ներքգործժողկոմատի ներկայացուցիչը:

5. Լուկաշին (Սրապիոնյան) Սարգիս Լուկիանի (1883-1937): Կուսակցական և պետական գործիչ: 1922-1925-ին եղել է ՅՍԽՅ ժողկոմխորհի նախագահը: 1925-1928-ին Անդրֆեդերացիայի ժողկոմխորհի նախագահի տեղակալը:

6. Պարզյան Գագիկ - կուսակցական, պետական աշխատող: Եղել է ՅՍԽՅ ժողկոմխորհի և տնտեսական խորհրդի գործերի կառավարիչը:

7. Մանուչարյան Արամ Վահանի (1893-1937): Յայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո աշխատել է առողջապահության, հողագործության, կապի բնագավառներում և Յայկոմկուսի կենտկոմի ապարատում:

8. Յամբարձումյան Սարգիս Իսահակի (1870-1944) - 1922թ. ընտրվել է ՅՍԽՅ Կենտգործկոմի նախագահ, 1925-1929-ին՝ՅՍԽՅ ժողկոմխորհի նախագահը:

9. Տեր-Գաբրիելյան Սահակ Միրզայի (1886-1937) - 1920թ. վերջից եղել է ՀՍԽՀ լիազոր-ներկայացուցիչ Մոսկվայում, 1928-1935թթ.՝ ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահը, միաժամանակ՝ Անդրֆեդերացիայի ժողկոմխորհի նախագահի տեղակալը:

10. Կարինյան (Գաբրիելյան) Արտաշես Բալասիի (1886-1982): 1921-ին՝ ՀՍԽՀ Արդարադատության ժողկոմ: 1923-1924-ին ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահի տեղակալն էր, 1924-1928-ին՝ նախագահը: Գրականագետ, պատմաբան:

11. Տեր-Ղազարյան Նարիման: 1922թ. եղել է Անդրկովկասյան կառավարության Ամերկոմին կից ներկայացուցիչ: Նրա ղեկավարությամբ ստեղծվել է Անդրկովկասի տարածքում գործող օտարերկրյա կազմակերպություններին առընթեր Անդրժողկոմխորհի ներկայացուցչություն: Եղել է ՀՍԽՀ սոցապ ժողկոմ, գաղթականական գործերի գլխավոր վարչության նախագահ:

12. Երզնկյան Արամայիս Հարությունի (1879-1938) - 1921-ից եղել է ՀՍԽՀ հողագործության ժողովրդական կոմիսարը և ժողկոմխորհի նախագահի տեղակալը:

13. Շադունց Սուրեն Կոնստանդինի (1898-1937): 1921-23-ին եղել է ՀԿԿ Երևանի գավկոմի քարտուղարը: 1923-1927-ին՝ ՀՍԽՀ Հողժողկոմատի ջրային տնտեսության վարչության պետ: 1927-1928-ին ղեկավարել է ջրային տնտեսության Անդրկովկասյան վարչությունը:

14. Զեկուցագիրը կազմված է ի պատասխան 1925թ. ապրիլի 12-ին ՀԲԸՄ Երևանի թղթակից Տ. Զրբաշյանի դիմումի՝ միությանը Հայաստան ժամանած գաղթականության քանակի ու նրանց տնտեսական վիճակի մասին տեղեկացնելու նպատակով: Տե՛ս նույն տեղում, թ. 24-25:

15. 1925թ. հունիսի 11-ի գրությամբ ՀՍԽՀ գաղթականական հատուկ հանձնաժողովը տեղեկացրել է Աշխատանքի և պաշտպանության խորհրդի (СТО) ներգաղթի ու արտագաղթի աշխատանքային մշտական հանձնաժողովին, որ 1925թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 1-ը Հայաստան է ժամանել 4683 մարդ՝ 18500 փութ բեռներով: Նույն գրությամբ նշված է նաև, որ մասսայական ներգաղթն առայժմ դադարեցված է և ընդունվում են միայն փոքր խմբեր ու առանձին ընտանիքներ: Տես ֆ. 113, ց. 3, գ. 337, թ. 19:

16. Շահվերդով (Շահվերդյան) Ալեքսանդր Եգորի (1878-1937): 1921-ին եղել է ՀՍԽՀ բանգյուղտեսչության ժողկոմ, ապա՝ արդարադատության ժողկոմ: 1923-ից Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի քարտուղարն էր:

17. Շահումվարյան Ալեքսանդր (Սաշա) Հարությունի (Արտեմի) (1888-1938): 1922-1923-ին եղել է ՀԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ, 1924-1928-ին՝ ՀԿԿ Կենտկոմի քարտուղար: 1929-1931-ին՝ Անդրֆեդերացիայի աշխատանքի ժողկոմի տեղակալ:

18. Հովհաննիսյան Աշոտ Գարեգինի (1887-1972): 1920-1921-ին եղել է ՀՍԽՀ առաջին լուսժողկոմը: 1922-1927-ին՝ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարը: ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, պատմաբան:

19. Տատյան Հայրապետ Գալուստի (1896-1937): 1922-ի փետրվարից ՀՍԽՀ Կենտգործկոմի քարտուղար և նախագահության անդամ: 1924-ից ՀԿԿ վերահսկիչ հանձնաժողովի նախագահության անդամ և կուսկոլեգիայի նախագահ:

20. Աշրաֆյան Զարմայր Անդրեասի (1898-1936): 1923-1926-ին եղել է Հայաստանի Ռազմա-հեղափոխական տրիբունալի նախագահ: 1927-1928-ին՝ Գերագույն դատարանի նախագահ, 1928-1929-ին՝ Արդարադատության ժողկոմ:

21. Կոստանյան Արամ Արսենի (1894-1937): Կուսակցական և պետական գործիչ: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո եղել է ներքին գործերի ժողկոմի տեղակալ, գավառային գործադիր կոմիտեի նախագահ, ֆինժողկոմի և հողժողկոմի տեղակալ:

22. Փիրգուլյան Գ. - եղել է Անդրներքառժողկոմատի Հայաստանի լիազոր,Անդրկովկասյան բանգյուղտեսչության ժողկոմատի Հայաստանի լիազորի ժամանակավոր պաշտոնակատար:

ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈՌՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ ԿՈՎԿԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԻ ԳՈԼԻՑԻՆԻՆ ԱՀԱԲԵԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ իրականության մեջ առաջացած քաղաքական կուսակցությունները՝ ՀՅԴ-ն, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը և ուրիշները լայն գործունեություն են ծավալում նաև Ալեքսանդրապոլում: Մասնավորապես, ՀՅԴ Ալեքսանդրապոլի տեղական կառույցները իրենց վրա էին վերցրել Անդրկովկասի և Ռուսաստանի տարբեր բնակավայրերից տեղափոխվող զենքն ու զինամթերքը Արևմտյան Հայաստան հասցնելու գործի կազմակերպումը:

1903թ. ակտիվանում են նաև սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստ հեղափոխականների կառույցները: 1903թ. ցարական կառավարության՝ հայ եկեղեցական կալվածքների և ունեցվածքի բռնագրավման մասին՝ հունիսի 12-ի օրենքը հակացարական գործողությունների է դրդում Անդրկովկասի հայ բնակչությանը: Ալեքսանդրապոլում դեռևս 1902 թվականից գործունեություն ծավալած ՍԴՀԿ տեղական կառույցը Հայոց եկեղեցու կալվածքների համար մղվող իր պայքարով ևս միանում է համառուսական հակացարական շարժմանը:

Ս.Դ. Հնչակյան կուսակցության Ալեքսանդրապոլի կառույցը կազմակերպում է Կովկասի կառավարչապետ Գոլիցինի ահաբեկումը՝ մինչ այդ որոշելով վերացնել Գոլիցինի հավատարիմ զինակից, Ալեքսանդրապոլի հոգևոր քահանա Վասիլևին, ով, Գոլիցինի համաձայնությամբ, Ալեքսանդրապոլի գավառի հայերի շրջանում քարոզում էր ռուս ուղղափառ եկեղեցու հավատքը և նրանց մղում երկպառակտության:

Ստորև հրապարակվող փաստաթուղթը ներկայացնում է ՀՍԴԿ Ալեքսանդրապոլի կառույցի կողմից Գոլիցինին ահաբեկելու գործողությունը: Հուշագրությունը գրվել է 1936թ. Լենինականում Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության Ալեքսանդրապոլի նածկին կառույցի՝ վարչության քարտուղար Պետրոս Մոճոռյանի կողմից: Տպագրվում է առանց լեզվա-ոճական միջամտությունների, բնագրին հարազատ, բացառություն են կետադրական որոշ շտկումները: Տողատակերի ծանոթագրությունները կատարվել են մեր կողմից: Փաստաթղթի վերնագիրը հեղինակինն է:

Կարինե Ալեքսանյան
պատմական գիտությունների
թեկնածու

N 1
ԳՈԼՈՑԻՆՅԱՆ ՏԵՌՈՐԸ
(ՄԻ ԷՋ ՄԵՐ ՄՈՏԱՎՈՐ ԱՆՑՅԱԼԻՑ)

1936թ.
Լենինական

Ինչպես կտեսնի ընթերցողը մեր այս պատմական ակնարկի հետագա էջերից, ամբողջ աշխարհի հեղափոխական ու ազատամիտ տեռորի գովքի ու ծափի առարկան հանդիսացավ այս տեռորը, վորը, միաժամանակ, այնքան խոշոր հետևանքներ ունեցավ ռուս բռնակալ պետության մեջ ապրող բազմացեղ ստրուկ ժողովուրդների կյանքում և ցնցեց ու սթափեցրեց քնած ու տատանվող ըմբոստներին:

Կովկասի տխրահռչակ փոխարքա Գոլիցինը, իր պաշտոնը ստանձնելուց հետո, առաջին օրերից մի անգութ ու անսիրտ վերաբերմունք ցույց տվեց դեպի հայ ազգը, վորի հսկայական քայլերով առաջ ընթացող կուլտուրական կյանքը և հեղափոխական շարժումը վրդովել էին նրա հանգիստը և խլել իր քունը:

Այդ արնածարավ բորենին, մի կարճ ժամանակամիջոցում մեկը մյուսի հետևից փակեց Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, Բագվի Մարդասիրական Ընկերությունը, Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերությունը, խլեց Հայոց դպրոցական եկեղեցական կալվածքները, պաշտոններից հեռացրեց անհամար հայ պետական ծառայողներ, կարգադրեց հայերին ծառայության մեջ այլևս չընդունել և այլն և այլն:

Չբավարարվելով այս ամենով, նա ստեղծեց հայ-թուրքական ընդհարումները, վորոնք այնքան կործանիչ և ահավոր հետևանքներ ունեցան դարերով իրար կողք-կողքի ապրող յերկու յեղբայրակից ժողովուրդների համար:

Իշխան Գոլիցինը դեռ 1895թ. ծրագիր եր կազմել ստեղծել հայ-վրացական ընդհարում: Յես այդ տարիներում ապրում եի Թիֆլիսում և հիշում եմ այն ցնցող տանջանքերն ու հույզերը, վոր կրում եր հայ մտավորականությունը, հայ ինտելիգենցիան*, այդ անօրինակ և անգութ լուրերի ազդեցության տակ:

Սակայն, 19-րդ դարի Լենկթեմուրին չհաջողվեց այդ մտադրությունն ի կատար ածել շնորհիվ այն բարերար հանգամանքերի, վոր, նախ՝ վրաց լուսամիտ ժողովուրդը անհամեմատ ավելի բարձր կրթական մակարդակի վրա եր կանգնած, քան թուրք ժողովուրդը և ապա, նրա հեղափոխական տարրը լավ հասկացել ու ըմբռնել եր ցարական կառավարության դիվային ծրագիրը և բարձր եր գնահատում Կովկասյան ազգերի յեղբայրությունն ու համերաշխությունը:

Այս ամենը դեռ չեին հանգեցրել արնախում բորենու անհագ ծարավը և ահա, ինչպես մենք կարդում ենք ռուս ականավոր գործիչ Վիտտեի մեմուարներում[2*], նա պետական խորհուրդ ե մտցնում մի դիվային ծրագիր՝ հայերին ամբողջովին տեղահան անելու և Սիբիր տեղափոխելու մասին:

Ինչպես հայտնի ե նույն մեմուարներից, այդ առաջարկը վոչ մի կողմնակից չի գտնում մինչև իսկ միապետական պետական խորհրդում և առաջարկողը պարտվում ե խայտառակ կերպով:

Այս պարտությունից հետո իշխան Գոլիցինը մտածում ե մի նոր ու ստոր միջոց-հայերին օրթոդոքս յեկեղեցու[3*] գիրկը գցելու և այդ ճանապարհով ռուսացնելու համար:

Այս ստոր ու անարգ նպատակին հասնելու համար տխրահռչակ փոխարքան իրան աջակից ե գտնում, հանձինս Ալեքսանդրապոլի հունաց քահանա Վասիլևին:

Յերկու դավադիրներնել լավ գիտեին և հասկանում եին իհարկե, վոր մի այսպիսի պրոպագանդ իրան համար ամենապարարտ հող գտնում ե ամեն մի ժողովրդի ստորին և տգետ խավերում:

Այս տեսակետից հարմարագույն վայրն եր Ալեքսանդրապոլի գավառը, վորի բնակչությունը վաղ ժամանակներից ի վեր տառապում և հյուծվում եր չքավորության մեջ:

Վասիլև քահանան օձի պես սողաց այդ դժբախտ ու ընչազուրկ ժողովրդի սրտի խորքը, ցանեց այնտեղ առատ կերպով յերկպառակության վորոմը և զանազան խոստումներով ու կաշառքերով կարողացավ մի կարճ ժամանակի ընթացքում դավանափոխություն ընդունել տալ Ալեքսանդրապոլի հարավային կողմը գտնված Ղարաքիլիսա, Աղին, Բուղդաշեն և այլ գյուղերի բնակչության մի մասին:

Հավատավաճառները, ի թիվս այլոց, ստանում եին իրենց գյուղերի ամենաբերրի հողերը, վորոնք խլվում եին իրենց կրոնն ու եկեղեցին չդավաճանողներից:

Այս հողի վրա միևնույն ազգի յերկու տարբեր դավանանքի պատկանող գյուղացիների մեջ առաջացան կռիվներ, յերկպառակություններ և մարդասպանությունները չտեսնված չափի հասան:

---

* Ինտելիգենցիա - մտավորականություն:

2* Մեմուարներ - հուշեր:

3* Օրթոդոքս եկեղեցի - ռուս ուղղափառ եկեղեցի:

Պետական կրոնն ընդունող տարրը իր քամակն ունենալով լկտի ու պոռնիկ Գոլիցիններ, Վասիլներ և իրան հովանավորող օրենքներ՝ լարել եր իր ախորժակը, իսկ իր հավատին ամուր կառչած տարրը կատաղում եր ու քրքրվում այս ամեն անարդարությունները տեսնելով:

Նիկոլայ 2-րդ կայսեր ստորությունն այնտեղ հասավ, վոր այս տգետ ու վողորմելի թագավորը « իր սեփական միջոցներից» 5000 ռուբլի ուղարկեց, վորով մի յեկեղեցի պետք ե շինվեր Ղարաքիլիսայի ժողովրդի այն մասի համար, վորը օրթոդքս յեկեղեցու գիրկն եր մտել: Յեվ այս ամենը, իհարկե, կատարվում եր փոխարքա Գոլիցինի թելադրությամբ:

Յեկեղեցին շինվեց, Վասիլև քահանան մի քանի տարի այդ յեկեղեցու ամբիոնից «մարդասիրություն» քարոզեց և վերջին օրերս միայն կործանեցին ու հողին հավասարեցրին այդ եկեղեցին: Բացի այս յեկեղեցուց, Աղին կայարանից մի յերկու քայլ դեպի արևմուտք կառուցվեց մի շենք, վորին անվանեցին կուսանոց և ուր բերին ու լցրին պոռնիկ կանանց մի խումբ, վորոնց անվանում եյին կույսեր:

Յեվ ով գիտե, թե դեռևս ինչեր կարող եյին տեղի ունենալ հետագայում, յեթե այս վողբերգական դրությունը յերկար շարունակվեր:

Վասիլև քահանայի մի ձեռքը յուղի մեջն եր, մյուսը մեղրի, ինչպես ասում ե հայկական առածը: Նրա անսանձ ու լկտի արարմունքները, նրա ծաղրն ու արհամարհանքը դեպի հայ ժողովրդի սրբությունները, մենք մատների արանքով նայել չեյինք կարող:

Յեվ ահա, Հնչակյան Ս-Դ կուսակցության Ալեքսանդրապոլի վարչությունը, հետևյալ կազմով-Հարություն Զաքարյան, Համբարձում Տեր-Ղազարյան, Հակոբ Էլբակյան և Պետրոս Մոճոռյան, 1903 թվի օգոստոսի 10-ին վորոշում կայացրին՝ վերջ դնել Վասիլև քահանային, փոխարքա Գոլիցինի այդ անձնվեր և յեռանդուն արբանյակին:

Վորոշումը ի կատար ածվեց յերկու օրից հետո: Տեռորիստների սրերով ընկած անարգ Վասիլև քահանայի արյունը ներկեց նախկին Լոռիս-Մելիքյան փողոցի մայթերը:

Արտասովոր փառքով կատարվեց այս սևահոգի քահանայի թաղումը: Խոր վշտացած ու կատաղած իշխան Գոլիցինը Թիֆլիս ուղարկեց մի բարձրաստիճան հոգևորական այդ թաղումը շքեղ կերպով կատարելու համար: Վասիլևի դիակը թաղվեց հունաց եկեղեցու գավթում՝ ի նշան արտասովոր պատվի:

Յեվ ահա, այսպես մի քանի տարիների ընթացքում մեկը մյուսից ավելի անգութ, անսիրտ ու գազանային կարգադրություններով իշխան Գոլիցինը տանջեց ու չարչարեց Կովկասի հայությանը և խոր խոցեր բացեց նրա սրտի վրա:

Այդ ժամանակաշրջանում մեր կրած տանջանքների պատմությունը լրիվ դարձնելու համար պետք ե հիշենք նաև մի այլ տխուր և քստմնելի հանգամանք: Այդ տարիներում Գոլիցինին սկսեցին ձայնակցել նաև Ռուսաստանի «առաջավոր» մամուլի մի քանի օրգաններ: Այդ լկտի ու հայի արյան ծարավ մամուլը պարբերաբար իր էջերում վիրավորում, ծաղրում ու չարախոսում եր հայերին: Ցարական կառավարության բերանն հանդիսացող ամենատարածված լրագիրը հոդվածներ եր տպագրում, վորոնք պատկանում եյին նրա խմբագիր Սուվորինի և գլխավոր աշխատակից իշխան Մենշիկովի գրչին: Այս վերջիններին ձայնակցում եր Թիֆլիսում հրատարակվող պաշտոնական լրագրի խմբագիր Վելիչկոն, այդ հայակեր անձնավորությունը, Գոլիցինից հովանավորված այդ ճիվաղը:

Մնաց արդյոք զրպարտություն ու չարախոսություն, վոր այդ ստոր դավադիրները չգրեին հայերի մասին:

Մեր մամուլը շատ հազվագյուտ դեպքերում եր պատասխանում նրանց, այն էլ շատ զսպված ու վախկոտ տոնով, համոզված լինելով, վոր իրանք դադարեցման կյենթարկվեն, յեթե իրանց սրտի ամբողջ թույնը թափեն:

Հայ ինտելիգենցիան տանջվում եր, վիրավորվում, բայց դարձյալ լռում եր, դարձյալ համբերում:

Ռուսաստանի բազմազգ յերկրների մեջ վոչ մի ուրիշ ազգ այսպիսի հալածանքների չեր ենթարկված, ցարական-Գոլիցինյան դահիճները մերկացրած

թրերով միայն հայ ժողովրդի հետևից եյին ընկել, այն էլ՝ անտեղի կերպով, առանց լուրջ ու հիմնական պատճառների:

Բայց կա մի պատմական ճշմարտություն, վոր ասում է. «Հալածել՝ նշանակում է տարածել»: Յեվ իրոք, Գոլիցինի հալածանքները զարթեցրին հայ ժողովրդի մեջ ազատասիրություն ու հայրենասիրություն, բորբոքելով նրա ատելությունը դեպի բռնակալ ռուս կառավարությունը, դեպի անգութ ցարիզմը:

Այսպիսով հայ հեղափոխական տարրի սրտի մեջ կուտակվեց ատելության թույնը և նրա մեջ առաջացավ ու նրան տանջել սկսեց վրիժառության ազահ ծարավը:

1902թ. թվականից Ալեքսանդրապոլում սկսել եր հետզհետե զորեղանալ Հնչակյան Ս-Դ կուսակցությունը:

Չնայելով դաշնակցականների հարուցած ամեն տեսակ թշնամական վերաբերմունքին, վեճերին ու կռիվներին, արհամարհանքին ու յեղբայրասպան ակտերին, նա հերոսաբար կռվում եր իր թե՝ ներքին, և թե՝ արտաքին թշնամիների դեմ և տանում եր փայլուն հաղթանակներ:

Կուսակցությունն ուներ իր շարքերում նաև անձնազոհ գաղափարական մարտիկների մի աչքի ընկնող խումբ, վորը միշտ պատրաստ եր անցնել հրի ու սրի միջով:

1902թ. Ալեքսանդրապոլի վարչությունը մտադրվեց տեռորի միջոցով վերացնել Գոլիցինին- այդ հայի արյան ծարավ Բորենուն, բայց նա ընկնում եր կասի ու կամի մեջ, տատանվում եր այդ դեպքից առաջանալիք ահավոր հետևանքների առթիվ: 1903թ. օգոստոսին Ալեքսանդրապոլ եկավ Կարսի հնչակյան Ս-Դ կուսակցության վարչության նախագահ Ղազար Ղազարյանը և հայտնեց, վոր իրանց վարչությունը վորոշում է կայացրել Կովկասի փոխարքա իշխան Գոլիցինին տեռորի ենթարկելու համար, յեկել է իմանալու մեր տրամադրությունը և խնդրելու աջակցություն և դրամական օժանդակություն:

Գոլիցինին սպանելը մեր վաղուցվա ցանկությունն եր, ուստի առաջարկությունն ընդունվեց ամենայն սիրով և պատրաստակամությամբ և ահա 1903թ. օգոստոսի 16-ին Ալեքսանդրապոլի հնչակյան ս-դ կուսակցության վարչությունը հանձին Հարություն Զաքարյանի (նախագահ), Համբարձում Տեր-Ղազարյանի (գանձապահ), Պետրոս Մոճոռյանի (քարտուղար) և Հակոբ Էլբակյանի, կայացրեց իր վորոշումը՝ «իր կատարած անբավ չարիքների համար տեռորի յենթարկել Կովկասի փոխարքա իշխան Գոլիցինին»:

Այդ ժամանակ բարեբախտաբար Թիֆլիսում Հնչակյան կուսակցությունը լքված եր և չուներ իր վարչական մարմինը, իսկ Բագուն պետք է աջակցեր մեզ դրամական օգնությամբ: Վերջինս ուղարկեց նաև իր ներկայացուցչին-հայտնի հեղափոխական գործիչ Փարամազին, վորը հետագայում 24 հայտնի հնչակյան գործիչների հետ միասին, սուլթան Աբդուլ Համիդի որով, թուրք բռնակալ կառավարության ձեռամբ, Կ. Պոլսում կախաղան բարձրացվեց:

Յեվ ահա, այս օրվանից գործին ընթացք տալը, տեռորիստների կարիքներն հոգալը, նրանց միջոցներ հայթայթելը մնաց բացառապես Ալեքսանդրապոլի վարչության վրա, ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր այս քաղաքը ավելի մոտ եր Թիֆլիսին և նրա վարչությունը իր տրամադրության տակ ուներ ավելի խոշոր գումարներ:

Վորոշումը կայանալուց անմիջապես հետո կազմակերպվեց տեռորիստների խումբը: Յերկու վարչությունների հենց առաջին կոչին առաջ յեկան հինգ խիզախ և անվեհեր տաճկահայ յերիտասարդներ: Դրանք եյին Բիթլիսի վիլայեթի Բուլանխի շրջանի Թեղուտ գյուղացի Սարգիսը, Լորիսը և Սիմոնը և կողակցի Միհրն ու Պողոսը:

Բոլոր տեռորիստներերին էլ լավ ճանաչում եյին երկու վարչությունների բոլոր անդամներն էլ: Սա տակտիկայի տեսակետից իհարկե սխալ եր, վորովհետև նրանք կենդանի մնացած ու ձեռք ընկած դեպքում, անխուսափելի տանջանքների ենթարկվելու դեպքում կարող եյին տալ վարչական կազմի անդամների անունները և տասնյակ ու հարյուրավոր մարդկանց մատնել կախաղանի:

Բայց, մի այլ տեսակետից, պետք է արդարացնել այս արարքը: Տեռորիստը լավ պետք է գիտենա, թե ով է կանգնած իր քամակը և ով է ուղարկում իրան դեպի անխուսափելի մահը:

Վարչությունը, թեև մեծ վստահություն ուներ իր հերոս մարտիկների վրա, սակայն ապագա ավելի մեծ դժբախտությունների առաջն առնելու համար, մի դրական պահանջ դրեց հերոս ու անձնազոհ յերիտասարդի առաջ, այն է՝ նրանք հետները պետք է վերցնեյին թույն, վոր տեռորիստական ակտը կատարելուց հետո, յերբ տեսնեն վոր փախչելով ազատվելն անհնար է և պետք է բռնվեն անկասկած, նրանք պետք է ընդունեն թույնը և մեռնեյին անմիջապես:

Այս պահանջը սիրով ընդունեցին բոլորն էլ՝ ասելով հետևյալ խոսքերը. «մենք մի կյանք ունենք, թող նա յէլ դուրբան լինի ազգին»:

Սրանից մի շաբաթ հետո, նրանցից ամեն մեկը վերցրեց իր հետ հարկավոր քանակությամբ թույն, զինվեցին թունավորված սրերով ու ատրճանակներով և ուղևորվեցին Թիֆլիս:

Այդ անձնազոհ տեռորիստներից Սարգիսը ամուսնացած եր միայն 6 ամիս առաջ. նա առանց տատանվելու ընկավ ամենից առաջ, ասելով.«յես դեռ վաղուց ուխտել եմ, վոր իմ կյանքը զոհեմ իմ ազգին»: Բացի այս, թե նա և բոլոր մյուսներն էլ ունեն ծնողներ, քույրեր ու յեղբայրներ:

Մենք, ի նկատի ունենալով, վոր այս հերոսների մահով նրանց ընտանիքները զրկվելու են իրանց վերջին նեցուկից, նախապես խոստացանք նրանց, թե ով մեռնի ձեզանից, նրա ընտանիքը կստանա վարչությունից 1500 ռուբլի, իր տնտեսությունն ու բարեկեցիկ կյանքն ապահովելու համար:

Տեռորիստները Թիֆլիսում մի ամսի չափ հետևեցին իշխան Գոլիցինի ամեն մի քայլին, վորոնելով հնար ու միջոց նրան մոտենալու և իրանց դիտավորությունը ի կատար ածելու համար:

Այս վորոնումների ժամանակ նրանց աջակցում եյինք մենք՝ Ալեքսանդրապոլի վարչության անդամներս և Փարամազը:

Այս նպատակով Ալեքսանդրապոլից հերթով Թիֆլիս գնացինք տողերիս գրողը-Պետրոս Մոճոռյանը, Յարություն Զաքարյանը և Յամբարձում Տեր-Ղազարյանը:

Սեպտեմբեր ամսում մեր վարչությունը անսպասելի տեղեկություն ստացավ Թիֆլիսից թե տեռորիստների մեջ լքում է առաջացել և նրանք հրաժարվում եյին իրանց վրա դրված պարտականությունից:

Այս անսպասելի տեղեկությունը շանթի նման պայթեց մեր գլխին և վարչությունը անմիջապես վորոշեց մարդ ուղարկել և իմանալ ինչումն է բանը:

Մեր ընկեր Յ. Զաքարյանը նույն գիշերն հասավ Թիֆլիս, իսկ մնացածներս սրտատրոփ սպասեցինք նրա վերադարձին:

Յերեք օրից հետո վերդարձավ Զաքարյանը և պատմեց մեզ հետևյալը -«լուրը ճիշտ եր, տեռորիստների մեջ առաջացել եր լքում, և նրանք հրաժարվել եյին կատարելու իրանց վրա վերցրած պարտականությունը՝ հետևյալ պատճառաբանությամբ .«մենք տեսնում եյինք, վոր հրեշ փոխարքայի մեր ձեռքը գցելն անհնար է, մենք մեղանչում եյինք ազգի առաջ և մեզ տանջում է մեր խիղճը, վոր ծախսելով հեղափոխության արդար ու այնքան թանգ կոպեկները, չպետք է կարողանանք կատարել մեր ստանձնած գործը»:

Լսելով այդ պատճռաբանությունը, Զաքարյանը սկսում է ամեն կերպ համոզել նրանց, ասելով, վոր մի հեղափոխական գործչի համար ամոթ է հետ կանգնել իր տված խոսքից, վոր հազարավոր մարդիկ աչքերը հառել են դեպի նրանց և իրանք են, որ պետք է հանդիսանան ազգի պարծանքներ, ազգի հերոսներ: Ապա խորհուրդ է տալիս շարունակել հետապնդումը և մի օր անշուշտ կհասնեն նպատակի:

Խոսքը, խրախուսուսանքն ու հորդորը ազդում են լսողներից մի քանիսի վրա, վորից հետո Սարգիսը պատասխանում է -«ես կգնամ, ինչ էլ որ լինի, թեկուզ մենակ էլ մնամ»: Սարգսին հետևում են Պողոսն ու Սիերը, իսկ մնացած երկուսը հրաժարվում են վերջնականապես:

Սրանից հետո Զաքարյանը, տալով նրանց մի քանի հրահանգներ և ապրուստի առատ միջոց, վերադառնում է Ալեքսանդրապոլ: Այստեղ փակագծի մեջ առնենք, որ հետագա դեպքերը ցույց տվին, որ այս հերոսները ոչ թե վախեցել էին իրանց կյանքից, այլ վախեցել էին, որ չեն կարողանան կատարել տեռորը՝ մի շարք անհաղթելի պատճառներով, իրանց պետք է տանջէ խղճի խայթը, որ այդքան ծախսերն ու ժամանակի կորուստը անցել է իզուր և աննպատակ:

Այս երեք տեռորիստները հետեվելով Գոլիցինին, տեսնում են, որ նա սկսել է շաբաթվա մեջ մի օր, կառքով դուրս գալ իր կնոջ հետ միասին, բարձրանալ Կոջորի սարը և պտույտ կատարելով նորից վերադառնալ պալատ, պահապան ունենալով մի զինված կոզակ կառապանի կշտին նստած: Եվ ահա նրանք վորոշում են հարձակվել և կատարել տեռորը հենց այդ բարձունքի վրա:

Վորոշում են և կատարում:

1903թվի հոկտեմբերի 14-ին, տեսնելով մոտեցող կառքը, նրանք երեքն էլ մերկացրած դաշույններով թռչում են կառքի մեջ և հարվածներ են հասցնում Գոլիցինի գլխին՝ ջախջախիչ և խորը հարվածներ:

Գոլիցինի կինը, կառապանն ու կոզակը ընկնում են արնաշաղաղ հրեշի դիակի վրա և ամեն կերպ խոչընդոտ են հանդիսանում նոր հարվածներ հասցնելուն: Իշխանուհի Գոլիցինը հետագայում շատերին է պատմել, որ հարձակվողները այնպիսի ջենտլմեն մարդիկ էին, վոր վոչ միայն ինձ չխփեցին ձեռքերում բռնած դաշույններով, յերբ ես ամեն կերպ պաշտպանում էի իմ ամուսնու կյանքը, այլ մինչև իսկ ինձ ցավեր պատճառող հարվածներ չտվին, վորպես մի թույլ ու անզոր կնոջ:

Այդ հարվածներն հասցնելուց հետո հերոսները դուրս են թռչում կառքից, համոզված լինելով, վոր թունավոր դաշույնների այդ հարվածները ստացողը կենդանի մնալ չի կարող:

Պահապան կոզակը սկսում է կրակել փախչողների հետևից, ջանալով միաժամանակ կենդանի բռնել նրանց:

Հրացանի պայթյուններից և առաջացած աղմուկի ու իրարանցման շնորհիվ ամեն կողմից թափվում են մարդիկ և սկսում են օգնել կոզակին:

Այսպիսի աղմուկ ամենից առաջ և ամենից շատ բարձրացնում է Կոջորի լեռան այդ բարձունքի վրա գտնված գինետան տերը, մի վրացի, վորի ազգանունը տարաբաղտաբար մոռացել եմ և վորին հետագայում Հնչակյաններս վերջացրինք տեռորի միջոցով:

Այս յերեք տեռորիստներից Սիերին հաջողվում է վայր գցել իրեն մի բարձր տան կտուրից և ծուռ ու նեղ փողոցներով փախչել, ազատվել, իսկ Սարգիսն ու Պողոսը տեսնելով, վոր այլևս ազատվել անհնար է, ընդունում են իրենց մոտ պատրաստի պահած թույնը:

Դրանից հետո անմիջապես շրջապատում են նրանց, բռնում են և ուզում են տանել քարշ տալով, սակայն տեսնելով նրանց մարմինների ցնցումներն ու կծկումները, հասկանում են, թե ինչ է կատարվել, անմիջապես կանչում են մի կառք, և շտապում են նրանց հասցնել հիվանդանոց բժշկական միջոցներով վերահաս մահից ազատելու համար, սակայն հերոսները մեռնում են կառքի մեջ և հիվանդանոցի դռանը վայր են իջեցնում նրանց անշնչացած դիակները:

Արնաշաղաղ փոխարքային հասցնում են պալատ, իսկ դեպքը կայծակի արագությամբ տարածվում է քաղաքի բոլոր ծայրերում:

Գոլիցինը յերկու օր մնում է բոլորովին անզգա դրության մեջ, իսկ նրա վերքերը պատճառում են անասելի տանջանքներ:

Հրավիրված բժիշկները ամեն միջոց ձեռք են առնում կանգնեցնելու արյունը, բայց այդ միջոցները ավելի սաստկացնում են ցավը, ինչպես հետագայում պատմեցին մեզ այդտեղ հրավիրված բժիշկներին մտերիմ մի քանի հայերը:

Ինչպես հայտնի յե, այդ տեռորի լուրը Պետերբուրգ հասնելուն պես ցարը հեռացնում է Գոլիցինին պաշտոնից*, վորպես արատավորված փոխարքայի, իսկ

---

* Գ.Գոլիցինը պաշտոնից ազատվել է 1905թ. հունվարի 1-ին:

մի կարճ ժամանակից հետո նա մեռնում է Գերմանիայում, ուր գնացել էր վերջնականապես ապաքինվելու հույսով:*

Թե կառավարչական ամբողջ մարմինը, թե Գոլիցինն ինքը և, թե Թիֆլիսի վողջ հասարակությունը, շատ լավ գիտեյին, վոր այդ տեռորը հեղափոխական հայերի կատարած գործն է, բայց շնորհիվ տեռորիստների հերոսական մահվան, չիմացվեց գործը նախաձեռնողների ով լինելը և վոչ մի հայի գլխից մի մազ անգամ չընկավ:

Մինչև իսկ հետագայում լսեցինք, վոր կառավարչական մարմինների կարգադրությամբ, ըստ այն ժամանակներում գոյություն ունեցող օրենքների հրավիրում են մի հայ քահանայի և առաջարկում են նրան քաղել յերկու հերոսների դիակները, քահանան ընդդիմանում է առարկելով՝ թե ինչից է հայտնի, թե այդ մեռածները հայեր են, կամ թե ինչ դավանության են պատկանում նրանք:

Կշտամբելով քահանային, հրավիրողները պատասխանում են-«Վերցրեք, վերցրեք մենք ամեն բան լավ գիտենք»:

Անաբեկված քահանան հնազանդվում է և հողին է հանձնում յերկու մեռածների դիակները:

Փախչող Միհրը անցավ Պարսկաստան, վորտեղ նրան էլ սպանեցին արնածարավ դաշնակ մաուզերիստները, իսկ մեռած հերոսների ընտանիքներին մեր վարչությունը տվեց խոստացած նպաստը 1500-ական ռուբլի:

Ավելորդ չի լինի, յեթե հիշատակենք նաև հետևյալ դեպքը:

Այս տեռորից անմիջապես հետո մեր վարչությանը լուր հասավ Թիֆլիսից, վոր դաշնակցական մաուզերիստները իրենց վերագրելով այս տեռորիստական ակտը, փող են կորզում Թիֆլիսի հարուստներից:

Վարչությունը այս խայտառակության և ստի առաջն առնելու համար, վորոշեց անմիջապես վարչական կազմի անդամներից մեկին Թիֆլիս ուղարկել: Գնալու հերթը տողերիս գրողինն էր և յերբ հասնելով այնտեղ լսեցի ու տեսա, թե այդ ճարպիկ սրիկաները ինչքան տեղերից և ինչպիսի ահագին գումարներ են կորզել:

Թիֆլիսը յես գտա ահաբեկված, սպասողական անհանգիստ դրության մեջ, ինչ պիտի կատարվի վաղը-ահա բոլորի էլ մտատանջության միակ առարկան: Յերբ իմ կառքը կանգ առավ Դվորցովայա փողոցի վրա գտնված փոխարքայի պալատին կից «Վիկտորիա» հյուրանոցի առաջ, յես տեսա, թե պալատի շուրջը ինչպիսի խորունկ խրամատներ են փորում, գետնի տակից յերկաթալարեր անցկացնելու և նրանց ծայրերը էլեկտրական տոկերով միացնելու համար, վոր յեթե հայերն ուզենան գետնի տակից փորված տունելներով պալատը պայթեցնել, իմացվի այդ ձեռնարկությունը էլեկտրական տոկերի միջով:

Յիվանդ փոխարքան զառացանքների մեջ ընկած այդ աստիճան վախենում ու սարսափում էր հայերից:

Այդ վտանգավոր որերին՝ 12 որ մնալով Թիֆլիսում և ապրելով պալատին կից հիշյալ հյուրանոցում, յես պաշտոնական և կնքված գրություններով հայտնեցի բազմաթիվ հիմնարկությունների ու անձանց, թե մեր կուսակցությունն է կատարել այդ տեռորը և թե զգույշ լինեն, չխաբվեն և վոչինչ չտան այդ չարագործ սրիկաներին:

Այդ գրությունների հետևանքով, մի յերկու ազգասերներ էլ ինձ առաջարկեցին գնալ և փող ստանալ, բայց յես ստիպված լինելով հեռանալ Թիֆլիսից, վերադարձա Ալեքսանդրապոլ և ինձանից հետո գնացող վարչության անդամ Յ. Տեր-Ղազարյանը մի քանի անձնավորություններից ստացավ մի քանի հազար ռուբլի:

Մեր սպասածից շատ ավելի նշանակություն տվեց այս տեռորիստական ակտին արտասահմանյան մամուլը:

Մենք արտասահմանից ստացանք մի քանի համարներ և լրագրական հոդվածներ, վորոնցից տեղեկացանք, թե ինչպես ֆրանսիական, գերմանական և անգլիական և այլ յերկրների ազատամիտ և ձախակողմյան լրագրերը դրվատել են

---

* Գ.Գոլիցինը մահացել է 1907թ. մարտի 28-ին:

մեր այդ կատարած տեռորը, համարելով այն «տանջված հայերի բուռն ցասման արտահայտություն»:

Այդ լրագրերից մի քանիսը գովելով հայերի կատարած այդ վրիժառության ակտը, վերջացրել եյին իրանց հոդվածները հետևյալ նախադասությամբ-«քաջ ու անվախ հայերը ցույց տվին, վոր իրենք վոչ վախկոտ լեհեր են և վոչ էլ թուլամորթ ֆիններ»:

Յեվ ահա, թե ինչ հետևանքներ ունեցավ այս ամենը: Մի կողմից հետևելով հայերի որինակին և մյուս կողմից իրենց վիրավորված զգալով արտասահման-նյան մամուլի այդ արտահայտությունից, Գոլիցինյան տեռորից մոտ յերեք ամիս հետո լեհերը Վարշավայում խփեցին ու սպանեցին իրենց յերկրի կառավարչա-պետ Գեներալ- գուբերնատորին, իսկ դրանից մի ամիս հետո ֆինները Հելսինկի-ում սպանեցին իրենց Գոլիցինին-իրենց տանջող կառավարչապետին:*

Նախքան մեր այս համառոտ ակնարկը վերջացնելը, մենք չենք կարող կանգ չառնել նաև հետևյալ ուշագրավ հանգամանքի վրա:

Կան մարդիկ, վորոնք ինչ ինչ պատճառներից դրդված թերագնահատում են այս տեռորը, պատճառ բերելով այն հանգամանքը, վոր հարձակվողները չեն կարողացել վերջնական սպանել Գոլիցինին:

Մենք, վոչ կուսակցական և կամ անձնական սնտիությամբ արբեցած և ոչ էլ վորևե հարցով շահագրգռված, այլ վորպես մի մասնավոր անհատ, գտնում ենք, վոր այս թերագնահատումը անտեղի յե ու անարդար, և մինչև իսկ ավելի լավ, վոր այս կերպ կատարվեց:

Գոլիցինը վերքերի ցավով տանջվեց մինչև իր մահը, տեսավ իր իսկ աչքերով իր խայտառակ անկումը, տեսավ, վոր հայերը քաջաբար վրեժ հանեցին իրենից և մարսեցին իրենց արածը, տեսավ, վոր իր պատճառով չընկավ և վոչ մի հայի գլխից մի մազ անգամ, և մեռավ անշուք մահով, ամենքից արհամարհված ու նզովված:

Բացի այս ամենը, Նիկոլայ 2-րդը և նրա արբանյակները տեսան ու զգացին, վոր հայը մի հեղափոխական ժողովուրդ ե, վորի հետ պետք ե զգույշ վարվել և չգրգռել նրա ազատասիրական զգացմունքները :

Յերբ Գոլիցինը հեռացավ Կովկասից, մի սրամիտ լրագիր հայտարարություն տպագրվեց իր եջերում հետևյալ բովանդակությամբ- «Կովկասից փախել ե մի շուն, նշանները՝ գլխին ջարդվածքներ և այլն, գտնողը կստանա մեծ վարձատ-րություն», իսկ յերբ նա մեռավ, տեղական թերթերը գրեցին մի քանի խոսք միայն. «Կովկասի նախկին փոխարքա, յեղբայրադավ Գոլիցինը մեռավ»:

Միթե այս ամենը տեսնելուց հետո ներելի յե նսեմացնել այս տեռորիստական ակտի արժանիքը և ուրանալ նրա հերոսական նշանակությունը:

ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 24, թ. 1-19: Տպագիր օրինակ:

---

* Խոսքը 1906թ. օգոստոսի 14-ին Վարշավայում սպանված գեներալ-նահանգապետ Ն.Վոնլյարլյարսկու և Հելսինկիում 1904թ. հունիսի 3-ին սպանված գեներալ նահանգա-պետ Ն.Բոբրիկովի մասին է:

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

65 տարի է անցել Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտից: 1945 թվականի մայիսի 9-ը ընդմիշտ կմնա մեր ժողովուրդների հիշողության մեջ՝ որպես բարձրագույն արդարության գերակայության, չարի ու բռնության ուժերի նկատմամբ բարության և ազատության հաղթանակի օր: Իսկ համընդհանուր հաղթանակի գործում իրենց մեծ և անուրանալի ներդումն ունեցան խորհրդային բանակի շարքերում կռվող հարյուր հազարավոր հայորդիներ, ինչպես նաև դաշնակից երկրների զորքերում, Դիմադրության ու պարտիզանական շարժումներում մարտնչող մեծաթիվ սփյուռքահայեր: Հայ զինվորներն ու զորավարները պատմության այդ մեծ քննությունը բռնեցին պատվով: Պատվով կռվեցին նաև ժամանակի հայ գրողներից շատերը: Նրանցից մի քանիսի՝ Աշոտ Շայբոնի, Գուրգեն Բորյանի, Խաժակ Գյուլնազարյանի, Սերո Խանզադյանի ռազմաճակատային նամակներից մի քանիսը ներկայացնում ենք «Բանբերի» ընթերցողներին: Նշենք, որ ընտրությունը (նամակները բազմաթիվ են) կատարել ենք հայ այն գրողների անձնական արխիվային ֆոնդերից, որոնք պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում: Ստացվել է այնպես, որ 9 նամակներից 7-ը թվագրված են 1945 թվականով: Սրտառուչ, պարզ ու անմիջական նամակներն այնքան խոսուն են, որ մեկնաբանությունների կարիք չունեն:

Ներկայացնենք նամակագիրներին.

Խաժակ Մեսրոպի Գյուլնազարյան (1918-1995) - արձակագիր, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր:

1941 թվականի հունիսին, Խ.Գյուլնազարյանը նոր էր հանձնել պետհամալսարանի ավարտական վերջին քննությունը և երկու տպագրված՝ «Չար բազեի մահը» ու «Ծուլլի վերջը» գրքույկների հեղինակ էր, երբ սկսվեց Հայրենական Մեծ պատերազմը և շատերի պես նա էլ դարձավ զինվոր: Սկզբում սովորեց Թբիլիսիի հրետանային դպրոցում, ապա՝ որպես մարտկոցի հրամանատար, մասնակցեց Կերչի դժվարին մարտերին: Անհավասար մարտերից մեկում Խաժակը գերի ընկավ. «… Դա 1942 թվի մայիսի 19-ին էր: Համակենտրոնացման ճամբարներում մնացի երկու տարի: Փախուստի փորձերը ձախողվում էին: Ընկերներիցս շատերը մեռան սովից, տառապանքից, տիֆից… Բայց շատերն էլ դիմացան, դաժան տառապանքի մեջ, էլի հայրենիքի զինվոր մնացին: Ես էլ դիմացա և 1944-ի օգոստոսին, ազատվելով համակենտրոնացման ճամբարից, կրկին մեկնեցի ռազմաճակատ…», տարիներ անց հիշում է գրողը: Կնոջը՝ Շուշանին՝ «Կաթ ծաղիկների չքնաղ թագուհուն» և ծնողներին հասցեագրված նամակները (N 1, N 2) նախորդել են Գյուլնազարյանի գերեվարվելուն:

1945 թվականի հունիսի 9-ին, լեյտենանտ Խաժակ Գյուլնազարյանը պարգևատրվեց «Բուդապեշտի գրավման համար» մեդալով, իսկ ավելի ուշ՝ «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշանով: 5 տարի անց՝ 1950-ին, Խ.Գյուլնազարյանը պաշտպանեց «Հայրենական պատերազմի արտացոլումը սովետահայ արձակում» թեմայով ատենախոսությունը և ստացավ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան:

Աշոտ Շայբոն (Աշոտ Գասպարի Գասպարյան) (1905-1982) - արձակագիր, դրամատուրգ, բանաստեղծ: Ըստ էության, Ա.Շայբոնը գիտաֆանտաստիկ ժանրի հիմնադիրն է խորհրդահայ գրականության մեջ: Գրողին լայն ճանաչում բերեցին նրա գիտաֆանտաստիկ վեպերը՝ «Սպիտակ ստվերների աշխարհում», «Գիշերային ծիածան», «Տիեզերական օվկիանոսի գաղտնիքները», «Երկիր մոլորակի գաղտնիքը», որոնք տպագրվեցին պատերազմից հետո:

1941-44թթ. Ա.Շայբոնը ծառայել է խորհրդային բանակում: Հրապարակվող նամակները (N 3, N 4) հասցեագրված են կրտսեր եղբորը՝ Գևորգին, որը դեռևս ռազմաճակատում էր: Ինքը՝ Շայբոնը, վերադարձել էր 1944թ. մայիսին, վիրավորվելուց հետո և աշխատում էր Հայպետհրատում:

Սերո Նիկոլայի Խանզադյան (1915-1998) - արձակագիր, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ: Նրա գրչին են պատկանում «Մեր գնդի մարդիկ», «Հողը», «Մխիթար Սպարապետ», «Քաջարան», «Թագուհին հայոց» վեպերը: Մեծ կտավի գործերից է նաև «Հայրենապատում» ճամփորդական նոթերը: Հեղինակ է բազմաթիվ պատմվածքների, հոդվածների, ակնարկների և հուշերի:

1941-45թթ. Ս.Խանզադյանը ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել Մեծ Հայրենականին, պարգևատրվել «Հայրենական պատերազմի առաջին և երկրորդ աստիճանների», «Կարմիր աստղի» շքանշաններով: Ի դեպ, 1977թ. «Երեք տարի 291 օր» ռազմաճակատային օրագրության համար Ս.Խանզադյանին շնորհվել է ՀԽՍՀ պետական մրցանակ:

Ռազմաճակատային հարյուրավոր նամակներից ընտրել ենք մորը (N 5), կնոջը (N 6, N 8) և եղբորը (N 7) հասցեագրված չորս նամակ: Նշենք, որ մորը ուղարկված 1945թ. մայիսի 9-ի նամակի ձախ անկյունում հեղինակի գրությունը կա՝ «Այս նամակի բնագիրն ինձնից վերցրեցին Երևանի Հեղափոխության թանգարանի ընկերները»: Այս հանգամանքը, սակայն, բոլորովին չի նվազեցնում նամակի արժեքը:

Հրապարակվող նամակները ներկայացվում են առանց խմբագրման, բնագրի լեզվով, մասնակի կրճատումներով, ուղղագրական որոշ շտկումներով, դասակարգված ժամանակագրական սկզբունքով: Քանի որ դրանք բոլորը ընտրված են Հայաստանի ազգային արխիվի ֆոնդերից (այդ մասին հիշատակված է վերը), չկրկնելու համար, արխիվի անունը չի նշվել: Ավելորդ չենք համարում նշել, որ հավաքածուում ընդգրկված նամակագիրների համար 2010 թվականը հոբելյանական է: Այսպես. լրանում են Աշոտ Շայբոնի ծննդյան 105 և Սերո Խանզադյանի ծննդյան 95-ամյակները:

Վարդիթեր Մանգասարյան

N 1
ԽԱԺԱԿ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԿՆՈՋԸ՝ ՇՈՒՇԱՆԻՆ

26 մարտի 1942թ.
Ղրիմ

«Սիրելիդ իմ Շուշան

Շուրջս խաղաղ է այժմ, ինչպես գյուղում՝ գիշեր ժամանակ: Փոքրիկ ճրագը վառվում է ու ծխում ու այդ լույսի տակ պառկած, ես գրում եմ քեզ իմ այս նամակը, իմ սրտի նման մաքուր ու բոսոր թղթի վրա:

Անուշիկ աղջիկ, կյանքն աստիճանաբար փոխվեց ու ես հանկարծակիի եկա, ինձ համար ճակատն այժմ այնքան հասարակ է և մենամարտը թշնամու հետ այնքան պարզ, որքան պարզ ու հասարակ չէր նույնիսկ քեզ հետ, նազելիս, Երևանի հրաշակերտ Աբովյան փողոցի մայթի վրա շրջելը: Մի խոսքով, ամեն ինչ ունի յուր լավ կողմը ևս, իսկ այս կռվի լավ կողմն ինձ համար արդար զինվորի սրտի վեհ զգացումն է: Գեղեցիկ էր կյանքը, գեղեցիկ կլինի նա շուտով: Կապրեն մարդիկ նորից մեր երկրում ուրախ ու երջանիկ, վառոդի ծուխն իսպառ կմոռացվի և ես հուսով եմ, որ այդ երջանիկների թվում կլինենք և մենք՝ ես հավատացած եմ: Առողջությունս շատ լավ է, ճիշտ է այստեղ սարսափելի ուժեղ քամիներ եղան և մռռզ: Նույնիսկ անհավատալի կթվա, բայց այդ ճիշտ է, սակայն ես թքեցի և այդ ցրտերի վրա, այժմ ամուր եմ ինչպես չինական հոյակապ պարիսպը, սիրտս անվրդով է և հանգիստ, թե մտածում եմ՝ այդ միայն ձեր մասին, քո՝ անուշիկս և տնեցոց: Գրեք բոլորի մասին և շատ գրեք: Համբուրում եմ բոլորիդ: Հորս, մորս, քույրերիս, Զիվան եղբորս, ձեր բոլորի համար, ձեր նման շատերի համար, իմ նման շատերի հետ գնում եմ ես իմ արդար ճանապարհով: Ողջույն ձեզ:

Ի դեպ, երևի պատահաբար, հանդիպեցի մեր համալսարանից, հենց մեր ֆակուլտետից մի տղայի` Կոտայքից, անունը Կարո, առաջ ինքը ինձ ճանաչեց, այստեղ, ըստ նրա ասելու, մեր տղաներից շատերը կան: Բարև և համբույրներ բոլոր հարազատներին, ջերմ, ջերմ համբույրներով` քո Խաժակ

Ֆ. 970, ց. 1, գ. 130, թ. 40: Ինքնագիր:

N 2
ԽԱԺԱԿ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԿՆՈՋԸ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻՆ

1 ապրիլի 1942թ.
Ղրիմ

Գարուն երգ. գարուն աղջկան` Շ-ին
Արդեն գարուն է եկել
Ծաղկած գարուն սիրելի
Երևանի փողոցում
Ինչքա՜ն աղմուկ կլինի:
...Կանցնեն օրերն այս վառման
Կյանքն իր հունը կգտնի
Իմ նավակն էլ համարձակ
Նավահանգիստ կմտնի...

Շուշան ջան, քո նամակներից և հայրիկի գրած նամակներից ինձ համար պարզվեց անչափ տենչալի մի քանի հարց, ավելի ճիշտ մի քանի մութ հարցեր ստացան ցանկալի պատասխան. նախ որդիական անկեղծ ցնծությամբ իմացա, որ Սաթն առողջացել է և այնքան լավ է զգում իրեն, որ պատրաստվում է շարունակել իր աշխատանքը, ապա ինձ համար պարզվեց, որ իմ բոլոր լավերը Երևանում ապրում են մարդավայել և վերջիվերջո պարզվեց, որ սիրելի Շուշանն ու իր երևանյան կոմպանիան, ինձ սիրում և հիշում են միշտ և հպարտանում ինձանով (խոսքս, պարզ է, իմ անուշ ծերունիների, մեր խաղաղ ընտանյաց մասին է): Շուշո ջան, ես առաջվա նման առողջ եմ և հանգիստ, ոչ մի թնդյուն, ոչ մի վառոդի հոտ չի սարսռեցնում իմ ջահել սիրտը, իմ երակներում անկանգ հոսում է հպարտ ու անխոցելի լեռնեցու մուգ կարմիր արյունը: Յարց է առաջ գալիս, իզուր չէ՞ արդյոք իմ այդ չափ հպարտությունը, սնապարծություն չէ՞ արդյոք, ո՛չ, սիրելիս, քանի որ իմ հպարտության մեջ «ես»-ը չէ, որ իշխում է մեր մոտորային աշխարհում, «ես»-ը ձուլված է հզոր «մենք»-ի մեջ, երկրաչափական ֆորմուլայով այդ կարելի է արտահայտել այսպես. ես մենակ ոչինչ եմ, ես, իմ նման շատերի հետ` ամեն ինչ: Ահա իմ սրտում ծփում է հենց այդ հզոր «մենք»-ի հպարտությունը: Կիսաստվածները (Բիբլիայի մեջ) միշտ էլ հպարտ են եղել, այժմ հյուսված է մի մեծ, մի աննախադեպ Բիբլիա, մի աստղենի էպոս և այդ էպոսի հերոս կիսաստվածները ավելի քան ունեն իրավունք հպարտանալու իրենց արդար և իմաստուն գործով: Միտքը էակին մարդ է դարձնում, իսկ սերը` հերոս. զգացմունքը չես սանձի, եթե նա համամարդկային է, իսկ մեր մեծ ընտանիքի հպարտությունը հենց այդպիսի զգացմունք է:

Շուշանս, քեզնից ստացած նամակները գրեթե բոլորը գրված են փետրվար ամսին, միայն մեկն է գրված մարտ ամսի 8-ին, այդ նամակից ես իմացա, որ ստացել եք իմ ուղարկած ծանրոցը: Իմ հասցեն է. Действ. Крас. Арм. пол. поч. ящик 1624 850 А. П. в Батарея л-т Х. М. Г.

Գրեք իմ նամակները հասե՞լ են ձեզ, թե ոչ: Քեզ ուրախ պահիր և աշխատիր հետ չմնալ կուլտուրական կյանքից: Յամբուրում եմ բոլորիդ ու քեզ, սիրուն թռչնակ, ամուր, ամուր:

Քո, միշտ քո` Խաժո

Յայրիկ ջան, մայրիկ ջան, ձեր փետրվար ամսի վերջերին գրած նամակները ստացա, ներեցեք, որ երկար չեմ պատասխանում, միևնույնը պիտի գրեմ ինչ

Շուշոյիս, շա՜տ, շատ ուրախ եմ, որ դուք սրտով արի եք, ձեր արյունն է հոսում իմ երակներում, ես էլ անկոտրում սիրտ ունեմ: Դմբացնում ենք ֆրիցին, քշում ենք կամաց-կամաց: Իմ մասին բոլորովին չմտածեք, հավատացնում եմ, որ սաղ-սալամաթ կթռչեմ ձեր գիրկը: Եթե նամակներն ուշանան, ոչ մի վատ բան միք մտածի, այդ կարող է պատահել մեր դաշտային փոստի աննկանոն աշխատելու հետևանքով:

Համբուրում եմ ձեզ, գրկում եմ՝ ձեր Խաժո

Ֆ. 970, ց. 1, գ. 130, թթ. 38-39: Ինքնագիր:

N 3
ԲԱՆԱՍՏԵՂԾ, ԱՐՁԱԿԱԳԻՐ ԱՇՈՏ ՇԱՅԲՈՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԵՂԲՈՐԸ՝ ԳԵՎՈՐԳԻՆ

22 ապրիլի 1945թ.
Երևան

Սիրելի Գևորգ

Ստացա քո ջերմ նամակագիրը գերմանական մի գյուղից գրած: Գևորգ ջան, իմ հեռավոր եղբայր, զգում եմ թե որքան մեծ է մեր միջև ընկած տարածությունը, բայց և զգում եմ, թե որքան մոտ է մեր հանդիպման ժամը: Մեր քաջարի բանակի առաջխաղացումը կրճատում է մեր՝ իմ և քո միջև ընկած տարածությունը:

Դու ինձ խնդրում ես, որ ես քեզ հաճախ գրեմ և ես իհարկե քեզ հասկանալով՝ հանցավոր եմ զգում ինձ: Բայց դու իմ Գևորգ, գիտցիր, որ եթե իմ «ծուլությանը» վերագրեմ նամակներիս ուշացումը, ապա երբեք «ծուլության» չեմ մատնի այն, որ ես գիշեր ու ցերեկ մտքով կապված եմ քեզ հետ: Քեզ հետ եմ իմ տխրության և ուրախության ժամերին, քեզ հետ եմ իմ զայրույթի և խաղաղ պահերին: Այս հանգամանքը երբեմն արգելում է, որ ես քեզ հաճախ գրեմ: Ինձ մշտապես համարում եմ կապված քո էության հետ, և երբեմն նամակով չեմ կամենում թուլացնել մտքերիս լարումը: Մի խոսքով, ես բավարարված եմ զգում ինձ, քեզնից ստանում եմ այն անհրաժեշտ, զգացողական կարգի տեղեկությունները, որոնք լիակատար ձևով բավարարում են ինձ: Կարծում եմ, որ դու ինձ հասկանում ես…օրինակ, երբեմն ուզում եմ, որ դու զգաս և լսես ինձ, ես այդ կատարում եմ մտքի ռադիոալիքով:

Մի խոսքով, դու մի մտածիր: Բեռլինի մուտքերի մոտ եմ տեսնում քեզ և Բեռլինի մեջ: Ես քեզ հետ եմ եղել և կլինեմ:

Սիրելի Գևորգ, մեզ մոտ արդեն գարուն է: Երևանը գեղեցիկ է ու փառահեղ: Կարգավորվել ու կարգավորվում են փողոցները, այգիները, զբոսատեղիները:

Մենք լավ ենք: Դու միշտ մեր զրույցների առարկան ես: Գիտենք սիրելիս, որ կգա այն ժամը երբ մենք կսպասենք քեզ Երևանի կայարանում՝ քո վերադարձին: Այդպես կլինի, անպայման այդպես կլինի:

Այսօր, մեր քաջարի բանակը մուտք է գործում Գերմանիայի մայրաքաղաքը: Եվ ես ինչպես միշտ նորից քարտեզի մոտ էի: Ես քեզ որոնում եմ քարտեզի վրա և կարծես ճիշտ կերպով կարողանում տեսնել քո անցնելիք ճանապարհը:

Գևորգ ջան, ես շատ լավ եմ, աշխատում եմ կինոստուդիայում, մեր մասին չմտածես, տանեցիները ողջ և առողջ են:

Գևորգ ջան, գրիր քո մասին ըստ հնարավորին: Երբ քո նամակներն ուշանում են, ես չեմ անհանգստանում: Ես շատ լավ գիտեմ, որ հարձակման ժամանակ միշտ էլ նամակներն ուշանում են: Գևորգ ջան, քո վերջին նամակը դու թվագրել էիր, «փետրվարի-8-ին»՝ մինչդեռ պետք է գրած լինեիր մարտի 8-ը: Ծրարի վրա կնիքը մարտի 8-ն էր… Այդ ոչինչ, կպատահի, բայց մեզ համար այդպիսի սխալները տարակուսանքի պատճառ կարող են լինել:

Գևորգ ջան, քեզ քաջ և խիզախ պահիր, որ հաղթահարես վերջին շաբաթներն ու ամիսները, Գերմանիան ջախջախված կլինի: Դու և քեզ նման շատ-շատերը արձակուրդ կստանան: Դու կվերադառնաս և քո հարազատների հետ կխմես արևաշող Հայաստանի սառնորակ ջուրը, հիանալի գինին: Պինդ կաց…

Կյանքի իմաստությունը նրա մեջ է, որ նրա լաբիրինթի մեջ գտնես այն դռնակը, որը կարող է պատահել երբեք չի բացվում, բայց գուցե և միակն է ու հնարավորը: Իսկ առհասարակ լաբիրինթի բաց դռները կան ու կան և նրանք անանցանելի են միմիայն պեսիմիստ մոլորյալների համար և ոչ հազարավորների և միլիոնների համար, որոնց թվում և դու ես: Խոսքս պատերազմի շրջանում կատարվող իրադրությունների մեջ դրված ժողովուրդներն են և նրանց մասին է: Իսկ դու պետք է գիտենաս, մեր ժողովրդին ոչ մի լաբիրինթ չի կարող խճճել… Մենք՝ սովետական մարդիկս և սովետական ժողովուրդը կարող ենք բանալ փակ դռները, որոնք երբեք չեն բացվում և անցնել բոլոր բաց դռներով, որոնց գտնելը անհնար կլիներ մոլորյալի համար:

Ամուր կաց ախպերս, ֆրոնտավիկի աչքերը թող թափանցեն այն բոլոր հայտնի և անհայտ անկյունները, ուր դարանակալ է թշնամին: Այդտեղ Գերմանիայում պետք է ուրիշ աչքեր և ականջներ ունենալ, որ կարելի լինի որսալ նենգ ու անարգ թշնամու արարքները:

Պարտվող թշնամին ամեն մի ստորություն իրեն զենք է դարձնում: Ահա թե ինչու ես քեզ հրամայում եմ, որ դու բոլորովին այլ աչքերով, իսկ ամենակարևորը՝ այլ զգացումներով զինված լինես, որ ոչ մի պատահար, ոչ մի անսպասելիություն չհաղթանակի:

Գևորգ ջան, ես ֆրոնտավիկներիդ կյանքի մասին գիտեմ այնքան լավ և այնքան պարզ և բացի դրանից այնքան ավելին, որ դու կարող ես վստահորեն հավատալ իմ խորհուրդներին:

«Ֆրոնտում մահն ու կյանքը մեկտեղ են գործում. - դու ճիշտ ես և այդ այդպես է: Հաջորդող մտքերդ սառնարյուն լինելու և չսրտնեղվելու մասին նույնպես ճիշտ են: Սակայն կա մի բան, որ ես կավելացնեի, այդ այն է, որ մարդ իր բոլոր ցանկությունները չպետք է ֆետիշացնի, երբ նա հանդիսանում է բանակի մասնիկը: Այդ իհարկե չի նշանակում, թե մարդն իր անձնական հույսերից ու հույզերից պետք է զրկված լինի: Նա պետք է միշտ էլ մարդ մնա իր բոլոր թույլ ու ուժեղ կողմերով, սակայն մեկ տարբերությամբ, որ այդ անհատական հատկությունները՝ ինչպես ինքդ ես գրում քո նամակում «Ընդհանուր գործին» մազաչափ անգամ չխանգարեն: Ուրեմն լավ եղիր ախպերս, թող միտքդ գործի պարզ և սիրտդ բաբախի կանոնավոր: Թող քո մեջ չդադարի վրեժի ոգին, այն բանի համար, որ թշնամիները կամենում էին կրունկի տակ առնել քո հայրենիքը: Իսկ հայրենիք ասածը՝ շատ կոնկրետ գաղափար է, հայրենիքը քո հայրական տունն է, քո մոր, քո եղբոր, քո քրոջ պատիվն է: Հայրենիքը մեր ուրախ և երջանիկ կյանքն է, մեր օդն ու ջուրը: Մեր դպրոցներն ու թանգարանները, մեր լեզուն, կուլտուրան, մեր սովետական մարդիկ:

Ահա ախպեր ջան, այսքան: Դու շարժվում ես առաջ դեպի արևմուտք: Հաղթություն է, փառք հաղթանակի հերոսներիդ:

Լավ կաց ախպեր, պինդ եղիր ինչպես միշտ, և վստահ եղիր, ձգտիր, կամեցիր և մենք կգրկենք միմյանց Երևանում: Բարևներ մայոր Կադռչնիկովին:

Համբույրներով՝ քո Աշոտ Շայբոն

Ֆ. 1266, ց. 1, գ. 173, թ. 2-4: Ինքնագիր:

N 4

5 մայիսի 1945թ.
Երևան

Սիրելի Գևորգ

Բեռլինն ընկավ… Հնչեց ժամը և շատ շուտով գերմանական ֆաշիզմի գարշելի բունը վերջնականապես ճզմված կլինի: Այո՛, թող առմիշտ կործանված լինի մարդկության աղետի այդ գարշելի երկիրը:

Ախպեր ջան, սրտատրոփ սպասում եմ նամակիդ, չեմ կասկածում, որ դու կամ Բեռլինումն ես կամ թե նրա շրջապատում:

Անրացիր սիրելիս, վերջին շաբաթներն ու ամիսը ավելի ծանր են քեզ համար

և ինձ համար: Անշուշտ այդ շատ էլ բնական պետք է համարել: Որքան որ գործը մոտենում է վախճանին, այնքան էլ մարդ անհամբեր է դառնում: Բայց ոչինչ, հավաքենք մեր վերջին համբերությունը, որը շատ մեծ է իր քանակով և խորն է իր էությամբ:

В Египте действуют следующие армянские общественные организации: 1) Армянский Благотворительный Союз (является центром Благотворительного Союза на Ближнем Востоке), 2) Спортивное общество "Нубар", 3) Спортивное общество "Арарат", 4) Всеобщий армянский спортивный Союз, 5) Армянский студенческий Союз, 6) Армянский Союз любителей искусства.

Имеются клубы дашнаков "Навасард", клуб рамкаваров, библиотека-читальня гнчаков "Айели" ("Зеркало"), библиотека им. Миграна Дамадяна (около 5 тыс. книг), училище Галстяна (800 учащихся).

Из известных деятелей армянской культуры можно отметить следующих: профессор Тамара Закарян-Арамян (пианистка), каррикатурист Саруxан, художник Оник Аветисян, Бюзанд Коджаманян, Аракел Патрик, писатели Саркис Саакян, Акоп Арамян и др. Армянский торговый рынок Египта прославлен на всем Ближнем Востоке. Национальная армянская жизнь в армянской колонии в Египте довольно оживленная. Здесь находится Ближневосточный центр армянского Благотворительного Общества. По сравнению с другими партиями большое влияние имеют рамкавары, которые пользуются симпатией и материальной поддержкой руководства Благотворительного Союза. Коммунистической партии организационно не имеется. Египетская армянская буржуазия имеет проанглийскую ориентацию и ее интерес к Советскому Союзу связан с абстрактным патриотическмим чувством к Армении.

До сих пор в армянской колонии Египта нет ни одной влиятельной просоветской организации. Среди трудящихся масс имеется желание иммигрировать в Армению.

Сведения взяты:

1) из беседы с египетским подданым Акопом Арамяном (писатель, редактор рамкаварской газеты "Арев"), 2) из письма председателя ВОКС-а. Кеменева от 8/VIII 1944г. за N 847/с., 3) из письменных сообщений Уполномоченного ВОКС-а в Египте т. Харламова, 4) из газет "Арев", "Усабер" и журнала "Ашхатанк", 5) из писем полученных АОКС-ом.

ПАЛЕСТИНА

В Палестине, по сообщенным нам сведениям, проживают около 10.000 армян. Большая часть из них занимается ремеслом, некоторая часть составляет крестьянство. Примерно половина всех армян Палестины живет в Иерусалиме (5000 чел.), затем в Хайфе (3.900 чел.), в Яффе и пр.

Армянских газет в Палестине нет. Нерегулярно выходит под названием А.Е.М. (начальные буквы названия организации "Армянский Молодежный Союз" ("Ай еритасардац миутюн"). При армянской церкви в Иерусалиме выходит также журнал "Сион".

Из общественных организаций известны: 1) Лига защиты Советской Армении, 2) Земляческий Союз в Хайфе (дашнакский), 3) Союз армянской молодежи (рамкаваров) в Яффе, 4) Земляческий Союз (гнчаков) в Иерусалиме, 5) Всеобщий армянский спортивный Союз, 6) Около 16 других земляческих Союзов (Кесария, Малатия, Себастия, Харберт, Арабкир и др.), которые охватывают эмигрантов из названных районов и городов Турции, 7) Женское общество Красного Креста (находится под влиянием дашнаков).

В Хайфе имеется армянская школа. В Иерусалиме также имеются школы и библиотека. В Хайфе, при Союзе армянской молодежи (рамкаваров), действует клуб. Видных деятелей культуры нет.

Национальная общественная жизнь в армянской колонии в Палестине выглядит очень бледно, так как здесь отсутствует активно-организационное движение. Даже существующая "Лига защиты Советской Армении" имеет до сих пор только правление из 7 человек и не имеет своих членов, не имеет газеты. Из-за отсутствия газеты, высылаемые АОКС-ом статьи обычно зачитываются на собраниях.

Коммунисты в Палестине в большинстве случаев эмигранты из соседних стран. Влиятельной организации в армянской колонии в Палестине является армянская церковь.

Просоветские настроения проявляются стихийно на митингах, организованных Лигой Защиты Советской Армении.

Из партий более активно действуют гнчаки.

Сведения взяты:

1) из беседы с палестинским подданным Бенном Джряном (член правления Лиги защиты Советской Армении в Хайфе, купец).

ГРЕЦИЯ

Общее число армян в Греции, по сообщенным нам сведениям, достигает до 32.000 человек. Большинство из них ремесленники и рабочие мануфактурных, ковроткацких и других кустарных предприятий. Ремесленники и рабочие составляют примерно 85%. Около 10% армян занимается торговлей (в частности торговлей мануфактуры). Остальная часть - из врачей, юристов и др.

Армяне распределены по отдельным городам следующим образом: в Афинах и его пригородах живут 8.000 армян, в Пирее и его пригородах 7.000, в Салониках 5.500, в деревнях Фракии-Македонии 5.000, в районе Пелопонес 3.000 и на островах 3.500.

В Греции выходят следующие армянские газеты: 1) "Нор-Кянк" ("Новая жизнь") - ежедневная газета демократического направления, тираж 1500-2000 экземпляров, издатель Алексан Сатрджнян, редакционная коллегия: Тиран Алексанян, Ваган Дагесян и др. (рамкавар), 2) "Азат ор" ("Свободный день") - ежедневная газета, орган дашнаков, тираж 500-600 экземпляров.

В Греции не существует широких общественных организаций. При патриаршестве армянской церкви имеется центральное национальное правление со следующими советами: а) административный, б) школьный, в) попечительский, г) хозяйственный, д) здравоохранения и др.

Имеется также благотворительный Союз с женским вспомогательным отделом.

Из других организаций известны: Всеобщий армянский спортивный Союз и вновь организованное Армянское Культурное Общество.

В Греции имеются следующие школы: национальное училище (с детским садом и дошкольным отделением), одно национальное училище и участковых незначительных школ в Афинах.

Там же (в квартале фикс) существует школа под ведомством католической церкви.

Других культурно-просветительных заведений нет. Из известных деятелей культуры можно отметить следующих: Тирана Алексаняна (писатель, редактор, публицист), Гараджяна (виолончелист). Большинство армян Греции переселились сюда из Западной Турции в разные времена.

Раньше количество армян в Греции было больше, чем в настоящее время. В результате политики греческого националистического правительства последних лет, а в дальнейшем в результате немецкой оккупации, армяне из Греции постепенно сбежали в Болгарию, Югославию, Румынию и в другие страны.

После освобождения Греции, новое националистическое правительство Греции и поощряемые англичанами монархические элементы начали сильное гонение против армян, в особенности во Фракии и Македонии, провокационно обвиняя их в предательстве по отношению к Греции.

Положение армян в Греции очень тяжелое. В бедной стране, лишенные родины, под угрозой гонений и террора, армяне в Греции постепенно ассимилируются, или же переезжают в другие страны.

Греческие армяне видят свое спасение только в переселении в Советскую Армению и эти настроения очень сильны, в особенности среди трудящихся масс.

Сведения взяты:

1) из беседы с греческим гражданином рамкаваром доктором Варваряном и председателем Национального Правления при греческом патриаршестве Парагамяном, 2) из беседы с переселившимся в Ереван несколько месяцев назад греческими коммунистами-партизанами Бейлеряном и Дарбиняном, бывшим редактором прогрессивной газеты "Севан", 3) из газеты "Нор кянк".

ТУРЦИЯ

Число армян, проживающих в Турции, по заявлению приехавшего из Турции на Эчмиадзинский собор писателя Тороса Азатяна, в настоящее время составляет ориентировочно 120.000 человек. Армяне, главным образом, живут в Стамбуле и его окрестностях (75-80 тыс.). Армяне около 40-50 тыс. человек живут также в Турецкой Фракии, в Анатолии, в Кесарии, в Диарбекире, Харберде. Большинство армян занимается торговлей мануфактуры и металлических изделий.

Имеется много ремесленников (портные, кладчики, слесари, гончары, плотники, кузнецы, парикмахеры, сапожники и пр).

Значительный процент составляют люди свободной профессии (юристы, врачи, педагоги, государственные деятели). Сравнительно небольшой процент составляет интеллигенция (журналисты, художники, певцы и др.).

В Турции выходят следующие армянские газеты:

1) "Жаманак" ("Время") - ежедневная газета, демократического направления, существует уже 38 лет, тираж 4-5 тыс. экземпляров. Редакторы-братья Кочуняны, 2) "Мармара" - выходит через каждые три дня. Газета имеет протурецкое направление, тираж 1000 экземпляров.

В одно время эта газета получала средства не только от Турции, но и от Германии и Японии. Редактор Сурен Шамлян (агент турецкого правительства), 3) "Нор Лур" ("Новая весть") - тираж 500 экз. Редактор Ваган Тошикян и его жена писательница Айкануш Марк, 4) "Паткер" - ежемесячный журнал для молодежи, редактор Авет Алексанян.

Кроме этих газет центральная больница Стамбула систематически издает календарь.

Армянские общественные организации не существуют. Все общественные дела ведутся через армянскую церковь. Из культурно-просветитель-

ных заведений известны: библиотека-книгохранилище, находящаяся в церкви святой Троицы в Вера, и библиотека в квартале "Орта ног" в Стамбуле. Клубов нет. Имеются следующие школы: а) центральное училище в Гум-Габу, б) три начальных училища в Стамбуле, в)два средних училища в Стамбуле.

Значительную культурную работу ведет издательское общество "Мшакуйт" ("Культура"). Можно отметить также деятельность восточных оркестров. Выделяются среди деятелей культуры и искусства следующие: Гоарик Газаросян (композитор-пианистка), Эдгар Манас (композитор), Торос Азатян (литератор), Акоп Мнцури (новеллист), С. Гюльбенкян (женщина-писатель), Айкануш Марк (поэтесса), Аркинэ Горлян (художница-миниатюристка).

По общественным причинам, положение армян, проживающих в Турции резко отличается от положения всех остальных армянских колоний.

Националистическая политика Турецкого правительства, бесконечный контроль над национальной жизнью армян, национальные притеснения и ужасы преступлений, совершенных по отношению к армянам во время первой мировой войны, окончательно парализовали армян, оставшихся в Турции.

Вследствие изложенных причин, часть армян ассимилируется, а некоторые из них ради спасения своей шкуры становятся агентами и шпионами не только в Турции, но и в армянских колониях соседних стран. Даже армянская церковь в Стамбуле всегда окружена целой сворой шпионов из Эккафа. Армянская национальная жизнь мертва. В армянских школах преподают преимущественно турецкие преподаватели на турецком языке. Отношение к Советскому Союзу и Советской Армении в наилучшем случае нейтрально и обуславливается политикой турецкого правительства по отношению к армянам.

Сведения взяты:

1) из беседы с турецким гражданином литератором Торосом Азатяном (управляющий издательского общества "Мшакуйт"), 2) из справочника издательского общества "Мшакуйт" за 1939г.

КАНАДА

В Канаде проживают около 10.000 армян. Большинство из них работает на заводах, а некоторая часть занимается торговлей. Национальная культура армян в Канаде не развита и находится в застое. Подробными данными не располагаем.

Сведения сообщил Патрик Сельян.

КУБА

На острове Куба проживают около 3 тыс. армян, которые в основном занимаются торговлей. Никаких признаков армянской национальной культуры не имеется.

Сведения сообщил Патрик Сельян.

БЕЛЬГИЯ

В Бельгии раньше жили около 2 тыс. армян. Некоторые из них известны, как владельцы табачных фабрик. Среди армян было также много инженеров, техников и рабочих.

Армяне в Бельгии жили преимущественно в Брюсселе и Анвери. В свое время существовал спортивный союз с различными группами и командами. Но в настоящее время в Бельгии очень мало армян и сведений об их положении нет.

Сведения взяты:

1) из сообщения Месропа Асатуряна, генерального секретаря Национального фронта армян Франции, 2) из сборника, изданного в Париже в 1939г. по случаю 20-летия спортивных организаций Го-Мен-Мен.

ШВЕЙЦАРИЯ

Число армян, проживающих в Швейцарии в одно время доходило до 1.000, которые в основном были торговцы, врачи и т.д. Армяне жили в Женеве, Берне и, частично, в городе Лозанне. Раньше здесь были спортивные группы, из которых пользовались известностью футбольная команда "Армения". Члены этих спортивных команд были выходцами из сиротского дома, принадлежащего швейцарцу арменофилу Крафту Бонару.

Швейцария никогда не имела чем нибудь заметную армянскую колонию. В течение времени армяне постепенно слились с местным населением и потеряли свой национальный профиль. Ныне имеются некоторые семьи-армян, которые также стоят на грани ассимиляции.

Сведения взяты:

1) сведения сообщил Месроп Асатурян, 2) из сборника изданного в Париже в 1939г. по случаю 20-летия спортивной организации Го-Мен-Мен.

ИТАЛИЯ

Число армян, проживающих в Италии составляет 2 тыс. из коих часть занимается торговлей и ремеслом. Значительное количество составляют ученые, преподаватели, ученые монастыря венецианских мхитаристов и студенты известного, при конгрегации мхитаристов, училища Мурада Рафаеляна.

Армяне рамещались, главным образом, в Венеции на острове св. Лазаря. Армяне живут также в Риме, Неаполе, Милане и др. городах. Общественных организаций нет.

Венецианские мхитаристы имеют богатую библиотеку, типографию, где печатается научно-литературный журнал "Базмавеп". При конгрегации мхитаристов действует училище Мурада Рафаеляна и национальный сиротский дом.

Надо полагать, что только в рамках венецианской конгрегации сохраняется культ армянского национального языка и культуры. Остальные армяне разбросаны по городам Италии, сохраняют свою национальную самодеятельность только в быту, в своих семьях.

Сведения взяты:

1) из беседы с греческим гражданином Парегамяном.

ГЕРМАНИЯ

Число армян в Германии составляло ориентировочно 400 человек, из коих большинство занималось торговлей ковров и пушнины. Были также ученые и студенты.

Армяне жили преимущественно в Берлине и Лейпциге. В 1944г. в Берлине была создана фашистская реакционная антисоветская организация "Армянский Национальный Совет". Во-главе этого Совета стояли: армянский пропагандист расовой теории, известный лидер дашнаков, доктор Арташес Абегян, Давидханян, Папазян (Комс), Кочарян, Джалалян, Гарегин Нжде и Дро Канаян.

С первых же дней нападения Германии на Советский Союз, эта группа составила программу порабощения Закавказья, в частности Советской Армении, которая была утверждена германским имперским Министерством Восточных оккупированных областей. Согласно этой программе, Советская Армения и часть Турецкой Армении, должны были перейти в распоряжение Германии и превратиться в колонию Германии.

Армянский Национальный Совет в Берлине предпринял также практические шаги для своей антисоветской борьбы. Они, из дашнаков Европы и некоторых продажных элементов, организовали отряд приобревший печальную известность. Этот отряд, совместно с немецко-румынскими войсками дошел до предгорья Кавказа. Но после поражения фашизма и немецких войск, иллюзии берлинских "спасителей Армении" разлетелись впрах.

Сведения взяты:

1) из беседы с Месропом Асатуряном, 2) из сборника статей редактора газеты "Жоговурд" (орган Национального Фронта армян Франции) коммуниста Шаге Татуряна, 3) из беседы с рымынским гражданином Назаряном. Назарян в 1935г. был в Германии.

АВСТРИЯ

Число армян Австрии не превышает 300-400 человек. Большинство из них занимается торговлей. Есть также студенты и ученые (мхитаристы), которые находятся в Вене. Известна венская конгрегация мхитаристов, которая имеет довольно богатую и ценную библиотеку. В свое время венские мхитаристы дали ряд знаменитых историков, арменистов, филологов, но кто является наиболее выдающимся в настоящее время-неизвестно.

Армянской национальной жизни нет. Мхитаристы всегда были обособлены и изолированы.

Сведения взяты:

1) сведения сообщил Тирацян - зам. председателя "Фронта Армении" в Румынии.

ЧЕХОСЛОВАКИЯ

Число армян, проживающих в Чехословакии (в Праге) незначительно, примерно 200-300 человек которые, главным образом, занимаются торговлей. Незначительный процент составляют студенты.

Армяне в Чехословакии никогда не имели своей национальной жизни и поэтому всегда были под угрозой ассимиляции. Положение армян в Чехословакии в настоящее время неизвестно.

Сведения взяты:

1) сведения сообщил румынский гражданин Назарян. Назарян жил в Чехословакии.

ВЕНГРИЯ

Число армян в Венгрии небольшое (около 300-400 чел.). Их основное занятие торговля.

В течение многих лет, живя в Венгрии, армяне постепенно сливались с местным населением и потеряли свой этнический профиль.

Сведения сообщил румынский гражданин Назарян. Назарян бывал в Венгрии.

ЮГОСЛАВИЯ

В Югославии проживает около 1000 армян, которые преимущественно занимаются торговлей. Армяне сосредоточены в Македонии, Восточной Сербии и Черногории. Армянских газет, общественных организаций и культурно-просветительных учреждений не имеется. Существующие условия привели к почти полному слиянию югославских армян с местными славянскими народами. Нет даже армянской церкви.

В борьбе против гитлеровской Германией, в рядах партизанских отрядов активно и непосредственно участвовали также армяне.

Сведения сообщил болгарский гражданин Мектумян, который путешествовал по Югославии.

ИНДИЯ, БИРМА

Общее число армян, проживающих в Индии и Бирме составляет примерно 5.000. Большая часть занимается торговлей и ремеслом. Большинство армян живут в Калькутте, Бомбее, Мадрасе (Индия) и Рангуне (Бирма). В Индии и Бирме армянские газеты не издаются, несмотря на то, что имеется армянская типография, которая издает календари, учебники и пр.

Армянских общественных организаций не существуют.

В одно время в Индии существовали спортивное общество с различными спортивными группами. Ныне в Индии имеются школа "Давидян" и "Мардасиракан чемаран" (гуманитарная семинария). Интеллигенция состоит из преподавателей этих школ. Армянская церковь сохраняет свое влияние.

Сведения взяты:

1) из беседы с иранским гражданином Левоном Тер-Ованесяном, путешествовавшим по Индии, 2) из статьи Фредуни "Об армянской колонии в Индии" напечатанной в Каирской газете "Арев" от 26,28/VIII - 1944г., 3) из беседы с начальником армянской епархии Ирана и Индии-Ваганом Костаняном.

ТИХО-ОКЕАНСКИЕ ОСТРОВА

На Тихо-Океанских островах (в частности на острове Ява, Филиппины, Борнео, Суматра и др.) по заявлению Патрика Сельяна живут около 3000 армян. Других сведений не имеется.

ИРАК

Число армян, проживающих в Ираке доходит до 15 тыс. человек. Большинство из них занимается торговлей, ремеслом. Значительную часть составляют рабочие. Основная часть армян живет в Багдаде (около 10.000 человек), затем в Мусуле, Керкуке, Басре и т.д.

В Багдаде имеются несколько начальных армянских школ. Существует также хор им. Комитаса. Большим влиянием в Ираке пользуются дашнаки, которые ведут среди армян англофильскую пропаганду. Армянская церковь в Ираке также сильна.

Сведения сообщил палестинский гражданин Бенон Джрян, путешествовавший по Ираку и Левон Тер-Ованесян (Исфаган).

ЭФИОПИЯ

В Эфиопии проживают около 8 тыс. армян. Подавляющая часть армян Эфиопии занимается торговлей и частично ремеслом. Почти все армяне живут в столице Эфиопии гор. Аддис-Абеба. Существует общество Друзей Армении и национальная школа.

Армяне Эфиопии сохранили национальный язык, обычаи и свою веру. Армяне играют довольно крупную роль в торговле страны.

Армяне проявляют большой интерес к Советскому Союзу и Советской Армении. Наблюдается массовое настроение иммиграции в Советскую Армению.

Свдения взяты:

1) из беседы с Акопом Арамяном (редактор газеты "Арев"), 2) из письма заместителя заведующего Восточным Отделом ВОКС"а Левинсона от 19/IV - 1945г. за N 588/с.

КИПР

На острове Кипр проживают около 5 тыс. армян. Большая их часть занимается ремеслом и частично мелкой торговлей. Армяне живут, главным образом, в г. Никозии, затем в Ларнаке, Лимасоле и др.

Из общественных организаций можно перечислить: отделение Армянского благотворительного союза и Общество друзей Армении.

На Кипре существует среднее училище "Мелконян", которое содержит Благотворительный Союз. В Никозии имеется армянский клуб. Среди армянской колонии популярен писатель, учитель Ваге Вагян (Саркис Абдалян), являющийся председателем Общества Друзей Армении.

Армянская колония Кипра находится под бдительным надзором английских властей. Последние с помощью некоторых местных и египетских правых рамкаваров пытались ликвидировать общество (квартира Ваге Вагяна-дважды подвергалась обыску со стороны полиции).

Общество было вынуждено ослабить свою деятельность. Ряд прогрессивно-настроенных армян, вышедшие из училища "Мелконян" переехалли в соседние страны (Ливан, Сирия и др.), где условия для их деятельности более благоприятны.

Сведения взяты:

1) из беседы с зам. председателя Общества Друзей Советской Армении в Ливане Эллезяном, который имеет личную связь с Ваге Вагяном, 2) из беседы с редактором газеты "Арев" (Египет) поэтом Акопом Арамяном, 3) из письма члена правления ВОКС - а Кисловой от 23/V - 1945г. за N 768/с.

Сведения составлены ст. референтом АОКС-а
по зарубежным странам Гр. Ованесяном

НАА, ф. 326, оп. 1, д. 89, л. 1-54. Копия. Машинопись.

ՀԱՅՐԵՆԻՔ - ՍՓՅՈՒՌՔ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Երկրորդ աշխարհամարտից հետո Հայրենիք - Սփյուռք մշակութային առնչությունները թևակոխեցին նոր փուլ, որը նպաստեց երկկողմ գործնական և շատ արդյունավետ համագործակցությանը մշակույթի համարյա բոլոր բնագավառներում:

Ընթերցողին ներկայացվող փաստաթղթերի սույն փոքրիկ հավաքածուն պատմում է ամերիկահայ գրող Կարապետ Սիտալի և Հայաստանի մշակույթի գործիչների միջև հաստատված ջերմ ու անկեղծ բարեկամության և հայրենիքի ու սփյուռքի միջև կապերը սերտացնելուն միտված համագործակցության մասին:

Կարապետ Սիտալը (Կարապետ Շահենի Կարապետյան, 1891-1972) իբրև բանաստեղծ, խմբագիր և հասարակական գործիչ իր առաջին քայլերն սկսել էր 1911 թվականից Վանում հրատարակվող «Վան-Տոսպ» պարբերականից, որի հիմնադիրներից և խմբագիրներից մեկն էլ ինքն էր:

1914թ. նա մշտական բնակության մեկնեց ԱՄՆ և հաստատվեց Ֆիլադելֆիայում: Այստեղ նա 1923-1924թթ. հրատարակեց «Հորիզոն» գրական, գիտահասարակական շաբաթաթերթը, շուրջ 40 տարի ղեկավարեց իր հիմնած տպարանը, գործուն մասնակցություն ունեցավ ամերիկահայ գրողների և ընդհանրապես մշակույթի գործիչների՝ մայր հայրենիքի շուրջը համախմբելու գործում, ուստի պատահական չէր, որ կյանքի վերջին տարիներին նա անընդմեջ ընտրվում էր Ամերիկահայ առաջադիմական միության պատվո նախագահ:

Անչափ սիրելով իր հայրենիքը՝ Կ.Սիտալը բազմիցս եղել էր Հայաստանում, վայելել հայրենիքը տեսնելու և զգալու հաճույքը և ամեն անգամ վերադարձից հետո գրել իր տպավորությունների, իր ստացած հոգեկան մեծ լիցքի մասին:

Կ.Սիտալը առաջին անգամ հայրենիք այցելեց 1946թ. սեպտեմբերին և վերադառնալով Ֆիլադելֆիա՝ գրեց «Տեսա մեր երկրի Արևածագը» գիրքը: Այնուհետև հաճախակի դարձած այցերը սերտ կապեր ստեղծեցին նրա և հայրենիքի գրողների և մշակույթի գործիչների միջև, որոնցից շատերի հետ նա նամակագրական կապ ուներ:

Հրապարակման մեջ ընդգրկվել են Կ.Սիտալի նամակները (N N 1, 2, 4, 5, 7, 9, 11, 13) Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերության (ԱՕԿԱ) ղեկավար անձանց և վերջիններիս՝ Մ.Պետրոսյանի, Բ.Գրիգորյանի, Բ.Աստվածատրյանի, Ա.Մարտիրոսյանի պատասխան նամակները (N N 6, 8, 10, 12, 14):

Նպատակահարմար ենք գտել հրապարակել նաև Հայաստանի գրողների տան դահլիճում Կ.Սիտալին նվիրված երեկոյում Դերենիկ Դեմիրճյանի ելույթի տեքստից մի հատված (N 3), որը մեկ անգամ ևս հավաստում է վերը ասվածը:

Նամակները տպագրվում են առաջին անգամ՝ ոճական և կետադրական մասնակի շտկումներով:

Էմմա Հովսեփյան
բանասիրական գիտությունների
թեկնածու

N 1

25 հոկտեմբերի 1946թ.
Մոսկվա

Հարգելի ընկեր Մարիա Պետրոսյան,

Սովետների փառապանծ և հերոսական մայրաքաղաքից և Ձեր սիրելի Մոսկվայից ուղարկում եմ Ձեզ ողջույններ և լավագույն զգացմունքներ:

Թույլ տվեք ինձ իմ և արտասահմանի հայ գրողների կողմից ջերմագին շնորհակալություն հայտնել մեզ բոլորիս հանդեպ Ձեր ցույց տված գերազանց ուշադրության և խնամքի համար: Առանց Ձեզ մենք համարյա թե որբ կմնայինք և երբեք կարող չէինք լինի տեսնել և հավաքել այն բոլոր նյութերը, որոնք մենք

ձեռք բերինք այդ շատ կարճ ժամանակում: Լավ և իմաստուն կերպով կազմակերպած ձեր այցերն ու պտույտները մեզ սքանչելի կերպով ծանոթացրին մեր սովետական հայրենիքի գրեթե բոլոր մարզերի հետ:

Մենք բոլորս էլ վերադարձանք անսահման խանդավառությամբ, անսասան հավատքով և, որ ավելին է բազմապատկված եռանդով: Այսուհետև մնում է, որ մենք արդարացնենք մեր այցը գաղութներում հայրենասիրական լավ աշխատանքով:

Ընկեր Սամիկոնյանը[1] շատ լավ ճամփի ընկեր եղավ մեզ համար: Այստեղ էլ մեզ առանձին հոգածություն և խնամք ցույց տվին: Ընկեր Որբունին[2] մեկնեցավ Փարիզ երեքշաբթի առավոտ, ես էլ հույս ունեմ, որ այսօր կը մեկնեմ Ստոքհոլմ և այնտեղից էլ՝ Նյու Յորք:

Այստեղ եղած ժամանակս ինձ տված նյութերին նայեցա: Շատ լավ էին: Սակայն ինչ որ իմ ելույթն էիք անվանել, դա «Կոմունիստ»[3] թերթում լույս տեսած մի կարճ գրությունս էր: Իմ ելույթը գրողների համագումարում[4] ես միայն վերջերը ընկեր Հեղուշին հանձնեցի: Իսկ նա էլ իր կարգին գրողների տանը աշխատող Հրանուշին հանձնեց: Շատ պիտի խնդրեի, որ բարի լինեիք այդ աշխատանքիս կամ ելույթի մեկ օրինակը կա՛մ ինձ և կա՛մ «Լրաբեր»-ին ուղարկեիք[5]: Հետո դարձյալ խնդրում եմ,որ ելույթների կարգին այդ կտորս հրատարակեք և ոչ թե այն, որ ինձ և ուրիշներին տվել եք:

Ես իմ կարգին կաշխատեմ հավատարմությամբ կատարել բոլոր այն հանձնարարությունները, որոնք Դուք ինձ ասեք:

Արդեն շատ եմ կարոտել մեր չքնաղ Հայաստանը, մեր գեղեցիկ Երևանը, նրա սքանչելի ջուրն ու օդը, նրա արևահամ պտուղները, նրա զվարթ և շենշող ժողովրդին, և մանավանդ իմ բոլոր ծանոթներին և լավ ընկերներին: Անսահմանորեն սիրեցի և վայելեցի իմ արևաշող և պայծառ երկիրը, իմ փառապանծ և մեծ և տաքասիրտ ժողովրդին:

Ջերմագին սերս ու բարևներս ընկերներ Բաշինջաղյանին, Խորենին, Հրաչիկին, Սոսոյին և ԱՕԿՍ-ի բոլոր աշխատողներին:

Հարգանքներս ձեր պատվական ամուսնուն և բոլոր ծանոթներին;

Կարոտով և ջերմ զգացմունքներով՝ Կարապետ Սիտալ

Ֆ. 709, ց. 3, գ. 176, թ. 40: Ինքնագիր:

N 2

18 փետրվարի 1947թ.
Ֆիլադելֆիա

Հարգելի տիկին Մարիա Պետրոսյան,

Վաղուց էի ցանկանում գրել Ձեզ, սակայն մի պատեհ առիթ չկարողացա գտնել մինչև օրս: Հայաստանից վերադարձիցս հետո մի րոպե հանգիստ չեմ ունեցել: Համարյա թե ամեն շաբաթ օր և կիրակի տանը չեմ մնացել: Կարևոր մի քաղաք չէ մնացել, որտեղ խոսած չլինեմ: Սարքվել են ժողովներ, թեյասեղաններ, տոնակատարություններ, որտեղ ես խոսել եմ իմ տպավորությունների մասին: Ստեղծվել է մի աննախընթաց խանդավառություն: Ես ինքս զարմանում եմ իմ եռանդի մասին: Իսկ Ամերիկահայ ժողովրդի սերը, կարոտը, բոցավառ հայրենասիրությունը բոլորովին զարմացրել են ինձ: Մեկ միլիոն դոլարի հանգանակությունը ներգաղթին օժանդակելու համար գերակատարվում է 30 տոկոսով:

Հուզմունքով և մեծ հաճույքով եմ հիշում այն խնամքն և ուշադրությունը, որով Դուք շրջապատեցիք մեզ: Խորապես երախտապարտ եմ զգում ինձ ոչ միայն իմ հանդեպ եղած ջերմ վերաբերմունքի համար, այլ նաև այն ուշադրության համար, որին արժանացան արտասահմանի բոլոր գրողներն էլ: Մեր երկրի վերելքի և նվաճումների մասին ինձ հետ բերած գրությունները երևում են առհասարակ բոլոր թերթերում և կարդացվում են անսահման հետաքրքրությունով:

Պատրաստվում է պետական հիմնի երգապնակը, որը մեծ ընդունելություն է գտնելու: Պատրաստվում են ամերիկահայ գրողների, երգիչների, գիտունների, երաժշտագետների, գործիքային երաժշտությամբ զբաղվողների, օրքեստրի ղեկավարների անունները և նրանց մասին հարկ եղած տեղեկություններ, թերթերի կարծիքներ և այլն:

Խոշոր թվով անգլերեն գրքեր են հավաքել, որոնցից մի մասը արդեն ճանապարհ է հանվել:

Այստեղ ստացվեց իմ ելույթը և տպագրվեց «Լրաբեր»[1]-ում: Շնորհակալ եմ, որ այնքան փութով ուղարկեցիք իմ խնդրանքի համաձայն:

Գիրքը տակավին չեմ ստացել: Հույս ունեմ, որ շուտով կստանամ: ԱՕԿՍ-ին ուղարկվել է 100 օրինակ իմ «Հազարան բլբուլ»-ից, 80 օրինակ՝ «Սասնա ծռեր»-ի երկրորդ տպագրությունից, մի 40 - 50 օրինակ՝ «Կաշտի քաջեր»-ից: Խնդրում եմ բարի լինեք հետևյալ գրողներին նրանցից մեկ-մեկ օրինակ հանձնել:

Ստեփան Զորյան, Արազի, Գեղամ Սարյան, Սիրաս, Հր.Քոչար, Սարմեն, Շիրազ, Բորյան, Հրաչիկ Հովհաննիսյան Հ.Մկրտչյան, Վեսպեր, Վահան Գրիգորյան, Աղավնի, Ռուբեն Զարյան, Ռ.Վարդազարյան, Գարեգին Հովսեփյան, Վահրամ Թերզիբաշյան, Էդուարդ Խոճիկ, Անդրանիկ Հովսեփյան, Սարգիս Պայազատ, Հրաչյա Գրիգորյան, Սիլվա Կապուտիկյան, Մարո Մարգարյան, Արաքս, Խաչիկ Դաշտենց, Աշոտ Գրաշի, Սուրեն Վահունի, Վիգեն Խեչումյան, Հովհաննես Մանիկոնյան, Արման Կոթիկյան, Աղավնի Մեսրոպյան, Ազատ Վշտունի, Թարգյուլ: 5-ական օրինակ գրադարանին, համալսարանի գրադարանին, Լենինականի, Կիրովականի, Դիլիջանի, Ստեփանավանի, Նոր Բայազետի, Էջմիածնի և այլ գրադարաններին՝ Ձեր հարմար տեսած թվով:

Գրքերը ուղղակի Նյու Յորքից ուղարկելու հետևանքով ես չկարողացա առանձին գրողների համար մակագրել դրանք: Այդ չեմ կարողացել կատարել նաև Ձեզ համար: Բարի եղեք մեկական օրինակ տալ նաև Սիսոյին, Բաշինջաղյանին և Խորեն Գուլբենկյանին[2]:

Չմոռանամ նաև պրոֆ. Ա.Տերտերյան, Գարեգին Լևոնյան, Ղարիբյան, Ղափանցյան, Աճառյան, Գուրգեն Ջանիբեկյան, Վաղարշ Վաղարշյան, Ադոնց, Ղանալանյան, Վարդան Աճեմյան, Բաբկեն Կարապետյան:

Իհարկե, Ձեզ համար էլ եմ ուղարկում օրինակներ այդ գրքերի մեջ: «Սովետական Հայաստան»-ի այն թիվը, որի մեջ երևաց իմ «տպավորությունները» դեռ չէ ստացվել: Իհարկե,ժամանակին մեր ձեռքը կհասնի;

Ես համոզված եմ, որ ԱՕԿՍ-ի կատարած գործը խիստ կարևոր և մեծ է: Առանց այդ աշխատանքին գաղութահայությունը շատ տգետ պիտի մնար մեր հայրենիքում ծավալող ստեղծագործական խոշոր ձեռնարկների մասին: Առանց նրան չպիտի ստեղծվեր այն սերտ կապը, որ սփյուռքի հայությանը կապում է մայր հայրենիքին: Ես Ձեզ ցանկանում եմ անսպառ կորով և ուժ: Բարի եղեք իմ ջերմագին ողջույնները հաղորդել ԱՕԿՍ-ի բոլոր աշխատակիցներին ու բոլոր ծանոթ բարեկամներիս:

Ամենաջերմ հիշատակներով և ողջույնով՝ Կարապետ Սիտալ

Ֆ. 709, ց. 3, գ. 180, թ. 16: Ինքնագիր:

N 3

Հայրենական բանաստեղծը[1]

15 դեկտեմբերի 1950թ.[2]
Երևան

Կարապետ Սիտալը սփյուռքի հայության գրականության մեջ արտակարգ դիրք ունի գրաված: Եթե նա հեռու մնաց եվրոպական կլասիկների բարերար ազդեցությունից, բայց և նրա ամենաուշագրավ առավելությունն այն եղավ, որ նա զերծ մնաց նաև այն «հեթանոսներից», որոնք իրենց կեղծ ռոմանտիզմով և

անկեղծ դեկադանսով ճարակեցին գրեթե ողջ արևմտահայ բանաստեղծությունը և քառասուն տարուց ավելի է չեն զիջում իրենց դիրքերը նորագույն սյուռեալիզմին, որ սկսվելու է շատ շուտով և տեղ-տեղ ծիլեր է արձակել արդեն…

Ահա այս ազդեցություններից հեռու մնաց Կարապետ Սիտալը և իր բանաստեղծական ուժերը վերցրեց ժողովրդական աղբյուրներից: Եվ այս ժողովրդական նյութն է, որ դառնալով նրա ստեղծագործության ատաղձը՝ նրան հաղորդում է կենդանի շունչ և առաջատար մտքեր, ինչպես և օպտիմիստական աշխարհադիտողություն, ապրելու, պայքարելու ոգի:

Կարապետ Սիտալի երկերը քիչ չեն և չեն կրում պատահականորեն գտած կամ ընտրած թեմաների մշակումը: Բանաստեղծը սերտորեն կապված է իր շատ տարիներ առաջ հրաժեշտ տված Վասպուրականի նյութերի հեը: «Սասնա ծռերն» ու «Կաշտի քաջերը» հիմնականորեն ժողովրդական նյութեր են: Սակայն բանաստեղծի բոլոր մյուս երկերը՝ «Գուսաներգեր», «Կարավանի հետևեն», «Գիշերեն մինչև լուսաբաց», «Լուսաբացի երգեր», «Գյուղն իմ հեռավոր», «Լուսաբաց», հեռավոր թե մոտավոր կերպով կապված են հայրենի երկրի կամ նրա բույրերով համակված սյուժեների, իդեաների հետ:

Կարապետ Սիտալը հայրենական բանաստեղծ է: Եվ պատահական չէ, որ նա սփյուռքի հանրության զանգվածներում մեզ ներկայանում է նախ իբրև առողջամիտ քաղաքացի, որ ճշտորեն է կողմնորոշվում և բնականորեն ու ազատ է հեռավոր օտարությունից, վերագտնում, որոշում է իր հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, և նրա ժողովուրդը, կապված է այդ ժողովրդի հետ և պայքարում է նրա կյանքի, ազատության և կուլտուրայի համար:

Դրանով տարեց բանաստեղծը շատ երիտասարդ միտք և վճռականություն է ցուցաբերում և իր ստեղծագործության հետ ներդաշնակում նաև իր քաղաքական վարքագիծը:

ԱՕԿՍ-ի գրական սեկցիայի և նրա շուրջը հավաքված գրողների հետ միասին ջերմագին սեղմում եմ մեր տաղանդավոր հայրենակցի, հայ ժողովրդի անկաշառ բարեկամի, հայրենական բանաստեղծ Կարապետ Սիտալի ձեռքը…

Դ.Դեմիրճյան

Ֆ. 709, ց. 3, գ. 16, թթ. 5-10: Ինքնագիր:

N 4

6 դեկտեմբերի 1955թ.
Ֆիլադելֆիա

Սիրելի ընկեր Աստվածատրյան,

Դստերս՝ Սիլվիայի հետ ոգեշնչված և խանդավառ մենք տուն վերադարձանք մեր հայրենիքի խնդությունից և դյութանքից: Ես ինձ վրա չեմ զարմանում, որովհետև ավելի քան քառասուն տարի է, որ ես ապրել եմ հեռավոր Ամերիկայում և սակայն ես ինձ շարունակ զգացումով և հոգով հայրենիքում, իմ ժողովրդի հետ եմ զգացել: Ինձ շատ ապշեցրեց Սիլվիան, որը, ծնված և մեծացած լինելով օտար միջավայրում, իրեն այնքան ուրախ ու հարազատ զգաց իր հոր մայրենի երկրում: Անհավատալիորեն և աստիճանաբար նրա մեջ պայծառացավ և բյուրեղացավ մեր երկրի նոր ու փառավոր իրականությունը: Ես չփորձեցի ամենափոքր թելադրանքն իսկ անել նրան: Թողեցի, որ նա իր սեփական եզրակացություններին հանգի, կազմի իր սեփական համոզմունքը:

Եվ զարմանալին այն է, որ հակառակ տեղացիներից ոմանց սխալ և թունավոր տեղեկություններին՝ նա կարող եղավ տեսնել և ընդունել կատարվող սքանչելի վերելքը ու մեծագործությունը: Նա կարող եղավ ընդունելու բացերի և պակասությունների ժամանակավոր լինելը, ինչպես նաև նրանց գոյության պատճառները: Այս պարագան որքան պատիվ է բերում Սիլվիայի առողջ մտածողությանը,նույնքան պերճախոսորեն շեշտում է մեր երկրի լուսապայծառ իրականության բացահայտ վեհությունը:

Կաթողիկոսական ընտրության առիթով[1] Ամերիկայից և սփյուռքի հեռավոր մասերից Հայաստան եկող պատգամավորներն ու այցելուները առհասարակ վերադարձան ամենախանդավառ տպավորություններով: Նրանք ամենուրեք ստեղծեցին հայրենասիրական զգացմունքների մի ցնծուն հեղեղ: Եղան քչեր էլ, որոնք եկան նախապաշարված մտքով և վերադարձան անուղղա: Նրանք շռայլ գովքերի և հայրենասիրական կեղծ աղաղակների հետ վարկաբեկիչ, թունավոր ստեր են խառնում: Սրանց թիվը շատ փոքր է, չնչին և ճշմարիտ հայրենասերների խանդավառ, ճշմարտացի տեղեկությունների հզոր լուսարձակի ներքո չքանում է նրանց չարախոսությունների ազդեցությունը:

Մեծ բազմություններ են ներկա լինում մեր ժողովրդի ազատության 35-ամյակի տոնակատարություններին: Անչափ է ոգևորությունը և վարակիչ՝ ուղևորների բերած տպավորությունների համար: Հայրենիքի սերը համատարած և բոցավառ է սփյուռքահայերի սրտում: Ինչպիսի՜ անձկությամբ և կարոտով են սպասում ներգաղթի ուրախ լուրին:

Ավետիք Իսահակյանի 80-ամյակը պիտի տոնվի Միացյալ Նահանգների 9 հայաշատ քաղաքներում: Հանդեսավարությունները սկսվելու են Նոր տարուց հետո: Ամերիկահայ բոլոր ազնիվ և հայրենասեր գրողները, մտավորականները և հասարակական գործիչները բաժին են վերցրել կենտրոնական հանձնախմբում և կամ տեղական հանձնախմբերի մեջ: Դաշնակների բացասությամբ բոլոր ամերիկահայերը և իհարկե սփյուռքահայերը անսահման սեր ու գուրգուրանք ունեն մեր բանաստեղծության ապրող փառք, մեր գրականության պատկառելի և սիրելի նահապետ թանկագին Վարպետի հանդեպ:

Տուն վերադառնալուց ի վեր ես շարունակ զբաղված եմ եղել դասախոսություններով, թեյասեղաններով և ատենախոսություններով: Ձմռանն էլ Իսահակյանի 80-ամյակի կարևոր ձեռնարկները կան: Իսկ այդ բոլորի հետ կա իմ անհատական աշխատանքի անհրաժեշտությունը:

Հայաստանի մասին իմ այցելությունից ստացած խորը և արժեքավոր տպավորությունները գրի առնելը ես ինձ հոգուս պարտք եմ համարում: Ստացած տպավորություններն օրեցօր ավելի հասունանում և բյուրեղանում են: Այժմ միայն գտնում եմ, որ «Տեսա մեր երկրի Արևածագը»-ում եղած նյութերը կրկնելու չեն: Որ ես բոլորովին մի նոր և ճշմարտացի գործ պիտի երևան հանեմ: Ցավով եմ նկատում, որ իմ ցանկացած գործը պատրաստելու համար բավարար նյութեր չեմ վերցրել ինձ հետ այդտեղ եղած ժամանակ: Հակառակ իմ ջերմ ցանկությանը՝ ես շատ ժամանակ վատնեցի անտեղի պտույտներով և չիրականացած տեսակցությունների ձախողանքովը: Օրինակ՝ ես չկարողացա այս անգամ զրույց ունենալ մեր ակադեմիայի արժանավոր նախագահի և մեծ գիտնականի՝ Վիկտոր Համբարձումյանի հետ՝ հակառակ իմ բուռն ջանքերին: Իսկ առանց ակադեմիայի գործունեության մի ոգևորիչ և ամփոփ տեղեկության ես իմ տպավորությունները անկատար և շատ թերի եմ համարում: Վերջապես բազմաթիվ հյուրերին բավարարելու Ձեր ջանքում կարելի չեղավ ինձ հարկավոր ժամանակը տրամադրել:

Դրա համար ես անհրաժեշտ եմ համարում այս գարնան տասնօրյակի առիթով դարձյալ մի այց տալ իմ հայրենի երկրին: Տարակույս չունեմ, որ իմ վիզայի հարցը կլուծվի առանց դժվարության:

Մի քանի օր առաջ երկու առանձին ծրարներով ԱՕԿՍ-ին ուղարկեցի մոտ 50 օրինակ Վրացյանի պատասխան գրքույկից[2], որի մասին մեծ պահանջ եղավ այդտեղի գրողներից և մտավորականներից: Նրանց մեծ մասը չէին տեսել այդ գործը: Նրանց խնդրանքին պատասխանելու համար է, որ ուղարկեցի մոտս մնացածները: Խնդրում եմ բոլոր կարևոր գրողներին և անհատներին մի-մի օրինակ հանձնեք իմ կողմից:

Չգիտեմ,թե ի՞նչ վախճան են ունենալու այն սրտագին հանձնառությունները կինոմեքենա և ուրիշ մեքենաներ ուղարկելու մասին: Ծննդյան տոնի առիթով այստեղ մեզ մոտ այս օրերին ամեն ինչ մոռացվում է: Մարդիկ իրենց տան և բարեկամներին նվերներ գտնելու տաժանագին զբաղմունքն ունեն միայն: Նոր տարուց հետո կաշխատեմ գրել խոստում տվող այն ազնիվ հայերին և հույս

ունեմ դրական պատասխան ստանամ նրանցից:

Անեն պարագայի տակ կաթողիկոսական ընտրությունը մեծ առիթ հանդիսացավ մեր երկրի և ժողովրդի հմայքը մեծապես ավելացնելու սփյուռքի ամենահեռավոր մասերում անգամ: Հայ ժողովրդի երդվյալ թշնամիները թող սևեր հագնեն և սգան իրենց ստերի և զրպարտությունների անփառունակ մահացման համար: Ճշմարտությունը կհաղթանակի արի, կեղծիքի և դավադրության բոլոր խավար ուժերի դեմ:

Ամենաջերմ ողջույններով՝ Կարապետ Սիտալ

Ֆ. 709, ց. 3, գ. 218, թ. 26: Ինքնագիր:

N 5

29 դեկտեմբերի 1960թ.
Ֆիլադելֆիա

Սիրելի ընկեր Գրիգորյան,

Վերադարձած լինելով թանձր ձյունով և սառնամանիքով ծածկված Ֆիլադելֆիա՝ ես այրող կարոտով մտաբերում եմ իմ արևոտ, իմ չքնաղ Երևանը, իմ ծիծաղկոտ ժողովրդին, իմ լավ բարեկամներին, ինձ սիրելի և հարազատ մարդկանց:

Շնորհակալության ծանր պարտք ունեմ բոլոր այն անհատներին և հիմնարկներին, որոնք սիրով և հոգածությամբ շրջապատեցին ինձ և Սիլվիային և որոնք մեր այցը դարձրին հետաքրքիր և շատ հաճելի:

Առաջին հերթին ես իմ խորազգաց երախտագիտությունն եմ հայտնում Ձեզ և ԱՕԿՍ-ի պաշտոնեությանը մեր հանդեպ հայտնաբերած Ձեր սիրալիր և հոգածու վերաբերմունքի համար: Հայրենիք եկա կոտրած սրտով և թախծոտ: Շնորհիվ այդ ազնիվ վերաբերմունքին և շնորհիվ իմ ժողովրդի կենսուրախության՝ ես վերադարձա կազդուրված և ավելի լավ տրամադրությունով:

Երբ տոնելու լինեք 40-ամյակի[1] հանդիսավոր, վեհաշուք նիստը, իմացե՛ք, որ իմ սիրտը այդտեղ՝ Ձեզ հետ է:

Թող հավետ լուսաշող և հաղթական լինի մեր փառապանծ ժողովրդի առաջընթացը:

Օգտվելով այս առիթից՝ ուզում եմ Ձեզ դարձյալ հիշեցնել ինձ՝ «Սովետական գրականություն», «Սովետական արվեստ» և «Սովետական Հայաստան» ամսագրերի կանոնավորապես ուղարկելու Ձեր խոստումը:

Չգիտեմ,թե ես Ձեզ հայտնեցի, թե ոչ. գրող Համաստեղը[2] ինձնից խնդրել էր, որ նույն այս ամսագրերը նրան էլ ուղարկեինք: Նա շատ է փոխվել. մեծ հափշտակությամբ հետևում է մեր երկրի արվեստի և գրականության աճին: Նրա հասցեն է.

Hamasdegh
4 Ravine Rd.
West Medford, Mass, USA

Վերջերս մեռավ տաղանդավոր նկարիչ և Համաստեղի սրտակից բարեկամ Եղիա Գասպարյանը[3]: Համաստեղը ինձ գրել է և խնդրել է, որ իրեն թելադրեմ՝ Գասպարյանի նկարների ամենալավերը ի՞նչ միջոցով կարելի է Հայաստան ուղարկել մեր կերպարվեստի թանգարանում զետեղելու համար: Շնորհակալ կլինեի, եթե Դուք ինձ գրեք լավագույն միջոցը այդ նկարները ուղարկելու համար:

Ընդունեցեք իմ ու դուստրերիս ջերմ ցանկությունները պայծառ և երջանիկ մի Նոր տարվա համար: Թող վերանան ժողովուրդների եղբայրության և իրական խաղաղության ճամփին դրված բոլոր խոչընդոտները: Թող շուտով իրագործվեն մեր ժողովրդի հույսերը:

Շնորհավոր Նոր տարի:

Ամենաջերմ զգացումներով՝ Կարապետ Սիտալ

Ֆ. 709, ց. 3, գ. 268, թ. 93: Ինքնագիր:

N 6

30 հունվարի 1961թ.
Երևան

Թանկագին ընկեր Սիտալ,

Ստացվել է Ձեր 29-ը դեկտեմբերի 1960 թվակիր նամակը: Խորապես զգացված եմ Ձեր այնքան զգայուն շնորհակալական խոսքերի համար, որ արտահայտել եք Ձեր՝ Երևան գտնված միջոցին մեր ընկերությանը ցույց տված վերաբերմունքի համար: Դա մեր պարտականությունն էր, որի համար շնորհակալության կամ երախտագիտության ոչ մի պարտք չունեք:

Երբ գումարվի 40 - ամյակի հանդիսավոր նիստը, մենք վստահ ենք, որ Դուք վերստին մեզ հետ կլինեք ոչ միայն սրտով, այլ անձամբ կբերեք ողջույնի Ձեր ջերմ և անկեղծ խոսքը:

Ընդառաջելով Ձեր ցանկությանը՝ թե՛ Ձեզ և թե՛ գրող Համաստեղին կուղարկենք նամակում Ձեր նշած ամսագրերը: Մեզ համար հաճելի էր իմանալ Ձեր նամակից, որ Համաստեղն այժմ արդեն դրական վերաբերմունք ունի դեպի Սովետական Հայաստանը;

Ինչ վերաբերում է հանգուցյալ նկարիչ Գասպարյանի նկարներին, մենք այդպիսի առաքումները Հայրենակցական օժանդակ հանձնաժողովի միջոցով հանձնարարում ենք Միջհայրենակցականին: Երբ մոտերս ընկ. Սարյանը[1] վերադառնա, Ձեզ կհաղորդի ավելի մանրամասնություններ:

Փոխադարձելով Նոր տարվա բարեմաղթությունները՝
ջերմ բարևներով՝ Բ.Գրիգորյան

Ֆ. 709, ց. 3, գ. 268, թ. 92: Պատճեն: Մեքենագիր:

N 7

15 դեկտեմբերի 1961թ.
Ֆիլադելֆիա

Սիրելի ընկեր Մարտիրոսյան,

Հիմա, որ հանգիստ և ապահով տուն եմ հասել անսահման երախտագիտությամբ եմ մտաբերելու ժողովրդական և ակադեմիական խանդավառ այն ընդունելությունն ու մեծարանքը, որին ես այդտեղ առարկա եղա շնորհիվ Արտասահմանյան երկրների հետ բարեկամության ու կուլտուրական կապի հայկական ընկերության նախաձեռնության:

Ինձ թվում է, թե ինձ տրված պատիվն ու մեծարանքը պատկանում են սփյուռքահայ փառավոր և հայրենասեր գրողներին: Եվ թե իմ միջոցով մեր ժողովուրդը պատվեց ծանր զոհողությունների գնով պատնեշի վրա ամուր մնացած սփյուռքահայ խիզախ գրողներին:

Ինձ տրված մեծարանքը աննախընթաց էր մեր ժողովրդի պատմության մեջ, որովհետև մինչև օրս այս առաջին անգամն է, որ արտասահմանում ապրող մի հայ գրող հայրենիք է հրավիրվում նշելու համար նրա ծննդյան և գրական գործի հոբելյանը: [1]

Այդ բացառիկ պատվի համար ես հավետ երախտապարտ կմնամ նրանց, որոնք նախաձեռնեցին այդ գործը և ապա իմ մեծասքանչ ժողովրդին, որը խանդավառությամբ և գուրգուրանքով մեծարեց ինձ:

Հույս ունեմ, որ ընկերությանդ արժանավոր նախագահ ընկեր Բերսաբե Գրիգորյանը այժմ ավելի լավ է զգում իրեն, և թե նա առողջ ու խանդավառ շուքով իր գործին կվերադառնա: Խնդրեմ նրան հայտնեք իմ խորին երախտագիտությունը և նրա ապաքինման մասին իմ ջերմ ցանկությունը:

Ամենաջերմ զգացումներով՝ Կարապետ Սիտալ

Ֆ. 709, ց. 3, գ. 283, թ. 30: Ինքնագիր:

N 8

19 հունվարի 1962թ.
Երևան

Հարգելի բարեկամ,

Ձեր դեկտեմբերի 15-ի նամակից ուրախությամբ տեղեկացանք, որ բարեհաջող տուն եք վերադարձել:

Հաճելի է վերհիշել Ձեր ծննդյան տոնի ու գրական գործունեության հոբելյանի տոնակատարությունը Երևանում, որն այնքան երախտագիտական զգացմունքներ է առաջացրել Ձեր սրտում, ինչպես և խոր տպավորություններ թողել Ձեր բոլոր այն բարեկամների մեջ, որոնք ներկա էին մեծարման այդ հանդիսություններին:

Ձեր մեծարումը Երևանում մի տուրք էր Հայրենիքից հեռու ապրող հայրենանվեր գրական գործչի հանդեպ: Հարգելի բարեկամ, համոզված ենք, որ այսուհետև Դուք նոր եռանդով և երիտասարդական ավյունով ձեռնամուխ կլինեք նոր գրական երկերի ստեղծմանը:

Նախագահ Բ. Գրիգորյանը արդեն ապաքինվել է և լծվել աշխատանքի:

Ընդունեցեք իմ և նրա լավագույն բարեմաղթություններ

Հարգանքներով՝ Ա.Մարտիրոսյան

Ֆ. 709, ց. 3, գ. 283, թ. 29: Պատճեն: Մեքենագիր:

N 9

18 ապրիլի 1962թ.
Ֆիլադելֆիա

Սիրելի ընկեր Գրիգորյան,

Վերջերս ստացա և առանձին հաճույքով կարդացի Ձեր «Ճամփորդական նոթատետրից» գրքույկը: Ապա թերթերից ուրախությամբ իմացա, որ Դուք, հաղթահարած Ձեզ անկողին ձգող հիվանդությունը, վերադարձել եք Ձեր սիրած հասարակական աշխատանքին:

Ինձ անսահման ցավ պատճառեց, երբ Երևան հասնելիս Ձեզ հիվանդ, անկողնում պառկած գտա: Մեծարանքի խանդավառ երեկոյան նախագահության կազմի մեջ Ձեր բացակայությունը նշմարելի և ցավառիթ եղավ ինձ համար: Շատ լավ գիտեի, որ Դուք այնտեղ կլինեիք՝ հաճելի ժպիտը ձեր դեմքին և ձեր աչքերում՝ գոհունակության շող եթե ձեր առողջական վիճակը Ձեզ այդ թույլատրեր:

Երջանիկ եմ, սակայն, որ Դուք այժմ ձեր գործին եք վերադարձել: Դա մեզ բոլորիս առանձին գոհունակություն է պատճառում:

Ջերմագին շնորհավորում եմ Ձեզ Ձեր ուղեգրական հաջողված գրքույկի համար: Ինձ ամենից առաջ տպավորեց Ձեր նկարագրական և պատկերավոր լեզուն, ապա Ձեր դիպուկ դիտողություններն ու իմաստալից խորհրդածությունները, սփյուռքահայերի ողբերգությունն ընդունելու ձեր զարմանալի սրատեսությունը:

Ես առանձնապես շատ հավանեցի Կոպենհագենում գումարված կանանց կոնգրեսին, Բրյուսելի միջազգային ցուցահանդեսին, Միջերկրականի և Իտալիայի պլտույտներին նվիրված բաժինները: Առողջ, մտավորական և սառը դատողության տեր սովորական քաղաքացու պայծառ մտքի տպավորիչ արտահայտություններ են նրանք:

Փարթամ երևացող կապիտալիստական մայրաքաղաքների շռայլ դրսերևույթի ներքև Դուք կարող եք եղել տեսնել տիրող փտությունը և անհուսությունը: Դրանք առավել ևս ամրապնդել են Ձեր հավատը մոտալուտ և պայծառ գալիքի մասին:

Թարմացնող, ոգևորիչ է սովորական քաղաքացու այս անրակուռ հավատը: Եվ արդեն անխորտակելի այդ հավատն է հանդիսանում այն հզոր, մղիչ ուժը, որը

ապահովում է միութենական ժողովուրդների հրաշալի առաջընթացը, նրանց փայլուն հաղթանակները:

Հիմա, որ Դուք նորից Ձեր կարևոր պաշտոնի գլուխն եք անցել, մենք Ձեզանից շատ բան ենք սպասում: Առաջին հերթին մեզ պետք են սփյուռքը խանդավառող գեղեցիկ կինոնկարներ: Այդ ոչ թե նյութապես, այլ նաև բարոյապես մեծ օգուտ կտա մեզ: Իհարկե, ավելի կարևոր է բարոյական այն լիցքը, որ գեղարվեստական մի այդպիսի գործ կարող է տալ հայրենակարոտ հայերին: Հայրենիքից եկած արժեքավոր ամեն մի բան սփյուռքահայերի սիրտը լցնում է հրճվանքով և հպարտությամբ: Ավերիչ ձուլումի դեմ դրանք հզոր հակադեղեր են հանդիսանում:

Կրկին ուզում եմ Ձեր ուշադրությանը հանձնել օտար, անհասկանալի բառերով լեցուն հոդվածների պարագան: Իմ ներկայությանը տեղի ունեցած մի ժողովում որոշվեց աչալրջորեն հսկել, որ մեր հասարակայնության համար անհասկանալի գրություններ չուղարկվեն: Այդպիսի հոդվածներ ավելի վնաս են պատճառում,քան թե օգուտ:

Այստեղ մեծ տպավորություն թողեց Պարույր Սևակի հիանալի հոդվածը հայրենիի մաքրության վերաբերյալ: Նմանապես բուռն և տպավորիչ էր Պետրոս Դուրյանի մասին հրաշալի հայերենով գրված նրա գնահատականը: Սա պետք է լավ օրինակ լինի հոդվածագիրներին առհասարակ: Չէ՞ որ ավելի քան ճոխ է հայերեն լեզուն:

Ես ու դուստրերս շատ հաճախ ենք ջերմ զգացումով և կարոտով հիշում Ձեզ և Ձեր շնորհալի դստերը, ԱՕԿԱ-ի հաճելի անձնակազմին: Հղում ենք Ձեզ մեր սրտագին ողջույնները:

Անենաջերմ զգացմունքներով՝ Կարապետ Սիտալ

Ֆ. 709, ց. 3, գ. 288, թ.32: Ինքնագիր:

N 10

12 հունիսի 1962թ.
Երևան

Հարգարժան ընկեր Սիտալ,

Ուրախությամբ ստացա Ձեր ապրիլի 18-ի նամակը: Խորապես զգացված եմ մեր գործունեության ու իմ նկատմամբ Ձեր արտահայտած բարեկամական զգացմունքներից:

Հայկական կինոնկարները ուղարկելու խնդիրը, որի մասին խոսում եք Ձեր նամակում, միշտ էլ մեր ուշադրության կենտրոնում է եղել: Այժմ պատրաստվում են մի շարք կինոնկարներ՝ տարբեր երկրների հայկական կազմակերպություններին առաքելու համար:

Ձեր մտահոգությունը մեր ուղարկած հոդվածների լեզվի վերաբերյալ տեղին է և անպայման հաշվի կառնվի:

Ընդունեցեք իմ և ընկերության մյուս աշխատակիցների ջերմագին բարևները Ձեզ և Ձեր գերաշնորհ դուստրերին:

Անկեղծ հարգանքով՝ Բ. Գրիգորյան

Ֆ. 709, ց. 3, գ. 288, թ. 31: Պատճեն: Մեքենագիր:

N 11

7 դեկտեմբերի 1962թ.
Ֆիլադելֆիա

Սիրելի ընկեր Գրիգորյան,

Շատ մեծ ուրախություն պատճառեց ինձ այցելուներից տեղեկանալով, որ Դուք կատարելապես ապաքինվել եք և եռանդով առաջ եք տանում Ձեր շատ պատասխանատու գործը:

Մաշտոցի 1600-ամյակի տոնակատարությունը իմ պայծառ ժողովրդի հետ չեղա ֆիզիկապես և սակայն հոգով ու սրտով մասնակից էի նրա ցնծության և հպարտանքին:

Առանց սովետական կարգերի ստեղծած փառավոր իրականությանը, առանց նրանց բերած ապահովությանը՝ անիմաստ և իզուր պիտի լինեին հանճարեղ տարոնցու որոնումներն ու մեր անզուգական այբուբենի գյուտը: Մեր բովանդակ անցյալը արժեքավորվում է մեր պայծառ իրականությունով և նրա շքեղ գալիքով:

Անցյալ տարի Երևանում իմ հոբելյանների առիթով կարդացված ուղերձներն ու ակնարկները տպագրված տեսնել ցանկացան մի շարք մտավորականներ, որոնց կարգեն՝ Գուրգեն Յովնանը:[1]

Ես այդ ցանկությունը իրականացրի՝ այդ նյութերից կազմված մի քանի հարյուր օրինակ գիրք տպելով:

ԱՕԿՍ - ին ուղարկեցի 200 օրինակ կարևոր անձնավորություններին և գրադարաններին հանձնելու համար: Ինձ երախտապարտ կթողնեք, եթե իմ այս ցանկությունը Ձեր ուշադրության արժանի դարձնեք:

Մայիսին փակեցի անհատական գործս, որը այլևս տառապանք էր դարձել ինձ համար: Այժմ ամբողջ ժամանակս գրականությանս, անուշիկ թոռնիկիս և հանգըստյանս եմ նվիրած:

Այժմ կարող եմ հաճախ հայրենի աշխարհ այցելել և՛ հանգիստ սրտով, և՛ առանց որևէ մտահոգության:

Դուստրերս ինձ հետ միանում են կարոտագին ողջունելու Ձեզ և Ձեր անուշիկ աղջկան:

Ամենաջերմ զգացումներով՝ Կարապետ Սիտալ

Ֆ. 709, ց. 3, գ. 298, թ. 32: Ինքնագիր:

N 12

21 հունվարի 1963թ.
Երևան

Յարգելի ընկեր Սիտալ,

Ձեր 7-ը հոկտեմբերի 1962 թվակիր նամակը, ինչպես և նախօրոք խոստացված հոբելյանական հանդեսների հայաստանյան արձագանքների գրքերը ստացանք:

Ձեր խնդրանքի համաձայն դրանք արդեն բաժանվել են հետաքրքրվող անձանց, մայրաքաղաքի գրադարանների, գրական աշխատողների միջև:

Յաճելի է լսել, թե, արդեն մեր խոսքերով ասած, «անցել եք թոշակի»՝ փակելով Ձեր անհատական գործը, որպեսզի ամբողջապես նվիրվեք գրական աշխատանքին:

Անշուշտ, եթե Յայաստան գաք, պատրաստ ենք դարզյալ հյուրընկալելու Ձեզ:

Լավագույն բարեմաղթություններս Ձեզ և Ձեր շնորհալի դուստրերին:

Բ.Գրիգորյան

Ֆ. 709, ց. 3, գ. 298, թ. 31: Պատճեն: Մեքենագիր:

N 13

21 փետրվարի 1963թ.
Ֆիլադելֆիա

Սիրելի ընկեր Գրիգորյան,

Ֆիլադելֆիայի «Կռունկ» շաբաթաթերթի խմբագիր ու հրատարակիչ Գառնիկ Գրիգորյանը իմացել է, որ ԱՕԿՍ-ի կողմից գրված է ամերիկահայ թերթերին՝ Ձեզ տալու իրենց ներկայացուցչի անունը նրան Յայաստան հրավիրելու համար:

Գրիգորյանը ինձ մոտ եկավ և ցավ ու զարմանք հայտնեց, որ նրան էլ չի եղել այդպիսի մի հրավեր: Շատ խնդրեց, որ Ձեզ գրեմ և հայտնեմ նրա այրող բաղ-

ճանքը Հայաստան այցելելու վերաբերմամբ:
Լրիվ 43 տարի, մեն մենակ և մեծ զոհողությունների գնով նա շարունակել է հրապարակել «Կռունկ» շաբաթաթերթը, որը իր հիմնավորման օրից իսկ սովետների և ապա Սովետական Հայաստանի համակիր և պաշտպան ուղղություն է ունեցել: Ծերության և տկարության հետևանքով անցյալ աշնան Գրիգորյանը պարտադրվեց դադարեցնել թերթի հրատարակությունը: Նա կազմել է իր թերթի 43 տարիների հավա-քածուն և ցանկանում է իր հետ Հայաստան բերել: Իր սեփական ծախսերով նա գալ չի կարող, որովհետև նրան պակասում են նյութական միջոցները:
Ձեր ուշադրությանն եմ հանձնում նրա այս ջերմ բաղձանքը:

Ամենաջերմ զգացումներով՝ Կարապետ Սիտալ

Ֆ. 709, ց. 3, գ. 299, թ. 9: Ինքնագիր:

N 14

28 մարտի 1963թ.
Երևան

Հարգելի բարեկամ,
Ձեր փետրվարի 21-ի նամակը ստացանք: Ճիշտ եք տեղեկացրել, որ մեր ընկերությունը մտադիր է սփյուռքահայ մի շարք թերթերի ներկայացուցիչների 1963 թվականին հրավիրել Հայաստան:
Սակայն քանի որ հրավիրողների թիվը սահմանափակ է, հետևաբար ուրիշ շատ թերթերի հետ միասին «Կռունկի» խմբագիր Գառնիկ Գրորգյանի հրավիրումը ևս այս տարի հնարավոր չէ կազմակերպել, թեև մեզ հայտնի է և՛ շաբաթաթերթը, և՛ նրա երկարամյա խմբագրի վաստակը:
Ուրախ եմ Ձեզանից նամակ ստանալու համար, սիրով կպատասխանեմ Ձեր հետագա նամակներին: Ընդունեք, խնդրեմ, մեր ջերմ բարևները և նույնը հաղորդեք սիրելի Սիլվիային ու Սոնային:

Հարգանքներով՝ Բ.Գրիգորյան

Ֆ. 709, ց. 3, գ. 299, թ. 8: Պատճեն: Մեքենագիր:

Ծանոթագրություններ

N 1

1. Խոսքը ԱՕԿՍ-ի աշխատակից Ա.Մարտիրոսյանի մասին է:
2. Զարեհ Որբունին (Զարեհ Էոքսուզյան, 1902-1981) սփյուռքահայ գրականության հիմնադիրներից է, ապրել և ստեղծագործել է Փարիզում:
3. Կ.Սիտալի «Я горжусь своей Советской родиной» հաղորդումը տպագրվել է «Коммунист» թերթի 1946թ. հոկտեմբերի 4-ի համարում (N 233, էջ 2):
4. Հայաստանի խորհրդային գրողների 2-րդ համագումարը բացվեց 1946թ. սեպտեմբերի 25-ին: համագումարին մասնակցում էին նաև սփյուռքահայ գրողները, որոնց թվում էր և Կ.Սիտալը: «Սովետական Հայաստան» թերթի 1946թ. սեպտեմբերի 25-ի համարում տպագրվեց Կ.Սիտալի «Ողջույն սավառնակից» բանաստեղծությունը՝ թվագրված 07.09.1946թ.:
5. «Լրաբեր» - Ամերիկահայ առաջադիմական միության օրաթերթ, տպագրվում է Նյու Յորքում 1938 թվականից:

N 2

1. Տպագրվել է «Լրաբեր»-ի 1946 թ. նոյեմբերի 7-ի համարում՝ «Ես հպարտ եմ իմ Սովետական Հայրենիքով» խորագրով:
2. Խոսքը ԱՕԿՍ-ի աշխատակիցների մասին է:

N 3

1. Վերնագիրը բնագրինն է:

2. 1950թ. դեկտեմբերի 15-ին Հայաստանի գրողների տան դահլիճում կազմակերպվեց Կ.Սիտալին նվիրված երեկո, որտեղ մեծարման խոսքով հանդես եկան Դ.Դեմիրճյանը, Հմայակ Սիրասը և այլք: Երեկոյի ժամանակ Կ.Սիտալը ընթերցեց հայրենիքին նվիրված իր բանաստեղծությունները: Հ.Սիրասի խոսքը և Կ.Սիտալի բանաստեղծությունները տե՛ս ֆ.709, ց.3, գ.16, թթ. 11-19, թ. 20-22:

N 4

1. 1955թ. կաթողիկոսական ընտրություններում Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց երջանկահիշատակ Վազգեն Առաջինը:

2. Կ.Սիտալը չի նշել Ս.Վրացյանի գրքի վերնագիրը, սակայն օգտագործել է «Վրացյանի պատասխան գրքույկը» արտահայտությունը, որը մեզ ենթադրել է տալիս, թե խոսքը Ս.Վրացյանի՝ 1924թ. Բոստոնում լույս տեսած «Խարխափումներ» գրքույկի մասին է: Գիրքն ունի նաև «Յ.Քաջազնունու «Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս» գրքի առթիւ» ենթավերնագիրը, իսկ գրքի առաջին գլխում («Հինն» ու «Նորը») Ս.Վրացյանը նշում է, որ բանակռվի մեջ է մտնելու Հ.Քաջազնունու հետ:

N 5

1. Թերևս ի նկատի ունի Հայաստանի գրողների միության հիմնադրման 40-ամյակին նվիրված նիստը:

2. Համաստեղը (Համբարձում Կելենյան, 1895-1966) սփյուռքահայ գրող է, սփյուռքի գրականության հիմնադիրներից մեկը: Ապրել և ստեղծագործել է Բոստոնում (ԱՄՆ):

3. Եղիա Գասպարյան (1893-1948), հայազգի նկարիչ և գրող: Ապրել է Հալեպում, աշակերտել Հ.Կալենցին, այնուհետև տեղափոխվել ԱՄՆ, սովորել Նյու Յորքի գեղարվեստի դպրոցում:

N 6

1. Խոսքն ամերիկահայ առաջադիմական հասարակական գործիչ Օգսեն Սարյանի մասին է:

N 7

1. 1961թ. նոյեմբերի 17-ին Երևանում մեծ շուքով նշվել է Կ.Սիտալի ծննդյան 70-ամյակին և կեսդարյա գրական գործունեությանը նվիրված մեծարման երեկոն (տե՛ս «Սովետական Հայաստան» օրաթերթ, 17 նոյեմբերի 1961թ. N 264, էջ 3):

N 11

1. Գուրգեն Հովնան (1910-2000), խորհրդահայ գրող և գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Երկար տարիներ աշխատել է Հայաստանի ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԵԿՅԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ - ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

19-րդ դարի 30-50-ական թվականներին արևելահայության և արևմտահայության կյանքում ի հայտ եկած սոցիալ-տնտեսական և քաղաքական բարդ իրավիճակը հայ իրականության մեջ ծնեց հասարակական-քաղաքական երկու` ազգային-պահպանողական և լիբերալ (ազատական) հոսանքներ: Նշենք, որ հայ պահպանողական միտքը բավականին հին արմատներ ունի, սակայն, որպես հասարակական-քաղաքական հոսանք ձևավորվեց Ներսես Աշտարակեցու կաթողիկոսության շրջանում (1843-1857թթ.):

Հայ իրականության մեջ գոյություն ունեցած հասարակական-քաղաքական հոսանքների հարցը իրենց աշխատություններում լուսաբանել են Աշ.Հովհաննիսյանը և Հ.Ղազարյանը. Մասնավորապես, ըստ Աշ.Հովհաննիսյանի, 19-րդ դարի կեսերին արևելահայ հասարակական-քաղաքական դաշտում ձևավորվել են հասարակական-քաղաքական հետևյալ հոսանքները.

ա) Կղերա-աղայական

բ) Ազգային-պահպանողական

գ) Լիբերալ-բուրժուական (կամ ազգային-լիբերալ)

դ) Հեղափոխական-դեմոկրատական[1]:

Իսկ Հ.Ղազարյանը ներկայացրել է արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում ձևավորված հոսանքները.

ա) Կղերա-ամիրայական

բ)Ազգային-պահպանողական

գ) Լիբերալ-բուրժուական

դ) Ազգային-դեմոկրատական[2]:

Մեր կարծիքով, ճիշտ չէ հայ իրականության մեջ գոյություն ունեցած հասարակական-քաղաքական հոսանքների` միմյանցից տարանջատված դիտարկումը[3]:

Մասնավորապես, ըստ մեզ, կղերա-աղայական և կղերա-ամիրայական հոսանքները պարզապես ազգային-պահպանողական հոսանքի առանձին ենթաճյուղեր են հանդիսացել: Ավելին, համոզիչ չէ լիբերալ-բուրժուական և հեղափոխական կամ ազգային-դեմոկրատական հոսանքների` որպես առանձին միավորների ներկայացումը:

Այսպիսով, մենք գտնում ենք, որ, հայ իրականության, այդ թվում և արևելահայ, և արևմտահայ, մեջ 19-րդ դարի կեսերին գոյություն են ունեցել երկու` ազգային-պահպանողական և ազատական (լիբերալ) հասարակական-քաղաքական հոսանքներ:

19-րդ դարի կեսերին ազգային-պահպանողական հոսանքի նշանավոր ներկայացուցիչներից էր Մարկոս Աղաբեկյանը (1830-1908թթ): Մարկոս Աղաբեկյանը ծնվել է Զմյուռնիայում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Մեսրոպյան վարժարանում, ապա` Փարիզի Մուրատյան վարժարանում: 1860-1863թթ. Թիֆլ-

---

[1] Ա.Հովհաննիսյան, XIX դարի 50-60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, տե'ս «Պատմա-բանասիրական հանդես», 1965, թիվ 4, էջ 55-78 և 1966, թիվ 1, էջ 32-59:

[2] Հ.Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870թթ., Երևան, 1965, նաև` նույնի Արևմտահայ հասարակական հոսանքները, Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ. h. V, էջ 426-458:

[3] Այդ հարցի վերաբերյալ տես` Ազգային-պահպանողական հոսանքը հայ պատմագիտության գնահատմամբ, Խ.Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան, Գիտական տեղեկագիր, Երևան, 2006, թիվ 1 (4), Մանկավարժ հրատ. էջ 47-54:

խում խմբագրել է «Կռունկ Հայոց աշխարհի» ամսագիրը[1], իսկ 1866-1867թթ. Կ.Պոլսում՝ «Ծիլն Ավարայրի» պարբերականը: Հեղինակ է մի շարք աշխատությունների և հրապարակախոսական հոդվածների, որոնցում էլ ներկայացրել է ազգային-պահպանողական իր հայացքները:

Ազգային-պահպանողական հոսանքի գաղափարական հիմքում ընկած են եկեղեցու, կրոնի , լեզվի, հայրենիքի, ազգության հարցերը: Այս հոսանքի որոշ գործիչներ կրոնը և հայոց եկեղեցին են համարել ազգապահպանման գլխավոր գործոնը: Այդ գործիչները, հիմնականում, հանդիսացել են հոգևորականներ[2]: Սակայն Մ.Աղաբեկյանը, ազգապահպանման գործում եկեղեցուց առավել կարևորել է ազգության գործոնը, ինչի մասին գրում էր ազգային-պահպանողական «Կռունկ» ամսագիրը. «երկու սրբազան խնդիրներ ունինք մեր առաջը, որ, ըստ մեզ, մինը միւսին զոհելը սրբապղծութիւն է. ազգայնութիւն և կրօնք, երկուսն էլ անդրժելի, առաջինը՝ բնական և երկրորդը՝ բարոյական սրբազնութեամբ պատկառելի, ըստ մեր սկզբանց»[3] և, ապա, շարունակում. «չենք ասել, թէ կրօնական դաստիարակութիւնը, ըստ ինքեան, անօգուտ կամ պարսաւելի է, քաւ լիցի, բայց երբոր նրանով ժողովուրդ մինչև ազգութիւնը կարող է ուրանալ և նրա տեղը կրօնական անունն ընդունել, իրավունք ունինք ասելու, թէ կրօնաւորական սկզբանց հետևութիւնը սրբապղծութիւն է այս մասին մէջ, քանի որ նրա մէջ ազգուրացութիւն կայ»[4]: Այս մեջբերումից հասկանում ենք, որ ազգային-պահպանողականների այս թևի համար գլխավոր արժեք էր հանդիսանում ազգը, իսկ մնացյալ գործոնները հանդիսանում էին որպես ազգապահպանման երաշխիքներ:

Մ.Աղաբեկյանը ազգապահպանման հիմնասյուներն էր համարում լեզուն և կրոնը. «Մեր ազգի նման մի ազգի մէջ ազգայնութիւն և բարոյականութիւն զարթացնելու կամ զարգացնելու համար կամ թէ մեր ազգը ազգայնութեան և բարոյականութեան մէջ լուսաւորելու համար երկու ամենամեծ և ամենակարևոր տարերք կան նրան ծանօթացնելու. այս տարերքն են իր լեզուն և իր կրօնը, առանց որոնց, մեր մէջ ոչ հայկական ազգայնութիւն և ոչ ազգային բարոյականութիւն կարող է լինել»[5]:

Ազգային-պահպանողական գաղափարախոս Մարկոս Աղաբեկյանը, եկեղեցուց զատ, ազգապահպանության կենսական գործոն էր համարում. «ոչ թե մեռած գրաբարը, այլ ազգային կենդանի լեզուն: Ընդսմին ազգային լեզուն և գրականությունը, ազգային պատմությունը, ավանդույթներն ու բարքերը և վերջապես՝ ազգային մանուկների ուսումնառությունն ու դաստիարակությունը - սրանք էին նրա համար այն գործոնները, որոնք եկեղեցու, նրա դավանության ու ծիսակատարությունների հետ մեկտեղ երաշխիք էին նկատվում ազգի կենդանությանը»[6]: Ի տարբերություն ծայրահեղ պահպանողական գործիչների, ովքեր ջատագովն էին «նախնեաց բուն լեզուին»[7]՝ գրաբարին, Մ.Աղաբեկյանը գտնում էր, որ կրթությունն ու ուսումնառությունը պետք է անկացվի աշխարհաբարով:

Հարկ ենք համարում շեշտել, որ այնքան էլ ճիշտ չէ գրաբարի օգտագործումը համարել հետադիմության կամ խավարամտության նշան: Եթե ժամանակի պահանջն էր հրաժարվել խրթին գրաբարից, քանզի ժողովրդի այն անըմբռնելի էր, ապա, դա ամենևին էլ չի նշանակում, որ նրա պահպանման կողմնակիցները խավարամիտներ էին: Խավարամիտներ էին նրանք, ովքեր արհամարհանքով ժխտում են գիրն ու գրականությունը: Այսպիսով, խոսքը վերաբերում է միայն գրաբար կամ աշխարհաբար լեզուներից որևէ մեկի, որպես՝ ազգային արժեքի նախընտրելիության նպատակահարմարությանը: Մ.Աղաբեկյանը նախապատվությունը տալիս

[1] ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 134, թ. 3:
[2] Այդ գործիչներից են եղել Առաքել Արարատյանը, Գաբրիել Այվազովսկին, Մսեր և Զարմայր Մսերյանները, Սարգիս Ջալալյանցը և ուրիշները:
[3] «Կռունկ», Թիֆլիս, թիվ Ա (1),1862թ., էջ 61:
[4] Նույն տեղում, էջ 62:
[5] «Կռունկ», Թիֆլիս, թիվ ԺԱ (11),1860թ., էջ 98:
[6] «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 4(31), 1965, էջ 65-66:
[7] «Մասյաց Աղավնի», 1855թ., Փարիզ, Ա տարի, էջ 49:

էր երկրորդին և կարծում ենք, որ նա ճիշտ էր: Վերջինս պատկանում էր պահպանողականների այն խմբին, որոնք նույն Աչ.Յովհաննիսյանի պատկերավոր արտահայտությամբ՝ «Ազգային կյանքի սայլը բանուկ պահելու համար հարկ էին տեսնում փոխելու նրա հին մաշված, փչացած մասերը»[1]:

Մ.Աղաբեկյանը մտահոգված էր նաև ազգային դաստիարակության խնդրով և ցանկանում էր, որ հայ ազգն ունենա. «մի առանձին սեպհական դաստիարակութիւն» և այդ մտահոգությամբ նա «Կռունկ»-ում հրատարակված իր «Ճաշակ ազգային և հոգեւոր հրապարակական դաստիարակութեան» հոդվածում գրում է. «Մենք՝ Յայոց աշխարհիս որդիքս, ներկայ ժամանակումս երկու միմեանց հակառակ դաստիարակութիւն ենք ստանում, որոնք ոչ մի հիմնաւոր յատուկ սկզբունք ունենալով, ոչ շահաւոր և օգտակար են մեզ համար և ոչ արգասաւոր և արդիւնատու են լինում մեր որդւոց համար: Մինն, մեր Յայաստանեայց Եկեղեցւոյն վարդապետութեանց և մեր ազգային բնաւորութեանց օտարոտի և անպատշաճ, կամ մասնաւոր անձանց ձեռամբ կամ այլևայլ երկրներումը և ազգերումը և կամ աւելի չարն, այս նուիրական պաշտօնոց շահավաճառ եղած մարդկանց ձեռամբ ենք ստանում: Իսկ միւսը, թէպէտ և Յայաստանեայց Եկեղեցւոյն պաշտօնէին հսկողական տեսչութեամբն է մեզ մատակարարուում, բայց անպայման բաշխմամբ, անկանոն ուղղութեամբ, առանց մի աստիճանական սկզբանց վրայ հիմնուելած և մի ազգային և բարոյական և մտաւորական յառաջադիմութեան նպատակի...»[2]: Մ.Աղաբեկյանը նոր սերնդի դաստիարակությունը պատկերացնում էր զերծ օտարածին ազդեցություններից և կրոնական մոլեռանդությունից: Այսինքն, երիտասարդ սերնդի դաստիարակությունը, իր էությամբ և բովանդակությամբ, պետք է լինի «հոգւոյն ազգօրէն»[3], որն էլ՝ ազգապահպանման գլխավոր երշխիքներից մեկը կարող է հանդիսանալ: Նա կողմնակից էր գործնական կրթությանը: Յամաձայնելով նրանց հետ, ովքեր գտնում էին, որ հայկական հանրակրթական դպրոցները «հացի տեր» չեն դարձնում իրենց աշակերտներին, Մ.Աղաբեկյանը առաջարկում էր հայ դպրոցականների ձեռքը տալ «գութանը, մանգաղը, թիակը, մուրճը, խարտոցը, սղոցը, կացինը և մյուս գործիքը», «մոտեցնելով նոցա բնությանը և կենաց հանգամանքներին»[4]:

Ազգային ինքնագիտակցության բարձրացման գործում Մ. Աղաբեկյանը կարևորում էր ազգային պատմության դերն ու նշանակությունը. «մի ազգի մէջ ազգայնութեան զգացմունք զարթուցանել կամ զարգացնել կիմանանք, երբ նրա իր ազգի պատմութիւնն ամենայն հանգամանօք և կերպարանօք ցոյց կտրուի, նրա բարոյական, քաղաքական և իմացական կատարելութիւնները կամ պակասութիւնները արեգական նման կյայտնուի, նրա աչաց առաջը կբերուի իր նախնեաց երևելի հռչակաւոր գործերը, արիութիւնները, դիւցազնութիւնները, բարերարութիւնները և այլն, և այլն»[5]: Եվ պատահական չէ, որ Մ. Աղաբեկյանի աշխատություններից մեկը, որը սկսվում է «Ոչ Յայոց աշխարհ կայ առանց Յայոց Ազգի, ոչ Յայոց Ազգ՝ առանց Յայոց աշխարհի»[6] նախադասությամբ, նվիրված է հայոց պատմության փառապանծ էջերին և հայրենանվեր գործիչներին:

Մարկոս Աաբեկյանը ազգապահպանման գլխավոր երաշխիքներից էր համարում նաև ընտանիքը, բարոյական նորմերի և ավանդույթների պահպանումը: «Մի ազգ, - գրում է Մ.Աղաբեկյանը, - իրա մեծագործութեամբը, աշխարհակալութեամբը և քաղաքակրթութեամբը պէտք չէ մեզ զարմացնէ. նրանից բացի իմաստութիւն, գիտնականութիւն և զօրեղութիւն և այլ տեսակ սքանչելիքներ պահանջելուց, նրա միջում անձնական, ընտանեկան և ազգային բարոյականութեան կեան-

---

[1] «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 4 (31), 1965, էջ 66:
[2] «Կռունկ», Թիֆլիս, թիվ Գ(3),1860թ., էջ 21-22:
[3] ՅԱԱ, ֆ. 1351, ց. 1, գ. 93, թ. 591:
[4] «Կռունկ», Թիֆլիս, թիվ Գ(3),1860թ., էջ 72 :
[5] ՅԱԱ, ֆ. 1351, ց. 1, գ. 93, թ. 843:
[6] Մարկոս Աղաբէգեան, Թուղթ Մարկոսի Աղաբէգեան Յայոց աշխարհի, ազգի եւ եկեղեցու ազգայնութեան մասին առ պատուականաց պատուական Տէր Ներսէս Արքեպիսկոպոս Անիոյ եւ Պատրիարք Օսմանեան Յայոց , Կ.Պոլիս, 1878թ., էջ 7:

քն ու հոգին պէտք է փնտռենք…»[1], իսկ «ընտանեկան ընկերութիւնը»՝ այսինքն՝ ընտանիքը, համարում է «ազգայնութեան սիւնը»[2]:

Մ.Աղաբեկյանը Թիֆլիսում Հ.Էնֆիաճյանի հրատարակած «Կռունկ» ամսագրում ներկայացրել է իր տեսակետները նաև ազգային մամուլի դերի մասին. «ներկայումս մեր ազգի մէջ այլևայլ սկզբունքներով և այլևայլ գաղափարներով օրագիրներ և լրագիրներ ունինք, բայց գրեթէ ամենուն պաշտօնը մեզ մեծ մասամբ եւրոպական լուսաւորութիւն փոխանցնել է, ունինք քաղաքական լրագիրներ, բանասիրական օրագիրներ, ունինք ազգային և ընդհանուր անցքերու, դէպքերու վրայ խօսող, քննող թերթեր, բայց չունինք տակաւին մի բուն իսկ ճշմարիտ շրջաքերական հանդէս, որոյ մէջ միմիայն մեր ազգի, մեր կրօնի, մեր լեզուի ընդհանուր և ընդհարձակ նկարագիրը երևան հանէ իրանց ամեն կերպ հանգամանքներով և կերպարանքներով»[3]:

Մ.Աղաբեկյանը ընդդիմանում էր նաև ցարիզմի քաղաքականությանը, որը ցանկանում էր սահմանափակել հայ եկեղեցու իրավունքները, քանզի եկեղեցու շահերը հաճախ նույնացնում էր ազգի շահերի հետ: Նա, իր հոդվածներում, հատկապես քննադատության է ենթարկում Պոլոժենիեն. «այն կարգադրութիւնը Հայաստանեայց եկեղեցին կառավարելու, որ յօրինուած է ռուսաց տէրութենէն 1836 թուականին, կարծել տալով մեզ, թէ այն հիմնուած է մեր եկեղեցական հին աւանդութեանց եւ օրինադրութեանց վրայ, որն որ ընդհակառակն երևում է այն լինի յատկապէս մի հնարովի միջոց մեր Եկեղեցւոյ ինգնագոյ ազատութիւնը և Հայոց Ազգի հոգևոր և բարոյական օգուտները կործանելու և Ռուսաց տէրութեան ազդեցութիւնը Հայկական ժողովուրդ գտնուող Արևելեան երկիրներու մէջ միջնորդութեամբ մեր կաթողիկոսին տարածելու համար՝ աշխարհակալութեան նպատակներով»[4]:

Հայ իրականության արևելահայ հատվածի ազգային-պահպանողականները չէին թաքցնում իրենց դժգոհությունը Անդրկովկասում տեղի ունեցած տնտեսական նոր երևույթների, ցարիզմի գաղութային քաղաքականությամբ պայմանավորված ազգային ճնշումների, ինչպես նաև՝ երկրամասը ռուսական կապիտալի հումքային կցորդի վերածելու ձգտումների նկատմամբ: Ազգային-պահպանողականների այդ խմբում իր յուրահատուկ տեղն ունի Մ.Աղաբեկյանը:

Մոտիկից դիտարկելով Անդրկովկասում իրականացվող ռուսական վերոնշյալ քաղաքականությունը, Մ. Աղաբեկյանը, որը, որպես պահպանողական գործիչ 1850-70-ական թթ. ճանաչված էր հայության երկու հատվածներում էլ, գրում էր, որ ռուսական տիրապետությունը Հայաստանում ունի «աշխարհափոխական կամ ազգաշրջական» բնույթ և, որի նպատակն է «Հայոց հոգին ու սիրտը փոխելու իրանց աշխարհի ազգի, կրոնի և լեզվի վրա և նրանց մտածելու կերպին ուրիշ ուղղություն տալու»[5]:

Հակադրվելով ռուսական այդ քաղաքականության և հայ ազատականների ու նրանց առաջնորդ Ստ. Նազարյանցի գաղափարներին, Մ.Աղաբեկյանն առաջարկում է հայրենիքը հայկական պահելու, հայկական ինքնությունը պահպանելու իր ուղին: Նա հետևյալն է գրում. «Օտար մարդիկ գալիս են հեռու երկրներից և տիրանում են մեր բնության բարիքներին, սակավ առ սակավ դառնում են տանուտեր մեր տան մեջ, հեռացնելով յուրյանցից մեզ իսկական տանուտերերիս, իսկ մենք կարծես թե շնորհակալական ժպիտով նայում ենք նոցա, գոհ ենք նրանցից, երևի էնդոր համար, որ մերը խլում են մեզանից…»[6]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1351, ց. 1, գ. 93, թ. 676:
[2] Նույն տեղում, թ. 671:
[3] «Կռունկ»,Թիֆլիս, թիվ ԺԱ(11), 1860թ., էջ 100:
[4] Մ.Աղաբէգեան, Տեղեկագիր ամենայն հայոց կաթողիկոսութեան այժմեան վիճակին վրայ, Կ. Պոլիս, 1865, էջ 8: Տես նաև նույնի՝ Խնդիր Կաթողիկոսութեան Ամենայն Հայոց քննութիւն 1836 թուականի սահմանադրութեան , Կ. Պոլիս, 1865թ.:
[5] Մ.Աղաբէգեան, Թուղթ Մարկոսի Աղաբէգեան Հայոց աշխարհի ազգի և եկեղեցու, ազգայնության մասին, Կ. Պոլիս, 1878, էջ 111:
[6] «Պատմա-բանասիրական հանդես», 1966, թիվ 1, էջ 71:

Հակառակ Ստ.Նազարյանցի այն տեսակետին, թե հայերն արտադրական իրենց մասնագետների պատրաստումը պետք է հոգան Ռուսաստանում, Մ.Աղաբեկյանը գտնում է, որ պետք է ստեղծել «Ընդհանուր հայկական ընկերություն» անունով մի կազմակերպություն, որը և միջոցներ կհայթայթի այդ խնդրի լուծման համար: «Մենք, -գրում է նա, - ավելի հարմարավոր և օգտակար ենք համարում այդպիսի մի ընդհանուր հայկական ընկերության փողերով առաջին տարին հաստատել մեր կողմերում, այսինքն՝ Թիֆլիսում կամ Հայաստանի քաղաքներից մեկի մեջ մի օրինավոր ուսումնարան, որ մեր երեխայքը ուսանին երկրագործություն, զանազան արվեստներ և վաճառականություն»[1]:

Հետաքրքիր են Մ.Աղաբեկյանի տեսակետները Ռուսաստանում հայապահպանության խնդիրների վերաբերյալ: Նա գտնում է, որ այնտեղ հայերն ամբողջովին զրկված են ազգային-քաղաքական կյանքից և ամեն կողմից ճնշված լինելով՝ ապրում են միայն ազգային-բարոյական կյանքով: 1865 թվականին նա Կ. Պոլսո Հայոց Ազգային ժողովին է հղում մի տեղեկագիր, ուր քննադատելով հայ եկեղեցու իրավունքները սահմանափակող «Պոլոժենիեն»՝ կոչ է անում պաշտպանության տակ առնել նրա ինքնուրույնությունը: Մ.Աղաբեկյանը Կ.Պոլսի Հայոց Ազգային ժողովին առաջարկում է օգնության հասնել ցարիզմի կրնկի տակ տառապող ռուսահայ ազգակիցներին[2]: Նույն տեղեկագրում Մ.Աղաբեկյանը հայտնում է այն միտքը, որ Ռուսաստանը «պատճառ է լինում գուցե ականա և անգիտությամբ՝ մեր օսմանյան գթած տերության մեջ գժտություն սերմանելուն», որով, շատ հաճախ, իրար հետ թշնամացնում էր ոչ միայն հայերին, այլև օսմանյան քրիստոնյաներին ոտքի էր հանում օսմանյան տերության դեմ[3]: Ստացվում է, որ Մ.Աղաբեկյանը դեմ էր մեծ տերությունների կողմից հրահրվող արևմտահայ ազգային-ազատագրական պայքարին: Բայց դրանով հանդերձ, նա խրախուսում և հնարավորինս օգնում էր թուրքական բռնատիրության դեմ հայ ազատագրական ընթացող պայքարին: Հայտնի է, որ նա ազգային-պահպանողականներ Հ.Էնֆիաջյանի և Պ.Սիմեոնյանի հետ Կովկասում կազմակերպել է հատուկ կոմիտե, որը հանգանակություն էր կատարում Զեյթունի հերոսամարտի համար:

Այսպիսով, նշենք, որ Մարկոս Աղաբեկյանի ողջ գործունեությունը միտված էր հանուն ազգապահպանությանը և պայքար էր այն երևույթների դեմ, որոնք, տվյալ ժամանակաշրջանում, խաթարում էին ազգային ինքնությունը: Նրա համար գլխավոր արժեքը ազգը և ազգային ինքնությունն էր, իսկ այլ արժեքները՝ եկեղեցին, դպրոցը, դաստիարակությունը, մամուլը և այլն, պետք է ծառայեին ազգային ինքնության ամրապնդմանը:

Էդգար Հովհաննիսյան
պատմական գիտությունների
թեկնածու

---

[1] Նույն տեղում էջ 71:
[2] Մ.Աղաբէգեան, Տեղեկագիր ամենայն հայոց կաթողիկոսության արդի վիճակի վրա,Կ. Պոլիս,1865, էջ 6:
[3] Նույն տեղում, էջ 7:

НАЦИОНАЛЬНО-КОНСЕРВАТИВНЫЕ ВЗГЛЯДЫ МАРКОСА АГАБЕКЯНА

РЕЗЮМЕ

В 50-60-ых годах 19-го века в армянской общественно-политической жизни значимую роль играло национал-консервативное течение, одним из выдающихся деятелей которого являлся Маркос Агабекян (1830-1908гг.) В своих многочисленных статьях и некоторых трудах Маркос Агабекян выразил национал-консервативные идеи и своё мировозрение. Он был одним из тех деятелей национал-консерваторов, которые, придавая большое значение роли церкви в деле сохранения нации, ставили различие между понятиями национальность и религиозная принадлежность, что в идеях радикальных консерваторов очень часто отождествлялось.

Для Маркоса Агабекяна нация, национальная самобытность являлись архиценностью, а всё остальное - церковь, воспитание, печать, слово, всё должно было служить повышению сознания национальной принадлежности, сохранения национальных ценностей.

Эдгар Оганнесян
кандидат исторических
наук

НАЧАЛЬНИК КАРСКОЙ ОБЛАСТИ МИХАИЛ ТАРИЕЛОВИЧ ЛОРИС-МЕЛИКОВ

31 октября 2009г. исполнилось 185 лет со дня рождения Михаила Тариеловича Лорис-Меликова (1824-1888) - генерала от кавалерии (1875), графа (1878), члена Государственного совета (1880), председателя Верховной распорядительной комиссии (1880), министра внутренних дел (1880-1881). Известность и интерес к персоне М.Т. Лорис-Меликова в первую очередь связаны с его активным участием не только в военных действиях, но и в политической жизни России.

В отечественной историографии, посвященной проблемам реформаторства, он порой предстает в качестве случайного человека, «неизвестно откуда» появившегося в высшем эшелоне управления страной. Между тем проблема военно-административного управления Лорис-Меликовым территорией, завоеванной по праву войны, частично нашла отражение в историографии. Ряд авторов (М. И. Богданович, Н.Н. Муравьев, Г.Г. Даниелян, З.Х. Ибрагимова, Л.А. Бабаян, Ю.Л. Костанян, Б.С. Итенберг, В.А. Твардовская, П.А. Кузьминов)[1] в контексте проблемы уже касались этого вопроса и единодушно положительно оценивали деятельность начальника Карской области[2]. Однако новые источники и подходы к изучению его управленческой практики высвечивают такие детали, которые позволяют уточнить и более убедительно аргументировать эту оценку. В данной статье впервые в научный оборот вводятся такие источники как делопроизводственные материалы из фонда 352 Национального архива Армении (НАА), документы из публикации «Акты, собранные Кавказской археографической комиссией» (АКАК), а также воспоминания современников - участников описываемых событий (А.С. Корсаков, Н.П. Колюбакин, М.Я. Ольшевский и П.И. Степанов).

16 ноября 1855 г.[3] капитулировал Карс. Рано утром 17 ноября над цитаделью был поднят Русский императорский флаг. Турецкая армия на Кавказском театре военных действий была окончательно уничтожена.

После завоевания крепости М.Т. Лорис-Меликов, будучи уже полковником, 21 ноября 1856г. был назначен начальником Карской области. Его деятельность на этом посту регулировалась «Положением для управления Карской областью»[4]. Согласно версии, изложенной в работе М.И. Богдановича, и по воспоминаниям А.С. Корсакова автором проекта Положения, утвержденного главнокомандующим Отдельным Кавказским корпусом генерал-лейтенантом Н.Н. Муравьевым, являлся Лорис-Мели-

---

[1] Богданович М. И. Восточная война 1853-1856 годов. Продолжение блокады и сдача Карса. Гл.17(XLII). [Электронный ресурс]. URL: http://adjudant.ru/crimea/bogdan42.htm; Муравьев Н. Н. Война за Кавказом в 1855 году. СПб., 1877. Т. 2. С. 241-244; Даниелян Г. Г. Генерал граф Лорис-Меликов: Его жизнь, военная и государственная деятельность. Ереван, 1997. С. 48; Ибрагимова З.Х. Чеченская история: Политика, экономика, культура второй половины XIX века. М., 2002. С. 33; Бабаян Л.А. Лорис-Меликов. Герой Кавказа - «бархатный диктатор» России. Ереван, 2004. С. 11; Костанян Ю. Л. Граф Михаил Тариелович Лорис-Меликов (1824-1888). СПб., 2004. С. 33; Итенберг Б.С. Военачальник и администратор на Кавказе //Отечественная история. 2004. № 1. С. 44-45; Итенберг Б.С., Твардовская В.А. Генерал граф Лорис-Меликов и его современники. М., 2004. С. 15-17; Кузьминов П. А. М. Т. Лорис-Меликов на Кавказе //Кавказский сборник. М., 2005. Т. 2 (34). С. 117-118.

Николай Николаевич Муравьев (Карский) (1794-1866) - генерал-адъютант, генерал от инфантерии. В 1854-1856гг. - наместник на Кавказе и главнокомандующий Отдельного Кавказского корпуса. Руководил осадой и штурмом Карса.

[2] Карская область была образована из Карского и части Ольтинского пашалыков (областей) и делилась на три округа: Ардаганский, Карский и Ольтинский. См.: Положение для управления Карской областью, утвержденное главнокомандующим в 19-й день ноября 1855 года // Акты, собранные Кавказскою археологической комиссией (АКАК).Тифлис, 1888. Т.11. С. 167.

[3] Даты приводятся по ст. стилю.

[4] Положение для управления Карской областью … С. 167-168.

ков[1]. Оптимальный вариант военно-гражданского управления территорией, занятой по праву войны, выглядел следующим образом. Он вступал в управление вновь покоренным краем на правах гражданского губернатора в военное время. В соответствии с Положением ему предписывалось действовать «на пространстве вверенного ему края»: по части исполнительной и распорядительной - посредством окружных и санджаковых (уездных) начальников, а по части судебной - посредством главного карского меджлиса (областного управления). В особо важных случаях глава военно-гражданской администрации должен был присутствовать в меджлисе в качестве председателя, в остальных - осуществлял контроль за его решениями и утверждал их.

Уголовные дела относились к ведению непосредственно начальника области, который «по надлежащем исследовании преступлений» обязан был представлять материалы дел через командующего Действующим корпусом на решение главнокомандующего Отдельным Кавказским корпусом.

Важнейшей функцией областного начальника было осуществление контроля («казенного интереса») за сбором налогов. Он должен был обеспечить сбор информации о численности городского и сельского населения области, размерах доходов государственной казны при турецком правительстве, наличии казенных имений, а также «засвидетельствовать» все фирманы[2] и документы на право владения имениями и земельными угодьями[3].

Передача оброчных статей в откупное содержание, поиск источников для пополнения доходов казны, оформление актов, включая заемные письма, наложение на жителей земских повинностей, взыскание податей деньгами и хлебом входили в обязанности главного меджлиса. Начальник Карского пашалыка на эту деятельность должен был испрашивать разрешение у командующего Действующим корпусом. Оброчные статьи находились под контролем Лорис-Меликова, который осуществлялся с помощью комиссаров, снабженных шнуровыми книгами. Непосредственно ему подчинялась городская полиция. В его обязанности входило также открыть полевую почтовую контору на положении военных почтовых контор.

На него возлагалась функция по организации материально-технического обеспечения войск, расположенных в области. Эту деятельность необходимо было реализовывать с помощью окружных и санджаковых начальников.

Согласно Положению в особо важных случаях (например, появление неприятеля в пределах области) карский начальник был обязан исполнять приказы командующего войсками. Ему надлежало «неослабно» следить за всеми действиями и докладывать начальнику войск, расположенных в области, а также командующему Действующим корпусом. Лорис-Меликов определял и маршруты кавалерийских разъездов по границам области.

Для содержания лазутчиков и получения сведений о неприятеле ему полагалась экстраординарная сумма.

Таким образом, Положение определило статус, права, обязанности и основные предметы ведения дел главы администрации. Он должен был олицетворять ключевую фигуру гражданского управления на занятых территориях. Значение его должности заключалось, с одной стороны, в том, чтобы теснейшим образом взаимодействовать с местными структурами управления, а с другой - являться представителем областной власти, которая имела контакт с командованием русских сил.

К сожалению, обнаруженные источники не позволяют воссоздать картину административно-военной деятельности М.Т. Лорис-Меликова в полном объеме и в соответствии с основными пунктами Положения. Это затрудняет ответ на вопрос о его реальных приоритетах. Тем не менее выявленная информация дает основание утвер-

---

[1] См.: Богданович М.И. Указ. соч.; Корсаков А.С. Воспоминания о Карсе //Русский вестник (РВ). 1861. №8. С. 407.

[2] Фирман - указ султана в Турции.

[3] Положение для управления Карской областью … С. 168.

ждать, что важнейшей стороной деятельности главы области была организация сбора данных о численности и дислокации войск противника в Эрзеруме, селении Ольты, Верхне- и Нижне-Пассинском санджаках, а также о материально-техническом состоянии турецкой армии[1]. В его обязанности входило также наблюдение за кадровыми перестановками в турецкой армии и действиями иностранных агентов.

Основным источником получения сведений о неприятеле были местные жители, значительную часть которых составляли этнические армяне, пленные, лазутчики или специальные агенты. Обнаруженные в АКАК документы позволяют воспроизвести процесс их вербовки, который состоял из нескольких этапов. Лорис-Меликов требовал от агента письменного подтверждения о готовности сообщать сведения о турецких войсках и направлениях их движения, лично встречался с будущим резидентом, определяя, действительно ли он может добывать необходимые сведения. Так, каймакам (полковник) Анатолийской армии Мамед-Али-бек (он же Ширин-бек) был «вытребован» им для объяснений «по предмету сделанного им предложения. Он явился ночью в Александрополь и подтвердил готовность служить» русским. С этого времени турецкий полковник «усердно» сотрудничал в интересах русской армии «доставлением» полезных сведений как через посылавшихся к нему людей, «так и лично три раза приезжал … переодетый…». Если случалось непредвиденное и агента раскрывали, он, конечно, бежал к русским. М.Т. Лорис-Меликов не бросал его на произвол судьбы. Был обнаружен документ, содержащий прошение начальника области о принятии на русскую службу турецкого офицера Мамед-Али-бека, «лишившегося чина и средств к жизни» за преданность русским. Ходатайство имело своей целью, с одной стороны, «отдать справедливую дань» усердию агента, а с другой - внушить доверие другим подобным людям, необходимым в военное время[2]. Деятельность агентов обязательно поощрялась материально (подарки, пенсии и денежные выплаты), в том числе и посмертно. В фонде 352 НАА есть документ, содержащий предписание главы пашалыка о награждении золотым перстнем с рубином и бриллиантом стоимостью в двести рублей карского жителя Полончи за услуги брата, «преданного» генералом Вильямсом за сотрудничество с русскими смертной казни[3]. Используемая Лорис-Меликовым практика поощрения «доставлявших» информацию должна была повысить авторитет военных в глазах местных жителей и привлечь их на службу русскому правительству. В целом сведения, полученные с помощью организованной главой пашалыка агентурной сети, сыграли важную роль в корректировке действий русского командования на территории Турции.

На начальника Карской области была возложена также задача обеспечения продовольствием и фуражом войск, расположенных во Владикарсе и Ардагане[4].

---

[1] Письмо полк. Лорис-Меликова к ген. Муравьеву, от 24 декабря 1855 года // АКАК. С. 200; Отношение ген. Муравьева к кн. Долгорукову, от 30 января 1856 года, №21 // АКАК. С. 228-229; Письмо полк. Лорис-Меликова к ген. Муравьеву от 7 марта 1856 года // АКАК. С. 289-290; Отношение ген. Муравьева к кн. Долгорукову от 19 марта 1856 года, № 41 // АКАК. С. 269; Отношение ген. Муравьева к кн. Долгорукову, от 25 марта 1856 года, № 63 // АКАК. С. 270; Отношение ген. Муравьева к кн. Долгорукову от 6 апреля 1856 года, № 101 // АКАК. С. 271; Отношение ген. Муравьева к кн. Долгорукову от 21 апреля 1856 года, № 161 // АКАК. С. 275-276.

[2] Рапорт начальника Карской области, полк. Лорис-Меликова, командующему Действующим корпусом на кавказско-турецкой границе, ген.-л. Бриммеру, от 22 декабря 1855 года, № 205 // АКАК. С. 436, 437.

[3] Предписание Лорис-Меликова помощнику казначея Карского областного управления о вознаграждении карского жителя Полончи // Национальный архив Армении (НАА). Ф. 352. Оп.5. Д.6, Л.24 и об.

[4] Ольшевский М. Я. Кавказ с 1841 по 1866 год // Русская старина (РС). 1894. Т. 82 (сентябрь). С. 32; Т.82 (декабрь). С. 196; См. также: письмо ген. Муравьева к полк. Лорис-Меликову, от 17 декабря 1855 года, №46 // АКАК. С. 193; Предписание начальника штаба Действующего корпуса Лорис-Меликову об организации заготовки сена для армии // НАА. Ф.352. Оп.1. Д.3. Л.1-3.

Жители санджаков обязаны были поставлять, пропорционально своему населению, определенное количество хлеба, ячменя, сена, соломы и топлива, а также предоставлять необходимые перевозочные средства. Эти правила не распространялись на Шурагельский и Тахтинский уезды, сильно пострадавшие от войны. Раскладка и взимание податей («бахры») производились через санджаковые меджлисы (уездные управления) под надзором русских офицеров, которые ни разу не «прибегли к принудительным мерам». Исключение было сделано только в отношении «обильного» Гельского санджака, для удержания которого «и прилежащих к нему мест», считал М.Т. Лорис-Меликов, необходимо применять войска. В качестве основных поставщиков провианта он по рекомендации Н.Н. Муравьева использовал «охотников»[1]. Работать приходилось в трудных погодных условиях, при отсутствии времени, недостатке перевозочных средств и увеличении расхода провианта. Тем не менее в результате предпринятых действий было организовано бесперебойное снабжение войск фуражом и провиантом.

В фонде 352 НАА обнаружен документ от 3 декабря 1855 г.[2], содержащий инструкцию по организации подвоза продовольствия для войск в Карской области, разработанную Лорис-Меликовым и предложенную начальникам санджаков к исполнению. Заготовление провианта осуществлялось «покупкою от жителей», его продажа в частные руки воспрещалась во всех санджаках округа. Особое внимание в предписании глава области обращал на количество и цены на муку и пшеницу. Размеры раскладки варьировались в зависимости от численности района и его «достатка». Так, жители Ардаганского и Чалдырского санджаков должны были поставить муку и пшеницу в размере 400 сомар[3], а Поцховского - 300. Цены на продовольствие фиксировались, их объявляли населению. Плата за одну сомару муки равнялась 12 руб. 50 коп., пшеницы - 12 руб. Минимальный объем одной партии составлял 50 сомар. Слабым пунктом в осуществлении этого плана могла стать продажа провианта частникам в Карсе. Чтобы исключить эту возможность, транспорт в сопровождении есаула должен был «строжайше» следовать в конечный пункт - Владикарс. За неисполнение этого требования полагалось строгое наказание. «Понуждение» жителей к продаже муки было важным условием предписания: его соблюдение позволяло избежать проволочки времени и сократить расходы казны на перемол пшеницы. Первоначально работу необходимо было закончить к 1 января 1856 г. Это же требование содержится и в других документах.

Предписание дает возможность охарактеризовать некоторые представления начальника пашалыка об успешной практической деятельности. Свои решения он выстраивал с учетом конкретных обстоятельств. В документе четко оговаривались условия продажи и требования к организации процесса транспортировки провианта. План реализации решений, как правило, исключал возникновение ситуаций, которые могли оказать негативное влияние на конечный результат (например, запрет на изменение маршрута доставки провианта). Перед исполнителями обязательно ставилась задача миниминизации казенных расходов и указывались сроки выполнения.

Осуществление плана предполагало обязательный строгий контроль за его испол-

---

[1] В письме Н.Н. Муравьева от 17 декабря 1855 г. содержится рекомендация М.Т. Лорис-Меликову по организации команды из трех сотен охотников для сбора фуража и провианта. «…летом пускай они будут головорезы, а зимою - поставщики провианта … Дайте какие-нибудь по цвету сотни кокарды на шапки и убедите их, что настоящая зимняя служба едва ли не более уважится, чем летняя» (цит. по: Письмо ген. Муравьева к полк. М.Т. Лорис-Меликову от 17 декабря 1855 года, №46. С. 193-194). Совет Н.Н. Муравьева - яркий пример широко использовавшегося русским командованием метода психологического воздействия на мусульманское население с целью сформировать лояльное отношение к службе в императорской армии.

[2] Предписание начальника Карской области начальнику Ардаганского и Поцховского санджаков о количестве и ценах на провиант, доставляемый для войск // НАА. Ф. 352. Оп.6. Д.1. Л.34-35 об.

[3] Сомар - единица веса, равная 300 кг.

нением со стороны начальника области. В своем предписании начальнику Ардаганского округа от 10 января 1856г. Михаил Тариелович требовал принять самые неослабные меры к усилению подвоза недоимок хлеба жителями округа[1]. Неисполнение возложенного на главу Зарушадского округа поручения он рассматривал как проявление «небрежения» и равнодушия к исполнению обязанностей, которые «не будут оставлены без строгого взыскания по законам»[2]. В предписании от 22 января глава Карской области снова предлагал начальнику Ардаганского округа «всемерно озаботиться о немедленном подвозе в Ардаган жителями пшеницы, употребив для этого всю Вашу деятельность и, если окажется необходимым, меры строгости»[3].

Во время заготовки провианта некоторые пункты первоначального плана могли существенно корректироваться в зависимости от конкретной ситуации. Так, на основе ходатайства Лорис-Меликова главнокомандующему Отдельным Кавказским корпусом с целью «приохотить» жителей продавать имеющийся у них хлеб первоначальная цена за пшеницу в Ардаганском округе была увеличена до 6 руб. 50 коп. Это предписание начальник округа должен был объявить жителям, «внушив им при том всю выгоду, могущую происходить по увеличенным ценам, с доставкою на место»[4].

Еще одним примером ситуационного подхода к решению вопросов, связанных с обеспечением поставок провианта, служит рапорт главы администрации командующему войсками Карской области об увеличении платы жителям за доставку пшеницы из Владикарса на ардаганские и карские мельницы, а обратно - муку во Владикарс. Необходимость принятия этой меры была связана с возникшей проблемой содержания скота, с помощью которого осуществлялись перевозки. Затяжная зима исключала возможность кормить животных за счет подножного корма. По имеющимся у начальника области сведениям рабочий скот Тахтинского санджака был доведен до крайнего изнурения, а у жителей Гельского санджака запасы корма ограничивались двумя неделями. Увеличение платы за «перевозочные» средства в два раза (с 27 до 55 коп.) должно было позволить местным жителям поддержать изнуренных животных[5]. Не исключался и вариант временного прекращения перевозок в случае отсутствия кормов для животных.

Учет интересов всех участников заготовки и доставки провианта для войск, в том числе и конкретных исполнителей - жителей санджаков, занимал важное место в подходе Лорис-Меликова к решению вопросов, возникавших в процессе реализации поставленных целей. Еще одним проявлением учета стала реакция начальника области на ситуацию с поставками жителями Поцховского и Ардаганского санджаков хлеба, не пригодного для употребления в пищу. В своем рапорте командующему войсками в Карской области от 9 марта он снимает с себя и начальников санджаков ответственность за «беспорядки», так как контроль за качеством продовольствия не входит в их обязанности и организовать его на месте не представлялось возможным. По его мнению, «если означенная мука уже принята комиссией и жители отпущены, то ответственность за это должна пасть на членов Комиссии», принимавших хлеб и оценивавших его достоинства. Это можно объяснить желанием начальника области найти реальных виновных и предотвратить повторение ситуации в будущем. Вместе с тем следует отметить, что это нельзя считать его принципиальной позицией, так как согласно тексту документ мог быть скорректирован решением сверху. Так, например,

---

[1] См.: Предписание начальника Карской области начальнику Ардаганского округа об усилении подвоза недоимок хлеба с жителей округа // НАА. Ф. 352. Оп.6. Д.1. Л. 104-105.

[2] Предписание Лорис-Меликова начальнику Зарушадского округа о контроле за поставками хлеба // НАА. Ф.352. Оп.7. Л.1 и об.

[3] Предписание начальника Карской области начальнику Ардаганского округа о немедленной поставке пшеницы для довольствия войск // НАА. Ф. 352. Оп. 6. Д.1. Л.147 и об.

[4] Предписание начальника Карской области начальнику Ардаганского округа о повышении цен на хлеб, поставляемый жителями округа для войск // НАА. Ф. 352. Оп.6. Д.1. Л.270.

[5] Рапорт Лорис-Меликова командующему войсками в Карской области о необходимости увеличения платы на перевозочные средства // НАА. Ф. 352. Оп.5. Д.3. Л.128-129 об.

он не исключал возможности привлечения к ответственности жителей на основании распоряжения командующего войсками «о высылке в Карс за конвоем жителей», доставивших недоброкачественную муку. В этом случае они должны были бы быть строго наказаны и вместо забракованной муки поставить такое же количество другой, лучшего качества[1].

К сожалению, имеющиеся в нашем распоряжении источники исключают возможность полно и достоверно отследить развитие этой ситуации. В предписании начальника Карской области начальнику Ардаганского округа о поставке недоброкачественной муки жителями от 14 марта содержится информация о том, что существовавшая во Владикарсе комиссия забраковывает хлеб, «…но поставщики привозят его в Карс, сбывают безубыточно на здешнем рынке и возвращаются в свои деревни, быть может, вследствие ложного понимания лежащей на них повинности, совершенно не заботясь о новой поставке муки во владикарский склад, в замене забракованной…»[2]. Но являлось ли добросовестное исполнение обязанностей комиссией результатом реализации предложения Лорис-Меликова - наказать ее членов и «проучили» ли местных жителей, остается неизвестным. Тем не менее позиция по этому вопросу отражает его подход к делу в целом - практичность, наличие здравого смысла, стремление выполнить работу наилучшим образом.

Информация, содержащаяся в материалах фондов НАА и в публикации АКАК, дает возможность воспроизвести способы принятия и реализации решений Лорис-Меликовым. Первоначальный план имел окончательную и неизменную цель - обеспечить подвоз продовольствия. В процессе осуществления действий, обеспечивавших поставки провианта, отдельные пункты плана подвергались принципиальным корректировкам. Многочисленные трудности (действие природного фактора, отсутствие мотивации у конкретных исполнителей) разрешались с помощью «благоразумно и обдуманно-распорядительных мер». Промежуточные решения (повышение платы за муку, использование транспортных средств и т.д.) всегда принимались с учетом конкретной ситуации и интересов всех участников процесса заготовки провианта для войск «местной поставки». Сбор информации осуществлялся из разных источников. Например, сведения об отсутствии кормов для скота в Гельском санджаке были получены Лорис-Меликовым из неоднократных донесений и подтверждались письмами есаула Кульгачева[3]. Чтобы «приохотить» местное население к выполнению повинности, использовались материальное стимулирование (заготовка провианта для войск осуществлялась за плату, цены на пшеницу и муку повышались), административно-командные («меры строгости») и психологические методы, в том числе внушение. Те же подходы использовались и при заготовке сена для армии и перевозке в Карс казенного имущества.

Обеспечение войск строевым лесом также входило в обязанности начальника Карской области. Выявленные документы раскрывают еще один вариант подхода русского командования, чтобы привлечь жителей пашалыка к выполнению заказов военного ведомства, - использование вольнонаемного труда рабочих. В «Предписании командующего Действующим корпусом на кавказско-турецкой границе Лорис-Меликову о найме жителей для рубки строевого леса» специально оговаривались обстоятельства этого решения. Ими стали, с одной стороны, «принятие в уважение» «усиленных» нарядов жителей для исполнения «разных спешных работ и перевозок» во время войны, с другой - учет конкретной ситуации - начало посевных работ. Интересно также отметить, что размер оплаты в случае использования вольнонаемного труда необходимо было согласовать с жителями, которые изъявят желание участвовать в заготовле-

---

[1] Рапорт Лорис-Меликова командующему войсками в Карской области о поставках недоброкачественной муки жителями области // НАА. Ф.352. Оп.5. Д.3. Л.105-106 об.

[2] Предписание начальника Карской области начальнику Ардаганского округа о поставке недоброкачественной муки жителями области // НАА. Ф. 352. Оп.6. Д.1. Л.281-282.

[3] Рапорт Лорис-Меликова командующему войсками в Карской области о необходимости увеличения платы на перевозочные средства // НАА Ф.352. Оп.5. Д.3. Л.128-129 об.

нии строевого леса при условии соблюдения «казенного интереса»[1]. В «Предпроводительном письме Лорис-Меликова к предписанию командующего Действующим корпусом Хрулева о заготовлении леса для инженерного ведомства»[2] от 1 июля содержится распоряжение «приступить немедленно» к операции по заготовлению леса. «Успешное исполнение оной» предлагалось осуществить на новых условиях – произвести раскладку как для вырубки, так и для перевозки бревен в Александропольскую крепость. Плата за доставку должна была производиться по факту предоставления Лорис-Меликову квитанций от александропольского коменданта о доставке бревен[3]. Дата препроводительного письма - 1 июля 1856г. - дает возможность предположить, что первоначальный проект на условиях вольного найма и договорной платы не был реализован. Изменение статуса найма могло быть связано как с окончанием посевных работ, так и с неудачной попыткой договориться с жителями о цене.

В связи с заготовкой бревен заслуживает внимания еще один факт, свидетельствующий об учете полковником интересов жителей и его способности просчитывать ситуацию. Доставка бревен с Соганлуга в Александрополь должна была осуществляться самым коротким путем, т.е. через Визинкей. Однако при определении маршрута он считал необходимым принять во внимание то обстоятельство, что часть бревен могла быть забракована. Он нашел «менее стеснительной для жителей» доставку леса через Карс, где забракованные бревна жители могли продать частным лицам, и распорядился о изменении маршрута доставки[4].

Արտասահմանում, ինչպես նշվել էր, Յայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղերն իրականացնում էին նաև քաղաքական խնդիրներ և նրանց բախումն հայ ավանդական կուսակցությունների հետ անխուսափելի էր, քանի որ հայկական համայնքներում վերջիններիս ազդեցությունն հսկայական էր:

Ռամկավար-ազատական կուսակցության կենտրոնական վարչության (Փարիզ) 1928թ. հունիսի 30-ի իր շրջանային վարչություններին ուղղած կոչում նշվում էր. «ՅՕԿ-ի արտասահմանյան ճյուղերի մեջ գտնվող որոշ համայնավար անդամներ վերջին երկու տարիների ընթացքում երևան էին հանել ՅՕԿ-ի բուն նպատակին և գաղթականությանը վնասող կուսակցական ձգտումներ»:

Այդ պատճառով ՌԱԿ-ը առաջարկում է իր անդամներին, որոնք նաև ՅՕԿ-ի անդամ էին, դիմադրել նրանց հակումներին, քանի որ այդ կազմակերպությունն, ըստ իր Կանոնագրի, չպետք է զբաղվեր քաղաքականությամբ: Յակառակ դեպքում ՌԱԿ-ի Կենտրոնական վարչությունը հրահանգում էր կուսակցության անդամներին՝ առանց վեճի և հրապարակային արտահայտությունների հեռանալ ՅՕԿ-ից[3]:

ՅՕԿ-ի և ռամկավարների միջև խզումը փաստ էր: Դա հատկապես ակնհայտ էր Ֆրանսիայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ուր ՅՕԿ-երն աստիճանաբար անցնում էին բացառապես կոմունիստների ու նրանց կողմնակիցների ձեռքը: Ամերիկայում, Յունաստանում, Ֆրանսիայում հրատարակվող ՅՕԿ-կոմունիստ թերթերն արդեն ռամկավարների մասին խոսում էին այնպես, ինչպես գրեթե Յայ հեղափոխական դաշնակցության մասին[4]:

1931թ. մայիսի 24-25-ին Փարիզում տեղի է ունենում ՌԱԿ-ի Արևմտյան Եվրոպայի 7-րդ շրջանային ժողովը, ուր քննարկվում է նաև ՅՕԿ-ի հարցը: Քանի որ ՅՕԿ-ի և ՌԱԿ-ի միջև տեղի էր ունեցել լայն վիճաբանություն, ուստի որոշվում է առաջարկել, որ ՌԱԿ-ի անդամները այսուհետ պատասխանատու գործ չընդունեն այդ կազմակերպության մեջ և միայն նյութապես մասնակցեն Յայաստանի օգնության գործին[5]:

1931թ. օգոստոսի 10-ից սեպտեմբերի 1-ը Փարիզում գումարվում է Ռամկավար-ազատական կուսակցության Ե պատգամավորական ժողովը:

Ներքին կազմակերպչական հարցերից բացի քննարկվում է նաև ՅՕԿ-ի հարցը և ընդունվում է մի բանաձև, ուր ասվում էր. «ՅՕԿ-ը դադարել է հայրենաշեն նպատակի համար արտադրող գործոն մնալ և նրա մեջ քաղաքականությամբ զբաղվող հոսանք կա, որի համար իրենց մասնակցությունը դառնում է ապարդյուն և անկարելի: Սակայն այս հեռացումը և խզումը հետաձգել և սպասել ներգաղթի ելքին[6]»:

Առավել լարված էին ՅՕԿ-ի և դաշնակների փոխհարաբերությունները:

---

[1] ՅԱԱ, ֆ. 424, ց. 4, գ. 7, թ. 26 շրջ.:
[2] ՅԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 64, թ. 63:
[3] ՅԱԱ, ֆ. 424, ց. 4, գ. 7, թ. 39, 44:
[4] «Յայրենիք», Ժ տարի, թիւ 8, 1932թ հունիս, Բոստոն, էջ 166-167:
[5] ՅԱԱ, ֆ. 424, ց. 4, գ. 157, թ. 1, 5:
[6] Նույն տեղում, գ. 155, թ. 19:

1933թ փետրվարի 26-ին Գրենոբլում տեղի է ունենում ողբերգալի իրադարձություն: Այդ օրը դաշնակցականները կազմակերպել էին մի միջոցառում, որի մուտքն ազատ էր. հրավիրված էին նաև ՅՕԿ-ի անդամները:

Փարիզից հրավիրված դաշնակցական ատենախոսը միջոցառման ժամանակ հայտարարում է, որ թեև Յայաստանը խորհրդայնացվելով` կորցրել է իր անկախությունը, բայց այն վերաշինվում է: Այդ ժամանակ տեղից հնչում են «Կեցցե' Խորհրդային Յայաստանը» արտահայտությունները: Դաշնակցականներից մեկը, ատրճանակը ձեռքին, ցատկում է տեղից և ՅՕԿ-ի անդամների վրա հարձակվելու կոչ անում: Դրանից հետո փակում են սրահի դռները, անջատում էլեկտրականությունը և դաշույններով հարձակվում են ՅՕԿ-ի անդամների վրա: Դաշնակցականները մահացու վիրավորում են երիտասարդ Մանուկ Մարուքյանին, որը մի քանի ժամ անց մահանում է: ՅՕԿ-ի մի շարք անդամներ` Սմբատ Բլհեյանը, Գրիգոր Սահակյանը, Արմենակ Գասպարյանը, Արտաշես Տարաքճյանը և Սիրակ Բաղդասարյանը մարմնական վնասվածքներ են ստանում, իսկ Մ.Մարուքյանի սպանողն ու էլի հինգ դաշնակցական ձերբակալվում են:

Այս դեպքերից հետո համայնքում իրադրությունն ծայրաստիճան սրվում է: Գրենոբլում ստեղծվում է զոհերի պաշտպան մի հանձնախումբ, իսկ Մ.Մարուքյանի թաղումը ստանում է բողոքի ցույցի բնույթ:

Դաշնակցականներն իրենց հերթին հայտարարում էին, որ «համայնավարներն» են հարձակվել իրենց վրա և փորձել խանգարել իրենց միջոցառումը[1]:

Գրենոբլի դատավարությունը պետք է տեղի ունենար 1933թ. օգոստոսի 5-ին: Սակայն համայնքում ևս մեկ պրովոկացիա է տեղի ունենում: Ա.Ասլանյան անունով մի դաշնակցական ինչ-որ հանգամանքում վիրավորվում է և դա վերագրում է ՅՕԿ-ի երկու անդամներին` Գ.Գալաճյանին և Ղ.Մարգարյանին, որոնք երկուսն էլ փետրվարի 26-ի դեպքերի վկաներ էին համարվում: Սակայն ոստիկանությունը Գևորգ Գալաճյանին իսկույն ազատ է արձակում, իսկ քանի որ Ղազար Մարգարյանի տնից ոստիկանները զենք էին հայտնաբերել, վերջինիս պահում են բանտում: Այնուհետև պարզվում է, որ վիրավորի թևից հանված գնդակը չի համապատասխանում Ղ.Մարգարյանի ատրճանակին[2]:

Ա.Ասլանյանը Մ.Մարուքյանին սպանող Սարգիս Ղուկասյանի քրոջորդին էր: Ղ.Մարգարյանին փորձագետի եզրակացությունից հետո առժամանակ ազատ են արձակում` մինչև վերջնական դատավարությունը[3]:

Երկար հետաձգումներից հետո վերջապես 1933թ. դեկտեմբերի 1-2-ը Իզերի ոճրադատ Ատյանում տեղի է ունենում Գրենոբլի դատավարությունը[4]:

Դատարանը Ս.Ղուկասյանին դատապարտում է 2 տարվա, Յովի. Արապյանին և Կյուրինյանին` 1 տարվա, Փափազյանին` 6 ամիս ազատազրկման, Արապյանին 10 ֆրանկ տուգանք` բոլորն էլ պայմանական:

Դատապարտվածները ազատ էին արձակվում այն պայմանով, եթե հինգ տարվա պայմանաժամանակում այլ պարագաներում չէին ձերբակալվում[5]:

Ահա մի օրինակ այն սպանությունների շարքից, որ տեղի էին ունենում արտասահմանի հայաշատ համայնքներում: Դրանց հաջորդում էին նմանատիպ դատավարություններ, որոնց վրա արտասահմանի հայերը ծախսում էին մեծ գումարներ այս կամ այն անձին կաշառելու և իրենց դատարկ գաղափարներն կյանքի կոչելու համար` փոխանակ մեջք-մեջքի տված, մասնակցեին երկրի շենացմանը` յուրաքանչյուրը դրա համար տեսնելով և գտնելով թեկուզ յուրովի ճանապարհ:

Յարթ չէին ՅՕԿ-ի հարաբերությունները նաև Սոցիալ-Դեմոկրատական Յնչակյան կուսակցության հետ:

---

1 «ՅՕԿ», Ա տարի, թիւ 2, 1933թ մարտ, Փարիզ, էջ 56-58:
2 Նույն տեղում, թիւ 6, 1933թ. հուլիս, էջ 59:
3 Նույն տեղում, թիւ 7, 1933թ. օգոստոս, էջ 60- 61:
4 Նույն տեղում, թիւ 12,1933թ. դեկտեմբեր, էջ 50:
5 Նույն տեղում, Բ տարի, թիւ 1, 1934թ. հունվար, էջ 58:

1932թ. հուլիսի 9-10-ը Վիենի «Տխրունի» ակումբում տեղի է ունենում ՍԴ Հնչակյան կուսակցության Ֆրանսիայի շրջանի Գ պատգամավորական ժողովը, որի օրակարգում էր նաև կուսակցության դիրքը ՀՕԿ-ի հանդեպ[1]: Ժողովի երրորդ նիստում քննարկվում է այս հարցը, որը երկար վիճաբանությունների առիթ է տալիս: Արդյունքում ընդունվում է մի բանաձև, ուր ասվում էր. «Ընդունելով հանդերձ ՀՕԿ-ի սկզբունքը, որ ամենաիրական է ու միակ միջոցը Խորհրդային Հայաստանին օգնելու, սակայն նկատելով անոր մէջ ծուարած և ՀՕԿ-ը որպէս պատնէշ գործածելով՝ զայն իրենց հակաաշխատաւորական դաւերուն ծառայեցնող, Սոցիալ-դեմոկրատական հնչակեան կուսակցութիւնը «Սոցիալ դաւաճան» անուանելով զայն հիմէն քանդելու համար ամեն ջանք չխնայող հակամարքսիստները, ժողովը պարտք կզգայ զգուշացնել բոլոր շարքայինները, որպէսզի չի տարուի կեղծ ու պատիր ճամարտակութիւններէ և «հնչակեանութենէ հրաժարելով ներգաղթին կարժանանանք «ի խաբեբա արտահայտութիւններէ»[2]:

Ֆրանսիայում ՀՕԿ-ի և ՍԴ Հնչակյան կուսակցության փոխհարաբերությունները ոչ միայն չեն բարելավվում, այլև հետագա տարիներին որոշակի սրացում է նկատվում:

Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցության Ֆրանսիայի շրջանի 6-րդ պատգամավորական ժողովը (1936թ հոկտեմբերի 3-4-ին Տեսին), դարձյալ քննարկում է ՀՕԿ-ի հարցը, որի շուրջ կրկին տեղի են ունենում երկար վիճաբանություններ: Նախորդ պատգամավորական ժողովի ժամանակ տեղ գտած որոշումներին հետևողական մնալով՝ ընդունում են հետևյալ բանաձևը. «Հակառակ, որ ՀՕԿ-ը չէ կրցած դեռ բիւրեղանալ բուն իր ծրագրին շուրջ և անընդմիջաբար կը շարունակէ անտեսել մեր ընկերներու տասնեակ տարիներէ ի վեր ըրած նիւթական և բարոյական ամեն աջակցութիւնն ու զոհողութիւնը, և դեռ կը թերագնահատէ, մեր արդար եւ այնպէս Հնչակեան կուսակցութիւնը հաւատարիմ եւ հետեւողական իւր մարքսիստ գաղափարարաբանութեան, չի կրնար եւ չուզեր Խորհրդային Հայաստանին օգնելու կոչուած ոևէ մարմնի բարոյապէս օժանդակելէ հեռու մնալ՝ առանց ձեռնպահ հրաժարելու զայն իր ուղիղ հունին մէջ բերելու աշխատանքին»[3]:

1937թ. հուլիսի 10-ին Փարիզում գումարված ՌԱԿ-ի Արևմտյան Եվրոպայի13-րդ շրջանային պատգամավորական ժողովը ՀՕԿ-ի արտասահմանյան գործունեությունը համարում է անընդունելի և որոշում է հրահանգել իր բոլոր կուսակից ընկերներին, որ հեռանան ՀՕԿ-ից ու նրա ազդեցության տակ գտնվող մարմիններից[4]:

Հայաստանի օգնության կոմիտեն իր մասնաճյուղերն է կազմակերպում նաև Հունաստանում: Այնտեղ առաջին մասնաճյուղը ստեղծվում է 1924թ. ապրիլի 15-ին՝ Սալոնիկում, որը վավերացումից հետո անցնում է աշխատանքի: Երեք ամսվա ընթացքում մասնաճյուղեր են բացվում Սալոնիկում, Դրամայում, Գավալայում, Քսանտիում, Գյումուլջինեում, Դեդե-Աղաջում, Տիմոթեկիայում և Վոդինայում[5]:

1924թ. սկզբին կազմակերպվում է ՀՕԿ-ի Հունաստանի Կենտրոնական վարչությունը՝ բաղկացած 9 հոգուց[6]:

Հունաստանում ՀՕԿ-ի մասնաճյուղեր բացելու գործում Ռամկավար-ազատական կուսակցությունը սկզբնական շրջանում մեծ աջակցություն է ցույց տալիս:

1924թ. սեպտեմբերի 15-ին ՌԱԿ-ի Կենտրոնական վարչության ժողովը քննարկելով ՀՕԿ-ի հանդեպ կուսակցության դիրքորոշման հարցը՝ որոշում է. «Հայաս-

---

[1] ՀԱԱ, ֆ. 422, ց. 1, գ. 770, թ. 2-3:
[2] Նույն տեղում, թ. 10:
[3] Նույն տեղում, գ. 809, թ.1, 3 և շրջ.:
[4] ՀԱԱ, ֆ. 424, ց. 4, գ.146, թ. 1, 3:
[5] «ՀՕԿ-ի տեղեկատու», (օրգան ՀՕԿ-ի Կենտրոնական վարչության), N 1, Երևան 1928թ., էջ 59:
[6] «Հրավիրակ», N 2, հոկտեմբեր, 1925թ., էջ 4:

տանի վերաշինության գործին հնարավոր աջակցություն ցույց տալու նպատակով նախաձեռնություն ցույց տալ Չին Հունաստանի մեջ մասնաճյուղեր բացելու գործին»[1]:

Հունաստանում ևս անհամաձայնություն կար կոմունիստների և ռամկավարների փոխհարաբերություններում: Սակայն հաղթող է դուրս գալիս կոմունիստական կողմը և որոշվում է Աթենքի և Սալոնիկի ՀՕԿ-ի կենտրոնները միավորել[2]:

ՀՕԿ-ի Գլխավոր վարչության հանձնարարությամբ Դ.Շահվերդյանը Աթենքում զբաղվում է հայրենադարձության կազմակերպչական խնդիրներով, մասնավորապես ձեռնարկել էր Հայաստան ներգաղթողների ցուցակների պատրաստումը: Հայաստան վերադարձող հայերից մի քանի հարյուր հոգի հավաքվում են Ազգային վարչության շենքի առջև և պահանջում վարչության հրաժարականը և նորի ընտրությունը:

Դ.Շահվերդյանը պետք է դասախոսեր նաև Ֆիքսի եկեղեցում: Հայ կոմունիստները, ներգաղթողների ցուցակներում ընդգրկվածների մի մասը, ինչպես նաև Մակեդոնիայից եկած հայ որբերն իջեցնում են եկեղեցու գլխին ծածանվող հայկական և հունական դրոշները և պատառոտում են: Տեղի է ունենում ընդհարում, որի ընթացքում վիրավորվում են մի քանի հայեր:

Շատ հանգամանքներում ընդհարումների պատճառ ու հրահրող էին հանդիսանում նաև ՀՕԿ-ի անդամները[3]:

1922թ. հունվարին Ռուսչուկի հնչակյան ակումբում գումարվում է մի ժողով, որին հրավիրվել էին և մասնակցում էին Ռամկավար-ազատական կուսակցության, Հայ հեղափոխական դաշնակցության, Սեբաստիայի հայրենակցական միության, Վասպուրականի միության, Հնչակյան և Դաշնակցական կանանց զարգացողական միության ներկայացուցիչները:

Ժողովի նախագահն առաջարկում է հայրենիքին օգնելու մի մարմին ստեղծել, որին դեմ են լինում Դաշնակցության և Վասպուրականի միության ներկայացուցիչները:

Դաշնակցականները պատճառաբանում էին, որ իրենց օգնությունը ոչ թե հայերին կհասնի, այլ Հայաստանում գտնվող կարմիր զինվորներին:

Այնուհետև դաշնակցականները ժողովից դուրս են հրավիրվում և ստեղծվում է 7 հոգուց բաղկացած մի մասնախումբ՝ ՀՕՄ անունով[4]:

Նմանատիպ մարմիններ են ստեղծվում Բուլղարիայի և Ռումինիայի այլ քաղաքներում, որոնք հետո փոխարինվում են ՀՕԿ-երով:

Վեց ամիս շարունակ «Խորհրդային Հայաստան» ֆիլմի ցուցադրությունը Բուրգաս քաղաքում արգելված էր կառավարության կողմից, որի պատճառը՝ ըստ «ՀՕԿ» ամսագրի, դաշնակցականների կողմից ինչպես այստեղ, այնպես էլ հայաշատ այլ համայնքներում ՀՕԿ-ը իբրև համայնավար կազմակերպություն ներկայացնելն էր:

Ի վերջո հաջողվում է թույլտվություն ստանալ ֆիլմի ցուցադրության համար, որից ստացված հասույթը՝ 10.000 լևա ուղարկվում է Ռուսչուկ՝ Կենտրոնական վարչություն[5]:

«Յառաջը» բուլղարական «Զարիա» թերթից վերցնելով՝ հայտնում է, որ Ներքին գործերի նախարարի հրամանով լուծարվել է ՀՕԿ-ի Սոֆիայի մասնաճյուղը: Բուլղարիայում այդ ժամանակ ՀՕԿ-ը ուներ 14 մասնաճյուղ, որոնք, ըստ երևույթին 1937թ. նույնպես լուծարվել էին: Ըստ «Զարիա» թերթի՝ պատճառն այն է եղել, որ այս կազմակերպությունը քաղաքային ոստիկանության տեղեկության համաձայն զբաղված է եղել ապօրինի գործունեությամբ[6]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 424, ց. 4, գ.138 , թ. 18-19:
[2] «Հայրենիք», Ե տարի, թիւ 1, 1926թ. նոյեմբեր, Բոստոն, էջ 153:
[3] «Հայրենիք», Ժ տարի, թիւ 3, 1932թ. հունվար, Բոստոն, էջ 171:
[4] ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 405, թ. 1 և շրջ.:
[5] «ՀՕԿ», Ա տարի, թիւ 4, 1934թ. ապրիլ, Փարիզ, էջ 248:
[6] «Հայրենիք», ԺԵ տարի, թիւ 6, 1937թ. ապրիլ, Բոստոն, էջ 165:

Արտասահմանի հայկական համայնքներում շարունակվում էր անհանդուրժողականությունը:

1935թ. հունիսի 16-17-ին կրկին Բուխարեստում, թաղական և թեմական ընտրությունների ժամանակ, հերթական ընդհարումն էր տեղի ունեցել կուսակցությունների և ՀՕԿ-ի միջև:

Ինչպես հաղորդում է «Յառաջը», ՀՕԿ-ի մի շարք անդամներ ներխուժել էին ընտրատեղամաս, կոտրել դպրոցի ապակիները և փորձել էին հափշտակել քվեատուփերը, որի արդյունքում սկսվել էր ծեծկռտուք և խժդժություններ: Այս ամենին իհարկե միջամտել էր ոստիկանությունը[1]:

Գերմանիայում ևս՝ Բեռլինում 1922թ. ստեղծվում է ՀՕԿ-ի մասնաճյուղ: Սակայն զանազան պատճառներով անգործության է մատնվում և լուծարվում է: Այնուհետև նորից հիմնադրվում է 1924թ. նոյեմբերի 19-ին: Բեռլինի ՀՕԿ-ի Կենտրոնական վարչության մեջ մտնում էին Սաքո Սահակյանը (նախագահ), Լևոն Աղայանը (գանձապահ), Հ.Մելքոնյանը (քարտուղար), Վ.Մելիքյանը և Նարբեյ Մովսիսյանը[2]:

1925թ. այնտեղ կրկին վերակազմակերպվում է Հայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղ՝ Ջ.Գրինֆիլդի ղեկավարությամբ[3]:

1926թ. Բեռլինում ընտրվում է ՀՕԿ-ի նոր վարչություն, որի մեջ մտնում են Սաքո Սահակյանը (նախագահ), Ջեյմս Գրիմֆելդը, Մ.Քրոճյանը, Նապոլեոն Թորոսյանը, Վ.Տոտոմյանը, Հակոբ Տեր-Հովհաննիսյանը և Լևոն Աղայանը[4]:

ՀՕԿ-երը շարունակում էին բոլշևիկյան քարոզչությունը, որի դեմ բողոքելով՝ ՀՕԿ-ի Բեռլինի մասաճյուղից շուտով հեռանում է Ջ.Գրինֆիլդը:

Բեռլինում կազմակերպվում և քայքայվում են ՀՕԿ-ի մասնաճյուղերը, իսկ խորհրդային և հակախորհրդային հոսանքների միջև կատաղի պայքարը շարունակվում էր: Այս հողի վրա սուր ընդհարում է տեղի ունենում Ա. Ահարոնյանի և Փարիզի մի խումբ մտավորականների միջև: Պատճառն այն էր, որ Ա.Ահարոնյանը ամբիոնից և մամուլի միջոցով հանդիմանել էր կոմունիստներին և նրանց ջատագովներին: Ա.Չոպանյանը, Լ.Բաշալյանը, Տ.Կամսարականը, Քոլոյանը, նկարիչներ՝ Խաչատրյանը, Փուշմանը, քանդակագործ Գյուրջյանը և ուրիշներ հրապարակավ բողոքում են Ա. Ահարոնյանի հակախորհրդային քայլերի դեմ[5]:

1933թ. հունիսի 3-ին գումարված ՌԱԿ-ի Արևմտյան Եվրոպայի 9-րդ պատգամավորական ժողովում ՀՕԿ-ի նկատմամբ վերաբերմունքի հարցի շուրջ վիճաբանություններ են տեղի ունենում և վերջում Չոպանյանի և Հովիկյանի կողմից ներկայացվում է բանաձև, որով նախատեսվում էր խզել հարաբերությունները ՀՕԿ-ի հետ: Ներկայացվում է նաև մեկ այլ բանաձև Զարոյանի կողմից: Սրանով նախատեսվում էր ՀՕԿ-ի հանդեպ վերապահ դիրք բռնել, հրահանգել, որ ոչ մի կուսակից չմասնակցի նրան, որքան էլ, որ ՀՕԿ-ը իր նպատակին համապատասխան գործունեություն և ուղեգիծ որդեգրի:

Քվեարկության դնելով առաջին բանաձևը՝ ընդունվում է 6 ձայնով (Հովիկյան, Սիմա Չոպանյան, Ճիճանյան, Սիմոնյան, Մկրտչյան), ընդդեմ երկրորդ բանաձևին կողմ արտահայտված 4 ձայնի[6]:

1925թ. հոկտեմբերի 17 Հայաստանի օգնության կոմիտեն արտասահման է ուղարկում իր առաջին պատվիրակությունը, որի անդամներ Գ.Վարդանյանը, Կ.Միքայելյանը և Կարմիր խաչից Ս.Կամսարականը հանգրվանում են նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներում[7]:

---

[1] «Յառաջ», 27 հունիսի 1935թ., Փարիզ, թ. 2:
[2] «Հրավիրակ», N 2, հոկտեմբեր, 1925թ., էջ 4:
[3] «Հայրենիք», Դ տարի, թիվ 4, 1926թ փետրվար, Բոստոն, էջ 118:
[4] «Հրավիրակ», N 3, 1926թ., էջ 32:
[5] «Հայրենիք», Դ տարի, թիվ 6, 1926թ ապրիլ, Բոստոն, էջ 143:
[6] ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 103, թ. 1- 3:
[7] «Հրավիրակ», N 2, հոկտեմբեր, էջ 52:

ՀՕԿ-ի և Հայաստանի Կարմիր խաչի պատվիրակությանը ՌԱԿ-ի Ամերիկայի շրջանային վարչության կողմից (Բոստոն) 1926թ հունիսի 16-ին տրված հիշատակագրում նշվում էր, որ կուսակցությունը 1926թ. ապրիլին իր 8 թվակիր գրությամբ հրահանգել էր կուսակիցներին, պատվիրակության անդամներին ներկայացնել իրենց խորհուրդներն ու թելադրությունները և աշխատել, որ առաքելությունը հաջողություն ունենա:

Այնտեղ հատկապես նշվում էր, որ երբ Ա.Կարինյանը՝ իբրև Հայաստանի տնտեսական ներկայացուցիչ, Ամերիկայում փորձել էր այն տարրերով, որոնք այժմ ՀՕԿ-ի կազմում էին, կազմակերպել Տեխնիկական օգնության ընկերություն, որին աջակցել էին նաև ռամկավարները, անհաջողության է մատնվել: 1925թ. Տեխնիկական օգնության ընկերությանը փոխարինում է ՀՕԿ-ը:

Իրենց մտահոգությունները հայտնելուց հետո ռամկավարները հիշատակագրում նշում են, որ ինչպես ամենուրեք, այնպես էլ Ամերիկայում, պատրաստ են իրենց բոլոր միջոցները տրամադրել և ամեն ջանք թափել ՀՕԿ-ի հաջողության համար՝ այդ գործին առանց քաղաքական երանգ տալով[1]:

ՌԱԿ-ի Ամերիկայի շրջանային վարչության գործիչները հանդիպել էին Հայաստանի պատվիրակության անդամների հետ, որի ժամանակ քննարկել էին բազմաթիվ հարցեր, ինչպես Հայաստանի միջազգային քաղաքականության, կորցրած տարածքների հարցի լուծման, ներքին իրավիճակի, այնպես էլ ՀՕԿ-ի և արտասահմանյան այլ կազմակերպությունների փոխհարաբերությունների խնդիրը: Գր.Վարդանյանի և Կ.Միքայելյանի տեսակետները՝ Հօկեր կազմելու վերաբերյալ, բավական տարբերվում էին իրարից: Մասնավորապես Գր. Վարդանյանը մինչև վերջ պաշտպանում էր Հօկեր կազմելու գաղափարը՝ գտնելով, որ Բարեգործականը ունևորների կազմակերպություն է: Իսկ Կարեն Միքայելյանը Ամերիկայում Հօկերի ստեղծման անհրաժեշտություն չէր տեսնում: Ռամկավարները փորձում են համոզել, որ Ամերիկայում ավելորդ աշխատանք է և ուժերի սպառում ՀՕԿ-ի առանձին մասնաճյուղերի ստեղծումը, քանի որ գոյություն ունի ՀԲԸ միությունը, որը կարող է ծառայել այդ նույն նպատակին: Սրան ի հակառակ Գր.Վարդանյանն իր դժգոհությունն էր հայտնում Բարեգործականի Կենտրոնական վարչությունից, մասնավորապես՝ Գ.Նորատունկյանից ու Լ.Բաշալյանից, որոնք դժկամում էին լուրջ օգնություն կատարել Հայաստանի օգտին: Կարեն Միքայելյանի տեսակետն այս հարցում ավելի չափավոր էր: Նա գտնում էր, որ ՀԲԸՄ-ը միակ կազմակերպությունն է, որ անշահախնդիր օգտագործում է իրեն հանձնված կտակներն ու գումարները և ինքն արգելք է եղել մի բանաձևի, որ ՀՕԿ-ի Ամերիկայի պատգամավորական ժողովի մեջ առաջարկվել էր Բարեգործականին դեմ բողոքելու համար՝ իր տրամադրության տակ եղած կտակները Հայաստան փոխադրելու հարցում: Գր.Վարդանյանը և Կ.Միքայելյանը ակնկալում էին, որ Ռամկավար-ազատական կուսակցությունն իր ազդեցությունը կգործադրի Բարեգործականի վրա, որպեսզի վերջինս ավելի գործուն մասնակցություն ունենա Հայաստանի վերաշինությանը: Նրանք նաև առաջարկում էին համագործակցել Հայաստանի կառավարության հետ, քանի որ, ըստ նրանց, թեև Դաշնակցությունը կուռ ու կարգապահ կուսակցություն է, բայց գաղութահայության մեջ Ռամկավար-ազատական կուսակցությունը՝ իբրև հոսանք, ավելի մեծ է ու զորավոր[2]:

Այնտեղ նշվում էր նաև, որ ՀՕԿ-ի և Կարմիր խաչի պատվիրակությունները իրենց արտասահմանյան առաքելության ընթացքում Ռամկավար-ազատական կուսակցության մեջ գտնում են իրենց մեծագույն աջակցությունը:

Երբ դաշնակցականները մամուլի ու բեմի միջոցով նրանց գործը փորձում էին խանգարել, հենց ռամկավարների նախաձեռնությամբ է, որ նրանց դեմ ջախջախիչ բողոք են ներկայացնում հայ մտավորականության ամենաhեղինակավոր գործիչները[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 424, ց. 2, գ.165 , թ. 1-3:
[2] Նույն տեղում , թ. 4-7 :
[3] Նույն տեղում, ց. 4, գ. 7, թ. 28:

Հայաստանի օգնության կոմիտեի Կենտրոնական վարչությունը, ինչպես ամենուրեք, այնպես էլ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ձեռնամուխ է լինում իր մասնաճյուղերի ստեղծմանը:

1927թ. մայիսի 29-30-ը Բոստոնում գումարվում է ՀՕԿ-ի Ամերիկայի շրջանի 2-րդ համագումարը (առաջինը գումարվել էր 1926թ.), որին մասնակցում էին ԱՄՆ-ի ՀՕԿ-ի 50 մասնաճյուղերից 34-ը՝ 42 պատգամավորներով[1]:

Համագումարը ներքին կազմակերպչական հարցերից բացի քննարկում է նաև ՀՕԿ-ի դիրքորոշումը քաղաքական և հասարակական կազմակերպությունների հանդեպ և մեկ անգամ ևս ընդգծում է, որ ՀՕԿ-ը Հայաստանի վերաշինությանը նպաստող կազմակերպություն է և, որ այն չպետք է համագործակցի որևէ քաղաքական կազմակերպության հետ: Դրա հետ միաժամանակ շեշտվում է, որ կոմիտեն կարող է և պարտավոր է ընդհանուր լեզու գտնել և համագործակցել հանգանակությունների շուրջ՝ այն բոլոր հասարակական կազմակերպությունների հետ, որոնց նպատակն է ուղղակի օգնել Խորհրդային Հայաստանի վերաշինությանը[2]:

ՀՕԿ-ի Ամերիկայի Միացյալ Նահանգների մասնաճյուղի Ծրագիր-Կանոնագրով նախատեսված էր տարին մեկ անգամ գումարել համագումար[3]:

Հերթական՝ ՀՕԿ-ի Ամերիկայի շրջանի 3-րդ համագումարը գումարվում է 1929թ. ապրիլի 13-14-ը՝ Պրովիդենսում: ՀՕԿ-ի Գլխավոր վարչությունից համագումարին մասնակցում էր Գ.Վարդանյանը: Վերջինս իր մտահոգություններն է հայտնում որոշ խավերի ՀՕԿ-ից հեռանալու փաստի շուրջ, որի պատճառը, նրա կարծիքով, «հակահօկյան ճակատի» ակտիվ աշխատանքն էր, ինչպես նաև Հայրենակցական միությունների անդամների մեկուսացումը իրենց միությունների մեջ: Նա Կենտրոնական վարչությանը կոչ էր անում լարել իր ուժերը զանգվածների վրա ՀՕԿ-ի հակառակորդների բացասական աշխատանքների ազդեցությունը չեզոքացնելու համար[4]:

1933թ. մայիսի 27-30-ը Նյու-Յորքում կայանում է Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության Ամերիկայի շրջանի 49-րդ պատգամավորական ժողովը, ուր քննարկվում է կուսակցության դիրքը ՀՕԿ-ի և Պետական Կարմիր խաչի նկատմամբ: Երկար վիճաբանություններից հետո ժողովը նկատում է, որ ՀՕԿ-ը ստեղծվել էր սոսկ Հայաստանի վերաշինության աշխատանքներին աջակցություն ցույց տալու համար, որի սկզբնական աշխատանքներում մեծագույն բաժին էր ունեցել նաև Հնչակյան կուսակցությունը, սակայն վերջին տարիներին այն շեղվելով իր նպատակից՝ հնչակյանների հեռացման պատճառ էր հանդիսացել և կանգնել էր կազմալուծման եզրին: Այդ կապակցությամբ պատգամավորական ժողովը որոշում է. «Եթե ՀՕԿ-ը իրապես իր սահմանների մեջ դրվի և վստահություն ներշնչի, ապա կուսակցությունը՝ իբրև Խորհրդային Հայաստանի ջերմ հավատավորի, աջակցություն ցույց կտա այն ժողովրդականացնելու գործում» [5]:

1935թ. հունիսի 1-2-ը տեղի է ունենում ՍԴ Հնչակյան կուսակցության Ամերիկայի շրջանի 51-րդ հերթական պատգամավորական ժողովը, ուր քննարկվում է «Խորհրդային Հայաստանին հավատացող» կազմակերպությունների հետ համագործակցելու կամ միացյալ ճակատ կազմելու հարցը: Այս խնդրի վերաբերյալ կուսակցության ընդունած բանաձևում ասվում էր. «Ի նկատի ունենալով, որ Խորհրդային Հայաստանի անունով խոսող Ամերիկայի ՀՕԿ-ը և Պետական հայ Կարմիր խաչը կշահագործվեն «համ» կոչուող կազմակերպութեան մը կողմէ, մեր կուսակցութեան Ամերիկայի շրջանը անոնց հետ ոևէ համագործակցական խնդիր չունենար, մանաւանդ, որ անոնք քաղաքական հոսանք չեն, այնպէս, ինչպէս ՍԴ Հնչակեան կուսակցութիւնն է, սակայն եթէ ՀՕԿ-ը և Կարմիր խաչը դադարեն

---

[1] ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 994, թ. 2 և շրջ.:
[2] Նույն տեղում, թ. 6 շրջ.:
[3] Նույն տեղում, գ.1433, թ. 8:
[4] Նույն տեղում, գ. 996, թ. 2, 11 շրջ. :
[5] ՀԱԱ, ֆ. 422, ց. 1, գ. 774, թ. 1:

«համ-էն» շահագործվելէ, այդ պարագային, անոնք կրնան համագործակցել Խորհրդային Հայաստանի Շինարար մարմնի հետ, որին ուժ կուտա մեր կուսակցութիւնը՝ իբրև հաւատարիմ մարմին Խորհրդային Հայաստանի»[1]:

Հետագայում ՀՕԿ-ը փորձում է փոխել իր վերաբերմունքը արտասահմանի հայկական կուսակցությունների հանդեպ, սկսում սիրաշահման քաղաքականությունը, թեև վաղուց կորցրել էր իր վստահությունը արտասահմանի հայկական կուսակցությունների մոտ:

1935թ. օգոստոսի 30-ին Բոստոնում կայացած ՀՕԿ-ի Հյուսիսային Ամերիկայի մասնաճյուղերի 9-րդ համագումարում որոշվում է այսուհետ ՀՕԿ-ի դռները լայն բացել և՛ ռամկավարների, և՛ հնչակյանների, և՛ դաշնակցականների, ինչպես նաև ՀՅԴ ցեղակրոնների առջև՝ միացյալ ուժերով պայքարելու համար միջազգային իմպերիալիզմի, ֆաշիզմի և ընդհանուր պատերազմի սպառնալիքների դեմ [2]:

Ժամանակի ընթացքում ՀՕԿ-ի շարքերը սկսում են նոսրանալ: Այն սկսում է կորցնել իր հեղինակությունը նաև զանգվածային մասսաների շրջանում:

Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան կուսակցության Ամերիկայի շրջանի Կենտրոնական վարչության անդամ Ներսես Փիլիկյանը, որը նաև ՀՕԿ-ի անդամ էր, իր համառոտագրություններում գրում է, որ 1937թ. աշխատանքի բերումով այցելել է ԱՄՆ-ի բազմաթիվ քաղաքներ, հանդիպել է ՀՕԿ-ի անդամների հետ և եկել այն եզրահանգման, որ ՀՕԿ-ի կազմակերպչական գործերը բավականին թույլ էին, իսկ շատերը՝ հուսալքված: Նրա կարծիքով ՀՕԿ-ի գոյության ու նրա զանգվածայնացման արգելքը հանդիսանում էր Ամերիկայի կոմունիստական կուսակցության հայկական խմբակցությունը, ինչպես նաև նրա պաշտոնաթերթ «Բանվորն» ու ՀՕԿ-ը նույնացնելու մտայնությունը:

Ն.Փիլիկյանը տեղեկացնում է, որ անձամբ ականատես է եղել, թե ինչպես են բանվորական ընկերները պահանջում և սպառնում, որ ՀՕԿ-ի այն անդամները, ովքեր բանվորի բարեկամը չեն, ուրեմն Խորհրդային Հայաստանի թշնամին են: Իսկ Պետական հայկական Կարմիր խաչը նրա կարծիքով իր կենսունակ գործերով ու գործիչներով ՀՕԿ-ի լավագույն ուժերը քաշել էր դեպի իրեն[3]:

Երբ Հայաստանի օգնության կոմիտեն ՀԱԽՀ Ժողկոմխորհի որոշմամբ լուծարվեց, ՀՕԿ-ի ԱՄՆ-ի մասնաճյուղերը փորձեցին վերակենդանացնել ՀՕԿ-ի գոյությունը մեկ այլ՝ Ամերիկահայ առաջադիմական միության անվան տակ Պետական հայկական Կարմիր խաչի (ՊՀԿԽ) հետ միասին:

1938թ. մայիսի 28-30-ը Բոստոնում գումարվում է Ամերիկահայ առաջադիմական միության (Ամերիկայի ՀՕԿ-ի և ՊՀԿԽ-ի) անդրանիկ համագումարը, ուր ընդունվում է մի բանաձև, որով հաստատվում և հայտարարվում էր ՀՕԿ-ի և ՊՀԿԽ-ի վերջնական միավորումը[4]:

1920-ականների կեսերին Հայաստանի օգնության կոմիտեն իր մասնաճյուղերն ուներ նաև Հարավային Ամերիկայում, որոնց կենտրոնը Բուենոս-Այրեսն էր:

1928թ հունվարի 29-ին Բուենոս-Այրեսի հունգարական սրահում գումարված ՀՕԿ-ի Հարավային Ամերիկայի մասնաճյուղերի 2-րդ պատգամավորական ժողովում անդրադարձ է կատարվում նաև ՀՕԿ-ի հակառակորդների խնդրին, որոնք ձգտում էին ամեն կերպ խոչընդոտել Կոմիտեի բնականոն աշխատանքը: Մասնավորապես ասվում էր. «Ծանոթ է բոլորիդ, որ Խորհրդային Հայաստանի և ՀՕԿ-ի անպարկեշտ հակառակորդները փոքրոգի լակոտներու հատուկ ամեն կարգի աղմկարարության դիմեցին, մինչև իսկ գրավոր և անձնապես սպառնացին Կենտրոնական կոմիտեիս քարտուղարի կյանքին՝ այսպիսով կարծելով խանգարել ՀՕԿ-ի ժողովրդականացած գործունեությանը»:

Համագումարը լսելով ՀՕԿ-ի Հարավային Ամերիկայի Կենտրոնական վարչության տեղեկագրի ընթերցումը՝ ընդունում է մի շարք որոշումներ, որոնց հա-

---

[1] Նույն տեղում, գ. 794, թ. 1, 3 շրջ և 4:
[2] «Հայրենիք», ԺԳ տարի, թիւ 12, 1935թ. հոկտեմբեր, Բոստոն, էջ 158-159:
[3] ՀԱԱ, ֆ. 408, ց. 1, գ.10, թ. 1:
[4] Նույն տեղում, գ. 79, թ. 2, 10:

մածայն պետք է պայքար սկսեին Խորհրդային Հայաստանի և ՀՕԿ-ի հակառակորդների դեմ, հայկական գաղութներում գումարներ վատնելու, նոր շենքերի շինարարությունն արգելելու ուղղությամբ, ինչպես նաև հանձնարարվում էր Հայրենակցական միությունների հետ ստեղծել համերաշխություն, իսկ խաբված մասսաներին դասախոսական ժողովներ կազմակերպելու միջոցով լուսաբանել իրական վիճակը:

Պարսկաստանում Հայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղեր ստեղծվել էին դեռևս 1920-ական թվականների առաջին տարիներին*, որոնցից շատերը ևս ժամանակի ընթացքում ինչ-ինչ խնդիրների պատճառով կազմալուծվում են, հետագայում վերակազմվում են կրկին, բացվում են նաև նոր մասնաճյուղեր:

Պարսկաստանում ևս ՀՕԿ-ը խնդիրներ ուներ հայ ավանդական կուսակցությունների հետ: Մասնավորապես անընդհատ բախվում էին ՀՕԿ-ի և Հայ հեղափոխական դաշնակցության շահերը, որոնք երկուսն էլ առիթ էին փնտրում սադրելու միմյանց:

1925թ. Մայիսի 28-ին Նոր Ջուղայի Դաշնակցության կոմիտեն կազմակերպել էր հերթական տոնակատարությունը՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության տարեդարձին և հայտարարում է, որ հանգանակված գումարը կտրամադրվի Խորհրդային Հայաստանին: Սակայն դա առաջացնում է խորհրդային քաղաքացիների դժգոհությունը, որոնք տոնի նախօրյակին դուրս գալով Նոր Ջուղայի փողոցներ՝ հայտարարում են, որ այդ դաշնակցական ձեռնարկը Խորհրդային Հայաստանի հետ ոչ մի ընդհանուր բան չունի և այն մարդիկ, ովքեր ցանկանում են օգնել, դա կարող են անել Նոր Ջուղայում գործող Հայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղի միջոցով: Այս ամենի արդյունքում նորից ընդհարում է տեղի ունենում և տոնակատարությունը ձախողվում է[1]:

Հայաստանի կոմունիստական բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական կոմիտեի նախագահությունը, լսելով Հայաստանի օգնության կոմիտեի գործունեության և արտասահմանյան երկրներում նրա հետագա անելիքների մասին զեկույցը, իր ընդունած բանաձևում ընդգծում է մի շարք դրույթներ, ուր հատկապես ասվում էին, որ հայկական գաղութները մասամբ գտնվում են խորհրդային իշխանության թշնամի Դաշնակցություն կուսակցության, Ռամկավար-ազատական կուսակցության ազդեցության տակ, մասամբ էլ Խորհրդային Հայաստանի օգնության կոմիտեների, որոնք Կոմունիստական կուսակցության, ինչպես նաև ողջ Խորհրդային Միության համար ունեին ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական նշանակություն: Կենտկոմի Նախագահությունը արտասահմանյան երկրներում Հայաստանի օգնության կոմիտեի գործունեության տեմպերի զարգացման առաջնահերթ խնդիր էր համարում ղեկավար մարմիններից օտար և հակախորհրդային տարրերի զտումը և ՀՕԿ-ի մասնաճյուղերի կազմակերպումը այն երկրներում, ուր իրենք չունեին մուտք (Հնդկաստան, Եգիպտոս, Սիրիա և այլն), ինչպես նաև ծրագրվում էր քայքայված կոմիտեների վերականգնումը Բալկաններում[2]: ՀԿ(բ)Կ Կենտկոմը գտնում էր, որ ռամկավարները միակ օրինական ուժն էին, որ կարող էին աջակցել Հայաստանի օգնության կոմիտեներին այն երկրներում, ուր իրենք մուտք չունեին և մյուս կողմից դաշնակները ամեն միջոց կիրառում էին ռամկավարների հետ համատեղ համազաղութային հայկական կենտրոն ստեղծելու ուղղությամբ, որը կարող էր մեծ հարված հասցնել ՀՕԿ-ի արտասահմանյան աշխատանքներին: Դա կանխելու համար ՀԿ(բ)Կ Կենտկոմը հնարավոր էր համարում ՀՕԿ-ի աշխատանքներում որոշակի պայմաններով ռամկավարների մասնակցությունը և համագործակցությունը:

Ուշադրություն դարձնելով, որ Ամերիկայում գոյություն ունի հայկական հսկայական աշխատավորական համայնք և հաշվի առնելով, որ նրանց վրա մեծ է

* ՀՕԿ-ի Պարսկաստանի առաջին մասնաճյուղերի ստեղծումը տես՝ «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, N 1, 2009, էջ 152-153:

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5 , գ. 49, թ. 60:

[2] Նույն տեղում, ց. 8, գ. 64, թ. 68:

բուրժուական կուսակցությունների ազդեցությունը, այդ թվում՝ Դաշնակցության, նրանց Խորհրդային Հայաստանի ուղղությամբ կողմնորոշելու համար ՀԿ(բ)Կ Կենտկոմը առաջնահերթ խնդիր էր համարում ՀՕԿ-ի կազմակերպչական և քաղաքական աշխատանքների ուժեղացումը Ամերիկայում, որի համար հատկապես կարևոր էր Փարիզի «Երևան» թերթի օրինակով այնտեղ անկուսակցական մամուլի հիմնադրումը[1]:

1924թ. դեկտեմբերի 7-ին Սիրիայում Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան կուսակցության Դ պատգամավորական ժողովում ընդունվում է ՀՕԿ-ի մասին բանաձև, որն ազդարարում էր, որ Հայաստանի օգնության կոմիտեի Կենտրոնական վարչության իրավասության ներքո նույնանուն մասնաճյուղերի ստեղծումը սիրիահայ գաղութի մեջ ընդունվում է և այդ հայրենանպաստ նախաձեռնությունը թողնվում է Գործադիր հանձնախմբին[2]: Բարձր կոմիսարն ընդունելով ՀՕԿ-ի զուտ բարեգործական բնույթը իր 1926թ. մարտի 1-ի 1254 թվակիր նամակով թույլատրում է ՀՕԿ-երի ստեղծումը Սիրիայում և Լիբանանում[3]:

ՀՕԿ-ի և Սոցիալ-Դեմոկրատական հնչակյան կուսակցության փոխհարաբերությունների մասին հնչակյան գործիչ Ա.Կենճյանը իր հոդվածներից մեկում հիշեցնում էր, որ Հնչակյան կուսակցությունն է, որ ինչպես Սիրիայում, այնպես էլ այլ վայրերում առաջին անգամ նախաձեռնել և կազմակերպել հրապարակային բանախոսություններ՝ տարածելով գաղութահայության մեջ ՀՕԿ-ի գաղափարը:

Հալեպում, արհամարհելով որոշ քաղաքական վտանգներ, հազարավոր ունկնդիրների առաջ Հայաստանին օգնելու կոչն ու կարգախոսը հնչեցնում են հենց հնչակյան գործիչներն ու մտավորականները: Ըստ Ա.Կենճյանի. «... Հնչակեան կուսակցութեան ցանած այս առաջին առողջ քաղաքականութեան սերմերուն յառաջացուցած ծիլերը, վերջէն եկող պաշտօնական ՀՕԿ-երը՝ փոխանակ ուռճացնելու և զարգացնելու, իրենց սխալ և շիլ մեթոդներով սկան գոսացնել, կարծելով գաղափարատարած շինարար գործ կատարել»[4]:

Ռամկավար-ազատական կուսակցության Կենտրոնական վարչությունն (Կահիրե) ՌԱԿ-ի շրջանային վարչություններին 1936թ. օգոստոսի 25-ին ուղղած իր շրջաբերականով տեղեկացնում էր, որ ՀՕԿ-ի Երևանի Գլխավոր վարչության նախաձեռնությամբ Փարիզում հոկտեմբերին գումարվելու է համագումար, որի առանցքային հարցերից է լինելու նաև «հակահայաստանյան տարրերի» դեմ միասնական ճակատ կազմակերպելը: Այդ նպատակով Կենտրոնական վարչությունը ցանկալի էր համարում հնարավորության դեպքում կուսակցության որքան հնարավոր է շատ անդամների մասնակցությունը՝ համագումարը ծայրահեղ տարրերի ձեռքը չթողնելու և այն իր նպատակին ծառայեցնելու համար:

Համագումարին մասնակցող ռամկավարներին հրահանգվում էր քննադատել Հօկերի գործունեությունը այն երկրների մեջ, ուր ծայրահեղական տարրերը այն շեղել են իր բուն նպատակից, ամեն բան անել, որ ներգաղթի գործը հանձնվի ՀՕԿ-ի, Բարեգործականի և հայրենակցական միությունների մասնակցությամբ կազմակերպված մարմնին և այլն[5]:

1937թ. սեպտեմբերի 14-ից հոկտեմբերի 24-ը Կահիրեում գումարվում է ՌԱԿ-ի ընդհանուր պատգամավորական ժողովը: ՀՕԿ-երի հանդեպ ընդհանուր պատգամավորական ժողովը նկատում է. «ՀՕԿ-ը շեղված է զուտ հայկական մարմին լինելու հանգամանքից, ձգտում է քաղաքական գործոն դառնալ: Այն ներկայումս վնասակար է թե՛ գաղութահայ իրականության և թե՛ գաղութների մեջ»[6]:

ՍԴ Հնչակյան կուսակցության կենտրոնական օրգան «Հնչակ»-ը 1935թ հուլիսի համարում այսպես է գրում. «Արտասահմանեան երկրներու մէջ ՀՕԿ կամ այլ

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 64, թ. 69-70::
[2] «Հրավիրակ», N 1, առաջին տարի, 1925թ., էջ 18:
[3] «ՀՕԿ», Բ տարի, թիւ 5,1934թ. հունիս, Փարիզ, էջ 369:
[4] «Պայքանյան մամուլ», Ա տարի, թիվ 36, 7 նոյեմբերի 1931թ., Սոֆիա, էջ 2:
[5] ՀԱԱ, ֆ. 424, ց. 4, գ. 20, թ. 48:
[6] Նույն տեղում, գ. 155, թ. 31:

անունով քաղաքական նոր հոսանքի ո՛չ պէտք կայ եւ ո՛չ ալ իրաւունք, քանի որ Կոմունիստ կուսակցութեանց կողքին կայ եւ Հնչակեան կուսակցութիւնը, որ հայ աշխատաւորութեան բացառիկ ներկայացուցիչն ըլլալու իրաւունքը կը վայելէ անառարկելիօրէն»[1]:

1938թ հուլիսի 22-ին ՌԱԿ-ի (Կահիրե) Կենտրոնական վարչությունը կուսակցության շրջանային վարչություններին ուղղված շրջաբերականում տեղեկացնում էր, որ իրենց վերջին պատգամավորական ժողովում որոշել են ուժ չտալ Հոկերին նրանց հետապնդած քաղաքական նպատակների պատճառով և առանց թշնամական դիրք բռնելու նրանց հանդեպ, հրավիրել, որ վերադառնան իրենց ստեղծման բուն նպատակին: Այս շրջահայաց դիրքը նրանով էր բացատրվում, որ ՀՕԿ-ը կարող էր կամուրջի դեր կատարել Հայաստանի և արտասահմանի միջև:

Սակայն ՌԱԿ-ի ընդհանուր պատգամավորական ժողովից հետո ՀՕԿ-ը Հայաստանում լուծարվում է, որով արտասահմանյան Հոկերը ինքնըստինքյան դադարում էին գործելու իրավունքից: Սակայն որոշ տեղեր ճիգեր են գործադրվում որևէ այլ ձևի տակ հավերժացնելու կամ վերակենդանացնելու Հոկերը: Այս փաստը հաշվի առնելով՝ ՌԱԿ-ի Կենտրոնական վարչությունը գտնում էր, որ պետք է ամեն ջանք գործադրել, որ այդ ձեռնարկները հաջողություն չունենան[2]:

Հնչակյան գործիչ Անդրանիկ Կենճյանը «Երիտասարդ Հայաստան» թերթում տպագրած իր «Հայաստան, ՀՕԿ և գաղութահայ» հոդվածում քննադատում էր ՀՕԿ-ի արտասահմանյան գործելաոճը: Մասնավորապես նշում էր. «...ՀՕԿ-ը իր կազմութեան եւ ծրագիրին սահմաններէն դուրս հանուեցաւ սակայն հետզհետէ: Մէկ խօսքով՝ պղտորուեցաւ արտասահմանի հայութեան մէջ: Այս պղտորումին եւ հետեւաբար ՀՕԿ-ի ձախողութեան պատասխանատուները փնտրել՝ ՀՕԿ-ի ընդհանուր կեդրոնին կը պատկանի, ինչպէս եւ, եթէ կայ դարմանումի կարօտ կէտ, դարմանել զայն...»[3]:

Լիլիթ Մակարյան

ВЗАИМООТНОШЕНИЯ КОМИТЕТА ПОМОЩИ АРМЕНИИ С ПАРТИЯМИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ

РЕЗЮМЕ

Комитет помощи Армении (ХОК), для своей плодотворностной деятельности организовывал филиалы в городах и местностях густонаселенных армянами, в частности, во Франции, Германии, Греции, Румынии, Болгарии, Великобритании, Австрии, Северной и Южной Америке, Сирии, Ливане и Египте.

Первоначальный период организации филиалов ХОК-а взяли на себя заграничные армянские партии. Ее представители не только активно участвовали в работе Комитета, но и были задействованы на руководящих постах. К сожалению, в течении времени, их исключали из заграничных филиалов ХОК-а. ХОК отошел от своей прямой деятельности и уже исполнял политические задачи, и это создавало поводы для многочисленных столкновений между членами ХОК-а и армянскими традиционными партиями.

В начале 30-ых годов традиционные армянские партии способствовали разложению ХОК-ов. 3 декабря 1937г. по решению Совнаркома Армянской ССР ХОК был ликбидирован.

Лилит Макарян

1 «Հնչակ», (Սոցիալ Դեմոկրատական Հնչակյան կուսակցության կենտրոնական օրգան), N 7, 1935թ հուլիս, Պրովիդենս, էջ 2:
2 ՀԱԱ, ֆ. 424, ց. 4, գ. 20, թ. 52-54:
3 «Երիտասարդ Հայաստան», թիւ18, 24 սեպտեմբերի 1927թ., (օրգան Սօցիալ-Դէմոկրատ Հնչակեան կուսակցութեան Ամերիկայի շրջանի), Բոստոն, էջ 1:

ՄԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ



Չորս տասնամյա վաղեմություն ունեցող այս ուշագրավ լուսանկարը իր պատմությունն ունի: 1968 թվական, աշուն, Երևանի հիմնադրման 2750-ամյակի տոնակատարության օրերին Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք էին ժամանել բազմաթիվ պատվիրակություններ, պատվավոր հյուրեր, պետական ու ռազմական գործիչներ, գիտնականներ և այլ հյուրեր: Առաջին անգամ մեծ շուքով նշվում էր քաղաքի հիմնադրման հոբելյանը: Տոնահանդեսներին մասնակցող մեծաթիվ պատվավոր հյուրերի շարքում էին հայ ժողովրդի լավագույն զավակներ՝ Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը և աշխարհահռչակ ավիակոնստրուկտոր, ակադեմիկոս, գեներալ-գնդապետ Արտեմ Միկոյանը: Մասնակցելով տոնակատարությանը նրանք այցելեցին Էրեբունի թանգարան, ծառեր տնկեցին սարալանջին: Հանդիսությունների ընթացքում Հովհաննես Բաղրամյանը և Արտեմ Միկոյանը իրենց ուղեկցողների հետ եղան նաև Հայաստանի հեղափոխության պետական թանգարանում, ծանոթացան ցուցադրությանը և իրենց սրտի ջերմ խոսքը թողեցին թանգարանի պատվավոր հյուրերի հուշամատյանում, ապա լուսանկարվեցին ցուցասրահներից մեկում: Լուսանկարում պատկերված են՝ ձախից Արտեմ Միկոյանը, Հովհաննես Բաղրամյանը և ուրիշներ: Արտեմ Միկոյանը տարբեր առիթներով հաճախ էր լինում Երևանում, շատ էր կապված հայրենի գյուղի հետ, հիշում էր պատանեկության ընկերներին, հարազատ մարդկանց: Արտեմ Միկոյանը սերտ մտերմությամբ էր կապված Հովհաննես Բաղրամյանի հետ: Վերջինս նրան ընդունում էր որպես կրտսեր եղբայր և նրանք ընտանիքներով հաճախ էին հանդիպում: Այդ մասին են վկայում Արտեմ Միկոյանի այրու՝ Զոյա Իվանովնայի հուշերը, որտեղ գիտնականը հառնում է որպես հայրենասեր մարդ, հոգատար ամուսին և ընտանիքի հայր: Տարիներ անց՝ 1972 թվականի գարնանը Հայաստանի հեղափոխության թանգարանի աշխատողներս եղանք Մոսկվայում՝ Արտեմ Միկոյանի ընտանիքում և նրա այրին մեր խնդրանքով թանգարանին հանձնեց անվանի ավիակոնստրուկտորի կյանքի ու գործունեության մասին պատմող բազմաթիվ վավերագրեր, լուսանկարներ, գրքեր, պարգևներ, անձնական իրեր: Դրանց մի մասը ցուցադրվեցին թանգարանի՝ Արտեմ Միկոյանին նվիրված բաժնում:

Այսօր էլ թանգարանի այցելուները ակնածանքով են ծանոթանումականավոր ավիակոնստրուկտոր Արտեմ Միկոյանի գործունեությանը և երախտագիտության խոսքեր ասում իրենց նշանավոր հայրենակցին:

Հիրավի, զարմանալի պայծառ և ինքնատիպ են ներկայանում մեզ նրա կյանքի էջերը: Մեր հայացքի առջև վերակենդանանում է խոշորագույն գիտնական, ավիակոնստրուկտորի, աշխարհահռչակ «ՄԻԳ» ինքնաթիռների ստեղծող՝ այդ հայրենասեր մարդու բյուրեղյա կերպարը: Նա այն մարդկանցից էր, որոնց կյանքը գեղեցիկ է՝ առանց որևէ զարդարանքի:

Թերթենք նրա կյանքի թևավոր էջերը:

Ծնվել է 1905թ. Թիֆլիսի նահանգի Սանահին գյուղում: Ավարտելով Թիֆլիսի հայկական դպրոցը՝ աշխատանքի է անցնում Դոնի Ռոստովի գործարանում՝

որպես խառատ: 1928 թվականին Արտեմ Միկոյանը մեկնում է Կարմիր բանակ, իսկ զորացրվելուց հետո աշխատում է Մոսկվայի «Կոմպրեսոր» գործարանում:

Արտեմ Միկոյանի ծանոթությունը ավիացիայի հետ սկսվել է 1930-ական թվականների սկզբներին, երբ նա ընդունվում է Ն.Ժուկովսկու անվան ռազմաօդային ակադեմիան, որն ավարտելուց հետո երիտասարդ ինժեներ-մեխանիկը նշանակվում է թիվ 1 գործարանի կոնստրուկտորական բյուրոյի պետի տեղակալի պաշտոնում: 1939 թվականի դեկտեմբերին Ա.Միկոյանը նշանակվեց նորաստեղծ կոնստրուկտորական բաժնի ղեկավար, իսկ նրա տեղակալ նշանակվեց Մ. Գուրևիչը: Փաստորեն, հենց այդ ժամանակ էլ սկիզբ դրվեց նրանց համատեղ աշխատանքային գործունեությանը: Հենց նրանց ազգանունների սկզբնատառերով էլ կոչվեց նախատեսված ինքնաթիռի անունը` «ՄԻԳ»: Այդ անվանումը համահունչ էր նոր կոլեկտիվի նշանաբանին` «արագություն և բարձրություն»:

1940 թվականի վերջերին Արտեմ Իվանովիչ Միկոյանը ինքնաթիռաշինության նորույթներին ծանոթանալու նպատակով մեկնեց Գերմանիա: Բեռլինում նա իմացավ, որ ինքը և իր տեղակալ Մ.Գուրևիչը արժանացել են պետական մրցանակի:

Մեծ Հայրենականի նախօրյակին Միկոյանը գործուղվում է Գերմանիա` ավիացիոն տեխնիկային և արդյունաբերությանը ծանոթանալու համար: Վերադառնալուց հետո նշանակվում է ինքնաթիռաշինության փորձարարա-կոնստրուկտորական բյուրոյի գլխավոր կոնստրուկտոր: Այդ աշխատանքում էլ լրիվ ծավալվեց և դրսևորվեց նրա կոնստրուկտորի տաղանդը: Միկոյանի ինքնաթիռաշինության ոլորտում մատուցած մեծ ծառայությունների մասին ավիացիայի մարշալ, Խորհրդային Միության եռակի հերոս Ա. Պոկրիշկինը գրել է. «Երեք տասնամյակում նրա ղեկավարությամբ ստեղծվում են հայրենական կործանիչ ինքնաթիռների մի քանի տեսակներ: Նրա կողմից մշակված ինքնաթիռները` Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած «ՄԻԳ-3» մխոցային ինքնաթիռից մինչև ժամանակակից գերձայնային ինքնաթիռները էական ազդեցություն ունեցան ԽՍՀՄ ավիացիայի զարգացման և հայրենիքի պաշտպանունակության ամրապնդման գործում»:

Արտեմ Միկոյանը հսկայական հեղինակություն ուներ և մեծ հարգանք էր վայելում նրանց շրջանում, ովքեր աշխատել են նրա հետ: Միկոյանը դաստիարակել է կոնստրուկտորների և ինժեներների մեծաթիվ կադրեր, որոնք ներկայում էլ աշխատում են ավիացիոն արդյունաբերության մի շարք բնագավառներում:

«...Ինձ շատ հաճելի է վերհիշել, թեկուզ մի քանի բառով պատմել Արտեմ Իվանովիչ Միկոյանի` մեծ մարդու, հիանալի կոնստրուկտորի մասին, որը մեր Խորհրդային Միությանը տվել է անչափ հոյակապ ինքնաթիռներ, - գրել է Անդրեյ Նիկոլաևիչ Տուպոլևը:

Միկոյանի ինքնաթիռները բարձր են գնահատվել նաև արտասահմանյան մասնագետների կողմից: Այսպես, դեռևս 1969թ. ԳԴՀ-ում լույս տեսած «Փորձարկողները», «ՄԻԳ»-երը և համաշխարհային ռեկորդները» գրքում առանձնահատուկ տեղ է հատկացված «ՄԻԳ» կործանիչների ստեղծողին: Ինչպես գրել է ԽՍՀՄ հերոս, փորձարկող օդաչու Գ.Սեդովը. «...ՄԻԳ»-երը ճանապարհ են բացել մեր մյուս ինքնաթիռների համար: Նրանք եղել են գերձայնային պատնեշը գրոհողների առաջին շարքերում»:

«ՄԻԳ-15» արագասլաց ռեակտիվ ինքնաթիռը ծնվեց 1947թվին և եղավ իր ժամանակի ամենալավ մարտական ինքնաթիռը: Դրա ստեղծման համար Ա.Միկոյանին 3-րդ անգամ շնորհվեց պետական մրցանակ:

Ա.Միկոյանը ակտիվորեն մասնակցել է նաև երկրի հասարակական-քաղաքական կյանքին, բազմիցս ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր: Նրա բեղմնավոր գործունեությունը արժանացել է կառավարական բարձր պարգևների: Խորհրդային ավիացիայի զարգացման ասպարեզում մատուցած ականառու ծառայությունների համար նա երկու անգամ արժանացել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի, Լենինյան ու պետական մրցանակների դափնեկրի կոչման:

Ուշագրավ է հատկապես Միխայիլ Արլազորովի հեղինակած «Արտեմ Միկոյան» գիրքը, որն ընդգրկման լայն շրջանակներ ունի: Հեղինակը փորձել է ցույց

տալ խորհրդային ինքնաթիռաշինության քիչ հայտնի փուլերը: Այն ծանոթացնում է իր գործին սիրահարված կոնստրուկտորի մտահղացումներին, ինժեներների, ավիկոնստրուկտորների, փորձարկող օդաչուների մեծ կոլեկտիվի աշխատանքին:

Ա.Միկոյանը նոր լուծումներ գտնելու անսպառ եռանդ ուներ, տեխնիկական բարդ պրոբլեմներ լուծելու մեծ համարձակություն: Դրանք նրա մեջ զուգորդվում էին փայլուն ընդունակությունների և բարոյական բարձր հատկությունների հետ:

«Իմ ծանոթությունը «ՄիԳ»-երի հետ, - գրել է Ա.Պոկրիշկինը, - տեղի ունեցավ պատերազմի հենց սկզբին և հետք թողեց իմ օդաչուական գործունեության մեջ, ռեկատիվ «ՄիԳ»-երը առավել արագընթաց էին, լավ սպառազինված և հարմար՝ շահագործման տեսակետից: Մի խոսքով, առաջնակարգ մարտական մեքենաներ էին»:

Մարիետա Շահինյանը իր նամակներից մեկում գրել է. «...Բոլոր նրանք, ովքեր գոնե մեկ անգամ տեսել են Արտեմ Միկոյանին, գիտեն, որ նա ոչ միայն նշանավոր գիտնական և կոնստրուկտոր էր, այլև զտարյուն հայ: Այդպիսի մարդիկ բացառություններ են, նրանց կորուստը համայն հայության կորուստն է»:

Անցել է քառասուն տարի... 40 տարիների խտացված հուշ ու խորհրդատվություն, ինչքան ջրեր հոսեցին, և ինչեր միայն չտեսանք այդ տարիների ընթացքում:

Ուղիղ չորս տասնամյակ է այս լուսանկարը որպես հուշ, արխիվային վավերագիր ու որպես մի մասունք խնամքով պահել-պահպանել եմ, քանզի ամեն մի մասունք թանկ է, ամեն մի մասունք պատմություն է ու ապրած կյանք: Եվ ակնթարթ է լինելիության ու կարոտի:

Հ.Գ. Լուսանկարում ձախից երկրորդը հռչակավոր ավիակոնստրուկտոր, գեներալ-գնդապետ Արտեմ Միկոյանն է, երրորդը՝ Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը, չորրորդը՝ Անդրկովկասյան զինվորական օկրուգի հրամանատար Ա.Գրիբկոն, իսկ ձախից առաջինը՝ ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Մ.Մելքոնյանը: Երևան, 1968թ.:

Ռաֆիկ Եզեկյան
պատմագիտության դոկտոր

ՀԽՍՀ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԱՃԸ 1960-1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Դեռևս 1920-ական թվականներից սկսված Հայկական ԽՍՀ քաղաքային բնակչության թվաքանակի բուռն աճը իր շարունակությունը գտավ ողջ հետագա տասնամյակների ընթացքում: Ինդուստրացման տարիներին (1926-1939թթ.) Հայաստանում քաղաքային բնակչության աճն ընթանում էր ռեկորդային տեմպերով՝ տարեկան միջին հաշվով 6.22 տոկոսով[1], ինչը կապված էր արդյունաբերության, շինարարության և տնտեսության մյուս ճյուղերի աննախադեպ ծավալմամբ, բնակչության կրթական և մշակութային զարգացվածության բարձրացմամբ: Ընդհանուր բնակչության թվաքանակի բնական և մեխանիկական աճին զուգընթաց հատկապես՝ հետպատերազմյան ժամանակաշրջանում, Հայկական ԽՍՀ քաղաքների աճը ևս տպավորիչ էր: Հին քաղաքների բարեկարգումն ու ծավալումը հետպատերազմյան տարիներին ու հատկապես՝ 1960-ական թվականներից սկսած, նոր քաղաքների հիմնումը մեծ խթան եղան Հայկական ԽՍՀ քաղաքային բնակչության թվաքանակի աննախադեպ աճի համար: 1966-1985թթ. ժամանակահատվածում արդեն քաղաքային բնակչության թվով տոկոսային հարաբերությամբ Հայկական ԽՍՀ-ն գերազանցում էր ընդհանուր միութենական ցուցանիշը, իսկ առանձին վերցրած հանրապետություններից զիջում էր միայն էստոնական, Լատվիական ԽՍՀ-ներին և ՌԽՖՍՀ-ին:

ՀԽՍՀ-ում քաղաքային բնակավայրերը հիմնականում երկու տեսակի էին՝ քաղաքներ և քաղաքատիպ ավաններ: Քաղաքներ էին համարվում առնվազն 8.000 բնակչություն ունեցող բնակավայրերը, որոնց բնակչության առնվազն 2/3-ը կազմում էին բանվորները, ծառայողներն ու նրանց ընտանիքի անդամները: Առնվազն 2.000 բնակիչ ունեցող առողջարանային բնակավայրերը ևս դասվում էին քաղաքների շարքին, եթե այդ բնակավայրերում հանգստացողների թիվը սեզոնային ամիսներին կազմում էր բնակչության առնվազն կեսը: Քաղաքատիպ ավաններն էին 3-ից 8 հազար բնակիչ ունեցող բնակավայրերը, որոնց բնակիչների 2/3-ը և ավելին, ընտանիքի անդամներով հանդերձ, բանվորներ ու ծառայողներ էին:

1959թ. համամիութենական մարդահամարի տվյալների համաձայն՝ ՀԽՍՀ-ում կար 35 քաղաքային բնակավայր՝ 881.844 մարդ բնակչությամբ, որոնցից քաղաքի կարգավիճակ ուներ 14-ը, քաղաքատիպ ավանի կարգավիճակ՝ 21-ը: Քաղաքներում բնակվում էր 806.431, իսկ քաղաքատիպ ավաններում՝ 75.413 մարդ, այսինքն՝ հանրապետության քաղաքային բնակչության 91.44 տոկոսն ապրում էր քաղաքներում և միայն 8.56 տոկոսը՝ քաղաքատիպ ավաններում: Միայն Երևան քաղաքում բնակվում էր 509.340 մարդ, կամ հանրապետության ողջ քաղաքային բնակչության 57.75 տոկոսը[2]: Իսկ արդեն 1980 թվականի դրությամբ Հայկական ԽՍՀ-ում կար 57 քաղաքային բնակավայր, որոնցից 38-ը քաղաքատիպ ավաններ էին, որտեղ բնակվում էր մոտ 200.000 մարդ[3]:

Հետպատերազմյան շրջանում արդյունաբերության աճը նոր թափ հաղորդեց քաղաքային բնակչության ավելացմանը: 1959-1969թթ. միջև ընկած տասնամյակի ընթացքում ՀԽՍՀ-ում քաղաքային բնակչությունն իր դրսևորած աճով երկրորդ տեղն էր զբաղեցնում միութենական հանրապետությունների շարքում Մոլդովական ԽՍՀ-ից հետո՝ ավելանալով 68 տոկոսով[4]: Եթե 1959թ. քաղաքային բնակչության բաժինը հանրապետության ողջ բնակչության մեջ կազմում էր 50 տոկոս, ապա 1970թ. արդեն Հայկական ԽՍՀ բնակչության 59 տոկոսը, իսկ

---

[1] Լ.Դավթյան, «Սովետական Հայաստանի բնակչության վերարտադրությունը», Երևան, 1965թ., էջ 72:

[2] ЦСУ СССР, "Итоти Всесоюзной переписи населения 1959 года. Армянская ССР", Москва, 1963г., стр. 13:

[3] "Урбанизация и развитие городов в СССР", Москва, 1985, стр. 247:

[4] "Всесоюзная перепись населения 1979 года. Сборник статей", Москва, 1984, стр. 127:

1979թ.՝ 66 տոկոսն ապրում էր քաղաքներում[1]: 1959-1979թթ. ընթացքում Հայկական ԽՍՀ-ում քաղաքային բնակչության միջին տարեկան աճը կազմում էր 55-57 հազար մարդ[2]: Քաղաքային բնակչության աճի գլխավոր ուղիները եղան. 1) Քաղաքային բնակչության թվաքանակի բնական աճը, 2) Քաղաքային բնակչության մեխանիկական աճը (այդ թվում՝ գյուղական, այլ միութենական հանրապետություններից և արտասահմանից ներգաղթյալների հաշվին), 3) Գյուղական բնակավայրերի կարգավիճակի փոփոխությունը քաղաքայինի:

Ինչպես և ամբողջ աշխարհում, Հայաստանում ևս քաղաքային բնակչության բնական աճն իր տեմպերով զիջում էր գյուղական բնակավայրերի համանման ցուցանիշներին: Արդյունաբերության զարգացմանը, արտադրական ուժերի վերաբաշխմանը և գյուղից քաղաք հոսքի հետևանքով քաղաքային բնակչության աճը լուրջ ազդեցություն էր գործում հանրապետությունում բնական աճի ցուցանիշների նվազման վրա: Քաղաքային բնակչության շրջանում բնական աճի տեմպերի դանդաղումը և նվազումը ունեն մի քանի ծանրակշիռ պատճառներ, որոնցից հատկանշական է հատկապես ծննդաբերության շրջանում կանանց զբաղվածության գործոնը, բուժսպասարկման բարձր մակարդակը, որը թույլ էր տալիս կարգավորել ծնունդը և միաժամանակ նպաստում էր մահացությունների թվի կրճատմանը: Բացի այդ, քաղաքում առկա բնակարանային հիմնախնդիրները, ինչպես նաև ընտանեկան բյուջեի ու սոցիալական կացության վրա երեխաների ծննդի ազդեցությունը ևս ներգործություն էին ունենում քաղաքային բնակավայրերում բնակչության բնական աճի աստիճանական նվազմանը: Այնուամենայնիվ, 1960-1970-ական թվականներին ծննդաբերության գործակցի զգալի նվազում էր դիտվում նաև գյուղերում, և այդ ժամանակահատվածում այն ավելի արագ տեմպերով էր իջնում, քան քաղաքային բնակավայրերում, ինչը մեծապես կապված էր գյուղից քաղաք հոսքի և գյուղերում երիտասարդության թվաքանակի նվազման հետ[3]:

Այնուամենայնիվ, Հայաստանում քաղաքային բնակչության բնական աճի ցուցանիշները 1960-1970-ական թվականներին ամենամեծ կշիռն են ունեցել քաղաքային բնակչության աճի մյուս աղբյուրների հետ համեմատ առանձին-առանձին վերցրած (որոնք էին ներհանրապետական, միջպետական և միջհանրապետական միգրացիաները, գյուղական բնակավայրերի վերափոխվելը քաղաքայինի): Այսպես, օրինակ, ըստ Վ.Խոջաբեկյանի տվյալների, 1959-ից մինչև 1970 թվականը քաղաքային բնակչությունն ի հաշիվ բնական աճի ավելացել էր 263.1 հազար մարդով, ինչը մոտ 2 հազարով ավելի էր, քան ի հաշիվ միգրացիոն հոսքերի: 1970-1979թթ. ընկած ժամանակահատվածում բնական աճի տեմպերը գրեթե փոփոխության չենթարկվեցին՝ գրանցելով 262 հազար մարդու հաշվով աճ, սակայն միևնույն ժամանակ մեծացավ նաև բնական աճի և ներգաղթի ցուցանիշների տարբերությունը՝ հասնելով 39 հազարի: Նույնը տոկոսային հարաբերությամբ արտահայտելով՝ կստանանք, որ 1959-1970 թվականներին քաղաքային բնակչության աճի մեջ բնական աճն ունեցել է 43.9 տոկոս, իսկ 1970-1979 թվականներին՝ 51.3 տոկոս կշիռ[4]: Ընդհանրապես, 1959-1979թթ. ընթացքում միջին տարեկան բնական աճը քաղաքային բնակավայրերում կազմել է 26-27 հազար մարդ[5]:

Հանրապետությունում քաղաքային բնակչության աճի ձևավորման կարևորագույն բաղադրիչներից էր միջհանրապետական միգրացիան: Հատկապես մինչև

---

[1] “Всесоюзная перепись населения 1979 года. Сборник статей”, Москва, 1984, стр. 132:

[2] В.Ходжабекян, Б.Асатрян, “Демографические аспекты урбанизации в Армянской ССР”, Ереван, 1990, стр. 60:

[3] Վ.Խոջաբեկյան, «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը 19-20-րդ դարերում, 21-րդ դարի նախաշեմին», Երևան, 2001, էջ 186

[4] Վ. Խոջաբեկյան, «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը 19-20-րդ դարերում, 21-րդ դարի նախաշեմին», Երևան, 2001, էջ 217:

[5] В.Ходжабекян, Б.Асатрян, “Демографические аспекты урбанизации в Армянской ССР”, Ереван, 1990, стр. 60:

1979թ., ըստ համամիութենական մարդահամարի, այն հանրապետության քաղաքային բնակչության ավելացման կարևորագույն բաղադրիչներից էր, և միայն 1959-1979թթ. միջհանրապետական միգրացիային էր բաժին ընկնում այդ աճի մինչև 25 տոկոսը[1]: Հայկական ԽՍՀ-ն սերտ միգրացիոն կապերի մեջ էր գտնվում միութենական բոլոր հանրապետությունների հետ, հատկապես՝ Անդրկովկասի հարևան հանրապետությունների, որտեղ կար հոծ հայ բնակչություն: Ընդ որում, Հայաստանի համար բնակչության մեխանիկական տեղաշարժերը ԽՍՀՄ գրեթե բոլոր հանրապետությունների հետ համեմատ տալիս էին դրական մնացորդ՝ ներգաղթը դեպի Հայաստան գերազանցում էր արտագաղթին (տարբեր տարիներին բացառություն են կազմել միայն առանձին վերցրած Մոսկվա քաղաքը, Բելոռուսական և Լատվիական ԽՍՀ-ները): Միութենական հանրապետություններից Հայաստան մշտական բնակության եկողները գլխավորապես տեղավորվում էին քաղաքներում: Օրինակ, 1971թ. ընթացիկ հաշվառման տվյալների համաձայն, ՀԽՍՀ քաղաքային բնակչության մեխանիկական բացարձակ աճով (23 հազար մարդ) այն Միության հանրապետությունների մեջ գրավել է յոթերորդ, իսկ հարաբերական աճով (1000 եկողի դիմաց 483 գնացող)՝ առաջին տեղը[2]: 1950-1970թթ. ընկած ժամանակահատվածում ՀԽՍՀ բնակչության մեխանիկական աճի (165 հազար մարդ) 88.8 տոկոսը (146.5 հազար) բաժին է ընկել քաղաքներին[3]: Միայն 1960-1962թթ., համաձայն Լ.Դավթյանի հաշվարկների, ՀԽՍՀ քաղաքներից բնակչության ներհոսքի և արտագաղթի տարբերությունը կազմել է 6133 մարդ[4]: Խորհրդային Միության տարբեր շրջաններից բնակչության միգրացիայի շնորհիվ միայն 1970-1972թթ. ընթացքում ՀԽՍՀ քաղաքային բնակչությունն աճել է 35.7 հազարով[5]:

Անդրկովկասյան հանրապետությունների՝ Վրացական և Ադրբեջանական ԽՍՀ-ների հետ Հայաստանի միգրացիոն կապերը գնալով ավելի ու ավելի ակտիվ բնույթ էին կրում, ընդ որում՝ միշտ ի վնաս հարևան հանրապետություններում հայկական բնակչության թվի: Վրաստանի ու Ադրբեջանի իշխանությունների կողմից տարվող նպատակաուղղված քաղաքականությամբ էր մեծ մասամբ բացատրվում այդ հանրապետությունների տարածքում դարեր շարունակ բնակվող հայության ձգտումը՝ տեղափոխվելու Մայր Հայրենիք՝ ուսման, ընտանիք կազմելու, մասնագիտական առաջխաղացման և ապագայի հեռանկարները շոշափելի դարձնելու նպատակով: Միայն 1971թ. ընթացքում Ադրբեջանական ԽՍՀ քաղաքներից ՀԽՍՀ քաղաքային բնակավայրեր է եկել 4813 մարդ, իսկ հակառակ ուղղությամբ գնացել է ընդամենը 1580 մարդ՝ տալով 3233 մարդու հաշվարկով դրական տարբերություն Հայաստանի համար: Հատկանշական է, որ Վրաստանից ու Ադրբեջանից Հայաստանի քաղաքներ եկած անձանց բացարձակ մեծամասնությունը հայեր էին: Վրացական ԽՍՀ-ի հետ ևս միգրացիոն հոսանքների տարբերությունը դրական էր Հայաստանի համար (2372 մարդ 1971թ.)[6]:

Միջպետական միգրացիան ևս, ինչպես և բնակչության միջհանրապետական շարժումները, ազդեցություն ունեցան Հայաստանում քաղաքային բնակչության ավելացմանը: Ըստ Գ.Ավագյանի տվյալների, 1962թ. հունվարի 1-ից մինչև 1973թ. հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում արտասահմանից Խորհրդային Հայաստան է հայրենադարձվել 26.140 մարդ կամ 5512 ընտանիք: Ներգաղթածների մեծագույն մասը՝ 81.6 տոկոսը, բնակեցվել է հանրապետության 20 քաղաքներում: Սակայն, Երևանում նրանցից բնակություն է հաստատել միայն 702 մարդ:

---

1 В.Ходжабекян, Б.Асатрян, "Демографические аспекты урбанизации в Армянской ССР", Ереван, 1990, стр. 59:
2 Գ.Ավագյան, «Հայկական ՍՍՀ բնակչությունը», Երևան, 1975, էջ 130:
3 Նույն տեղում:
4 Լ.Դավթյան, «Սովետական Հայաստանի բնակչության վերարտադրությունը», Երևան, 1965թ., էջ 75:
5 Գ.Ավագյան, «Հայկական ՍՍՀ բնակչությունը», Երևան, 1975թ., էջ 132:
6 Նույն տեղում, էջ 133:

Ներգաղթածների մոտ 20 տոկոսը տեղավորվել է Լենինականում (Գյումրի), մոտ 16 տոկոսը՝ Կիրովականում (Վանաձոր), 12.6 տոկոսը՝ Աբովյանում, 9.6 տոկոսը՝ Հրազդանում և նույնքան էլ՝ Չարենցավանում: Մնացածը տեղավորվել են էջմիածնում, Հոկտեմբերյանում (Արմավիր), Արարատում, Արտաշատում[1]: Այդ տարիներին հայրենադարձվածների մեծամասնությունը՝ 73.3 տոկոսը բաժին էր հասնում Իրանից եկածներին:

Քաղաքային բնակչության ավելացման մյուս կարևորագույն աղբյուրն է մարդկային հոսանքը գյուղից դեպի քաղաք: Այս պրոցեսը, որը գիտության մեջ հայտնի է ուրբանիզացիա անվամբ, լայն տարածում ունի ողջ աշխարհում և իր ցայտուն դրսևորումը գտավ նաև Խորհրդային Հայաստանի պատմության ողջ ընթացքում: Արդյունաբերության զարգացումը իր մեծ ազդեցությունն էր գործում գյուղի վրա: Գյուղատնտեսական աշխատանքների մեխանիզացիայի բարձրացումը աշխատանքից զրկվելու հեռանկարի առջև էր կանգնեցնում գյուղացիներին, ովքեր իրենց ապագայի հույսերը հետզհետե կապում էին քաղաքի հետ՝ համալրելով քաղաքային բնակչության շարքերը: Գյուղից քաղաք հոսքի խթանման մյուս գործոններից էր նաև աստիճանաբար նոր գյուղատնտեսական հողատարածքների յուրացման հնարավորությունների նվազումը, ինչը թույլ չէր տալիս բնական աճի բարձր տեմպեր ունեցող գյուղական բնակչությանը նոր գյուղական բնակավայրեր հիմնել:

Գալով քաղաք՝ գյուղական բնակչությունը փոխում էր ոչ միայն իր բնակավայրը, նիստուկացը, ավանդույթներն ու խոսակցական լեզուն (իհարկե, ոչ բոլոր դեպքերում), այլև պարտադիր փոփոխության էր ենթարկվում նրա աշխատանքի բնույթը՝ գյուղատնտեսությունից դեպի գլխավորապես՝ արդյունաբերական ճյուղերի մասնագիտությունները):

Եթե խորհրդային իշխանության սկզբնական շրջանում (1926-1939թթ.) մարդկային հոսքը գյուղից քաղաք գրեթե հավասար էր քաղաքային բնակչության բնական աճին (119.7 հազար), ապա հաջորդ փուլում՝ 1959-1970թթ. ընկած ժամանակահատվածում գյուղերից քաղաք հոսող բնակչության թիվը (129 հազար), իր տեսակարար կշռով, քաղաքային բնակչության ընդհանուր աճի մեջ զգալիորեն իջել է (1926-1939թթ. 40 տոկոս էր, իսկ 1959-1970թթ.՝ 31.8 տոկոս): 1959-1973 թվականների միջև ընկած ժամանակահատվածում հանրապետության քաղաքային բնակավայրեր է եկել 587.9 հազար մարդ կամ միջինը տարեկան մոտ 39.2 հազար: Նույն ժամանակահատվածում քաղաքային բնակավայրերից հեռացել է 322.5 հազար մարդ կամ տարեկան միջին հաշվով 21.5 հազար մարդ: Այսպիսով, 1959-1973թթ. ՀԽՍՀ քաղաքային բնակչության մեխանիկական աճը կազմել է 265.4 հազար (տարեկան միջինը 17.7 հազար մարդ)[2]:

Բնակչության մեխանիկական աճի ցուցանիշներով Երևան քաղաքը մշտապես գերազանցել է հանրապետության մյուս քաղաքներին: Տնտեսական և հատկապես արդյունաբերության ինտենսիվ աճը խորհրդային տարիներին հանգեցրեց նրան, որ Երևանը դարձավ հանրապետության խոշորագույն արդյունաբերական, մշակութային, գիտական կենտրոնը, որը շարունակ իրեն էր ձգում աշխատող ձեռքերին ողջ հանրապետությունից: Երևանին էր բաժին ընկնում ուրբանիզացիայի և քաղաքային բնակչության բնական աճի առյուծի բաժինը:

Երևան քաղաքի արդյունաբերական զարգացումը պայմանականորեն կարելի է բաժանել երեք ժամանակաշրջանների. 1) 1920-1940թթ., երբ շահագործման հանձնվեցին քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների 28 տոկոսը, 2) 1940-1960 թթ.՝ 56 տոկոսը, 3) 1960-1979թթ.՝ 16 տոկոսը[3]:

Գրեթե նույնպիսի տեմպերով էլ մեխանիկական աճ էր արձանագրվում Երևան քաղաքի բնակչության աճի թվաքանակում: Միայն 1959-1963թթ. մայրաքաղաքում, ի հաշիվ ներհանրապետական միգրացիայի, բնակություն էր հաստատել

[1] Գ.Ավագյան, «Հայկական ՍՍՀ բնակչությունը», Երևան, 1975թ., էջ 123-125:
[2] ЦСУ СССР, “Население СССР 1973: статистический сборник”, Москва, 1975, стр. 184:
[3] “Население Еревана. Этносоциологические исследования”, Ереван, 1986, стр. 21:

47.6 հազար մարդ[1]: 1970-ականներին Երևան քաղաքին բաժին էր ընկնում հանրապետության քաղաքային բնակչության աճի միջինը՝ 50 տոկոսը: Այսպես, 1973թ. տվյալներով Երևան էր եկել մոտ 24.000, Երևանից գնացել էր շուրջ 10.000 մարդ, այսպիսով՝ մեխանիկական աճը կազմել է 14.000 կամ 16.6 մարդ՝ 1000 բնակչին ընկած հաշվարկով[2]: 1970-ական թվականների վերջին Երևանը համալրեց միութենական միլիոնանոց քաղաքների շարքերը՝ 1979թ. ունենալով 1019 հազար, իսկ 1983թ. արդեն՝ 1095 հազար բնակիչ[3]: Հանրապետությունում բնակչության մեխանիկական աճի ցուցանիշներով 1970-ական թվականներին առաջատար դիրքերից մեկում հայտնվեց արագ զարգացող Աբովյան քաղաքը, որը 1970-1972թթ. մեխանիկական աճի ցուցանիշներով (9.7 հազար մարդ) երկրորդ տեղում էր Երևանից հետո, որին բաժին էր ընկնում ողջ քաղաքային բնակչության մեխանիկական աճի 60.3 տոկոսը (կամ 42.272 մարդ): Իրենց մեխանիկական աճի ցուցանիշներով Կիրովական և Լենինական քաղաքները համապատասխանաբար երրորդ (5922 մարդ) և չորրորդ (4715 մարդ) տեղում էին: Աճի համեմատաբար լավ ցուցանիշներ էին դրսևորում նաև Հրազդան և Էջմիածին քաղաքները՝ 1970-1972թթ. ունենալով համապատասխանաբար 2560 և 2895 մարդու հաշվարկով մեխանիկական աճ[4]: Հրազդան, Էջմիածին և Աբովյան քաղաքների բաժինը հանրապետության ընդհանուր քաղաքային բնակչության մեջ անընդհատ աճում էր՝ 1970թ. կազմելով 9.2 տոկոս, իսկ 1979թ. արդեն՝ 15.2 տոկոս:

Առհասարակ, Հայաստանում քաղաքային բնակչության աճն ուներ որոշակի առանձնահատկություններ՝ մասնավորապես դրսևորվելով բնակչության կենտրոնացմամբ հատկապես խոշոր քաղաքներում՝ Երևանում, Լենինականում և Կիրովականում: Վերջին երկուսն հանդիսանալով ուրբանիզացիայի օբյեկտ, իրենք էին մարդկային ռեսուրսներ տալիս ավելի բազմամարդ Երևանին:

Քաղաքային բնակչության աճի կարևոր աղբյուրներից էր նաև գյուղական բնակավայրերի վերափոխումը քաղաքայինի: Այսպես, 1959 և 1970թթ. համամիութենական մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում ՀԽՍՀ գյուղական բնակավայրերից Աբովյանը, Մարալիկը, Ապարանը, Վեդին, Աշտարակը, Եղեգնաձորը, Կալինինոն, Մարտունին, Այրումը, Գագարինը, Վերին Թալինը, Վարդենիսը և Բերդը փոխեցին իրենց կարգավիճակը՝ դառնալով քաղաքային բնակավայրեր: Միայն այս փոփոխության հետևանքով հանրապետության քաղաքային բնակչությունն ավելացավ 46 հազարով, ինչը կազմում էր քաղաքային բնակչության աճի մեջ 7.7 տոկոս:

ՀԽՍՀ-ում բնակչության տեղաշարժերի գործում մեծ նշանակություն ուներ ուրբանիզացիան և դրանով պայմանավորված քաղաքային բնակչության աճը: Ընդ որում, այս գործընթացն իր մեջ ներառում էր թե՛ միջհանրապետական, թե՛ միջպետական և թե՛ ներհանրապետական միգրացիոն հոսքերը: Այդ հոսքերը գլխավորապես ազդում էին քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակչության թվաքանակի փոփոխությունների վրա՝ առաջինի դեպքում՝ աճի, երկրորդի դեպքում՝ նվազման առումներով: Արդյունքում՝ ՀԽՍՀ-ը դարձավ Խորհրդային Միության ամենաուրբանիզացված հանրապետություններից մեկը: Քաղաքային բնակչության աճը մեծապես ազդեց հանրապետության աշխատուժի, կրթական, մշակութային ու սոցիալական մակարդակի բարձրացման, ինչպես նաև հասարակական կյանքի մյուս կարևորագույն փոփոխությունների վրա:

Լևոն Ֆարմանյան

---

[1] Լ.Դավթյան, «Սովետական Հայաստանի բնակչության վերարտադրությունը», Երևան, 1965թ., էջ 74:
[2] ЦСУ СССР, "Население СССР 1973: статистический сборник", Москва, 1975, стр. 186:
[3] "Всесоюзная перепись населения 1979 года. Сборник статей", Москва, 1984, стр. 129:
[4] Գ.Ավագյան, «Հայկական ՍՍՀ բնակչությունը», Երևան, 1975թ., էջ 140:

УЧАСТИЕ АРМЯН ГОРОДА СТАВРОПОЛЬ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ

Великая Отечественная война сразу вызвала патриотический подъем среди населения города. Многие, не достигшие призывного возраста, стали записываться добровольно в ряды Красной Армии. Не исключением была и армянская часть населения. Большинство из мобилизованных в армию погибли, сражаясь в Крыму при защите Севастополя.

Данных о числе людей, призванных на фронт по национальному признаку, в архивах нет. Однако в период Отечественной войны проявили храбрость и преданность стране многие представители и армянского происхождения.

В связи с быстрым продвижением немецко-фашистских войск к Северному Кавказу и возможной оккупации Орджоникидзевского края возникла необходимость формирования партизанских отрядов для нанесения ударов врагу в тылу.

В середине 1942 года бюро Орджоникидзевского крайкома партии приступило к формированию партизанских отрядов на территории края.

18 августа 1942 года комиссаром Степновского партизанского отряда был назначен Карапетьян Иван Нуржанович, который совместно с отрядом успешно проводил военные действия в тылу врага, нанося существенный урон военной технике и живой силе. Партизанский отряд смог сохранить свой боевой состав и встретить освобождение Ставропольского края от оккупантов.

Интересна биография Ивана Нуржановича. Он родился 12.09.1909 года. С 1929 по 1932 годы он был секретарем райкома комсомола г. Акмолинска Казахской ССР, с 1933 по 1938 годы - начальником политотдела хлопкосовхоза Наурского района Орджоникидзевского края, с 1939 по 1944 годы - первым секретарем райкома партии Степновского района Ставропольского края, с 1944 по 1950 годы - первым секретарем райкома партии Ипатовского района, с 1950 по 1953 годы - заместителем председателя крайисполкома и с 1954 по 1971 год (до своей смерти 22.02.1971 года) - начальником краевого управления строительства и ремонта дорог Ставропольского края. В 1948 году закончил Высшую партийную школу. За борьбу с фашистами в тылу врага был награжден орденом Отечественной войны 1-й степени, медалями, а в мирное время - орденом «Знак почета», 8-ю медалями. 12 сентября 1969 года Президиумом Верховного Совета РСФСР удостоен почетного звания «Заслуженный строитель РСФСР».

В тот же день 18 августа, бюро крайкома партии своим решением утвердило кадрового чекиста Осканова Вартана Лукьяновича командиром партизанского отряда № 10, работавшего в Преградненском районе. В конце 1942 года крупное карательное формирование окружило небольшой партизанский отряд, который после яростного боя удалось уничтожить, и шестеро раненых партизан во главе с командиром взяты в плен. Ранее до пленения за ликвидацию опасной банды в горах Карачая В.Л. Осканов был награжден орденом Красного Знамени, но орден не успел дойти до него.

Как пишет Ю. Христинин, начальник зондеркоманды 11-6 СС Шульц на допросе сказал: «Нас интересуют ваши связи и явки. Скажете - сохраним жизнь. Нет - вас постигнет судьба пятерых других партизан. Их и вашу жену мы расстреляли. Любопытная деталь: могилу они себе вырыли сами. Будете говорить?». Человек на стуле молчал, стиснув зубы. Через несколько минут Осканова вывели в маленький замкнутый внутренний дворик. Раздели, оставили в центре. А потом спустили на него собак волкодавов. В окно Шульцу было видно, как они рвали тело человека, какой яростью светились их глаза. Осканов упал. Его снова и снова приводили на допросы. И снова он молчал. На рассвете он был расстрелян».[1]

Временная оккупация края в августе 1942 года, продолжавшаяся в течение почти полугода, принесла неисчислимые материальные потери и человеческие жертвы от рук

[1] Ставропольская правда, 05. 09. 1976.

немецко-фашистских захватчиков. В январе-феврале 1942 года Ставропольский край был освобожден от немецких войск. 23 января 1943 года в освобождении Ставропольского края и г. Ставрополя участвовала 409-я стрелковая Кировоградско-Братиславская ордена Богдана Хмельницкого армянская дивизия. При освобождении г. Ставрополя из 125 погибших воинов числятся 10 воинов-армян. У Вечного огня высечены их фамилии: 1) Агаронян С.Г., 2) Аракелян Т.А., 3) Аллахвердов В.М., 4) Багдасарян А.К., 5) Геворкян Н. Б., 6) Манучарян А.А., 7) Мнацаканян Н.Т., 8) Сагарян А.С., 9) Сафарян А.К., 10) Шахкян Е.Р.

Парадоксально, но факт, когда после освобождения Ставрополя от немецких захватчиков армянская и греческая часть населения города сидела на узлах, ожидая выселения. К счастью, этого не произошло.

В Советском Союзе на первых этапах войны был организован ряд национальных военных формирований. Немногим из них посчастливилось сохраниться до победного дня. В годы Великой Отечественной войны в рядах национальной дивизии Красной Армии почетное место заняли и армянские 89-я, 390-я, 408-я и 409-я дивизии. Среди них особое место занимает 409-я стрелковая Кировоградско-Братиславская ордена Богдана Хмельницкого армянская дивизия, которая, начав свой путь с предгорий Кавказа, освобождала города и села Ставропольского края и закончила войну в Берлине и Праге. Это единственная национальная дивизия, сохранившаяся до конца Отечественной войны.

Дивизия была сформирована в 1941 году на территории Армянской ССР и расформирована в июле 1945 года в Чехословакии. Общее количество личного состава дивизия насчитывала 15000 человек. В конце ноября 1942 года она была переброшена из Армении под Моздок в состав 44-й армии Северо-Кавказской группы войск.

Оборона Кавказа, одного из крупнейших экономических и политических регионов СССР, имела большое значение. На его защиту поднялись все народы и народности. Командование 44-й армии решило использовать 409-ю дивизию почти с ходу, не дав времени для настоящей подготовки к наступлению. К этому времени во второй половине декабря 1942 года части дивизии уже вели ожесточенные бои с противником, который на дальних подступах к Моздоку создал глубоко эшелонированную оборону. В связи с крахом плана Гитлера по захвату Сталинграда в числе многочисленных дивизий, перешедших в наступление, была и 409-я. В тяжелых боях за Моздок (входивший в то время в Ставропольский край) дивизия потеряла несколько тысяч человек ранеными и убитыми, но, несмотря на тяжелые зимние условия, она успешно справилась с поставленной военной задачей. 409-я дивизия приняла самое активное и непосредственное участие в освобождении таких крупных городов, станиц и населенных пунктов Ставропольского края как Новопавловская, Прохладное, Георгиевск, Минводы, Суворово, Курсавка, Невинномысская, Ставрополь.

Далее путь дивизии шел по освобождению населенных пунктов Краснодарского края. Дивизия успешно участвовала в исторической Курской битве, в битве за Днепр. За особые заслуги в военных битвах в центре Европы дивизия была награждена орденом Богдана Хмельницкого 2-й степени и получила почетное наименование «Кировоградско-Братиславской ордена Богдана Хмельницкого армянской дивизии».

В Ставрополе после войны и до недавнего времени жил скончавшийся бывший помощник начальника штаба этой дивизии Гаруш Серапионович Мартиросов, капитан запаса, прошедший весь путь от Кавказа до Берлина и за два месяца до окончания войны потерявший руку, закончил войну в госпитале. Кавалер орденов Отечественной войны 1-й и 2-й степеней, ордена Красной Звезды и боевых медалей. Г.С. Мартиросов сообщил много нового о ратном подвиге героической 409-й армянской дивизии.

Достойное место в деле разгрома фашистских захватчиков занимают воины-армяне, уроженцы Ставропольского края. Тысячи армян были мобилизованы в Красную Армию и проявили свои высокие морально-патриотические военные качества. Многие из них были награждены орденами и медалями, четверо из них стали Героями

Советского Союза. Это полковник запаса, уроженец г. Пятигорска Георгий Тамразович Акопянц, полковник запаса, уроженец г. Буденновска Александр Иосифович Мурдугов, гвардии старший лейтенант, офицер разведки, уроженец г. Кисловодска Георгий Аркадьевич Арустамов и проживавший в крае Рубен Христофорович Багиров.

Значительный вклад в деле обновления и совершенствования авиационной техники во время войны и после нее внес участник Великой Отечественной войны, уроженец г. Ставрополя, кандидат технических наук, лауреат государственной премии СССР, доцент Московского технологического института имени К. Э. Циолковского, генерал-майор авиации Вартан Никитович Сатинов. Как пишет В. Бабеньшев в «Молодом Ленинце» за 1977 год: «Перелистывая страницы нашей истории, мы вспоминаем тех, кто утверждал Советскую власть, кто укреплял экономику и оборонную мощь нашей страны в годы первой пятилетки. В их числе наш земляк, комсомолец двадцатых годов Вартан Никитович, ныне генерал-майор авиации. Родился он в Ставрополе в 1908 году, учился в школе имени Чернышевского (ныне средняя школа № 5), затем в педагогическом техникуме. Был избран секретарем Таитянской ячейки, а затем как инициативный и авторитетный вожак молодежи, направлен в окружной комитет комсомола.

В 1930 году по решению Ставропольского окружкома комсомола Сагинова командируют на учебу в Московский университет. Но вскоре Варгана Сатинова на время отзывают с учебы. Он работает заведующим отделом кадров Фрунзенского районного комитета комсомола Москвы.

По окончании университета, став специалистом в области механики и математики, он призывается на службу в Вооруженные Силы. Перед Великой Отечественной войной участвует в испытании самолетов. А с начала войны и до 1950г. В.Н. Сатинов в авиации на летной службе. Неоднократно Сатинов выполнял ответственные боевые задания, защищал Москву от налетов фашистов».[1]

В семидесятых годах в научно-исследовательском институте авиации при непосредственном участии В.Н. Сатинова изучались вопросы обновления, совершенствования авиационной техники. Эта деятельность Вартана Никитовича получила высокую оценку. За заслуги перед Родиной Сатинов был награжден двумя орденами Ленина, орденами Красной Звезды, Трудового Красного Знамени, многими медалями.

Сегодня уже редко встретишь участников Великой Отечественной войны, перенесших всю тяжесть жестоких сражений и внесших свой достойный вклад в дело разгрома фашистских полчищ.

Среди армян-ставропольцев еще есть люди, которые могут поведать о былых событиях военного времени. Это пожилые, не совсем здоровые, но бодрые духом активные члены национально-культурной автономии «Наири»:

Подполковник запаса Завен Агаджанович Багдасарян, военные заслуги которого отмечены семнадцатью медалями, из них две монгольские, двумя орденами Красной Звезды, орденами Отечественной войны 1-й и 2-й степеней, орденом Александра Невского, 23-мя благодарностями Верховного Главнокомандующего за полководческий талант, умелое руководство войсками на поле боя. Он в восьмидесятые и девяностые годы длительное время возглавлял гражданскую оборону обувного объединения «Кавказ»[2].

Гвардии лейтенант воздушно-десантных войск запаса Сергей Арушанович Гулюшанян, награжденный орденом Отечественной войны 1-й степени, двумя орденами Красной Звезды, медалью за взятие Вены и другими медалями. После войны он в течение 35 лет работал начальником вычислительного центра статистического управления Ставропольского края и сейчас бессменный член Совета армянской культурно-просветительской автономии «Наири». В мирное время за заслуги в труде он был награжден орденом Знак Почета и медалью «За доблестный труд».[3]

---

[1] В.Бабеньшев, Молодой Ленинец, № 250, 1977, 22 декабря, С. 3.
[2] Т.Шамлиян, В преддверии праздника, Эребуни, № 1, 1994, 18 мая, С. 2.
[3] Н.Бадалян, Наша история, их судьбы, Эребуни, №5(8), 1995, 4 мая, С. 3.

Гарник Рубенович Арзуманян, прошедший почти всю войну, получивший два тяжелых ранения, награжден многими медалями. Окончив 10 классов, он в 1942 году окончил Буйнакское военно-пехотное училище и начал войну на Северо-Кавказском фронте в должности командира взвода, затем был командиром стрелкового взвода на украинском фронте. По поводу второго тяжелого ранения находился на излечении в госпитале с 10.02.1944 по 08.08.1944 года. 15 августа 1944 года был уволен в запас в звании младшего лейтенанта. Г.Р. Арзуманян в послевоенный период в течение 40 лет до ухода на пенсию работал бригадиром электрообмоточного цеха приборостроительного завода. Неоднократно избирался депутатом городского Совета депутатов трудящихся. В 1966 году награжден орденом «Знак Почета», юбилейной медалью «За доблестный труд в ознаменование со дня рождения В.И. Ленина», знаком «Ударник девятой пятилетки», медалью «Ветеран труда» и многими юбилейными медалями как ветеран войны и среди них медалью Жукова. До сих пор в его домашнем архиве хранится тетрадь со стихами военных лет и литературными миниатюрами, которые он писал в промежутках между боями.[1]

Значительную работу в армянской автономии и в городе проводит ветеран войны Андроник Кеворкович Хасратянц, награжденный в годы войны орденами Славы 3-й степени, Отечественной войны 1-й степени, медалью «За победу над Германией». Он в настоящее время является заместителем председателя Совета ветеранов войны Вооруженных сил, труда пенсионеров и правоохранительных органов Промышленного района г. Ставрополя, членом Президиума Совета ветеранов и членом краевого Совета ветеранов и, несмотря на преклонный возраст (80 лет), продолжает оказывать помощь своим однополчанам.

Шесть лет назад из жизни ушел участник Великой Отечественной войны Хачик Карпович Саркисян, удостоенный многих наград, среди которых орден Красного Знамени, орден Отечественной войны 1-й и 2-й степеней, медали «За Отвагу» и «За оборону Москвы». Он занимал ряд руководящих постов и, выйдя на пенсию, оказывал неоценимую помощь в развитии здравоохранения города.[2]

Значительный след в памяти членов армянской общины своей активной деятельностью оставил скончавшийся в 2000 году председатель Совета ветеранов войны и труда Октябрьского района г. Ставрополя Торгом Егорович Амирханян.

Среди защитников родины можно выделить многих воинов-армян. Следует остановиться на двух из них:

Переехавшая в 1926 году из Армении в село Маслопресс семья Акоповых обосновалась в ней надолго. Один из сыновей Михаил Арутович Акопов, 1919 года рождения, переехав в г. Ставрополь, перед войной окончил среднюю школу и в г. Баку в 1939 году окончил нефтяной техникум. В этот же год был призван в Красную Армию и служил в Белоруссии, где и встретил Отечественную войну. Воевал на Украине, под Сталинградом, в Венгрии и Румынии. Был дважды ранен. С 1947 по 1953 год служил в воинских частях на территории Венгрии. В 1953 году поступил в высшую военную Академию в Ленинграде и окончил ее. С 1959 по 1967 гг. он защитил кандидатскую, а затем и докторскую диссертации, стал профессором. В 1967 году был назначен заведующим кафедрой истории КПСС Инженерно-артиллерийского зенитного училища. В 1974 году, уйдя в отставку в звании полковника, преподавал в Киевском университете им. Т.Г. Шевченко на кафедре усовершенствования.

М.А. Акопов был награжден боевыми орденами Отечественной войны 1-ой и 2-ой степеней, Красного Знамени, Красной звезды и многими медалями. Он скончался 7 мая 1988 года.

Два сына из семьи Карапетянц, проживавших в Ставрополе, стали участниками Отечественной войны. Один из них, Левон, 1922 года рождения, в 1941 году поступил на первый курс Ставропольского государственного медицинского института. В

[1] Зоя Арзуманян, Поэтому выстояли и победили, Наири, № 2 (4), 2004, Октябрь, С. 2.
[2] В.Вардзелов, По велению сердца, Ставропольская правда, № 15 (18506), 1987, 18 января, С. 4.

первые дни войны он был мобилизован на фронт и в 1943 году в звании старшего лейтенанта погиб под Смоленском. Второй сын Карапетян Маркое Кеворкович после окончания 8-ми классов в 1933 году поступил в военно-инженерное училище. В 1939 году - участник советско-финляндской войны. Прошел всю Отечественную войну и закончил ее в звании полковника. Воевал в период всей блокады Ленинграда в саперных войсках. В 1945 году был назначен начальником Калининградского военно-инженерного училища, а затем до ухода в отставку был заместителем начальника Ленинградского Высшего военно-инженерного училища.

9 мая 2001 года состоялось открытие мемориальной доски полному кавалеру орденов Славы 3-х степеней, полковнику Исааку Погосовичу Караханяну в городе Ставрополе, где долгое время он жил. Девятнадцатилетним юношей из армянского села Геташен он пошел на фронт. И.П. Караханян от предгорьев Северного Кавказа дошел до Берлина, был дважды ранен, но после выздоровления сразу же возвращался в строй.

Открытие мемориала состоялось по инициативе администрации Промышленного района и при поддержке АНКА «Наири» в лице В.И. Погосяна, при поддержке депутатов Гордумы А.А. Колесникова, В.Э. Бунятова. Право открытия мемориальной доски было предоставлено председателю Совета ветеранов войны, труда и Вооруженных сил Промышленного района Вере Кузьминичне Масловской и боевому товарищу И.П. Караханяна, полковнику в отставке, ветерану Великой Отечественной войны Валентину Федоровичу Патрикееву. На митинге, посвященном открытию Мемориальной доски, выступили представители микрорайона, администрации г. Ставрополя, депутаты городской Думы, член Российского комитета ветеранов войны и военной службы, председатель краевого комитета полковник Д.И. Лычев, помощник губернатора Ставропольского края и др.[1]

Нет возможности перечислить заслуги всех участников Великой Отечественной войны, наших соотечественников. Все живые из них пользуются среди нас высоким авторитетом.

Борис Ованесов
(г.Ставрополь, Россия)

[1] Открытие мемориальной доски памяти Исаака Погосовича Караханяна, Наири, № 6-7, 2001, Май, С. 3.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ-Ի 2009թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

2009թ. Հայաստանի Հանրապետության արխիվային գործի բնագավառում աշխատանքներն ընթացել են հաստատված ծրագրային առաջադրանքներին համապատասխան՝ ըստ գործունեության ներքոնշյալ հիմնական ուղղությունների:

1.Արխիվային փաստաթղթերի պահպանության ապահովում և հաշվառում

Հաշվետու ժամանակամիջոցում նպատակային աշխատանքներ ու միջոցառումներ են իրականացվել արխիվային փաստաթղթերի ու նյութերի պահպանության ապահովման ասպարեզում, ինչը բնականաբար ենթադրում է մշակութային ժառանգության բաղկացուցիչ մաս կազմող պատմական սկզբնաղբյուրների ֆիզիկական վիճակի և պահպանության պայմանների բարելավմանն ուղղված ձեռնարկումների համալիր:

1.1. ՀԱԱ համապատասխան ստորաբաժանումների կողմից ծրագրված 277.200-ի փոխարեն վերականգնվել-վերանորոգվել են 290.971 թերթ արխիվային փաստաթուղթ, ինչը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 4.353 թերթով: Տարեկան ծրագիրը կատարվել է շուրջ 105%-ով: Ընդ որում, սույն կատարողականի գերակա մասը բաժին է ընկնում լաբորատորիային (ծրագրով՝ 208.500, փաստացի 231.927 թերթ), իսկ մնացածը իրականացվել է արխիվի պահպանության բաժնի (ծրագրով՝ 2.800 թերթ, փաստացի՝ 2.998 թերթ) և առանձնացված ստորաբաժանումների (ծրագր.՝ 65.900 թերթ, փաստացի՝ 56.046 թերթ) կողմից:

1.2. Գործերի կարում-կազմապատման ծրագիրը իրականացվել է 82,9%-ով՝ նախատեսված 34.642-ի փոխարեն կարվել-կազմապատվել է 28.736 գործ, ընդ որում թերակատարումն ամբողջությամբ բաժին է ընկնում մասնաճյուղերին, որոնց կատարողականը միասին կազմել է 51,5%:

1.3. Աշխատանքային ծրագրերով նախատեսված 58.579-ի փոխարեն տարվա ընթացքում արկղավորվել է 86.083 և կապոցավորվել 93.515 արխիվային գործ՝ տարեկան առաջադրանքների իրականացումն ապահովվել է համապատասխանաբար 146,9 և 143,9 %-ով:

Ընդ որում, արխիվի բաժինները տարեկան առաջադրանքը իրականացրել են միասին վերցրած 117,4 %-ով (79.933 գործ), իսկ առանձնացված ստորաբաժանումները՝ 179,6%-ով (99.565 գործ): Քննարկվող ոլորտում բավական ակնհայտ են Երևանի քաղաքային (21.500 գործ), Շիրակի (25.350 գործ), Գեղարքունիքի (11.922 գործ) մարզային մասնաճյուղերի և Սպիտակի (5.339 գործ), Գորիսի (2.164), Արթիկի (1.970), Նոյեմբերյանի (1.781) և Մարալիկի (1.100 գործ) տարածքային ներկայացուցչությունների ձեռքբերումները, որ կրկնակի ու ավելի անգամ գերազանցում են ծրագրված ցուցանիշները:

1.4. Հաշվետու շրջանում նիշավորվել է (պիտակավորմամբ հանդերձ) 8.947 պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթուղթ և 368.383 արխիվային գործ (կատարողականները՝ համապատասխանաբար 107,8 և 102,6%), ինչպես նաև 1.327.625-ի փոխարեն համարակալվել 1.429.038 թերթ թղթե կրիչով արխիվային փաստաթուղթ (107,6%): Արխիվային գործերի նիշավորման ու թերթերի համարակալման 2009թ. առաջադրանքները զգալի թերացումներով են իրականացրել Լոռու (համապատասխանաբար 37,3 և 41,5%), Վայոց ձորի (44,5 և 66,4%), մասնաճյուղերի համարակալման ծրագրերը նկատելիորեն թերակատարել են Աշոցքի (18,8%), Թումանյանի (30,9%), Նոյեմբերյանի (35,1%), Բերդի (56,0%), իսկ նիշավորմանը՝ Մարալիկի (6,6%), Արթիկի (36,1%), Աշոցքի (27,7%), Ճամբարակի (42,8%) ներկայացուցչությունները:

1.5. Տարվա ընթացքում համակարգի համապատասխան ստորաբաժանումներում նախատեսված 119.900-ի փոխարեն ստուգվել է 66.014 թղթե կրիչով արխիվային գործերի և 180.812 հաշվառման միավոր ֆոտոֆոնո փաստաթղթերի առկայությունն ու վիճակը (55%), ապահովագրական ֆոնդի 605.800-ի դիմաց ստուգվել և պրոֆիլակտիկ-կոնսերվացիոն մշակման է ենթարկվել 607.351 կադր միկրոպատճեն (100,2%), հատուկ խցիկում 4.000-ի փոխարեն կատարվել է 5.309 արխիվային գործերի ախտահանում (132,7%):

1.6. Արխիվապահոցներից բաժիններ, ընթերցասրահներ (օգտվողներին), լաբորատորիա, ինչպես նաև առանձին քաղաքացիների ու կազմակերպությունների (ժամանակավոր օգտագործման համար) մատակարարվել է 112.343 միավոր արխիվային գործ ու փաստաթուղթ (այդ թվում՝ լրակազմեր, գծագրեր, միկրոֆիլմեր, ԿՖՖՓ):

1.7. Սահմանված կարգին համապատասխան իրականացվել են տարվա ընթացքում արխիվ պահպանության ընդունված փաստաթղթերի և գործերի պետական (նաև՝ կենտրոնացված պետական) հաշվառման ու հաշվառման հիմնական փաստաթղթերի վարման գործընթացները:

Ըստ արխիվի կենտրոնացված պետական հաշվառման հիմնական փաստաթղթերի ամփոփ տվյալների, 2010թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի ազգային արխիվում պահպանվում է 6.580 արխիվային ֆոնդ՝ 3.455.400 արխիվային գործերով, 342.123 պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթուղթ, ապահովագրական ֆոնդի 12.263.227 կադր միկրոպատճեն և 6.728 միկրոֆիշ: 2009թ. հունվարի 1-ի համեմատությամբ արխիվային ֆոնդերի քանակն ավելացել է 189-ով, արխիվային գործերինը՝ 97.031-ով, ԿՖՖ փաստաթղթերինը՝ 8.947 պահպ. միավորով, իսկ մյուս երկու ցուցանիշները չեն փոփոխվել:

2. Տեղեկատու-որոնողական համակարգի ստեղծում և կատարելագործում

Գործունեության սույն ուղղությամբ կանխագծվել ու իրականացվել են հետևյալ աշխատանքները.

2.1. Ծրագրված 322.059 թերթի փոխարեն տարվա ընթացքում գիտատեխնիկական մշակման է ենթարկվել չկարգավորված վիճակում արխիվ պահպանության ընդունված 319.871 թերթ անձնական ծագման (99,3%) և 21.424-ի փոխարեն՝ 25.774 պահպանման միավոր արխիվային կինոֆոտոֆոնո փաստաթուղթ: Անձնական ծագման փաստաթղթերի մշակման արդյունքում ծրագրված 3.864-ի փոխարեն ձևավորվել է 3.246 մշտական պահպանության գործ:

2.2. Կատարելագործվել ու վերամշակվել են 15.652 գործավարական ու 34.000 անձնակազմին վերաբերող գործերի և 74 անվանում կինո ու 1.483 պ.մ. ֆոտոֆոնո փաստաթղթերի ցուցակներ՝ ծրագրված գրեթե նույնքան ծավալների դիմաց:

2.3. Տվյալների էլեկտրոնային շտեմարանի հագեցման, վերջինիս տեղեկատվական-որոնողական հնարավորությունների ընդլայնման նպատակով նախատեսված 42.815-ի փոխարեն կազմվել է 26.714 թղթե կրիչով և 3.244-ի փոխարեն 4.928 կինոֆոտոֆոնո փաստաթղթերի քարտ: Տարվա ընթացքում իրականացվել է ընդամենը 94.402 հատ թղթե կրիչով (այդ թվում՝ 7.024-ը նոր ծրագրով) ու 4.928 հատ կինոֆոտոֆոնո արխիվային փաստաթղթերի քարտերի մուտքագրում համակարգիչ ՝ ծրագրված համապատասխանաբար 95.923-ի ու 2.794-ի փոխարեն: Գործավարական փաստաթղթերի քարտագրման (քարտերի կազմման) ծրագիրը կատարվել է 62,4, մուտքագրմանը՝ 98,4%, իսկ՝ կինոֆոտոֆոնո փաստաթղթերինը՝ բացարձակապես կանխագծված ծավալներով:

Կատարվել է ավելի քան 2.200 էջ գործերի ցուցակների համակարգիչ մուտքագրում՝ դրանց թվային տարբերակները ստեղծելու համար:

2.4. Տարվա ընթացքում կազմվել է թղթե կրիչով փաստաթղթերի 7, ԿՖՖ փաստաթղթերի՝ 8 թեմատիկ ցանկ և ֆոնդերի 312 բնութագիր, ինչպես նաև որոշակի կազմակերպական-նախապատրաստական աշխատանքներ են տարվել արխիվի

ֆոնդերի ուղեցույցի պատրաստման ուղղությամբ:

2009թ. արխիվը որոշակի ձեռքբերումների է հասել նաև արխիվային նոր տեխնոլոգիաների ներդրման ասպարեզում: Կարևոր ձեռնարկումներից է արխիվային կինոֆոտո փաստաթղթերի թվայնացման գործընթացի աշխուժացումը. ներկա դրությամբ թվայնացված արխիվային լուսանկարների ընդհանուր քանակը հասնում է մոտ 12 հազար միավորի, իսկ ֆիլմերինը՝ 310 անվանման:

Հաշվետու ժամանակաշրջանում արխիվում ծրագրավորված աշխատանքներ են իրականացվել նոր համակարգչային ցանցի ստեղծման ու գործարկման, համակարգչային ծրագրերի փորձարկման ու կիրարկման, «Հայաստանի ազգային արխիվ» նոր արխիվային շտեմարանի ստեղծման ծրագրի ներդրման և օպերատորների ուսուցման գործընթացների կազմակերպման, «Արխիվային ֆոնդ» ծրագրի փոխարկման (կոնվերտացման), տարբեր երկրների արխիվային ծառայությունների ու միջազգային արխիվային կազմակերպությունների հետ էլեկտրոնային գրագրության վարման ասպարեզում:

Արխիվի համապատասխան ստորաբաժանման կողմից իրականացվել է ունեցած էլեկտրոնային սարքավորումների տեխնիկական սպասարկում և դրանց անխափան գործարկման ապահովում, առկա ինտերնետային կայքի տեղեկությունների շարունակական տեղադրում (ավելի քան 270 էջ), ինչպես նաև արխիվի համակարգչային ցանցում էլեկտրոնային արխիվային տեղեկատվության, գործերի ցուցակների, թեմատիկ ցանկերի, փաստաթղթերի ժողովածուների զետեղում և այլն:

3. Արխիվային փաստաթղթերի համալրում և փորձաքննությամբ արժեքավորում

Հաշվետու ժամանակաընթացքում ծրագրավորված աշխատանքներ են իրականացվել Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի (ՀՀԱՀ) և արխիվային այլ փաստաթղթերով արխիվի համալրման և դրանց փորձաքննությամբ արժեքավորման ուղղությամբ:

3.1. Համալրման աղբյուր և այլ կազմակերպություններից արխիվ պահպանության է ընդունվել 41.136 գործավարական (ծր.՝ 19.690գ.), 1.841 գիտատեխնիկական բնույթի, 50.920 անձնակազմին վերաբերող (ծր.՝ 29.714) ու 6.031 երկարաժամկետ պահպանության գործ և 181.014 թերթ անձնական ծագման (ծր.՝ 148.400 թերթ) ու 23.667պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթուղթ (այդ թվում կինո՝ 1.089, ֆոտո՝ 22.111, ֆոնո՝ 467), ինչի արդյունքում էապես մեծացել է արխիվային պահպանությունում գտնվող ՀՀԱՀ ամբողջական ծավալը, որը ներկա դրությամբ 3,8 միլիոնից փոքր-ինչ ավելին է կազմում:

3.2. Տարվա ընթացքում ծրագրված 18.197-ի փոխարեն արխիվում նպատակային փորձաքննությամբ արժեքավորման է ենթարկվել 16.821 գործավարական գործ (2.089-ը առանձնացվել է ոչնչացման) և 21.800-ի փոխարեն՝ 26.951 պահպանման միավոր ԿՖՖ փաստաթուղթ՝ թղթե կրիչով փաստաթղթերի տարեկան առաջադրանքը թերակատարվել է 1.376 գործով (92,4%), կինոֆոտոֆոնո փաստաթղթերինը՝ գերակատարվել՝ 5.464 պահպանման միավորով (123,6%):

3.3. Բնագավառի աշխատողների ուժերով իրականացվել է (պայմանագրային հիմունքով) մի քանի տասնյակ կազմակերպությունների (այդ թվում՝ ՀՀ կառավարության, ՀՀ պետական գույքի կառավարման վարչության, դատարանների, ՀԱԷԿ-ի, Սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային կենտրոնների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և այլն) արխիվային փաստաթղթերի ու գործերի կարգավորում: Արդյունքում ձևավորել, նկարագրվել ու ցուցակագրվել է ամբողջությամբ վերցրած 42.803 մշտական (ծր.՝ 20.368) ու 6.838 երկարաժամկետ պահպանության և 37.758 անձնակազմին վերաբերող (ծր. 19.694) գործ, ցուցանիշներ, որ տոկոսային արտահայտությամբ կազմում են 210,0 և 191,7%:

3.4. Հաշվետու ժամանակաշրջանում արխիվի համապատասխան ստորաբաժանման աշխատողների տեսադաշտում են գտնվել համալրման գործընթացից

դուրս մնացած նախկին կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների, գյուղխորհուրդների և լուծարված այլ կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի պահպանության ընդունման, աշխատակազմերի (կազմակերպությունների) արխիվների գործունեության ուսումնասիրությունների անցկացման, այդ արխիվներին՝ գործավարությունում փաստաթղթերի կազմակերպման, գործերի անվանացանկերի կազմման և վերջիններիս իրավասություններից ու գործառույթներից բխող համանման այլ հարցերի առնչությամբ անհրաժեշտ մեթոդական-կազմակերպական և գործնական աջակցության իրականացման խնդիրները:

3.5. Արխիվի մեթոդական-փորձագիտական և մասնաճյուղերի փորձագիտական հանձնաժողովները քննարկել և հաստատել են (կամ հավանություն են տվել) 112.148 մշտական պահպանության, անձնակազմին վերաբերող ու երկարաժամկետ պահպանության գործերի և 25.774 պ.մ. կինոֆոտոֆոնո ու 181.014 թերթ անձնական ծագման փաստաթղթերի ցուցակներ (նախնական):

4. Արխիվային փաստաթղթերի օգտագործում և հրապարակում

4.1. Հաշվետու տարում արխիվը պատասխանել է քաղաքացիներից և տարբեր կազմակերպություններից ստացված (այդ թվում՝ արտերկրից) 400 թեմատիկ և 24.354 սոցիալ-իրավական բնույթի հարցումների, որոնց գերակա մասը (համապատասխանաբար՝ 237 և 19.131) ընկնում է առանձնացված ստորաբաժանումներին, (այդ թվում՝ 178 և 9.906-ըմարզային մասնաճյուղերին, իսկ 59-ը և 9.225-ը՝ տարածքային ներկայացուցչություններին): 2009 թվականին 2008-ի համեմատ արխիվը ստացել ու պատասխանել է 3.324-ով ավելի հարցման: Տարեկան առաջադրանքները ի կատար են ածվել համապատասխանաբար 195,0 և 183,9%-ով:

Առանձնացված ստորաբաժանումներից ամենից շատ հարցումների պատասխանել են Երևանի քաղաքային ու Շիրակի մարզային մասնաճյուղերը (2.927 և 1.051) և Աբովյանի ու Արմավիրի ներկայացուցչությունները (1.469 և 662), իսկ ամենաքիչը՝ Վայոց ձորի մարզային մասնաճյուղը ու Վայքի ներկայացուցչությունը (256 և 37):

4.2. Արխիվային փաստաթղթերի ու նյութերի օգտագործմամբ համակարգի աշխատողների ուժերով պատրաստվել ու հեռարձակվել է յոթ տասնյակից ավելի ռադիո-հեռուստատեսային հաղորդում (այդ թվում՝ «Այս օրը», «Թղթապանակ համար ... » շարքերը) հրապարակվել շուրջ երկու տասնյակ լրագրային հոդված («Մեծ երգիծաբանն ու թատրոնը», «Իր ժողովրդի իսկական զավակը՝ Միեր Աբեղյան -100», «Վավերագրի վկայությամբ», «Այվազովսկին ու հայ կրթական գործը Ռուսաստանում», «Մայր թատրոնն ու Գառզուն» և այլն) ու արխիվային փաստաթղթերի 16 թեմատիկ հավաքածու («Ամենայն Հայոց բանաստեղծը՝ Վ.Թոթովենցի հուշերում», «Վարդան Աճեմյանն ու 1950-ականների թատերական Մոսկվան», «Ակսել Բակունց», «Զինվորականների կարգապահական հարցերը Առաջին հանրապետության տարիներին», «Հալեպի հայ համայնքը 1964-1985թթ.», «Թուրքիայի հայ համայնքի մամուլը» և այլն), կազմակերպվել ու անցկացվել է 6 ցուցահանդես («Կորուսյալ Կիլիկիա», «Զոն Կիրակոսյան-80»), «Արամ Մանուկյան-130», «Հայաստանի ազգային արխիվ-85»), ինչպես նաև մեկուկես տասնյակից ավելի էքսկուրսիաներ ու հանդիպումներ՝ անվանի անձանց (պետական և գիտության գործիչ Ֆադեյ Սարգսյան, կինոռեժիսոր, արվեստի վաստակավոր գործիչ Լևոն Իսահակյան, սփյուռքահայ անվանի մտավորական Երվանդ Ազատյան) և հանրապետության ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ:

4.3. Լույս են ընծայվել «Բանբեր՝ Հայաստանի արխիվների» հանդեսի 2009թ. հերթական 2 համարները, ինչպես նաև փաստաթղթերի երեք ժողովածու, մասնավորապես՝ «Արամ Մանուկյան: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու» և այլն: Տպագրության է նախապատրաստվել փաստաթղթերի երկու ժողովածու, ընթացքում է ծրագրային մյուս 3 ժողովածուների պատրաստման գործընթացը:

4.4. 2009թ-ին արխիվն ունեցել է 416 օգտվող այդ թվում բաժիններ՝ 332, մասնաճյուղեր՝ 21, ներկայացուցչություններ՝ 63, որոնց արխիվի պահոցներից օգ-

տագործման է տրամադրվել (ընթերցասրահների միջոցով) 16.550 արխիվային գործ, 207 լրակազմ, 44 գծագիր, 250 բյուքս միկրոպատճեն: Տարվա ընթացքում հեռուստահաղորդումների թողարկման, ցուցադրման նպատակով ԿՖՖՓ և ԱՊ մասնաճյուղի պահոցներից 38 ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամանակավոր օգտագործման է տրամադրվել 562 պահպանման միավոր արխիվային կինոֆոտոֆոնո (համապատասխանաբար՝ 320,134 և 8) փաստաթուղթ:

5. Միջազգային համագործակցություն

5.1. 2009թ. նախապատրաստվել է համագործակցության երկկողմ համաձայնագիր Հայաստանի ազգային արխիվի և Եգիպտոսի ազգային արխիվի միջև:

5.2. Հաշվետու ժամանակամիջոցում իրականացվել են աշխատանքներ ու միջոցառումներ՝ նպատակաուղղված ԱՊՀ մասնակից երկրների պետական արխիվային ծառայությունների հետ Հայաստանի ազգային արխիվի համագործակցության զարգացմանն ու կապերի ամրապնդմանը:

Հայաստանի ազգային արխիվի նախաձեռնությամբ ու գործուն մասնակցությամբ 2009թ. հոկտեմբերի 29-30-ը Երևանում կազմակերպվել ու անցկացվել են ԱՊՀ անդամ պետությունների արխիվային ծառայությունների ղեկավարների խորհրդատվական խորհրդի նիստը, Արխիվների միջազգային խորհրդի (ԱՄԽ) Եվրասիական տարածաշրջանային բաժանմունքի («Եվրասիկա») հերթական 10-րդ համաժողովը, արխիվային փաստաթղթերի պահպանության ապահովման ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման, ինչպես նաև ԿՖՖ փաստաթղթերի պահպանության ապահովման ու օգտագործման խնդիրներին նվիրված միջազգային գիտաժողովները, Հայաստանի ազգային արխիվի հիմնադրման 85-ամյակին նվիրված միջոցառումներ, ինչի կապակցությամբ Երևան էին ժամանել Բելոռուսի, Լատվիայի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի Դաշնության, Ուզբեկստանի և Ուկրաինայի արխիվագետների պատվիրակությունները:

5.3. 2009թ. ընթացքում արխիվի տնօրենի տեղակալ Ս.Միրզոյանը մասնակցել է 2009թ. հունիսի 6-9-ը ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում «Արարատ» հայկական մշակութային-լուսավորական ընկերության նախաձեռնությամբ անցկացված Լազարևյան չորրորդ ընթերցումներին՝ հանդես գալով «Կտակները որպես Ռուսաստանի հայերի ծագումնաբանության աղբյուր» թեմայով զեկուցմամբ:

Ավտոմատացված արխիվային տեխնոլոգիաների ներդրման բաժանմունքի վարիչ Ինգա Զաղեթյանը ներկայացրել է Հայաստանի ազգային արխիվը 2009-ի հոկտեմբերի 13-16-ը Մոսկվայում ՌԴ արխիվային գործակալության նախաձեռնությամբ կազմակերպված էլեկտրոնային փաստաթղթերի պահպանության խնդիրներին նվիրված միջազգային ուսուցողական սեմինարին:

5.4. Արխիվի տնօրեն, ԱՄԽ «Եվրասիկա» տարածաշրջանային բաժանմունքի նախագահի և խորհրդի գործադիր կոմիտեի անդամ Ա.Վիրաբյանը մասնակցել է 2009թ. նոյեմբերի 17-21-ը Սենտ-Ջուլիանսում (Մալթա) տեղի ունեցած Արխիվների միջազգային խորհրդի վեհաժողովին ու «Պատկերացում 21-րդ դարի արխիվագետի մասին. նոր կրթական ռազմավարություն» թեմայով 41-րդ միջազգային գիտաժողովին, իսկ այնուհետ՝ նոյեմբերի 24-26-ը, Փարիզում Եվրամիության 2007-2013թթ. մշակութային ծրագրերի շրջանակներում անցկացված «Հայկական արժեքներ. պահպանության և արժևորման ռազմավարություն» թեմայով միջազգային գիտաժողովին, որի աշխատանքներին մասնակցելու հրավեր էին ստացել ինչպես Հայաստանի, այնպես էլ մի շարք այլ երկրների ճանաչված հայագետներ, պատմաբաններ, մշակութաբաններ:

6. Կազմակերպական միջոցառումներ

6.1. Տարեկան աշխատանքային ծրագրին համապատասխան՝ կազմակերպվել ու իրականացվել են.

- արխիվի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների 2010թ. գործունեության ծրագրավորման ու հաշվետու տարվա կատարողական արդյունքների ամփոփման գործընթացը.

- արխիվի ՄՓՀ-ի և մարզային մասնաճյուղերի փորձագիտական հանձնաժողովների աշխատանքը,

- Հայաստանի ազգային արխիվի հիմնադրման 85-ամյա տարելիցի հանդիսության կապակցությամբ միջոցառումների (հանդիսավոր նիստ, ցուցադրություն, պարգևատրություն և այլն) նախապատրաստումն ու անցկացումը,

- արխիվի կառուցվածքային ստորաբաժանումների 2008թ. հիմնական ցուցանիշների գծով ծրագրային առաջադրանքների կատարողականների ընթացիկ և ՀԱԱ Արագածոտնի, Տավուշի, Վայոց ձորի մարզային մասնաճյուղերի ու այդ մարզերի տարածքային ներկայացուցչությունների 2006-2008թթ. գործունեության համալիր ստուգումների անցկացումը և արդյունքների վերաբերյալ համապատասխան ամփոփիչ փաստաթղթերի կազմումը,

- երիտասարդ կադրերի ուսուցման և արխիվագիտական (մասնագիտական) որակավորման ու ընդհանուր հանրակրթական մակարդակի բարձրացման պարապմունքների անցկացումը, համակարգի աշխատողների ատեստավորման անցկացման գործընթացի նախապատրաստումը (կանոնակարգի, հարցաշարերի կազմում և այլն):

7. Ֆինանսատնտեսական գործունեություն

7.1. 2009թ. Հայաստանի ազգային արխիվի՝ պետբյուջեից ստացված սուբսիդիաները կազմել են 308050,2 հազար դրամ, որը ծախսվել է համաձայն նախահաշվի՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների, այդ թվում 219470,0 հազար դրամը՝ աշխատավարձ, 49339,3 հազար դրամը՝ պարտադիր սոցվճարներ, 28528,6 հազար դրամը՝ այլ ծառայություններ, 10712,3 հազար դրամը՝ հարկեր:

7.2. 2009թ. պետբյուջեի ֆինանսավորմամբ (42 միլիոն դրամ) արխիվի գլխավոր մասնաշենքի պահոցներում տեղադրվել է օդաորակման նոր համակարգ, ձեռնարկատիրական գործունեության միջոցների հաշվին ընթացիկ և հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել արխիվի N 2 մասնաշենքում (փոխվել են ջրամատակարարման համակարգը, վերանորոգվել են սանհանգույցները, ապահովագրական պատճենների մասնաճյուղում վերականգնվել է փոքրիկի պատճառով ավերված տանիքը, հիմնովին վերանորոգվել են Արարատի և Արագածոտնի մարզային մասնաճյուղերի զբաղեցրած շինությունները, փոխվել են Թալինի ներկայացուցչության զբաղեցրած շինության լուսամուտները:

7.3. ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 26-ի N 707-Ա որոշմամբ համայնքային սեփականություն հանդիսացող Ապարանի, Ծաղկահովիտի, Թալինի, Մարտունու, Սևանի, Սպիտակի, Ստեփանավանի, Եղվարդի, Մարալիկի, Աշոցքի, Ջերմուկի, Նոյեմբերյանի, Բերդի ներկայացուցչությունների զբաղեցրած տարածքների համար կնքվել են անհատույց օգտագործման պայմանագրեր:

Կազմակերպական-մեթոդական
աշխատանքների և համալրման բաժին

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

2010թ. մարտի 30-ին, Հայաստանի ազգային արխիվի ցուցասրահում, տեղի ունեցավ ազգային արխիվի և Հայաստանի պատմության թանգարանի կազմակերպած «Հայրենական մեծ պատերազմի տարիների պլակատները» համատեղ ցուցադրության հանդիսավոր բացման արարողությունը: Այն նվիրված էր Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-ամյակին:

Ցուցադրության բացմանը ներկա էին ՀՀ մշակույթի նախարար Հ. Պողոսյանը, պատերազմի վետերանների խորհրդի նախագահ Հ.Հովհաննիսյանը, հանրապետության զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, Հայաստանի պատմության թանգարանի և ազգային արխիվի աշխատակիցներ, այլ հյուրեր:

Բացման խոսքում, ՀԱԱ տնօրեն Ա.Վիրաբյանը նշեց, որ փաստորեն, այս ցուցահանդեսով Հայաստանում մեկնարկվում են Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-ամյակին նվիրված միջոցառումները: Իր տեսակի մեջ յուրատեսակ այս ցուցադրությունն առաջինն է, բայց ոչ վերջինը: Հաջորդ անգամ կցուցադրվեն փաստաթղթեր, լուսանկարներ, հուշեր, շքանշաններ և այլ նյութեր, այսինքն այն ինչ բնորոշ է արխիվային փաստաթղթերի ցուցադրություններին: Մայիս ամսվա սկզբներին բացվելիք ցուցահանդեսում կլուսաբանվի հայ ժողովրդի մասնակցությունը, այդ թվում նաև սփյուռքահայության, երկրորդ համաշխարհային պատերազմին:

Ա.Վիրաբյանը նշեց նաև, որ ներկայացված պլակատները բացառապես բնագրեր են և շատերը ցուցադրվում են առաջին անգամ: Դրանցից յուրաքանչյուրը ստեղծվել է ռազմական իրադարձությունների հիման վրա և հստակ արտացոլում է պատերազմի ողջ ընթացքը: Հաղթանակի գործում իր ներդրումն է ունեցել նաև ցուցադրական քարոզչությունը:

ՀՀ մշակույթի նախարար Հ.Պողոսյանը ևս բարձր գնահատեց ցուցադրական քարոզչության դերը հաղթանակի կերտման գործում, նշելով ներկա ցուցադրության ինքնատիպությունը:

Պատերազմի վետերանների խորհրդի նախագահ, գնդապետ Հր.Հովհաննիսյանը, ով երկար տարիներ աշխատել է հանրապետության արխիվային համակարգում, շեշտեց ծաղրանկարների գործուն նշանակությունը բարոյա-հոգեբանական հաղթանակի գործում: Հաղթել կարող է նա, ով ծիծաղել գիտի: Նա նշեց նաև, որ ինքն անձամբ ծանոթ է եղել ժամանակի տաղանդավոր ծաղրանկարիչներից շատերի հետ, որոնց ծաղրանկարները ներկայացված են ցուցասրահում: Սերգեյ Արուտչյանի, Աշոտ Սամաջանյանի, Շավարշ Հովհաննիսյանի, Լևոն Գենչի (Գենչողլյան), Շահրազի, Սեդրակ Ռազմամյանի գործերը, որ մինչև օրս պահպանել են իրենց վառ գույները, մեծ հետաքրքրություն առաջացրեցին ու ժպիտներ պարգևեցին ներկաներին, իսկ Իրակլի Տոյձեի «Родина мать зовет», Սուրյանինովի «Փառք հայ ժողովրդի քաջ մարտիկներին, Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին», «Ամեն մի բուռ հատիկը թանկ, պետք է ինչպես ռումբ ու գնդակ», «Ֆաշիստների դեմ կռվող անվեհեր մեր մարտիկներին տանք ձմռան շորեր» և նմանօրինակ վերտառություններով պլակատները, ներկաներին մտովին տեղափոխեցին պատերազմի դժնդակ տարիները:

*
* *

2010թ. ապրիլի 23-ին, Հայաստանի ազգային արխիվի ցուցադրությունների սրահում, տեղի ունեցավ 20-րդ դարասկզբին մարդկության դեմ գործված մեծագույն ոճրի՝ Հայոց Մեծ եղեռնի 95-րդ տարելիցին նվիրված փաստաթղթերի և լուսանկարների ցուցադրության հանդիսավոր բացում: Ներկա էին ՀՀ փոխվար-

չապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանը, ՀՀ Սփյուռքի նախարար Հ.Հակոբյանը, ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Ա.Կիրակոսյանը, Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հ.Դեմոյանը, մտավորականներ, հանրապետության զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, արխիվագետներ, այլ հյուրեր:

Բացման խոսքով հանդես եկավ ՀԱԱ տնօրեն Ա.Վիրաբյանը: Նա կարևորեց այս ցուցադրությունը, որպես աշխարհի զանազան ծայրերում ու Հայաստանում այս օրերին անցկացվող հիշատակի արարողություններից մեկը, որ հավաստում է պատմական արդարության հասնելու հայերի կամքը, նաև հոգու պարտքը: Ցեղասպանության լուռ, բայց անհերքելի վկա բազմաթիվ փաստաթղթերից, այսօրվա դրությամբ, էլեկտրոնային շտեմարան են ներառվել 12.000-ը: 1000-ավոր լուսանկարներից ցուցադրվել են մի փոքր մասը միայն:

Առաջիկայում հրատարակության են պատրաստվելու 750 հայկական գյուղերի կոտորածների մասին փաստաթղթերը և նյութերը: Մինչև 2015 թվականն այն պիտի ներկայացվի նաև աշխարհի տարբեր լեզուներով: Ինչ վերաբերում է Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի նշման համազգային ծրագրերին, ապա Հայաստանի ազգային արխիվն ամենագործուն մասնակցությունն է ունենալու կայանալիք միջոցառումներին:

Ա.Վիրաբյանը տեղեկացրեց, որ ներկայիս ցուցադրությունը, թվայնացվելուց հետո, տեղադրվելու է համացանցում:

Օգտվելով հանրապետության ԶԼՄ-ների ներկայացուցիչների ներկայությունից, Ա.Վիրաբյանը դիմեց հանրապետության և նրա սահմաններից դուրս հայ բնակչությանը, հորդորելով վերջիններիս իրենց ունեցած Հայոց Ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերը (թեկուզ պատճենների ձևով) հանձնել Հայաստանի ազգային արխիվին:

ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Ա.Կիրակոսյանը բարձր գնահատեց արխիվագետների կատարած աշխատանքը: Նա կարևորեց ցուցադրությունը ոչ միայն Հայոց Ցեղասպանության 95-րդ տարելիցի նախօրյակին, այլև այս օրերին տեղի ունեցող քաղաքական գործընթացների համատեքստում: Փաստաթղթերի, նյութերի և լուսանկարների նմանօրինակ ցուցահանդեսի բացումը ևս մեկ անգամ ապացուցում է, որ հայկական արխիվները բաց են ու հասանելի հանրության տարբեր շերտերի ու նաև օտարազգի մասնագետների համար:

Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հ. Դեմոյանը, որ երկու շաբաթ առաջ մասնակցել էր ԱՄՆ-ում կայացած Հայոց Ցեղասպանության հիմնախնդիրներին նիրված միջազգային համաժողովին, արժեվորեց ցուցադրությունը, որպես վավերագիր լուրջ փաստարկների առկայության հավաստում և նշեց, որ այն ոչ միայն նեղ մասնագետների, գիտնականների, պատմաբանների համար է, այլև, որ շատ կարևոր է, հասարակության լայն շրջանակների համար: Ցուցադրությունը նաև փաստացի հերքումն է վերոհիշյալ գիտաժողովի այն թուրք մասնակիցների հայտարարության, թե հայկական արխիվները փակ են և անմատչելի:

Այնուհետև ներկաները ծանոթացան ներկայացված բազմաբնույթ փաստաթղթերին՝ տեղեկագրեր, գաղթականների ցուցակներ, կոտորածներից փրկվածների անվանացուցակներ, զեկուցագրեր, հեռագրեր, հիշատակագրեր, ականատեսների վկայություններ, «Армянский вестник»-ի օրինակներ:

Էրզրումի, Երզնկայի, Կիլիկիայի քաղաքների, որբանոցների սաների, Մեծ Եղեռնի ժամանակ նահատակված մտավորականների, Վանի ապրիլյան հերոսամարտերի, Օսմանյան Թուրքիայում 1913-1916թթ. ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաունի, Յոհաննես Լեփսիուսի, Ռոբերտ Սեսիլի և այլոց լուսանկարները, ինչպես նաև կոտորածների սահմռկեցուցիչ տեսարանների լուսանկարները չեն կարող անտարբեր թողնել ցուցահանդեսի այցելուներից և ոչ մեկին: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև հայերի տեղահանությունների և զանգվածային կոտորածների (1915-1916թթ.), Վանի ապրիլյան հերոսամարտի և այլ քարտեզները:

Հիմնականում առաջին անգամ ցուցադրվող վավերագրերը կարծես հաստատում են եղեռն վերապրած հայ գրողներից Հրաչյա Քոչարի այն խոսքերը, թե «Հայ ժողովուրդը երբեք հիշաչար չի եղել և երբեք մոռացկոտ չի լինի…»:

*

* *

2010թ. մայիսի 7-ին, Հայաստանի ազգային արխիվի ցուցասրահում, մեծ հանդիսավորությամբ բացվեց Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-ամյակին նվիրված փաստաթղթերի, նյութերի և լուսանկարների ցուցահանդես: Ներկա էին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Ս.Օհանյանը, պատերազմի մասնակից վետերաններ, մտավորականներ, հանրապետության զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, արխիվագետներ:

Բացման խոսքով հանդես եկավ ՀԱԱ տնօրեն Ա.Վիրաբյանը. «Այսօր նախկին Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում մեծ շուքով նշվում է Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-ամյակը: Ֆաշիզմի դեմ հաղթանակը նշում է համաշխարհային հանրությունը:

Ռազմաճակատ մեկնած ավելի քան 500.000 հայ ռազմիկներից 200-250.000-ը չվերադարձան: Նրանցից 100-ը արժանացան Խորհրդային Միության հերոսի բարձրագույն կոչման: Գործող բանակն ուներ 80-ից ավել հայազգի գեներալներ, բարձրաստիճան զինվորականներ: Իսկ ազգային դիվիզիաներից հայկական Թամանյան 89-րդ դիվիզան միակն էր, որ մասնակցեց Բեռլինի գրավմանը: Անհնար է չհիշատակել Սփյուռքի հայերին և հատկապես Միսաք Մանուշյանի մասնակցությամբ Դիմադրական շարժումը:

Սակայն դժվար էր ոչ միայն ռազմաճակատում, այլև թիկունքում: Ցուցադրված հացի քարտերը՝ աշխատողներին օրը 400, չաշխատողներին՝ 200գ., շաքար՝ ամիսը 200գ, պատկերացում են տալիս մարդկանց կիսասոված վիճակի մասին ու չնայած դրան՝ նրանք ամեն ինչ անում էին բաղձալի հաղթանակի օրը մոտեցնելու համար:

Հայ ժողովուրդը քաջ գիտակցում էր, որ ֆաշիզմի հաղթանակը կնշանակեր նոր 1915 թվականի իրական վտանգ:

Հաղթանակի 65-ամյակի նախօրյակին կազմակերպված այս ցուցադրությունը մեկ անգամ ևս վկայում է, որ մեզ համար թանկ է անցյալի հիշողությունը և որքան էլ որ հեռանում է 1945 թվականի մայիսի 9-ը, մենք առաջվա պես հիշում և հիշելու ենք, թե ինչ գնով է այն հաջողվել մեր պապերին ու հայրերին: Փառք ու պատիվ նրանց»:

Իր խոսքում ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանը նախ ողջունեց ու շնորհավորեց բոլոր ներկաներին՝ Հաղթանակի տոնի առթիվ, ապա շեշտեց ՀԱԱ կազմակերպած ցուցադրության կարևորությունը: «Այն Հաղթանակի 65-ամյակին նվիրված պետականորեն նշվող միջոցառումների շրջանակում իր յուրահատուկ և կարևոր տեղն ունի: Շատ կարևոր է հասարակությանը ճիշտ ներկայացնել 65 տարի առաջ տարած հաղթանակը, մի բան, որ պատվախնդրորեն արել են ազգային արխիվի աշխատակիցները: Ազատ արարումների հիմք դարձած այդ հաղթանակի կերտման գործում մեծ դերակատարություն ունեցավ հայ ժողովուրդը: Մեր կողքին այսօր կենդանի լեգենդներ են, նրանցից մեկը գնդապետ Սերգեյ Լևոնի Միրզոյանն է: Նրա կուրծքը զարդարում են մարտական սխրանքների մասին վկայող բազմաթիվ մեդալներ և Կարմիր աստղի երկու շքանշան: Հայրենական մեծ պատերազմի մասնակից վետերաններն են իրենց փառապանծ անցյալով օրինակ ծառայել ու ոգևորել մեր սերնդակիցներին՝ Արցախյան գոյամարտի թեժ օրերին:

Մայիսի 9-ը հայ ժողովրդի համար եռակի տոնի խորհուրդ ունի՝ Հայրենական մեծ պատերազմ, Շուշիի ազատագրում, Ազգային բանակի ձևավորում և կայացում»:

Այնուհետև ներկաները ծանոթացան ներկայացված արխիվային փաստաթղթերին, որոնց հիմնական մասը ցուցադրված էր առաջին անգամ: Ուկրաինայում և Բելոռուսիայում հայկական պարտիզանական ջոկատների տեղաշարժերի սխեմաներ, 76-րդ հայկական լեռնահրաձգային դիվիզիայի սպաների անվանացուցակ, մարտիկների անձնական թերթիկներ, մարտական այլ փաստաթղթեր, ռազմաճակատային նամակներ, պարգևատրումների վկայագրեր, շնորհակալագրեր, շնորհավորագրեր, հուշեր, զեկուցագրեր, հրամանագրեր, պաշտոնական գրագրություններ: Հայազգի փառապանծ զինվորականների՝ մարշալներ Հովհաննես Բաղրամյանի, Արմենակ Խամփերյանցի (Սերգեյ Խուդյակով), ծովակալ Հովհաննես Իսակովի, գեներալներ՝ Հայկ Մարտիրոսյանի, Սարգիս Մարտիրոսյանի, Արտավազդ Սաղոյանի, Խորհրդային Միության այլ հերոսների՝ Նելսոն Ստեփանյանի, Հունան Ավետիսյանի ու էլի շատերի, շարքային զինվորների անհատական և խմբակային լուսանկարները, ևս մի անգամ հպարտության ու հուզմունքի պահեր պարգևեցին ներկաներին:

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2010 թվականի հունվարի 13-ին, աշխատանքային այցով Հայաստանի ազգային արխիվում էին ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա.Գևորգյանը և նրան ուղեկցող անձինք: Տեղի ունեցավ խորհրդակցություն, որին մասնակցում էին ՀԱԱ փոխտնօրենները, բաժինների վարիչները, պատասխանատու այլ աշխատողներ:

Ողջունելով ներկաներին, նախարարը շնորհավորեց նրանց՝ Ամանորի և Սուրբ Ծննդի տոների առիթով և մաղթեց առողջություն, հաջողություններ: «Ես առաջին անգամը չէ, որ ազգային արխիվում եմ, բայց առաջին անգամն է, որ նման հանդիպում է տեղի ունենում և ես հույս ունեմ, որ այս նախաձեռնությունը կդառնա ավանդույթ»:

2009 թվականի աշխատանքային ծրագրերի կատարման և 2010 թվականին նախատեսված հիմնական աշխատատեսակների ամփոփ հաշվետվությամբ հանդես եկավ ՀԱԱ տնօրեն Ա.Վիրաբյանը: Հիմնական շեշտադրումներ կատարվեցին ՀԱԱ այն գործառույթների վրա, որոնք հասարակական հնչեղություն ունեն: Այսպես՝ 2009 թվականի ընթացքում ազգային արխիվն ունեցել է 25.540 սոցիալիրավական բնույթի հարցում, որից բացասական ելքով՝ մոտ 2.000-ը, այս վերջին դեպքում քաղաքացիները ստացել են խորհրդատվական օգնություն: Բազմաթիվ հրապարակումներ, ռադիո-հեռուստահաղորդումներ են կազմակերպվել, ընդ որում, արդեն մի քանի տարի է «Երկիր Մեդիա» հեռուստաալիքով եթեր են հեռարձակվում «Այսօր» ամենօրյա հաղորդաշարը, հանրային ռադիոյով՝ ամենշաբաթյա «Թղթապանակ N..., պատմում են Հայաստանի ազգային արխիվի վավերագրերը» խորագրով հաղորդումները:

Փաստաթղթերի ժողովածուների հրապարակումները ՀԱԱ գործունեության կարևոր օղակն են: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այսուհետ, ՀԱԱ-ն մշտապես արձագանքելու է պատմա-մշակութային կարևոր իրադարձություններին, հոբելյանական տարելիցներին (ցուցահանդեսներ՝ նաև արտագնա, փաստագրական ֆիլմերի ցուցադրություններ, գիտաժողովներ, հրապարակումներ):

Ընթացքի մեջ են մարզային մասնաճյուղերի շենք-շինությունների սեփականաշնորհման, անհատույց, անժամկետ կամ վարձակալությամբ օգտագործման տալու գործընթացները:

Ա.Վիրաբյանն անդրադարձավ էլեկտրոնային փաստաթղթերի արխիվացման խնդրին, որի լուծման առաջնային նախապայման է նոր ծրագրի ներդրումը, որը ֆինանսական հատկացումներ է պահանջում: Առաջնային է նաև արխիվային փաստաթղթերի երկարակեցությունն ապահովող օդորակման համակարգի ներդրման աշխատանքներն ավարտին հասցնելու խնդիրը:

Օրախնդիր է արխիվապահոցների ծանրաբեռնվածությունը, որի լուծման հնարավոր տարբերակներից է տեխնիկական հարկերի վերակառուցումը արխի-

վապահոցների: Եթե առաջին դեպքում ՀԱԱ-ն պատրաստ է աշխատանքներն իրականացնել սեփական միջոցներով, ապա արխիվապահոցների վերակառուցման համար, Ա.Վիրաբյանը խնդրեց փոխվարչապետին` միջոցներ հատկացնել կառավարության պահուստային ֆոնդից:

Այնուհետև խորհրդակցության մասնակիցները խոսեցին իրենց հուզող հարցերի մասին: Առաջ քաշած որոշ հարցերի առնչությամբ նախարարն ուներ իր նկատառումները, որոշ հարցերի լուծմանը խոստացավ միջամտել:

Հանդիպման ավարտին, Ա. Գևորգյանը նշեց, որ ինքը բոլոր հիմքերն ունի Հայաստանի ազգային արխիվի աշխատանքը բավարար գնահատելու: Նա նաև հավելեց, որ 2010 թվականին, պետական միջոցների նպատակային օգտագործման իրական պատկերը պարզելու նպատակով, ՀՀ վերահսկիչ պալատը ֆինանսատնտեսական ստուգումներ է իրականացնելու: Նախարարը հույս հայտնեց, որ ՀԱԱ-ն պատվով դուրս կգա այդ ստուգումներից: Ինչ վերաբերում է ՀԱԱ գործունեությանն ընդհանրապես ապա ինչպես նախորդ, այնպես էլ այս տարին, բացառություն չի լինի և ՀԱԱ-ն կշարունակի իր պատասխանատու, ազգօգուտ աշխատանքը:

«Մեթոդական խնդիրների լուծման ուղիները արխիվագետներն ավելի լավ գիտեն, իսկ ինչ վերաբերում է ընթացիկ հարցերին, ապա դրանք էլ կլուծվեն», հավաստիացրեց նախարարը և խոստացավ, որ այսուհետ տարին առնվազն երկու անգամ, ինքն անձամբ կլինի տարածքային կառավարման նախարարության ենթակայությամբ գործող Հայաստանի ազգային արխիվում:

*

*　　*

2010թ. փետրվարի 8-ին, տեղի ունեցավ Հայաստանի ազգային արխիվի գիտական խորհրդի ընդլայնված նիստ, որին մասնակցում էին ՀԱԱ տնօրենի տեղակալները, բաժինների վարիչները և պատասխանատու այլ աշխատողներ:

Բացելով նիստը, ՀԱԱ տնօրեն Ա.Վիրաբյանը հակիրճ ամփոփեց 2009 թվականի ծրագրով նախատեսված աշխատանքների արդյունքները, կատարվածը գնահատելով ավելի քան բավարար: Արդյունավետ աշխատանքի գլխավոր նախապայման է ծրագրերի իրատեսական լինելու հանգամանքը, ինչին պետք է հետամուտ լինել նաև այսուհետ:

ՀԱԱ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների գործունեության կազմակերպման հետագա բարելավման, արխիվի առջև ծառացած խնդիրների նպատակային լուծման, ՀՀ արխիվային գործի զարգացման 2010թ. ծրագրի անվերապահ իրականացման ապահովման համար, ՀԱԱ ստորաբաժանումների 2009թ. ձեռքբերումների ու բացթողումների վերլուծության արդյունքների հիման վրա ընդունվեց համապատասխան որոշում: 2010թ. մարտ ամսին կանցկացվի ՀԱԱ աշխատողների ատեստավորում: Ատեստավորման անցկացման կարգի մասին իրենց ունեցած նկատառումների և վերապահումների մասին արտահայտվեցին բաժինների վարիչները:

Այնուհետև, ՀԱԱ տնօրենը մեկ անգամ ևս անդրադարձավ այն խնդիրներին, որոնց լուծման գործում թեպետ տեղաշարժեր կան, սակայն դրանք հեռու են բավարար լինելուց: Լուրջ խնդիրներ կան մարզերում` հատկապես համապատասխան մասնագետներ ունենալու հարցում: Դրությունից դուրս գալու միակ ելքը ՀԱԱ տնօրենը տեսնում է դասընթացների կազմակերպման, ինչպես նաև տեղերում համապատասխան գործնական ու մեթոդական աշխատանքներ իրականացնելու մեջ: Որակյալ կադրեր ունենալու ցավոտ խնդիրը պետք է լուծել դեռևս 2009 թվականին սկսված դասընթացները 2010-ին շարունակելու միջոցով:

Տեղեկատու-որոնողական համակարգի կատարելագործումը ժամանակի թելադրանքով է պարտադրված, մանավանդ եթե հաշվի առնենք, որ 2012 թվականին, համաձայն ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության` պետական մարմինների փաստաթղթերը շրջանառվելու են էլեկտրոնային տարբերակով`

իրականացվելու է կառավարում:

ՀԱԱ տնօրենը կարևորեց ազգային արխիվի հեղինակության բարձրացմանը միտված բոլոր գործառույթները, խոսքը հատկապես վերաբերում է քաղաքացիների հարցումների կատարմանը և ընթերցասրահում ուսումնասիրողների աշխատանքների կազմակերպմանը: Այս առումով, մինչև օրս, որևէ բացթողում կամ դժգոհություն չի եղել: Այս գործելակերպը կշարունակվի նաև սրանից հետո:

ՀԱԱ տնօրենը խոսեց նաև ծրագրված այն կարևոր միջոցառումների, շնորհանդեսների, գիտահրատարակչական աշխատանքների մասին, որոնք իրականացնելու համար կպահանջվի լարված, արդյունավետ ու պատասխանատվության բարձր զգացումով աշխատանք: Նիստի մասնակիցները հավաստիացրեցին, որ աշխատելու են իրականացնել 2010 թվականի ծրագիրը և պատրաստակամ են լուծել արխիվի առջև ծառացած բոլոր խնդիրները:

*

* *

2010թ. փետրվարի 19-ին, ՀԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Արամ Մանուկյան» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի շնորհանդեսը: Ներկա էին գիտության, մշակույթի, քաղաքական ճանաչված գործիչներ, արխիվագետներ, հանրապետության զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Ողջունելով ներկաներին, ՀԱԱ տնօրեն Ա.Վիրաբյանն առաջնահերթ նշեց, որ գրքի հրատարակությունն իրականացվել է Արամ Մանուկյանի 130-ամյակի նշումը նախապատրաստող հոբելյանական հանձնաժողովի որոշմամբ՝ պետական ֆինանսավորմամբ: Գրքի գլխավոր խմբագիրն ու կազմողը Ամատունի Վիրաբյանն է (պատմական գիտությունների դոկտոր), կազմողները՝ Գոհար Ավագյանը (պատմական գիտությունների թեկնածու, ՀԱԱ բաժնի վարիչ), Մարո Ավետիսյանը (ՀԱԱ գլխավոր արխիվագետ): Առաջաբանի հեղինակն է պատմ. գիտ. թեկնածու Արմեն Ասրյանը: Վերջինս 2009 թվականին լույս տեսած «Արամ Մանուկյան, կյանքը և գործը» գրքի հեղինակն է:

«Արամ Մանուկյան» փաստաթղթերի և նյութերի ժողովածուում ներկայացված են ինչպես արխիվներում պահպանվող, այնպես էլ ժամանակի մամուլում հրապարակված վավերագրեր՝ 20-րդ դարասկզբի հայոց ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ, Վանի ինքնապաշտպանության ղեկավար, մայիսյան հերոսամարտերի կազմակերպիչ, Հայաստանի Հանրապետության կերտող Արամ Մանուկյանի կյանքի և գործունեության մասին: Կատարված է հսկայական և բարեխիղճ աշխատանք՝ փաստաթղթերի հայտնաբերման առումով, չի բացառվում սակայն, որ ժամանակի ընթացքում նորանոր փաստաթղթեր ի հայտ գան: Գրքի մեկական օրինակ տրամադրվելու է հանրապետությունում ու նրա սահմաններից դուրս (սփյուռք, ԼՂՀ) գործող գրադարաններին, կառավարման պետական մարմիններին, գիտական հիմնարկներին, բուհերին:

Պետք է գիտակցել մի բան՝ չլիներ Արամ Մանուկյանը, հայոց պատմությունը կարող էր այլ ընթացք ունենալ…» այսպես ամփոփեց իր բացման խոսքը Ա.Վիրաբյանը:

Արամ Մանուկյանի գիտական կենսագրության հեղինակ Արմեն Ասրյանի թեկնածուական ատենախոսության թեման էլ է նվիրված եղել Արամ Մանուկյանին. «Արամ Մանուկյանի կյանքն ամբողջական նվիրում էր հայ ժողովրդին, նրա ազատության և անկախ պետականության վերականգնման համար մղվող պայքարին: Ամենուր, որտեղ էլ, որ գործեց, Արամ Մանուկյանն աչքի ընկավ քաղաքական հասունությամբ և հեռատեսությամբ, կազմակերպչական բացառիկ ձիրքով, աննշահախնդիր վարքով, անկոտրում կամքով, իրատեսությամբ և մեծագույն պատասխանատվությամբ իր ժողովրդի ճակատագրի նկատմամբ»:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Վլ.Բարխուդարյանը գնահատանքի խոսք ասաց, շեշտելով այն կարևոր հանգամանքը, որ Հայաստանի ազգային արխիվն այսօր այնպիսի գիտական կոլեկտիվ է, որ իր ուժերով ի զորու է հրատարակել

գիտական արժեք ունեցող փաստաթղթերի և նյութերի ժողովածու, որպիսին «Արամ Մանուկյանն» է: Խոսքը վերաբերում է նաև ժողովածուի գիտա-տեղեկատու համակարգին, որ ներկայացված է ծանոթագրություններով, անվանացանկով և տեղանունների ցանկով:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Ա.Մելքոնյանը, կարևորելով ՀԱԱ կատարած աշխատանքը, ևս մեկ անգամ նշեց, որ Արամ Մանուկյանը ողջ հայ ժողովրդինն է՝ համահայկական երևույթ և որ նրա լայնախոհ կերպարը գնահատելիս, պետք է ձերբազատվել նրան կուսակցականացնելուց:

ՀՀ պաշտպանության նախարարության Ռազմական փառքի թանգարանի տնօրեն Ա.Հարությունյանը, որ երկար տարիներ աշխատել է ազգային արխիվում, շնորհավորեց իր գործընկերներին և մաղթեց բեղուն հրատարակչական գործունեություն: ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հ.Մարգարյանը Արամ Մանուկյանին բնորոշեց որպես քաղաքական գործչի խորհրդանիշ, Հանրապետության վեմ: Խոսելով նախկինում էլ սփյուռքի կուսակցականացված անցանկալի մթնոլորտից, Հ.Մարգարյանը երևույթը բացատրեց պետականություն չունենալու իրողությամբ, բայց մեր օրերում այլ է՝ պետականությունը բարձրագույն արժեք է՝ այս գիտակցությամբ պետք է ապրի մեզնից յուրաքանչյուրը, այդ գիտակցությամբ ապրեց Արամ Մանուկյանը և իր ողջ կյանքը նվիրաբերում էր Հայաստանի Հանրապետության կայացմանը:

Պատմական գիտությունների թեկնածու Ռ.Սահակյանը սերում է տոհմիկ վանեցիների գերդաստանից և դեռ մանկուց լսել է Արամ Մանուկյանի անունը: Նա համոզմունք հայտնեց, որ ՀԱԱ հրատարակած ժողովածուն հնարավորություն կտա ավելի լավ ճանաչել Արամ Մանուկյանին, որի կարճատև կյանքը բոլորանվեր նվիրաբերում էր իր Հայրենիքին ու իր ժողովրդին:

Միջոցառման ավարտին, Ա.Վիրաբյանը հակիրճ անդրադարձավ նաև Հայաստանի ազգային արխիվի կազմած փաստաթղթերի ժողովածուներին, որոնք կիրատարակվեն մոտ ժամանակներս:

*

* *

2010թ. մարտի 10-23-ը համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2009թ. հուլիսի 8-ի «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատողների ատեստավորման անցկացման կարգը հաստատելու մասին» N 137-Ա հրամանի, անցկացվեց ՀԱԱ աշխատողների ատեստավորում:

Ըստ վերոհիշյալ կարգի՝ ատեստավորումը աշխատողի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանության որոշումն է զբաղեցրած պաշտոնին: Այսուհետ, յուրաքանչյուր տարի ատեստավորվելու է աշխատողների թվի մեկ հինգերորդը՝ տարվա առաջին եռամսյակի ընթացքում:

Ատեստավորումն անցկացվեց 2 փուլով՝ գրավոր և բանավոր: Գրավոր փուլի համար նախատեսված թեստային առաջադրանքներն ընդգրկում էին հարցեր ՀՀ Սահմանադրությունից, ՀՀ կառավարության որոշումներից, արխիվային գործի մասին օրենքից, ՀՀ աշխատանքային օրենսդրությունից, ՊՈԱԿ-ի մասին օրենքից: Հարցազրույցի հարցաշարում ընդգրկված էր Արխիվային գործի մասին օրենսդրությունը:

Մարտի 10-23-ը կայացած ատեստավորմանը մասնակցեցին ՀԱԱ 45 աշխատակիցներ: Յուրաքանչյուր անգամ ատեստավորման հանձնաժողովի նախագահ, ՀԱԱ տնօրենի տեղակալ Էդ.Հովհաննիսյանը, ողջունելով մասնակիցներին, տեղեկացնում էր ատեստավորման ընթացակարգի մասին և մաղթում հաջող ընթացք: Կանոնակարգով սահմանված միավորներ վաստակած մասնակիցներին թույլատրվում էր մասնակցել հաջորդ՝ բանավորի փուլին, որի ընթացքը տեսագրվում էր:

Մինչ ատեստավորումը, համապատասխան բաժինների վարիչները ներկայացրել էին ատեստավորվողների աշխատանքային բնութագրերը, ինչպես նաև վերջիններիս հաշվետվությունները` վերջին 3 տարիների ընթացքում կատարած աշխատանքների մասին:

Արդյունքների ամփոփումը ցույց տվեց, որ ատեստավորման մասնակիցները գործընթացին նախապատրաստվել էին ամենայն պատասխանատվությամբ:

*

* *

2010թ. ապրիլի 7-ին, տեղի ունեցավ Հայաստանի ազգային արխիվի գիտական խորհրդի ընդլայնված նիստ, որին մասնակցում էին ՀԱԱ տնօրենի տեղակալները, բաժինների վարիչները և պատասխանատու այլ աշխատողներ:

Բացելով նիստը, ՀԱԱ տնօրեն Ա.Վիրաբյանը նախ շնորհավորեց ներկա կանանց` ապրիլի 7-ի` մայրության և գեղեցկության տոնի առթիվ: Այնուհետև անդրադարձավ 2010 թվականի առաջին եռամսյակում կատարած, ծրագրով նախատեսված աշխատանքներին, այդ թվում` մարտի 10-23-ը տեղի ունեցած ՀԱԱ աշխատողների ատեստավորմանը, գործընթացը գնահատելով դրական: Անդրադառնալով հիմնական աշխատատեսակներին, բաժինների վարիչները ներկայացրեցին առաջին եռամսյակում կատարած աշխատանքները: Նրանք խոսեցին նաև իրենց այն խնդիրների մասին, որոնք հրատապ լուծման կարիք ունեն:

Ամփոփելով նիստի ընթացքում հնչած ելույթները, ՀԱԱ տնօրենը նշեց, որ Հայաստանի ազգային արխիվը 2010 թվականը բարեհաջող է սկսել և աշխատում է արդյունավետ: Սակայն խնդիրները դեռ շատ են, իսկ դրանցից ամենակարևորը, թերևս, եղել ու մնում է կադրերի հարցը: Դեռևս անցյալ տարի` 2009-ին սկսած կադրերի վերապատրաստման դասընթացները պետք է վերսկսել, իսկ դրանց արդյունավետության ապահովման համար, այն պետք է անցկացնել բաժին առ բաժին: Ինչ վերաբերում է բաժինների աշխատանքներին, ապա դրանք այսուհետ կվերահսկվեն յուրաքանչյուր ամիս:

Քաղաքացիների սոցիալ-իրավական (նաև թեմատիկ) բնույթի հարցումների ժամանակին և արդյունավետ պատասխանելը արխիվային գործառույթներից կարևորագույններից է: Այս առումով, բարեբախտաբար, ՀԱԱ-ում լուրջ խնդիրներ չկան:

Աշխատանքները պատշաճ մակարդակի վրա են կինոֆոտոֆոնո փաստաթղթերի և ապահովագրական պատճենների մասնաճյուղում, ուր սկսված է առկայության ստուգման հսկայածավալ աշխատանք:

Նիստի ավարտին, տնօրենը հանձնարարեց 2010թ. առաջին եռամսյակում կատարած աշխատանքներն ամփոփել նաև ՀԱԱ մարզային մասնաճյուղերում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

2009թ. նոյեմբերի 17-21-ը, Սենտ-Ջուլիանսում (Մալթա) տեղի ունեցան Արխիվների միջազգային խորհրդի գործկոմի նիստը և արխիվագետների միջազգային կլոր սեղանը (CITRA):

ԱՄԽ գործկոմի նիստին մասնակցելու էին մեկնել Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ա.Վիրաբյանը և ՌԴ դաշնային արխիվային գործակալության միջազգային կապերի բաժնի պետ Կիրիլ Չեռնենկովը: Առաջինը ԱՄԽ Եվրասիկա տարածաշրջանային բաժանմունքի նախագահի, Կ.Չեռնենկովը` գործադիր քարտուղարի կարգավիճակներով:

Կլոր սեղանի թեման խիստ արդիական էր` «Պատկերացում 21-րդ դարի արխիվագետների մասին. նոր կրթական ռազմավարություն»:

21-րդ դարի սկզբին, արխիվագետները պետք է հարմարվեն ժամանակի համատեքստին, ուր հատուկ դեր է վերապահված տեղեկատվության տիրապետմա-

նը: Այս առումով, վերջիններս բախվում են բազմաթիվ խնդիրների հետ: Ահա թե ինչու մասնագիտական կրթության հարցը նշված է ԱՄխ-ի 2008-2018թթ. ռազմավարական խնդիրների շարքում: Այս կլոր սեղանին մեծ թվով մասնագետների ներկայությունը նպաստեց նոր մտահղացումների, գաղափարների, խնդրի լուծման նոր ուղիների առաջարկությունների հիման վրա ԱՄխ-ի համապատասխան ծրագրի կազմմանը:

Ի տարբերություն նախորդ գիտաժողովների անցկացման ձևաչափի, 2009թ. CITRA-ն եզակի հնարավորություն ընձեռեց լիագումար նիստերից բացի անցկացնել զուգահեռ նիստեր և կլոր սեղաններ:

*
* *

Նոյեմբերի 22-ին, Վալանսի (Ֆրանսիա) ՀԲԸՄ դահլիճում, կազմակերպվեց ոչ պաշտոնական հանդիպում տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: ՀԱԱ տնօրեն Ա.Վիրաբյանը ներկաներին ծանոթացրեց Հայաստանի ազգային արխիվի գործառույթներին, ծրագրերին ու խնդիրներին:

Այնուհետև հանդիպման մասնակիցներն իրենց հուզող ու հետաքրքրող բազմաթիվ հարցեր ուղղեցին զեկուցողին: Ի պատասխան Ցեղասպանության փաստն ուսումնասիրող հայ, թուրք և այլազգի պատմաբանների հանձնաժողով ստեղծելու առաջարկության հետ կապված մտավախությանը, Ա. Վիրաբյանը հավաստիացրեց, որ մտահոգությունը անտեղի է, քանի որ Հայաստանի ազգային արխիվում բազմաթիվ անհերքելի փաստաթղթեր են պահպանվում, այդ թվում նաև օտարերկրյա դիվանագետների վկայություններ, որոնք Ցեղասպանության պատմական իրողության լուռ վկաներն են:

Հանդիպման ավարտին, Ա.Վիրաբյանը իրատես լինելու, ժամանակն ու պահը ճիշտ գնահատելու կոչ արեց:

*
* *

Նոյեմբերի 24-26-ը, Փարիզում, Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) «Ալեք Մանուկյան» կենտրոնում, Եվրամիության 2007-2013թթ. մշակութային ծրագրերի շրջանակներում, տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ «Հայկական արժեքներ, պահպանության և արժևորման ռազմավարություն» թեմայով: Գիտաժողովին մասնակցելու հրավերներ էին ստացել ինչպես Հայաստանի, այնպես էլ Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, Գերմանիայի, Իսրայելի, Սիրիայի, ԱՄՆ-ի ճանաչված հայագետներ, պատմաբաններ, մշակութաբաններ:

«Թվայնացման աշխատանքները Հայաստանի ազգային արխիվում» զեկուցումով հանդես եկավ ՀԱԱ տնօրեն Ա.Վիրաբյանը:

*
* *

2010թ. ապրիլի 8-9-ը, Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում, տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ «1945 թվականին ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը. դրա նշանակությունը ԱՊՀ և աշխարհի ժողովուրդների համար» թեմայով:

Գիտաժողովին մասնակցում էին ԱՊՀ անդամ երկրների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսի, Մոլդովայի, Ադրբեջանի, Ղազախստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, ինչպես նաև ԱՄՆ-ի, Գերմանիայի, Չինաստանի, Լեհաստանի, Լիտվայի ներկայացուցիչները՝ գիտնականներ, ակադեմիկոսներ, պատմաբաններ, պաշտոնատար անձինք:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում էր Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ա. Վիրաբյանը:

Գիտաժողովի ընթացքում` Հայրենական մեծ պատերազմի կենտրոնական թանգարանում կայացած կլոր սեղանների ժամանակ հնչեցին ուշագրավ շատ զեկուցումներ, այդ թվում` «Հետպատերազմյան աշխարհին սպառնացող ժամանակակից վտանգները», «Խորհրդային Միության ժողովուրդները` Հայրենական մեծ պատերազմում», «Պատերազմի մասին հիշողությունը և սերունդների ժառանգությունը», «Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ դաշնակցային փորձն ու արժեքները»:

Գիտաժողովի մասնակիցները հարգանքի տուրք մատուցեցին Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին, ծաղկեպսակներ ու ծաղիկներ դնելով «Ողբացող մայրը» հուշակոթողին:

Դաշնային արխիվների ցուցադրությունների սրահում տեղի ունեցավ «Խորհրդային հասարակությունը և պատերազմը 1941-1945թթ.» խորագրով պատմավավերագրական ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին գիտաժողովի մասնակիցները:

Ա.Վիրաբյանը նաև գործնական հանդիպում ունեցավ Ռուսաստանի Դաշնային արխիվային գործակալության ղեկավար Ա. Ն. Արտիզովի և վերջինիս տեղակալ Վ.Տարասովի հետ:

*

*   *

2010թ. մայիսի 20-23-ը, Ուկրաինայի հանրապետության Օդեսա քաղաքում, Ուկրաինայի արխիվների պետական կոմիտեի հրավերով, տեղի ունեցան ԱՊՀ անդամ պետությունների արխիվային ծառայությունների ղեկավարների խորհրդաժողովը և Արխիվների միջազգային խորհրդի (ԱՄԽ) Եվրասիական տարածաշրջանային բաժանմունքի (Եվրասիկա) հերթական` 11-րդ համաժողովը: Այս առիթով Օդեսա էին ժամանել Ադրբեջանի, Բելոռուսի, Լատվիայի, Հայաստանի, Ղազաստանի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Ուզբեկստանի, Ուկրաինայի արխիվագետների պատվիրակությունները:

Հայաստանի պատվիրակության կազմում էին ՀԱԱ տնօրեն, Եվրասիկայի նախագահ Ա.Վիրաբյանը, ՀԱԱ տնօրենի տեղակալներ Ս.Միրզոյանը և Գ.Զաքոյանը:

Մայիսի 21-ին տեղի ունեցավ ԱՊՀ անդամ երկրների պետական արխիվային ծառայությունների ղեկավարների խորհրդաժողովի բացումը: Ելույթներ ունեցան արխիվային ծառայությունների ղեկավարները` ներկայացնելով վերջին տարվա ընթացքում իրենց կատարած ուշագրավ աշխատանքները: Նույն օրը, տեղի ունեցավ Արխիվների միջազգային խորհրդի (ԱՄԽ) Եվրասիական տարածաշրջանային բաժանմունքի (Եվրասիկա) 11-րդ համաժողովի բացումը: Ելույթ ունեցան Եվրասիկայի նախագահ, ՀԱԱ տնօրեն Ա.Վիրաբյանը, Եվրասիկայի քարտուղար ՌԴ Դաշնային արխիվային գործակալության միջազգային կապերի բաժնի պետ Կ.Չեռնենկովը, արխիվային ծառայությունների այլ ղեկավարներ:

Մայիսի 22-ին տեղի ունեցավ միջազգային գիտաժողով` «Ընդհանուր արխիվային ժառանգություն և ազգային արխիվային հավաքածուներ» թեմայով: Հարցին առնչվող հիմնական զեկուցումով հանդես եկավ Ուկրաինայի արխիվների պետկոմի նախագահի առաջին տեղակալ Ի. Մատյաշը: «Հայ ժողովրդի պատմության փաստաթղթերը ԱՊՀ երկրների արխիվապահոցներում» զեկուցումով հանդես եկավ ՀԱԱ տնօրենի տեղակալ Ս.Միրզոյանը, իսկ «Արխիվային ժառանգություն` ազգային և համամարդկային: Մեկնաբանությունների, օգտագործման և փոխազդեցության խնդիրները» թեմայով` ՀԱԱ տնօրենի տեղակալ Գ.Զաքոյանը: Հնչեցին բազմաթիվ հետաքրքիր զեկուցումներ:

Մայիսի 22-ի երկրորդ կեսին տեղի ունեցավ միջազգային մեկ այլ գիտաժողով` «Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն և էլեկտրոնային արխիվներ» թեմայով: Հարցին առնչվող հիմնական զեկուցումով հանդես եկավ Բելոռուսի էլեկտրոնային փաստաթղթավարության գիտա-հետազոտական կենտրոնի

տնօրեն Վ. Նոսկիչը: Թեմայի ընտրությունը թելադրված էր քննարկվող հարցերի հրատապությամբ: Զեկուցողները ներկայացնում էին իրենց արխիվների ձեռք բերած փորձը:

Եվրասիկայի համաժողովի շրջանակներում անցկացված միջազգային գիտաժողովների նյութերը կհրատարակվեն առանձին գրքույկներով:

Եվրասիկայի հաջորդ, հերթական 12-րդ համաժողովը տեղի կունենա 2011 թվականին, Բելոռուսում:

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

«ՆԱՀԱՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԸ»

Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, 176 էջ
Աշխատասիրությամբ՝ Գոհար Ավագյանի
Խմբագիր՝ Ամատունի Վիրաբյան
Սրբագրիչ՝ Էսթեր Խանիկյան
Համակարգչային աշխատանքները՝ Հռիփսիմե Ազիզյանի

Գիրքը հրատարակության է պատրաստել Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվի տնօրեն, որ նաև «...եւ խաւար նմա ոչ եղեւ հասու» առաջաբանի հեղինակն է:

Գիրքը նվիրված է Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Խորեն Ա Մուրադբեկյանի եղերական վախճանի 70-րդ տարելիցին: Առաջին անգամ հրապարակվում են արխիվային փաստաթղթեր և լուսանկարներ:

Գրքի առաջին էջում զետեղված է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի խոսքը՝ Երջանկահիշատակ Տ. Տ. Խորեն Ա Մուրադբեկյան Հայրապետի եղերական մահվան 70-րդ տարելիցին նվիրված հուշ-երեկոյին (Երևան, 6 ապրիլի, 2008թ.):

Ազգընտիր Հայրապետի կյանքն ու հոգևոր գործունեությունը, որ հայոց պատմության ծանրագույն ժամանակներում հայ ազգին ու եկեղեցուն անմնացորդ նվիրվածության փայլուն օրինակ է, լավագույնս ներկայացված է Գոհար Ավագյանի (ՀԱԱ բաժնի վարիչ) հեղինակած «Տ. Տ. Խորեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոս (1873-1932-1938)» ծավալուն գլխում: Գիրքն ընդգրկում է 38 նորահայտ վավերագիր՝ կաթողիկոսական կոնդակներ, շրջաբերականներ, գրություններ, զեկուցագրեր, հայտարարություններ, խմբագրականներ՝ հիմնականում Հայաստանի ազգային արխիվի, ինչպես նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվի և ԳԱԹ ֆոնդերից:

Լուսանկարների բաժինը՝ Խորեն Մուրադբեկյանի տարբեր տարիների անհատական լուսանկարները, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականների, ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների, Երևանի թեմական և եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցիչների, սաների, ժամանակի առաջադեմ մտավորականների, Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցյաց խորհրդի անդամների հետ նրա խմբանկարները ամբողջացնում, առավել հետաքրքիր են դարձնում գիրքը՝ ընթերցողների լայն շրջանակի համար:

«ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ»

Փաստաթղթերի և նյութեր ժողովածու
Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2009, 575էջ
Գլխավոր խմբագիր և կազմող՝ Ամատունի Վիրաբյան
Կազմողներ՝ Գոհար Ավագյան, Մարո Ավետիսյան
Առաջաբանի հեղինակ՝ Արմեն Ասրյան
Համակարգչային ձևավորումը՝ Ինգա Ջաղեթյանի

Հրատարակությունը իրականացվել է Արամ Մանուկյանի ծննդյան 130-ամյակի նշումը նախապատրաստող հոբելյանական հանձնաժողովի որոշմամբ, պետական ֆինանսավորմամբ:

20-րդ դարասկզբին հայոց ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ, Վանի ինքնապաշտպանության ղեկավար, 1918թ. մայիսյան հերոսամարտերի կազմակերպիչ Արամ Մանուկյանը Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման և նրա հիմքերի ամրապնդման գործում ունեցած առաջնակարգ և վիթխարի ներդրման համար, արժանացել է Հանրապետության հիմնադրի պատվանվանը:

Արամ Մանուկյանի (Սարգիս Հովհաննիսյան, 1879-1919թթ.) կյանքը Հայրենիքին անմնացորդ նվիրումի վառ օրինակ է: Քաղաքական հասունությամբ և հեռատեսությամբ, անկոտրում կամքով, կազմակերպչական բացառիկ ընդունակություններով օժտված Արամ Մանուկյանն իր կարճատև կյանքի ընթացքում բարձր պատասխանատվություն դրսևորեց ժողովրդի ճակատագրին վերաբերող խնդիրների լուծման գործում:

Ժողովածուում ընդգրկված են արխիվներում պահպանվող վավերագրեր (1903-1919թթ.), ինչպես նաև ժամանակի մամուլում հրապարակված նյութեր և հոդվածներ՝ Արամ Մանուկյանի կյանքի ու գործունեության մասին: Դրանք գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Թեմատիկ առումով, ժողովածուն բաղկացած է 4 բաժիններից, այսպես.

- Արամ Մանուկյանը Վասպուրականում ազգային-ազատագրական շարժման կազմակերպիչ և ղեկավար
- Արամ Մանուկյանը Վանի նահանգապետ
- Երևանի ազգային խորհրդի փաստացի ղեկավար
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար

Բաժինների ներսում փաստաթղթերը դասակարգված են ժամանակագրական կարգով:

Գրքում ընդգրկված են 445 փաստաթուղթ, որոնց հիմնական մասը հրատարակվում է առաջին անգամ, բնագրի լեզվով: Փաստաթղթերը հայտնաբերվել են Հայաստանի ազգային արխիվում, ՀՀԴ կենտրոնական արխիվում և քաղվել ժամանակի մամուլի էջերից:

Առաջին բաժնում ներկայացված են ՀՅ դաշնակցության ընդհանուր ժողովների նիստերի արձանագրությունները, քաղվածքներ արձանագրություններից, Արամի նամակները Ս. Վրացյանին, նամակներ երկիր զենք փոխադրող քրդերի հետ ծագած խնդիրների մասին, ռազմական օգնության խնդրանքով և այլ հրատապ հարցերով:

Երկրորդ բաժնում «Արամ Մանուկյանը Վանի նահանգապետ», ընդգրկված են Վանի նահանգապետության վարչական խորհրդի նիստերի արձանագրությունները, տեղեկագրեր Վանի նահանգային կառավարության գործունեության մասին, հրամաններ, կոչեր, հայտարարագրեր, կարգադրագրեր, ազդարարագրեր, հայտարարություններ, գրություններ, դիմումներ, խնդրագրեր:

Երրորդ բաժնում Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի հատուկ կոմիտեի նիստերի որոշումներն են, Երևանի հայոց ազգային և զինվորական խորհուրդների հատուկ կոմիտեի նիստերի արձանագրությունները, հրամանները, կոչերը, որոշումները, կարգադրությունները, շրջաբերականները, հեռագրերն ու հաղորդագրությունները, նամակները:

Վերջին բաժնում՝ «Ա.Մանուկյանը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար» ներկայացված են վերջինիս կենսագրության այս շրջանը արտացոլող փաստաթղթերը՝ հրամաններ, գրություններ, զեկուցագրեր, հեռագրեր, հայտարարություններ:

Գրքի վերջին էջերում զետեղված են Ա.Մանուկյանի ժամանակակից, Երևանի փոխ-քաղաքագլուխ, խորհրդարանի անդամ Արշալույս Աստվածատրյանի խիստ ուշագրավ ու առանձնակի հետաքրքրություն ներկայացնող հուշերը Արամ Մանուկյանի մասին:

Ինչ վերաբերում է ժողովածուի գիտա-տեղեկատու համակարգին, ապա այն ներկայացված է ծանոթագրություններով, անվանացանկով և տեղանունների ցանկով:

Ա.Մանուկյանի, պետական, քաղաքական, ռազմական գործիչների, հայդուկների, Վասպուրականցի գաղթականների 81 լուսանկարները, ինչպես նաև որոշ փաստաթղթերի լուսապատճենները, յուրատեսակ շունչ են հաղորդում գրքին: Պակաս հետաքրքիր չեն գրքի առաջին և վերջին էջերի՝ Վան քաղաքի հատակագծի, Վանի ապրիլյան հերոսամարտի, Բաթումի բանակցություններում հայկական պատվիրակության քարտեզի վերատպությունները:

Գիրքն ունի ոչ միայն ճանաչողական ու գիտական, այլև, որ պակաս կարևոր չէ, դաստիարակչական բնույթ: Այն նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, հայոց ազգային-ազատագրական շարժման և Հայաստանի առաջին հանրապետության պատմությունն ուսումնասիրողների համար:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ
ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1918-1920ԹԹ.»
Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2009, 616 էջ
Գլխավոր խմբագիր և կազմող՝ Ամատունի Վիրաբյան
Կազմողներ՝ Ավագ Հարությունյան, Գոհարիկ Մանուկյան,
Սոնյա Միրզոյան
Համակարգչային ձևավորումը՝ Ինգա Զաղեթյանի

Ժողովածուն հրատարակվել է Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի 90 և Հայաստանի երրորդ հանրապետության խորհրդարանի 20-ամյակի առիթով: Հրատարակությունն իրականացվել է ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանավորությամբ և Հայաստանի ազգային արխիվի գիտական խորհրդի որոշմամբ:

Ժողովածուում ընդգրկված են արխիվներում պահպանվող, նաև ժամանակի մամուլում հրապարակված ՀՀ պառլամենտի նիստերի արձանագրությունները, որոնք լուսաբանում են Հայաստանի օրենսդիր մարմնի երկուսուկեսամյա գործունեությունը:

Գրքի տիտղոսաթերթին Ալեքսանդր Թամանյանի և Հակոբ Կոջոյանի հեղինակած և ՀՀ կառավարության կողմից 1920թ. հաստատված ՀՀ զինանշանն է:

«Հայաստանի առաջին խորհրդարանը՝ ժողովրդի ներկայացուցչություն» առաջնորդողով հանդես է եկել ՀՀ Ազգային ժողովի ներկայիս նախագահ Հովիկ Աբրահամյանը, ուր մասնավորապես ասված է. «Պետությունների կայացման գործընթացում խորհրդարանները միշտ էլ կարևորագույն դերակատարություն են ունեցել, հատկապես այն պարագայում, երբ խոսքը վերաբերում է պետականության առաջին քայլերին:

Ժողովածուն արժեքավոր ներդրում է ընդհանրապես մեր երկրի պատմության և մասնավորապես խորհրդարանական գործունեության լուսաբանման մեջ»:

«Շուրջ 600 տարի պետականությունը կորցրած հայ ժողովուրդը 1918թ. կեսերին վերականգնեց իր պետականությունը՝ դեմոկրատական հիմքի վրա, որպես՝ պառլամենտական հանրապետություն: Կառավարությունը պատասխանատու էր ժողովրդական ներկայացուցչության՝ օրենսդիր մարմնի առջև, վարում էր այնպիսի ներքին ու արտաքին քաղաքականություն, ինչպիսին նրան թելադրում էր խորհրդարանը». կարդում ենք գրքի առաջաբանում:

Այնուհետև ներկայացված են խորհրդարանի ձևավորման սկզբունքները, կազմը, գործառույթներն ու գործունեության ոլորտները:

Ժողովածուում նյութերը դասակարգված են ժամանակագրական կարգով: Նախ՝ Հայաստանի Հանրապետության առաջին խորհրդարանի գումարման 87, ապա՝ երկրորդ խորհրդարանի 93 նիստերը:

Հավելվածում ներկայացված են Հայաստանի Խորհրդի կանոնակարգը, Հայաստանի Պառլամենտի ընտրությունների մասին օրենքը, Հայաստանի կառավարության հայտագիրը՝ փաստաթղթեր, որոնք առնչվում են խորհրդարանի գործունեությանը:

Ժողովածուն ունի ցանկեր, այդ թվում՝ ՀՀ առաջին խորհրդարանի անդամների, անձնանունների և տեղանունների:

Գիրքն ավելի ամբողջական են դարձնում խորհրդարանի նախագահներ Ավետիք Սահակյանի, Ավետիս Ահարոնյանի, Հովհաննես Քաջազնունու, փոխնախագահներ Լևոն Շանթի, Սիրական Տիգրանյանի, ՀՀ վարչապետներ Հովհաննես Քաջազնունու, Ալեքսանդր Խատիսյանի, Համո Օհանջանյանի, Սիմոն Վրացյանի, խորհրդարանի 63 անդամների լուսանկարները:

Ժողովածուն, որ նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, Հայաստանի առաջին հանրապետության պատմությամբ հետաքրքրվողների համար, կարող է նպաստել պատմական մի բացառիկ ժամանակաշրջանում մեր պետական այրերի հայրենանվեր գործունեության մասին ճիշտ պատկերացում կազմելուն: Գործունեություն, որի շնորհիվ ընդունվեցին բազմաթիվ օրենքներ՝ նպատակամղված պետության իրավաքաղաքական կայացմանը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

ԼՐԱՏՈՒ

С О Д Е Р Ж А Н И Е

ПУБЛИКАЦИИ ДОКУМЕНТОВ

СТАТЬИ

СООБЩЕНИЯ

АРХИВНОЕ ДЕЛО

ХРОНИКА

Ի գիտություն հեղինակների եւ ընթերցողների

«Բանբեր Հայաստանի արխիվների» գիտատեղեկատվական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական եւ թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության համար:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող հապավումները:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ
Հասցեն՝ Երեւան - 33, Հրաչյա Քոչարի - 5, հեռ. 22-53-55, 22-58-02
Ինտերնետային կայքի հասցեն www. armarchives. am
Գրանցման վկայականը N 03Ա060146
Տրված է 17.04.2003թ.
Թողարկման պատասխանատու՝ Արմեն Բադալյան
Ստորագրված է տպագրության 2010թ. հունիսի 25-ին
Տպաքանակը՝ 200: Տարածվում է անվճար
Չափսը 70x1001/16   Ծավալը՝   244 էջ
«Գրիգ տպագրատուն» ՍՊԸ տպարան: Երեւան, Վ.Վաղարշյան 12 «Ա»